



National Academy of Sciences of Republic of Armenia
Institute of Language after H. Acharyan

Национальная академия наук Республики Армения
Институт языка имени Р. Ачаряна

“Jahukyan Readings” International Conference
Yerevan, June 15-16, 2017
Collection of papers

Международная конференция “Джаукяновские чтения”
Ереван, 15-16 июня 2017
Сборник докладов

Yerevan -2017- Ереван

Հայաստանի Հանրապետության գիտությունների
ազգային ակադեմիա
Հ.ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտ

«Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային
գիտաժողով

Երևան, հունիսի 15-16, 2017

Ձեկուցումների ժողովածու

Երևան

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

2017

ՀՏԴ 81:06

ԳՄԴ 81

Ջ 229

Ժողովածուն հրատարակության է երաշխավորել ՀՀ
ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհուրդը:

Տպագրվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի
ֆինանսական աջակցությամբ:

Խմբագրական խորհուրդ՝

Վ.Լ. Կատվայան (նախագահ)	Լ.Շ. Հովհաննիսյան
Ռ.Մ. Թոխմախյան	Լ.Ս. Հովսեփյան
Գ.Կ. Խաչատրյան	Ա.Ա. Աբրահամյան
Վ.Գ. Համբարձումյան	Ն.Գ. Հովհաննիսյան

«Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտա-
Ջ229 ժողովի զեկուցումների ժողովածու. – Երևան, ՀՀ ԳԱԱ
«Գիտություն» հրատարակչություն, 2017.– 389 էջ:

ՀՏԴ 81:06

ԳՄԴ 81

ISBN 978-5-8080-1304-9

© «Գիտություն» հրատարակչություն, 2017

ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ
ՈՐՈՇԻՉ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

Առկայացման քերականական կարգը բնորոշ է առարկայնության զաղափար ունեցող բառերին. ուստիև այն գոյականի քերականական հատկանիշ է: «Առկայացումը իմացաբանական ըմբռնում է, որը լեզվի մեջ դրսևորվում է բառայնորեն կամ քերականորեն, երբեմն էլ՝ մնում արտակառուցվածքային ոլորտում»¹:

Խոսքի մեջ առարկայանիշ միավորը իրադրական արտահայտություն է ստանում որոշակի միջոցներով: Հայերենում առարկայանիշ բառին իրադրայնություն են հաղորդում հոդերը, որի պատճառով առկայացման կարգը անվանում են նաև հոդի կարգ²: **Մ, դ, ն/ը** մասնիկների միջոցով դրսևորվում է «անունների հարաբերությունը դեպի հաղորդակցողները և հաղորդակցումը»³:

Գ. Ջահուկյանը **ս, դ, ն** վերջնամասնիկներին բնորոշ է համարում անմիջականացնելու, որոշելու իմաստը՝ դրանք կոչելով առկայացման հոդեր⁴: Առկայացման կարգի ենթակարգերից յուրաքանչյուրը առարկայական հասկացություն արտահայտող միավորին հաղորդում է ստացականության, դիմորոշության կամ ցուցականության իմաստ՝ միևնույն ժամանակ անձը կամ առարկան դարձնելով որոշյալ հաղորդակցման տվյալ տիրություն:

¹ **Հ. Պետրոսյան**, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 50:

² Տե՛ս **Հ. Պետրոսյան**, *Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության*, Հոդային կարգ, Ե., 1976, էջ 26-56:

³ **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Ե., 1969, էջ 139:

⁴ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., Ե., 1969, էջ 139:

Հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում **ս**, **դ**, **ն** հոդերից **ն** հոդի մեջ է ամրակայվել որոշյալության իմաստի արտահայտման գործառնությունը: Նրա դիրքային տարբերակը⁵ **ը** ձևությոն է: Վերջինս առաջացել է *-ըն* հանգող գրաբարյան բառերից. անշեշտ հնչման պատճառով այս բառերը կորցրել են իրենց բառավերջի *ն-ն՝ մուկն>մուկը> մուկ, դուռն>դուռը>դուռ* և այլն: Բառավերջի *ը-ն* սկսել է ընկալվել որպես որոշիչ հոդ, և բաղաձայնահանգ բառերը աստիճանաբար սկսել են ստանալ այս նոր առաջացած **ը** որոշիչ հոդը: Անգամ այն բառերում, որոնց գրաբարյան արմատական *ն-ն* չի ընկել, այն սկսում է գիտակցվել իբրև հոդ և մասամբ փոխարինվում է **ը-ով** *տասն>տասը, դառն>դառը, խառն>խառը*: Միջին հայերենը **ը** որոշիչ հոդը դեռևս չի գործածում. այն գործածության մեջ է մտնում նոր գրական հայերենում⁶:

Ա. Այտընյանի կարծիքի համաձայն՝ **ը** հոդը շատ ավելի վաղ է կիրառվել լեզվում, քան հանդիպում է գրական հուշարձաններում: **Ը**-ի առաջին արտահայտությունը, ըստ քերականի, հանդիպում է 13-րդ դարի վիմական մի արձանագրության մեջ⁷:

Արևելահայերենում **ը** և **ն** որոշիչ հոդերի գործածությունը խիստ կանոնարկված է:

Ավելորդ համարելով անդրադարձը ընդունված հայտնի դեպքերին՝ նշենք, որ կանոնական չէ՝

ա) բաղաձայնով վերջացող բառի գործածությունը **ն** հոդով՝ տրոհության որևէ նշանից առաջ (Քույրը ուսուցչուհի է, *եղբայրը՝ բժիշկ*): Սա պայմանավորված է արտասանական դադարով (կետադրության որևէ ձեռնարկում չի նշվում),

⁵ Տե՛ս **Գ.Զահուկյան**, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*, Ե., 1974, էջ 212:

⁶ Տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, Ե., 1975, էջ 79:

⁷ Տե՛ս **Ա. Այտընյան**, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի*, Ե., 1987, էջ 168:

բ) **Ն** հոդի գործածությունը բառակզբի (յ)ե, (վ)ո հնչյունակապակցություններից առաջ (թույլատրելի է միայն՝ քույրը եկավ, եղբայրը որոշեց):

Ինչ վերաբերում է ձայնավորով սկսվող բառին նախորդող դեպքերին, ապա կանոնական են թե՛ **ը**-ով, թե՛ **ն**-ով գործածությունները (խաղը ավարտվեց կամ խաղն ավարտվեց): Առաջին օրինակում տրամաբանական շեշտն ընկնում է ենթակայի վրա, և զգալի է արտասանական դադարը: Ահա թե ինչ է գրել այս մասին Գ. Սևակը դեռ տասնամյակներ առաջ. «Այսպիսի դեպքերում կենդանի խոսքը շատ ավելի լավ ուղեցույց է, քան ձևական քերականությունը, որի քրմերը տիամար ջանասիրությամբ ջնջում են աշակերտների գրած **ը**-երը ձայնավորներից առաջ և դարձնում **ն**՝ շատ հաճախ խախտելով աշակերտի կենդանի խոսքի տրամաբանական շեշտը»⁸:

Բառակզբում *ստ, սպ, սկ, զգ, զբ, շտ, շպ* և նման հնչյունակապակցություններ ունեցող բառերից առաջ օրինաչափ են ն՛ **ը**, ն՛ **ն** հոդի գործածությունները (դասը սկսվեց/դասն սկսվեց): Սակայն, մեր կարծիքով, տեղաշարժ է նկատվում նաև այդ բառերի արտասանության մեջ (երիտասարդ սերունդը չի արտասանում *ըսկսել, ըշտապել*), և առավել հաճախ հանդիպող **ը**-ով կիրառությունները հիշյալ դիրքերում ձգտում են դառնալ օրինաչափություն:

Բաղաձայնով վերջացող բառը պարտադիր ստանում է **ն** հոդ, եթե նրան հաջորդում է՝

ա) դրական խոնարհման օժանդակ բայը,

բ) **էլ** շաղկապը,

գ) **ու** շաղկապը, եթե այն միավորում է նախադասության համադաս անդամներ (օրինակ՝ *աղջիկն ու տղան*). Համադաս նախադասություններ կապելիս հոդի կիրառությունը ազատ է, օրինակ՝ *ասաց աղջիկն ու շիկնեց*,

⁸ Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, Ե., 2009, էջ 268:

դ) *անգամ, իսկ* սաստկական վերաբերականները և այլն:

Որոշիչ հոդերին նախորդող հիմքերը չեն կրում ո՛չ շեշտի, ո՛չ էլ հնչյունական որևէ փոփոխություն: Բացառություն են կազմում *սեք* և *աստված* բառերը՝ *սիրո-սիրուն, Աստծո-Աստծուն*: Առօրյա-խոսակցական լեզվում և որոշ բարբառներում *և* հոդին նախորդող *ա* ձայնավորը վերածվում է *ե*-ի, ինչպես՝ *տղա-տղեն, փեսա-փեսեն, քահանա-քահանեն* և այլն, որը բացատրվում է *այ-ե* հնչյունափոխությամբ (գրաբարում *ա, ռ* ձայնավորների հանգող բառերը բառավերջում ունեցել են *յ* հնչյունը՝ *տղայ, երեխայ* և այլն):

Միևնույն բառը չի կարող միաժամանակ ստանալ երկու հոդ, բացառությամբ փոխանուն սեռականի, որի դեպքում ձայնավոր հոլովիչին գումարվում է կրկնակ որոշիչ հոդ **նր**: Օրինակ՝ *Իմ սենյակը նեղ էր, Անահիտինը՝ լայն⁹*:

Արևելահայերում որոշիչ *ը/ն* հոդ չեն ստանում՝

1) *մարդ, կին, անձ* գոյականների հոգնակի ուղղականի, ինչպես նաև սեռական-տրականի ձևերը (*մարդիկ, կանայք, անձինք, մարդկանց, կանանց, անձանց*), ինչպես նաև *տիկնայք, պարոնայք* հոգնակիով դրված գոյականները,

2) *Աստված* բառը ուղիղ ձևում,

3) *ց* հոլովման պատկանող՝ *անք, ենք, ոնք, ունք* վերջածանցներով բաղադրված գոյականները (բացառյալ այն դեպքերը, երբ դրանք կիրառվում են որպես վերնագիր, օրինակ՝ «*Վարդանանքը*» գրել է *Ղ. Դեմիրճյանը*):

4) այլաձև հոլովումների շարքին դասվող՝ պատմական համարվող *ո, ա* արտաքին հոլովումների պատկանող բառերը, ինչպես՝ *հուսո, լուսո, սգո, մամլո, խնդրո, Մարա, Վանա, Գեղամա* և այլն:

Նշենք, որ նախորդ դարի 20-30-ական թթ. հոդ չէին ստանում *ա* ներքին և *ան* արտաքին հոլովումների ենթարկ-

⁹ Տե՛ս **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 3, էջ 991:

վող բառերը: Գ. Սևակը գրում է. «Ում (ուսմ) ածանցով կազմված բառերի գործիական հոլովը գրաբարաձև է՝ կազմվում է *բ* վերջավորությամբ (*ուսմամբ, ցասմամբ*), ըստ որում սրանք որոշիչ հոդ չեն ստանում նաև տրականում¹⁰»: Բնականաբար նույնը վերաբերում է **-ություն** ածանցով կազմված բառերին: Այս ձևերը վաղուց հնաբանություններ են դարձել: Այսօր էլ հաճախ հանդիպող *Եկանք այն համոզման* արտահայտությունը անհոդ գործածելը սխալ է:

5) Արմատական **ը** վերջնահնչյունով ավարտվող մի քանի բառեր՝ *սառը, դառը, խառը, ինը, տասը*, գոյականաբար կիրառվելիս բնականաբար չեն կարող որոշիչ հոդ ստանալ:

6) բացառական, գործիական և ներգոյական հոլովները: Մինչև XIX դարի վերջերը արևելահայ գրական լեզվում որոշիչ հոդ ստացել են բոլոր հոլովները: Մ. Պալասանյանը նշում է, որ բացի սեռականից՝ հոդ կարող են ստանալ մնացած հոլովները, սակայն բացառական, գործիական և ներգոյական հոլովները ավելի շատ կիրառվում են անհոդ: Բերում է հետևյալ օրինակները. «Իմ բարեկամը մարդասիրական *ընկերությունից* օգնություն ստացավ: Հողագործները կերակրվում են դաշտի *բերքերով* և ծառի *պտուղներով*: Աշակերտները խաղում են ուսումնարանի *բակում*»¹¹: Նույնը գրում է Մ. Աբեղյանը. հոդ չի ստանում սեռական-տրականը, ինչպես և «բացառական, գործիական և ներգոյական հոլովների վրա, երբ որոշված են, որոշող հոդը սովորաբար չի դրվում: Օրինակ՝ Նա վառվում է քո սիրով(ը).- Միրտն առնվեց նրա խոսքից(ը)»¹²:

Լեզվական նորմի համաձայն՝ արդի արևելահայերենում կանոնական են համարվում անհոդ տարբերակները,

¹⁰ Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, էջ 267:

¹¹ Տե՛ս Մ. Պալասանեան, *Քերականութիւն մայրենի լեզուի*, Թիֆլիս, 1906, էջ 119-120:

¹² Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965, էջ 526:

սակայն ժողովրդախոսակցական լեզվում, դարձվածքներում այսօր էլ հանդիպում են հիշյալ երեք հոլովների հոդառությամբ ձևեր, որոնք կանոնական չեն, օրինակ՝ *լուսամուտիցն* է նայում, գլուխը *պատուվն* է տալիս, նրա *անունովն* է երդվում, *ձեռքիցը* չի գալիս, *ինչու՞ մն* է բանը (վերջին օրինակը նաև ռուսաբանություն է, բառացի պատճենում):

Հոդը միշտ դրվում է հոլովական վերջավորությունից հետո: Բացառություն են կազմում փոխանվանական կիրառությունները, որի ժամանակ վերջավորությունը հաջորդում է հոդին, օրինակ՝ *Արմենիայից*, *Արմենիայում* և այլն:

Այժմ դիտարկենք մի քանի դեպքեր, որոնցում որոշիչ հոդի գործածությունը ունի իմաստային, ձևաբանական, շարահյուսական կարևոր առանձնահատկություններ:

ա) Հանդիպում են այնպիսի նախադասություններ, որոնցում հոդառու բառին հաջորդող անդամի խոսքիմասային պատկանելությունը պայմանավորված է որոշիչ հոդի ընտրությամբ՝ *ը, թե՛ ն*, որի հետևանքով էլ փոխվում է նախադասության իմաստը: Համեմատենք՝ *Արմենը էլ չուզեց* և *Արմենն էլ չուզեց* նախադասությունները: Առաջինում *էլ-ը* ժամանակի մակբայ է՝ «այլևս» իմաստով, երկրորդում՝ շաղկապ հավելական նշանակությամբ:

բ) Որոշիչ հոդի առկայությունը կամ բացակայությունը խիստ կարևոր հանգամանք է դարձվածքների համար: Կան դարձվածքներ, որոնց հոդով տարբերակը միանգամայն այլ նշանակություն ունի: Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Դարձվածաբանական բառարանից» քաղել ենք 26 զույգ դարձվածքներ, որոնց իմաստների տարբերությունը պայմանավորված է հոդի լինել-չլինելով: Տեղի սղության պատճառով ներկայացնենք դրանցից միայն մի քանիսը՝

հոգի տալ – անսահմանորեն նվիրված լինել մի բանի սիրով, նվիրվածությամբ

հոգին տալ – հոգին ավանդել, շունչը փչել (էջ 364)

ձեռք առնել – ծաղրի առարկա դարձնել

ձեռքն առնել – ստանձնել, վերցնել (էջ 383)

ձեռք բռնել – օգնել, օգնության հասնել

ձեռքը բռնել – արգելել (էջ 383)

ձեռք դնել – 1. ստորագրել, 2. տիրություն անել

ձեռքը դնել – ընտրել, իրենը համարել (էջ 386)

մեղք առնել – մեղքը վեր առնել

մեղքը առնել – մեղադրել մեկին անտեղի (էջ 422)

ճանապարհ կտրել – անցնել, գնալ (էջ 399)

ճանապարհը կտրել – թույլ չտալ առաջ շարժվելու

արև առնել – արևի ճառագայթները դիպչել, լուսավորել

արևը առնել – սպանել, կյանքից զրկել (էջ 84)

բերան գցել – մեկի ձեռքն ընկնել, հռչատվել

բերանը գցել – 1. մի բան ուտել, 2. կաշառել (էջ 117) և այլն:

գ) Երբեմն միայն որոշիչ հոդի միջոցով է հնարավոր ճշտել նախադասության անդամի շարահյուսական պաշտոնը: Այսպես՝ *Աղջիկն ազնիվ* հատրթեց // *Աղջիկը ազնիվ* հատրթեց, *Բուրմունքն անուշ տարածվել է* // *Բուրմունքը անուշ տարածվել է* կառույցների երկրորդ տարբերակներում *ազնիվ*, *անուշ* բառերով արտահայտված անդամները, վստահաբար կարող ենք ասել, ձևի պարագաներ են, իսկ առաջին տարբերակները, որոնցում *-և* հոդն է առկա, կարող են ընկալվել ն՝ որպես հետադաս որոշիչներ, ն՝ ձևի պարագաներ:

Չայտնի է, որ սաստկական վերաբերականները կարող են դրվել նախադասության ցանկացած անդամի վրա: Պատահում են դեպքեր, երբ որոշիչ հոդի ընտրությամբ է պայմանավորված եղանակավորող բառի որ անդամին վերաբերելը: Օրինակ՝ *Սուրենը անգամ չուզեց լսել այդ մասին* // *Սուրենն անգամ չուզեց լսել այդ մասին*: Առաջինում եղանակավորող բառը վերաբերում է ստորոգյալին, երկրորդում՝ ենթակային՝ *Սուրենին*:

դ) Որոշիչ հոդի առկայությամբ կարելի է տարբերակել անորոշով ստորոգելի ունեցող բաղադրյալ ստորոգյալը

պարզ ստորոգյալից, տվյալ դեպքում՝ վաղակատար ժամանակաձևերից, օրինակ՝ *սովորել է – սովորելն է*:

ե) Հոդի հավելումը որոշ բառերում դառնում է խոսքի-մասային փոփոխության պատճառ: Դիտարկենք մի քանի օրինակներ:

Շուրջ, վրա, դեմ, մոտ, մեջ, հետ կապեր են, *շուրջը, վրան, դեմը, մոտը, մեջը, հետը* մակբայներ (Է. Աղայանի բացատրական բառարանում կապի դեպքում էլ *շուրջ* բառը հոդով է դրված, որը ճիշտ չէ¹³, իսկ *մոտ* բառի դիմաց նշված է՝ կապ, ածական, մակբայ՝ *գրեթե, մոտավորապես*, այսինքն՝ չափի մակբայ: Ըստ լեզվաբանի՝ *մոտ* կապը կարող է նաև հոդով հանդես գալ: Բերված է *Նա մոտը բավական փողուններ* նախադասությունը¹⁴: Նշված օրինակում *մոտը* տեղի մակբայ է/:

Մեկ բառը թվական է, *մեկը*՝ հոդով տարբերակը՝ անորոշ դերանուն,

Վաղ՝ ածական, *վաղը*՝ ժամանակի մակբայ,

Վերջ՝ գոյական, *վերջը*՝ եղանակավորող բառ,

Հավագույն՝ ածականի գերադրական աստիճան, *լավագույնս*՝ մակբայ և այլն:

Բաղաձայնին հաջորդող **ն** հոդը գաղտնավանկ չի կազմում, արտասանական շղթայում այն միանում է հաջորդ բառի առաջին վանկին, ինչպես՝ *Արմեն-նասաց* և ոչ թե *Արմենըն սասաց*: Իսկ **ս, դ** հոդերի դեպքում բառավերջում պարտադիր ունենում ենք գաղտնավանկ՝ *տունըս, գիրըդ*: Նույնագիր որոշ համանուններում հոդով ձևերը տարբերվում են վանկաքանակությամբ, օրինակ՝ դարըդ – դարդ, ծառըս – ծառս (լինել), հորըդ – հորդ, կարըս – Կարս և այլն:

Այսպիսով, ընդհանրացնելով ասելիքը, հանգում ենք այն եզրակացության, որ որոշիչ հոդի գործածությունը ունի

¹³ Տե՛ս Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 1126:

¹⁴ Նույն տեղում, էջ 1027:

իմաստային, ձևաբանական, շարահյուսական մի քանի կարևոր առանձնահատկություններ:

ա) Երբեմն հոդառու բառին հաջորդող անդամի խոսքիմասային պատկանելությունը պայմանավորված է որոշիչ հոդի ընտրությամբ՝ *ը, թե ն*, որի հետևանքով էլ փոխվում է նախադասության իմաստը: Համեմատենք՝ *Արմենը էլ չուզեց* և *Արմենն էլ չուզեց* նախադասությունները:

բ) Որոշիչ հոդի առկայությունը կամ բացակայությունը խիստ կարևոր հանգամանք է դարձվածքների համար: Կան դարձվածքներ, որոնց հոդով տարբերակը միանգամայն այլ նշանակություն ունի: Օրինակ՝

ձեռք առնել – ծաղրի առարկա դարձնել

ձեռքն առնել – ստանձնել, վերցնել :

գ) Երբեմն միայն որոշիչ հոդի միջոցով է հնարավոր ճշտել նախադասության անդամի շարահյուսական պաշտոնը: Այսպես՝ *Բուրմուռն անուշ տարածվել է և Բուրմուռքը անուշ տարածվել է* կառույցներից երկրորդ տարբերակում *անուշ* բառով արտահայտված անդամը, անշուշտ, ձևի պարագա է, իսկ հոդով տարբերակը կարող է ընկալվել և՛ հետադաս որոշիչ, և՛ ձևի պարագա:

Որոշ դեպքերում որոշիչ հոդի ընտրությամբ է պայմանավորված եղանակավորող բառի՝ որ անդամին վերաբերելը: Օրինակ՝ *Սուրենը անգամ չուզեց լսել այդ մասին* // *Սուրենն անգամ չուզեց լսել այդ մասին*: Առաջինում եղանակավորող բառը վերաբերում է ստորոգյալին, երկրորդում՝ ենթակային՝ *Սուրենին*:

դ) Որոշիչ հոդի առկայությամբ կարելի է տարբերակել անորոշով ստորոգելի ունեցող բաղադրյալ ստորոգյալը պարզ ստորոգյալից, տվյալ դեպքում՝ վաղակատար ժամանակաձևերից, օրինակ՝ *սովորել է – սովորելն է*:

ե) Հոդի հավելումը որոշ բառերում դառնում է խոսքիմասային փոփոխության պատճառ, օրինակ՝ *վրա, հետ* –

կապ, վրան, հեռը – մակբայ, վաղ – ածական, վաղը – ժամանակի մակբայ և այլն:

Abajyan Anna – Several Discourses about the Article in Eastern Armenian. – The use of the definite article in the Eastern Armenian language has semantic, morphological and syntactic characteristics. Sometimes the choice of the article: -ը or -ն changes the meaning of the sentence. The article is very important for idioms, the same phrase with or without the article can have different content. At times only the article can help in determining the syntactic role of a member of the sentence. Adding the article can change the morphological meaning of words.

Абаджян Анна – Некоторые соображения об определенном артикле в восточноармянском языке.— Употребление определенного артикля в восточноармянском языке имеет семантическую, морфологическую и синтаксическую значимость. Иногда выбор артикля -ը или -ն меняет смысл предложения. Важное значение имеет артикль в семантике идиом: то же словосочетание с артиклем или без него может иметь разный смысл. В некоторых случаях синтаксическая роль того или иного члена предложения определяется только с помощью артикля. Введение артикля может изменить морфологическое значение слова.

Ամիրխանյան Անժելա (Հայաստան, ԳԱԱ
հնագիտության և ազգագրության ինստիտուտ)

ԴԵՂ ԲԱՌԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Մարդ-բույս առնչությունները մշակութաբանական կարևորագույն խնդիրներից են, որոնք հազարամյակների պատմություն ունեն և մեծ ազդեցություն են թողել ժողովուրդների լեզվամտածողության վրա: Սույն հոդվածով կփորձենք ազգագրական նյութերի զուգադրությամբ բացահայտել *դեղ* բառի իմաստային դրսևորումները:

Դեղ բառը ծագում է հնդեվրոպական նախալեզվի **dhel*՝ ծաղկել, կանաչել արմատից և առաջին ու հիմնական իմաստով նշանակում է «բույս», որ գործածվել է *դալար* բառի հետ (*դեղ դալար*)՝ իբրև «կանաչ խոտ»¹:

Թերևս հազարամյակների տևական փորձով ձեռք բերված գիտելիքների շնորհիվ բույսերի բուժիչ և վնասակար հատկություններն այնքան կարևորվեցին, որ ինչպես հնդեվրոպական շատ լեզուներում (օր., ռուս. трава՝ «խոտ», отравить՝ «թունավորել», зелье՝ «բույս» և «թունավոր բույս»), հայերենում նույնպես «դեղ» բառի իմաստն ընդլայնվեց և ստացավ նոր՝ «բուժող, դարմանող»², ինչպես նաև հակադիր՝ «թույն» իմաստները: Արդեն V դ. *դեղ* բառը գործածվում էր «ներկ, մարմինը օժող անուշահոտ յուղ, շպար, աչքի ծարիր, կախարդել» և այլ իմաստներով:

¹ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1971, էջ 649: Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 192:

² *Դարման* բառը իրանական փոխառություն է (պահլավ. *dhel*) և նշանակում է «դեղ, ճար, բժշկություն»: Հայերենում բառն ստացել է նաև չոր խոտի, անասունների կերի իմաստ, որտեղ նույնպես երևում է «բույս-դեղ» կապը (Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 639):

Դիտարկենք այդ բառի մեզ հայտնի իմաստային որոշ տարբերակներ: *Դեղ բառի*՝ «բուժող նյութ, սպեղանի» իմաստը տեսնում ենք *դեղել* բժշկել,³ *դեղագործ*՝ «բուժիչ նյութ պատրաստող»⁴, *դեղապետ* բուժելու, հիվանդի կամ նեղ օրվա համար պահած որևէ բան, ուտելիք⁵, *դեղրար*՝ «բժշկող»⁶ և այլ բառերում:

Թույն իմաստը երևում է *դեղել*՝ «թունավորել»⁷, *դեղվել*⁸ (*եղվել*)⁹՝ «թունավորվել», *դեղագործ*՝ «մահադեղ պատրաստող»¹⁰, *դեղատու*՝ «թունավորող»¹¹, *դեղակուր*՝ «թունավորված»¹², *դեղթափ* (*տեղթափ*)¹³՝ թույնի ուժը վերացնող (*անդեղյա*, *թրիաք*) և այլ բառերում: Հայ մատենագրության մեջ

³ **Ս. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 1, Ե., 1944, էջ 503:

⁴ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. Ա, Ե., 1836, էջ 608:

⁵ **Հ. Աճառեան**, *Հայերեն գաւառական բառարան*, հ. Թ, Էմինեան ազգագրական ժողովածու, Թիֆլիս, 1913, էջ 272: **Ս. Մալխասեանց**, նշվ. աշխ., էջ 503: **Ս. Ամատունի**, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 163: **Ա. Ասիրխանյան**, *Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ)*, Լոռի, 2009-2014:

⁶ **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., էջ 273: **Յ. Հուլունեան**, **Ս. Հաճեան**, *Յուշամատեան Խոտորջուրի*, Վիեննա, 1964, էջ 440: **Ռ. Նահապետյան**, *Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը*, Ե., 2004, էջ 168:

⁷ **Փ. Բուզանդ**, *Հայոց պատմություն*, Ե., 1987, էջ 192: **Ս. Մալխասեանց**, նշվ. աշխ., էջ 503: **Ա. Ասիրխանյան**, ԴԱՆ, Լոռի, 2009-2014:

⁸ **Ա. Հարությունյան**, *Տարոնի ազգագրական նյութեր*, ՀԱԻ, ԱԲԱ, Գործ 69, էջ 215:

⁹ ԴԱՆ, Լոռու մարզ, Ծնող, 2015:

¹⁰ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. Ա, էջ 608: **Ղ. Փարպեցի**, *Հայոց պատմություն*, Թուրք Վահան Մամիկոնյանին, Ե., 1982, էջ 88: **Ս. Մալխասեանց**, նշվ. աշխ., էջ 503:

¹¹ Նույն տեղում: *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. Ա, էջ 608:

¹² **Կ. Գանձակեցի**, *Պատմություն հայոց*, Ե., 1961, էջ 37, 106: **Ս. Մալխասեանց**, նշվ. աշխ., էջ 503:

¹³ **Ս. Գարամաճեան**, *Նոր բառգիրք հայերեն լեզուի*, Կ. Պօլիս, 1910, էջ 78: *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. Ա, էջ 608: **Ա. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 215:

հաճախ են հիշատակվում *դեղ կենաց*¹⁴ և *դեղ մահու*¹⁵ արտահայտությունները («կատարեաց զգործսն զանարժանս զանտես զանլուր, այս ինքն ընդ կենաց դեղն զդեղ մահուն խառնելով»)՝¹⁶:

Դեմքի շպարը նույնպես *դեղ*¹⁷ է կոչվել, շպարվելը՝ *դեղվել*¹⁸ և այլն: *Դեղ* են կոչվել նաև կաշվի մշակության համար պատրաստվող դաբաղանյութերը:¹⁹

Դեղ բառի ներկ իմաստը ցույց է տալիս այն հանգամանքը, որ բույսերը նաև ներկատու են: Այդ երևույթը երևում է *դեղ* «ներկ»²⁰, *դեղագործ*՝ «ներկ պատրաստող, ներկերով նկարող»²¹, *դեղանկար*՝ «գունավոր ներկերով նկարած»²², *գրադեղ*՝ «մելան, թանաք»²³, *դեղնդեղ*՝ «ներկի համար գոր-

¹⁴ **Ս. Խորենացի**, *Հայոց պատմություն*, Ե., 1981, էջ 46: **Գ. Նարեկացի**, *Մատենանոթերգութեան*, Ե., 1985, էջ 258, 265, 603:

¹⁵ **Ս. Խորենացի**, նշվ., աշխ., էջ 374: **Ս. Անեցի**, *Մատենանոթերգութեան*, Ե., 1983, էջ 99: **Գ. Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 16, 22:

¹⁶ **Փ. Բուզանդ**, նշվ. աշխ., էջ 192, 330:

¹⁷ **Ս. Մալխասեանց**, նշվ. աշխ., 502: *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Ա, Ե., 2001, էջ 323:

¹⁸ Նշվ. աշխ., էջ 325:

¹⁹ **Գ. Գեորգեան**, *Չնքունպատում. քննական պատմություն հայոց Չնքունի (տեղագրական-պատմական-մշակութային-բանահյուսական-ազգագրական)*, հ. 1, Երուսաղեմ, 1970, էջ 390:

²⁰ *Նոր բարձիրք հայկազեան լեզուի*, հ. Ա, էջ 608: **Ս. Հարությունյան**, *Ներկերի և թանաքների գործածությունը հին հայկական ձեռագրերում*, Ե., 1941, էջ 29, 35, 51, 59: **Ս. Հարությունյան**, Տարնի ազգագրական նյութեր, էջ 234: **Ս. Մալխասեանց**, նշվ. աշխ., 502:

²¹ *Նոր բարձիրք հայկազեան լեզուի*, հ. Ա, էջ 608: **Ս. Մալխասեանց**, նշվ. աշխ., 503: **Բ. Առաքելյան**, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ.*, Ե., 1958, էջ 306, 307, 330:

²² **Ս. Մալխասեանց**, նշվ. աշխ., էջ 503:

²³ Նշվ. աշխ., էջ 502: **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, էջ 648:

ծածվող դեղին կավային նյութ»²⁴, *դեղջուր՝ «ներկաջուր», դեղջրել՝ «ներկել»*²⁵ և այլ բառերում:

Դեղ և դեղջուր (տեղջուր, դայենի) բառերը նաև «մա-կարդ, մերան» են նշանակում²⁶ և լայն տարածում են ունեցել հայոց պատմաագագրական շրջաններում ու դեռևս պահպանվում են Լոռու և Տավուշի խոսակցական լեզվում: Կարծում ենք, որ *դեղջուր* բառը մեզ տեղեկություն է տալիս կաթը մերելու ամենանախնական եղանակներից մեկի մասին, երբ այն մակարդել են բուսական ծագում ունեցող խառնուրդներով կամ էլ հենց բույսերի հյութով: Այդ բույսերից են *մակարդ* խոտը (*մակարդուկ, բուն մածնի, կաթնախոտ, մածնի, քրքամեղ*)²⁷ և *կանկա-րը*²⁸:

Աչքի *ծարիրը* («սուրմա») նույնպես *դեղ*²⁹ է կոչվել, քա-նի որ քսում էին ոչ այնքան գեղեցկության, որքան աչքերի հի-վանդությունները բուժելու նպատակով: Ծխի, փոշու մեջ աշ-խատելիս, հատկապես հաց թխելիս սուրմա էին քսում, որը կոչվում էր «աչքին դեղ քաշել»³⁰: *Ծարիրի* համար հատուկ գործիք կար, որը կոչվում էր *դեղդիր (տեղդիր)* կամ *դեղա-դրիր*³¹:

²⁴ Ս. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 504:

²⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, էջ 324:

²⁶ Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 8, 219: Սահակ Մովսիսյան (Բենսե), *Հարք (Մշո Բուլանըխ)*, ՀԱԲ, հ. 3, Ե., 1972, էջ 51, 73: Ս. Ավագյան (Մերինե), *Սրճակ*, ՀԱԲ, հ. 8, Ե., 1978, էջ 42: Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, էջ 323: Ս. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 502, 503: Գ. Նարեկացի, նշվ. աշխ., էջ 632: Ս. Ամատունի, նշվ. աշխ., էջ 158:

²⁷ Կ. Գաբիկեան, *Հայ բուսաշխարհ*, Երուսաղեմ, 1968, էջ 145: Ա. Թորոսյան, *Հայաստանի դեղաբույսերը*, Ե., 1983, էջ 190:

²⁸ Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 145:

²⁹ Հ. Աճառեան, *Գավառական բառարան*, 272: Գ. Սրվանձությանց, *Երկեր*, հ. 1, Ե., 1978, էջ 570: *Նոր բառգիրք հայկազենան լեզուի*, հ. Ա, էջ 608:

³⁰ Գ. Սրվանձությանց, նշվ. աշխ., էջ 570: Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 74-75: Ս. Ամատունի, նշվ. աշխ., էջ 163:

³¹ Գիրք վաստակոց, Վենետիկ, 1877, էջ 205, 243: Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 74: Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, էջ 323:

Դեղ բառի «բույս» իմաստը տեսնում ենք *վանվորուկի* մասին Ա. Ամասիացու հետևյալ տողերում. «Յայս դեղս շատ զօրութիւն կայ որ չէ գրած, բացի բժշկական նաև դիւթական զօրութիւն ունի»³²: Հ. Մանդակունին գրում է. «Արմատք դեղոց բժշկաց զցաւս մարմնոյն առողջացուցանեն»³³, իսկ Մարտիրոս Մեքաստացին *ճատվարի* համար հիշատակում է, որ «դեղս ի յայն լեառն կրուննի»³⁴: Գրավոր աղբյուրներում բազմիցս հիշատակվում է «դեղովք պաճուճեալ» արտահայտությունը, որը նշանակում է բույսերից պատրաստված հատուկ խառնուրդ, որով զմոռում էին ննջեցյալին (*զղիակն Բելայ պաճուճեալ դեղովք*)³⁵:

Մի շարք բուսանուններ, որոնք կազմվել են *դեղ* բառով, թերևս պահպանել են բառի նախնական՝ «խոտ» իմաստը, ինչպես օրինակ, *դեղ* կոչվող բույսը, որն անուշ հոտի համար զգել են պանրի մեջ³⁶, *դեղդը* (*դեղոտ*), որով մագերը լվանում էին, որ երկարեն³⁷, ինչպես նաև *դեղու տակ*³⁸, *կապնդեղ*³⁹, *հացադեղ*⁴⁰, *տաքդեղ*⁴¹, *խաշնդեղ*⁴², *արջնդեղ*⁴³, *սիրա-*

³² Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 225:

³³ Տեառն Յովհաննու Մանդակունոյ հայոց հայրապետի, *Ճառք*, Վենետիկ, 1836, էջ 9:

³⁴ Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 199:

³⁵ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 46:

³⁶ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 649: Ալիշան, *Հայրուսակ կամ հայկական բուսաբառություն*, Վենետիկ, 1895, էջ 143:

³⁷ Ալիշան, նույն տեղում: Մ. Ամատունի, նշվ. աշխ., էջ 163: Մ. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 503: Հ. Աճառեան, Գաւառական բառարան, էջ 272: Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 48:

³⁸ Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 54:

³⁹ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, Եր., 1973, էջ 526: А. Ролловъ, *Дикорастущія растенія Кавказа, ихъ распространение, свойства и примѣненіе*, Тифлис, 1908 г., с. էջ 470: Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 297:

⁴⁰ Նշվ. աշխ., էջ 363:

⁴¹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 4, Ե., 1979, էջ 391:

⁴² Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 103, 237:

⁴³ Նշվ. աշխ., էջ 61: А. Ролловъ, նշվ. աշխ., էջ 331:

դեղ⁴⁴, օձադեղ⁴⁵, ճակնդեղ⁴⁶, դադ⁴⁷, դեղձ⁴⁸, դեղտի⁴⁹, դեղուկ⁵⁰, դեղու տակ⁵¹, ծիծեռնադեղ (ծիծեռնիկի խոտ)⁵², կապուտակադեղ⁵³, մշկադեղ⁵⁴, կատվի դեղ⁵⁵, կարմրադեղ⁵⁶, լվադեղ (լվախոտ)⁵⁷ և այլն: Այս բույսերից կապնդեղը գործածվում է միզակապության դեմ, ուստի կարող ենք ստուգաբանել կապը՝ որպես հիվանդություն վերացնող բույս կամ դեղ: *Ճակնդեղ* բառը ծագում է պահլավերեն cakundar բառից, որը հայերենում դարձել է *ճակնդար* և հետագայում, *դեղ* «բույս» բառի հետ բաղադրվելով, վեր է ածվել *ճակնդեղի*⁵⁸: *Խավրճիլը* նաև *խաշնդեղ* է կոչվել, քանի որ արմատը չորացնելու համար խաշաց (ոչխարների) վզից են կախել: Կենդանիների արածելու ընթացքում այդ արմատներն անընդհատ խոտերին քսվելով կլանել են դրանց գորությունը և դարձել թանկարժեք դեղամիջոց⁵⁹:

44 **Կ. Գարիկեան**, նշվ. աշխ., էջ 217:

45 Նշվ. աշխ., էջ 24: **Ղ. Ալիջան**, նշվ. աշխ., էջ 652:

46 Նշվ. աշխ., էջ 395:

47 **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., հ. 1, էջ 648:

48 Նշվ. աշխ., էջ 649:

49 **Վ. Պետոյան**, Սասնա ազգագրությունը, Եր., 1965, էջ 460:

50 **Գ. Ճրեճեան, Փ. Կ. Տոնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան**, Պէյրութ, 1992, էջ 472: **Ռ. Ղազարյան, Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան**, Ե., 1981, էջ 25:

51 **Ղ. Ալիջան**, նշվ. աշխ., էջ 145:

52 Նշվ. աշխ., էջ 272:

53 Նշվ. աշխ., էջ 298:

54 Նշվ. աշխ., էջ 447:

55 Նշվ. աշխ., էջ 305:

56 Նշվ. աշխ., էջ 307:

57 Նշվ. աշխ., էջ 218:

58 **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., հ. 3, Եր., 1977, էջ 176: **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 486:

59 **Ղ. Ինճիճեան, Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի**, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 39: **Ղ. Ալիջան**, նշվ. աշխ., էջ 103: *Բառգիրք հայկազեան լեզուի*, հ. Ա, էջ 554:

Գրավոր աղբյուրներում հիշատակություններ կան սիրադեղ կոչվող բույսերի մասին, որոնց միջոցով ցանկալի մարդու մեջ սեր էին արթնացնում: Դրանցից է *Մրվանդակը*, որը որոնել են երիտասարդ ու գեղեցիկ տղայի ուղեկցությամբ և քաղելիս ասել. «Բարև քեզ, Մրվանդակ խաթուն, որ դու ես սիրադեղ, հանեմ զքեզ սիրոյ համար»⁶⁰: Միջնադարյան տաղերից մեկում ասվում է. «Առնում, ի սարերդ ելնում, Ու ծաղիկ քաղեմ-սիրո դեղ»⁶¹: Ժողովրդական երգերից մեկում դեղ-թույն հակադրությունը երևում է «Ով քեզ սիրե՛ սիրադեղ, Ով քեզ ատե՛ մահադեղ» տողերում⁶²: Մոկսում եթե մաքին նորածին գառանը կաթ չէր տալիս, սիրադեղ կոչվող բույսի չորացրած արմատները մանրացնում և աղի հետ խառնելով լցնում էին գառան մեջքին: Մաքին սկսում էր գառանը լիզել և մոտ թողնել⁶³:

Սիրադեղ էր կոչվում նաև այն նյութը, որը կիրառում էին հմայության ժամանակ:⁶⁴ Օրինակ, միջնադարում սիրադեղ համարվող բույսերի ծաղկափոշին լցնում էին խնձորի մեջ արված փորվածքում և ուղարկում ցանկալի մարդուն, որպեսզի նրա մեջ սեր արթնանա⁶⁵: Սիրադեղով բուժում էին նաև փեսակապը⁶⁶:

Հնագույն ժամանակներից բժշկելն ուղղակիորեն առնչվել է կախարդությանն ու գերբնական ուժերին, քանի որ ըստ հիվանդության մասին ժողովրդական պատկերացումների՝ մարդը հիվանդանում է չար ոգիների ազդեցությունից:

⁶⁰ Ա. Մնացականյան, *Հայկական զարդարվեստ*, Ե., 1955, էջ 488:

⁶¹ Նշվ. աշխ., էջ 488:

⁶² Կ. Գաբիկեան, *Բառգիրք սերաստահայ գաւառալեզուի*, Երուսաղեմ, 1952, էջ 489:

⁶³ Ալ. Դարբինյան, *Մոկսի ազգագրական և բանահյուսական նյութեր*, գործ 24, էջ 7:

⁶⁴ Մ. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 217:

⁶⁵ Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 113:

⁶⁶ Նշվ. աշխ., էջ 114:

Դրանց դեմ պայքարում էին կախարդությամբ զբաղվողները, որոնք նաև բուժում էին հիվանդներին: Բնականաբար այդ նպատակով կիրառվող բուժիչ բույսերին ևս վերագրում էին գերբնական հատկանիշներ:

Մարդկանց բուժում էին ծիսահմայական եղանակների՝ աղոթքների, մոմ թափելու, գարի գցելու, թուղթ ու գիր անելու, հիվանդի գլխի տակ գիր դնելու կամ վզից հմայիլներ կախելու, մատաղ անելու, ուխտագնացության և այլ միջոցներով⁶⁷, որոնք հիշվում են նաև մեր օրերում: Նմանատիպ բժշկության օրինակ են «Գայլի կծածի դեղ» և դեղվածին՝ թունավորվածին բուժող աղոթքները⁶⁸ և այլն:

Բժշկության և կախարդության կապը տեսնում ենք նաև արհեստավորներին վերաբերող հավատալիքներում: Նրանք համարվում էին արարող և հրաշագործ, գերբնական ուժերի հետ կապ ունեցողներ, հետևաբար նաև՝ հիվանդություններ բժշկողներ: Մասնավորապես շատ հիվանդությունների դեպքում հիվանդին տանում էին ներկարարի մոտ, որպեսզի ներկով (դեղով) լի կարասի մեջ նայելով՝ բժշկվի⁶⁹:

Բույսերից մարդն ակնկալում էր առողջություն, երջանկություն, հաջողություն, ուժ և զորություն, չար ուժերից պաշտպանություն և այլն: Այդ նպատակով Ջավախքում նշանված աղջիկը տնից դուրս էր գալիս այն բանից հետո, երբ տղայի հարազատները նրան տանում էին դաշտ՝ կանաչ կոխելու, որպեսզի նա էլ կանաչի ու ծաղկի նման բացվի⁷⁰:

⁶⁷ Մահակ Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 63: Գ. Գևորգյան, *Ղզլար*, ՀԱԲ, հ. 10, Ե., 1980, էջ 55, 72-73: Գ. Միրսևեան, *Երզնկա*, Գահիրե, 1947, էջ 221: Գ. Գևորգեան, նշվ. աշխ., էջ 455, 469: Յ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 385: Ե. Լալայեան, *Վասպուրական, Հաւատք*, ԱՀ, գիրք XXVI, Թիֆլիս, 1916, էջ 210:

⁶⁸ Ս. Հարությունյան, *Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ*, Ե., 2006, էջ 289, 360:

⁶⁹ Կ. Մեղրոսյան, *Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում*, ՀԱԲ, հ. 6, Ե., 1974, էջ 235:

⁷⁰ Ե. Լալայեան, *Ջավախք*, ԱՀ, հ. Ա, Թիֆլիս, 1897, էջ 133:

Ծաղկագարդին երեխաները հիվանդությունները փարատելու համար տնտուտն շրջելով եկեղեցում օրինաձ ուռնու ճյուղերով բոլորին հարվածում էին և ասում. «Քամու տեղ, սրտի դեղ»⁷¹:

Թերևս բույսերին վերագրվող գերբնական հատկանիշները նույնպես նպաստել են, որ *դեղ* բառը նաև կախարդություն նշանակի: *Դեղ* նշանակում է «կախարդանք»⁷², դեղել՝ «կախարդել»⁷³, *դեղատու*⁷⁴, դեղիչ՝ «կախարդ»⁷⁵, *դեղագիտություն*՝ «կախարդություն», *դեղահատ*՝ «հուռուրթ»⁷⁶: *Դեղ* է կոչվել նաև հիվանդին բուժելու հմայական գործողությունը⁷⁷: Միջնադարյան ձեռագրերում կախարդությունը երբեմն հիշատակվում է *դեղ* բառի հետ՝ *կախարդամարտ դեղատվություն*⁷⁸, իսկ վիշապների դեմ պայքարելու միջոցները կոչվում են «դեղ վիշապ պատառեցուցանելոյ»⁷⁹:

Հնագույն բուժական միջոցներից մեկը՝ բժժանքը, կախարդների կամ վհուկների՝ բժժագործների կողմից իրագործվող բժշկություն էր: Բժժանք նաև նշանակում է «դեղ» կամ իր

⁷¹ Նշվ. աշխ., էջ 292:

⁷² **Մ. Զախջախեան**, նշվ. աշխ., էջ 401: **Վ. Հացունի**, *Երդմունք դիւաց եւ ախտից*, Բազմավեպ, Վենետիկ, 1910, հ. ԿԸ, նոյեմբեր, թիվ 11, էջ 486: *Նոր բարոգիրք հայկազեան լեզուի*, հ. Ա, էջ 608: *Գիրք վաստակոց*, Վենետիկ, 1877, էջ 197:

⁷³ **Գ. Ճերեճեան**, **Փ. Կ. Տոնիկեան**, **Ա. Տեր Խաչատուրեան**, նշվ. աշխ., էջ 470: *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Ա, էջ 324: **Ս. Մալխասեանց**, նշվ. աշխ., էջ 526:

⁷⁴ **Մ. Կաղանկատուացի**, *Պատմություն Աղուանից աշխարհի*, Ե., 1983, էջ 50:

⁷⁵ **Ս. Գաբամաճեան**, նշվ. աշխ., 1910, էջ 366: *Նոր բարոգիրք հայկազեան լեզուի*, էջ 608, 609:

⁷⁶ Նշվ. աշխ., էջ 608:

⁷⁷ **Հ. Շարհբեան**, *Պոլոյ ընտանեկան կեանքէն. Նախապաշարումներ ու սովորություններ*, Բիւրակն, ԺՁ տարի, թիվ 22, 9 յուլիս, Կ. Պոլիս, 1898, էջ 427:

⁷⁸ **Ղ. Ալիշան**, *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց*, Վենետիկ, 1895, էջ 366:

⁷⁹ **Ա. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 550:

(հուռութք, որ մարդը կրելով հեռու էր մնում հիվանդություններից ու չար աչքից)⁸⁰: Ալիշանը ենթադրում է, որ բժժանքը և բժշկությունը նույն ծագումն ունեն, քանի որ հմայությունների նպատակներից մեկն էլ մարդուն բժշկելն էր: Նա հիշատակում է Պլինիոսին, որի կարծիքով հմայությունների բույր տեսակները ծագել են բժշկական դիտողություններից⁸¹: Թերևս այս է պատճառը, որ բույսերով և այլ ծագում ունեցող նյութերով բուժումը նույնպես, ավելի արդյունավետ դարձնելու համար, զուգադրում էին հմայական գործողություններով: Այս ամենը վկայող փաստ կարել է համարել նաև այն հանգամանքը, որ բժիշկ բառը ծագում է սանսկրիտի «bhis»՝ «դեղ» բառից⁸²:

Այն իրողությունը, որ դեղ և բժշկել բառերը զուգորդվում են հմայությունների հետ, երևում է նաև չար աչքից պաշտպանվելու հավատալիքներում: Օրինակ, կապույտ գույնը համարվել է չարխափան, այդ իսկ պատճառով մանուկներին պաշտպանելու համար նրանց հագուստի վրա կապույտ ուլունք են կարել կամ էլ կապույտ շոր հագցրել: Հիշյալ հատկության համար կապույտ գույնը հաճախ կոչվել է ակնահարության դեղթափ⁸³:

Բուժիչ համարվող ուլունք-պահպանակների շարքում գոյություն ունեն դեղթափ կոչվողներ, որոնք որպես հակաթույն կիրառվելուց բացի նաև բազմաթիվ հիվանդություններ էին բուժում: Դրա համար մանրացված ուլունքը զցում էին

⁸⁰ Ս. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 391: Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, էջ 487: Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 448: Ս. Գաբամաճեան, նշվ. աշխ., էջ 275:

⁸¹ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 381-82:

⁸² Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 448:

⁸³ Ի. Աբալյան, Նախապաշարումներ, ասանդություններ և սովորություններ Մունճուսունի, Բիրբակն, Կ. Պոլիս, ԺԷ տարի, թիվ 30, 21 հուլիսի, 1899, էջ 475: Ա. Ալպոյաճեան, Պատմություն հայ Կեսարիոյ (տեղագրական, պատմական և ազգագրական ուսումնասիրություն), հ. Ա, Գահիրե, 1937, էջ 1785:

ջրի կամ թանի մեջ ու տալիս հիվանդին⁸⁴: Ստուգելու համար այն զցում էին կաթի մեջ, որի մակարդվելը հաստատում էր քարի դեղթափ լինելը: Ըստ մեզ հասած ազգագրական նյութերի Տարնում տարածում ունեն սան կաթը դեղթափով մերելու եղանակը⁸⁵: Այդ ուլունքները հայոց մեջ կոչվել են սան *փանգեհիր/փագահրի/փանգահ*, որը ծագում է պարսկերեն *փագահր* բառից և հակաթույն է նշանակում⁸⁶:

Ա. Դավրիժեցին *դեղթափ* (թունադեղ) կոչվող քարերի շարքում հիշատակում է *հաջարըլթեսը* «այծեքար», որն առաջանում է վայրի քոշի՝ արու այծի փորում: Ըստ ավանդության քարն ազնիվ հակաթույն էր համարվում, քանի որ այծը միայն օձով և թույնը վերացնող բույսով՝ մուխալով էր սնվում: Այծեքարը մահացու դեղերից բուժելուց բացի սան չարխափան էր, հեռու էր պահում փորձանքներից ու գազաններից⁸⁷:

Դեղթափ էր սան Կամախի Սեպուհ լեռան ստորոտին գտնվող Ավագ վանքում (սբ Առաքելոց վանք) մինչև 1915 թ. պահվող կարմիր միակտոր հակինթը, որը գաղտնարանից հանվում էր մարդկանց բժշկելու համար⁸⁸:

Բույսը որպես դեղթափ ընկալելու մտածողությունը պահպանվել է սան այն հավատալիքում, ըստ որի ոզնիները

⁸⁴ Ա. Իսրայելյան, «Բուժիչ» ուլունք-պահպանակներ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, 1979, էջ 85: Հ. Աճառեան, *Գաւառական բառարան*, 272: Ս. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 503:

⁸⁵ Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 217:

⁸⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, էջ 608: Մ. Ռէստե, *Բժշկականություն*, հ. 2, *Բառարան բժշկական բառից*, 1882, Վենետիկ, էջ 309: *Համառոտ բառարան ի պէտս նորավարժից*, Վենետիկ, 1843, էջ 44: Ա. Դավրիժեցի, *Պատմություն*, Ե., 1988, էջ 468: Ա. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 84:

⁸⁷ Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 469:

⁸⁸ Ըստ ավանդության քարը պատկանել է Տրդատ Մեծին, որն այն նվեր էր ստացել Կոստանդիանոս կայսրից: Քարի կենտրոնում ժամանակին ազուցված է եղել Գրիգոր Լուսավորչի ատամը: Թեոդիկ, *Համայնարոյժ «դեղթացիք»*, Ամենուն տարեցոյքը, ԶԺ տարի, 1922, Կ. Պոլիս, էջ 189: Գ. Միրսեան, նշվ. աշխ., էջ 86:

օձ ուտելուց հետո թորթիկ են ուտում, որպեսզի չթունավորվեն («թորթիկս իբրև դեղթափ ի վերայ ուտե»)՝⁸⁹:

Գրավոր աղբյուրներում պահպանվել են *դեղ* արմատով կազմված անձնանուններ, ինչպես օրինակ Դեղ⁹⁰, Դեղիկ⁹¹, Դեղին⁹², Դեղուկ⁹³, Հագարդեղ⁹⁴, Հայրադեղ⁹⁵, Հովադեղ⁹⁶ և այլն:

Հայկական լեռնաշխարհում մեծ տարածում ունեին նաև «դեղ» բառով կազմված տեղանունները (Դեղ/Տեղ, Դեղի, Դեղառ, Դեղասար, Դեղեք, Դեղդիս, Դեղթափ, Դեղուտ և այլն): Հիշյալ անուններից Դեղառ լեռան մասին ավանդությունն ասում է, որ կենդանիներն այստեղ արածելիս սատկում էին: Դեղթափ կոչվող ժայռի վրա փորագրված են եղել չորս ավետարանիչների պատկերներ, իսկ մոտակայքում գտնվել է Դեղթափ սբ Նշան սրբավայրը⁹⁷: Դեղուտ կոչվող քարայրում գտնվող բնական կլոր սյան մոտ գալով՝ կապույտ հազ ունեցողները բուժվում էին⁹⁸: Ակնհայտ է, որ Դեղառ լեռան անվան հիմքում *դեղ* բառի «թույն», իսկ Դեղուտ և Դեղթափ տեղանունների դեպքում՝ «բուժվելու» իմաստն է,

⁸⁹ Ղ. Ալիշան, *Հայրուսակ*, էջ 192: Սահակ Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 52: Վ. Պետոյան, *Սասնա ազգագրությունը*, Եր., 1965, էջ 470, 292: Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ., էջ 354: Կ. Գաբրիելյան, *Հայ բուսաշխարհ*, էջ 65: Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 199:

⁹⁰ Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, Ե., 1944, էջ 63-64: *Դիվան հայ վիմագրության (այսուհետև՝ ԴՎՀ)*, պրակ IX, Լոռու մարզ, Ե., 2012, էջ 149, 231, 288, 306, 335, 484:

⁹¹ Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 63-64: ԴՎՀ, պրակ IV, Իջևանի շրջան, Ե., 1977, էջ 14:

⁹² Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 63-64:

⁹³ ԴՎՀ, պրակ IX, էջ 191:

⁹⁴ Նշվ. աշխ., էջ 452: ԴՎՀ, պրակ IV, էջ 93:

⁹⁵ Նշվ. աշխ., էջ 302: ԴՎՀ, պրակ IX, էջ 395:

⁹⁶ Նշվ. աշխ., էջ 480:

⁹⁷ Թ. Հակոբյան, Մո. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 2., Ե., 1988, էջ 1114:

⁹⁸ Նշվ. աշխ., էջ 1116:

քանի որ մարդիկ սրբավայրեր էին գնում նաև բուժվելու, չար աչքից ազատվելու համար:

«Դեղ» և «դեղթափ» բառերը նաև նշանակել են որևէ վատ երևույթի դեմ միջոց կամ ելք, որը տեսնում ենք «խաբէ- ութեան դեմ ուրիշ այլ լաւագոյն դեղթափ չունինք՝ բաց ի զգուշութենէ» արտահայտության մեջ⁹⁹: Արցախի բարբառում *դեղթափը (տեղթափ)* նաև համով ուտելիք է, որն ուտողը դեղի կարիք չի ունենում¹⁰⁰: Ուշագրավ է Մ. Ավգերյանի «Դեղ կենաց իբր հոգեւոր բժշկարան» աշխատությունը, որտեղ նա մարդու արատավոր հատկությունների դեմ հնարները դեղ է համարում (օրինակ, ախտ հպարտության և դեղ նորա՝ խոնարհություն, ախտ նախանձու և դեղ նորա՝ եղբայրասիրություն, ախտ բարկության և դեղ նորա՝ հեզություն, ախտ ազահության և դեղ նորա՝ չափավորություն և այլն)¹⁰¹:

Դաշտային ազգագրական նյութերը ևս ցույց են տալիս, որ բույսերը մինչ օրս որպէս դեղ են ընկալվում և բուժական նպատակներով լայնորեն կիրառվում են սննդի մեջ: Ըստ մեր դաշտային նյութերի, Լոռու և Տավուշի մարզերում դեղ են համարվում եղինջը, ավելուկը, հոնը, մոռը, հաղարջը և այլն: 1990-ական թթ. հետո մեծ ծավալներ ստացած հավաքչության հիմնավորումներից մեկը բույսերի օգտակարությունն է: Խնդիրն այն է, որ սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի պատճառով բուսահավաքչության մեջ հմտացած մարդիկ սկսել են հավաքել նաև մոռացության մատնվող բույսեր, որոնց կիրառության տարածմանը նպաստելու նպատակով նախ և առաջ կարևորում են դրանց բուժիչ հատկությունները¹⁰²:

⁹⁹ *Իմաստութիւն մարդկային*, 1833, Վենետիկ, էջ 276:

¹⁰⁰ *Վարդուտ գավառի բառ ու բանը*, կազմող՝ Կ. Ղահրամանյան, Ե., 2011, էջ 260: *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Ա, էջ 324:

¹⁰¹ **Մ. Ավգերեան**, *Դեղ կենաց իբր հոգեւոր բժշկարան*, Վենետիկ, 1842, էջ 77, 103, 135, 200, 497:

¹⁰² **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Լոռի, Տավուշ, 2009-2015:

Այսպիսով, կարող ենք ասել, որ բույսերը վաղնջական ժամանակներից մարդու օգտագործած այն նյութերից են, որոնք հումք են եղել զանազան խառնուրդների պատրաստման համար: Հետևաբար «դեղ» բառը դարձել է բուսական, հետագայում նաև այլ ծագում ունեցող բաղադրությունների ընդհանրական անուն: Բառի իմաստային ընդլայնման համար հատկապես կարևոր նշանակություն են ունեցել բույսերի բուժիչ հատկությունները, որոնք կիրառվել են սերտորեն միմյանց միահյուսված բժշկության և մոզգության մեջ: Բույս-դեղ-թույն-բժշկություն-կախարդություն սերտորեն միահյուսված կապը հատկապես երևում է «դեղ» բառով կազմված բույսերի անունների ուսումնասիրության ժամանակ, երբ դժվար է հասկանալ, թե բառի որ իմաստն է առաջնային: Օրինակ, *արջնդեղը* «սև սունիճ, սև գնդիկ» և՛ դեղաբույս է, և՛ չարխափան¹⁰³, հետևաբար չենք կարող ասել, թե բառաստեղծման ժամանակ ինչն է կարևորվել՝ «բույս» իմաստը, թե բուժիչ և մոզական հատկանիշները:

Amirkhanyan Angela – Semantic Manifestations of the Word դեղ (degh) in Armenian. – The word *դեղ* «medicine» originates from the root of the Proto-Indo-European word *dhel meaning «to flower, to green» which according to its primary meaning is a «herb». Over time healing properties of herbs became so important that the word acquired the meaning of healing, as well as poisoning. In manuscripts of the 5th century a semantic expansion was obvious and the word obtained other meanings. In ancient times intertwined rational (e.g. herbs, minerals) and witchcraft approach was practiced. That's why supernatural qualities were attributed to

¹⁰³ Վ. Թեմուրճյան, *Գամիրքի հայերը*, ՀԱԲ, հ., 1, Ե., 1970, էջ 194: Մ. Դանիելյան, *Խիանի հայ ժողովրդին սովորություններն ու նախապաշարմունք*, Բիւրակն, ԺԶ տարի, թիվ 22, 9 յուլիս, Կ. Պոլիս, 1898, էջ 426: Ե. Լալայեան, նշվ. աշխ., էջ 203: Գ. Հակոբյան, *Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը*, Ե., 1974, էջ 266:

the herbs. Thus, the word also acquired the meaning of sorcery, and it even meant to relieve the mental illness.

Амирханян Анжела – Семантические проявления слова դեղ «лекарство» в армянском языке. – Слово դեղ «лекарство» восходит к праиндоевропейскому корню *dhel «цвести, зеленеть», первичное значение которого – «растение». С течением времени лечебные свойства растений стали важнее, и слово приобрело значение «исцеляющий», а также использовалось со значением «яд». В рукописях V века наблюдается расширение семантики слова. В древности лечение подразумевало как рациональные (травы, минералы) так и магические приемы врачевания, которые были тесно связаны между собой. Растениям приписывались сверхъестественные свойства, они стали частью магии, и слово «դեղ» приобрело значение «колдовство», а также использовалось для обозначения исцеления от душевной боли.

Ավագիմյան Արինե (Հայաստան, ՀՊՄՀ)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՍԱՆՇԱՅԻՆ ԿԱՊԱԿՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվաբանության մեջ բայերի դասանշային դասակարգումն ուսումնասիրվում է նեղ և լայն իմաստներով: Բայերի դասանշային կապակցելիությունը նեղ իմաստով բայի կապակցելիությունն է ենթակայի դասային տարբեր խմբերի հետ: Բայերի դասակարգումը համեմատելի է որոշյի դեր կատարող ածականների հետ, որոնք ի գորու են հանդես գալու ոչ միայն որոշյային, այլև ստորոգելիական գործառությամբ: Բայերի կապակցելիությունը ենթակայի տարբեր դասերի հետ նույնական է բայերի դերբայական ձևերի (դերբայական ածականների) կապակցելիությանը գոյականի տարբեր դասերի հետ¹: Օրինակ՝ *մարդը կարողում է – կարդացող մարդ, պատանին ասմունքում է – ասմունքող պատանի* և այլն:

Խոսքի մասերի դասանշային կապակցելիությունը լայն իմաստով հատկանիշի կապակցելիությունն է վերագրվող առարկայի հետ: Բայերի դասանշային կապակցելիության դեպքում հաշվի են առնվում բայ-ստորոգյալի կապակցելիական հնարավորությունները, որը կարող ենք տարածել նաև հատկանիշ ցույց տվող մյուս խոսքի մասերի վրա:

Սույն հոդվածում քննվում են ժամանակակից հայերենի ածական-որոշյի դասանշային կապակցելիական հնարավորությունները գոյական-որոշյալի հետ: Որոշյի դեր կատարող ածականների դասանշային դասակարգումը կատարվում է ըստ գոյականների չորս դասային խմբերի, որոնք խոսքում գործածվում են տարբեր զուգորդումներով՝ առաջ բերելով բացարձակ և հարաբերական բազմադաս խմբեր:

¹ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 463-464:

Դասանշային կապակցելիության դեպքում կարևորվում են կապակցվող միավորների իմաստները, տվյալ դեպքում՝ որոշյի և որոշյալի բովանդակային պլանները և մասնավորապես՝ նրբիմաստները. հայերենում տարածված հոմանշային շարքերը տարբերվում են նաև դասանշային կապակցելիության ոլորտում, ինչպես՝ *դատարկ դույլ, սին երազներ, փուչ կաղնի* և այլն:

Որակական ածական-որոշիչները դասանշային կապակցելիության տեսանկյունից սահմանափակում չունեն. կարող են կապակցվել կա՛մ անձնանիշ, կա՛մ իրանիշ թանձրացական, կա՛մ իրանիշ վերացական, կա՛մ կենդանանիշ և կա՛մ էլ բազմադաս գոյական-որոշյալների հետ, ինչպես՝ *խելացի ուսանող, բարձր ծառ, մեծ երջանկություն, վայրի գազան* և այլն: Մինչդեռ հարաբերական ածական-որոշիչներն ավելի սակավ են կապակցվում իրանիշ վերացական գոյական-որոշյալների հետ (ինչպես՝ *աշակերտական մտորումներ, ուսանողական մտնեցում* և այլն) և ոչ բոլոր հարաբերական ածականներն ուղիղ իմաստով² ի գործ են կապակցվելու իրանիշ վերացական գոյական-որոշյալների հետ:

Բարդ ածականների դասանշային կապակցելիությունը որոշակիորեն տարբերվում է պարզ ածականների կապակցելիությունից. վերջիններիս դեպքում կապակցելիությունը մեծամասնությամբ պայմանավորված է իմաստով, մինչդեռ բարդ ածականների կապակցելիության դեպքում պետք է հաշվի առնել.

1. Բառաբաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը, այսպես՝ «գոյական+բայական արմատ» կաղապարով բաղադրված բարդ ածականների կապակցելիության հարցում կարևորվում է բայարմատի արտահայտած իմաս-

² Դասանշային կապակցելիության դեպքում հաշվի ենք առնում բառերի արտահայտած միայն ուղիղ իմաստները, քանի որ փախաբերական իմաստի դեպքում բառերի բովանդակային պլանները խիստ մեծանում են. կապակցելիության տեսանկյունից գրեթե սահմանափակում չեն առաջացնում:

տը. *-գետ, -խոս, -միտ, -մոլ, -վաճառ* արմատներով կազմված ածականները կապակցվում են անձնանիշ գոյական-որոշյալների հետ, ինչպես՝ *ազատամիտ, արագախոս, գինեվաճառ, նվագամիտ, շատախոս* և այլն: Օրինակ՝ *Ամենայնուրեք խոսքերով հայհոյեց Ասլանին ու նրա գինեվաճառ քեռուն* (ՄԽ):

2. *-Ձև, -նման, -կերպ* արմատներով կազմված բարդ ածականների կապակցելիությունը կախված է սերող հիմքի իմաստային պատկանելությունից, ինչպես՝ *ալեձև, մարդակերպ, նավաձև, շատրվանաձև* և այլն: Օրինակ՝ *Ալեձև կանաչ բլրակները հետզհետե... շրջապատում էին այն մենավոր անկյունը* (Փ):

Ածանցավոր ածականները բայերից կամ գոյականներից առաջացած փոխակերպումներ են, ինչպես՝ *անթարթ, բացատրական, ծիծաղկոտ, փայտյա, աշակերտական* և այլն, որոնց դասանշային կապակցելիությունը բայանունի դեպքում հարաբերվում է արմատի կապակցելիական հնարավորության, իսկ գոյականի դեպքում՝ բառի՝ նոր ձևք բերած իմաստի հետ³: Օրինակ՝ *աչքերը թարթել-անթարթ աչքեր*:

Առաջնորդվելով Գ. Ջահուկյանի առաջադրած կարևոր լեզվաբանական գաղափարներից մեկով՝ կատարել ենք «...ածականների հնարավորին չափ լրիվ դասակարգում՝ ըստ գոյականների տարբեր դասերի հետ նրանց ունեցած կապակցելիության»⁴:

Ածական-որոշիչները դասանշային կապակցելիության տեսանկյունից ի հայտ են բերում գոյական-որոշյալների հետևյալ դասային խմբերը.

- անձնանիշ,
- իրանիշ,
- կենդանանիշ,
- բազմադաս, որն էլ, ինչպես արդեն նշվել է, կարող է լինել՝ հարաբերական և բացարձակ:

³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Գ., նշվ. աշխ., էջ 512:

⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Գ., նշվ. աշխ., էջ 308:

Սույն ուսումնասիրությունը կատարել ենք հենց այս սկզբունքով, քննվել են ժամանակակից հայերենի ածական-որոշիչ դասանշային կապակցելիական հնարավորությունները գոյական-որոշյալի՝ անձնանիշ, իրանիշ, կենդանանիշ, բազմադաս գոյական-որոշյալների հետ:

Անձնանիշ գոյական-որոշյալ պահանջող ածական-որոշիչները արտահայտում են.

1. Մտավոր կարողություն, ունակություն, ինչպես՝ *ամլամիտ, խելացի, տգետ* և այլն: Օրինակ՝ *Խելացի Եղիշեն գտավ հարցի ճիշտ լուծումը* (ՄԽ):

2. Ներքին հասկանիշ, վարքագիծ, ինչպես՝ *ազնվաբարո, հպարտ, նենգ* և այլն: Օրինակ՝ *Ազնվաբարո Սմբատը գայրույթի մեջ էր*:

3. Մասնագիտություն, զբաղմունք, ինչպես՝ *ածխահատ, նետաձիգ, փայտահատ* և այլն: Օրինակ՝ *ածխահատ բանվոր*:

4. Մոցիալական վիճակ, ինչպես՝ *մեծահարուստ, չքավոր* և այլն: Օրինակ՝ *Ուներ բարի նա մի մայր՝ ծեր ու չքավոր* (ԵԶ):

5. Մի բան կրելը, մի բանով պատվելը, ինչպես՝ *ակնոցակիր, զրահակիր, նիզակավոր* և այլն: Օրինակ՝ *Զրահակիր նիզակավոր պահակները ոչ մի իշխանի կամ նախարարի առջև իսկույն դուռ չէին բացում* (ՄԶ):

6. Ասացականություն, ինչպես՝ *ահագույժ, աղետագույժ, բազմաբան, չարախոս*

7. *նորաբեղ* և այլն: Օրինակ՝ *բազմամուսին կին և նորաբեղ պատանի*:

8. Գլխավոր և այլն: Օրինակ՝ *Չարախոս աղջիկն անմիջապես լռեց*:

Այս խմբի ածականները հիմնականում կազմված են ասացականություն արտահայտող բայական արմատներից, ինչպես՝ *-խոս, -գույժ* և այլն:

9. Տարիքային սահմանափակում՝ Հմնտ. *մանկագետ, նորախոս* և *բազմակնճիռ, զառամյալ* և այլն: Օրինակ՝ *նորախոս երեխա* և *զառամյալ տատիկ*:

10. Մեռային տարբերակում: Հմնտ. *աղջկահասակ, բազմամուսին* և *բազմակին*, իմաստ դարձած փոխաբերականություն, ինչպես՝ *աղավնասիրտ* («բարեսիրտ»), *աղվեսաբարո* («խորամանկ, կեղծավոր»), *ոսկեսիրտ* («ազնվասիրտ») և այլն: Օրինակ՝ *աղվեսաբարո իշխան*:

Այս խմբի անականները զուգահեռվում են նմանատիպ հատկությամբ օժտված բայերի հետ, ինչպես՝ *խոզանայ, կապկանայ, ոչխարանայ* և այլն:

Իրանիշ գոյական-որոշյալ պահանջող անական-որոշիչներն արտահայտում են.

1. Գույն, երանգ, ինչպես՝ *ալեփառ, աղյուսագույն, բալագույն, լազուր* և այլն: Օրինակ՝ *Լազուր երկնքում ճախրում էին աղավնիները*:

2. Նյութի հատկանիշ, որոնք գերազանցապես կազմված են *-ե, -յա* անանցներով, ինչպես՝ *աղամանդե, ազբեստե, բամբակյա, շիֆոնե, շյուղե* և այլն: *Պատանին փռեց... մի պաստառ բամբակյա մաքուր գործվածքից (Բ)*:

3. Թվային հատկանիշ, որոնք գերազանցապես կազմված են *-ականի, -ոտանի* և նմանատիպ բաղադրող հիմքերով, ինչպես՝ *երկուականի մատանի, երեքոտանի այթոռ* և այլն:

4. Մնդի հատկանիշ, ինչպես՝ *ախորժաբարո, աղախարշ, ամոքուն, բազմահամ, զարշահամ* և այլն: Օրինակ՝ *ամոքուն խևոր*:

5. Բույսի հատկանիշ, ինչպես՝ *ածվենի, ակնայթուփագգի, աղեղնաջիղ* (տերևներին հատուկ), *զարնանացան, նրբաճյուղ* և այլն: Օրինակ՝ *զարնանացան գորեն*:

6. Հեղուկ մարմիններին և/կամ հեղուկ մարմին պարունակող առարկաներին հատուկ հատկանիշ, ինչպես՝ *ակնավճիտ, ալեծուփ, բազմակոհակ, դանդաղահոս* և այլն: Օրինակ՝ *Ծածանը բնակվում էր դանդաղահոս ջրերում*:

7. Պինդ մարմին նշող, ինչպես՝ *աղացիկ, գամուտ, գոգավոր, նկարագարող, ոլոր, ոսկեձույլ* և այլն: Օրինակ՝ *Զոգավոր սարերի մեջ ընկած այդ լիճը դեռ մանկությունից էր ծանոթ Գարեգինին* (ՄԽ):

8. Տարածական հատկանիշ, ինչպես՝ *աղբալից, աղտեղի, ամայի, գազալեցուն, գազանաշատ* և այլն: Օրինակ՝ *Մի թե աչքով դու չտեսար գլուղ ու քաղաք ողջ ամայի* (ՀԹ):

9. Երաժշտական գործիքների հատուկ հատկանիշ, ինչպես՝ *աղեպինդ, բազմալար* և այլն: Օրինակ՝ *Ժողովրդի հոգին նման է մի բազմալար երգեհոնի* (ՎՏ):

10. Չայնանշություն, ինչպես՝ *աղեղնաձայն, սոսափուն* և այլն: Օրինակ՝ *սոսափուն ծառեր*:

11. Որևէ շինությունը հատուկ հատկանիշ, ինչպես՝ *աղյուսածածկ, բազալտաշեն, բազմահարկ, բազմակամար, գմբեթարդ* և այլն: Օրինակ՝ *Նրանք քայլում էին գարնան գարթոնք ապրող տուֆաշեն քաղաքով, և ամեն մի քայլափոխի նրանց ժպտում էին բազմահարկ վարդագույն շենքերը* (ԲՎ):

12. Տպագրված աշխատանքների հատուկ հատկանիշ, ինչպես՝ *բազմահատոր, մամլահավաք* և այլն: Օրինակ՝ *բազմահատոր գիրք*:

13. Եզակի հատկանիշ, ինչպես՝ *աղերսաձիգ* (ձեռքերին հատուկ), *ճպրոտ* (աչքերին հատուկ) և այլն: Օրինակ՝ *Մա մի միջահասակ մարդ էր, ճպրոտ, ցավագար, փոքրիկ աչքերով* (Փ):

Կենդանանիշ գոյական-որոշյալ պահանջող ածական-որոշիչներն արտահայտում են.

1. Թռչուններին հատուկ հատկանիշ, ինչպես՝ *ահագնաթև, աղավնաթև* և այլն: Օրինակ՝ *ահագնաթև արծիվ*:

2. Չայնանշություն, ինչպես՝ *ահագնասնունչ, հաչան կոկոսան*, և այլն: Օրինակ՝ *հաչան շուն*:

3. Ֆիզիկական (մարմնական), հատկապես՝ որևէ բան ունենալու կամ չունենալու հատկանիշ, ինչպես՝ *ազատ, ազեվոր, եղջերավոր, մագիլավոր* և այլն: Օրինակ՝ *Իսկ սա (ձեռ-*

նարկը) հասկապես կազմված (է) եղջերավոր անասուններ և ձի, ոչխար ու խոզ պահելու համար (Մ):

4. Կենդանիների որևէ ընտանիքին, տեսակին հատուկ հատկանիշ, ինչպես՝ *բադազգի, բազեազգի, եզնազգի, շնազգի* և այլն: Օրինակ՝ *Շնազգի կենդանիների հոտատությունը շատ զարգացած է:*

5. Տեղային հատկանիշ, ինչպես՝ *երկկենցաղ, ջրաբնակ* և այլն: Օրինակ՝ *երկկենցաղ գորտ:*

Բազմադաս գոյական-որոշյալները կարող են լինել բացարձակ և հարաբերական բազմադաս՝ առաջ բերելով կապակցելիական տարբեր գուգորդումներ:

Բացարձակ բազմադաս գոյական-որոշյալ առնող ածական-որոշիչները արտահայտում են.

1. Պատճառ, միջոց, ինչպես՝ *ախտաբեր, ահաբեր, աղետաբեր* և այլն: Հմնտ. *ախտաբեր մարդ/վերք/լուր/ գազան:*

2. Մարդու ներաշխարհին հատուկ հատկանիշ, ինչպես՝ *ահագրու, ամենահաճ* և այլն: Հմնտ. *ահագրու թշնամի/զենք/գույժ/արջ:*

3. Քանակ, ինչպես՝ *բազմահագար, բազմահարյուր* և այլն: Հմնտ. *բազմահագար մարդիկ// գրքեր// երազներ// թռչուններ:*

Հարաբերական բազմադաս գոյական-որոշյալ առնող ածական-որոշիչները կարող են լինել եռանդամ և երկանդամ: Եռանդամներն իրենց սակավության պատճառով ենթադասակարգման չեն ենթարկվել, դրանցից են՝ *ագրուլանման, ախտաբույր, ախտատարած* և այլն, որոնք կապակցվում են անձնանիշ, կենդանանիշ և իրանիշ թանձրացական գոյական-որոշյալների հետ: Երկանդամ գոյական-որոշյալ առնող ածական-որոշիչները գերակշռում են և ենթադասակարգվում են հետևյալ կերպ.

I. իրանիշ թանձրացական և իրանիշ վերացական գոյական-որոշյալների հետ կապակցվող ածական-որոշիչներ,

II. անձնանիշ և իրանիշ թանձրացական գոյական-որոշյալների հետ կապակցվող ածական-որոշիչներ,

III. անձնանիշ և կենդանանիշ գոյական-որոշյալների հետ կապակցվող ածական-որոշիչներ:

Նշված խմբերը ևս ենթադասակարգվում են, այսպես.

I. իրանիշ թանձրացական և իրանիշ վերացական գոյական-որոշյալների հետ կապակցվող ածական-որոշիչներն արտահայտում են.

1. կրոնական հատկանիշներ, ինչպես՝ *աբբայական, իսլամական, քրիստոնեական* և այլն: Հմնտ. *քրիստոնեական վանքեր* // *գաղափարախոսություն*:

2. Ազգություն, ինչպես՝ *աբխազական, ռուսական, քրդական* և այլն: Հմնտ. *ռուսական կտավ* // *սովորություն*:

3. Պատկանելության հարաբերություն, որոնք հիմնականում կազմվում են *-ային, -ական* ածանցներով, ինչպես՝ *դպրոցական, լակոնսային, տնական* և այլն: Հմնտ. *դպրոցական հագուստ* // *կանոնադրություն*:

II. Անձնանիշ և իրանիշ թանձրացական գոյական-որոշյալների հետ կապակցվող ածական-որոշիչներն արտահայտում են ձայնանշություն, ինչպես՝ *թավաձայն* և այլն: Հմնտ. *թավաձայն աշակերտ* // *կիթառ*:

III. Անձնանիշ և կենդանանիշ գոյական-որոշյալների հետ կապակցվող ածականներն արտահայտում են.

1. ֆիզիոլոգիական հատկանիշ, ինչպես՝ *ծարավահյուծ, սովալյուկ, սովամահ* և այլն: Հմնտ. *ծարավահյուծ մարդ* // *ուղտ*:

2. Չայնանշություն, ինչպես՝ *ազատաձայն, ահագնագոչ, աղերսաձայն* և այլն: Հմնտ. *ահագնագոչ տիրակալ* // *սոյուժ*:

3. Ընթացականություն, շարժում, ինչպես՝ *ահեղավագ, արագավագ* և այլն: Հմնտ. *արագավագ մարզիկ* // *ջայլաֆ*:

4. Մեռային տարբերակում, ինչպես՝ *անորձատ, հղի* և այլն: Հմնտ. *անորձատ տղամարդ* // *խոզ*:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ածականների դասանշային կապակցելիությունը կարող է պայմանավորված լինել.

ա) բառիմաստով,

- բ) տվյալ ածականի գործածության ոլորտով,
 գ) կազմությամբ: Խոսքը վերաբերում է հասկապես բարդ և ածանցավոր ածականներին:
 դ) տեսակով, ինչպես՝ հարաբերական ածական-որոշիչները սակավ դեպքերում կարող են կապակցվել իրանիշ վերացական գոյական-որոշյալների հետ,
 ե) մի շարք այլ հանգամանքներով:

Avagimyan Arine - *The Class Sign Coherency of Adjectives in Modern Armenian.* – The class sign coherency of parts of speech in a broad sense is the coherence of the attribute with the ascribed object.

The following article examines the possibilities of class sign coherency of adjective-attribute with noun-adjunct of Modern Armenian. The class sign classification of adjectives playing the role of attribute takes plays according to four class groups of nouns which are used in different combinations in speech, bringing forward absolute and relative multiclass groups. In the case of class sign coherence the pithy plans and particularly the subtle meanings of the coherent unit, in this case of the attribute and the adjunct, are important.

Авагимян Аринэ – *Атрибутивная сочетаемость прилагательных в современном армянском языке.* – Атрибутивной сочетаемостью частей речи в широком смысле этого слова является сочетаемость свойств, относящихся к предмету.

В данной статье анализируются возможности атрибутивной сочетаемости прилагательного-определения с существительным-определяемым. Атрибутивная классификация прилагательных, выполняющих роль определения, осуществляется по четырем категориальным группам существительных, которые употребляются в речи с различными корреляциями, формируя абсолютные и относительные многоуровневые группы. В атрибутивной сочетаемости особую важность приобретает содержательный план сочетаемых единиц, в данной ситуации – определения и определяемого слова – и прежде всего оттенки значений.

Ավագյան Ինգա (Հայաստան,
ՇՀՀԿ, ԿՊՄԱԹ)

ԵՎՍ ՄԵԿ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՄԿՋԲՆԱՂԲՅՈՒՐ ԷՐԻՒՄԻ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

Շիրակի պատմության և հնագիտության ուսումնասիրության համար համեմատական լեզվաբանության տեսանկյունից կարևոր են նաև բիայնական այն արձանագրությունները, որոնցում հիշատակվում են Էրիախի երկիրը կամ նրա հարևաններից որևէ մեկը: Պատմական Շիրակի մասին ուրարտական աղբյուրներից վկայում են 15 արձանագրություններ¹, մեկ սեպագիր արձանագրություն կրող ուլունք և մեկ արձանագրություն ասուրաբաբելական աղբյուրներից՝ Աշուրիսուայի գեկույցը Սարգոն II-ին², որտեղ հիշատակվում է Էրիախի համադաշնության մասը կազմող Գուրիանի երկիրը: Շիրակի տարածքում Էրիախի երկրի մասին վկայող չորս

¹ Թարգմանությունը կատարված է ըստ Պ. Հովհաննիսյանի, Ա. Մովսիսյանի Հայ ժողովրդի Պատմության քրեատմատիայի (ՀԺՊ) «Վանի թագավորության սեպագիր աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին» գլխի, Ե., 2007, էջ 161-169, 174-181, 183-184, Ն. Հարությունյանի Корпус урартских клинообразных надписей, (КУКН), Ер., 2001, Գ. Մելիքիշվիլիի Урартские клинообразные надписи (УКН), М., 1960, Ի. Դյակոնիվի Աссиро-вавилонские источники по истории Урарту (АВИИУ), Предисловие, раздел I-III, IV, Вестник Древней истории (ВДИ), 2-3, Москва, 1951, Урартские письма и документы (УПД), М.-Л., 1963, Գ.Մերեթելիի Урартские памятники музея Грузии, Тбилиси, 1939, Salvini M., *Corpus dei testi Urartei* (CTU I), volume I, Le iscrizioni su Pietra e Rocca I testi, Documenta Asiana, VIII, Volume primo, CNR, Istituto di studi Sulle civiltà dell' Egeo e del vicino Oriene, Roma, 2008, *Corpus dei testi Urartei* (CTU IV), volume IV, Iscrizioni su Bronzi, Argilla e Altri supporti nuove Iscrizioni su Pietra Paleografia generale, Documenta Asiana, VIII, Volume quarto, CNR, Istituto di studi Sulle civiltà dell' Egeo e del vicino Oriene, Roma, 2012 համահավաքների:

² G. Lanfranchi, S. Parpola, *The correspondence of Sargon II, Part II, Letters from the Northern and Northeastern provinces*, Helsinki university press, 1990.

արձանագրություններ կան: Դրանք են՝ Սարիղամիշի, Մարմաշենի, Ղուլիջանի սեպագիր արձանագրությունները և Վանի թանգարանում պահվող սեպագիր ուլունքը: Չորս արձանագրություններն էլ հատվել են Արգիշտի I-ի կողմից: Ժամանակագրական առումով ամենավաղը Սարիղամիշի արձանագրությունն է:

ա) Սարիղամիշի արձանագրություն³: Արձանագրությունը գտնվել է 1878 թ. վերին Սարիղամիշում (Կարսից 53 կմ հարավ-արևմուտք) Ա. Երիցովի կողմից: Ըստ Մ. Նիկոլսկու հաղորդած տվյալների՝ սեպագիրը երկար ժամանակ դրված է եղել Կովկասյան թանգարանի բակում, հետո տեղափոխվել և դրվել էր թանգարանի սանդղամուտքում՝ ջրի ծորակի մոտ, և հայտնվել երկարատև խոնավության մեջ⁴:

Արձանագրության 1-8 տողերում արքան պատմում է, որ գրավել է Ախուրիանի քաղաքը, Աշտուխինի ցեղի երկիրը, 4-րդ տողից իմանում ենք, որ այստեղ գալով՝ արքան լցրել էր *ari*-ները և նվաճել Աշտուխինին, որից հետո Էթիունի երկրից եկել էր ողջ հզոր զորքը: Ճակատամարտն այնքան կարևոր էր, որ արքան հաղթանակի համար հատուկ աղերսել էր (9-15 տողեր) Խալդիին, Թելշեբային, Շիվինիին, բոլոր աստվածներին, որոնք, լսելով արքայի խնդրանքը, հաղթանակ էին շնորհել նրան: Արքան հետ էր շարտել թշնամուն, հետապնդել մինչև Կալրախի մարզի քաղաքը: 16-17 տողերը թերի են, և մենք մասամբ ենք իմանում տարված ավարի մասին՝ ...հազար ...հարյուր ... պատանի, ... հազար 50 ողջ մարդ, 6 հազար ... կին:

Ինչ վերաբերում է 4-րդ տողին, ապա այն նույնպես թերի է, և մնացած սեպանշանների հիման վրա Մ. Նիկոլսկին, Գ. Ծերեթեիին, Գ. Մելիքիշվիլին, Մ. Սավլինին վերականգնում են *ari* «հացահատիկի շտեմարան» բառը: Ն. Հա-

³ КУКН/176, Г. Церетелу, էջ 52-55:

⁴ Նույնը, էջ 52:

րությունյանը նախ եզրակացնում է, որ հաղթարշավները ներկայացնող արձանագրություններում այս և Սարդուրյան տարեգրության 350 շտեմարանների (E'.Mureie) նվաճման մասին հիշատակության դեպքերը եզակի են, և ուրարտացիների համար շատ կարևոր էին Վանանդի ու Շիրակի հացահատիկային շտեմարանները, մյուս դեպքում էլ, հենվելով Ֆ.Քյոնինգի կարծիքի վրա, ժխտում է իր այս տեսակետը՝ մեկնաբանելով, որ հազիվ թե հաղթարշավներում խոսվի հացահատիկի շտեմարանների նվաճման մասին⁵: Ընդունելի է թարգմանության «ari-ները լցրեցի» ձևը, համաձայն որի՝ Աշտուխիին և երկրի շտեմարանները դառնալու էին ուրարտական բանակի թիկունքը ապահովող հենակետ, որը դեպի հյուսիս կազմակերպած արշավանքների ժամանակ արքային ապահովելու էր սնունդով:

Ուշագրավ է Արգիշտիի՝ Սարիղամիշի արձանագրության մեջ հիշատակվող երկու հին քաղաքների՝ Ախուրիանիի և Աշտուխիինի գուգադրումը միջնադարյան և ժամանակակից անվանումներին: Առաջինը, բնականաբար, կապվում է Ախուրյան գետի անվան, իսկ երկրորդը՝ Կարսի շրջանի Աստախանա (Աստախանի) բնակավայրի անվան հետ⁶:

Ուրարտական արքաները իրականացրել են նաև էթնիկ տեղաշարժեր: Անդրադառնանք Շիրակում կատարված էթնիկ տեղաշարժերի հարցին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գերեվարված բնակչության աշխատանքը օգտագործվում էր թագավորական, համայնքային և մեհյանային տնտեսություններում պետական նշանակության խոշոր միջոցառումների ժամանակ՝ ամրոցների ու մեհյանների կառուցում, ջրանցքների անցկացում, ինչպես նաև այգեգործության, հողամշակության ու արհեստագործության մեջ: Ավարառուական պատերազմները գերիների ձեռք բերման

⁵ КУКН/176 ծան.7, Г. Церетели, էջ 52-53, СТУ I-A8-2V0:

⁶ Б. Пиотровский, *Ванское царство (Урарту)*, М., 1959, էջ 31:

հիմնական աղբյուրն էին: Ուրարտուի ծաղկման շրջանում (Ք.ա. VIII դ.) ռազմագերիների տարեկան քանակը հասնում էր մի քանի տասնյակ հազար մարդու, որոնք, պետական կամ ինքնուրույն տնտեսվարողների կարգավիճակ ստանալով, օգտագործվում էին ուրարտական տնտեսության տարբեր ոլորտներում: Այսպիսով, նրանց աշխատանքը ամուր դրված էր Ուրարտուի բազմաբնույթ տնտեսական կյանքի և քաղաքական կարգի հիմքում: Այս առումով ուշագրավ են արձանագրություններից բերված տեղեկությունները, որոնցից մոտավոր պատկերացում ենք ստանում էրիախի երկրից գերված մարդկանց քանակի մասին: Կարևոր խնդիրներից է, թե էթնիկ տեղաշարժերի ժամանակ Վանի արքաները ինչ սկզբունքներով և օրինաչափություններով էին առաջնորդվում: Հաշվի էին առնվում տեղահանված ազգաբնակչության աշխարհագրական միջավայրը, հիմնական զբաղմունքը, սովորույթները, կրոնապաշտամունքային առանձնահատկությունները, էթնիկ պատկանելությունը: Այսպես՝ Սևանա լճի հարավարևմտյան ափին տեղադրվող էթիունյան համադաշնության մեջ մտնող Թուլիխու քաղաք-պետության տեղահանված ազգաբնակչությանը Սարդուրի II-ը բնակեցնում է Վանա լճի հարավարևմտյան ափին: Այս տարածքով հոսող գետը, որը գտնվում է Վանա լճի ավազանում, և նույնանուն գյուղը հայկական սկզբնաղբյուրներում անվանվում են Թուլիս-Թուլիս և հավանաբար ծագում են Թուլիխու ցեղի անունից⁷:

Սարիղամիշում Արգիշտի I-ի թողած արձանագրությունից տեղեկանում ենք էրիախի երկրի անմիջական հարևան Աշտուխինի երկրից գերեվարված պատանիների, տղամարդկանց և կանանց մասին (KYKH/176): Չնայած

⁷ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան* (ՀՏԲ), հ. II, Ե., 1988, էջ 491-492:

արձանագրության՝ մեզ հետաքրքրող 15-17 տողերը թերի են, որ թույլ չի տալիս կարողալ գերեվարված տղամարդկանց քանակը, սակայն արքան 17-րդ տողում հատուկ նշում է, որ տղամարդիկ բոլորն են գերեվարվել: Դատելով արձանագրության 6 և 7 տողերից «(6) Էթիունի (պետությունից) լրիվ (?) (7) եկան հզոր բանակներ»՝ հնարավոր է, որ գերեվարված տղամարդկանց մեջ են մտել Աշտուխինիին օգնության եկած Էթիունիի բանակի զինվորները [?]: Սարիղամիշի արձանագրության տվյալները մեզ պատկերացում են տալիս այս և հարևան բարգավաճ տարածքների ազգաբնակչության խտության մասին: Ջուգադրելով Արգիշտիի և Սարդուրյան տարեգրությունները (KYKH/173-IV, 241 B 28-44)՝ պարզ հաշվարկի միջոցով եզրակացնում ենք, որ Էրիախի երկրից Սարդուրին տարած կլինեի մոտավորապես 4883 ռազմագերի (8153-3270=4883): Հետևաբար Էրիախի երկիրը բավականին բարձր մակարդակ է ունեցել և ստվար բնակչություն: Բնակչության քանակով Էրիախին կարող էր մրցակցել այնպիսի խոշոր երկրների հետ, ինչպիսիք էին Մանան և Աշտուխինին: Մոտավոր թիվը իմանալով՝ կարելի է հաշվել Արգիշտիի՝ Էրիախի երկիր կատարած երկու և Սարդուրիի ութ արշավանքների ընթացքում գերեվարվածների հանրագումարը, որը պիտի հավասար լինեի մոտավորապես 50000 մարդու: Այս հաշվարկը խիստ մոտավոր է. 50000-ը նվազագույն թիվն է: Օրինակ ունենալով Աշտուխինից տարված գերիների քանակը, որը երեք անգամ կարող էր գերազանցել 4883-ը, կարող ենք պնդել, որ շատ հնարավոր է, որ տասը արշավանքների ընթացքում գերի տարվածների քանակը հասած լինի 100000 մարդու: Ավելի վաղ շրջանի վիճակագրական տվյալների մասին ուսումնասիրություն ունի Գ. Արեշյանը⁸:

⁸ Գ. **Արեշյան**, *Вопросы типологии населенных пунктов Армении позднего бронзового и раннего железного веков*, Государственный музей искусства

բ) Սպանդարյանի (Ղուլիջան) արձանագրություն⁹: Բացարձակ բարձրությունը 1823 մ, 40°39'42,8" հյուսիս, 44°0'52,9" արևելք, շրջանագիծը 7մ: Ղուլիջանը (Կուլիջան, Սպանդարյան) գտնվում է Արագածի հյուսիսարևմտյան լանջին՝ Գյումրիից 21 կմ հարավ-արևելք (KYKH/178): Սեպագիրը գտնվել է 1884 թ. Քառանգու (հայկական՝ Կարկաչան) գետի ժայռոտ ափի արևմտյան որմնախորշում: Արձանագրությունում հիշատակվող ուրարտական դարաշրջանի Կուլիանի ցեղանունը, ըստ սեպագրի հրատարակիչ Մ. Նիկոլսկու, համարժեք է այժմյան Կուլիջան-Ղուլիջան գյուղի նախատիպին, որի մոտ էլ՝ ժայռի վրա, թողնվել է արձանագրությունը: Այստեղ արքան պատմում է, որ Խալդը սեփական զենքով ենթարկել է Կուլիանի ցեղի երկիրը և զգետնել Արգիշտիի առջև (1-3 տողեր): Ուրարտական արքաների հաղթական արձանագրություններին բնորոշ է այն, որ նրանց բոլոր արշավանքներում առաջնորդողը Խալդ աստվածն է (4-րդ տող): Արձանագրության 5-7 տողերում արքան պատմում է, որ նվաճել է Դուրուբանի քաղաքը և Կուլիանի ցեղի երկիրը:

գ) Մարմաշենի արձանագրություն (հուշարձանի բացարձակ բարձրությունը 1620 մ, 40°50'28,6" հյուսիս, 43°46'02,1" արևելք, շրջանագիծը 7մ): Մարմաշենը՝ նախկին Ղանիջա, գտնվում է Գյումրի քաղաքից 8 կմ հյուսիս-արևմուտք¹⁰: Արձանագրությունը արված է գյուղի մերձակայքում՝ Ախուրյան գետի ձախափնյակում՝ Մարմաշենից մոտ 2 կմ արևմուտք գտնվող բարձրադիր բնական ապառաժի վրա, որտեղից երևում է Ախուրյանի հովտի

народов Востока, *Научные сообщения*, X, М., 1978, էջ 91-108.

⁹ Գր. Ղափանցյան, *Ուրարտուի պատմությունը*, Ե., 1940, էջ 168:

¹⁰ Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 168: Տե՛ս **Fr. Rösler** sendet aus Elisabethpol den Schluss (vgl. Verhandlungen, 34, 1902, S.137) seines Berichtes über archäologische Forschungen und Ausgrabungen in Transkaukasien, unternommen für die kaiserlich russische Archäologische Commissions im Jahre 1900.

ստորին հատվածներում տեղադրված Մարմաշենի վանքը: Այս քարաժայռի բարձրության վրա և նրա շուրջը պահպանվել են Վահրամ Պահլավունու բերդի ավերակները¹¹. Բերդի ստորոտում գտնվում է «Նաղյայի գյուղ» կոչվող փոքրիկ լճակը: Դեռևս ճարտարապետ Թ.Թորամանյանը, ուսումնասիրելով բևեռագրի տարածքը, նշում է. «Բևեռագիրը անաղարտ պահված էր տեղին վրա, բայց շրջապատը անխնամ վիճակի մեջ էր: Բևեռագիրը փորագրված է ժայռեն դեպի հարավ շարունակության վրա»¹²: Թ. Թորամանյանի գրածից մեկ այլ կարևոր տեղեկություն էլ ենք քաղում այն մասին, որ «Նախկին այցելության ժամանակ գյուղացի ծերեր հավաստում էին, որ այդ մուտքի հեղեղատի մոտերը ևս կա եղեր մի ավելի ընդարձակ բևեռագիր արձանագրություն, սակայն անհայտացել էր դեռ այն ժամանակ, և չգիտեին թե ուր մնաց և ինչ եղավ»¹³: Տ. Դալայանը ենթադրում է, որ արձանագրությունը մնացել է հեղեղատի քարերի ու հողի տակ¹⁴: Մարմաշենի արձանագրության մեջ (1-5 տողեր) Արգիշտին պատմում է, որ Խալդյան մեծությամբ նվաճել է Էրիախի ցեղի երկիրը, գրավել Իրդանիունի քաղաքը մինչև Իշկիգուլու:

Չնայած սեպագիր աղբյուրում բացակայում է Արգիշտիի հայրանունը, սակայն կասկածի նշույլ անգամ չկա, որ հեղինակը Արգիշտի I-ն է, քանի որ նույն բովանդակությամբ տեքստը, աննշան խմբագրմամբ, կրկնվում է Խորխորյան տարեգրության համապատասխան հատվածում: Խորխորյան տարեգրության մեջ Էրիախին ստանում է m-«ցեղ» դետերմինատիվը, իսկ Մարդության տարեգրությունում՝ ինչպես m-«ցեղ», այնպես էլ KUR-«երկիր» դետերմինատիվները:

¹¹ *ZSF h. III*, էջ 736, *ZSF h. IV*, էջ 738:

¹² **Թ.Թորամանյան**, *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության*, հ. II, Ե., 1948, էջ 235:

¹³ Նույնը, էջ 235, 237:

¹⁴ **Տ. Դալայան**, *18-qi-gu-lu երկիրը և սկյութները, Խալդյան գորությանը*, հոդվածների ժողովածու, Ե., 2010, էջ 35, ծան. 3:

Խորխորյան տարեգրության տեքստի հետ համեմատելով՝ կտեսնենք, որ հինգերորդ տողի «մինչև» նախդիրից առաջ բաց է թողնված «(ես) հասա» բառը (KYKH/179):

Ուսումնասիրողների մի մասը Իրդանիու(նի) «քաղաքը» տեղադրում է Գյումրի քաղաքից ոչ հեռու՝ Շիրակում՝ Մարմաշեն-Վահրամաբերդ շրջանում: Ն. Հարությունյանը և Ս. Հմայակյանը այն տեղադրում են Ճորոխի ստորին հոսանքի շրջանում և նույնացնում հայկական Արդվինի հետ: Ս. Պետրոսյանը և Հ. Կարագոզյանը այն տեղադրում են Գյումրու տարածքում և նույնացնում «Կումայրի» հնավայրի հետ¹⁵: Ըստ այս տեսակետի, եթե Իրդանիու քաղաքը եղել է Էրիախի երկրի կենտրոնը, ապա այն գտնվելու էր հետագայի Շիրակի կենտրոն Կումայրիի տեղում կամ մոտակայքում: Ըստ Ս. Երեմյանի՝ Արաքս, Արախս, Երասխ գետի անվանումը ծագել է քիայնական սեպագրերում հիշատակված Էրիախի ցեղամիության անունից¹⁶: Իրդանիու քաղաքի արվարձաններից մեկը, որը կրել է Կումայրի անունը և զարգացում է ապրել, իր անունը տարածել է նաև նախկին Իրդանիու բնակավայրի վրա¹⁷: Հ. Կարագոզյանը Կումայրի տեղանունը ստուգաբանում է այսպես. *Կում-Կում* նշանակում է բնակավայր, գյուղ, *այրի, այր* երկրորդ բաղադրիչը նույնպես նշանակում է գյուղ, բնակավայր, Կումայրի նշանակում է ինչ-որ մի բնակավայրի արվարձան՝ Իրդանիու քաղաքի արվարձան¹⁸: Ս. Երեմյանը գտնում է, որ այն վայրը, որտեղ Ռուսա I-ը առաջին անգամ հանդիպել է կիմերներին և պարտություն

¹⁵ **Օв. Карагезян**, *Городу Ирдануни-3250 лет*, Отдельный оттиск из журнала Вестник общественных наук, 1, Ер., 1985.

¹⁶ **Ս. Երեմյան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի (Փորձ VII դ. հայկակ քարտեզի վերականգնության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա)*, Ե., 1963, էջ 73-75:

¹⁷ **Հ. Կարագոզյան**, Կումայրի (ըստ սեպագիր և այլ աղբյուրների), *Շիրակի պատմամշակութային ժառանգությունը II* (ԵՊՄԾ), Գյումրի, 1996, էջ 13:

¹⁸ Նույնը, էջ 13-14:

կրել, կոչվել է Կումայրի (վրացերեն՝ Գումբրի), իսկ Աշուրի-սուայի հիշատակած Գամիռան, որը հարկատու էր Ուրարտուին, համապատասխանում էր նախկին Լենինականի շրջանին¹⁹: Կումայրի անվամբ բնակավայրը հիշատակվում է նաև Ք.հ. VIII դ. պատմիչ Ղևոնդի կողմից 774 թ. հակաարաբական ապստամբության առիթով «...հասաներ ի գավառն Շիրակ ի գիւղն Կումայրի»²⁰: Հայ մատենագրության մեջ Կումայրին (Կումրի ձևով) կրկին հիշվում է 1209 թ. իբրև գյուղաքաղաք: ՄՄ պահպանված մի ձեռագիր հիշատակարանում (թիվ 1886, 1 թերթ) ասվում է. «Ես մեղուցեալս և յետինս ի կրոնաւորս Ովասափս, որ էի ազգաւ և տոհմիւ ի մեծ գեաւաքաղաքէն Կումիրոյ...», այսինքն՝ 1209 թ. Կումայրին գյուղաքաղաք էր, այն էլ՝ մեծ, և քանի որ հետայսու Կումայրի, Կումիրի կամ որևէ այլ անվանումով մինչև XIX դ. սկիզբը այն չի հիշատակվում ո՛չ Բագրատունիների շրջանի գյուղաքաղաքների մեջ և ո՛չ էլ Սիմեոն կաթողիկոսի կողմից կազմված «Ջամբռում», հետևաբար ՄՄ վերոհիշյալ ձեռագիրը՝ ոմն Հովասափի մասին, իրավամբ կարելի է համարել Կումայրու՝ որպես գյուղաքաղաքի միակ վկայագիրը հայ պատմագրության մեջ²¹: Կումիրոյ-Կումիրի ձևն առաջանում է Կումերի չվկայված ձևից, իսկ Կումայրի ձևը բարբառայնացվելով սովել էր Կումերի>Կումիրի>Կումրի>Գումրի>Գյումրի²²: Որոշ ուսումնասիրողներ Կումայրի-Կումիրի տե-

¹⁹ **Ս. Երեմյան**, Կիւմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դէմ, *Պատմաբանասիրական հանդես*, 1968, 2, էջ 92: Տե՛ս **G. Lanfranchi, S. Parpola, The correspondence of Sargon II, Part II, 297/92:**

²⁰ **Ղևոնդ**, Պատմություն, Աշխարհաբար թարգմանությամբ Ա. Տեր-Ղևոնդյանի, *Հայ մատենագիրներ*, Ե., 1982, էջ 138:

²¹ **Ա. Հայրապետյան**, *Կումայրի-Գյումրին գյուղ, թե քաղաք*, ՇՊՄՄ V, Գյումրի, 2002, էջ 15:

²² Նույնը, էջ 15:

ղանվանաձևը բխեցնում են կիմերի-կիմեր ցեղանունից²³՝ այս ամենը փաստագրելով Ք.ա. 714 թ. Ռուսա I-ի՝ կիմերների դեմ տված ճակատամարտով: Այնուհետև բնակավայրը կրկին հիշատակվում է միայն XIX դարասկզբին, այս անգամ արդեն Գյումրի կամ Գումրի ձևով՝ կապված իշխան Ցիցիանովի Երևանյան առաջին արշավանքի հետ²⁴: Շիրակում և հարևան տարածքներում սկյութների առկայության մասին երկրորդ տեղեկությունը դարձյալ հաղորդում է Ստրաբոնը (I դ.)²⁵: Ըստ նրա՝ Մև և Կասպից ծովերի միջև ընկած տարածության վրա թափառող ցեղերից ամենամեծաթիվն ու ուժեղները՝ սիրակներն ու աորսները, հյուսիսից իջնում էին հարավ և շփման մեջ մտնում հայերի ու մարերի հետ. «Աորսները բնակվում են Տանայիսի երկարությամբ, իսկ սիրակները՝ Աքարդեոս գետի, որ Կովկասից հոսելով Մայոտիս է թափվում»²⁶: Անանիա Շիրակացին այս սիրակներին կոչում է սյուռակացիներ և տեղադրում Տանայիսի գետաբերանից ոչ հեռու՝ Կղարջք ցեղի հարևանությամբ: Միրակները և աորսները կարող էին իրենց անվանումները թողնել Շիրակ և Արշարունիք (Աշարունիք) գավառներում²⁷: Շիրակի հարևան Վանանդում՝ Աշոցքի և Ջավախքի սահմանների մոտ էին գտվում ալանական ծագման Առավեղյան տոհմի տիրույթները: Հաշվի առնելով Ջավախք գավառանվան հնչումը ուրարտական սեպագրերում Ջաբախա ձևով՝ Տ. Դալայանը

²³ **Ս. Երևմյան**, *Գիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ*, էջ 91: **Ն. Հարությունյան**, *Հին հայկական տեղանուններն ու ցեղանունները սեպագիր աղբյուրներում և նրանց պատմական արմատները*, ՀՀ ԳԱԱ ԱԻ ՄՄԱԾ, Ե., 2001, էջ 24:

²⁴ **Ա. Հայրապետյան**, նշվ. աշխ., էջ 15:

²⁵ **Ստրաբոն**, **Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը**, *Օտար աղբյուրներ հայերի մասին*, 1, Հունական աղբյուրներ, Եր., 1940, XI, 5, 8:

²⁶ **Ստրաբոն**, XI, 5, 8:

²⁷ **Տե՛ս Տ.Դալայան**, *Սկյութական ցեղերը Շիրակում և հարևան գավառներում*, ԾՊՄԾ IV, Գյումրի, 2000, էջ 11-12:

գավառանունը հանգեցնում է օսերեն «ձաբախ»՝ «լավ, բարեբեր» բառին և հիշեցնում, որ Ջավախքի ու հարևան շրջանների նախահայրը Գուշարն է՝ Շարայի սերունդներից, իսկ սարաուկ ցեղանունը, առավել, քան նրա տարբերակ սիրակը, մոտ է Արշարունիք գավառանվանն ու Շիրակի անվանադիր նախնու՝ Շարայի անվանը²⁸: Շարան, հայոց ծագումնաբանության համաձայն, Հայկի թոռն էր, և Շիրակի ու հարևան գավառների հին բնակչությունը հայոց ավանդական պատկերացումներում համարվում էր տեղաբնիկ ու հայերին ցեղակից²⁹: Ս.Պետրոսյանի կարծիքով՝ Irdani- քաղաքանունն ունի գետանվանական ծագում, և բնակավայրն այդ անունը կրելու էր *Irdan- կոչված գետի ափին գտնվելու պատճառով, իսկ մեր պատմության սեպագրային շրջանից հայտնի են գետանվանական ծագմամբ մի շարք քաղաքանուններ: *Irdan- գետանվան dan- բաղադրիչը «գետ, ջուր» է նշանակում և առկա է մերձսևծովյան շրջանների մի շարք հնագույն գետանուններում՝ *Դոն, Դանուբ*³⁰: *Irdan- գետանվան առաջին բաղադրիչը՝ *ir-ը, ուսումնասիրողը բխեցնում է հնդեվրոպական *er/*or- արմատից, որից ծագած համապատասխան բառերն ազգակից լեզուներում ունեն «թռչուն», «արծիվ» իմաստը: Հայերեն «որոր», «ուրուր» արծվանուն գետեր կային և կան հնդեվրոպական աշխարհի բոլոր մասերում: Հին Շիրակում և հարակից շրջաններում գիշատիչ թռչունների բազմաքանակությունը և նրանց տոտեմական պաշտամունքը պետք է լինեին այդպիսի բովանդակությամբ տեղանունների ստեղծման գլխավոր պատճառը: Ս. Պետրոսյանի կարծիքով՝ սա հայերենի տեղանվանակերտ վերջածանցներից է՝ հետագայում վերածված *-h* տեղանվանակերտի³¹: Իրդանի-

²⁸ Լույնը, էջ 12:

²⁹ Լույնը, էջ 12:

³⁰ Ս. Պետրոսյան, *Irdani/ni բնակավայրի տեղադրության և անվան ստուգաբանության շուրջ*, ՇՊՄԾ III, Գյումրի, 1998, էջ 18-19:

³¹ Լույնը, էջ 19-20:

ու(նի) բնակավայրի հետ նույնացվող «Կուսայրի» հնավայրը գտնվում է Գյումրի քաղաքի արևմտյան մասում՝ «Չարկըզի ձոր» (Չարկըզ-ձոր) կոչվող գետակի ձախ ափին, և ըստ Մ.Պետրոսյանի՝ անվան ստուգաբանությունը կասկածից դուրս է թողնում *Irdan-գետանվան և Irdaniu-քաղաքանվան «թռչնային» ստուգաբանության հանգամանքը: Ձորանվան հիմքում ընկած է արծիվ նշանակող արևելաիրանական «չարկաս» բառը: Ձորի և գետակի միևնույն անունը կրելու տեսանկյունից կարելի է համեմատել Անձախի ձոր, Ծաղկոցաձոր, Ծանախոյ ձոր գետանունները, որը հիմք է տալիս Մ. Պետրոսյանին Չարկըզ ձոր գետակը համարելու սեպագրային շրջանի *Irdan գետը, իսկ նրա ափին գտնվող «Կուսայրի» հնավայրի նույնացումը Irdaniu-քաղաքի հետ՝ համարելու վերջնական: Արևելաիրանական ծագմամբ *չարկաս* «արծիվ» բառը Շիրակում հայտնվել կարող էր III դ. այստեղ հաստատված Կարենյան-Կամսարական տոհմի և նրանց ուղեկցած «պարթևական» գաղթականության միջոցով:

Ն.Հարությունյանը չի համաձայնում արմատավորված այս կարծիքին: Նա գտնում է, որ սխալ է Իրդանիունին Էրիախի կենտրոն համարելը: Մարմաշենի արձանագրության սվյալները զուգադրելով Խորխորյան տարեգրության V, 47-49 տողերին՝ նա գրում է. «Դժվար է համաձայնվել այն արմատացած կարծիքի հետ, թե Իրդանիունին Էրիախի երկրի կենտրոնն է, այն անկասկած Քաթարգա երկրի կենտրոնն է»³²: Ի տարբերություն Մարմաշենի արձանագրության՝ Խորխորյան տարեգրությունում (КУКН/173 V) նույն տեղեկությունը բերվում է հետևյալ կերպ. «(47) Արշավեցի Էթիունի (երկրի) վրա, գրավեցի (48) Էրիախի (ցեղի) երկիրը, Քաթարգա (ցեղի) երկիրը, (49) կտրում էի մինչև Իշկիգուլու (երկիրը): (50) Մարդ, կին հանեցի դեպի Բիայնիլի (երկիրը)»:

³² КУКН/179, Н. Арутюнян, *Бийнилли (Урарту), военно-политическая история и вопросы топонимики*, Ер., 1970, էջ 232-233:

Մի դեպքում Իրդանիունի քաղաքի անվանումն է, մյուս դեպքում՝ Քաթարգա երկրի:

Արգիշտի I, Վանի թանգարան, ազաթե ուլունք CTU IV, D 8-1: Ուլունքի տրամագիծն է 2,4-2,2 սմ³³:

Այս ուլունքն ունի արձանագրություն, որի բովանդակությունից իմանում ենք, որ արքան այն նվիրել է Արուբանի աստվածուհուն որպես Էրիախի երկրից բերված ընծա. «Իր աստվածուհի Ուարուբանիին Արգիշտին Էրիախի երկրի ընծան բերեց»: Արքան այս ուլունքը բերել էր Էրիախի կատարած արշավանքներից մեկից հետո: Ազաթի երևակումները հիմնականում կենտրոնացված են Ջրաձոր գյուղի մերձակա լեռներում և Ախուրյանի կիրճի այլուվիալային նստվածքներում. այս ելքերից արդյունահանված հանքաքարից են պատրաստվել Շիրակի ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան, միջին երկաթեդարյան հուշարձաններից հայտնի զարդերը: Ինչ վերաբերում է կիսաթանկարժեք քարերին, ապա ակնհայտ է, որ Էրիախիում հատկապես հարգի է եղել ազաթը, որից էլ պատրաստվել էր աստվածուհուն նվիրված ուլունքը: Ուլունքը պատահական գտածո է, որը պահպանվում է Վանի թանգարանում և համարվում է պատմական Շիրակի մասին վկայող կարևոր սկզբնաղբյուր, որը՝ որպես այդպիսին, մեր կողմից առաջին անգամ է դրվում շրջանառության մեջ:

Avagyan Inga – *Another Urartian Source about the Land of Eriahi.* – In the article the urartu cuneiform writings which contain information about Eriakhi Land and its adjacent territories are presented and studied. In chronological order are presented and studied fragments of Khorkhor chronicle of Argishti I and the chronicle duplicates, two inscriptions from Van and an inscription from Hanak, and also inscriptions from Sarighamish, Spandaryan, Marmashen, bead with an inscription from Van which were left by Argishti I, fragments from Sarduri II chronicle (Hazine-Kapusi),

³³ CTU IV, էջ 253:

cuneiform writing of Rusa I from Tsovinar settlement and cuneiform tables of Rusa II from Toprakh-Kalais.

Авагян Инга – Еще один урартский первоисточник о стране Эриахи. – В статье представлены и изучены урартские клинописные тексты, содержащие информацию о стране Эриахи и сопредельных территориях. В хронологическом порядке представлены и изучены отрывки Хорхорской летописи Аргишти I и дубликаты летописи – две надписи из Вана и надпись из Ханака, а также надписи из Сарыкамыша, Спандаряна, Мармашена, оставленные Аргишти I, бусина с надписью из Вана, отрывки из летописи Сардури II (Хазине-Капуси), клинописный текст Русы I из селения Цовинар и клинописная табличка Русы II из Топрах-кале.

«ՀԱՅԵՐԵՆ» ՆՇԱՆԱԿՈՂ ՀԱՅ ՎԵՐՋՆԱԲԱՂԱԴՐԻՉՈՎ
ԲԱՌԵՐԻ ՄԻ ԽՄԲԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց պատմության նշանակալից իրադարձությունները, առանցքային դեպքեր, իրողություններ հաճախ իրենց արձագանքն են գտել հայերենի բառապաշարում: Իբրև բառի սկզբնաբաղադրիչ և վերջնաբաղադրիչ հաճախ հանդես է գալիս մեր ազգի ինքնանվանումը՝ **հայ**-ը:

Պատմական որոշակի տեղեկություններ են պարունակում, օրինակ, **հայ** սկզբնաբաղադրիչ ունեցող այն բառերը, որոնք նշանակում են հայերի կառուցած բնակավայրեր (կամ դրանց մասեր), որտեղ հայերը նկատելի ներկայություն են ունեցել¹: Այդպես է և 1915-1923-ի հայոց ցեղասպանությունն իբրև **հայասպանություն** ընկալելը² և այլն:

Նույն կերպ էլ բացատրելի են **հայ** վերջնաբաղադրիչ ունեցող մի քանի տասնյակ կազմությունները: Դարեր շարունակ արտագաղթի և բռնագաղթերի հետևանքով առաջացած գաղթավայրերի հայությանը տրվեցին մասնավոր անուններ՝ **եզիպտահայ, լեհահայ, հնդկահայ, կովկասահայ** և այլն, որոնք նոր ժամանակների ծնունդ են: Դրանք լիովին հասկանալի են հայերեն խոսող մարդու համար և հաճախադեպ են բանավոր խոսքում: **Ֆրանսահայ** բառի իմաստը, օրինակ, հեշտ կռահելի է՝ «Ֆրանսիայում ապրող հայ, Ֆրանսիայի քաղաքացի հայ»: Այդպես էլ մյուսները: Սակայն միշտ չէ, որ այդպես է: Մենք նկատել և առանձնացրել ենք **հայ** վերջնա-

¹ Տե՛ս Դ. Գյուրջինյան, *Հայ ժողովրդի պատմական ճակատագիրն արտացոլող մի բառախմբի քննություն (հայաքաղաք, հայավան, հայազյուղ, հայաթաղ, հայագաղութ)*, «Էջմիածին», 2015, Բ, էջ 46-66:

² Տե՛ս Դ. Գյուրջինյան, *Հայասպանություն* բառի պատմալեզվաբանական քննությունը, «Էջմիածին», 2016, Դ, էջ 99-113:

բաղադրիչ ունեցող բառերի մի խումբ, որի միավոր կազմություններն իրենց իմաստագործառական բնութագրով էապես տարբեր են վերևում հիշատակվածներից:

Նախ անդրադառնանք *Ֆրանսահայ*-ին, որը մեր առանձնացրած բառախմբում ամենակիրառականն է: Բանն այն է, որ նույն հնչյունակազմով, բայց բոլորովին տարբեր իմաստով մի բառ էլ ունենք, որը ամեննին չի առնչվում վերոհիշյալ իմաստին: Ո՞րն է հայերենի բացատրական բառարաններից բացակայող այդ իմաստը: Հարցի պատասխանը գտնելու համար պետք է պարզել բառի՝ իբրև ձևախմբատային միավորի ստեղծման պատմությունը և դիտարկել առաջին գործածությունները, գործառելու նրա հետագա ընթացքը:

Բառային այս միավորի պատմության սկիզբը դրվել է 19-րդ դարի վերջին, ավելի վաղ, քան «Ֆրանսիայում ապրող հայ, Ֆրանսիայի քաղաքացի հայ» իմաստն արտահայտող հանրաձայնությամբ բառն է սկսել գործածվել:

1896 թ. լույս է տեսնում արևմտահայ երևելի բանաստեղծ, թարգմանիչ Եղիա Տեմիրճիպաշյանի ֆրանսերեն-հայերեն բառարանը³, որի ներածականում բառարանագիրը գրում է. «*Չրպանի ֆրանսահայ* ⁴ *բառարանս*՝ (ընդգծումը Տեմիրճիպաշյանինն է – Դ.Գ.) *իբր Լատուսի առձեռն բառարանին տեղը կբռներ*», «*Ֆրանսահայ բառարանս կը պարունակէ նախորդ մեծ բառագրոց բոլոր բառերն ու գրեթէ բոլոր ոճերն...*», ապա՝ «*Տարի ու կէտուան մէջ յօրինուեցաւ ու տպագրուեցաւ ֆրանսահայ բառարանս*»⁵:

1900-ին լույս է տեսնում Գվիտոն Լուսինյանի (Վենետիկի Մխիթարյան միաբանության նախկին անդամ Ամբրո-

³ Ե. Տեմիրճիպաշեան, *Բառարան ֆրանսերենէ հայերեն*, Կոստանդնուպոլիս, 1896:

⁴ *Գաղղիերէն*-ին զուգահեռ գործածվող *ֆրանսերէն*-ը հանդես էր գալիս և՛ *բ*-ով, և՛ *բ*-ով:

⁵ Տե՛ս Ե. Տեմիրճիպաշեան, նշվ. բառարանը, էջ Բ:

սիռս վրդ. Գալֆայան) ֆրանսերեն-հայերեն ստվարածավալ բառարանը, որի վերնագրում կա **Ֆրանսահայ** բառը՝ «Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ»⁶: Արևելահայ իրականության մեջ Ստ. Մալխասյանն այս բառարանի գրախոսության մեջ գրում է. «*Բայց դառնանք նոր ֆրանսահայ բառարանին*»⁷: Ի դեպ, եթե դա անբնական հնչեր, հմուտ լեզվաբանն այլ ձևակերպում կգործածեր:

1911 թ. տպագրվում է Մեսրոպ Նուպարյանի ֆրանսերեն-հայերեն (աշխարհաբար) առձեռն բառարանը⁸, որի տիտղոսաթերթին, ի թիվս այլ բաների, գրված է. «**Ֆրանսահայ** ճոխ բառացուցակ պատմական, աշխարհագրական, դիցաբանական անուններու», «Յառաջաբանի» առաջին նախադասության մեջ՝ «**Ֆրանսահայ առձեռն բառարաններ չեն պակսիր մեր մեջ...**», այնուհետև՝ «*Մեր սոյն Ֆրանսահայ Առձեռն Բառարանը ուշադիր ու խնամոտ ամփոփումն է ընդհանուր գնահատութեան արժանացած մեր Ֆրանսերէնէ Հայ-աշխարհիկ Բառարանին*»⁹ և այլն:

Նույն 1911 թ. տպագրվում է Միհրան Հովհաննեսյանի «Գրպանի բառարան **Ֆրանսահայ**»-ը¹⁰:

Ակնհայտ է, որ հիշված բոլոր դեպքերում **ֆրանսահայ**-ը նշանակում է «ֆրանսերեն-հայերեն» կամ «ֆրանսերենից հայերեն», կապակցվում է **բառգիրք, բառարան, բառացուցակ** բառերին և համանիշ է **ֆրանսերեն-հայերեն** վերլուծական կազմությանը:

Բառն այս իմաստով չի հանդիպում հայերենի բացատրական բառարաններում, այժմյան հայ լեզվակիրներին ան-

⁶ Գ. Լուսինեան, *Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ* (G. Lusignan, Nouveau Dictionnaire illustré français-arménien), Փարիզ, 1900:

⁷ Տե՛ս «Մուրճ», 1901, հ. 1, էջ 205:

⁸ Մ. Նուպարեան, *Առձեռն բառարան ֆրանսերէնէ հայ-աշխարհիկ*, Կ. Պոլիս, 1911:

⁹ Այստեղ և այլուր ընդգծումները մերն են:

¹⁰ Մ. Յովհաննէսեան, *Գրպանի բառարան ֆրանսահայ*, Կ. Պոլիս, 1911:

ծանոթ է, բացառությամբ թերևս մասնագիտական նեղ շրջանակի: Բառը ոմանց նույնիսկ սխալ է թվում, իսկ ոմանք էլ այն ճիշտ չեն ընկալում (ասենք՝ *ֆրանսահայ բառարան*-ը հասկանում են որպես «Ֆրանսիայի հայ համայնքին բնորոշ համայնքում գործածվող բառերի, բառակապակցությունների բառարան»):

Հարյուր տարի անց դժվար է գնահատել «ֆրանսերեն-հայերեն» նշանակող *ֆրանսահայ* բառի նպատակահարմարությունը: Ժամանակին եղել է բառի պահանջը, և այն ստեղծվել է: Հստակ է, որ բառարանների վերնագրերն այս կազմության միջոցով ավելի հակիրճ էին դառնում, գործածության համար՝ առավել դյուրին:

Հետաքրքրական է, որ նշված իմաստով *ֆրանսահայ* կազմությունը բառարանային գրանցում այնուամենայնիվ ունի, սակայն միայն արևմտահայ իրականության մեջ, այն էլ թարգմանական բառարաններում:

1907-ին քննարկվող կազմությունն առանձին բառահոդվածով ընդգրկվել է Պետրոս Զեքի Կարապետյանի հայերեն-օսմաներեն բառարանում¹¹: Այդտեղ տրված են *ֆրանսահայ, ֆրանսահայ* ուղղագրական տարբերակները՝ *فرانسزجه دن ارمنيجه يه* թարգմանությամբ (ֆրանսըզադան էրմենիջէլէ՝ «ֆրանսերենից հայերեն»): Սա բառային միավորի բառարանային առաջին, բայց ոչ միակ արձանագրումն է:

Առանձին բառահոդված կա (արդեն միայն *ֆրանսահայ* ձևով) նաև Գ. Լուսինյանի և Կ. Բասմաջյանի հայերեն-ֆրանսերեն բառարանում՝ *français-arménien* «ֆրանսերեն-հայերեն» թարգմանությամբ¹²:

Այսպիսով՝ *ֆրանսահայ* բառային միավորը ստեղծվել է 19-րդ դարի վերջերին գրական արևմտահայերենում, գոր-

¹¹ Պ. Զ. Կարապետեան, *Մեծ բառարան հայերէնէ օսմաներէն*, Կ. Պոլիս, 1907:

¹² Տե՛ս Գ. Լուսինեան, Կ. Բ. Բասմաջեան, *Առձեռն բառարան հայերէն աշխարհիկ լեզուէ ֆրանսերէն*, Կ. Պոլիս, 1915, էջ 838:

ծածվել մասնավորաբար բառարանագրության մեջ, մասամբ նաև մամուլի լեզվում (ֆրանսերեն-հայերեն բառարաններին առնչվող հրապարակումների մեջ):

Տեսանք, որ **ֆրանսահայ**-ը հանդիպում է նաև արևելահայերենում: Հազվադեպ գործածվել է հետագայում ևս, սակայն միայն մասնագիտական գրականության մեջ, երբ խոսքը վերաբերել է արևմտահայ իրականության մեջ ստեղծված «ֆրանսահայ» հորջորջված հայտնի բառարաններին: Այսպես. «*Հարուստ է Նորայրի ֆրանսահայ բառարանը, որից քաղել եմ յատուկ խնամքով բոլոր միջին հայերէն բառերը*»¹³, «*Հրատարակեց «Քննասեր» վիմատիպ ժողովածուն և իր հոյակապ ֆրանսահայ բառարանը*»¹⁴, «*Լուսինյանը ֆրանսահայ բառարանի աշխատանքներին զուգընթաց ուղղումներ, հավելումներ ու սրբագրումներ է կատարել իր հայգաղղիներեն բառգրքի մեջ*»¹⁵, «*Ֆրանսերեն-հայերեն բազմաբնույթ բառարաններից ոչ մեկն այնպիսի գիտագործնական արժեք չի ունեցել, ինչպես Գ. Լուսինյանի ֆրանսահայ նոր բառգիրքը*»¹⁶, «*XIX դարի ֆրանս-հայերեն բառարանագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ֆրանսերենի հետ ունեցած շփման մեջ ինչպես է հղկվել ու մշակվել ... թերթելով ֆրանսահայ բառարանագրության էջերն ու հսկայածավալ նյութը, կարող ենք հավաստել...*»¹⁷:

¹³ Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. Ա, Ե., 1971, էջ 8: Խոսքը Նորայր Բյուզանդացու «Բառագիրք ի գաղղիերեն լեզուէ ի հայերեն» (Կ. Պոլիս, 1884) աշխատության մասին է:

¹⁴ Տե՛ս **Հր. Աճառյան**, *Հայ գաղղականության պատմություն*, Ե., 2002, էջ 744:

¹⁵ Տե՛ս **Գ. Գաապարյան**, *Հայ բառարանագրության պատմություն*, Ե., 1968, էջ 223:

¹⁶ Տե՛ս «*Հայ բառարանագրություն*» (անոտացված մատենագիտություն), կազմող և առաջաբանի հեղինակ՝ **Վ. Ալեքսանյան**, Ե., 1986, էջ 53:

¹⁷ Տե՛ս **Ա. Բարլեզիզյան**, XIX դարի հայ-ֆրանսիական լեզվական կապերի պատմությունից, *Պատմաբանասիրական հանդես*, 1989, 1, էջ 105:

Ֆրանսահայ-ը հողակապավոր համեմատական բար-
դություն է, իսկ հորինվածքով՝ յուրատեսակ հատվածական
բաղադրություն:

Հայերենագիտության մեջ ընդունված է հատվածա-
կան կոչել այն բաղադրությունները, որոնք առաջանում են
«նույնական կամ հոմանիշ ածանցներով կազմված ածական-
ների համադասական կամ ստորադասական կապակցու-
թյուններից՝ առաջին անդամի ածանցի կրճատումով»¹⁸: Որ-
պես այդպիսիք ընկալվում են հիմնականում գծիկով գրվող
կապակցությունները՝ **հայ-վրացական** (առնչություններ) <
հայկական և **վրացական**, **խրայելա-պաղեստինյան** (հակա-
մարտություն) < **խրայելական** և **պաղեստինյան**, **ռուս-հա-
յերեն** (բառարան) < **ռուսերեն** և **հայերեն** և այլն¹⁹:

Էդ. Աղայանը հատվածական բաղադրությունները գե-
տեղում է վերլուծականների մեջ (հիմնականում գծիկով
գրությամբ), սակայն իր բերած օրինակներում շատ են նաև
համեմատական կամությունները (անանջատ գրությամբ),
ինչպես՝ **ռազմաքաղաքական, գիտատեխնիկական, մանկա-
պատանեկան**²⁰: Այդպես էլ **կրոնադավանաբանական, բարո-
յախրատական** և այլն, որոնք սովորաբար արտասանվում են
մեկ շեշտով և գրվում են անանջատ: Այսպիսով պետք է
ընդունել, որ հատվածական բաղադրությունները կարող են
լինել թե՛ վերլուծական և թե՛ համեմատական: **Ֆրանսահայ**-ը
հենց այդպիսի՝ հատվածական կազմություն է, համեմատա-
կան և անանջատ գրությամբ:

Ֆրանսահայ-ը մեկ հատկանիշով էապես տարբեր-
վում է վերոհիշյալ հատվածական բաղադրություններից:
Եթե, օրինակ, **ֆրանս-հայերեն** և **հայ-ֆրանսերեն** կապակցու-

¹⁸ Տե՛ս Էդ. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ
241:

¹⁹ Հմմտ. Դ. Գյուրջինյան, *Հայերեն բառարան-տեղեկատու. միասին,
անջատ կամ գծիկով գրվող բառեր*, 6-րդ հրատ., Ե., 2008:

²⁰ Տե՛ս Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 241-243:

թյուններում կրճատվել է առաջին բաղադրիչների «լեզու» նշանակող *-երեն* ածանցը, ապա *Ֆրանսահայ*-ի դեպքում՝ երկու *-երեն* ածանցները: Տարբերությունը մյուս հատվածականներից այն է, որ կրճատվել է նաև երկրորդ բաղադրիչի ածանցը, և փաստացի անածանց կազմության հետ գործ ունենք: Այս պարագայում կիրառվել է լեզվի՝ ավելի սեղմ տարբերակ ստեղծելու կարողությունը²¹:

Ի դեպ, *Ֆրանսահայ*-ի ընկալելի «Ֆրանսիայում ապրող, Ֆրանսիայի քաղաքացի հայ» իմաստը բառարաններում արձանագրվել է բավական ուշ (Մ. Գույումճյանի բառարանում՝ French-Armenian թարգմանությամբ²²:

Արդյոք *հայ* վերջնաբաղադրիչով կազմությունների մեջ սա միա՞կ գույզն է: Պարզվում է՝ ոչ: Ավելին, կա ժամանակագրական առումով ավելի վաղ կազմություն՝ *լատինահայ*-ը:

Լատինահայ-ը առաջին անգամ բառարանային գրանցում է ստացել արևմտահայ իրականության մեջ. գլխաբառ է դարձել 1861-ին Ամբրոսիոս Գալֆայանի հայ-ֆրանսերեն բառարանում՝ *arménien romain, arménien latinisant* թարգմանությամբ²³: Այնուհետև *լատինահայ* -ը տեսնում ենք թարգմանական այլ բառարաններում՝ համանման թարգմանությամբ: Այսպես, հայ-ֆրանսերեն՝ Գ. Լուսինյանի և Կ. Բասմաջյանի՝ *latin-arménien, arménien romain, arménien latinisant*²⁴, Մ. Հովհաննեսյանի՝ *arménien romain, arménien latini-*

²¹ Ինչ-որ առումով համեմատելի է *հայախոսություն* բառի հետ, որը *հայերենախոսություն* «մայր ձևի» կրճատման հետևանք է, և որտեղ *հայ* սկզբնաբաղադրիչն է «հայերեն» նշանակում:

²² Մ. Գույումճյան, *Ընդարձակ բառարան հայերենէ անգլիերեն*, Կահիրե, 1950:

²³ Տե՛ս Ս. Գալֆան, *Բաղդիրք հայ-գաղղիարեն*, Փարիզ, 1861, էջ 351:

²⁴ Տե՛ս Գ. Լուսինեան, Կ. Յ. Բասմաջեան, նշվ. բառարանը, էջ 280:

sant²⁵, հայ-անգլերեն՝ Մատաթիա վրդ. Պետրոսյանի՝ latinizing, or romanizing Armenian²⁶, Մ. Գույումճյանի՝ Armenian-latin, latinizing Armenian²⁷: **Լատինահայ**-ը, ինչպես տեսնում ենք, հասկացվել է «լատինացող՝ լատինաբան հայերեն», «լատիներեն-հայերեն»:

Ուշագրավ է արևելահայ իրականության մեջ Հարություն Դադբաշյանի մոտեցումը. նրա հայ-ռուսերեն բառարանում **լատինահայ**-ը թարգմանված է որպես ածական՝ армяно-католическій և գոյական՝ армяно-католикъ²⁸: Չկան վերոհիշյալ բառարանների հիշատակված իմաստները, այլ միայն «հայ-կաթոլիկյան» և «հայ-կաթոլիկ», որոնք լեզվին (կամ լեզուներին) չեն առնչվում:

Փաստորեն հայերենի գրական երկու տարբերակների բառարանները նույն բառը տարբեր կերպ են ընկալել: Հետագայում, իհարկե, արևելահայ «տարածքում» պատկերը փոխվեց հոգուս ընդհանրության:

Հայերենի բացատրական բառարանները ներկայացնում են **լատինահայ**-ը որպես բազմիմաստ՝ երկու կամ երեք իմաստով²⁹: Սրանցում **լատինահայ**-ը վերաբերում է ինչպես մարդկանց՝ հռոմեադավան (լատինադավան՝ կաթոլիկ) հայերին, այնպես էլ լատիններենին և հայերենին: Այսպես, ըստ ակադեմիական բացատրական բառարանի՝ բառի իմաստ-

²⁵ Տե՛ս **Մ. Յովհաննեսյան**, *Բառարան հայերեն-ֆրանսերեն*, Կ.Պոլիս, 1925, էջ 308:

²⁶ Տե՛ս **Ն. Մ. վրդ. Պետրոսյան**, *Նոր բառգիրք հայ-անգլիարեն*, Վենետիկ, 1875, էջ 253:

²⁷ Տե՛ս **Մ. Գույումճյան**, *Ընդարձակ բառարան հայերեն անգլիերեն*, Կահիրե, 1950, էջ 262:

²⁸ Տե՛ս **Յ. Դադբաշյան**, *Լիակատար բառարան հայերենից ռուսերեն*, Թիֆլիս, 1911, էջ 318:

²⁹ Տե՛ս **Սո. Մայիսյան**, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 2, Ե., 1944, էջ 185, **Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ**, *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հ. 2, Ե., 1972, էջ 385, **Էդ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 518:

ներն են՝ 1. «լատինադավան հայ, հայ կաթոլիկ», 2. «հայ կաթոլիկական» (Լատինահայ եկեղեցի՝ սովորություն և այլն), 3. «լատիներենից հայերեն» (Լատինահայ բառարան): Բառի առաջին իմաստը գոյականի նշանակություն ունի, երկրորդ և երրորդ իմաստները՝ ածականի:

Ստ. Մալխասյանցը նշում է բառի երկու իմաստ (երկրորդը՝ «լատիներեն և հայերեն» ձևակերպմամբ): Ուշագրավն այն է, որ Ստ. Մալխասյանցն այստեղ համանունություն չի տեսել, հայերենի միալեզվյան և թարգմանական հետագա բառարաններն անքննադատ հետևել են նրան:

Հայ-ռուսերեն ակադեմիական բառարանը Հ. Դադբաշյանի բառարանի և բացատրական բառարանների հետևողությամբ բառը ներկայացնում է երկու իմաստով՝ 1. Армянин-католик, 2. Латинско-армянский (словарь), այսինքն՝ «հայ կաթոլիկ» և «լատիներեն-հայերեն» (բառարան)³⁰:

Լատինահայ-ը «լատիներեն-հայերեն» իմաստով հազվադեպ է լեզվաբանական գրականության մեջ, ինչպես՝ «...Հավանական չէ կարծել, թե ձեռագրի հեղինակն ինքն է կազմել **լատինահայ բառացանկը**»³¹:

Մատենագիտական տպագիր և էլեկտրոնային ցանկերում, զանազան գրացուցակներում հաճախ «Բառ(ա)գիրք լատինահայ» կամ «Բառարան լատինահայ» (նաև «Բառգիրք լատին-հայ») են կոչում 17-րդ դ. վերջին և 18-րդի սկզբներին տպագրված լատիներեն-հայերեն բառարանները՝ Ա. Ներսեսովիչի «Բառգիրք Լատինացուց և Հայոց ի վերայ Աստուածաշունչ եւ ժամանակագրութեան գրոց Հայոց եկեղեցոյն» (Հռոմ, 1695), Հ. Վիլլոդի «Բառգիրք Հայկական լեզուի» (Հռոմ,

³⁰ Տե՛ս Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, *Հայ-ռուսերեն բառարան*, Ե., 1984, էջ 271:

³¹ Տե՛ս Էդ. Բ. Աղայան, *Հայ լեզվաբանության պատմություն*, հ. 1, Ե., 1958, էջ 106:

1714)³²: Իրականում լեհահայ եպիսկոպոս Աստվածատուր Ներսեսովիչի և հիսուսյան վարդապետ Հակոբ Վիլլոդի կազմած բառարանների տիտղոսաթերթերին *լատինահայ* բառը չկա, թեև այս պահին դա էական չէ: Այս դեպքում մեզ հետաքրքրողը բառի գործածությունն է, և այստեղ *հայ* բաղադրիչը հաստատապես «հայերեն» է նշանակում:

Հայ վերջնաբաղադրիչով կազմությունների մեջ ժամանակագրորեն հաջորդ միավորը վերաբերում է 20-րդ դարի տասական թվականներին: Դա *արիահայ* կազմությունն է, որ գործածվել է նախ Հարություն Թիրյաքյանի «Արիահայ բառարանի» վերնագրում³³: Պարսկերեն-հայերեն այս բառարանում հեղինակը ստուգաբանել է իրանական ծագմամբ հայերեն բառեր (պարունակում է 1300 բառահոդված): Այն «*պարսիկ և հայ բարբառին, զոր Արիահայ կ'անուանէ, նոյնահնչին եւ նոյնաձե բառերու պարզ համեմատութիւն է*» (Ն. Ակինյան)³⁴: *Արիահայ*-ն այլ բառերի հետ չի գործածվում, հիշատակվում է տարբեր գրացուցակներում, մասնագիտական գրքերում, նաև առանց չակերտների: Հմմտ. «*Արիահայ բառարանում տրված են պարսկերեն և հայերեն բառերի հա-*

³² Տե՛ս, օրինակ, <http://haygirk.nla.am>, <http://greenstone.flib.sci.am>, **Յ. Նալպանտեան**, *Ամերիկահայ գիրքի պատմություն. Մատենագիտություն 1858-2011 - Հայկական բառարաններու համառոտ պատմություն*, Լոս Անճելես, 2011, էջք 54, 57: Հիշյալ աշխատության գրախոսականում Վ. Մատթեոսյանը նշում է, որ Ն. Վիլլոդի բառարանի Dictionarium novum Latino-Armenium լատիներեն վերնագրի «թարգմանությունն է «Նոր բառարան լատինահայ», որ մասամբ դարձած է Նալպանտեանի տուած վերնագիրը, անտեսելով բուն հայերեն *Բառգիրք Հայկական Լեզուի* խորագիրը» (*Հայկազեան հայագիտական հանդես*, հ. ԼԳ, Բեյրութ, 2013, էջ 512):

³³ **Յ. Թիրեաքեան**, *Արիահայ բառարան: Նորոգ տեսութեամբ եւ յաւելուածովք*, Վիեննա, 1914:

³⁴ Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1921, էջ 635:

մեմատությունները»³⁵ և «... Ավելացնում է նաև «կրիվ, պատերազմ» բառերը, որոնք չկան «Արիահայ բառարանում»»³⁶:

Ակներև է, որ բառախմբի մեկ այլ միավոր՝ **պարսկահայ**-ը, կազմվել է սրանց համաբանությամբ: Համեմատենք վաղուց ի վեր գործածության մեջ եղող **պարսկահայ** «Պարսկաստանում ապրող կամ պարսկահպատակ հայ» բառը և «պարսկերեն-հայերեն» նշանակությամբ **պարսկահայ**-ը: Սրանք իմաստագործառական առումով տարբեր են. Առաջինը ձևաբանորեն երկարժեք բառ է (գոյ. և ած.), ձուլական բարդություն, երկրորդը՝ միայն ածական, հատվածական բաղադրություն: Համանուն այս բառերը միմյանցից էապես զանազանվում են իրենց իմաստներով և կապակցելիությամբ:

Բառիմաստային և կառուցվածքային ընդհանրությունների առումով ուշագրավ է այս կիրառությունը, որտեղ կից գործածվել են **արիահայ**-ը և **պարսկահայ**-ը. «Ատոր համար է որ մենք ներկա աշխատութիւնը Արիահայ անուանեցինք աւելի քան Պարսկահայ»³⁷:

Տասնամյակներ անց **պարսկահայ**-ը նշված իմաստով և արժեքով գործածված գտնում ենք նաև արևելահայերեն գիտական խոսքում: Հայ բառարանագրության պատմությունը քննող ուսումնասիրության մեջ՝ «**Պարսկահայ բառարանագրությունը**» վերնագրի ներքո³⁸, հեղինակը ներկայացնում է պարսկերենին առնչվող մի բառարան, որ ո՛չ Պարսկաստանում է ստեղծվել ու տպագրվել, ո՛չ էլ կազմողն է պարսկահայ: Խոսքը Գևորգ Դպիր Պալատցու «Բառարան պարսկերեն» պարսկերեն-հայերեն մեծարժեք բառարանի մասին է: Հեղինակը պոլսահայ է, բառարանը լույս է տեսել 1826-ին Կ. Պոլսում: Ի դեպ, բառարանագիտական այդ հետա-

³⁵ Տե՛ս Գ. Կ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 356:

³⁶ Տե՛ս Ն. Մկրտչյան, Ստուգաբանական դիտարկումներ, ՊԲՀ 1988, 2, էջ 141:

³⁷ Տե՛ս Յ. Թիրեաքեան, *Արիահայ բառարան*, էջ 8:

³⁸ Տե՛ս Գ. Կ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 159:

գոտության մեջ նշված վերնագրին հաջորդում են՝ «Հայ-ռուսական բառարանագրությունը», «Հայ-վրացական բառարանագրությունը», «Թուրքերենին առնչված բառարաններ», որոնք նպաստում են **պարսկահայ բառարանագրություն** - կապակցության առաջին բաղադրիչի՝ **պարսկահայ**-ի իմաստի հստակ ընկալմանը: Այդուհանդերձ, քանի որ սա դիպվածային գործածություն է, բառարանային գրացում չունի:

Բառարանագիտական աշխատանքներում, թեև խիստ սահմանափակ, հանդիպում են վերոթվարկյալ բառերի նման ուրիշ կազմություններ ևս: Համեմատենք հետևյալ նույնա՝ նունները՝

ա. **հունահայ** «Հունաստանում բնակվող հայ». «**Հունահայ գաղթավայրի ներքին կյանքը եղել է վերին աստիճանի խռովահույզ**»³⁹ (բառարաններում գրանցված է, իմաստն ընկալելի է).

բ. **հունահայ** «հունարեն-հայերեն». «**Հայ բառարանագրության մեջ համեմատաբար թույլ է արտահայտված հունահայ բառարանագրությունը: Հունարենին առնչված առաջին և ընդարձակ բառարանը կազմել են վիեննական մխիթարյաններ Արիստակես և Ստեփանոս Ազարյանները**»⁴⁰: Եզակի կիրառություն է, այդ իսկ պատճառով բառարանային գրանցում չունի:

Պարզորոշ երևում է, որ **հունահայ**-ը ևս կազմվել է նախորդների նմանակությամբ, համաբանության օրենքով: Հետաքրքրական է, որ բառարանագետը ռուս-հայերեն կամ վրացերեն-հայերեն բառարանագրության մասին խոսելիս **ռուսահայ** կամ **վրացահայ** բառերը նախորդների նման չի գործածել «ռուս-հայերեն» կամ «վրացերեն-հայերեն» իմաստներով:

³⁹ Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, հ. Բ, Ե., 1967, էջ 108:

⁴⁰ Տե՛ս Ա. Գ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 195:

Հետագոտվող բառախմբին որոշ չափով առնչվում է նաև *ռուսահայ*-ը: Այն *ռսահայ* ձևով առաջին անգամ արձանագրվել է Հ. Դադբաշյանի հայ-ռուսերեն բառարանում⁴¹ և համարվել ձևաբանորեն երկարժեք՝ 1. ամ. русско-армянский, 2. գոյ. русско-армянинъ: Մեզ հետաքրքրողն առաջին իմաստի թարգմանությունն է, որ հասկացվում է *ռուս-հայկական*, *ռուս-հայերեն*: Այս ազդեցությունը նկատելի է ակադեմիական հայ-ռուսերեն բառարանում, որտեղ ևս *ռուսահայ*-ի առաջին՝ անականի իմաստը թարգմանված է՝ русско-армянский. հատվածական բաղադրությամբ են թարգմանված այլ դեպքերում ևս՝ *հունահայ* – греко-армянский, *ռումիահայ* – румынско-армянский⁴²: Այս բառերի համապատասխան («ռուս-հայերեն» իմաստով և այլն) կիրառությունների նմուշներ մեր ձեռքին չկան, դրանք թերևս գտնվեն անցյալի հայ մամուլի էջերում:

Այսպիսով՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին:

1. *Հայ* վերջնաբաղադրիչով մի շարք բառեր (ածականներ) կան, որոնցում *հայ* բաղադրիչը նշանակում է «հայերեն»: Դրանք են՝ *ֆրանսահայ* «ֆրանսերեն-հայերեն», *լատինահայ* «լատիներեն-հայերեն», *արիահայ* «արիերեն՝ պարսկերեն-հայերեն», *պարսկահայ* «պարսկերեն-հայերեն», *հունահայ* «հունարեն-հայերեն», որոնք համանուն են «հայ» (ազգություն) նշանակող նույնաձև բառերին (*ֆրանսահայ* «Ֆրանսիայում ապրող՝ Ֆրանսիայի քաղաքացի՝ ֆրանսահպատակ հայ», *լատինահայ* «լատինադավան՝ հռոմեադավան՝ կաթոլիկ հայ» և այլն):

2. «Հայերեն» նշանակող *հայ* վերջնաբաղադրիչով բառերի ստեղծման սկիզբը պետք է համարել 19-րդ դ. վերջերը:

⁴¹ Տե՛ս Յ. Դադբաշյան, նշվ. բառարանը, էջ 613:

⁴² Տե՛ս Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, *Հայ-ռուսերեն բառարան*, էջք 586, 433:

3. Բառախմբի առաջին միավորները ստեղծվել են արևմտահայերենում, հետագայում բառակազմական մասնակաղապարը անցել է արևելահայերենին, սակայն այսօր անկենսունակ է, ծավալվելու հնարավորությունից զուրկ: Ստեղծված բաղադրություններն այժմյան լեզվակիր հանրությանն անծանոթ են, անգամ մասնագետների համար՝ դժվարըմբռնելի:

4. «Հայերեն» նշանակող *հայ* վերջնաբաղադրիչով բառերը վերջածանցի կրկնակի կրճատմամբ առաջացած յուրահատուկ հատվածական բաղադրություններ են՝ բաղադրիչների անանջատ գրությամբ:

5. *Ֆրանսահայ*-ը և *արիահայ*-ը գործածվել են բառարանների վերնագրերում (Գ. Լուսինեան, «Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ», Փարիզ, 1900, Յ. Թիրեաքեան, «Արիահայ բառարան», Վիեննա, 1914): Այս բառերի կիրառմամբ բառարանների վերնագրերն ավելի սեղմ են դարձել:

6. Հատվածական բաղադրության իմաստով *ֆրանսահայ*-ն արձանագրվել է հայերենի թարգմանական, իսկ *լատինահայ*-ը՝ թարգմանական և բացատրական բառարաններում:

7. Քննարկված խմբի բոլոր միավորները հանդիպում են (անշուշտ ոչ նույն հաճախականությամբ) մասնագիտական գրականության մեջ, գրացուցակներում և մամուլում: Հայերենի զարգացման արդի փուլում այդ կազմությունները խիստ հազվադեպ են կամ անգործածական:

Davit Gyurjinyan – Reseach on a Group of Words with the Last Component հայ (Meaning “Armenian Language”). – In this article a group of Armenian words having հայ “Armenian” (meaning “Armenian language”) as their last component is being examined, such as ֆրանսահայ “French-Armenian”, լատինահայ “Latin-Armenian”, արիահայ “Aryan-Armenian”, պարսկահայ “Persian-Armenian”, etc., where this component means “Armenian language”. These forms are homonyms to the words of the semantic group

“Armenian from abroad / Diasporan Armenian”: ֆրանսահայ¹ “French-Armenian (language)” – ֆրանսահայ² “Armenian from France”, etc. The structure under study appeared in the Western Armenian language in the end of the 19th century. The examined words are found in the titles of dictionaries, are rarely used in scientific texts and in the language of the media (also in Eastern Armenian), some of them appear in the explanatory and translation dictionaries of the Armenian language. In the current period of the Armenian language development of these words are part of the passive vocabulary.

Давид Гюрджинян – Исследование группы слов с последним компонентом հայ (со значением “армянский язык”).–В статье исследуется группа армянских слов с последним компонентом հայ (“армянин”) со значением “армянский язык”: ֆրանսահայ “французско-армянский”, լատինահայ “латинско-армянский”, արիահայ “арийско-армянский”, քարվահայ “персидско-армянский” и т.д., в которых данный компонент означает “армянский язык”. Указанные образования – омонимы слов семантической группы “зарубежный армянин / армянин диаспоры”: ֆրանսահայ¹ “французско-армянский” – ֆրանսահայ² – “армянин из Франции” и т.д. Исследуемая словообразовательная конструкция появилась в западноармянском языке в конце XIX века. Изученные слова встречаются в названиях словарей, редко употребляются в научных текстах и в языке прессы (в том числе – на восточноармянском языке), некоторые зафиксированы в толковых и переводных словарях армянского языка. В настоящем периоде развития армянского языка данные слова являются частью пассивной лексики.

**ԿՐԿՆԱԿ ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

Ինչպես գիտենք, կրկնակ բաղաձայններն արտասանվում են տևական, իսկ գրության մեջ՝ արտահայտվում կրկնատառ: Սույն փորձառական հետազոտության նպատակն է պարզել, թե կրկնակ բաղաձայնները որքանով են տարբերվում համապատասխան միայնակ բաղաձայններից, մասնավորապես տևողության տեսակետից, քանի անգամ է ավելանում բաղաձայնի տևողությունը տարբեր դիրքերում ու կառույցներում:

Կրկնակ բաղաձայններին անդրադարձել է **Հ. Աճառյանը** «*Լիակատար քերականություն հայոց լեզվի*» աշխատության 6-րդ հատորում¹՝ ներկայացնելով կրկնակ բաղաձայններով բառերի ցանկը հայերենում՝ 123 բառեր, որոնցից այժմ մեր դիտարկմամբ գործածվում է միայն մոտ 60 տոկոսը, իսկ մնացած 40-ը հնաբանություններ են ու ոչ գործածական բառեր:

Կրկնակ բաղաձայններին անդրադարձել է նաև Թերեզա **Ղարազյուլյանը** իր «*Ճամանակակից հայերենի ուղղախոսությունը*» աշխատության մեջ: Նա նշում է, որ «Հայերենին առհասարակ հատուկ չէ միատեսակ բաղաձայնների կրկնությունը, այդ պատճառով կրկնակ բաղաձայնները բուն հայկական բառերում հանդիպում են կամ ձայնավորի սղումով կազմված բառերում, ինչպես **բջջահյութ (բջիջ բառից)** ... կամ երկու ձևությոների սահմանագծում ... օրինակ՝ **երկկողմ, աննպաստ**»² և այլն: Բառավերջում կրկնակ բաղա-

¹ **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ, 6, Ե., 1976, էջ 567-568:

² **Թ. Ղարազյուլյան**, *Ճամանակակից հայերենի ուղղախոսությունը*, Ե., 1974, էջ 129:

ձայն ունեցող օտարազգի բառերի համար հեղինակն առաջարկում է դրանք տառադարձել մեկով, սակայն այս դեպքում առաջանում է արտասանության հեռացում բնօրինակից, մանավանդ հատուկ անունների դեպքում՝ **Կանն, Գրիմ** և այլն: Կարծում ենք, որ ավելի նպատակահարմար է դրանք արտասանել կրկնակ բաղաձայններով և տառադարձել կրկնակ գրությամբ, քանի որ հայերենի ճկուն արտասանական հնարավորությունները թույլ են տալիս դա անել:

«*Ճամանակակից հայոց լեզու*»³ ակադեմիական հրատարակության մեջ տրվում է արտաբերական մակարդակում կրկնակ բաղաձայնների արտասանության նկարագրությունը, որտեղ Ա. Խաչատրյանը մասնավորապես ասում է. «... Հնչյունների արտասանությունը հեշտացնելու համար առաջին հնչյունի երրորդ (ելքի) և երկրորդ հնչյունի առաջին (մուտքի) պահերը սղվում են, իսկ դադարի (կացքի) պահերը՝ միանում են: Այդ երկու հնչյունները միասին ունենում են մեկ մուտք և մեկ ելք, բայց երկու կամ մեկ երկար կացք»⁴: Իհարկե, հնարավոր են անհատական կամ միտումնավոր երկարացումներ, որոնք բաղաձայնը չեն դարձնում կրկնակ. դրանք դիպվածային են:

Կրկնակ բաղաձայնները փորձառական եղանակով ուսումնասիրելու նպատակով անհրաժեշտ համարեցինք դրանք դասակարգել ըստ 4 սկզբունքների՝

1. Դիրքային: Կրկնակ բաղաձայններն ուսումնասիրելիս կարևոր է նրանց տեղը բառի մեջ, այսինքն՝ թե բառի որ հատվածում են գտնվում կրկնակ բաղաձայնները՝ բառակիզբ, բառամեջ թե բառավերջ, ինչպես նաև՝ որքանով են մոտիկ շեշտին, և հատկապես՝ շեշտակիր վանկի բաղադրիչ են, թե ոչ:

³ Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., *Ճամանակակից հայոց լեզու*, հ. 1, Ե., 1979:

⁴ Նույն տեղում, էջ 115:

2. Բառակազմական և բառափոխական: ա) Բաղադրյալ բառեր, որոնց բաղադրիչներից մեկն ավարտվում է նույն բաղաձայնով, որով սկսվում է հաջորդը, ինչպես՝ *այբբենական, երեսարբիչ, երկկողմ, երրորդ, չորրորդ* և այլն: Բ) Բառակազմության ընթացքում տեղի ունեցած հնչյունափոխության հետևանքով առաջացած բաղաձայնների կրկնություն, ինչպես՝ *արճիճ-արճճե, բջիջ-բջջային, զնին-զննել, ծնունդ-ծննդան, հովիվ-հովվական, նինջ-ննջել, պտույտ-պտտել, ուղիղ-ուղղակի, փթիթ-փթթել* և այլն: գ) **Ան-** ածանցի **ն** բաղաձայնի և **ն**-ով սկսվող բառի միացումից առաջացած բառերի խումբը բավական մեծ է, քանի որ **ան-** նախածանցը շատ բառերի կարող է միանալ: Ուստի այս խումբը ևս առանձին քննարկման առարկա դարձրինք: դ) Ուսումնասիրության առանձին խումբ է բառերի այն հավաքածուն, որտեղ **ն**-ով ավարտվող բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է **-նեք** վերջավորությամբ և առաջացնում կրկնակ **ն** բաղաձայններ՝ *պատուհան-պատուհաններ, սեղան-սեղաններ, պատճեն-պատճեններ* և այլն:

3. Շարակարգային: Որպես տեսակ՝ ուսումնասիրվեցին այն կրկնակները, որոնք առաջանում են **ն**-ով վերջացող բառի և **ն** հոդի ու ձայնավորով սկսվող բառի սերտ արտասանության դեպքում (*սեղանն ուղիղ է, նստարանն առջևում է, Արսենն ու Հակոբը* և այլն): Նշենք, որ չենք նախատեսել քննարկել այն դեպքերը, երբ տարբեր բառերում՝ մեկի բառավերջում, մյուսի՝ բառասկզբում, հանդիպում է նույն բաղաձայնը՝ *շատ տուր, մեծ ծիտ, կանաչ չղջիկ* և այլն: Այս դեպքերում կրկնակ բաղաձայնները չնայած արտասանվում են միասին, սակայն պատկանում են տարբեր բառերի:

4. Բնաձայնական: Կրկնակ բաղաձայնների ուսումնասիրման ժամանակ առանձնացրինք բնաձայնական բառերը, որոնք պարունակում են կրկնակ բաղաձայններ: Այս դեպքում բնաձայնություն լինելու հանգամանքը անպայման իր

ազդեցությունն է ունենում բաղաձայնների տևողության վրա՝ *ֆշշալ, խշշալ, բզզալ, ճռռալ, տզզալ* և այլն:

Չենք քննարկել այն դեպքերը, երբ գրությունը չի արտացոլում արտասանությունը.

1. *Մ, դ, ն* հնչյուններով ավարտվող բառերին *ս, դ, ն* հոդերն ավելացնելիս նույնպես առաջանում են կրկնակ բաղաձայններ, բայց դրանց միջև *ս* և *դ* հոդերի դեպքում առավելապես հնչում է գաղտնավանկի *ք* ձայնավորը՝ *դասքս, ծնունդքդ* և այլն, ուստի սրանք ևս դադարում են կրկնակ լինելուց, չնայած որ գրության մեջ հայտնվում են կողք կողքի:

2. Բառասկզբում իրար հաջորդող կրկնակ բաղաձայնների միջև արտասանվում է գաղտնավանկի *ք* ձայնավորը, որը գրվում է տողադարձի կամ վանկատման ժամանակ՝ *զզվել (զրզ-վել), գզվել (գրզ-վել), լլկել (լրլ-կել), խխունջ (խր-խունջ), կկու (կր-կու), շշուկ (շր-շուկ)* և այլն: Այս պարագայում կրկնակ բաղաձայնները, չնայած այն հանգամանքին, որ գրության մեջ կողք կողքի են, արտասանելիս դադարում են լինել կրկնակ, քանի որ դրանց միջև արտասանվում է *ք* ձայնավորը: Ընդ որում, որոշ դեպքերում կրկնակները արտասանվում են որպես գերհնչույթ, օրինակ՝ *զզվել (զքվել), դդում (դթում)* և այլն:

Ի դեպ, հայերենում հանդիպում են նաև եռյակ բաղաձայններ, օրինակ, ինչպես նշում է **Հ. Աճառյանը**⁵, երբ *ան* ածանցը հանդիպում է *ննջել* բառին, ունենում ենք *անննջելի* բառը, որտեղ կան 3 *ն*-եր: Գրաբարում *ս*-ով վերջացող *լոյս, բոյս* և այլն բառերն ունեն մեկ *ս*, հոգնակի հայցականը կազմելիս ստանում են ևս մեկը, իսկ եթե դրան ավելանում է *ս* դիմորոշ հոդն էլ, ապա ստացվում է 3 *ս*:

Մեր գիտափորձերը կատարվել են «Պոռաստ» ծրագրի միջոցով, որը ժամանակակից փորձառական հնչյունաբանու-

⁵ **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ, 6, Ե., 1976, էջ 567-568:

թյան մեջ օգտագործվող համակարգչային ծրագիր է և նախատեսված է խոսքի վերլուծության, այդ թվում՝ սպեկտրոգրաֆիկ, և խոսքի համեմատության (սինթեզի) համար: Ծրագիրը հնարավորություն է տալիս հաշվարկելու հնչյունների տևողությունը և ուժգնությունը: Մի շարք հարցումներից պարզվել է, որ ամենից շատ այժմ փորձառական հնչյունաբանական լաբորատորիաներում օգտագործում են «Պռասատ»⁶ ծրագիրը:

Ձայնագրությունները կատարվել են տնային պայմաններում, նյութը կարդացել են բարձրագույն կրթությամբ, հայերենին լավ տիրապետող երեք կին հաղորդավարներ: Փորձարկման են ենթարկվել 102 բառեր, որտեղ կան կրկնակ բաղաձայններ: Ձայնագրությունները համակարգչային ծրագիր ներմուծելուց հետո կատարվել են կրկնակ բաղաձայների տևողության տվյալների հաշվարկումներ և վերլուծություններ: Տվյալների մշակումից հետո պարզեցինք մի շարք օրինաչափություններ:

1. Կրկնակ բաղաձայնների տևողությունները բառամիջի և բառավերջի դիրքերում համեմատելիս պարզվեց, որ դրանք բառամիջի դիրքում մոտ 0,03 միլիվայրկյանով ավելի տևական են (բառասկիզբը չենք համեմատում, քանի որ կրկնակների միջև ը է հնչում):

2. Կրկնակ բաղաձայնների տևողությունը առավել մեծ է շեշտին մոտիկ դիրքում, հատկապես, եթե դրանք շեշտակիր վանկի բաղադրիչ են: Այդ տարբերությունը միջինացված կազմում է մոտ 0,1 միլիվայրկյան:

3. Բաղադրյալ բառերը, որոնց բաղադրիչներից մեկն ավարտվում է այն բաղաձայնով, որով սկսվում է հաջորդը,

⁶ «Պռասատ» (Praat, հոլանդերեն՝ «խոսք, խոսել») ծրագիրը մշակվել և շարունակում է զարգացվել Ամստերդամի համալսարանի գիտաշխատակիցների՝ Պոլ Բոերսմայի (Paul Boersma) և Դեյվիդ Ուինինկի (David Weenink) կողմից: Ծրագիրը ստեղծվել է 1995թ.:

հետաքրքրական են այնքանով, որ որոշ բառերում, օրինակ՝ *այբբենական, երկկենցաղ, երրորդ, չորրորդ* և այլն, կրկնակների տևողությունը մոտենում է միայնակ բաղաձայնների տևողությանը, իսկ որոշ բառերում դրանք իսկապես կրկնակ են, ինչպես օրինակ՝ *երեսարփիչ, երկկողմ* և այլն:

Տևողության հաշվարկներն անելիս նկատեցինք մի երևույթ. եզակի ուղիղ ձևում բաղաձայնը հնչում է կրկնակ, բայց հենց բառը ձևափոխվում է կամ բաղադրվում, հնչում է միայնակ, օրինակ՝ *մասսա* բառում հնչում է երկար *ս*, սակայն *մասսայական* բառում *ս*-ի տևողությունը հավասարվում է միայնակ *ս*-ի տևողությանը, կամ որոշ դեպքերում՝ մոտենում դրան:

4. Բառակազմության ընթացքում տեղի ունեցած հնչունափոխության հետևանքով առաջացած կրկնակները արտասանվում են երբեմն մեկ *մուտք-կացք-էլք*-ով, երբեմն՝ դրանց միջև լսվում, իսկ պատկերի վրա երևում է կարճատև *ք*, որը նրանց բաժանում է և զրկում կրկնակ լինելուց՝ *արձձե, բջջային* և այլն: Կրկնակ *ղղ* բաղաձայնները հաճախ, մանավանդ խոսակցական լեզվում, հնչում են որպես մեկ *ղ*: Մա նույնիսկ լսելի է անգեն ականջով: Ավելին, հաղորդավարների ընթերցմամբ ևս այս երևույթը նկատելի է: *Մնունդ, ծնունդ* բառերից առաջացած *սննդամթերք* և *ծննդատուն* բառերը հետաքրքրական են նրանով, որ կարող են արտաբերվել 2 ձևով՝ կամ թույլ *ք*-ով՝ կրկնակ բաղաձայնների միջև, կամ առանց *ք*-ի: Կրկնակ բաղաձայնների ուսումնասիրման մեջ հատուկ խումբ կազմեցին *նն* կրկնակները մի քանի պարագաներում. ա) *ն*-ով վերջացող բառի և *ն* հոդի ու ձայնավորով սկսվող բառի սերտ արտասանության դեպքում (*սեղանն ուղիղ է*), բ) *ան* ածանցի *ն* բաղաձայնի և *ն*-ով սկսվող բառի միացումից առաջացած բառերում (*աննման*), գ) *ն*-ով ավարտվող բազմավանկ բառերի հոգնակին կազմելիս (*պատուհան-պատուհաններ*): Նշենք, որ *նն* կրկնակները «իսկա-

կան» կրկնակներ են այն առումով, որ դրանց տևողությունը ուղիղ 2 անգամ ավելին է միայնակ արտասանվածներից: Օրինակ, կրկնակ **նն**-ի միջին տևողությունը 0,28 միլիվայրկյան է, իսկ միայնակինը՝ 0,12:

5. Ըստ տևողության չափի առաջին տեղը գրավում են բնաձայնական բառերը, որոնք մոտավորապես 2 կամ 2,5 անգամ երկարատև են միայնակ արտասանված համապատասխան ձայնավորներից: Կրկնակների տևողության միջինը 1,7 միլիվայրկյան է, իսկ համապատասխան միայնակներինը՝ 0,81 մ/վրկ: Ընդ որում՝ բնաձայնություններ կազմում են միայն 4 բաղաձայններ *զզ, ժժ, ռռ, շշ*: Այս շարքում առավել տևական է շ բաղաձայնը, իսկ ամենից քիչ տևականը՝ զ-ն: Միջին տեղ են գրավում ժ-ն և ռ-ն: Բնաձայնական բառերի մեջ կրկնակների տևողությունը գերազանցում է վերը նշված մյուս խմբերի կրկնակների տևողությանը հասկանալի պատճառներով. դրանք հնչյուն լինելուց բացի դառնում են նաև ձայներ:

Վերջում ներկայացնում ենք մի քանի վիճակագրական տվյալներ մեր փորձերի արդյունքներից:

ա) Մեր կազմած բառացանկում (102 բառ) ամենից շատ կրկնակ բաղաձայններ են դառնում ն-ն (23 դեպք), ր-ն (10 դեպք), և լ-ն (9 դեպք), հետո գալիս են բնաձայնական բառերը, իսկ մեկական կիրառություն ունեն **թ, ծ, ճ, ջ, ս, ց, և ֆ** բաղաձայնները:

բ) Կրկնակ բաղաձայններ են դառնում հայերենի բաղաձայնների 60%-ը: Կրկնակ չդարձող բաղաձայնների 40%-ի մեջ են մտնում **գ, խ, հ, ձ, յ, չ, պ, փ, ք** բաղաձայնները:

Այսպիսով, բառամիջի կրկնակ բաղաձայնները պայմանականորեն կարող ենք բաժանել 2 խմբի. առաջին խմբի մեջ (75 %) մտնում են այն կրկնակները, որոնք կան **մեկ բառի** սահմանում: Դրանք հանդիպում են՝

- բնաձայնություններում (*բժժալ, թշշալ*)
- օտար բառերում (*Շիլլեր, Աքիլլես, բուդդա, վաննա*)

- հնչյունափոխության հետևանքով առաջացած բառերում (*ուղղակի, արճճէ, ծննդյան*)
- նշված խմբերին չպատկանող բառերում (*բերրի, մրրիկ*):

Մնացած 25%-ը կրկնակներ պարունակող այն բաղադրյալ բառերն են, որտեղ կրկնակները իրար կողքի գտնվող **2 տարբեր բաղադրիչներում** են (*երեսարբիչ, երրորդ, աննման, կանոններ, գրավիվել*):

Grigoryan Gayane – *Experimental Study of Durations of Double Consonants*. – The purpose of this experimental study is to determine how different are the durations of double and corresponding single consonants, how many times the duration increases in different positions and structures. In the study we took into consideration a number of circumstances: the position of double consonants in the word, how far or near they are from the stress, the fact of the formation of double consonants as a result of word formation, being in onomatopoeic words, etc.

Григорян Гаяне – *Экспериментальное исследование длительности редуцированных согласных*. – Целью данного экспериментального исследования является выяснение того, насколько различаются по длительности удвоенные и соответствующие одиночные согласные, насколько увеличивается длительность в разных положениях и структурах. В исследовании принимается во внимание ряд обстоятельств: положение удвоенных согласных в слове, насколько далеко или близко расположены они от ударения, факт образования удвоенных согласных в результате словообразования, удвоение в составе звукоподражательных слов и т.д.

Գրիգորյան Մուսաննա, Պարոնյան Նաիրա

(Հայաստան, ԵՊՀ)

susannagrigoryan@ysu.am, nairaparonyan@ysu.am

ՊԵՏՐՈՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ ԲԱՌԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ

Պետրոս Սյունեցու մասին կենսագրական տվյալները խիստ կցկտուր են: Նա ծնվել է հավանաբար Ե դարի վերջին քառորդին, աշակերտել է Մովսես Քերթոզահորը, որի շնորհիվ էլ ստացել է խոր ու համակողմանի գիտելիքներ և հմտանալով մեկնաբանական, քերթողական արվեստի մեջ՝ ձեռք է բերել Քերթող պատվանունը: Որպես Սյունյաց թեմի հոգևոր վերատեսուչ՝ մասնակցել է 554 թ. Դվինի եկեղեցաժողովին: Մահացել է հավանաբար 558 թվականին:

Պետրոս Սյունեցին ծավալել է մատենագրական լայն գործունեություն, հեղինակել է ճառեր, ներբողներ, դավանաբանական, մեկնաբանական աշխատություններ:

Պետրոս Սյունեցու՝ աստվածաբանական, գեղարվեստական արժանիքներով աչքի ընկնող առաջին երկը «Գովեստ ի սուրբ Աստուածածինն ...» խորագրով ներբողն է: Այն առաջինն է և հնագույնը հայ եկեղեցական մատենագրության մեջ Տիրամորը նվիրված երկերի շարքում: Այս երկի շարադրանքն ուղեկցվում է աստվածաբանական խոր ու համակողմանի մեկնաբանությամբ, որով դրսևորվում է նրա կենդանի կապը արևելաքրիստոնեական մարեմաբանության հետ: «Պետրոսի Աստվածածնա Գովեստը կարդացվում էր Փրկչի ծննդյան տոներին: Վեցերորդ դարում, ինչպես և դեռ շատ հետո, մեր եկեղեցին չուներ և ո՛չ մի հատուկ տոն Աստվածածնա: Ավետյաց, Վերափոխման և այլ տոները մտել

¹ Տե՛ս *Մատենագիրք հայոց*, Զ. դար, հ. Գ., Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 387:

են մեր մեջ շատ հետո, օտար անվավերական գրությունների թարգմանությանց ազդեցությամբ, հույն, և ավելի ուշ, նաև լատին եկեղեցիների օրինակով և հետևությամբ»²: Ինչպես նշում է Ն. Ակինյանը. «Գովեստն ի Ս. Կոյսն Մարիամ» ինքնին բավական է Մատենագրիս անունն անմահացնելու եւ Ձ դարու միակ պարծանքն համարելու: Չափազանցութիւն ըրած չենք ըլլար, եթէ ըսենք, որ իրմէ վերջը փորձողներէն ոչ ոք կրցած է հաւասարիլ ճառիս իւր ճաշակովն եւ գեղեցկութեամբը: Հետագայից կողմանէ եւս մեծ ընդունելութիւն գտած է ճառս, որուն վկայ են Շարակնոցի Մեծացուցէներն³:

Յուրաքանչյուր հեղինակի գեղարվեստական մտածողությունն արտահայտող հիմնական միջոցը լեզուն է: Պ. Սյունեցու «Գովեստ ի սուրբ Աստուածածինն» ներբողը հիացում է բառային արվեստի բացառիկ նմուշներով, որոնք վկայում են հեղինակի գեղագիտական բարձր ճաշակի, հարուստ ներաշխարհի մասին: Պետրոս Սյունեցին փոխաբերությունների, մակդիրների, համեմատությունների գործուն կիրառմամբ բառին հաղորդում է արտահայտչական նուրբ երանգներ, գործածում զգացմունքների, հույզերի պատկերավոր արտահայտման միջոցներ: Սուրբ Աստվածածինը Պ. Սյունեցու «Գովեստ ի սուրբ Աստուածածինն» ներբողում բնութագրվում է ոճական նպատակներով գործածվող ամենաբազմազան մակդիրների միջոցով: Պ. Սյունեցին հրաշալի կերպարաստեղծ է: Նրա գործածած գեղեցիկ ու անսպասելի մակդիրները, որոնք պարունակում են նաև համեմատության ու փոխաբերության երանգներ, ունեն կիրառական ինքնատիպ դրսևորումներ: Ներբողում քանակով գերազանցում են ածականով արտահայտված, բարդ և ածանցավոր բառերի միջո-

² Գ. Տեք- Մկրտչյան, *Հայագիտական ուսումնասիրություններ*, գիրք Բ, Ս. Էջմիածին, 1998, էջ 166:

³ Ն. Ակինեան, *Պետրոս եպիսկոպոս Միւնեաց*, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1904, էջ 78:

ցով կառուցվող մակդիրները, որոնք յուրահատուկ զարդ են հեղինակի խոսքում՝ *աղբիւր կնքեալ* (393), *ամենալցոյց զէտ* (393), *անաղտ սրբութիւն* (389), *անապատ անկոխ* (394), *անձեռագործ խորան* (394), *անմատոյց լոյս* (394), *անպարագրելի Աստուած* (395), *աստուածագիր մատեանք* (390), *աստուածախառն մարմին* (393), *աստուածային անուշահոտութիւն* (393), *աստուածեղէն բերան* (392), *աստուածընկալ որովայն* (394), *աւետաւոր ձայն* (389), *բազմաբեր ձիթենի* (393), *բազմամեծար յարգանք* (389), *բազմափառ կոյս* (390), *բոյս բարի* (393), *բոցեղէն սուր* (392), *գաւազան ծաղկեալ* (392), *դրախտ աստուածատունկ* (391), *երկիր բանաւոր* (394), *երկիր ծարաւուտ* (394), *ինքնագոյակ Հայր* (390), *լուսազգեստ արգանդ* (393), *կենարար Քրիստոս* (393), *կենդանագիր կտակ* (391), *կուսական սօն* (389), *համահրաւեր աւետիս* (392), *հոգեհնչող քնար* (394), *հոգեից մարգարէ* (393), *ճառագայթաւէտ լոյս* (389), *ճշմարիտ որթ* (392), *մովսիսակերտ տախտակ* (393), *մահկանացու ընչընչունկ* (392), *մեծահրաշ ցնծութիւն* (389), *մորենի սխրալի* (392), *յարադալար ծաղիկ* (392), *նորահրաշ տնօրէնութիւն* (392), *նորասքանչ ուրախութիւն* (389), *շարժուն տապանակ* (393), *վայրենի շուշան* (393), *վէմ ջրածին* (391), *տոմար անընթեռնելի* (394), *ցամաք ամպ* (394):

«Գովեստ ի սուրբ Աստուածածինն» ներբողում Պետրոս Սյունեցու լեզվին մի առանձին արտահայտչական թարմություն են հաղորդում երաժշտականությամբ օժտված առատորեն հանդիպող կրկնությունները՝ գործածված տարբեր բառերի, նախդիրների ու նախադրությունների, շաղկապների միջոցով՝ ստեղծելով չափածո խոսքին բնորոշ հանգեր: Դրանք հեղինակն օգտագործում է բառերի, բառակապակցությունների, նույնիսկ առանձին նախադասությունների կրկնությամբ՝ խոսքին հավելյալ արտահայտչականություն հաղորդելու նպատակով: Բացի այդ՝ լեզվական ցանկացած միավորի բազմակի կրկնությունը ավելի շեշտված է դարձնում այդ միավորը՝ առանձնացնելով մյուսներից. դրա

միջոցով հեղինակը ուշադրություն է հրավիրում գործողության կատարման տարբեր հանգամանքների վրա, հուզական երանգ հաղորդում առավել կարևոր մտքերին, ինչն է՝ *Տինա էզ զի՞ կայ իմ ընդ այսպիսի մրցման կոուելոյ, զի՞ վարանեալ տարակուսեն զիս երանութեան ցոյցք* (395): Ներբողում կարող են կրկնվել նախադասությունները, նախադասության հիմնական անդամները և լիիրավ անդամ չհանդիսացող լեզվական միավորները, օրինակ՝ սուրբ կույսին վերաբերող բոլոր 24 վկայությունները սկսվում են 24 անգամ կրկնվող հետևյալ նախադասությամբ՝ «Ուրա՛խ լեր, Մարիա՛ մ»: Հաճախ է կրկնվում հոետորական հարցական նախադասությունը. «Զի ո՞չ ապաքէն էլեր ըստ բանս, ո՞չ ապաքէն գեր ի վերոյ գտար էակացս. ո՞չ ապաքէն անցեր ըստ մարդկային միտս...» (395): Կրկնվում է նախադասությունների ուղիղ խնդիրը. «Արդ *զի՞նչ* ասացից, կամ *զի՞նչ* խաւսեցայց...» (389), զարմացական ձայնարկությունը. «*Բա՛բէ*, ո՞ այլ այսպիսի լուաւ սքանչելիս, *բաբէ՛*, անպատում երանութիւնքն զկուսական որովայնն փակեցին...» (391):

Ինչպես հայտնի է, դասական գրաբարում հաճախակի հանդիպող կրկնության մյուս տեսակը բազմաշաղկապությունն է, երբ մի քանի նախադասություններ միմյանց են հարաբերվում միևնույն շաղկապի օգնությամբ: Իհարկե, այս գործառնությունը գրաբարում ավելի հաճախ հանդես է գալիս էլ միավորիչ շաղկապը, սակայն Սյունեցու մոտ հետաքրքիր է *զի* շաղկապի կրկնությունը, որի միջոցով տարբեր նախադասություններ միավորվում են մեկ շարահյուսական կառուցում, սակայն մյուս կողմից՝ այդ նախադասություններից յուրաքանչյուրը պահպանում է իր հարաբերական ինքնուրույնությունը: Բացի այդ՝ այսպիսի կրկնության շնորհիվ հեղինակի խոսքն ավելի ազդեցիկ ու ամբողջական է դառնում՝ «*Զի* զԱստուած ընկալար, *զի* զԱստուած յղացար, *զի* զԱստուած երկնեցեր, *զի* զԱստուած ծնար, *զի* զԱստուած անպարագրելի ի

գիրկս բարձեալ կրեցեր, *զի* զԱստուած կաթնաբուծեցեր, *զի* զԱստուած սնուցեր, *զի* զԱստուած գգուեցեր» (395):

Ներբողում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հոմանշային կրկնությունների կիրառության դեպքերը, երբ միևնույն բառի կրկնության փոխարեն գործածվում են հոմանիշ բառեր, որոնք, հաջորդելով մեկը մյուսին, ավելի պատկերավոր են ներկայացնում երևույթը կամ գործողությունը, օրինակ՝ «Ուրա՛խ լեր, Մարիա՛ւմ, *սպասա՛ծ վիւն*» (392), «...երկինք *աթոռ* են, եւ երկիրս *պաստուանդան* ոտից նորա» (395): «Տինա եւ զի՛ կայ իմ ընդ այսպիսի *մրցման կռուելոյ*» (395):

Երբեմն կրկնության գործառույթով ներբողում հանդես են գալիս խոնարհված բայն ու բառային իմաստին հոմանիշ դերբայական միավորը՝ հատկապես գրաբարի անցյալ դերբայը, այսպես՝ «Աստուածութեանն հրով *վառեալ այրեցար*» (392): «...ստեղծիչն Մովսէսի նորահրաշ տնարէնութեամբ *առագաստեալ վարագորեցաւ*» (392): «...ի խորանի անդ առժամայն *բողբոջեալ սաղարթեր*» (392): «...ընդ ի *վարանեալ տարակուսեն* զիս երանութեանն ցոյցք» (395): «...բոցազարդ հրով զսանդարամետացն հիմունս *դորդեալ սասանեցուցին*» (395): «...զի զԱստուած անպարագրելի ի գիրկս *բարձեալ կրեցեր*» (395): «Ընդ որ եւ առակաւոր բանն *զարմացեալ հիանայր*» (392):

Այս կառույցները ավելի են ընդգծում հոմանիշ բայերի արտահայտած իմաստները՝ հեղինակին հնարավորություն ընձեռելով ավելի դիպուկ ու ճշգրիտ պատկերելու ներկայացվող տեսարանը:

Սյունեցու «Գովեստ ի սուրբ Աստուածածինն» գողորիկ գործի անբաժան տարրերից են համեմատությունները: Ոճական այս հնարքի առատությունը ներբողում հեղինակի լեզվի էական հատկանիշներից է:

Համեմատությունը, ինչպես հայտնի է, կատարվում է ըստ առարկաների, երևույթների միջև եղած ընդհանրության որևէ եզրի, սակայն այդ ընդհանուր հատկանիշը անպայ-

մանորեն կրում է հեղինակի անհատական մոտեցման կնիքը և համեմատությանը տալիս սուբյեկտիվ երանգ: Ինչպես նշում է Է. Ջրբաշյանը. «Համեմատությունը ոչ միայն առարկաների ընդհանուր գծերն է բացահայտում, այլև հեղինակի վերաբերմունքը, նրա զգացմունքային գնահատականը: Այն սովորաբար առաջ է քաշում, ընդգծում է երևույթի բազմազան հատկություններից մեկը, տվյալ դեպքում՝ ամենից էականը»⁴: Գրաբարի ոճական արտահայտչական համակարգում համեմատություններն ունեն տարբեր առարկաների և երևույթների միջև զանազան քանակական ու որակական հարաբերություններն արտահայտելու 3 աստիճան՝ նույնական, բաղդատական և գերադրական⁵: Նույնական աստիճանում ընդգծվում է համեմատվող առարկաների, երևույթների նույնարժեքությունը այս կամ այն հատկանիշով՝ առանց նրանցից որևէ մեկի նկատելի գերազանցությունը նշելու: Այս հարաբերության պատկերման համար գրաբարում կիրառվում են մի քանի եղանակներ, որոնցից ամենատարածվածը նախադրությունների կիրառությունն է: Պ. Սյունեցին նույնական համեմատությունների արտահայտման համար ներբողում գործածում է **որպես, իբրև** նախադրությունները, որոնք, ստանալով հայցականով խնդիր՝ վերջինիս հետ միասին դառնում են նախադասության մեկ անդամ՝ հիմնականում ձևի պարագա, այսպես՝ «սա այսուր ի մտուր անդ **որպես հայրական ծոց** բազմի» (390): «զի յորոյ երեսաց երկինք **որպես մոմ հալին**» (390): «զի ի հայրենի ծոցոյն **որպես հուր** փայլակնացաւ» (391): «քանզի աստուածաբոյս մարմինն ի միջի քում **որպես զծառն կենաց** արմատացեալ» (392): «զի **իբրև ակն պատուական** աստուածախառն մարմինն գոյանայր ի քեզ, որ եւ եղաւն իսկ **որպես**

⁴ Էդ. Ջրբաշյան, *Գրականության տեսություն*, Ե., 1967, էջ 218:

⁵ Տե՛ս Թ. Շահվերդյան, *Ղասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն*, Ե., 2007, էջ 186:

զբար ընտիր ի հիմունս Սիովնի» (393): «հովիտ անվար, ուստի *իբրև շուշան վայրենի* տերունական մարմինն բուսաւ» (393): «դու գնա *իբրև զտղայ խանձարրապատ* առնէիր» (395), «այժմ ի մեջ անցեալ *իբրև զպարմանի*՝ բաժակ ի մատունս բերեալ՝ աղջկան միոյ մատուցանէ» (395):

Նույնական համեմատության մեկ այլ դրսևորումն այս ներբողում իրականացվում է զբաբարյան համապատասխան վերջածանցների օգնությամբ, որոնք, կցվելով բառարմատին, հստակորեն մատնանշում են համեմատության մյուս եզրը հանդիսացող օբյեկտը և այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատությունը⁶: Ինչպես հայտնի է, *իբրև, նման, որպէս* նախադրությունների իմաստային և ոճական գործառույթները կարող են իրականացվել նաև (*ա*)պէս, (*ա*)բար վերջածանցների միջոցով, այսպես. «Տէրն եւ ստեղծիչն ի յադախնոյ եւ ի կաւեղէն ստեղծուածոյ սողայաբար յանձն էառ ծնանիլ» (389): «եւ արեգակնաբար ի նմանէ յաշխարհս ծագեաց» (390): «նորագործ աստուածապէս ճարտարապետեալ՝ զերկինս երկիր արար» (394): «արեգակնաբար ի մեզ ծագեցաւ, փարատել զխաւար մեղաց» (395):

Համեմատության բաղդատական մակարդակում դիտարկվող երևույթներից, առարկաներից մեկը առանձնացվում է մյուսից, ցույց է տրվում նրա այս կամ այն հատկանիշի ավելի կամ պակաս դրսևորումը՝ համեմատած մյուսների հետ⁷: Ներբողում բաղդատական համեմատությունն արտահայտելու համար գործածվող լեզվական հնարը *քան* նախադրությունն է: Այն դրվում է հատկանիշ ցույց տվող բառից հետո, որին հաջորդում է համեմատելին՝ գործածված հայցական հոլովով: Պ. Սյունեցու «Գովեստ ի սուրբ Աստուածածինն» ներբողում *քան*-ը բաղդատական համեմատական գործառույթ է իրականացնում՝ միմյանց կապակցելով ոչ միայն

⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 206:

⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 187:

առանձին բառեր ու բառակապակցություններ, այլև ամբողջ նախադասություններ՝ կատարելով շաղկապի դեր. «Յաղագս որոյ եւ մէք ի վեր քան զնա զաւրս պատուեսցուք, եւ բարձր քան զերկինս զերկիրս իմասցուք եւ հրաշափառ քան զարեւելս զկոյսն տեսցուք, եւ առաւել քան զհրեշտակս զհովիւան մեծարեսցուք եւ ընտիր քան զքերովբիման զմսուրն ծանիցուք: Նաև Երուսաղեմ քաջ ի բաց քան զհրեղէն կառսն պայծառացաւ» (389-390): «Եթէ բարձր զերկիրս քան զերկինսն իմասցուք, միթէ սնափառութեամբ ինչ պարծեցայ» (390): «Եւ զի բազմափառ քան զարեւելս զկոյսն Մարիամ տեսաք, միթէ բան ինչ մեծամտութեամբ ի վեր քան զարժանն զանցուցաք» (390), «եւ զի առաւել քան զքերովբիման զմսուրն եդաք» (390), «մանաւանդ զի եւս առաւել քան զգերիւերոյսն զստորինս պարագրեցին» (390):

Ներբողում գործածված է նաև հակադրությունը, որը ոճագիտության հիմնական հնարներից է: Բառային մակարդակում ոճական հակադրությունը դրսևորվում է հականիշ բառերի կիրառության միջոցով, որոնք հնարավորություն են ընձեռում առարկաներն ու երևույթները ներկայացնելու հակադիր կողմերից: Հակադիր իմաստ ունեցող բառերի համատեղ գործածությունը հեղինակին թույլ է տալիս բազմակողմանի ներկայացնել նկարագրվող երևույթները, ինչպես նաև արտահայտել սեփական վերաբերմունքը դրանց նկատմամբ, գեղագիտորեն ներգործել ընթերցողի վրա: Պ. Մյունեցու «Գովեստ ի սուրբ Աստուածածինն» ներբողում հականիշ բառերի միջոցով գեղարվեստական հակադրություններում Աստծու ամենակարողությունն ու ամենագորությունն ավելի պատկերավոր ներկայացնելու համար հեղինակը դիմում է տարբեր հականիշ բառերի կիրառությանը՝ դրանով իսկ արտահայտելով և ավելի ցայտուն դարձնելով իր վերաբերմունքն ու գնահատականը նշված առարկաների, երևույթնե-

րի ու հատկանիշների նկատմամբ⁸: Յուրաքանչյուր հակադրություն միաժամանակ արտահայտում է առարկաների և երևույթների համեմատություն, սակայն դրանով հանդերձ՝ հակադրությունն ընդգծում է ոչ թե տարբեր առարկաների ու երևույթների ընդհանրությունները, այլ տարբերությունները: Հակադրությունն ավելի ցայտուն արտահայտելու նպատակով հաճախ հականիշները կապվում են տարբեր շաղկապների միջոցով, որոնք այդպիսի ոճական կառույցներում միմյանց են կապակցում հակադիր կողմերում գտնվող առարկաներն ու երևույթները. «եւ ծնեալ յաշխարհ *կենդանեաց եւ մեռելոց*՝ յաւիտենական ծիւեր կեանս» (393), «Դուռն աղխեալ, ընդ որ հրեշտակաց Տէրն *մու՛ն* եւ *ե՛լ* եւ զկուսական արգանդդ ոչ ելոյծ» (394), «Ո՛վ մեծի խորհրդոյն, *մտանէր եւ էլանէր* եւ զդրունս կուսութեանն փակեալ պահեր» (391), «ո՛չ ապաքէն սպասաւորական հոգեացն եղեն *երկինք* բանակետդ, իսկ *երկիրս* բոլորիցն Աստուծոյ սեպհական քաղաք» (390), «որ ոչ *զմահկանացու* ընչընչուկն կրեցեր, այլ *զանմահացուցիչ* կերակուրն կրեցեր» (392): Իսկ հետևյալ օրինակում հեղինակը մարդկությունն ու աստվածությունն է դնում հակառակ ծայրերում, «անբաժանելի միաւորութեամբ երկու աշխարհքն հիմնաւորեցան՝ *աստուածութիւնն եւ մարդկութիւնն*» (391), քանի որ, ինչպես Հովհան Օձնեցին է գրում. «Մեկ բնություն և մեկ դեմք ունի Քրիստոս ոչ թե ըստ բնության նույնության կամ ըստ մեկանձնականության, քանզի այս երկուսը միասին գրեթե զրկում են Աստծուն մարդանալուց և մարդուն՝ աստվածանալուց, այլ ըստ Բանի՝ իր մարմնի հետ անձառ միավորության»⁹:

Երբեմն այսպիսի կառույցներում *և* համադասական շաղկապը գործածվում է *բայց, իսկ* շաղկապների փոխարեն.

⁸ Տե՛ս Լ. Եզեկյան, *Ոճագիտություն*, Ե., 2003, էջ 235:

⁹ Տե՛ս Կորին Վարդապետի, Մամբրէի Վերձանողի եւ Դաւթի Անյաղթի *Մատենագրութիւնք*, «Ընդդէմ երևութականաց», Վենետիկ, 1833, էջ 51-52:

«եւ որոյ *երկինք* աթոռ են, եւ *երկիրս*՝ պատուանդան ոտից նորա» (395): Այսպիսի կառույցներն ունեն ընդգծված ոճական արտահայտչականություն, որովհետև *և* շաղկապի ոչ ավանդական, փոխակերպված կիրառության շնորհիվ առավել ցայտուն են դառնում տարբեր առարկաների միջև եղած հակասությունները¹⁰: Հակադիր հարաբերությունները ներբողում արտահայտվում են նաև շարահարությամբ: Ահա մի քանի բնութագրական օրինակ՝ «Ուստի եւ մարգարեական շնորհացն բերանք՝ դիտելով զամենայն ճախր առեալ ճահողաբար՝ *զներքինն* ընդ *վերինն* կապակցեին» (390): «Տէրն մտեալ *անմահութեանն* հոտովն *զմահկանացու* նիւթն համեմեր» (393), «մանաւանդ զի եւս առաւել քան *զգերիվերոյսն զստորինս* պարագրեցին» (390):

Այսպիսով, Պետրոս Սյունեցիի փոխաբերությունների, մակդիրների, համեմատությունների, հակադրությունների, կրկնությունների վարպետ կիրառմամբ բառին հաղորդում է արտահայտչական նուրբ երանգներ, գործածում զգացմունքների, հույզերի պատկերավոր արտահայտման միջոցներ: Հեղինակի գործածած յուրաքանչյուր ոճական կառույց աչքի է ընկնում գեղարվեստական բարձրարվեստ հմտությամբ և հուզական նրբերանգների վարպետ գործածությամբ: Ամեն մի տողը մի ամբողջական պատկեր է՝ գունեղ, շքեղահյուս, որտեղ երևում են հեղինակի հոգու թռիչքը և մտքի ճախրը:

Grigoryan Susanna, Paronyan Naira – *Petros Syunetsi's Word Art*. – Petros Syunetsi has carried out a wide literary-annalistic activity. He is the author of allocutions, eulogies, theological, commentary works. Petros Syunetsi's first striking work, rich in theological, artistic values, was the eulogy – entitled as “Praise to St. Mother of God”. Petros Syunetsi's eulogies are of great interest from the linguistic point of view.

¹⁰ Տե՛ս Թ. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 228:

The eulogy “Praise to St. Mother of God” is strikingly full of epithets, comparisons, reprises, contrapositions. The usage of these stylistic tricks gives extraordinary expressiveness and sensitiveness to the eulogy.

Григорян Сусанна, Паронян Наира – Искусство словоупотребления Петроса Сюнеци. – Петрос Сюнеци развивал широкую литературную деятельность. Он сочинял оды, богословские и комментаторские труды, летописи. Первое произведение, которое отличается своими художественными достоинствами, является ода “Хвала Святой Богородице”.

Оды Сюнеци представляют особый интерес в языковом отношении. Ода “Хвала Святой Богородице” изобилует эпитетами, сравнениями, повторами, антитезами. Использование этих стилистических средств придает оде необычайную экспрессию и эмоциональность.

Գրիգորյան Սուսաննա (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆ» ՁՄԵՌԱՆ
ՀԱՏՈՐԻ ԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՉՎԱԾՍՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Դարձվածքները պատկանում են լեզվի պատկերավորման կարևոր միջոցների թվին: Լեզվի պատկերավորությանը նպաստում է դարձվածքների փոխաբերական իմաստը: Օրինակ, եթե ասում ենք *նայել*, հասկանում ենք «նայել» գործողությունն ընդհանրապես, իսկ եթե ասում ենք՝ *այք տնկել*, նայելու սովորական իմաստին փոխարինում է «սևեռուն նայելը», իսկ երկրորդ փոխաբերական իմաստով նաև՝ ուրիշի ունեցվածքի նկատմամբ ակնկալիքներ ունենալը: Միաժամանակ շեշտվում է խոսողի դրական կամ բացասական վերաբերմունքը:

Գրիգոր Տաթևացիի բավականին հաճախ է դիմել ոճական այս հնարքին: Նրա միայն «Գիրք քարոզութեան» Ձմեռան հատորում¹ դրանց թիվը գերազանցում է մի քանի տասնյակը, որոնց մեջ գերակշիռ թիվ են կազմում անվանական և բայական դարձվածքները:

Դարձվածքի փոխաբերական իմաստը սովորաբար կրում է նրա մեկ բաղադրիչը, որն էլ հիմնական իմաստի կրողն է: Այսպես, օրինակ, *ցրտանալ ի սիրոյն* դարձվածքի իմաստը դրսևորվել է *սէր* և *ցուրտ* բառերի համեմատությամբ, սակայն բուն «չարանալ» իմաստը պետք է փնտրել «ցրտանալ» բառի մեջ, որի փոխաբերական բացատրություններից մեկն էլ հանգեցնում է «զրկվել բարուց» և ի վերջո՝ «չարանալ» իմաստին:

¹ Գրիգոր Տաթևացի, *Գիրք քարոզութեան, Ձմեռան հատոր*, Կ. Պոլիս, 1740:

«Գիրք քարոզութեան» Ձմերան հատորում հանդիպող բայական դարձվածքները իմաստային առումով պատկանում են հիմնականում երեք ոլորտների՝ **բարոյախոսություն, հասարակական երևույթներ, բնության երևույթներ:**

Բարոյախոսություն ոլորտի դարձվածքները նկատելիորեն առաջ են եկել քարոզների մեջ աստվածաշնչյան թեմաների քննարկումների և վերլուծությունների ընթացքում, օրինակ՝ *մերկանալ ի շնորհաց, մերկանալ ի գործոց բարեաց, թրծեաց սիրով, մոլորութեամբ կուրացան, շտեմարանեցին զբարութիւնս, դալարեցոյց հաւատով, պտղաբերեաց գործով, բժշկեաց զանհնազանդութիւն, փրկութիւն գործեաց, լինել հաց կենաց, պատել խանձարուրս, բեռնակիր եղեալ մեղաց, անասուն եղեալ, լուսաւորել զհոգւոյ այս:*

Այս դարձվածքների մի մասը աստվածաշնչյան պատվիրանների հաստատումն է կամ՝ ընդհակառակը՝ զանցառումը. այսպէս՝ *շտեմարանեցին զբարութիւնս, թրծեաց սիրով, դալարեցոյց հաւատով* դարձվածքներով շեշտվում է պատվիրանապահությունը, իսկ *մոլորութեամբ կուրացան, մերկանալ ի շնորհաց, մերկանալ ի գործոց բարեաց* դարձվածքներով նշվում է դրանց զանցառումը:

Իմաստի շեշտադրում ունենք՝ *մերկանալ ի շնորհաց, մերկանալ ի գործոց բարեաց, թրծեաց սիրով, մոլորութեամբ կուրացան, շտեմարանեցին զբարութիւնս, բեռնակիր եղեալ մեղաց* դարձվածքներում, այսինքն, այս դարձվածքներներից յուրաքանչյուրը կազմվել է սովորական գործողությունը ընդգծելու կամ շեշտադրելու միջոցով և փոխաբերական մեկ այլ իմաստ է արտահայտել: Օրինակ, եթե ասենք՝ *շնորհագուրկ, ապա այն կընկալվի իբրև՝ «շնորհ չունեցող մարդ», իսկ մերկանալ ի շնորհաց* դարձվածքը շեշտում է վիճակի փոփոխությունը՝ «շնորհից զրկվելու, ապիկար, վնասակար մարդ դառնալու» հատկանշի ձեռքբերումը:

Հասարակական երևույթների ոլորտին են առնչվում *ուրախութիւն և ցնծութիւն կատարել, տգիտութիւն պակա-*

սեցնել, ի հաշտութեան գամք, ի կողմն ճշմարտութեան խօսի, ի կողմն ողորմութեան խօսի, դատաստան կտրել, հանգիստ գտանել, ի բաց կտրել զագահութիւնս, բէհ կամ նշան տալ դարձվածքները:

Արդի հայերենում սրանցից շատերը պահպանել են իրենց համարժեքները՝ *ուրախություն և ցնծություն կատարել, հաշտության գալ, ճշմարտության կողմն անցնել, դատաստան կտրել, հանգիստ գտնել, բէհ կամ նշան տալ*:

Բնության երևույթների ոլորտից են *ծառք մերկանան, տարին շարժի, դառնայ արեգակն ի վեր, տանի արեգակն երկոտասան կենդանակերպսն, օրն բոլորապէս շրջի, լոյսն խափանի* և այլն:

Իմաստային առումով հետաքրքիր է *լոյսն խափանի* դարձվածքը, որ «խավարել» իմաստն ունի: Իր նշանավոր «Գիրք հարցմանց»-ում Տաթևացին խավարը ոչ թե առանձին բնության երևույթ է համարում, այլ՝ լոյսի պակաս («բարին ունակութիւն է եւ չարը՝ պակասութիւն, ինչպէս խաւարը՝ լոյսի, հիւանդութիւնը՝ առողջութեան եւ մահը՝ կեանքի»², այսինքն խավարը այլ բան չէ, քան՝ լոյսի խափանում:

Հատկապէս հետաքրքրական են **հեղինակային դարձվածային միավորները**, որոնց մեջ մի կողմից ժամանակի պատկերացումներն են դրսևորված, մյուս կողմից՝ հեղինակի ինքնատիպ լեզվամտածողությունը, ինչպէս օրինակ՝

խոտ և խոի լինել (Վասն որոյ զձեզ սիրովն Քրիստոսի աղաչեմ մի յուսահատութեամբ անկեալ ի մեղս խոտ և խոի լիցուք յախտենից գեհենին³):

հաւատով տաճարացեալ (Չորրորդ վէմն Քրիստոս ի մէջ վիմի յայրին ծնաւ զայն ցուցանէր թէ որ հաւատով տաճարացեալ են և հաստատեալ իրրև զվէմն⁴):

² Գրիգոր Տաթևացի, *Գիրք հարցմանց*, Կ.Պոլիս, 1729, էջ 16:

³ Գրիգոր Տաթևացի, *Գիրք քարոզութեան, Ձմեռան հատոր*, էջ 24:

⁴ Նույնը, էջ 41:

հիւանդանալ հպարտութեամբ (Նոյնպէս և մարդկային բնութիւն նախ հիւանդանացաւ հպարտութեամբ⁵ ...):

Սրանց մեջ մի շարք դարձվածքներ հետաքրքրական են իմաստի սաստկացման առումով. օրինակ՝ *բեռնակիր եղեալ մեղաց* կամ՝ արդի հայերեն՝ *մեղքի բեռնակիր*, որը հեղինակային դարձվածքի բավականին լավ օրինակ է: Եթէ շարադրանքում լինէր «շատ մեղքեր գործող մարդ», ապա դա կընկալվէր գրեթէ նույնությամբ՝ մարդ, որը բազմաթիվ մեղքեր է գործում, սակայն երբ ասվում է *մեղքի բեռնակիր*, խոսքն արդեն մեղքի մեջ թաղված մարդուն է վերաբերում:

Կամ՝ *հիւանդանալ հպարտութեամբ. հպարտ մարդ* բառակապակցությունը բնութագրում է էությամբ հպարտ մարդուն, մինչդեռ *հիւանդանալ հպարտութեամբ* դարձվածքը վերաբերում է անհուսալի հոգևոր հիվանդությամբ տառապող մարդուն:

Նույնը կարելի է ասել *հաւատով տաճարացեալ* դարձվածքի մասին: *հավատացյալ մարդը* աստվածաշնչյան կանոններով ապրող մարդն է, մինչդեռ *հաւատով տաճարացեալ* դարձվածքը աստծո համար կենդանի տաճար դարձած մարդու մասին է:

Ունենք **հոմանիշ** և **հականիշ** դարձվածքներ, ինչպէս օրինակ՝ *ամենայն ջուրք ոչ առնէ պտուղ* և *ոչ բերէ պտուղ «պտուղ (յ)տալ»* (հոմանիշ). *մերկացեալ ի գործոց բարեաց «չար»* և *հաւատով տաճարացեալ «բարի»* (հականիշ):

Բերում ենք Գրիգոր Տաթևացիու «Գիրք քարոզութեան» Ձմեռան հատորի բայական դարձվածքների արդի հայերենյան բացատրությունները. զաղօթս մատուցանեմք – աղոթել, ընթանամք մտօք – մտածել, խորհրդածել, զաղօթս նուիրելով – աղոթել ջերմեռադորեն, ի նորանալ լուսնին – լուսնային ամսվա սկիզբը, քաղցրութեամբ խօսէր – խոսել սիրալիք, տգիտութիւն պակասեցուցանել – ուսյալ դառնալ,

⁵ Նույնը, էջ 24:

ցրտանայ ի սիրոյն – չարանալ, մերկանայ ի շնորհաց – անշնորհք, շնորհքից զրկվել, սրտի հաւատալն – ուժգին հավատալ, զմահ ճաշակեաց – մահանալ, յորովայնէ սրբեցաւ – արդար լինել ի սկզբանէ, շտեմարանեցին զբարութիւնս – բարի գործեր կատարել, օրն բոլորապէս շրջի – մեկ օրվա լրանալը, քաղցրութեամբ զմայլի – հիանալ, տկարացան օրէնքն – սկսեցին վատ գործել կամ չգործել օրէնքները, ի բոլոր սրտէ դիմէ – դիմել նվիրվածությամբ, անձնվիրաբար ծառք մերկանան – տերևաթափ լինել, տարին շրջի երկոտասան ամսօք – տարվա լրանալը, կարճ խօսիլ – խոսել համառոտ, խոնարհութեամբ յուսուցանել – սովորեցնել հանդարտությամբ, դալարացոյց հաւատով – հավատի միջոցով վերախմաստավորել կյանքը, պտղաբերեաց գործով – կատարել արդյունավետ գործեր:

Susanna Grigoryan – *Semantic Analysis of the Verbal Stable-phraseological units in the “Winter Tome” of the “Preaches Book” after Grigor Tatevatsi.* – The number of verbal stable-phrases only in "Winter Tome" of the "Preaches book" after Grigor Tatevatsi is more than a few dozen. They mostly take their roots from the Bible, or they are based on social phenomena, and more often on natural phenomena.

Сусанна Григорян – *Семантический анализ глагольных фразеологических оборотов "Зимнего тома" Книги проповедей Григора Татеваци.* – В "Зимнем томе" Книги проповедей Григора Татеваци число глагольных фразеологических оборотов превышает несколько десятков. Они в основном восходят к Библии, или же отражают общественные явления, а чаще – основываются на природных явлениях.

Դալայան Տոքք (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ՀԱՅԵՐԵՆ ԵՐԿԵՎ ԵՐԳ ԱՐՄԱՏՆԵՐԻ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Հայերեն արմատների ստուգաբանություններին վերաբերող աշխատություններում հաճախ ավանդույթի ուժով շարունակում են գոյատևել հին մեկնությունները, որոնք տրվել են 19-րդ դարավերջին կամ 20-րդ դարասկզբին: Մա այն ժամանակաշրջանն էր, երբ պատմահամեմատական լեզվաբանության մի շարք կարկառուն ներկայացուցիչներ դրեցին այդ գիտաճյուղի հիմքերը: Սկզբնավորվելով Ֆրանսիայում և Գերմանիայում՝ պատմահամեմատական լեզվաբանությունը շատ արագ իր հետևորդներն ունեցավ նաև Հայաստանում: Մեր նշանավոր լեզվաբան-հնդեվրոպաբանները ժառանգեցին եվրոպական լավագույն ավանդույթները: Սակայն հայերեն արմատների ծագմանն առնչվող վերլուծություններում, տուրք տալով ցեղակից լեզուներում առկա գուգահեռներին, երբեմն մոռացության են մատնում հայերենի ներքին օրինաչափությունները: Այնինչ որոշ դեպքերում լեզվի ներքին հնչյունաբանական և իմաստաբանական կանոնները կարող են առավել ճշգրտությամբ հուշել այս կամ այն արմատի ծագումնաբանությունը: Ներկա հոդվածում երկու արմատների համատեղ քննությունը թույլ է տալիս փոխկապակցված հիմքով ներկայացնել դրանց ստուգաբանությունը:

Առաջին արմատը՝ հայ. *երկ* (-ոյ), ի տարբերություն աշխարհաբարի, գրաբարում ուներ ավելի ընդհանրական իմաստ և նշանակում էր «գործ», «գործ աշխատալից», «ջանք, աշխատասիրություն», «վաստակ, արդիւնք աշխատութեան»¹:

¹ Գ. Աւետիքեան, Խ. Միսրմէլեան, Մ. Աւգերեան, *Նոր բարոյիք հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1836-1837 [այսուհետև՝ ՆԲՀԼ 1836-1837], 1, էջ 685:

Արմատը գործածված է անեգաբար, վկայված է Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից սկսած: *Երկ* արմատի մեջ հատկապես ընդգծվում էր տանջանքով, «երկունքով» կատարված աշխատանքը՝ հաճախ մտավոր: Այս երկրորդ նշանակությունը զարգանալով՝ բառարաններում դրվում է իբրև *երկ* բառի երկրորդ իմաստ՝ «գրագիտական կամ արուեստագիտական արտադրություն»²: Աշխարհաբարում *երկ* բառն ընդհանրապես պահել է միայն իր մտավոր աշխատանքին վերաբերող նշանակությունները՝ «երկասիրություն, ստեղծագործություն, գրվածք, աշխատություն, ուսումնասիրություն»՝ ընկալվելով միայն իբրև գեղարվեստական կամ գիտական գրավոր աշխատություն³:

Հայկազեան բառարանը հայ. *երկ* արմատը համեմատում է հուն. *ἔργον* «գործ» համանիշի և պարսկ. (արաբ.) *عرق* '*araq* «քրտինք» բառի հետ⁴: Ուշագրավ է, որ Հ. Հյուբշմանն իր նշանավոր աշխատության մեջ հայ. *երկ* արմատն ընդհանրապես չի քննարկում՝ ո՛չ փոխառյալ, ո՛չ էլ բնիկ բառար-

² **Ս. Գարամաճեան**, *Նոր բառագիրք հայերեն լեզուի*, Կ. Պոլիս, 1910 [այսուհետև՝ ՆԲՀԼ 1910], էջ 431:

³ **Ա.Ս. Սուքիասյան**, *Հայոց լեզվի հունանիշների բառարան*, Ե., 1967 [այսուհետև՝ ՀԼՀԲ 1967], էջ 187; **Ա. Տեր Խաչատրեան**, **Հ. Գանգրունի**, **Փ. Տոնիկեան**, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պեյրուք, 1968 [այսուհետև՝ ՀԼՆԲ 1968], էջ 135; *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան* (հ. 1-4), Ե., 1969-1980 [այսուհետև՝ ԺՀԼԲԲ 1969-1980], 2, էջ 582; **Է.Բ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան* (հ. 1-2), Ե., 1976 [այսուհետև՝ ԱՀԲԲ 1976], 1, էջ 345:

Ի դեպ, բնագիտության մեջ էլ գործածվել է *երկ* եզրույթը՝ որպես ուժի միավոր, որն աներաժեշտ է մեկ միլիգրամ ծանրությունը մեկ սանտիմետր բարձրացնելու համար [տե՛ս **Ս. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան* (հ. 1-2), Ե., 1944-1945 [այսուհետև՝ ՀԲԲ 1944-1945], 1, էջ 586]: Իրականում սա միջազգային տերմին է, որը կազմվել է 19-րդ դ. 60-ական թվականներին՝ հուն. *ἔργον* «գործ» բառից, և եվրոպական լեզուներում թվակցաներին՝ հուն. *εργ* (ռուս. *эрг*), հետագայում փոխարինվել է *joule* եզրույթով: Հետաքրքիր է, որ հայերենում տառադարձվել է ոչ թե **երգ*, այլ *երկ* տարբերակով:

⁴ ՆԲՀԼ 1836-1837, 1, էջ 685:

մատների շարքում⁵: Մակայն այդ ժամանակ տակավին հայտնի չէին միջինասիական իրանական լեզուների տվյալները, որոնք գիտական շրջանառության մեջ մտան 20-րդ դարասկզբին հայտնաբերված ձեռագիր տեքստերից: Հենց այս տվյալների ներգրավումն էլ հիմք դարձավ Հ. Աճառյանի ստուգաբանության համար⁶, որը հիմնականում ընդունված է եղել մինչև հիմա:

Համաձայն Հ. Աճառյանի՝ հայ. *երկ* արմատը համարվում է փոխառություն «իրանական մի կորած ձևից»: Որպես իրանական այդ կորած ձևի պահպանված գուգահեռներ բերվում են հետևյալ բառերը՝ սողդ. *՛rk* «գործ, պարտականություն», մանիք. պահլ. *arg*, յաղնուր. *ark* «գործ», միջին պարսկ. *՛rk* «գործ, աշխատանք», ինչպես և որոշ գուգահեռներ պամիրյան լեզուներում. վերջիններս հնչյունապես բավական տարբեր են (մասնավորաբար՝ ձայնավորական տեսանկյունից)⁷: Հ. Բեյլին սողդերեն հիշյալ բառը բերում է *՛rkh* տառադարձմամբ, սրան կցում է նաև զրադաշտական պարսկ. և յաղնուր. *ark*, վախան. *yark* համանիշները, որոնք գուգադրում է խոթանասակ. *ārra-* և հայ. *արար-*, *անն-* եմ բայարմատների հետ⁸: Հատկանշական է, որ Բեյլին հայ. *երկ* արմատը չի ընդգրկում այս գուգահեռների շարքում:

Ինչպես տեսնում ենք, բացի մ.պարսկ. *՛rk* «գործ» բառից, մյուս բոլոր նշված ձևերը պահպանվել են արևելա-իրանական լեզուներում՝ այսպես կոչված Արևելյան Իրանի կամ Կենտրոնական Ասիայի տարածքում: Այստեղ, սակայն, անհրաժեշտ է նշել, որ մ.պարսկ. *՛rk* «գործ» բառը, հայերե-

⁵ H. Hübschmann, *Armenische Grammatik*, Leipzig, 1897.

⁶ Հ.Յ. Աճառեան, *Հայերէն արմատական բարարան*, հ. 1-4, Ե., 1971-1979 [այսուհետև՝ Աճառեան 1971-1979], 2, էջ 58:

⁷ C. Salemann, Manichaica II — *Izvestiya Akademii Nauk*, VI seriya. 15 oktyabrya, S.-Peterburg, 1907, S. 538; Աճառեան 1971-1979, 2, էջ 58:

⁸ H.W. Bailey, *Dictionary of Khotan Saka*, Cambridge-London-New York-Melbourne, 1979, p. 231.

նում փոխառվելով, կտար *արկ ձևը և ո՛չ երկ, այդ պատճառով էլ Հ. Աճառյանը ենթադրում էր իրանական կորած մի ձևի առկայությունը, որն, ըստ նրա, կարող էր լինել հայերենի փոխատուն:

Երկ արմատի՝ նշված ստուգաբանությունը նույնությամբ և սակավ օրինակներով բերվում է Գ. Ջահուկյանի՝ հետմահու հրատարակված «Ստուգաբանական բառարանում»⁹: Սակայն ավելի վաղ Գ. Ջահուկյանը կասկած էր հայտնել Հ. Աճառյանի ստուգաբանության առնչությամբ և երկ բառի համար ենթադրել հնդեվրոպական ծագում՝ մանավանդ հաշվի առնելով նրա՝ -n արտաքին հոլովման ենթարկվելու հանգամանքը¹⁰: Հայոց լեզվի նախագրային շրջանի պատմությանը վերաբերող ռուսերեն այս աշխատության մեջ Ջահուկյանը հայ. երկ(-ոյ) «գործ, աշխատանք» արմատը դնում էր հնչունական շեղում ունեցող հնդեվրոպական արմատների շարքում՝ այն համեմատելով հուն. ἔργον «գործ, աշխատություն, երկ» համանիշ բառի հետ՝ շարունակելով ՆՀԲ-ի առաջ քաշած տեսակետը: Նույն տեղում Գ. Ջահուկյանը նշում էր, որ մյուս կողմից՝ ունենք նաև հայ. գործ(-ոյ) հոմանիշը, որը բխեցվում է հ.-ե. նույն արմատի ձայնդարձից՝ *uergom:

Երեք տարի անց, սակայն, իր մեկ այլ աշխատանքում Գ. Ջահուկյանը երկ բառը համարում էր փոխառություն մակերդն. *ερκος վերականգնված ձևից¹¹: Որպես այդ վերակազմության հաստատում նա բերում է Հեսիքիոսի ավանդած 'αρκόν «անգործություն, պարապություն» բառը, որի գուգահեռն է հուն. 'αργός ձևը՝ կազմված 'α- ժխտական նախածանցով α-(F)εργος (< *η- uergos) նախածանցավոր կազմությունից:

⁹ Գ.Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 226:

¹⁰ Գ.Բ. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 268.

¹¹ Գ.Բ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Ե., 1970, էջ 38-39:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ այս փոխառությունը պետք է կատարված լիներ համեմատաբար ուշ շրջանում, երբ տեղի էր ունեցել *rk > rg* փոփոխությունը. «իհարկե, այս դեպքում, ինչպես նշվել է, հնարավոր է ենթադրել մակեդոնական բառի փոխառյալ լինելը փոյուգերենից»: Այնուհետև Գ. Ջահուկյանը գրում է, որ «եթե այս ենթադրությունը ճիշտ է, ապա պետք է բացառել *երկ* բառի իրանական ծագումը, ինչպես կարծում էր Հ. Աճառյանը», քանի որ «նրա բերած բոլոր զուգահեռներում, ինչպես և սպասելի էր, հայ. ե-ի դիմաց առկա է գերազանցապես *a-* բայց չկայ *e-*ով ձև»¹²: Այս առումով հիշեցնենք նաև այն միտքը, որ հայտնել է Լ. Հովհաննիսյանը իր «Հայերենի իրանական փոխառությունները» մենագրության մեջ՝ *երգ* արմատի կապակցությամբ. «Իրանական լեզուներում այս կամ այն ձևի վկայությունը կամ հնարավոր գոյությունը միշտ չէ, որ հայերեն համապատասխան բառը իրանական փոխառություն համարելու փաստարկ կարող է լինել»¹³:

Իմաստաբանական համեմատական քննությունը ցույց է տալիս, որ *երկ* արմատի հետ սերտորեն կապուած է *երկն-* «տղաբերքի ցավ» բառը, որը նույնպես վկայված է Աստվածաշնչից, նշանակում է նաև «տառապանք, ցավ, տագնապ, վախ, երկյուղ». այս արմատից ունենք *երկնել* «տղաբերքի ցավ քաշել» և *երկնիլ* «հառաչել, ցավագնել» բայերը: Դեռևս ՆՀԲ-ն *երկն-* արմատը դնում էր *երկ* «գործ» բառից¹⁴: Այստեղ ավելորդ չէ հիշել լատ. *labor* բառը, որ նշանակում էր թե՛ «աշխատանք», թե՛ «երկունք». սրանից է ծագում, օրինակ, անգլ. *labour* ձևը, որը նշանակում է «աշխատանք, գործ, ջանք, ճիգ, վաստակ, տաժանք, երկունք», նույն իմաստային դաշտին է պատկանում *travail* բառը, որը ֆրանսերենում նշանակում է «աշխատանք», իսկ անգլերենում՝ նաև «տղաբերքի ցավ»:

¹² Նույն տեղում:

¹³ Լ.Շ. Հովհաննիսյան, *Հայերենի իրանական փոխառությունները*, Ե., 1990, էջ 215:

¹⁴ ՆԲՀԼ 1836-1837, I, էջ 685:

Այդպիսով, նշված օրինակները ցույց են տալիս, որ հնդեվրոպական լեզուներում «աշխատանք» և «երկունք» հասկացությունները իմաստաբանորեն կապված էին իրար: Թեպետև Հ. Աճառյանը *երկ* և *երկն*- արմատները դիտարկել է անկախաբար, սակայն դրանք կարող են միանգամայն կապվել միմյանց հետ իմաստաբանորեն¹⁵: Հետաքրքրական է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ այս երկու արմատները գործածվում են կողք-կողքի՝ կարծես որպես հոմանիշներ՝ «*ուստերք քո և դստերք՝ իմոյ որովայնի երկք և երկունք*» [Յոբ, բ, 9]¹⁶:

Նկատենք, որ *-n* արտաքին հոլովման բառերը հայերենում գերազանցապես վերաբերում են բնիկ հնդեվրոպական բառաշերտին, և հետևաբար *երկ* «գործ, վաստակ» բառի համար խորթ չի լինի *h.-ե.* Ստուգաբանություն առաջարկելը: Մեր կարծիքով՝ *երկ* բառը հայերենում ծագում է *h.-ե. * $(\acute{u})erk^{w-o-}$* կամ ** $hierk^{w-o-}$* նախաձևից, որը պետք է նշանակեր «ստեղծված, արարված» և ունենար, թերևս, երկու տարբերակ՝ նախաձայն շրթնային կիսաձայնով և այսպես կոչված «կոկորդային» նախահավելված հնչյունով: Այս արմատը, ամենայն հավանականությամբ, մաս էր կազմում մեր նախնիների բանաստեղծական բառապաշարի: Նույն արմատից *-ն* աճականով կարող էր առաջանալ *երկն* «երկունք» բառը: Հ.-ե. ** $(\acute{u})erk^{w-o-}$* (** $hierk^{w-o-}$*) նախաձևի բանաստեղծական ընդգրկուն նշանակությունը կատարելապես արտացոլում է հայ.

¹⁵ Այս կարծիքին է նաև՝ **H. K. Martirosyan**, *Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon*. Leiden Indo-European Etymological Dictionary Series edited by A. Lubotsky, vol. 8, Leiden-Boston, 2010, p. 268.

¹⁶ Հայ. *երկն*- «երկունք, տղաբերքի ցավ» բառի ծագման շուրջ կան երեք հիմնական վարկածներ. առաջինի համաձայն՝ այն բխեցվում է *h.-ե. * $d\acute{u}ej-$* «վախենալ» նախաձևից (Ս. Դերվիշյան, Հ. Աճառյան և նրանց հետևողներ), երկրորդի համաձայն՝ ծագում է *h.-ե. * $perg-$* «վախենալ» նախաձևից (Հ. Պեդերսեն, Ֆ. Կորսլանդտ), իսկ երրորդ վարկածով հայ. *երկն*- բառը կապվում է հունարեն և հին իռլանդերեն «ցավ» նշանակող բառերի հետ (Հ. Ֆրիսկ, Յ. Շինդլեր և նրանց հետևողներ) [տե՛ս **Martirosyan** 2010, p. 268]:

երկնել բայը. այն մեկտեղում է թե՛ ցավերով ծննդաբերելու (որով կյանք է տրվում՝ արարվում է նոր էակ), թե՛ ներշնչանքով գեղարվեստական ստեղծագործություն արարելու իմաստները:

Հ.-ե. **(y)erk^w-o-* (**h¹erk^w-o-*) նախաձևը հայերենում օրինաչափորեն պետք է տար *երգ* տարբերակը՝ ձայնեղ վերջահար բաղաձայնով: Սակայն, ինչպես հայտնի է, հայերենում բավական տարածված էր *գ/կ* հետնալեզվային պայթականների հերթագայությունը, որն, ըստ երևույթին, եղել է բարբառային հնչյունական հնագույն տարբերակային դրսևորումներից մեկը մեր լեզվում: Գ. Ջահուկյանը բերում է հին հայերենում *գ/կ* հերթագայության մի շարք օրինակներ, ինչպես՝ *ագռաւ – կռաւել, կառաչ; գաղափար, կաղապար; գծուծ – կծիծ* «գող», *կծծի* «ժլատ»; *գրեայ – կռունկ*, ևն¹⁷: Ամենայն հավանականությամբ, սրանց կարելի է ավելացնել *երգ/երկ* զույգը: *Երգ* արմատը նույնպես, ինչպես և *երկ*-ը, ենթարկվում էր -ո արտաքին հոլովման: Վերը շարադրված վերականգնման համաձայն՝ *երգ* բառը ստուգաբանորեն պետք է նշանակեր «ստեղծված, արարված» և հետևաբար ծագեր նույն հ.-ե. նախաձևից:

Համեմատաբանների մեծ մասը *երգ* բառը հայերենում համարում է բնիկ: Խնդիրը միայն հ.-ե. նախաձևի ճշգրիտ իմաստը վերականգնելու մեջ է: Այսպես, Գ. Ջահուկյանը, հետևելով Յ. Պոկոռնուն, Հ. Հյուբշմանին, Հ. Աճառյանին, *երգ* (-ոյ) արմատը բխեցնում է **erk^u-o-* նախաձևից՝ դնելով բնիկ հ.-ե. բառարմատների թվում¹⁸: Անդրադառնալով հ.-ե. այս նախաձևին՝ նա գրում է. «Ռիթմական խոսքը թերևս մեծ նշանակություն է ունեցել ծիսա-կրոնական կյանքում: Այսպես, ակնհայտորեն բանաստեղծական արժեք են ունեցել հ.-

¹⁷ Джаукян 1967, с. 301.

¹⁸ Գ.Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 123, 271:

ե. **erk*¹⁹ «ճառագայթել, շողալ. պայծառ հնչել. գովերգել» բառարմատին պատկանող ածականները, գոյականները, բայերը. այստեղից է ծագում հայ. *էրգ*-ը, բայց այն դարձել է սովորական գործածության բառ»¹⁹: Ընդամին, Գ. Ջահուկյանը հետևել է գերմանացի հնդեվրոպաբան և հայագետ Ռ. Շմիտին, որը *էրգ* բառի հետ նույն «բանաստեղծական» շարքում է դնում նաև *արև*, *արծիւ*, *ձի* բառերը²⁰:

Ինչպես տեսնում ենք, վերի մեկնության մեջ հ.-ե. նախաձևի վերականգնվող իմաստաբանական դաշտը բավական ընդարձակ է՝ «ճառագայթել»-ից մինչև «գովերգել» և «երգել»: Իսկ արդյո՞ք նույն նշանակություններն ունեն հ.-ե. ժառանգ-ձևերը: Քննությունը ցույց է տալիս, որ նման իմաստային վերականգնման համար հիմք են ծառայել հին հնդկերենի սովյալները, որոնք, սակայն, ճշգրտորեն չեն մեկնաբանվել:

Հայ. *էրգ* արմատին ամենամոտ գուգահեռներն են՝ իւթ. *ārku*²¹, *arku*- «տաղերգել, օրհնաբանել, նվագել» և հին հնդկ. *arká*- «երգ, հմայական երգ» արմատները²¹: Վերջինիս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ հաճախ ավանդաբար համարվել է, թե հ. հնդկ. *arká*- գոյականն ունեցել է նաև «ճառագայթ, լույս, փայլ» նշանակությունը: Այս պատճառով՝ հնդեվրոպական արմատների իր բառարանում Յ. Պոկոռնին հնդկական բառի հ.-ե. **erk*- նախաձևի համար վերականգնում էր «ճառագայթել, պայծառ հնչել» նշանակությունը²²: Սակայն Հ. Հյուբշմանը, հայ. *էրգ* բառը որպես բնիկ արմատ

¹⁹ Ջահուկյան 1987, էջ 49-50:

²⁰ R. Schmitt, *Dichtung und Dichtersprache in indogermanischer Zeit*, Wiesbaden, 1967, S. 259-260.

²¹ M. Mayrhofer, *Etymologisches Wörterbuch des Altindoarischen*, 1-3, Heidelberg, 1992-2001, 1, S. 114-115, 249-250; A. Kloekhorst, *Etymological Dictionary of the Hittite Inherited Lexicon*. Leiden Indo-European Etymological Dictionary Series edited by A. Lubotsky, vol. 5, Leiden-Boston, 2008, p. 205; Ջահուկյան 2010, էջ 222; Martirosyan 2010, p. 259.

²² J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, Bern-München, 1959, S. 147.

համեմատելով հին հնդկերէն *arká-* բառի հետ, վերջինիս համար դնում էր միայն «երգ, օրհներգ» նշանակությունը²³: Հ. Աճառյանը, ըստ էության, միավորել է Հյուբշմանի և Պոկոռնու ստուգաբանությունները²⁴: Նրանց հետևում է Լ. Սարաջևան՝ հ.-ե. **erk*^u- արմատի նշանակութիւնը դնելով՝ «փայլել, փառաբանել, մեծարել»՝ որպէս գուգահեռներ դնելով հին հնդկերէնը և թոխարերէնը²⁵:

Խնդիրը պարզում է Հ. Բեյլին, որն իրավացիորեն հին հնդկերէնում առանձնացնում է երկու տարիմաստ արմատներ՝ *ark-* «փայլել» (որի քմայնացված տարբերակն է՝ *arj-* «փայլուն լինել») և *arká-* «երգ» կամ *rk-* «բանաստեղծություն»: Բեյլիի կարծիքով՝ այս երկու համանուն արմատները բաղարկվել են²⁶: Այսպիսով, նշված տեսակետը, ինչպէս և վերը բերված մեր վերլուծությունն ու *երկ* արմատի հետ հնարավոր կապը ցույց են տալիս, որ կարիք չկա *երգ* բառը կապելու «ճառագայթել, շողալ» հասկացությանը և բացատրելու դրա զարգացումը իբրև «պայծառ հնչել, գովերգել»²⁷: Առաջնայինը *երգ* արմատի մեջ կարող էր լինել արարված, ստեղծված լինելու գաղափարը, որ հաստատվում է նաև գուգահեռ *երկ* արմատի նշանակությամբ: Ի դեպ, հայերէնում ո՛չ *երգ*, ո՛չ էլ *երկ* արմատները երբեք չեն նշանակել «ճառագայթել, շողալ» կամ «պայծառ հնչել»: Սակայն նոր բառարաններից մեկում, թերևս ազդվելով Աճառյանի Արմատական բառարանում բերված բացատրությունից, հեղինակը *երգ* բառի 6-րդ իմաս-

²³ **Hübschmann** 1897, S. 443, № 130.

²⁴ **Աճառեան** 1971-1979, 2, էջ 42:

²⁵ **Л.А. Сараджева**, *Армяно-славянские лексико-семантические параллели (сравнительно-историческое исследование генетически общей лексики)*, Ереван, 1986, с. 195-196.

²⁶ **Bailey** 1979, p. 251.

²⁷ Այսպէս է փորձում, օրինակ՝ **Ջահուկյան** 1987, էջ 49-50; 2010, էջ 222:

տը դնում է «ճառագայթ, ցուք, արև, կրակ»²⁸, որն, իհարկե, ճիշտ չէ և չի հաստատվում հայերենի տվյալներով:

Այսպիսով, անկախ հ.-ե. տարբեր իմաստային գու-գահեռների ընդգրկումից և հ.-ե. նախաձևի նշանակություն-(ներ)ից, լեզվաբանների մեծ մասը *էրգ* բառին իրավամբ վերագրում է բնիկ ծագում: Սակայն կան նաև փոքրաթիվ այլ կարծիքներ: Ջորջիանակ, Ե. Խաչատուրովան գտնում էր, թե *էրգ* բառը փոխառված է հին հնդկերենից, թեև միանգամայն հավանական էր համարում նաև *էրգ*-ի՝ բնիկ հայկական արմատ լինելը²⁹: Հետագայում նա հակվում է այն մտքին, թե *էրգ* բառը փոխառյալ է Միտանիի հնդարիական լեզվից³⁰: Հ. Բեյլին էլ հայ. *էրգ* բառը փոխառյալ էր համարում իրանական կորսված մի ձևից³¹: Այսուհանդերձ, ինչպես երևում է, *էրգ* բառի՝ փոխառյալ լինելու վարկածները չեն ամրագրվում որևէ կոնկրետ լեզվական տվյալով, ո՛չ էլ հաստատվում են պատմաբանասիրական և իմաստաբանական քննությամբ: Հենց միայն *էրգ* արմատի հնագույն, բազմատեսակ ու բազմիմաստ հարուստ գործածությունը բավարար էր ենթադրելու դրա բնիկ ծագումը, որը և հաստատվում է այլ հ.-ե. գու-գահեռ ձևերի առկայությամբ: Հայ. *էրգ* արմատն ու նրանից ստեղծված կազմությունները վկայված են մեսրոպյան գրականության սկզբնավորման հենց առաջին հուշարձանից՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից, և հաճախադեպ են մեր ոսկեդարյան գրականության մեջ³²:

²⁸ Պ. Ճիզվեճեան, *Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան* (հ. 1-2), Հալէպ, 1954-1957, 2, էջ 239:

²⁹ Ե.Գ. Խաչատրովա, Об армяно-индийских лексических изоглоссах *ՊԲՀ*, № 2 (61), էջ 195.

³⁰ Ե.Գ. Խաչատրովա, Древнейшие армяно-индо-иранские языковые контакты // *Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր*, Ե., 1979, էջ 359, 375.

³¹ Bailey 1979, 251.

³² Տե՛ս Աճառեան 1971-1979, 2, էջ 42:

Մերօրյա բանասիրական և լեզվաբանական քննությունը ցույց է տալիս, որ վաղնջահայերենում «երաժշտություն» հասկացությունն առհասարակ արտահայտվել է *երգ* եզրույթով: Հայերեն *երգ* արմատի իմաստային դաշտը հնում շատ ավելի ընդգրկուն էր, քան հիմա: Գրաբարի բառարաններում *երգ* գոյականի առաջին երկու իմաստները դրվել են որպես «նուագ ձայնի» և «բան երաժշտական, եղանակաւոր բան»³³, այսինքն՝ «երաժշտական խոսք»: *Երգ* բառը նշանակել է նաև ուղղակի նվագարաններ և նրանց արտաբերած երաժշտությունը. այսպես, իբրև *երգ* արմատի բազմաթիվ իմաստներից վերջիններ՝ նշվում են «աղէյարմար գործի երգելոյ (քնար, սաղմոսարան)» և «հնչիւն նուագարանաց»³⁴:

Նման գործածությունը կարող էր լինել ոչ թե փոխաբերական իմաստով, այլ գար հենց «արարված, ստեղծված» նախնական նշանակության գիտակցումից: Դեռ 5-րդ դարասկզբին՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, *երգ* բառով արտահայտվել է նաև «նվագ» հասկացությունը, իսկ *երգեմ* բայով նշանակվել են ոչ միայն «ձայնով երգել», այլև «երաժշտական գործիք նվագել» գործողությունները³⁵: Այս արմատական իմաստով և *-արան* վերջածանցով է կազմվել *երգարան* գոյականը, որի համար գրաբարի բառարանները նախ տալիս են «նվագարան» և հետո միայն՝ «երգի գիրք, խաղտետր» նշանակությունները³⁶:

Երգ բառի հին իմաստի մասին են վկայում նաև այնպիսի կազմություններ, ինչպիսիք են՝ *երգայարդար* «նվագ-

³³ ՆԲՀԼ 1836-1837, 1, էջ 672; ԱԲՀԼ 1865, էջ 268:

³⁴ Մ. Ջախջախեան, *Բառգիրք ի բարբառ հայ և իտալական*, Վենետիկ, Տպարան Սրբոյն Ղազարու, ՌՄՁՁ (1837) [այսուհետև՝ ԲԲՀԻ 1837], էջ 458:

³⁵ Աճառեան 1971-1979, 2, էջ 42; Լ. Շ. Հովհաննիսյան, Երաժշտություն իմաստային խմբի բառերը գրաբարում – *Ջահուկյանական ընթերցումներ-2007* (հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ), Երևան, էջ 101-102:

³⁶ ՆԲՀԼ, 1836-1837, հ. 1, էջ 672; ԲԲՀԻ 1837, էջ 458; ՆԲՀԼ 1910, էջ 421:

ներ հորինող, երգահան», և *երգայարդարություն* «երաժշտական եղանակներ հորինելու արվեստ» բառերը³⁷: Աշխարհաբարում *երգ* բառի իմաստային դաշտը սահմանափակվում է վերաբերելով միայն մարդկային ձայնի արտաբերած երաժշտությանը, մինչդեռ մյուս նշանակությունները, եթե նույնիսկ գործածվում են, ունենում են փոխաբերական իմաստներ:

Далалаян Торк – К этимологии арм. erk (երկ) ‘труд, произведение’ и erg (երգ) ‘песня’. – Статья касается этимологии двух близко звучащих корней *erk* и *erg*. Оба корня засвидетельствованы в армянской раннесредневековой литературе Золотого Века, начиная с армянского перевода Библии (V век). Для второго корня компаративисты с самого начала предполагали исконно индоевропейское происхождение, тогда как первый корень традиционно считался заимствованием из другого языка. На основе нового филологическо-лингвистического анализа предлагается внести некоторые коррективы в семантическом поле индоевропейской этимологии слова *erg* (երգ). Что касается корня *erk* (երկ), пересматривается старая этимология, рассматривая данный корень как исконно индоевропейский а не заимствованный. Для обеих корней восстанавливается и.-е. проформа **(y)erk^w-o-* или **h₁erk^w-o-* со значением ‘созданный, сотворенный’.

Dalalyan Tork – On the Etymology of Arm. erk (երկ) ‘work, production, labour’ and erg (երգ) ‘song, hymn’. – This paper broaches two closely-sounding roots erk and erg. Both are attested in the Armenian early Medieval literature of the Golden Age, starting from the Armenian translation of the Bible (5th c.). From the very beginning, the comparative linguists assumed the second root to be of a native Indo-European origin, whereas the first one was traditionally considered as a loanword from another language.

³⁷ Տե՛ս նաև ԵՊՀԼ 1836-1837, հ. 1, էջ 672; նԲՀԼ 1910, էջ 421:

Based on new philological-linguistic analyses, we propose to make some adjustments in the semantic field of the Indo-European etymology of *erg* (ἔργ). As for *erk* (ἔργ), we revise the old etymology and consider it as a native and not borrowed word. For both roots we reconstruct the original form I.-E. $*(\underline{u})erk^w-o-$ or $*h_1erk^w-o-$ which should have meant ‘created’.

Դիլբարյան Նարինե (Հայաստան, ԵՊՀ)

narine.dilbaryan@ysu.am

**ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ
ԲՆՈՒԹԱԳՐԻՉ ՀՍԿԱՆԻՇՆԵՐՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ**

Աշխարհագրական միավորներին տրվող հատուկ անունները շատ անգամ ուղղակի հարաբերության մեջ են գտնվում արտաքին աշխարհի իրակությունների բնական հատկանիշների հետ և կարող են թեմատիկ խմբեր կազմել այս կամ այն իմաստային հատկանիշի ընդհանրության հիմքի վրա, որն ուղղակի ապացուցում է անվանադրման գործողության կապը նշանակվող միավորների հետ: Այսինքն՝ որքան էլ պայմանական է թվում անվանադրումը, անվան և նրա նշանակած իրի միջև առկա կապը, իրականում նրանք փոխապայմանավորված են: Հին հույների հայտնի բանավեճը «Ֆյուսեյ»-ի և «թեսեյ»-ի կողմնակիցների միջև ժամանակակից տեղանվանագիտության մեջ հաճախ լուծվում է «Ֆյուսեյ»-ի օգտին:

Տեղանունները կարող են առաջանալ անվանվող իրակության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին բնութագրիչ հատկանիշներն արտահայտող բառերի, հիմնականում՝ ածականների և տեղանքի ու բնակավայրերի տիպեր արտահայտող եզրաբառերի տարբեր համակցումներից, վերջիններս ընդունված է կոչել անվանակարգային բառեր, դրանք են՝ *դաշտ, լեռ, դար, արտ, թաղ, քար, գյուղ, ավան, շեն* և այլն: Հնդեվրոպական լեզուներում ընդունված է հատկանիշ արտահայտող բառերի նախադաս դիրքը, նրանք որոշիչն են, իսկ նոմենկլատուրային բառերը հետադաս որոշյալներ են: Արդի հայերենում ևս որոշիչը շարադասորեն նախորդում է որոշյալին, ուստի մեր տեղանունների համար ընդունված են

հետևյալ բառակազմական տիպերը՝ *Հարթագյուղ, Մեծավան, Փոքրավան, Չորաքար, Կարմրաքար, Թեքասար, Մեծ աղբյուր, Մեծ Ագարակ, Վերին գյուղ, Վերին գավառ, Ներքին գյուղ* և այլն:

Անվանվող իրակությունների արտաքին կամ ներքին բնութագրիչ հատկանիշներն արտահայտող տեղանունները կարող են և բարդություններ լինել, և՛ բառակապակցություններ:

Հայերենում նկատելի է բառակապակցական տեղանունների վերածման միտումը հոդակապավոր կամ անհոդակապ բարդությունների, գործրինակ՝ *Մեծ ավան*→*Մեծավան, Կարմիր քար*→*Կարմրաքար, Թեք սար*→*Թեքասար* և այլն: Հաճախադեպ են նաև անվանակարգային բառերի սղմամբ պարզ տեղանունների առաջացման դեպքերը՝ *Քաղցր ջուր*→*Քաղցր, Սպիտակ քաղաք*→*Սպիտակ*:

Աշխարհագրական միավորների և բնակավայրերի արտաքին և ներքին հատկանիշների համար տեղանվանագիտության մեջ ընդունված է առանձնացնել հետևյալ 7 իմաստույթները¹. 1) «գծագրություն, օյեկտի ձև», այս իմաստույթն արտահայտված է բազմաթիվ ածականներով, որոնց սակավ մասը հայերենում տեղանուն դառնալու ներուժ ունի՝ *կլոր, ծուռ, թեք, հարթ, գառիվայր*, 2) «ջրի հոսքի յուրահատկությունները»՝ *արագ, վարար, խաղաղ*, 3) «ջերմային հատկանիշներ»՝ *սառն, ջերմ, թեժ, գոլ*, 4) «հողաշերտի յուրահատկությունները»՝ *հողե, կավային, տիղմային, ավազե, ճահճային, քարե*, 5) «հոտ, բույր»՝ *անուշ, գարշ*, 6) «համային զգացողություններ»՝ *քաղցր, թթու, դառն*, 7) «գույն, երանգ»՝ *սև, սպիտակ, կարմիր, ոսկի, կապույտ, կանաչ և այլն*: Այս իմաստույթներից յուրաքանչյուրն ընդգրկում է բազմաթիվ տարբեր ածականներ, որոնք տեղանուն դառնալու տարբեր ներուժ ունեն: Այժմ անդրադառնանք այս 7 իմաստույթներին

¹ Տե՛ս Н. К. Фролов, *Избранные труды по языкознанию, Топонимика и этнонимика*, том II, Тюмень, 2005, էջ 321-327:

պատկանող բառերից առաջացած տեղանվանահիմքերի հնարավոր բաշխմանը հայկական տեղանուններում, որպես աղբյուր ունենալով «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը» նյութը²:

1. Իմաստաբանական տիպը՝ «*օբյեկտի եզրապատկերը*», դրսևորվում է մի քանի իմաստոյթների համակցությամբ, որոնք նույնական չեն իրենց բովանդակությամբ, բայց պայմանականորեն միավորված են, որովհետև ունեն ընդհանուր իմաստային հատկանիշ՝ տարբեր աշխարհագրական միավորներ նշանակող:

ա) «*Օբյեկտի ձևը, գծագրությունը*» իմաստույթը միավորում է հիմնականում ածականներ և փոխաբերական իմաստի հետևյալ բառեր:

Թեք – «դեպի մի կողմ հակված, կախված, ծոված շեղ», այս ածականը հայկական տեղանուններում մեծ արտահայտություն չունի: Այն տեղանունն է դարձել բարդությունների մեջ՝ և՛ հոդակապով, և՛ առանց դրա: Ունենք՝ *Թեքասար>Թեքասար* (լեռնագագաթների անվանումներ են Վայոց ձորում և այնտեղ գտնվող հանքավայրերի անվանումներ):

Չառիթափ – «շեշտակիորեն իջնող թեքություն» այս հոմանիշ ածականից ունենք գետակի, գյուղի և սարավանդի անվանումներ դարձյալ Վայոց ձորում, ածականը տեղանվանացել է ուղիղ ձևով՝ *Չառիթափ*:

Ծուռ – «ոչ ուղղագիծ, բեկված»: Այս արմատը լեռնանուն և գյուղանուն է դարձել Կարինում և Տաուշում՝ *Ծուռք>Ծուռք, Ծուռ կամուրջ, Ծուռքար*:

Կլոր – «շրջանի՝ օղակի ձև ունեցող, բոլորակաձև»: Ունենք *Կլորիկ, Կլորսար, Կլոր դար, Կլոր եկեղեցի* լեռնանունները Գեղարքունիքում և Տաուշում:

² Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Թ. Խ. Հափթյան, Մտ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, 1-5 հատորներ, Ե., 1986, 1988, 1991, 1998, 2001:

Տափ – «տափարակ, հարթ տարածություն, հարթավայր, հարթություն, գետին»: Արմատը տեղանուն է դառնում թե՛ գրո ձևությամբ, թե՛ ածանցներով, թե՛ բարդության կազմում՝ որպես առաջին կամ վերջին բաղադրիչ՝ *Տափ, Տափեր, Տափերական, Տափավանք, Տափասար, Տափառու, Երնջատափ, Սարիտափ*: Սրանք բոլորը գյուղանուններ են:

Տափակ – «հարթ մակերևույթ ունեցող, առանց խորդուրորդությունների»: Ունենք հետևյալ տեղանունները՝ *Տափակ, Տափակ քար, Տափակ ձոր, Տափակ մայրի*: Սրանք ջրանուններ և լեռնանուններ են Խարբերդում, Կոտայքում և Տաուշում:

Հարթ – «հավասար մակերեսով, առանց խորդուրորդությունների, տափարակ»: Գործուն տեղանվանահիմք է՝ *Հարթ, Հարթք, Հարթենք, Հարթան, Հարթիկ, Հարթագոմեր, Հարթագյուղ, Հարթաշեն, Հարթապտուկ, Հարթավան* և այլն:

բ) «Մեծություն, ծավալ» իմաստությոն ունի մի յուրահատկություն, որի շնորհիվ կարող են ստեղծվել ոչ միայն առանձին տեղանուններ, այլև երկանդամ հակադրությունների վրա կառուցված տեղանվանական շարքեր: Օբյեկտի չափերի իմաստային հատկանիշը, որպես կանոն, որոշվում է հորիզոնական կամ ուղղահայաց հարթություններում նրա տարածությամբ: Տեղանվանացանկերում ունենք տարածականորեն հակադրվող հետևյալ անվանումները՝ *Մեծ Հայք - Բարձր Հայք - Խորագույն Հայք - Փոքր Հայք, Մեծ գյուղ - Փոքր գյուղ, Մեծ սար - Փոքր սար. Մեծ Ծովք - Փոքր Ծովք, Մեծ Կովկաս - Փոքր Կովկաս, Մեծ Մայմեխ - Փոքր Մայմեխ, Մեծ Առանք - Փոքր Առանք* և այլն: *Մեծ* արմատը նաև առանձին կարող է տեղանուններ կազմել, որովհետև անվանվող միավորի մեծ չափեր ունենալն արդեն տարածության մեջ նշանակալի դառնալու գրավական է՝ *Մեծանց, Մեծաձոր, Մեծայր, Մեծառու, Մեծամոր, Մեծ անապատ, Մեծ դաշտ, Մեծ ագարակ, Մեծ աղբյուր, Մեծ գետ, Մեծ բերդ, Մեծ գյուղ* և այլն:

Երկանդամ տարածված հակադրություն են ստեղծում նաև *ներքին-վերին* տեղանվանահիմքերը՝ *Խաղաղ Ներքին* – *Խաղաղ Վերին*, *Ներքին Քարզուխ* – *Վերին Քարզուխ*: Նման կադապար, որպես կանոն, ունեն բնականունները: Բնականունների կազմում հանդիպում են նաև *բարձր*, *խոր* և *նեղ* արմատները՝ *Բարձր լեռ*, *Բարձր քար*, *Բարձր շեն*, *Բարձր վանք*, *Խոր*, *Խորեան*, *Խոր գոմ*- *Խորագոմ*, *Խորագույն Հայք*, *Խորանիստ*, *Խորածոր(ք)*, *Խորակերտ*, *Խորանիստ*, *Խորաբագուկ*, *Նեղ Փողնի*, *Նեղբողագ*, *Նեղուտ*, *Նեղուց* և այլն:

2. «Ջրի հոսքի յուրահատկություններ». այս իմաստային դաշտին պատկանում են հետևյալ հասկացությունների անունները:

Վարար – «հորդ, հորդաջուր, հորդառատ». տեղանուն դառնում է հիմնականում ջրանունների և նրանց մերձակայքում գտնվող բնականունների կազմում: Ունենք՝ *Վարարակ*, *Վարարակն*, *Վարարկի ջուր*, *Վարարկի ջրանցք*, *Վարարակի առու*, *Վարար աղբյուր*: Նրա հականիշը *խաղաղ* է, որը լայն բովանդակության շնորհիվ կազմում է նաև լեռնանուններ՝ *Խաղաղ*, *Խաղաղ Ներքին*, *Խաղաղ Վերին*, *Խաղաղածոր*, *Խաղաղջուր*:

Հորդ – «առատաջուր, վարար». այս արմատով վկայված է մի գյուղանուն՝ *Հորդուն* Արարատում և համանուն լեռ Կիլիկիայում:

3. «Ջերմային հատկանիշներ». այս իմաստային դաշտի ածականները բավական գործունակ տեղանվանահիմքեր են՝ *սառն*, *ջերմ*, *թեժ*:

Սառն – «ցածր կամ հարաբերականորեն ցածր ջերմաստիճան ունեցող». այս ածականը, որը նաև գոյականական կիրառություն ունի, եզակի սեռականի կամ հոգնակի հայցականի գրաբարյան ձևայիններով փոքր բնականուններ է կազմում՝ *Սառնա*, *Սառնի*, *Սառնես/իս/ուս*, բայց ավելի հաճախ որոշիչ-որոշյալ հարաբերությունն արտահայտող բարդությունների կազմում լեռնանուններ, ջրանուններ և գյու-

դանուններ է կերտում՝ *Մառնադբյուր, Մառնակունք, Մառնաջուր, Մառնասար, Մառնաքար, Մառնաձակեր:*

Ջերմ, թեժ – «տաք, ջեռ, կեզ»։ այս ածականները կարող են տեղանուն դառնալ և մաքուր հիմքով, և՛ տարբեր ծագման ածանցներով, և՛ բարդությունների կազմում՝ արտահայտելով որոշչի իմաստ՝ *Ջերմ* (զետ, աղբյուր, գյուղ, ջրվեժ), նաև՝ *Ջերմա-Ջերման, Ջերմակ-Ջերմուկ-Ջերմիկ, Ջերմադբյուր, Ջերմաձոր, Ջերմուկի բերդ, Թեժ, Թեժառույք, Թեժսար, Թեժ լեռ* և այլն:

4) «Հողաշերտի, տեղանքի յուրահատկություններ» իմաստույթը տեղանվանակերտման մեջ մեծ դեր ունի, որովհետև անվանվող միավորի այս հատկանիշը տարածության մեջ նրան ճանաչելի է դարձնում և կարևոր է մարդկային կենսասագործունեության համար: Տվյալ իմաստային դաշտում ունենք տեղանուններում վկայված հետևյալ ածականները՝ *հողե, կավե, ավազե, քարե*: Մեր տեղանքն առավելապես քարոտ է, ուստի գործունք *քարե* որոշիչն է:

Հողե – *Հողե, Հողի, Հողիկ, Հողիս, Հողկերտ, Հողաբերդ-Հողեբերդ/իկ*, գրեթե բոլորը փոքր բնականուններ են:

Կավե – *Կավե, Կավիկ, Կավ, Կավե քաղաք, Կավատեղ, Կավդար*: Այս ածականով կազմվել են ոչ միայն բնականուններ, այլև լեռնանուններ:

Ավազե – *Ավազ, Ավազաբերդ, Ավազադբյուր, Ավազ գետիկ* (գյուղեր են Արևմտյան Հայաստանի տարածքում՝ Մուշ, Ջեթուն):

Քարե – *Քարեր, Քարինք, Քարրնկեց, Քարդուռ, Քարթաղ, Քարգահ, Քարբույս, Քարեպնակ, Քարեվան, Քարեկամուրջ Քարզուխ Ներքին, Քարզուխ Արտաքին*: Այս հիմքով կազմվել են ոչ միայն լեռնանուններ, այլև ջրանուններ և բնականուններ Պատմական և ներկայիս Հայաստանի ողջ տարածքում, ընդհանրական տեղանվանահիմք է:

5) «Հոտ, բույր» իմաստույթը հայկական տեղանուններում արտահայտվում է միայն *անուշ* ածականով, որը

կարող է գրո ձևությամբ տեղանուն դառնալ կամ *ավան(ք)* արմատի հետ բարդություն կազմել:

Անուշ «դուրեկան, ախորժեղի» – Անուշ, Անուշավան(ք)՝ գյուղեր և աղբյուրներ են Սյունիքում, Արագածոտնում:

6) «Համային զգացողություններ». այս իմաստային դաշտից հայկական տեղանուններում հանդիպում են 3 հիմնական ածականներ՝ *քաղցր, թթու, դառն*: Նման որոշիչներից կազմվում են հիմնականում ջրանուններ և բնականուններ, հազվադեպ՝ լեռնանուններ, ամենագործունը *քաղցրն* է, մյուս երկուսը հանդիպում են եզակի օրինակներով:

Քաղցր – «շաքարին, մեղրին հատուկ համ ունեցող» օրինակ՝ *Քաղցրահայաց, Քաղցրաշեն, Քաղցրաջրի լեռներ*:

Թթու – «քացախի, կիտրոնի նման համ ունեցող՝ Թթուջուր: Այս անվամբ ունենք լեռնանցք, գետ, գյուղեր, աղբյուրներ, Արագածոտնի մարզում և Արցախում:

Դառն – «յուրահատուկ անախորժ համ ունեցող». *Դառն, Դառին* (գետ Կիլիկիայում):

7) Վերջին իմաստնություն է «գույնը»՝ «առարկայից անդրադարձող լուսային ճառագայթներից այժբերի ստացած տպավորությունը»: Վերջինս հարուստ հասկացական բովանդակություն ունի: Լեզվաբանության մեջ տարածված է գունանունների ընդհանրականության գաղափարը, ըստ որի՝ հիմնային են համարվում հետևյալ 11 գունանունները՝ *սպիտակ, սև, կարմիր, կանաչ, դեղին, կապույտ, բոսորագույն, շագանակագույն, վարդագույն, նարնջագույն և գորշ*: Միաժամանակ նշվում է, որ այս 11 գունանունները տարբեր լեզուներում կարող են նվազել, այսինքն՝ առանձնացվում է առավելագույն գունաքանակը, որը, կախված լեզվակիր հանրության աշխարհընկալումից, քաղաքակրթական ուղղվածությունից և գուտ լեզվական-բառային հնարավորություններից, կարող է ինքնուրույն անվանում չստանալ և ածանցվել մյուսներից՝ իբրև երանգ: Հիմնային գունանունները բառապաշարում ուղիղ համեմատական կապի մեջ չեն լու-

սային սպեկտրի ավանդական յոթնյակի հետ՝ *կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն*: Գունանունների իմաստային համակարգում առանձնացվում են միջուկը և ծայրամասերը: Միջուկը կազմում են իմաստային տեսանկյունից անկախ, ինքնակա ածական գունանունները, իսկ ծայրամասում դրանց ստորադասվող, այսինքն՝ լրացնող գունանուններն են³: Միջուկը կազմող ածականների մեջ գույնի գաղափարն առաջնային է և չի արտահայտվում այլ գունային ածականների միջոցով, միջուկային գունանունները գործածության բարձր հաճախականություն ունեն, բառակազմական ճկունություն, օրինակ՝ *կարմիր-կարմրություն, կարմարավուն, կարմրավոր, կարմրել, կարմրիկ*, իսկ բառաբարդման հնարավորություններն ավելի մեծ են՝ *Կարմրաշեն, Կարմրաթառ, Կարմրագյուղ, Կարմրամորուս, Կարմրաջուր, Կարմրալանջ, Կարմրահող, Կարմրաթև, Կարմրադրյուր* և այլն:

Ծայրամասային գունանունների իմաստը բացատրվում է միջուկային անդամների միջոցով, այսպես՝ *կարմրադեղին, սևագորշ, կապտականաչ, գորշաճերմակ* և այլն: Ծայրամասային գունանունները, որպես կանոն, տեղանվան հիմնաբառ չեն դառնում, որովհետև որակյալ նշաններ չեն, նրանք հստակ չեն բնորոշում անվանվող օբյեկտը, բացի այդ՝ մարդկանց մեծամասնությունը լավ չի տարբերակում գունային նրբերանգները: Որոշ լեզվաբաններ տարբերակում են նաև միջանկյալ գունանուններ, որոնք ձգտում են դեպի միջուկը կամ, հակառակը: Հայերենի միջանկյալ գունանունների շարքին կարող են դասվել *ծիրանի-ն, գորշ-ը*: Հայերենի համար, որպես գունային հարաբերականորեն կայուն միջուկ, առանձնացվում են 6 գունանիշ ածականներ՝ *սև, սպի-*

³ См. у Фрумкина Р. М., *Цвет, смысл, сходство*, М. 1984, էջ 15-20:

*տակ, կարմիր, կանաչ, կապույտ, դեղին*⁴: Ստորև բերենք մեր քննած ՀՀ 8 մարզերում գունանունների տեղանվանակերտման արտադրողականությունն արտացոլող վիճակագրական հետևյալ աղյուսակը:

Գույներ	ՄԱՐԶԵՐ							
	Արարատ	Արագածոտն	Արմավիր	Գեղարքունիք	Կոտայք	Շիրակ	Վայոց ձոր	Տավուշ
Կարմիր	8	40	18	22	14	41	14	20
Ալ	-	1	-	-	-	1	2	-
Կապույտ	2	6	2	8	9	5	6	8
Լաջվարդ	-	-	1	-	-	-	-	-
Սև	5	25	8	20	22	15	13	21
Սպիտակ	6	14	2	6	2	2	7	8
Ճերմակ	-	3	-	6	3	2	3	1
Կանաչ	-	1	-	1	3	-	-	1
Դեղին	-	-	-	-	-	-	2	-
Գորշ	1	7	-	2	6	2	3	-
Ծիրանի	-	-	-	-	1	1	-	-
Ոսկի	1	2	2	-	3	2	-	1
Շեկ	-	3	-	5	2	3	2	9

Ինչպես երևում է աղյուսակից, բուն կամ մեր լեզվի համար հիմնային գունանուններից տեղանվանակերտ ամենամեծ ներուժն ունի *կարմիր* ածականն իր՝ հոմանիշ *ալ* ձևով՝ 177 կարմիր, 4 ալ: Այս գույնի գերակայությունը մեր տեղանուններում ունի ն՝ ուղղակի, ն՝ փոխաբերական իմաստային

⁴ Ս.Գրիգորյան, *Հայերենի գունանունները և նրանց լեզվատնական արժեքը*, Ե., 1998, էջ 66-70:

բեռնվածություն. ա) կարմիր գույնը բնորոշ է հայաստանյան բնությանը, արևից այրված հողին ու ժայռերին, ընդերքում առկա հրաբխային ապարներին, բ) մեր եղեռնաշունչ պատմությանը և գալիքի վառ սպասումներին:

Այսպիսով, տեղանուններ կազմելիս իրակությունների ներքին և արտաքին հատկանիշներից հայ անվանադիրներն առավելություն են տվել «մեծություն, ծավալ», «հողաշերտի յուրահատկություններ» և «գույն» իմաստոյթներին:

Дилбарян Нарине - Семантические типы топонимов с отличительным внешним или внутренним признаком реалий.- Топонимы часто имеют непосредственное отношение к естественно- природным видам реалий и тематически могут быть сгруппированы на основе общности определенных семантических признаков, которые указывают на взаимосвязь акта номинации и обозначаемых объектов. В топонимике принято разделять 7 семем, на основе которых образуются разные виды топонимов: 1) конфигурация объекта, 2) особенности водотока, 3) тепловой режим, 4) специфика грунта и почвы, 5) запах, 6) вкусовые ощущения и 7) цвет. В армянских топонимах преимущественно представлены 3 семемы – конфигурация объекта, специфика грунта и цвет.

Dilbaryan Narine – The Semantic Types of the Toponyms Expressing the Internal and External Characteristics of the Reality.- The proper names given to the geographical units are very often in a direct relation with the natural characteristics of the external world realities and form thematic groups on the basis of this or that overlap of the semantic characteristics, which directly expresses the interconnection between the process of naming of the given geographical unit. Based on internal and external characteristics of the geographical units and the residences in toponymy it is accepted to underline the following 7 sememes: 1) drawing, 2) the peculiarities of water flow, 3) temperature-related peculiarities, 4) peculiarities of soil layers, 5) smell, odour, 6) flavour sensation, 7) colour, tint. In the Armenian toponyms the majority form the ones with the sememes "drawing, the form of the object", "the peculiarities of the soil layer" and "colour, tint".

Դոկտյան Ռուզաննա
(Հայաստան, Վ. Բրյուսովի անվ. ԵՊԼՀ)

**ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՆԹԱԴԱՇՏԻ ԲԱՅԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉԱՅԻՆ,
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

Արդի հայերենի խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի (այսուհետ՝ ԽԳԻԵ) ասացական, մտածական, զգացական, վարքարտահայտման բայերը իրենց գործուն կիրառությունն ունեն մեր դարձվածապաշարում, որի քննությանն էլ միտված է սույն աշխատանքը: Հայերենում հստակ տարբերակում չկա դարձվածքների տեսակների և նրանց առնչվող այլ հարցերում: Դարձվածաբանությունը ավանդաբար բառագիտության ենթաբաժին (բառագիտական գիտաճյուղ) է համարվում, սակայն որոշ լեզվաբաններ այն դիտարկում են իբրև բառագիտությունից անկախ բնագավառ կամ իբրև ինքնուրույն լեզվաբանական ճյուղ (ոճաբանության և բառագիտության միջև ընկած միջգիտակարգ), որը որոշակի կապեր ունի ինչպես շարահյուսության (դարձվածքը հաճախ սերում է ազատ բառակապակցությունից՝ նրա ուրույն վերաիմաստավորմամբ), այնպես էլ ոճագիտության հետ (դարձվածքը արտահայտչական կարևորագույն միջոց է, լեզվի ոճավորման անհրաժեշտ տարր)⁵: Դարձվածքը ամբողջովին կամ մասամբ փոխաբերության վրա հիմնված, վերաիմաստավորված կայուն բառակապակցություն է, որը խոսքում գործածվում է իբրև պատրաստի միավոր⁶, և այդ ի-

⁵ Տե՛ս **Հ. Զ. Պետրոսյան**, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 174:

⁶ Տե՛ս **Ֆ. Հ. Խլդաթյան**, *Ճամանակակից հայոց լեզու*, Ա մաս, Ե., 2009, էջ 239, **Ա. Մ. Սուքիասյան**, *Ճամանակակից հայոց լեզու*, Ե.,

մաստով համարժեք է բառին (ընդգծումը և հավելումը մերն է՝ ՌԴ):

Նկատի ունենալով, որ վերոհիշյալ իմաստային ենթադաշտը քննվում է բայական բառապաշարի շրջանակում, դիտարկել ենք բոլոր այն դարձվածքները, որոնցում առկա են ասացական, մտածական, զգացական, վարքարտահայտման բառաիմաստային խմբերի (այսուհետ՝ ԲԻԽ) բայերը՝ իբրև դարձվածակազմիչ բաղադրիչներ, կամ էլ այլ ԲԻԽ-երի այն բայերը, որոնք, դարձվածքի կազմում որպես բայաբաղադրիչ գործառվելիս, իրենց դարձվածային իմաստներով համազոր են վերոնշյալ ԲԻԽ-երի բայերին: Դարձվածային արտահայտություններից (ասույթներ, առածներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր են)⁷ աշխատանքում ներառել ենք միայն նրանք, որոնց բայաբաղադրիչները կարող են արտահայտվել նաև անդեմ բայերով, օր.՝ *գայլի գլխին ավետարան կարդալ, ճտերն աշնանը հաշվել* են: Մեր կարծիքով ևս, դարձվածային արտահայտությունները իրենց պատկերավորությամբ, արտահայտչականությամբ, այլաբանությամբ, հուզազգացական երանգավորմամբ թեև հարում են դարձվածքներին, սակայն ստորոգման առկայությունը նրանց վերագրում է հաղորդակցական արժեք՝ դասելով շարահյուսական մակարդակին⁸: Աշխատանքում ներառել ենք միայն այն դարձվածք-

1999, էջ 296, Պ. Ս. Բեդիրյան, *Տամանակակից հայերենի դարձվածաբանություն*, Ե., 1973, էջ 5:

⁷ Ա.Սուքիասյանը դարձվածքները, ըստ նրա բաղադրիչների միաձուլության աստիճանի, բաժանում է չորս տեսակի՝ դարձվածքային սերտաճման (համաձույլ), միասնության, կապակցության, արտահայտության: Հարկ է նկատել, որ հստակ տարրոռոշում չկա վերոնշյալ տեսակների վերաբերյալ, եղած սահմանազատումներն էլ վիճահարույց են և մեր հետազոտության ծիրից դուրս: Տե՛ս Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., Ե., 1999, էջ 301-307:

⁸ Տե՛ս Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., Ե., 1999, էջ 304-307:

ները, որոնք անվանողական արժեք ունեն և գործում են բառագիտական մակարդակում⁹:

Ըստ Ա. Մարգարյանի՝ ձևախմաստային դրսևորումների տեսակետից դարձվածքները բարդ ու բազմաձուխ պատկեր են ներկայացնում: Արտահայտելով բազմատեսակ իմաստային կապեր ու հարաբերություններ՝ նրանք համալրում ու մեծապես հարստացնում են հայոց լեզվի իմաստաբանական կառուցվածքը, արտացոլում ու մարմնավորում ժողովրդի՝ արտաքին աշխարհի բազմազան իրողությունները, երևույթները բազմազան ձևերով արտահայտելու արտակարգ մեծ կարողությունները, պատկերավոր մտածողությունը և իմաստնությունը¹⁰:

Ընդհանրանալով մերձիմաստներով՝ դարձվածքները հոմանշային/հականշային շարքեր են կազմում ինչպես միմյանց, այնպես էլ հիշյալ ենթադաշտի բայերի հետ՝ ձևավորելով դարձվածային և բառադարձվածային հոմանիշ/հականիշներ, որն էլ վկայում է դարձվածքների պատկանելությունը այս կամ այն ԲԻԽ-ին, այսինքն՝ ԲԻԽ-երում բայերը խմբավորվում են ինչպես հոմանիշ/հականիշ բայերով, այնպես էլ նրանց համարժեք դարձվածքներով, օր.՝ *խնդրել ԱԲ-ի հոմանշային շարքը բաղկացած է ինչպես՝ հայցել, աղերսել, աղաչել, պաղատել, թախանձել, մուրալ ԱԲ-երից, այնպես էլ բերան ծռել, գոտկից կախ ընկնել, երեսը պնդել, ձեռք ու ոտք ընկնել, օձի լեզու թափել* ևն դարձվածքներից: Նույնը վերաբերում է նաև հականիշ դարձվածքներին, որոնք, հարաբերակցվելով հականիշ բայերին, հարստացնում են հակադրությունների իմաստային բազմազանությունը, օր.՝ *ձայնը*

⁹ Որպես բառագիտական միավոր՝ դարձվածքը օժտված է բառային հատկանիշներով՝ դարձվածային իմաստով, շեշտով, անկախ գործածությամբ՝ ՌԴ:

¹⁰ Տե՛ս Ա. Ս. Մարգարյան, *Շամանակակից հայոց լեզու*, Ե., 1990, էջ 343:

գլուխը գցել «գոռալ»-ձայնը փորը գցել «լռել», թև առնել «ոզևորվել» -թևաթափ լինել «հուսահատվել» են: Ներհականշային (նույն դարձվածքի բաղադրիչների հականշությամբ կազմված միավորներ) են, օր.՝ *ծուռ նստել, շիտակ խոսել, տակից-գլխից խոսել, կարմիրը դուրս անել, սևը՝ ներս*¹¹ են: Հակիմաստ (իմաստային կազմում հակառակ իմաստների գոյակցումով կազմված) են, օր.՝ *դաս/եր/տալ* - 1. սովորեցնել, կենսափորձը հաղորդել, 2. պատժել, ծեծել, *լեզվին գալ*-1. մտածածը միանգամից առանց կշռադատելու ասել, 2. արգելել, թույլ չտալ խոսքը լրիվ ավարտել են: Բայական և դարձվածային այս հարուստ բազմազանությունը գործաբանական առումով ԽԳԻԵ-ում համակողմանիորեն բացահայտում է մարդու հոգեկան աշխարհի ելևէջումները, հույզերն ու ապրումները, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ելքեր է առաջադրում, վարքականոններ ձևավորում:

Ըստ մեր՝ համատարած ընտրանքի եղանակով կազմած դարձվածացանկի¹²՝ ԽԳԻԵ-ի դարձվածապաշարում կա մոտ 2250 դարձվածային միավոր¹³՝ կազմված ինչպես ասացական, մտածական, զգացական, վարքարտահայտման միջուկային բայաբաղադրիչներ-

¹¹ Ընդգծված դարձվածքում կիրառվել են խոսքաշարային հականիշներ, որոնք ձևավորվել են ոչ թե ըստ բառարանային իմաստների, այլ խոսքաշարի պահանջով:

¹² Դարձվածացանկը կազմելիս օգտվել ենք հետևյալ բառարաններից՝ **Ա. Սուքիասյան, Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան**, Ե., 1975, **Պ. Բեդիրյան, հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան**, Ե., 2011, **Խ. Բաղիկյան, Ուսումնական դարձվածաբանական բառարան**, Ե., 2002, **Ա.Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան**, Ե., 2003:

¹³ Դարձվածացանկը չենք կցում՝ նկատի ունենալով աշխատանքի ծավալը՝ հրապարակումը թողնելով հետագային՝ ՈՐ:

րից, այնպես էլ այլ ԲԻՄ-երի բայերից, որոնք իմաստաբանորեն հարում են այդ ենթադաշտի եզրային հատվածին:

Դարձվածքներում առկա է խոսողի հուզագգացական, կամային վերաբերմունքը, դարերի կենսափորձի խտացումը, որով և պայմանավորվում է ԽԳԻԵ-ի բայերի գործածությունը: Այսպիսով, ասացական բայերով (այսուհետ՝ ԱԲ) բաղադրված դարձվածքները մըտնում են ԱԲ-երի ԲԻՄ, օր.՝ *սեհին սպիտակ ասել* «որևէ բան հակառակ *ներկայացնել*», *զլխին հեքիաթ կարդալ* «անմիտ բաներ *ասել*», *իրերն իրենց անուններով կոչել* «ճշմարտությունն առանց քողարկելու *ասել*» են: Մտածական բայերով (այսուհետ՝ ՄԲ) բաղադրվածները՝ ՄԲ-երի ԲԻՄ, օր.՝ *միտք հղանալ* «զլխում նոր միտք ծագել», *հալած յուղի տեղ ընդունել* «առանց երկմտելու՝ անառարկելի ճշմարտություն համարել», *տասը չափել՝ մեկ կտրել* «լուրջ *մտածել*, *կշռադատել*» են: Զգացական բայերով (այսուհետ՝ ԶԲ) բաղադրվածները՝ ԶԲ-երի ԲԻՄ, օր.՝ *վրան դողալ* «*ափսոսալ*, *ցավել*», սրտին մոտ *ընդունել* «*ազդվել*, *զգացվել*», մաշկի վրա *զգալ* «ինչ-որ բան անձամբ *զգալ*»: Վարքարտահայտման բայերով (այսուհետ՝ ՎԲ) բաղադրվածները՝ ՎԲ-երի ԲԻՄ, օր.՝ *աթոռ գրավել* «պաշտոնի *տիրանալ*», դառը *դատել* «տաժանակիր աշխատանքով մի բան *վաստակել*», անդանակ *մորթել* «սաստիկ *տանջել*» են: Հենց այս բայաբաղադրիչների փոխաբերացմամբ էլ պայմանավորվում և պատճառաբանվում է դարձվածքի ողջ իմաստը:

Իմաստային դրսևորումը արտահայտվում է նրանով, որ ԽԳԻԵ են ներառվում նաև այլ ԲԻՄ-երի բայերով բաղադրված դարձվածքներ, որոնք իրենց իմաստներով հարում են

ենթադաշտի վերոհիշյալ ԲԻՄ-երի բայերին՝ առաջացնելով իմաստային համարժեքներ և համալրելով նրանց եզրային հատվածները, օր.՝ սրտի վարագույրը բանալ «գաղտնիքը մեկին *հաղորդել*», իզուր տեղը ջուր *ծեծել* «դատարկ բաների մասին *վիճել*», սիրտը *խոցել* «ծանր *վիրավորանք հասցնել*» (*ասացական*), *առաջը գալ* «պատկերանալ, *մտքում ծագել*», *գլուխ կոտրել* «ճիգ ու ջանք թափել մի բան *հասկանալու* համար», *քամին գլխից հանել* «լրջանալ, ցնորական մտքերից հետ կանգնել» (*մտածական*), *ականջները կախել* «արածի համար խիստ *զոջալ*», *աչքը ճամփին մնալ* «անհամբեր *սպասել*», *սիրտը գրավել* «մեկին իրեն սիրահարեցնել» (*զգացական*), *ատամի տակ մի բան գցել* «կաշառել», *այծերը գնալ* «խելոքանալ, հանդարտվել», *թները փռել* «հովանավորել» (վարքարտահայտման) ևն:

ԽԳԻԵ-ի բայերի իմաստային գործառույթը դրսևորվում է նաև նրանով, որ վերոնշյալ ենթադաշտի մի տեսակի ԲԻՄ-ի բայաբաղադրիչով դարձվածքները գործածվում են մի այլ տեսակ արտահայտելու համար՝ իբրև իմաստային հատումների հետևանք. այսպես՝ ԱԲ-երով ձևավորված դարձվածքներով կարելի է արտահայտել *մտածական* (գրքի մի երեսը *կարդալ* «հարցի մեջ խորամուխ չլինել» ևն), *զգացական* (ամեն *ասել* «հավանել» ևն), *վարքարտահայտման* գործողություններ (եշին քեռի *ասել* «որևէ մեկին չճանաչելու աստիճան հարբել» ևն): ՄԲ-երով՝ *ասացական* (Ամերիկա *հայտնաբերել* «վաղուց հայտնի բանը որպես նորություն ներկայացնել» ևն), *զգացական* (սիրտը *վկայել* «նախազգալ, կանխագուշակել վերահաս ինչ-որ վտանգ» ևն), *վարքարտահայտման* (մեկի հարցերը *լուծել* «հաշվեհարդար տեսնել» ևն), ԶԲ-երով ձևավորված դարձվածքներով՝ *ասացական* (աղի *արտասուք թափել* «աղիողորմ լաց լինելով խնդրել» ևն), *մտածական* (երկու *աչքով նայել* «շատ ուշադիր լինել» ևն), *վարքարտահայտման* (վերևից *նայել* «արհամարհել, մեծամտանալ» ևն), *վարքարտահայտման* բայերով՝ *ասացական*

(անունը *մաստակ դարձնել* «մեկին շատ բամբասել» են), *մտածական* (ականջները *վարձու տալ* «չլսել, ցրված, անուշադիր լինել» են), *զգացական* (հայացքը *որսալ* «ուշադրությամբ մեկի աչքերին նայել» են) իմաստներ:

ԽԳԻԵ-ի դարձվածապաշարում բազմաթիվ են *մարմնի մասերի, բնության երևույթների* անվանումներից, *կենդանանուններից, բուսանուններից, գունանուններից* են կազմված դարձվածքները, որոնց հիմքում ընկած են վերոնշյալ տեսակների ամենաբնորոշ հատկանիշները, որոնք, փոխաբերաբար գործածվելով, վերագրվել են մարդկանց՝ առավել պատկերավոր ձևով արտացոլելով նրանց բնավորության և վարքի այն հատկանիշները, որոնք խրախուսման կամ հանդիմանության առիթ կարող են դառնալ, օր.՝ *զիշերը ցերեկ* անել «զիշերն էլ աշխատել», թրջված *կատու* դառնալ «խեղձանալ», *կանաչ* մնալ «մշտապես գործուն, երիտասարդ մնալ» են: Ինչ վերաբերում է *մարմնամասերի անվանումներով դարձվածքներին*, ապա դրանք արտահայտում են որոշակի ԲԻԽ-երի հասկացություններ, օր.՝ բերան, լեզու, ճակատ, մատ են կազմիչներով դարձվածքները կարող են արտահայտել *սասցական* (*բերան ծռել-խնդրել, լեզու* թրջել-մեկի հետ դժկամությամբ *խոսել* են), *ականջ, աչք, գլուխ, լեզու* են կազմիչներով՝ *մտածական* (*ականջը* մտնել-ասածը *հասկանալ, գլուխ* կոտրել-ճիգ ու ջանք թափել մի բան *հասկանալու* համար են), *աչք, ականջ, ծունկ, մազ, քիթ* են կազմիչներով՝ *զգացական* (*ծնկները* ծալվել-ընկճվել, *հուսահատվել, մազերը* բիզ-բիզ կանգնել-սաստիկ *վախենալ, փշաքաղվել* են), *թև, թիկունք, ոտք, փոր* են կազմիչներով՝ վարքարտահայտման (երկու *ոտքով* թակարդն ընկնել-հանկարծակի *հանցանքի մեջ բռնվել, թիկունք* կանգնել-պաշտպանել են) հասկացություններ են: Հատկանշական է, որ *միևնույն կազմիչով* կարող են ձևավորվել չորս ենթախմբերի պատկանող դարձվածքներ, օր.՝ *բերան* բանալ (*խոսել/սասցական/*), *բերանից* դուրս չգալ (*չսավել/մտածական/*), *բերանը* բաց մնալ

(հիանալ, զարմանալ/զգացական/), (*բերանի* գոլն իմանալ-մեկի մտադրությունը կորզել/*վարքարտահայտման*) նն:

Ենթադաշտի դարձվածքների գործաբանական առանձնահատկությունները ի հայտ են գալիս խոսքաշարում՝ որոշակի ազդեցություն թողնելով խոսակցի և խոսքի նյութի վրա, գուգորդման ընկալումներ, ինչպես նաև գնահատողական գործառույթ առաջացնելով խոսողի, խոսակցի, հաղորդման նյութի, խոսքային իրադրության վերաբերյալ, օր.՝ *լաչակ կապել /իլիկ պտտել-*տղամարդուն ուղղված նախատինք է *ոչ տղամարդավարի պահելու, կնաբարո վարվելու համար, մատ թափ տալ-սպառնալ, վախեցնել* նշանակում է ներգործել ունկնդիրների զգացումներին վրա, *ձեռքը վրան դնել-տիրապետել, դաստիարակել՝ դրդել* որևէ գործողություն կատարելու, *թույնը թափել-* 1. ներքին գայրույթը, կատաղությունը, նենգությունն արտահայտել, 2. մեկին խիստ վիրավորել, անպատվել՝ անուղղակի կերպով ազդել վարքի վրա՝ պատկերավոր ձևով ընդգծելով նաև արարքի որակը նն: Այսինքն՝ դարձվածքի կիրառումը պայմանավորված է հաղորդակցման իրավիճակով, խոսքաշարով ու խոսքային միջավայրով¹⁴, հետևաբար նրա գործաբանական ներուժը կախված է հիշյալ հանգամանքներից և դրանցից բխող բազմապիսի հետևանքներից:

Դարձվածքների գործաբանական դրսևորումները ի հայտ բերելու համար դրանք պետք է դիտարկել լեզվամշակութաբանության¹⁵ տեսանկյունից, որովհետև դարձվածքի իմաստաբանության մեջ ներհյուսված են լեզվական, հանրային, ազգամշակութային, էթնոհոգեբանական, մարդաբանական, փիլիսոփայական բազում տարրեր, որոնք իրենց ամբողջությամբ արտահայտում են մարդու աշխարհընկալման պատկերը:

¹⁴ Տե՛ս **Խ. Բաղիկյան**, նշվ. բառ., Ե., 2002, էջ 3:

¹⁵ Տե՛ս **[http: TSPUT. RU](http://TSPUT.RU)**:

Դարձվածքներն արտացոլում են մարդու մտավոր, զգացական ընկալումները՝ արտահայտելով նրա վերաբերմունքը աշխարհում կատարվող իրադարձություններին, գնահատելու այս կամ այն երևույթը, արարքը, ներկայացնելու դիրքորոշումը հասարակության կողմից ամրագրված սովորույթների, բարքերի նկատմամբ: Ըստ այդմ՝ դարձվածքների գործաբանական ներուժը պայմանավորված է *հուզարտահայտչական* (երգիծական, ծաղրական, հեզնական, մտերմական-փառաբանական են, օր.՝ *խելք ծախել / հեզն /* «աննպատակ թափառել», *մաղով ջուր կրել / երգիծ /* «ինչ-որ բանի ակտիվ մասնակցություն ունենալ» են), *գնահատողական* (*դրական*՝ խրախուսելի, օր.՝ *հաշվի նստել* «խորհրդակցել, ուրիշների կարծիքն էլ հաշվի առնել», *ձեռքը խղճին / սրտին դնել* «արդարամիտ, բարեխիղճ լինել», բացասական՝ անխրախուսելի, օր.՝ *ականջը լցնել* «մեկին գաղտնի չարախուսել՝ գրգռելով մյուսի դեմ», *բերանը շաղ տալ* «հայհոյել, զրպարտել» են), *ոճական* (բարձր, գրքային, ժողովրդախոսակցական, բարբառային, ժարգոնային, ցածր, գոեհիկ են, օր.՝ *մուսան գալ / բարձր /* «ներշնչվել», կոնակի գալ/*չգալ / բրբ /* «սխալն ընդունել, պարտությունը խոստովանել» են), դոշ տալ /*ծրգ /* «մեկին պաշտպանել», *փոխանը կատու ընկնել / գոհկ /* «սաստիկ վախենալ» են) և այլ *նշույթավորումներով*:

Դարձվածքների գործաբանական առանձնահատկությունները բացահայտվում են նրանց կատարողական¹⁶ գործառույթում, այսինքն՝ արտաբերվելիս դրանք վերածվում են խոսքային ակտերի, օրինանքների, անեծքների, օր.՝ «*զլխով երդվել*»-ը օգտագործվում է որպես *երդման արտահայտություն*՝ ի հաստատումն իր ասածի, «*բարով վայելել*»-ը՝ *բարեմաղթանքի*, «*անունը սև քարին գրել*»-ը՝ *անեծքի* արտա-

¹⁶ Տե՛ս **Ռ. Դոխոյան**, *Արդի հայերենի ասացական բայերի կատարողական(պերֆորմատիվ) գործածությունը*, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2011:

հայտություն՝ «մեկի մահը ցանկանալ» իմաստով են: Այս ենթադաշտի դարձվածքներով են արտահայտվում *բարեկիրթ խոսքի որոշ կառույցներ*, օր.՝ *մատաղ լինել / փոքշ./ ղիմումի* (նաև՝ *խնդրանքի / աղաչանքի*), բարևն առնել՝ *ողջունի, բարև, Աստծու բարին ունենալ՝ ծանոթության, Աստված կանչել խնդրանքի, սրտին մոտ ընդունել* (ազդվել, զգացվել) ժխտական ձևով՝ *ցավակցության* են արտահայտություններ:

ԽԳԻԵ-ի դարձվածապաշարում կան ինչպես մենիմաստ, այնպես էլ բազմիմաստ դարձվածքներ: Գործաբանական հետաքրքրություն են ներկայացնում առանձնապես վերջինները, որովհետև բազմիմաստության դեպքում ի հայտ են գալիս հիշյալ ենթադաշտի ներքին՝ արտաքուստ թաքնված՝ ներակա իմաստային հարուստ կապերը: Նկատելի է բազմիմաստության մի յուրօրինակ դրսևորում, երբ մի իմաստով դարձվածքը վերաբերում է մի ԲԻԽ-ի, մյուսով՝ մեկ այլ ապահովելով նույն ենթադաշտի մեջ մտնող բոլոր ԲԻԽ-երի իմաստային փոխհարաբերությունների ամբողջականությունն ու առնչակցությունը, օր.՝ *մեկի միսն ուտել*-1. մեկի մասին *չարախոսել*, 2. *մեկին չարչարել, տանջել* (1-ին իմաստով՝ *ասացական*, 2-րդով՝ *վարքարտահայտման*) կամ՝ *մատը մեկի / մի բանի վրա դնել*- 1. մեկին *հավանել*, իր *համակրանքը արտահայտել*, 2. *ընտրություն կատարել* (1-ին իմաստով՝ *զգացական*, 2-րդով՝ *վարքարտահայտման*): Այստեղից հետևում է, որ բազմիմաստ դարձվածքները, իրենց տարբեր իմաստներով վերագրվելով տվյալ ենթադաշտի տարբեր ԲԻԽ -երի, միաժամանակ մնում են նույն ենթադաշտի սահմաններում: Իսկ ինչ վերաբերում է նույն դարձվածքի իմաստների հակադրմանը, ապա դրանք համանունության իմաստների տրոհման նախադրյալներ են ստեղծում, օր.՝ *մեկին քաշել / խսկ./*- 1. ինչ-որ մեկին *խաբել*, 2. *քրեական գործ հարուցել*, 3. *որևէ մեկի պատճառով քննությունից, ստուգարքից կտրվել*, 4. *մեկին նմանվել* դարձվածքի առաջին երեք

իմաստները հոմանիշ են միմյանց, մինչդեռ չորրորդը հակադրվում է նրանց:

Դարձվածքները իմաստային բարդ համակարգ են, որտեղ շղթայակցվում են բառային, ձևաբանական, շարահյուսական, ոճական հատկանիշները. դրանց տարատեսակ առնչություններից էլ ձևավորվում է նրանց գործաբանական արժեքը:

Բառային մակարդակում, բացի հոմանիշ և հականիշ դարձվածքներից, առկա են նաև *հարանուն* (կառուցվածքով և ձևով հարաբերվող, բայց չնույնացող)¹⁷, օր.՝ *աչքի ընկնել/աչքին ընկնել*, *խոսք տալ/խոսքը տալ*, *տեղի տալ /տեղիք տալ*) և *համանուն* (բաղադրիչային կազմով նույնը, բայց իմաստով տարբեր) դարձվածքներ, օր.՝ 1. *գլխով անցնել*-մտածել, ծրագրել, 2. *գլխով անցնել*-պատահել, հանդիպել, 1. *աչքերը փակել*-մեռնել, 2. *աչքերը փակել*- խաբել, 3. *աչքերը փակել*-չնկատելու տալ են: Այս մակարդակում գործառվում են նաև դարձվածքների բառապաշարային տարբերակներ՝ այս կամ այն շերտին պատկանող բաղադրիչներով՝ ի հայտ բերելով ոճական որոշակի երանգավորում, օր.՝ նույն բաղադրիչի գրական արևելահայերեն և արևմտահայերեն (ատամները/*ակոսները հաշվել/համրել*), գրական և խոսակցական (սևը սպիտակից *ջոկել/տարբերել*), գրական և բարբառային (գլխին սառը ջուր լցնել/*ածել*) ևն համանշանակներով:

Ձևաբանական մակարդակում գործառվում են դարձվածային ձևաբանական տարբերակները¹⁸, որոնք կազմող բաղադրիչները, հանդես գալով մեկից ավելի քերականական տարատեսակներով, ոճականորեն ընդգծում, սաստկացնում,

¹⁷ Եթե հողառու ձևը չի փոխում դարձվածքի իմաստը, համարվում է տարբերակ, եթե փոխում է՝ հարանուն դարձվածք՝ տե՛ս **Ա. Մարգարյան**, նշվ. աշխ., Ե., 1990, էջ 342:

¹⁸ Տե՛ս **Ա. Մ. Մուրիապյան**, նշվ. աշխ., Ե., 1999, էջ 308-310:

շեշտում են երևույթը. դրանց բաղադրիչները տարբերվում են հետևյալ տարատեսակներով՝ *հնչյունափոխված / անհնչյունափոխ* (աչքի մեջ մազ բսնել/*բուսնել*), *եզակի / հոգնակի* (աչքին/աչքերին չհավատալ), *հոդառու / անհոդ* (վիզ/վիզը ծռել), *հոլովական / կապային* (*հողին / հողի հետ* հավասարեցնել), *տարբեր հոլովածներով* (արյունը *զլուխը / զլխին* զարկել), բայաբաղադրիչի *համադրական / վերլուծական* (զլուխը յուղել / *յուղ քսել*), ինչպես նաև դարձվածքի ամբողջական և կրճատ ձևերով, օր.՝ ամուսնական առագաստը պղծել / *առագաստը պղծել* ևն:

Ենթադաշտում կան միևնույն դարձվածքի *դրական* և *ժխտական* ձևեր, օր.՝ *աղբը տնից հանել / չհանել* «մտերիմների միջև եղած տարաձայնությունները տարածել», *լեզու թաթախել / չ* «*ցանկանալ / չ*¹⁹ մեկի հետ հաղորդակցվել» ևն:

Բացառություն են *մեկը երկու անել* «ունեցվածքն ավելացնել» / *մեկը երկու չանել* «չառարկել, չհակաճառել», *իր տեղը գտնել* «իրեն համապատասխան դիրք գրավել» / *իր տեղը չգտնել* «հուզվել, անհանգստանալ» ևն դարձվածքները, որտեղ ժխտումը ոչ թե հակադրում, այլ փոխում է իմաստը:

Դարձվածքներ կան, որոնք միայն դրական ձևով են գործածվում, օր.՝ *ոսկի ձեռքեր ունենալ* «շնորհալի, հմուտ լինել», *չորս աչքով նայել* «ակնդետ հետևել» ևն, դարձվածքներ էլ միայն ժխտական, օր.՝ *աչքով աչք չունենալ* «չսիրել», մատը մատին չխփել «չաշխատել» ևն: Կան նաև դարձվածքներ, որոնք *և՛ դրական, և՛ ժխտական ձևով* նույն իմաստն են արտահայտում, օր.՝ գրոշ արժենալ / չ ≈ «անարժեք լինել», մի թիզ լինել / չ ≈ «հասակով փոքր լինել, բայց մեծ գործեր բռնել»²⁰:

Շարահյուսական մակարդակում, գործառվելով դիմավոր ձևով և իրացվելով խոսքաշարում, դրանք ստանում

¹⁹ Բայի փոխարեն դնում ենք երկու ալիքագիծ:

²⁰ Տե՛ս Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., Ե., 1973, էջ 145:

են հաղորդակցական արժեք՝ լեզվական մակարդակից անցնելով խոսքայինի, օր.՝ ճակատը համբուրել - 1. մեկի արածին հավանություն տալ, գովաբանել, 2. հեզնական իմաստով՝ *լավ չանել /չվարվել*, օր.՝ Իբր թե լավ բան ես արել, հիմա էլ գլուխ ես գովում, բեր ճակատդ պաշտեմ (ՊՂ)²¹ նն:

Դարձվածքների ոճական առանձնահատկությունները ի հայտ են գալիս ի հաշիվ դրանց պատկերային հիմքում ընկած փոխաբերությունների, համեմատությունների, շրջասույթների, չափազանցությունների, նվազաբերությունների, նրբաբանությունների (օքսիմորոն), ծածկախոսությունների, պարադոքսների նն, մի խոսքով, ոճական բոլոր այն հնարքների, որոնք ապահովում են իմաստի հուզարտահայտչական լիցքավորումը, օր.՝ *թիթեռի պես ծաղկից ծաղիկ թռչել* «կանանց ետևից ընկնել (հմմտ.)», *աչքի թարթիչներով հավաքել /խսկց./* «ինչ-որ բան խնայողությամբ, զրկանքներով ձեռք բերել (չփզ.)», *մի բուռ դառնալ* «ընկճվել, կուչ գալ (նվզ.)», *քաղցր աչքով նայել* «բարեհաճ լինել (նրբ.)», *ձեռքը խնդրել* «ամուսնանալու առաջարկ անել (շրջ.)», *լեզվով ճնճողուկ բրունել* «ամեն ինչ խոստանալ՝ առանց ի կատար ածելու (պրդ.)», *մայրը տղա բերել* «առաջխաղացում ունենալ (ծծկխ.)» նն:

Դարձվածքները գործածվում են բոլոր ոճերում՝ համապատասխանաբար լուծելով դրանց պատկերավորման և հուզարտահայտչական համակարգի հագեցվածության խնդիրը:

Այսպիսով, ԽԳԻԵ-ի ԲԻԽ-երի կամ այլ ԲԻԽ-երի բայերով բաղադրված դարձվածքները, որոնք իմաստաբանորեն առնչվում են ասացական, մտածական, զգացական, վարքարտահայտման բայերին, հարստացնում են տվյալ ենթադաշտի բառամթերքը, ինչպես նաև գործաբանորեն ներգործում մարդու մտքի, զգացմունքների, խոսքի և վարքի վրա՝ նպաստ

²¹ Տե՛ս Խ. Բաղիկյան, նշվ. բառարանը, Ե., 2002, էջ 429:

տելով խոսքային գործունեության առավել հարուստ և պատկերավոր արտահայտմանը:

Dokhoyan Ruzanna-The component, semantic and pragmatic displays of the verbs of the semantic subfield of the verbs of speech activity in modern Armenian phrases.- The verbs of saying, thinking, feeling and behaving of the semantic subfield of speech activity of modern Armenian have their active usage in phraseology. Meaning that the above-mentioned semantic subfield is studied in the circle of verbal lexicon we have examined all the phrases which include the verbs of saying, thinking, feeling, behaving. These verbs are used in phrases as phrase-forming components. Besides we have also studied verbs of other lexical-semantic groups which being used as verb-components are equivalent to above-mentioned verbs with their phrasiological meanings. Then we have discussed the pragmatic peculiarities of phrases of that subfield, namely their influence on speaker and on speech substance and also their estimating function and stylistic peculiarities.

Дохоян Рузанна-Компонентные, семантические и прагматические проявления глаголов семантического субполя речевой деятельности современного армянского языка в фразеологизмах.- Глаголы говорения, мышления, чувства, поведения подполя речевой деятельности современного армянского языка активно применяются в фразеологии. Имея ввиду, что вышеупомянутое подполе исследуется в рамках глагольной лексики, мы рассматривали все те фразеологизмы, в которых функционируют глаголы говорения, мышления, чувства, поведения, как компоненты, формирующие эти фразеологизмы. Нами также исследовались глаголы других ЛСГ, которые, функционируя во фразеологизмах как глагольные компоненты, в своем значении равнозначны вышеупомянутым глаголам. Далее были рассмотрены прагматические особенности фразеологизмов, то есть их воздействие на говорящего и на предмет речи, а также оценивающая функция и стилистические особенности.

**ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ ՀԱՅԵՐԵՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՏԱՌԱԴԱՐՁՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ**

Տառադարձությունը (փոխագրությունը) որևէ լեզվով գրվածքի կամ հնչող խոսքի արտահայտումն է հատուկ պայմանական նշանների համակարգով կամ մեկ այլ լեզվի այբուբենով²²:

Տառադարձության գրահնչական տեսակները

Տառադարձվող միավորի արտասանության, թե գրության նկատմամբ կողմնորոշման հատկանիշի համաձայն՝ տառադարձությունը կարող է լինել երկու տեսակ՝ հնչադարձություն և գրադարձություն (այսինքն՝ տառադարձություն ըստ հնչման կամ ըստ գրության):

Հնչադարձությունը որևէ լեզվով խոսքի (արտասանության) արտահայտումն է որևէ այբուբենի վրա հիմնված հատուկ պայմանական նշանների համակարգով, որում օգտագործված են նաև լրացուցիչ (տարրորոշիչ) գրանշաններ: Հնչադարձական համակարգերում (հնչագրական այբուբեններում), որպես կանոն, կիրառվում է «մեկ հնչյունին՝ մեկ տառ» սկզբունքը, ընդ որում՝ տառը կարող է լինել լրացուցիչ գրանշան(ներ)ով կամ առանց դրա(նց): Կարևոր պայման է այն, որ ամեն մի (հնչյունա)տարբերիչ նշան միշտ պետք է արտահայտի միևնույն հնչյունական տարբերակիչ հատկանիշը:

²² Տառադարձման մասին տե՛ս նաև **Հ. Պետրոսյան**, *Հայերենագիտական րիտիրան*, Ե., 1987, էջ 571-575; **Н. А. Вардапетян**, *Справочник по русской транскрипции армянских имен, фамилий и географических названий*, Е., 1961; **А. В. Суперанская**, *Займствование слов и практическая транскрипция*, М., Наука, 1962; **А. В. Суперанская**, *Теоретические основы практической транскрипции*, М., 1978; **С. Н. Аминева и др.**, *Практическая транскрипция личных имен в языках народов мира*, М., Наука, 2010:

Հնչադարձությունը լինում է **հնչյունային** և **հնչույթային**: Վերջինիս դեպքում նշվում են ոչ միայն հնչույթները, այլև դրանց դիրքային տարբերակները, բառային շեշտ(եր)ը, երբեմն էլ խոսքի ելևէջները, դադարները և այլն:

Հնչադարձական բանաձևը առնվում է ուղիղ (միջակ) [], փակագծերի մեջ, եթե հնչյունային է, և շեղ //, կամ անկյունավոր <>, փակագծերի մեջ, եթե հնչույթային է:

Հնչույթադարձության օրինակ է անգլերեն բառերի արտասանության արտահայտումը լատինական այբուբենի վրա հիմնված հատուկ պայմանական նշանների համակարգով, որոնցով (կամ դրանց համակցություններով) $\text{tj} = \text{z}$, $\text{dʒ} = \text{ջ}$) արտահայտվում են անգլերենի հնչույթները:

Հնչյունադարձության օրինակ է հայերենի բարբառների հայատառ հնչադարձական այբուբենը, որ մշակվել է ՀԳԱԱ լեզվի ինստիտուտում²³:

Հայերենի (հատկապես գրաբարի) գիտական հնչադարձության համար մեծ մասամբ գործածվում է Հ. Հյուբշմանի կազմած և Ա. Մեյեի ու Է. Բենվենիստի մշակած լատինագիր տառադարձական այբուբենը (ՀՄԲ)²⁴:

Տառադարձությունը միայն հնչադարձական սկզբունքով է կատարվում ոչ հնչյունական գրով լեզուների դեպքում (չինարեն, ճապոներեն և այլն)²⁵:

Գրադարձությունը²⁶ մի լեզվի գրային համակարգով նշանակված բառի կամ շարադրանքի փոխարկումն է մեկ այլ

²³ Տե՛ս **Մ. Ադաբեկյան, Ա. Հանեյան, Ռ. Ուռուտյան**, *Հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը*, «Հայերենի բարբառագիտական ատլաս», պրակ 3, Ե., 2010, էջ 5-22:

²⁴ Տե՛ս **Է. Ադայան**, *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1987, էջ 302-303:

²⁵ Հնչյունաբանական միջազգային ընկերության կողմից մշակված է նաև միջազգային հնչույթադարձական այբուբեն՝ ՄՀԱ (կիրառվում է՝ սկսած 1886-ից, և պարբերաբար լրամշակվում է)՝ աշխարհի տարբեր լեզուների և բարբառների արտասանության արտահայտման համար (տե՛ս https://en.wikipedia.org/wiki/International_Phonetic_Alphabet):

լեզվի գրային համակարգի: Այսինքն՝ ոչ թե հնչյունն է արտահայտվում գրանշանով, այլ տառն է փոխարինվում մեկ այլ այբուբենի տառով: Այդ նպատակով մշակվում են երկու գրային համակարգերի համապատասխանության կանոններ (օրինակ՝ հայերենից անգլերեն) և հակառակ ուղղությամբ (անգլերենից հայերեն)՝ նշելով, թե որ լեզվի որ տառը կամ տառակապակցությունը որ դիրքում մյուս լեզվի ինչ տառով կամ տառակապակցությամբ պետք է արտահայտել²⁷:

Տառադարձության կիրառական տեսակները

Ըստ կիրառման՝ տարբերվում է տառադարձության երկու տեսակ՝ մասնագիտական և գործնական:

Մասնագիտական տառադարձությունը կիրառվում է լեզվաբանական, նաև մանկավարժական, աշխարհագրական, վարչական, ռազմական և այլ նպատակներով: Լեզվաբանության մեջ առավելապես հարկ է լինում որևէ գրային համակարգով (հատկապես հնչյունադարձական այբուբենով) հնարավորինս ճշգրտորեն արտահայտելու այս կամ այն լեզվով (բարբառով) բանավոր խոսքի արտասանությունը: Պատմահամեմատական լեզվաբանության մեջ կիրառելի է հնչույթադարձությունը:

Գործնական տառադարձությունը առօրյայում կիրառվում է լեզուների շփման և հատկապես թարգմանության ընթացքում օտար հատուկ անունները, տարաշխարհիկ (այլ-մշակութային) երևույթների չթարգմանվող անվանումները և

²⁶ *Գրադարձություն* և *տառադարձություն* եզրույթները թեև հոմանիշներ են, սակայն ավանդույթը չհախտելու համար գործածում ենք առաջինն՝ իբրև երկրորդի տեսակ:

²⁷ Գրադարձման վերաբերյալ հանձնարարականներ է մշակում Համօրինակման միջազգային կազմակերպությունը (ISO՝ International Organization for Standardization): ՀՄԿ-ի սկզբունքներն են՝ գրադարձական այբուբեններում չունենալ տառակապակցություններ, դրանց փոխարեն գործածել տարրոշիչ նշաններ, հաշվի չառնել տառերի հնչյունավորման դիրքային տարբերակները: (տե՛ս <https://www.iso.org/committee/297592/x/catalogue/>):

ընթացիկ փոխառությունները տվյալ լեզվի գրային համակարգով արտահայտելիս (առանց լրացուցիչ գրանշաններ կիրառելու):

Կան առավելապես ռուսերենից ու անգլերենից հայերեն և հայերենից ռուսերեն գործնական տառադարձության կանոնների վերաբերյալ մի քանի որոշումներ²⁸, որոնք ՀԽՍՀ տերմինաբանական կոմիտեի կողմից ընդունվել կամ վերջին անգամ վերանայվել ու թարմացվել են անցյալ դարի 60-80-ականներին և այժմ դարձյալ վերանայման ու լրացման կարիք ունեն: Կարիք ունենք նաև այլ լեզուներից (ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն և այլն) տառադարձության կանոնների մշակման ու պաշտոնականացման: Անհրաժեշտ է նաև մտածել գրական հայերենի երկու ճյուղերի համար տառադարձության միասնական սկզբունքների ու կանոնների մշակման մասին:

Գործնական տառադարձության տարատեսակները

Նախ նկատենք, որ գործնական տառադարձությունը հաճախ շփոթվում է հնչադարձության հետ: Մինչդեռ գործնական տառադարձությունը սովորաբար լինում է հնչադարձության ու գրադարձության սկզբունքների փոխզիջումային զուգակցություն՝ տարբեր լեզուների դեպքում տարբեր համամասնությամբ, ինչպես նաև այդ ոլորտում արմատացած ավանդույթների հաշվառմամբ: Այսպես, մինևույն հասցեատեր (ընդունող) լեզվի համար տարբեր լեզուներից գործնական տառադարձման դեպքում կարող են կիրառվել տարբեր մոտեցումներ (կողմնորոշումներ):

1. Ուղղագրության առավելապես ավանդական սկզբունքի վրա հիմնված լեզուներից տառադարձության դեպքում հարկ է լինում դիմելու հիմնականում հնչադարձությանը, որպեսզի բնօրինակի լեզվի ուղղագրական

²⁸ Տե՛ս *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու*, Ե., 1988, էջ 52-130, 258-263, 297-298:

առանձնահատկությունները անտեսելու շնորհիվ նոր գրությանը բառերը հնչմամբ գոնե մոտավորապես նույնանան բնօրինակին: Հիմնականում այդպես է ֆրանսերենից հայերեն²⁹ տառադարձության դեպքում: Օրինակ՝ Daudet, Peugeot, Renault հատուկ անունները տառադարձվում են ոչ թե *Դաուդետ, Պեուգետոտ, Ռենաուլտ*, այլ *Դոդե, Պեժո, Ռենո*, քանի որ ֆրանսերենում այդպես են հնչում: Նման դեպքերում տառադարձությունն ունենում է **ուղղախոսական (հնչադարձական)** կողմնորոշում:

Երբեմն այս մոտեցումը հայերենում ծայրահեղացվելու չարաշահվել է, օրինակ՝ միջնադարում հունարենի, արաբերենի ազդեցությամբ և փոխառյալ բառերի միջոցով **Ֆ** հնչույթի ներմուծումն ու համապատասխան տառի ստեղծումը³⁰, անցյալ դարի 30-ականներին ռուսերենի բաղաձայնների քմայնացման ներմուծման փորձերը փափկացնող յ-ով³¹ կամ ապաթարցով նշելու միջոցով՝ *բայլշնիկ (կամ բայլշնիկ), տյոտյա, վալ'ս, ալ'տրուիզմ, ֆակուլ'տետ*³² և այլն: Այժմ էլ փորձեր են արվում անգլերենի անշեշտ ձայնավորների համահարթված արտասանությունն արտահայտելու **ք** տառի միջոցով՝ *Հարփքր, Քլինթրն, Վքրջինիք* և այլն:

2. Ազատ ու շարժական շեշտով, շեշտափոխական ու փոխազդեցական հնչյունափոխության առատությամբ հատկանշվող և ուղղագրության առավելապես ձևաբանական

²⁹ Սույն հոդվածում քննարկվող նյութը ներկայացված է ըստ արևելահայերենի:

³⁰ Դրա հետևանքով այժմ առկա են հին անունների գուգաձևեր՝ *Ափրոդիսե - Աֆրոդիսե, Փիլիպոս - Ֆիլիպ, Մեմֆիս - Մեմֆիս* և այլն:

³¹ Այստեղ յ-ն կիրառված է ոչ թե հնչյունային իմաստով, այլ որպես սոսկ նշան: Սա նման է ռուսական Ե եւ Ե նշաններին, որոնք սկզբնապես ներկայացել են որպես հենց [յ] և [ը]

³² Քմայնացումը ապաթարցով նշելու օրինակներ կարելի է գտնել Սո. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» (Եր., 1944): Իսկ քմայնացումը հայերեն գրավոր խոսքում որևէ կերպ նշելու արգելքը տե՛ս *Ուղեցույց տեղմիջաբանական կոմիտեի որոշումների*, Եր., 1945, էջ 17, § 5:

սկզբունքի վրա հիմնված լեզուներից տառադարձության դեպքում ավելի նպատակահարմար է լինում **ուղղագրական (գրադարձական)** կողմնորոշումը, երբ անտեսվում են բնօրինակի լեզվի ուղղախոսական առանձնահատկությունները, որպեսզի բառերը կայուն գրությամբ հնարավորինս նույնանան բնօրինակին: Հիմնականում այդպես է ռուսերենից հայերեն տառադարձության դեպքում: Օրինակ՝ Москва, Ломоносов հատուկ անունները հայերեն տառադարձվում են ոչ թե ըստ հնչման (Մասկվա [me'skva], Լըմանոսով [təme'nosɔf]), այլ ըստ գրության (Մոսկվա, Լոմոնոսով)³³: Անտեսվում են բառավերջում ձայնեղ բաղաձայնների իլացումը, անշեշտ ձայնավորների թուլացումը, բաղաձայնների քմայնացումը՝ *Чти́ца* (*Кузьмин* [kɔzʲi'mʲin]), *У́ва* (*Нева* [nɔ'va]), *Լենինգրադ* (*Ленинград* [lʲinʲin'grat]):

3. Գրադարձության ու հնչադարձության **համակցված** կիրառման (այս կամ այն չափով զուգորդման) կարիք է լինում այն լեզուների դեպքում, որոնցում ուղղագրությունն ավանդական է, միաժամանակ լայն տարածում ունի դիրքային հնչյունափոխությունը: Այսպիսի մոտեցում է կիրառվում, օրինակ, անգլերենից հայերեն գործնական տառադարձության դեպքում: Մի դեպքում՝ անգլ. **Beatles** անունը տառադարձվում է ոչ թե ըստ գրության (*Բեաթլես*), այլ ըստ հնչման (*Բիթլզ*), մի այլ դեպքում անգլ. London տեղանունը տառադարձվում է ոչ թե ըստ հնչման (Լանդոն), այլ ըստ գրության (Լոնդոն): Գրադարձվում են հատկապես այն տառերը, որոնց հնչյունական արժեքը անգլերենում հիմնականում միանշանակ է (b, d, f, k, l, m, n, p, q, v, z):

4. Երբեմն էլ նախընտրելի է լինում անունների փոխանցման **ավանդական** սկզբունքը, երբ այս կամ այն չափով անտեսվում են բնօրինակի թե՛ գրությունը, թե՛

³³ Տե՛ս նաև *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու*, Ե., 1988, էջ 297-298:

արտասանությունը: Օրինակ՝ Ֆրանսիայի մայրաքաղաքի Paris անունը հայերեն ոչ թե հնչադարձվում է (Պադի) կամ գրադարձվում (Պարիս), այլ արտահայտվում է ըստ հայկական ավանդույթի (Փարիզ):

5. Երբեմն հայերենում այլ լեզուներից տառադարձման նույն դեպքի համար հնարավոր են լինում տարբերակային լուծումներ, երբ առաջարկվում է զուգաձևությունը լուծել **ստուգաբանական** մոտեցմամբ՝ բառի ձևային կազմի հաշվառմամբ (*Բելոզերսկ, կոորդինատ, հիդրոքսիդ, ՅուՆԷՄԿՕ, Նիդերլանդներ, Բելոռեչենսկ, Կրասնոռեպով, Մաքբենզի, դեվալվացիա, Յասնայա պոլյանա, Լեյք Վիլեսիդ*), կամ դրա անտեսմամբ (*Բելոզերսկ, կոորդինատ, հիդրոքսիդ, ՅՈՒՆԵՍԿՕ, Նիդերլանդներ, Բելորեչենսկ, Կրասնորեպով, Մաքբենզի, դեվալվացիա, Յասնայա Պոլյանա, Լեյք Փլեսիդ*):

Թեև ստուգաբանական մոտեցումը կարծես թե տրամաբանական է, սակայն խրախուսելի չէ. դա հակասում է հայերենի ուղղագրության սկզբունքներին, քանի որ օտար անունները (թեկուզ հապավումներ) հայերենում, որպես կանոն, համարվում են պարզ բառեր, որ ենթակա չեն ստուգաբանության: Ստուգաբանական մոտեցումը նաև ավելորդ հոգս է, որից ոչինչ չենք շահում, ընդհակառակը՝ խճճում ենք ուղղագրությունը: Դա նաև վիրավորական ու նվաստացուցիչ է. փորձում ենք հաճոյանալ օտարին, բայց նրա համար միևնույնն է՝ կգրենք, օրինակ, ՆԱՏՈ՞, թե՞ ՆԱՏՕ:

Տառադարձություն և լեզվապահպանական խնդիրներ

Օտար լեզուներից հայերեն տառադարձումը, առօրյա գործնական խնդիր լինելուց բացի, առնչվում է լեզվապահպանական խնդիրներին: Նաև տառադարձման սկզբունքներից է կախված, թե ինչպիսին կլինեն և որքանով կօրինականացվեն օտար լեզուների ազդեցության հետևանքները հայերենի կառուցվածքի և հատկապես հնչյունական-արտասանական համակարգի վրա, որքան լեզուն միասնական ու անխոցելի կլինի: Ահա թե ինչու կարևոր է գործնական

տառադարձության խելամիտ սկզբունքների մշակումն ու կիրառումը համազգային մակարդակով:

Օտար ազդեցության անցանկալի հետևանքները առաջ են գալիս, հատկապես երբ գործնական տառադարձման մեջ չափազանցվում է հնչադարձության բաղադրիչը:

Երբեմն շատ գայթակղիչ է թվում օտար անուններն ըստ բնօրինակի ճշգրտորեն արտասանելու հնարավորության ապահովումը³⁴: Բայց գործնական տառադարձումը օտար լեզվական միավորների ոչ թե ճշգրիտ վերարտադրման, այլ յուրացման գործիք է: Գործնական տառադարձման ենթարկված լեզվական միավորը փաստորեն կորցնում է անմիջական կապը բնօրինակի լեզվի հետ և դառնում ընդունող լեզվի դիպվածային, ժամանակավոր կամ մշտական բաղադրիչ: Իսկ յուրացված միավորը պետք է այնպիսին լինի, որ չխաթարի տվյալ լեզվի համակարգը, ծամածռությունների պատճառ չդառնա, դժվարվերարտադրելի և դժվարընկալելի չդարձնի խոսքը, համակարգային անցանկալի փոփոխությունների սկիզբ չդնի³⁵: Այսինքն՝ բնօրինակին արտաքին համապատասխանության ձգտումը չպետք է ինքնանպատակ լինի և վնասի ընդունող լեզվին: Ահա այստեղից էլ սկսվում է փոխզիջումը հնչադարձության ու գրադարձության միջև՝ իբրև գլխավոր չափանիշ ունենալով ընդունող լեզվի հնչյունական համակարգը:

³⁴ Առանձին դեպքերում, երբ ինչ-որ պատճառով անհրաժեշտ է ընթերցողին հնարավորություն տալ ճշգրիտ արտահայտելու բնօրինակի հնչյունական առանձնահատկությունները, կամ երբ պետք է շեշտել ներմուծվող միավորի օտար ու խորթ լինելը, կամ էլ երբ ճիշտ տառադարձման հնարավորություն չկա, ապա կարելի է դիմել ներդրման հնարքին, այսինքն՝ օտար բառը կամ արտահայտությունը գրել իր բնօրինակի գրային համակարգով որպես յուրատեսակ մեջբերում: Այդպես գոնե մատնանշվում է, որ այդ բառը կամ արտահայտությունը գրվածքի հիմնական լեզվին չի պատկանում, նրա կողմից յուրացված չէ:

³⁵ Այս մտահոգությունների մասին տե՛ս նաև *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու*, Ե., 1988, էջ 28:

Օտար հատուկ անունները հայերենում երբեմն՝

- թարգմանում ենք ամբողջությամբ՝ Փղոսկրե Ափ, Հրո երկիր, Ջատկի կղզի, Սուրբ Հեղինեի կղզի, Ասեղի հրվանդան, Կարմիր ծով, Պետրոս Մեծ,

- թարգմանում ենք մասնակիորեն՝ Նոր Ջելանդիա, Հարավսլավիա, Դոնի Ռոստով, Վերին Վոլտա, Ալպեր, Իվան Ահեղ, Ֆրիդրիխ Շիկամորուս,

- օգտագործում ենք ավանդական հայկական տարբերակով՝ Վրաստան, Հունաստան, Լեհաստան, Աթենք, Հռոմ, Վենետիկ, Սպահան, Լուսնթագ,

- տառադարձում ենք բնօրինակի լեզվից՝ Իրան, Աֆղանստան, Նյու Յորք, Ջենովա, Վիեննա, Պրահա, Թբիլիսի³⁶, Քիշնև, Բաբի Յառ, Հոմերոս,

- տառադարձում ենք միջնորդ լեզվից՝ ֆր. Կոտ դ՛Իվուար, անգլ. Հավանա, Կոպենհագեն, Մոնտենեգրո, ռուս. Շոտլանդիա, Նեապոլ, Ֆլորենցիա,

- տառադարձում ենք միջնորդ ու բնօրինակ լեզուների խառնուրդով՝ Թուրքիա (Турция, թուրք. *Թյուրքիե*), Ֆրանսիա (Франция, ֆր. *Ֆրանս*), Հաագա (Гаага, հոլ. *Հախ*), Հայիթի (անգլ. *Հեիթի*, հաիթ. *Այիթի*) և այլն:

Մրանք բոլորն էլ անունների փոխանցման ընդունելի ձևեր են, եթե չեն խախտում հասցեատեր լեզվի հնչյունական-արտասանական և ուղղագրական օրենքները: Այնուամենայնիվ, օտար լեզվից բառ կամ անուն վերցնելու դեպքում առաջնային պետք է լինի թարգմանության պահանջը: Թարգմանության անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում առաջնային պետք է լինի հարմարեցված տառադարձումը, երբ հաշվի են առնվում ընդունող լեզվի օրինաչափությունները: Միայն այս սահմաններում էլ կա-

³⁶ Որոշ երկրներ պաշտոնապես պահանջում են իրենց ինչ-ինչ տեղ-անուններ տառադարձել իրենց ձևով, ինչպես, օրինակ, *Թբիլիսի*-ն (նախկինում՝ *Թիֆլիս* կամ *Տփղիս*):

րելի է քննարկել բնօրինակի հնչյունական առանձնահատկությունների պահպանման հարցը:

Հնչադարձության պահանջը էական է լեզվաբանական և ուսուցողական տառադարձման դեպքում, երբ նպատակակետը բնօրինակի արտասանության ճշգրտությունն է: Մինչդեռ գործնական տառադարձման դեպքում հնչադարձության պահանջը էական չէ, քանի որ նպատակակետը ընդունող լեզվի հնչյունական համակարգին հարմարված միավոր ստանալն է: Ահա թե ինչու *Shakespeare* [/ʃeɪkspiər/](#) անունը տառադարձում ենք ո՛չ Շեյքսփիբը (հնչադարձությամբ), ո՛չ էլ Շաքեսփեարե (գրադարձությամբ), այլ **Շեքսպիր**, որը փաստորեն փոխզիջումային տարբերակ է՝ մեծ մասամբ հնչադարձություն, մասամբ գրադարձություն, մասամբ ավանդույթ:

Վտանգավորն այն է, երբ ոչ նպատակահարմար տառադարձության հետևանքով լեզու են ներթափանցում նրա համակարգին անհարիր հնչյուններ (քմայնացած բաղաձայններ, համահարթված ձայնավորներ), խորթ հնչյունակապակցություններ (**օը, ուը, իը, ուո, ուե, ուա, ոու**, բաղաձայնահաջորդ **յե** և այլն), օտար շեշտադրություն, կատարվում են ուղղագրական կանոններից շեղումներ (**ը** տառ՝ արմատի մեջ և ձայնավորից հետո, **ր** տառ՝ **ն-ից, լ-ից** առաջ, բառասկզբում) և այլն:

Այս խնդիրը ունի նաև քաղաքական ենթատեքստ: Անցյալ դարի 20-30-ականներին օտար անունների և փոխառյալ բառերի արտասանությունը փոխատու լեզվին առավելազգայնս նմանեցնելու պահանջը նպատակ ուներ ևս մի կողմով հայերենը մոտեցնելու ռուսերենին: Ռուսերենն այդ ժամանակ ներկայացվում էր որպես փոխառությունների և տառադարձման հիմնական աղբյուր ու չափանիշ հայերենի

համար³⁷: Անգամ եվրոպական լեզուներից փոխառություններն ու հատուկ անունները մեծ մասամբ վերցվում էին ռուսականացված տարբերակներով (*Անգլիա, Չեռնոգորիա, Պրագա, Էյնշտեյն, Էմոցիա, կոնֆերենցիա* և այլն): Հիմնական նպատակը հայերենի գրային համակարգը, ուղղագրությունը, ուղղախոսությունը, բառային կազմը, շարահյուսությունը ռուսերենին մերձեցնելն էր և այդպիսով սլավոնատառ այբուբենին, այնուհետև ռուսախոսությանն անցնելու նախապատրաստումը:

Ներկայումս այդպիսի պատակները մեզ լրջորեն չեն սպառնում, ուստի հնչադարձության ծայրահեղացումը տխուր անցյալի վերապրուկ է կամ էլ օտարամուլական գայթակղություն: Իսկ այդպիսի գայթակղությունները մեզնից անպակաս են: Դրանց դեմն առնելու կարիքն է ստիպել, օրինակ, ՀԽՍՀ տերմինաբանական կոմիտեին հայտարարելու, որ «անհրաժեշտ է համարում պայքարել այն փորձերի դեմ, որոնց նպատակն է հայերենում առկա, միանգամայն ճիշտ և մատչելի տերմինները փոխարինել այսպես կոչված միջազգային տերմիններով» (*Թանգարան – մուզեյ, պարկուճ – գիլգա, գրադարան – բիբլիոտեկա* ևն)³⁸: Նույն գայթակղություններն են նույն կոմիտեին հարկադրել 1957 թ. մի որոշմամբ կանոն սահմանելու՝ օտարամուտ բառապաշարի միջոցով օտար շեշտադրության ներխուժումը սահմանափակելու նպատակով ոչ հայեցի շեշտը միայն անձնանունների միայն ուղղական հոլովում թույլ տալու մասին³⁹: Այնուհանդերձ ժողովրդի օտարամուլության պատճառով կանոնը անհիմն կերպով հաճախ տարածվում է նաև այլ հոլով-

³⁷ Տե՛ս *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու*, Ե., 1988, էջ 25; **Թ. Ղարազյույան**, *Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը*, Ե., 1974, էջ 238:

³⁸ Տե՛ս *Ուղեցույց տերմինաբանական կոմիտեի որոշումների*, Ե., 1945, էջ 8:

³⁹ Տե՛ս *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու*, Ե., 1988, էջ 297, 266-267:

ների, նաև տեղանունների, անգամ փոխառյալ հասարակ անունների վրա: Կանոնի սահմանների այդպիսի կամայական ընդլայնում հանիրավի տեղ է գտել նույնիսկ դպրոցական դասագրքում⁴⁰:

Ռուսերենը, անգլերենը, ֆրանսերենը, ճապոներենը, ֆիններենը, չեխերենը, իսլանդերենը և այլ լեզուներ միմյանց կապկելու այսպիսի ջանքեր չեն գործադրում, այլ գլխավոր չափանիշ են համարում իրենց լեզվի օրենքներն ու օրինաչափությունները: Այսպես, ֆրանսիական «Տեֆալ» մականիշը հնչում է ռուս. [ծիֆալ], անգլ. [թիֆալ], հոլանդ. [տեիֆալ], վրաց. [թեփալի], ճապոն. [թեֆադո], վիետնամ. [տեֆան] և այլն (այսինքն՝ ում ինչպես հարմար է):

Հնչադարձության չարաշահումը սովորաբար պատճառաբանվում է նույն առարկայի տարալեզու անվանումների արտասանական նույնացման ու համընդհանուր ճանաչելիության խնդրով: Իրականում դա էական չէ, մանավանդ որ մեծ մասամբ անհնարին պահանջ է: Դրա վկայությունն են թարգմանվող կամ հարմարեցվող տեղանունները (նաև անձնանունները): Օրինակ՝

- Չոնա Գոռա (չեռնոգ.), Մոնտենեգրո (վենետ.), Մալի ի Զի (ալբ.), Հելշան (չին.), Մավրոբունիո (հուն.), Կարադաղ (թուրք.), Ըարժալամանչո (չեչեն.) ևն:

- Չոնգուա (չին.), Չինաստան (հայ.), Շին (ֆր.), Կիտայ (ռուս.), Խյատադ ուլս (մոնղոլ.), Տիբնակո (բասկ.), Չուգոկու (ճապ.), Ցյունգուո (կորե.) ևն:

- Հաախ (հոլ), Հաագա (հայ.), Հեյգ (անգլ.), Է (ֆր.), Այա (իսպ.) ևն:

Մյուս վկայությունը փոխառյալ հասարակ անվան՝ ընդունող լեզուներին հարմարեցված տարբերակների առկայությունն է: Օրինակ՝

⁴⁰ Տե՛ս Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, *Մայրենի* – 5, Ե., 2006, էջ 146:

• հուն. *էկլէսիա* > հայ. *էկեղեցի*, վալի. *էզուիս*, շոտլ. *էազլայս*, ֆր. *էզլիզ*, բասկ. *էլիզա*, իտ. *քիեզա*, թուրք. *քիլիսէ*, արաբ. *կընիսա* և այլն,

• հուն. *կյուրիակոն* > անգլ. *չըրչ*, ռուս. *ցերկըֆի*, չեխ. *ցիրկլենի*, գերմ. *քլը ըշը*, ալբ. *կիշը*, ֆինն. *կիրկկո*, ճապ. *Կյո-կաի*, կորե. *գյոհոէ* և այլն,

• [ὄργανον](#) > *երգեհոն*,

• *барабан* > *բորշ*,

• *mareschal* > *մարաջախտ* և այլն:

Նման դեպքերը ոչ թե բնօրինակի աղավաղումներ են, այլ հարմարեցումներ ընդունող լեզուների հնչյունական համակարգին:

Լեզվական հատկանիշներ կան, որ անհնար է արտահայտել ընդունող լեզվով (հայերենով՝ միջատամնային շփականներ, կոկորդայիններ, ռնգայնացած ձայնավորներ): Կան և հատկանիշեր, որ ինչ-որ կերպ կարելի է արտահայտել ընդունող լեզվի գրային միջոցներով (քմայնացում, երկբարբառներ, ձայնավորի թուլացում, երկար ձայնավորներ և այլն), բայց նպատակահարմար չէ, քանի որ դրանք աններդաշնակ են ընդունող լեզվի հնչյունական համակարգին, զանգվածային տարածման դեպքում առաջ են բերում այդ համակարգի վերաստերում:

Երբ տառադարձումն անում ենք ոչ թե ճշգրիտ հնչադարձմամբ, այլ ընդունող լեզվին հարմարեցմամբ, թվում է, թե ծոմռում ենք փոխատու լեզուն: Սակայն դա միայն թվում է, քանի որ այդ «ծոմռումը» (իրականում՝ հարմարեցումը) կատարվում է ոչ թե փոխատու, այլ ընդունող լեզվում: Փոխատու լեզուն շարունակում է մնալ անխաթար:

Իսկ հակառակ (ճշգրիտ հնչադարձման) դեպքում իսկապես ծոմռում ենք ընդունող լեզուն, քանի որ հնչադարձված օտարոտի անվանումը արդեն ընդունող լեզվի միավոր է, սակայն նրան չհարմարեցված, հետևաբար ծամաճռությունների առիթ տվող: Ուստի ավելի լավ է փոխատու լեզվի

բառերը «ծոմոելով» հարմարեցնենք հայերենին, քան հայերենը ծոմոենք օտար լեզուներից «Ճշգրիտ» հնչադարձված բառերով: Մանավանդ որ կատարյալ ճշգրիտ տառադարձում երբեք էլ հնարավոր չէ:

Այս առիթով տեղին է հիշել Վահան Թոթովենցի հետևյալ խոսքերը «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակից. «Հին հռովմեական այդ ճանապարհի վրա այլազան և տարօրինակ էր կյանքը, և ամենատարօրինակը Ամերիկայից վերադարձած մարդիկ էին՝ ամերիկահայերը, որոնք իրենց հետ բերել էին միայն արտաքին տարազ [ոսկե ստամներ], մի քանի անգլերեն բառեր և ծամածոված բերաններ: Ոչ միայն անգլերեն խոսելիս, այլ մինչև անգամ հայերեն խոսելիս նրանք ծամածռում էին իրենց բերանները: Հայերեն խոսելիս կարծես մայրենի լեզուն ծաղր էին գցում. Կարծես բերանում մի տաք բան էին լղճորում»:

Hovhannes Zakaryan – Principles of Practical Transcription from Foreign Languages into Armenian. – There are a number of problems in Armenian associated with transcription from foreign languages, for the solution of which it is necessary to take into account the following. Transcription, in addition to everyday practical problems, concerns the problems of language preservation. The consequences of the influence of foreign languages on the phonetic-phonemic and pronunciation systems of the borrower language and to what extent they will be legalized also depends on the principles of transcription. Practical transcription is rather an instrument of foreign language units assimilation than their reproduction. The practically transcribed unit actually loses its direct connection with the original language and becomes an occasional, temporary or permanent component of the borrower language. And the assimilated unit will not make speech difficulties in reproducing and perception and will not start undesirable systemic changes in the language.

Оганес Закарян – Принципы практической транскрипции с иностранных языков на армянский. – В армянском языке существует ряд проблем, связанных с транскрипцией иностранных слов, для решения которых необходимо учитывать следующее. *Транскрипция, помимо повседневных практических задач, соприкасается и с проблемами сохранности языка. Также от принципов транскрипции зависит, какими будут и насколько легитимизируются последствия влияния иностранных языков на фонетико-фонематическую и произносительную системы принимающего языка. Практическая транскрипция является инструментом усвоения иноязычных единиц, а не точного их воспроизведения. Транскрибированная практическим образом единица фактически теряет непосредственную связь с языком оригинала и становится окказиональным, временным или постоянным компонентом принимающего языка. А усвоенная языком единица не должна сделать речь трудно-воспроизводимой и трудновоспринимаемой и не должна положить начало нежелательным системным изменениям языка.*

**ՏԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐՆՈՒՄ¹**

Հայկական գավառների մեծ մասում, ինչպես հայտնի է, բնակելի տունը ընդհանուր առմամբ ոչ միայն բնակարան էր այդ հասկացության նեղ առումով, այլև ներառում էր այն բոլոր օժանդակ տնտեսական կառույցները, որոնք անհրաժեշտ էին գյուղացու ապրուստի միջոցները պահպանելու և մշակելու համար: Այդ էր պատճառը, որ ամբողջ բնակավայրում, բնակելի մասի հետ միասին, կարևոր նշանակություն է ստանում բնակարանի այն մասը, որտեղ պահվում էին կենդանիները, մթերքները, այգիներից ստացված բերքը, և որտեղ վերամշակվում էին ու օգտագործման էին նախապատրաստվում գյուղատնտեսական բարիքները:

Ըստ Քսենոֆոնի նկարագրության՝ հին հայկական տան մուտքը երդիկից է եղել, որն արդեն 19-րդ դարում գոյություն չունեի ոչ Բուլանըխում, ոչ Էրզրումում, ոչ Բիթլիսում և ոչ էլ որևէ այլ վայրում:

Ազգագրագետ-բանահավաք Բենսեն (Սահակ Մովսիսյանը), նկարագրելով Բուլանըխի գյուղական տան կառուցվածքը, գրում է, որ գյուղացին աչքաչափով փորում է մոտավորապես քառանկյունի մի փոս, կեսից մեկ արշին խորությամբ (որին բարբառում *հիմ իջնել* են ասում): Հիմքի մեջ լցնում են քարեր, խիճեր, ցեխով կամ խոնավ հողով կոխտտում: Հետո պատերն են շարում քարով, ցեխով կամ խոնավ հողով, տան բարձրությունը ընդամենը մարդու հա-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԿՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ 15-6B101 գիտական թեմայի շրջանակներում:

սակից մի քանի թիզ բարձր էր լինում: Տան պատը ծառայում է իբրև միջնորմ տան և ախոռի և կամ տան ու մառանի միջև: Իսկ եթե դրսի կողմից կից շինություն չկա, դրսից հող են լցնում և կոխոտում պատի բարձրությամբ, և տունը ծածկելուց հետո նմանվում է մի լեռան կամ բլրի²:

Տան բաղկացուցիչ մասերի բառանունների ներկայնակում հայերենի բարբառներում կիրառվում են տարբեր բառեր ու բառակապակցություններ, որոնցից նախ առանձնացրել ենք այն բառանունները, որոնց հիմնական իմաստակիր բաղադրիչը *տունն* է: Դրանք բարբառային հայերենում երբեմն հանդես են գալիս բառիմաստային յուրօրինակ նրբերանգներով:

1. *Տուն* բաղադրիչով ձևավորված ուշագրավ բառանուն է *գրլիսատունը*: Ինչպես նկարագրում են ազգագրագետները, 19-րդ դարի կեսերին և 20-րդ դարի սկզբներին բնակարանի առանցքը կազմում էին *գրլիսատունը* և գոմբ: *Գրլիսատունը* գյուղական տան գլխավոր կամ ամենամեծ սենյակն է, որը միաժամանակ ծառայել է որպես ճաշասենյակ, ննջասենյակ, խոհանոց և մասամբ՝ նաև մառան: *Գրլիսատան* կենտրոնում տեղադրված էր օջախը, որը տաքանալու և կերակուր պատրաստելու համար էր: Հայաբնակ այն վայրերում, որոնք ունեցել են *գրլիսատուն*, հաց թխելու համար նախատեսված թոնիքը տեղադրել են *գրլիսատրնից* դուրս հատուկ տեղում, որը *թոնրատունն* է կամ *հացատունը*: Այս տիպի բնակարաններում երբեմն էլ թոնիքը տեղադրում են տան մեջ կամ միջանցքում՝ սրահում, և այն ոչ այնքան հաց թխելու, որքան բնակարանի տաքացման համար է ծառայել: Լոռիում, Տավուշում, Արցախում, Ջանգեզուրում, ինչպես նաև Վանի և Մուշի գավառներում գործածվել է *գրլիսատուն* բառանունը, որը կազմված է բնիկ հայերեն *գլուխ* և *տուն* արմատներից:

² Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, Ե., 1972, էջ 13:

2. *Թոնրատուն*: Բառանվան բաղադրիչներն են սեմական ծագմամբ *թոնիր*-ը և բնիկ հայերեն *տուն*-ը: *Թոնրատունը* տան այն մասն է կամ սենյակը, որտեղ թոնիրն է գտնվում, և որտեղ հաց է թխվում: Տարածքային լայն ընդգրկում ունեն բառանվան հետևյալ հնչատարբերակները. Արարատում, Կարինում առկա են *թօնդրատուն*, *թունդրատուն*, Թբիլիսիում՝ *թընդրտուն*, Տիգրանակերտում, Ակնում, Մուշում՝ *թօնրրտուն*, Ղարաբաղում՝ *թըոնատոն*, *թուոնատուն*, *թօոնատուն*, Խարբերդում՝ նաև *թօնրուք*, Կյուրինում՝ *թօյնուկ*³: Ա. Հանեյանը Տիգրանակերտի բարբառում *թօնդրդուն*-ը փաստել է որպես խոհանոց հասկացության նշանակյալ⁴: Բառը գործածվել է քաղաքային միջավայրում և խոհանոց-թոնրատանը, բնականաբար, թոնիր չի եղել: Որ փոքր տներում թոնրատունը ծառայել է նաև որպես խոհանոց, որտեղ դրված են եղել լոգարանն ու լվացարանը, վկայաում է և Հ. Աճառյանը⁵: Այսինքն՝ Տիգրանակերտում առկա *թօնդրդուն* բառաձևը փոխաբերացմամբ, բառիմաստի ընդարձակմամբ առաջացած բառաձև է: *Թոնրատունը* երբեմն *գրլխատնից* մոտավորապես 25-40 սմ բարձր է կառուցված եղել և փոքրիկ աստիճանով՝ *թըմբիկով* է կապվել *գրլխատանը*: Հավանաբար այդ պատճառով էլ *թոնրատանը* տրվել են նաև այլ անվանումներ՝ *վերին տուն*, *պրզտի տուն*: Իսկ գլխավոր տունը այստեղ կոչվել է *ներքին տուն*, *ցածի տուն*, *մեծ տուն*, *տա(փ)ներէս*, *տափնօթախ*: Գամիրքում *թոնրատուն* բառանունը վկայված է *թընիրտուն* հնչատարբերակով (Սի էգիշները *թընիրտունը* տարեք⁶), ինչպես նաև *թընիրի տուն* բա-

³ *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետ՝ ՀԼԲԲ), հ. Բ, Ե., 2002, էջ 127, հ. Զ, Ե., 2010, էջ 250:

⁴ Ա. Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978, էջ 209:

⁵ Հ. Աճառեան, *Հայերեն գաւառական բառարան* (այսուհետ՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 374:

⁶ Ն. Մկրտչյան, *Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսությունը*, Ե., 2006, էջ 409:

ռակապակցությամբ: Ի դեպ, այն ոչ միայն հացի, կերակուրների պատրաստման և սննդամթերքի վերամշակման վայր էր, այլև ցերեկը կանանց համար ծառայում էր որպես *օդա*, իսկ գիշերը ամբողջ ընտանիքի համար քնելու վայր՝ ննջարան (այստեղ նաև լողանում էին): Հարկ է նշել, որ Ն. Մկրտչյանը Բողազյանի կամ Գամիրքի բարբառում փաստել է նաև հիշյալ հասկացության *թընիրնոց* (թոնիր+նոց) բառանունը⁷:

3. Վանի բարբառում արձանագրված են *տունդուն*, *տանդուն*, *տանտուն* բառանունները (Յէփ հըմէն կընացին քնան, իսալիվոր թողին *տանդուն*, օր թօրվան վերեն քնի)⁸: *Տանտունը* տան բախում մի առանձին տեղում է կառուցվել, որտեղ գտնվում էր թոնիրը, հաց էին թխում, նաև լվացք անում, կերակուր պատրաստում (սա թերևս *թոնրատուն* բառանունն է, որը *տուն* բառի առնմանությամբ դարձել է *տանտուն*):

4. *Հացատուն*: Բառանունը բաղադրված է բնիկ հայերեն *հաց* և *տուն* բառարմատներից: Բառիմաստային առումով այն հոմանիշ է *թոնրատանը*: *Հացատան* մեջ տեղադրված է եղել թոնիրը, որտեղ և հաց են թխել: Բարբառային հայերենում այն գործառում է *հացատուն* (Արարատ, Կարին և այլն) և *խացատուն* (Նոր Բայազետ, Վան, մասամբ՝ Մուշ)՝ հիշատակված տարածքներին բնորոշ հնչատարբերակներով: Ի դեպ, *հացատուն* բառանունը ՀԼԲԲ-ում վկայված է նաև որպես տան այն մասը, որտեղ թխած հացն են պահում⁹:

Հարկ է նշել, որ Նախիջևանի Ազնաբերդ գյուղում *հացատուն* կամ *թոնրատուն* հասկացությունը դրսևորված է ոչ թե *տուն* բաղադրիչով ձևավորված բառանունով, այլ *հաց* և *տեղ* արմատներով՝ *հացատեղ*:

⁷ Տե՛ս նույնը, էջ 409:

⁸ *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետ՝ ՀԼԲԲ), հ.2, Ե., 2010, էջ 130:

⁹ ՀԼԲԲ, հ. 9, Ե., 2004, էջ 265:

5. *Թոնրատուն*ն հասկացության բառանուն է դիտարկվել նաև *այվանը*, որը պարսկերենից փոխառյալ *էյվան* բառն է և այդ լեզվում բաց պատշգամբ (հնում նաև՝ պալատ) է նշանակում: *Այվանը*, սակայն, բարբառային հայերենում դրսևորվում է մի քանի իմաստով՝ 1. *Թոնրատուն*ն նշանակությամբ առկա է Մակուում և Խոյում (վերջինում՝ *էյվան հնչածևոյ*): 2. *Այվանը* պատշգամբ հասկացության նշանակյալն է Արարատում, Բասենում, Վանում, Բալուում, Տրապիզոնում, Արաբկիքում, Խոտրջուրում, Թբիլիսիում (վերջինում՝ *էյվան*): 3. Կարինում վերնահարկ, վերնատուն, ինչպես նաև հյուրասենյակ իմաստով է գործածական եղել: 4. Բառանունը փոխաբերական իմաստով գործածվում է գլուխ, խելք նշանակությամբ. *Այվանումը* մի գատ էլ չկա: 5. Մուշում ունեցվածք, տուն-տեղ իմաստն ունի¹⁰:

6. Եվդոկիայի միջբարբառում Գագանճյանը փաստել է *տուն*ն արմատով բաղադրված *բանտուն*ն բառանունը, որը բանելու տուն բառակապակցության բարդությունն է՝ կազմված բնիկ հայերեն *բան* և *տուն*ն արմատներից¹¹: Այն տների բակի հատվածում մի առանձին տեղ է, որը հատկացված է տնասկան գործեր անելու, օրինակ՝ լվացքի, հաց եփելու համար¹²: Այսինքն՝ *բանտունը* գրեթե Տիգրանակերտի *թոնդրտունն* է:

7. Բարբառային հայերենում ունենք բնիկ հայերեն *տուն*ն և *կեալ* բաղադրիչներով ձևավորված, պատկերավոր լեզվամտածողությամբ ստեղծված մի յուրօրինակ բառանուն՝ *կենալտուն*՝ կենալու, ապրելու տուն, բառանունը, որն առկա է Արաբկիքում (*կենալտուն*), Գանձակում (*կենալատուն*)¹³:

¹⁰ ՀԼԲԲ, հ.Ա, Ե., 2001, էջ 54, **Հ.Մկրտչյան**, *Գարինի բարբառը*, Ե. 1952, էջ 121:

¹¹ **Հ.Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 1, Ե., 1971, էջ 403:

¹² **Հ.Գագանճեան**, *Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը*, Պոլիս, 1899թ, էջ 21:

¹³ **Հ.Աճառեան**, շԳԲ, էջ 563:

Սա տան միջի այն սենյակն է, որտեղ ընտանիքի անդամներն իրենց ազատ ժամանակն են անցկացնում:

8. Ազգագրագետները բնակելի տան մասերը ներկայացնելիս հաճախ են հիշատակում *տաննէրես* կամ *տա(փ)ննէրես* բառանունները¹⁴: *Տափննէրես* բառի ծագումը հայտնի չէ: Բառակազմորեն թերևս կազմված է *տափան* և *երես* բառերից՝ ն աճականով կամ *տափան* և *ներս*՝ է հնչյունի հավելումով: Հայտնի է, որ *տափանը*՝ գետին նշանակությամբ, գործածվում է բարբառներում: *Տաննէրեսը*, կարծում ենք, *փ* հնչյունի անկումով *տափնէրես* բառի բարբառային հնչատարբերակն է: Այնուամենայնիվ, դժվար է վստահաբար պնդել, թե բառը որ արմատներից է ձևավորվել. բառի իմաստային մեկնաբանությունը մեզ համար աղոտ է և անհասկանալի: Հ. Աճառյանը ՀԳԲ-ում արձանագրել է *տափնէրես* բառը՝ մեկնաբանելով գոմի երես: Բառանունը գործածվել է Ախալքալաքում՝ որպես գոմի մեջ մտորքների առաջ մեկ սաժեն տարածությամբ և երեք վերջոկ խորությամբ սալահատակված տեղ¹⁵: Հնարավոր է՝ հիշյալ բառանունը Ջավախքում բառիմաստային փոքր-ինչ այլ գործառույթ է ձեռք բերել:

Ըստ ազգագրագետների՝ *տաննէրեսը* բնակելի տան գլխավոր մասն է, որը 40-100 քմ մակերեսով և 4-5 մ բարձրությամբ ուղղանկյունաձև մի մեծ սրահ է: Սրահի կեսից ավելին հատկացվում էր թոնրաթմբին՝ *թախտըպէնտի*-ն: Վերջինս հատակից մոտ 2 մ բարձրությամբ մի տախտակամած է եղել, որի ներքևի մասը սեփաստահայերի համար ծառայում էր որպես մառան՝ իրենց բարբառով՝ *մէսսէն*, իսկ վերևի տախտակամածը՝ որպես ննջարան:

¹⁴ Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 1, Ե., 1970, էջ 78, հ.17, Ե.,1989, էջ 74:

¹⁵ Հ. Աճառեան, ՀԳԲ, էջ 1021:

Գլխատունը և *թոնրատունը* կամ *տաննէրեսը* ժամանակի ընթացքում որոշ վայրերում կորցնում են նախկին գործառույթները: Օրինակ՝ Սեբաստիայում, ինչպես փաստում են ազգագրագետները, *տաննէրեսը* (թոնրատուն) մինչև 19-րդ դարը կատարում էր ն՝ հացատան, ն՝ խոհանոցի, ն՝ ննջարանի դեր: Մակայն 20-րդ դարի սկզբներին տան բաղադրիչ մասերը կառուցվածքային փոփոխությունների են ենթարկվել: Այսպես՝ *տաննէրէսից* առանձնացել է տան բաղկացուցիչ մասերի մեջ ուշագրավ գործառույթ դրսևորած *փրորնտունը*: Հիշյալ բառանվան մեջ զուգորդվել են հավանաբար լատիներեն *փուռ՝ furnus*, և դարձյալ բնիկ հայերեն *տուն* արմատները: *Փրորնտունը* կերակուր եփելու համար էր և ուներ նաև օջախ: Սեբաստիայի հայկական հին ու նոր տները ունեին իրենց բաց բակը, որի մի անկյունում կառուցված էր *փրորնտունը*, այսինքն՝ այն տեղը, որտեղ դրված էր փուռը, որը, ըստ երևույթին, խոհանոցի նախաստիպն է: Իսկ *տաննէրեսը* հիմնականում ծառայում էր որպես ննջասենյակ կամ ընդհանրապես ապրելու, ժամանակ անցկացնելու վայր:

9. Սեբաստիայում բնակելի տները այնպես են կառուցված եղել, որ ունեցել են նաև *այլախ՝* միջանցք, որի վրա էլ բացվել են տան հիմնական մասերի՝ *պզտի տան, տաննէրէսի* և պարտեզի դռները:

10. *Տուն* բաղադրիչով ձևավորված ուշագրավ բառամիավորներ են վկայված Կյուրիների շրջանում տան գլխավոր մասերի անվանումներում՝ *նէշտունը* «ներսի տուն», *թօյնուկը* «թոնրատուն», *դուշտունը* «դուրստուն», այսինքն՝ «մառան»: Կյուրիներ, լինելով այգեգործական շրջան, ուներ չարդախով երկհարկանի տներ: Վերնահարկը կոչվում էր *սրֆա*, որը մրգերի չորանոցն էր, իսկ *չարդախը* ծառայում էր որպես ամառային սենյակ՝ *թուրք. յազլըխ*¹⁶:

¹⁶ *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ. 1, էջ 73-83:

Կյուրիւնում ևս ներսի տունը՝ *նէշտունը*, ժամանակի ընթացքում առանձնացել է թոնրատնից՝ *թօյնուկից*, Տիվրիկում *թավխանէից՝ օջախլըղը* «խոհանոցը»: Բինկյանում, Ակնում, Կ.Պոլսի հետ ունեցած առևտրական կապերի շնորհիվ, բնակարանները ավելի հարմարավետ էին կառուցվում: Օրինակ՝ ոչ միայն գլխատունն էր առանձնացել խոհանոցից, այլև խոհանոցը իր հերթին երկու մասի էր բաժանվել՝ բուն խոհանոցը, որը կոչվում էր *սուլթախ*, որտեղ միայն ճաշ էին եփում, և *ղազանլըխը՝ խանգիլնոց*, որտեղ հացն էին թխում, դավուրմա պատրաստում կամ էլ լվացքի ջուրն էին տաքացնում: Իսկ Արաբկիրում էլ *կէնալտնից* առանձնանում է *թոնրատունը*:

Կեսարիայում բնակելի տներն ունեին *թավխանա (տակտուն)*, որը մյուս շրջանների թոնրատունն է: Այն ունի երկու դուռ, որոնք բացվում են դեպի բակը և *սուֆան*: *Թավխանէն* ձմեռային ննջասենյակն էր, իսկ *սուֆան* ծառայում էր որպես ամառային ննջասենյակ: Այդ պատճառով էլ Կեսարիայում *թավխանէն* կոչել են *գըշ էվի* (թուրք.՝ «ձմեռային տուն»):

11. Մեղրիի շրջանում ավանդական հայկական բնակարանները առջևից ծածկ ունեցող, քարե պատերով ուղղանկյունաձև կառույցներ են, որոնք բաղկացած են հետևյալ մասերից՝ *նէսմանց տօն*՝ ներսի տուն, *ղյուսմանց տօն*՝ «դրսի տուն», *էվան*՝ «բաց նախասենյակ», թավլէ՝ «գոմ», «խըտանոց», «մարագ»: *Թավլէն, խըտանոցը, մարագը* գտնվել են բնակարանից քիչ հեռու:

12. Որպես *կաթնամթերքի մատան, պահեստ* Սասունի, Մուշի բարբառներում գործառում են *թացընտուն, թացան(ա)տուն* բառանունները¹⁷: Բառանվան բաղադրիչներն են բնիկ հայերեն. *թաց*-ը՝ *թանալ* բայից (ի դեպ, նույն արմատից են նաև *թան* և բարբառային *թոն*՝ անձրև իմաստով բառա-

¹⁷ Վ Պետոյան, *Սասունի բարբառը*, Ե., 1954, էջ 121:

նունները՝ հնիս. *tā* «հալիլ, լուծուիլ» արմատից, և *տուն*՝ հնիս. **dōm* ձևերից ծագած: Հայերենի որոշ բարբառներում (Մուշ, Սասուն, Վան, Ղարաբաղ, Հավարիկ, Պոլիս, Սեբաստիա, Խոտրջուր, Խարբերդ, Բալու) առկա է *թացան* բառանունը, որը կաթնեղենի բոլոր տեսակների ընդհանուր անվանումն է: Եվ բնականաբար *թացընտունն էլ* այն սենյակն է, որտեղ պատրաստում են թացանի զանազան տեսակները:

13. Բարբառային հայերենում *տուն* բաղադրիչով վկայված են նաև *տաքտուն* և *խաղտուն* բառանունները: *Տաքտունը*՝ որպես բաղնիք հասկացության նշանակյալ, փաստված է Եվդոկիայի միջբարբառում և Պոլսի բարբառում¹⁸: *Խաղտուն* բառանունը գործածվել է Ուրմիայի, Բաղեշի, Կարինի, Մոկսի, Բայազետի, Մուշի խոսվածքներում: *Խաղտունը* փեսայի տունն է, ուր հարսանիքից հետո նրա մերձավորները, հարս ու աղջիկ հավաքվում են ու պարում, պարտուն (Է՛լ գնանք *խաղտուն*)¹⁹:

14. Հայտնի է, որ պատմական Հայաստանի որոշ բնակավայրերում՝ Քղիում, Մանազկերտում, Բալուում, Խարբերդում, Մուշում, Անիում, Ճորոխի ավազանում, Ջավախքում, Պարսկահայքում, Սյունիքում, որպես բնակարան են ծառայել քարանձավները: Շատ հաճախ թշնամու ահաբեկումներից պաշտպանվելու, նաև երկրաշարժերից ապահով լինելու համար հայերը նախընտրել են օգտագործել բնական քարայրերը: Դրանցում բնակվելը, իհարկե, ունեցել է նաև տնտեսական պատճառներ: Քարանձավային բնակարաններից մեզ հայտնի են Սյունիքում գործածվող հետևյալ բառանվանումները՝ *քրրատակ*, *քրրծի տուն*: *Քրրատակ*, այսինքն՝ տուն քարի տակ, *քրրծի տուն*՝ ժայռի վրայի տուն: Մութ, քարանձավային բնակարան հասկացության իմաստով Սյունի-

¹⁸ Ն. Աճառյան, ՀԳԲ, էջ 1022:

¹⁹ ՀԼԲԲ, հ. Բ, Ե., 2002, էջ 273:

քում գործածվել են նաև թուրք. *ղաք* (կամարակապ շինություն), *ղարաղամ* բառանունները²⁰:

Բարբառային հայերենում առկա *ծակ* և *ծակուռ* կամ *ծակոռ* բառանունները, բացի ընդհանրապես փոքրիկ անցք, ծակ իմաստներից, դրսևորված են նաև անշուք տուն, հյուղ, փոքրիկ, նեղլիկ խրճիթ նշանակություններով: Հիշյալ իմաստներով ՀԼԲԲ-ում *ծակ* և *ծակուռ* բառանունները վկայված են Արարատում, Ղարաբաղում, Գանձակում (Տա յել տոն չի հու, մին *ծակուռ* ա ըլի, Էս *ծակուռուռը* ինչ կա, նստել էս): *Ծակ* բառանունը Էվերեկում նաև սենյակ նշանակությամբ է գործածված: Իսկ *ծակուռ* բառը Խոտրջուրում նշանակում է ներքնահարկում փոքր սենյակ, ուր մթերքներ են պահում, այսինքն՝ մառան²¹:

Մի դիտարկում ևս *ծակ* բառանվան հետ կապված: Ա. Մարգարյանը, անդրադառնալով *Չանգեզուր* տեղանվան ստուգաբանությանը, վկայակոչում է Ղ. Ալիշանի այն կարծիքը, որ *Չանգեզուր* տեղանունը այլ բան չէ, քան Սյունյաց Չազ(իկ) նահապետի անվամբ կազմված *Չազաձոր*, *Չազեձոր* տեղանվան աղավաղված ձևը, որը և առաջ է եկել ուշ ժամանակներում²²: Իսկ ազգագրագետ Ե. Լալայանը գրում է. «*Չանգեզուր* անունը, ըստ Հայր Ալիշանի, ծագել է *Չազեձոր* անվան աղավաղումից, իսկ սա՝ *Չազ* նահապետի անունից», նա, սակայն, կարծում է, թե *Չազեձոր*-ը առաջացել է ոչ թե *Չազ* նահապետի, այլ «*ծակերի ձոր*» անունից, որովհետև այժմ էլ Գորիսից քիչ բարձր գտնվող ձորը, ուր եղել է ամենահին բնակությունը, կոչվում է «*ծակերի ձոր*», այդտեղ գտնվող

²⁰ Ա. Մարգարյան, *Գորիսի բարբառը*, Ե., 1975, էջ 523:

²¹ ՀԼԲԲ, հ. Բ, էջ 388-389:

²² Ղ. Ալիշան, *Միսական, Տեղագրութիւն Միւնեաց աշխարհի*, Վենետիկ, 1893, էջ 260:

բազմաթիվ «*ծակերի*»՝ արհեստական քարայրի պատճառով»²³:

Բնակարանի, տան բաղկացուցիչ մաս է համարվում նաև *մառանը*, որը գինու, ուտելիքի, մթերքի շտեմարանն է: Բառը փաստված է հին մատենագրության մեջ, մասնավորապես՝ Բուզանդի, Ոսկեբերանի, Լամբրոնացու երկերում: Բարբառային հայերենում բառը *մառան* հնչաձևով առկա է Ալաշկերտում, Երևանում, Կարինում, Մուշում, Մոկսում, Ոգնում, Վանում և այլն, *մարան*՝ Ագուլիսում, Ջուղայում, Թիֆլիսում, *մէրան*՝ Կեսարիայում «խաղող ճգմելու տեղ, հնձան իմաստով»²⁴, *մառոն*՝ Համշենում: Հ.Աճառյանը ենթադրում է՝ եթե բառը ծագում է *մարան* ձևից, որն առկա է նաև մի քանի բարբառներում, ապա այն փոխառություն է ասորերեն *madānā* բառից, որը նույնպես նշանակում է «շտեմարան, մառան, ցորենի ամբար»²⁵: Իսկ Սո.Մալխասյանցը *մառան* բառանունը համարում է ասորական՝ *madānā*, կամ պարսկական՝ *maydan*՝ փոխառություն «գինու պահեստ իմաստով»²⁶: Հ.Հմայակյանը բառը համարում է իտերական փոխառություն²⁷:

Մառան հասկացության ուշագրավ բառաձև է առկա Վայոց ձորի միջբարբառում, մասնավորապես՝ Նախիջևանի Ազնաբերդ գյուղի խոսվածքում՝ *ձէռնատեղ*²⁸, որը պատկերավոր լեզվամտածողությամբ ձևավորված բառանուն է, և, կար-

²³ Ե. Լալայան, *Ձանգեզուրի գավառ*, հ. Բ, Թիֆլիս, 1899, էջ 8: Ալ.Մարգարյան, *Ստուգաբանություններ*, Ե., 2015, էջ 182-183:

²⁴ Մ. Անթոնյան, *Կեսարիայի բարբառը*, Ե., 1961, էջ 258:

²⁵ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 262-263, *Քննություն Համշենի բարբառի*, Ե., 1947, էջ 244:

²⁶ Սո. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 2010, հ. 3, էջ 260:

²⁷ Հ. Հմայակյան, *Գրիգոր Ղափանցյանը և իտերագիտությունը*, Ե., 2016, էջ 165:

²⁸ Ա. Վարդանյան, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004, էջ 138:

ծում ենք, համարժեք է ռուսերեն *кладовка* բառանվանը, այսինքն՝ ինչ-որ բան դնելու տեղ:

Ս. Վարդանյանը համշենահայերի մոտ մթերքի պահեստ իմաստով գրանցել է *սարբէն* բառանունը, ինչպես նաև *սէրէնդէր* բառաձևը, որը գետնից 2-3 մետր բարձր փայտե սյուների վրա կառուցված, չորս կողմից բաց պատշգամբով շրջափակված տախտակամած մթերանոցն է²⁹: *Սարբի* (*սարբի*) բառանունը փաստել են նաև Հ. Աճառյանը ՀԳԲ-ում. Տրապիզոնում՝ մեծ, հաստ տախտակներով շինված շտեմարան մեծ քանակությամբ կաղին, խնձոր, տանձ և խաղող պահելու համար, և Ս.Ամատունին՝ «համբար մեծ. շտեմարան ցորենոյ կամ ալեր» իմաստներով³⁰: Երզնկայում Դ. Կոստանդյանը որպես *մառան* հասկացության բառանուն է արձանագրել նաև *մէխասանը*³¹: Փաստված է նաև, որ *քոխ*, *քոխտիկ* բառանունները Ալաշկերտում, Նոր Բայազետում ոչ միայն աղքատիկ խրճիթ նշանակությամբ են գործածվում, այլև *մառան* իմաստով³²:

Կեմերեկի և Կյուրինի շրջաններում ևս գետնահարկ *մառանի* փոխարեն կառուցել են գետնից մոտ 2 մ բարձրությամբ տախտակե վերնահարկ, որը տեղի բարբառով *միսենդերե* կամ *մուսանդարա* է կոչվել: Այստեղ փռում էին գլուխ սոխը, իսկ սեխն ու ձմերուկը շարում էին նախօրոք փռած դարմանի վրա: Մննդամթերքի պահեստը՝ մառանը, Տենդիլում *նէքի տունն* է, որը կառուցվել է թոնրատան հյուսիսային պատին կից՝ համեմատաբար հով տեղում:

²⁹ Ս. Վարդանյան, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը...*, Ե., 2009, էջ 316, 317:

³⁰ Հ. Աճառյան, ՀԳԲ, էջ 958, Ս.Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Էջմիածին, 1912, էջ 585:

³¹ Դ. Կոստանդյան, *Երզնկայի բարբառը*, Ե., 1979, էջ 164:

³² Զ. Մադաթյան, *Ալաշկերտի խոսվածքը*, Ե., 1985, էջ 247, Հ.Աճառյան, ՀԳԲ, էջ 1121:

Հ. Աճառյանը ՀԳԲ-ում *մտան* հասկացության բառանուն է դիտարկել *կեղարք (քիչերք)*, որը առկա է Եվդոկիայում, Կեսարիայում: Այն տան մեջ գտնված առանձին տեղ է փոքր սենյակի պես, որտեղ պահում են զանազան իրեր և ուտելիք³³: Բառը *քիչար* հնչաձևով մենք արձանագրել ենք Ախալքալաքի Վաչիան գյուղի խոսվածքում: Վերոբերյալ բառանունը ՀԼԲԲ-ում ծագումնաբանորեն առնչակից է համարվում պարսկերեն *kilar* բառին, որը, մեր կարծիքով, նույն *կեղար* բառանունն է:

Բարբառային հայերենում վկայված են նաև *հընձան*, *շիրխանա* բառանունները: *Հընձան* բառը վկայված է հայ հին մատենագրության մեջ: Ըստ Գ.Ջահուկյանի՝ այն խեթա-լուվական լեզուներից հայերենին անցած փոխառություն է³⁴: *Հընձանը* այգիներում գետնի մեջ փորված և մաքուր շինված ավազանն է՝ խաղողը ճզմելու և հյութը հանելու համար: Սկզբնապես այն գործածվել է հենց այդ նշանակությամբ, սակայն որոշ բնակավայրերում՝ Ակնում, Խարբերդում, Տիգրանակերտում, Վանում և այլուր, հնձանի վրա կառուցվել է շինություն, և *հընձան* բառանունը բառիմաստային տեղաշարժումով ձեռք է բերել նաև պարտեզի մեջ շինված փոքրիկ խրճիթ, հյուղակ նշանակությունը: Այդ մասին վկայում են նաև ազգագրագետները. «Այգիներում կառուցված այդ ամառային բնակարաններին ակնեցիները հնձան հատկանշական անունն էին տալիս, որոնք, կորցնելով իրենց նախկին բնույթը, արդեն բնակարանի էին վերածված, ուր փոխադրվում էին ապրիլի վերջերից մինչև այգեկութի վերջը՝ 5-6 ամիս»³⁵: Բարբառային հայերենում բառը դրսևորված է հետևյալ հնչաձևերով՝ Երևան, Բուլանըխ, Մուշ՝ *հընձան*,

³³ Հ. Աճառյան, ՀԳԲ, էջ 562:

³⁴ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 313-314:

³⁵ *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ. 1, Ե., 1970, էջ 80:

Ջեյթուն՝ *օնձօն, օնձոն*, Ագուլիս՝ *ընձուն*, Խարբերդ՝ *հընձան, ընձան* և այլն³⁶:

Շիրխանա կամ *շիրաճխանա* բառանունը վկայված է Վանի, Ղարաբաղի և Արարատյան բարբառներում: Արարատյան դաշտում այգետերերն ունեին առանձին շինություն, որտեղ պահում էին իրենց պատրաստած գինին կամ օղին. դա գինու մառանն էր կամ *շիրատունը*: *Շիրխանա*-ն Արարատյան և Վանի բարբառներում հնձան իմաստով է գործածվել, իսկ Ղարաբաղում՝ գինետուն, գինեվաճառանոց (Վերա ունում էր տիկը տանում իրանց *շիրխանում* վե քցում³⁷): Բառը պարսկերենից փոխառություն է՝ կազմված *շիրե՝ šire* «քաղցու» և *խանա xana* «տուն» արմատներից:

ՀԼԲԲ-ում արձանագրված են նաև *տուն* բաղադրիչով *սառցատուն* կամ *սառնատուն* բառանունները: Արարատյան բարբառում դա այն նկուղն է, որում ձմեռը սառույց են լցնում՝ ամռանն օգտագործելու համար: Հիշյալ իմաստով *ձյուն* արմատով և *նոց* ածանցով ուշագրավ բառանուն է արձանագրված Անիպեմզա գյուղում՝ *ձըննօց*: վերջինս բնական խոր հոր է եղել, որտեղ պահել են ձյունը՝ դարձյալ ամռանը գործածելու համար:

Արարատում, Թբիլիսիում գետնափոր զով սենյակ, նկուղ իմաստով գործածվել են նաև փոխառյալ բառանուններ, ինչպես, օրինակ, *սարդափր*, որտեղ պահել են թարմ մթերքը (Ինչ քաղկունը խուզի յիդ կեր, դիփ դարսից *սարդըփներումը*), և *կուլինը*՝ Մասունում՝ մառան նշանակությամբ³⁸: Գետնափոր մառան, նկուղ իմաստով փաստված է նաև *բազ* բառանունը, որը գործածվել է Սուչավայում, Առտեալում³⁹:

Արաբկիրում և Կեսաբիայում բնակարանները կառուցված են եղել գետնահարկով, որը կոչվել է *յերգէմ*: Այն

³⁶ **Ն. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, Ե., 1977, էջ 105-106:

³⁷ ՀԼԲԲ, հ. Դ, Ե., 2007, էջ 244:

³⁸ ՀԼԲԲ, հ. Ե, Ե., 2008, էջ 271, 285, հ. Գ, Ե., 2004, էջ 202:

³⁹ **Ն. Աճառյան**, ՀԳԲ, էջ 162, ՀԼԲԲ, հ. Ա, Ե., 2001, էջ 144:

նկուղ-մառան էր սննդամթերք և վառելանյութ պահելու համար:

Վայոց ձորի միջբարբառում, մասնավորապես՝ Նախիջևանի Ազնաբերդ գյուղի խոսվածքում որպես *նկուղ* հասկացության բառանուն է վկայված պարսկերենից փոխառյալ *qūnqūnīfrou*-ն⁴⁰, որը, կարծում ենք, *զիրզūմին* «նկուղ», բառացի՝ «գետնատակ» ձևի ժողովրդական ստուգաբանության ենթարկված տարբերակն է:

Այսպիսով՝ ամփոփելով հայերենի բարբառներում առկա տան բաղկացուցիչ մասերի բառանունների մի մասի քննությունը՝ նշենք, որ հայոց բնաշխարհի տարբեր շրջաններում, բնակլիմայական, ապրելակերպի, տնտեսական պայմաններից ելնելով, հայ ժողովուրդը ստեղծել է տան գանազան համալիրներ և տարբեր բառանվանումներով կոչել դրանք:

Ինչպես տեսանք, խնդրո առարկա բառանուններում առանձնահատուկ տեղ ունեն բնիկ հայերեն *տուն* բաղադրիչով բառաձևերը: Դրանք, իհարկե, առանց հնչյունական տարբերակների, մոտավորապես 20-ն են:

Բարբառային հայերենում տան բաղկացուցիչ մասերի բառանուններում քիչ չեն նաև օտար ծագման բառերը, որոնց գործածությունը, մեր կարծիքով, պայմանավորված է եղել նաև նրանով, որ, ապրելով օտար ժողովուրդների հարևանությամբ, հայերս շատ դեպքերում նորերը ստեղծելու փոխարեն փոխառել ենք օտար բառեր:

Բարբառներում տան բաղկացուցիչ մասերի անվանումներում օտարաձին նոր բառաձևերը առաջացել են նաև այն պատճառով, որ տան բաղադրիչ մասերը ժամանակի ընթացքում կառուցվածքային փոփոխությունների են ենթարկվել, և նոր առանձնացած մասերի անվանումների անհրաժեշտություն է առաջացել:

⁴⁰ Ա. Վարդանյան, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004, էջ 76:

Khachatryan Hasmik – Names of House Constituent Parts in the Dialects of Armenian. – This article examines the dialectal lexical names of the house constituent parts in the dialects of Armenian. The following lexical units are separated in which the word 'house' is the main meaningful component: գրլխատուն (glkhatun), կենալտուն (kenaltun), բանտուն (bantun), թոնրատուն (t'onratun), հացատուն (hatsatun), տանտուն (tantun), թացրնտուն (t'atsntun), նէշտուն (neshtun), դուշտուն (dush-tun), տաքտուն (tak'tun), քրքրծիտոն (krtsiton) and so on. Also, the article examines the dialectal variants of the concepts 'cellar' and 'basement' which are considered house constituent parts as well. They are: մարան (maran), ծէրնատեղ (tsernategh), կեղար (keghar), սարբին (sarbin), միսենդերէ (misendere), հնձան (hndzan), շիրխանա (shirkhana), սարդափ (sardap), զանգաւրու (zarzambu), բազ (baz) and so on.

Хачатрян Асмик – Названия составных частей дома в диа-лектах армянского языка. – В данной статье исследуются существующие в армянских говорах диалектные названия составных частей дома. Из них выделены те словоформы, основной смыслообразующей частью которых является *дом* – գրլխատուն (глхатун), կենալտուն (кэналтун), բանտուն (бантун), թոնրատուն (тонратун), հացատուն (хацатун), տանտուն (тантун), թացրնտուն (тацнтун), նէշտուն (нэштун), դուշտուն (душтун), տաքտուն (тактун), քրքրծիտոն (крцитон) и др. Исследованы также диалектные проявления понятий погреба, амбара – считающихся составными частями дома: մարան (маран), ծէրնատեղ (цэрнатех), կեղար (кегар), սարբին (сарбин), միսենդերէ (мисендере), հրնձան (һндзан), շիրխանա (ширхана), սարդափ (сардап), զանգաւրու (зарзамбу), բազ (баз) и др.

ՎԱԼՏԵՐ ԲԵՆՅԱՄԻՆ. ԹԱՐԳՄԱՆՉԻ ՊԱՐՏՔԸ

XX դարի առաջին կեսի գերմանացի փիլիսոփա, թարգմանիչ և թարգմանաբան, գեղագետ, մշակութաբան, գրականագետ Վալտեր Բենյամինին ենք պարտական միջազգային համբավ ունեցող «Թարգմանչի պարտքը» աշխատության համար: Դժվար է ճշգրիտ նկարագրել Բենյամինի գործը, որովհետև Բենյամինը, լինելով թարգմանիչ (հիշենք հատկապես Բալզակի, Բողլերի, Պրուստի գործերի նրա թարգմանությունները), ձգտում է ապացուցել թարգմանության արարչական առաքելությունը: Նա ոգեկոչում է Նոր Աշխարհի բանաստեղծ-թարգմանիչներ Էզրա Փաունդին, Օկտավիա Պազին, որպեսզի հիշեցնի թարգմանական գործունեության ստեղծագործական բնույթը:

Բենյամինի թարգմանաբանական կանխադրությունները կարող են ամփոփվել հետևյալ կերպ. առաջին հերթին չեն թարգմանում որևէ մեկի համար, տեքստը սկսվում է հասցեատիրոջ մերժումով. «Ոչ մի դեպքում արվեստի գործի կամ նրա ձևի հասցեատիրոջ վկայակոչումը արդյունավետ չի լինի դրանց ճանաչման համար»⁴¹, այսինքն՝ արվեստի գործը չի հասցեագրվում որևէ մարդու կամ որևէ հանրության, այն հասցեագրվում է մարդու էությանը: Նույն կերպ արվեստի գործը չի հաղորդակցվում, այն չի ստեղծվում հաղորդակցության համար: «Միակ բանը, որ կարող է անել թարգմանիչը, բնագրի վերստեղծումն է, իր ստացած տեքստը հետ տալը: Այդ անելու համար նա ինքը պետք է դառնա գրող»: Փաստորեն այս հավաստմամբ նա առաջ է քաշում թարգմանիչ-արվեստագետի խնդիրը: Տրամաբանությունն այն է, որ թարգմանությունը ճշ է, կառուցվածք, որի օրենքները պետք է

⁴¹ Benjamin W., Tableaux parisiens de Baudelaire, Paris, 1923, Առաջաբան:

փնտրել բնագրի մեջ: Այսպիսով, Բենյամինը դուրս է գալիս հաղորդագրության կողմնակից լեզվաբանների և թարգմանության այն տեսաբանների դեմ, որոնց համար իմաստն առաջնային է, որը հարկ է պահպանել թարգմանության մեջ: Բնագիրը, ինչպես տեսնում ենք, վեր է դասվում թարգմանությունից: Որևէ ստեղծագործության կամ ստեղծագործությունների թարգմանելիությունը, հիրավի, առաջնակարգ է: Եթե թարգմանությունը ձև է, ուրեմն որոշ գործերի թարգմանելիությունը պետք է լինի էական⁴²:

Բենյամինի հաջորդ կանխադրությո՞ւր վերաբերում է թարգմանության և բնագրի հարաբերությանը: Դա հիմնականն է, հիմնարարը, քանի որ գոյություն ունի «բնական» փոխադարձ հարաբերակցություն բնագրի և նրա թարգմանության միջև: Դա կյանքի հարաբերակցությունն է ստեղծագործությունների վերապրման մեջ: Կարևոր է նշել, որ Բենյամինի համար բնական կյանքն այն կյանքն է, որը պատմությունից է գալիս և ոչ թե ինչ-որ գենետիկական սկզբունքից կամ ինչ-որ հոգու գաղափարից: Արվեստի մեծ գործերի պատմությունը սկիզբ է առնում իր ակունքներից սկսած, ձևավորվում է արվեստագետի ապրած ժամանակաշրջանում և պահպանվում հաջորդ սերունդների մեջ: Կյանքի պահպանումը հասնում է այն օրը, երբ արդեն փառքի մեջ ես: Թարգմանչին չի գալիս այդ գործի փառքը, ընդհակառակը, թարգմանությունը գոյություն ունի, քանի որ այն գոյատևել է, երբ ստեղծագործությունը հասել է իր փառքի գագաթնակետին: Բնագրի կյանքն է, որ ծավալվում է թարգմանության մեջ, ուշացած կերպով, մի բան, որ անժխտելի է, և դա է, որ արդարացնում է թարգմանությունը: Հետևաբար, թարգմանության հիմնական դերը միայն բնագրի հավերժացումը չէ, այլ մեկ այլ՝ ավելի բարձր մակարդակով, լեզուների միջև եղած ամենասերտ հարաբերության արտահայտումը: **Սա է բենյա-**

⁴² Benjamin W., *Œuvres I*, Paris, Gallimard, 2000, p. 220.

մինյան ելակետային դրույթը: Եվ լեզուների միջև այդ ամենասերտ հարաբերությունը առանձնահատուկ զուգադիպության հարաբերությունն է, որը նշանակում է, որ «լեզուները օտար չեն մինյանց, այլ a priori և պատմական բոլոր հարաբերությունների վերացարկման արդյունքում, նրանք ազգակից են», մի տեսակետ, որին համամիտ էր նաև Յակոբսոնը⁴³: Բենյամինը, գիտակցելով իր եզրակացության բարդությունը, առաջադրում է հետևյալ հարցը. քանի որ թարգմանությունը պետք է ցույց տա լեզուների միջև եղած ամենասերտ կապը, ուրեմն ինչու այն չպետք է հնարավորինս ամենայն ճշգրտությամբ փոխանցի բնագրի ձևը և իմաստը: Իրոք, բնագրի ձևը և իմաստը պետք է փոխանցվի շատ ավելի խոր կերպով, քան մակերեսային նմանությամբ, քանի որ պատճենավորման մեջ չէ, որ բնագիրը կկարողանա հարատևել: Այլ միտումներ կարող են առաջանալ: «Այնպես, ինչպես գրական մեծ գործերի արտահայտման եղանակն ու նշանակությունը ամբողջովին փոխակերպվում են դարերի ընթացքում, այդպես էլ փոխակերպվում է թարգմանչի մայրենի լեզուն»⁴⁴: Այսպես, ամենամեծ թարգմանությունն անհայտանալու միտում ունի, որը շատ կարևոր խնդիր է թարգմանիչների համար:

Իսկապես, ո՛չ թարգմանիչը, ո՛չ թարգմանությունն այստեղ առանձնացված չեն: Թարգմանությունը թույլ է տալիս բնագրին ապրել միաժամանակ, երբ ինքն էլ նրա վերապրուկն է: Նրա սեփական ձևն է,-ասում է Բենյամինը,- ցույց տալ հետագա խոսքի հասունացումը, իր խոսքի երկունքի ցավերը: Հետևաբար, լեզուների միջև ազգակցությունը չի ընկալվում նրանց նմանության մեջ, ոչ էլ պատմական կապի մեջ, այլ իրենց գերպատմական կապի մեջ, այն փաստի մեջ, որ լեզուները ուղղված են նույն նշանակետին, որ նրանցից ոչ

⁴³ Якобсон Р., *Часть и целое в языке*, М., Радуга, 1885, էջ 62.

⁴⁴ Benjamin W., *Œuvres I*, Paris, Gallimard, 2000, p. 244.

մեկը դրան, այսինքն՝ մաքուր լեզվին, չի կարող հասնել մեկուսացված:

Բենյամինի աշխատությունների մեջ կարելի է առանձնացնել երկու տեսական սկզբունք. Թարգմանությունը նախևառաջ «նշանային վերակոդավորում» է, որը թույլ է տալիս համատեղել «պատկերանշանն ու վերաբերյալը», և երկրորդ՝ «թարգմանությունը պոետական գործառույթ է, իրատեսություն, որի նպատակն է դիվահարել թարգմանչին»՝ նրան դարձնելով ուզուրպատոր, քանի որ հիբրիսը՝ հիվանգին՝ ինքնասիրությունը, նրան բերելու է բնագրերի ստեղծմանը՝ նոր թարգմանությունների համար:

Ըստ նրա՝ երբ ասում ենք, որ որոշ ստեղծագործություններ իրենց էությամբ թարգմանելի են, դա նշանակում է, որ թարգմանությունը ոչ թե էական է այդ գործերի համար, այլ, որ թարգմանելիությունն արտահայտում է մի որոշակի նշանակություն՝ բնորոշ բնագրերին: Ինչ խոսք, որքան էլ որ թարգմանությունը լավը լինի, չի կարող երբեք փոխարինել բնագրին: Բայց և այնպես, բնագրի թարգմանելիության շնորհիվ թարգմանությունը նրա հետ սերտ կապի մեջ է: Ըստ Բենյամինի՝ այդ հարաբերակցությունն այնքան խոր է, որ բնագիրն ինքն այլևս կորցնում է իր նշանակությունը: Այդ փոխադարձ կապը Բենյամինն անվանում է «բնական, ավելի ճիշտ՝ կենսական փոխազդեցություն»: Այնպես, ինչպես կյանքի դրսևորումները ոչինչ չնշանակելով ապրողի համար, նրա հետ կապված են ամենասերտ կապերով, այդպես էլ թարգմանությունը ծագում է բնագրից: Ըստ նրա՝ քանի որ թարգմանությունը հայտնվում է բնագրից հետո և կարևոր է ստեղծագործությունների համար, որոնք երբեք չեն գտնում իրենց թարգմանչին ծննդյան պահին, այն բնորոշում է նրանց գոյատևումը: Արվեստի մեծագույն գործերի պատմության մեջ հայտնի է այդ գործերի ազգակցական կապը աղբյուրների հետ, դրանց ստեղծումը արվեստագետի կենդանության օրոք և նրանց գոյատևման ժամանակաշրջանում, հավեր-

ժական՝ հաջորդ սերունդների համար: Թարգմանություններն արվում են այն ժամանակ, երբ ստեղծագործությունն արժանացել է փառքի: Հետևաբար, թարգմանություններն իրենց գոյությամբ պարտական են այդ փառքին, և այլևս իրենց չեն ծառայում, չնայած վատ թարգմանիչները հրապարակավ պահանջում են փառքի իրենց բաժինը: Հենց սա էլ պատճառ է, որ գործի դրվեն թարգմանության գնահատման առաջարկվող չափանիշները՝ օբյեկտիվորեն որոշելու թարգմանության լավ կամ վատ լինելը:

Կենսական բոլոր երևույթները, որոնք ունեն վերջնական նպատակ, ի վերջո, ծառայում են իրենց էության և նշանակության արտահայտմանը: Այդպես, թարգմանության վերջնական նպատակն է արտահայտել լեզուների մեջ եղած ամենասերտ կապը: «Թարգմանությունը չի կարող երևան հանել, ստեղծել այդ կապը, սակայն կարող է այն ներկայացնել սաղմնային վիճակում կամ ուժգնորեն: Եվ իր ստեղծագործության սաղմնային վիճակի՝ նշանակյալի այդ գործառույթը ներկայացման ամբողջովին յուրահատուկ մի եղանակ է, որը չունի համարժեք ոչ-լեզվական կյանքի ասպարեզում: Քանի որ կյանքում գոյություն ունեցող բազում համանման կապերի, հարաբերությունների մեջ թարգմանությունն է, որ գերազանցող է, բոլորից առաջ վազողը, ավետողը»: Այն ենթադրում է, որ լեզուների մեջ գոյություն ունեցող կապը նախասկզբնական զուգամիտություն է, որ լեզուները օտար չեն միմյանց, այլ ի սկզբանե ազգակից՝ վերացարկված բոլոր տեսակի պատմական կապերից:

Նման բացատրությունը թվում է մեզ կրկին հանգեցնելու է թարգմանության ավանդական տեսությանը: Եթե թարգմանություններում պետք է վկայակոչվի լեզուների միջև եղած ազգակցությունը, ինչպե՞ս կարող է իրականանալ բնագրի ձևի և իմաստի հնարավոր ճշգրիտ փոխանցումը: Հիրավի, հենվելով ճշգրտության հայեցակարգին, թարգմանության տեսությունը գրեթե անկարող կլինի արտահայտվել, զատել

հիմնականը թարգմանություններում: Իրականում լեզուների ազգակցությունը կարող է ապացուցվել շատ ավելի խոր և որոշակորեն, քան եթե հենվենք երկու գրական երկերի մակերեսային անորոշ նմանության վրա: Օբյեկտիվության մասին խոսք լինել չի կարող, եթե թարգմանության վերջնական նպատակը լիներ բնագրին նմանվելը, որովհետև ժամանակի ընթացքում այն ձևափոխվում է, անգամ ամենալավ սահմանված բառերը շարունակ «հասունանում» են: Այն, ինչ հեղինակի ժամանակներում կարող էր լինել գրական լեզվի միտումներից մեկը, այժմ կարող է սպառված լինել: Այն, ինչ ուներ թարմ արձագանքներ, հետագայում կարող է հնացած թվալ, այն, ինչ կիրառական նշանակություն ուներ, կարող է ձեռք բերել հնամենի հնչողություն: Փնտրել նման մուտացիաների իմաստային հաստատուն փոփոխության հիմքը իրար հաջորդող սերունդների սուբյեկտիվության մեջ, կնշանակի անտեսել իրերի պատճառահետևանքային կապը: Քանի որ այնպես, ինչպես գրական մեծ գործերի հնչողությունն ու նշանակությունը ամբողջովին փոխվում են դարերի ընթացքում, այդպես էլ թարգմանչի մայրենի լեզուն անընդհատ փոխվում է: Դեռ ավելին, եթե գրողի խոսքը շարունակում է ապրել իր սեփական լեզվում, ապա գրական ամենամեծ թարգմանության ճակատագիրն է ամբողջություն դառնալ իր սեփական լեզվի զարգացման հետ և կործանվել, երբ այդ լեզուն բարեփոխվում է, թարմանում նորովի:

Եթե մինչև այժմ թարգմանության խնդիրը դրվում էր գլխավորապես երկակիության եզրույթներով, երբ կողմնորոշվում էին դեպի աղբյուր լեզուն և ուրեմն, թարգմանում էին բառացիորեն կամ գնում դեպի թիրախ լեզուն, ապա Բենյամինը հեռացնում է այդ հակադրությունը՝ տեսականորեն հիմնավորելով թարգմանչի ազատությունը, որը հեղաշրջում է թարգմանական միտքը: Ըստ նրա՝ թարգմանությունը, այսպես ասած, ժամանակավոր ձև է չափելու օտար լեզուների ազդեցությունը մեկը մյուսի վրա: Այդ օտարությունը, թող որ

լինի ավելի ժամանակավոր և անցողիկ, թող որ լինի վայրկե-
նական և վերջնական, մերժված է մարդկանց համար, կամ
առնվազն, նրան չեն կարող հասնել ներկա պահին: Թարգմա-
նությունը դեռ չի կարող հավակնել իր գործերի տևականու-
թյանը, չունենալով նմանություն արվեստի հետ: Այսու-
հանդերձ, այն չի հրաժարվում իր ուժերը ուղղել դեպի վերջ-
նական ու վճռորոշ, բառային ամեն տեսակի կառույցների
աստիճանափուլը: Թարգմանության մեջ է աճում բնագիրը և
բարձրանում լեզվական ավելի բարձր ու զտված մթնոլորտ:
Այստեղ է, որ թարգմանելն ավելին է նշանակում՝ հաղորդա-
կցել: Որովհետև միշտ մնում է այն անհասանելին, որի վրա
աշխատում է իսկական թարգմանիչը, և որը անփոխանցելի
է, քանզի լեզվի մեջ բովանդակության արտահայտումները
լրիվ տարբեր են բնագրում և թարգմանության մեջ: «Հիրավի,
եթե բնագրում բովանդակությունն ու լեզվական ձևը որոշա-
կի միասնություն են կազմում, ինչպես պտուղն ու կեղևը,
ապա թարգմանության լեզուն իր բովանդակությունը կրում է
ինչպես լայն ծալքերով մի արքայական պատմուճան»⁴⁵:

Ըստ գերմանացի գիտնականի տեսության՝ թարգմա-
նությունը չպետք է համահունչ լինի հանրային ճաշակին, ոչ
էլ իմաստին, այն պետք է արտահայտի լեզուների միջև եղած
ամենասերտ ու խորքային կապը: Եթե թարգմանչի պարտքը
համարժեք է ինչ-որ բան «վերադարձնելուն», միակ բանը, որ
նա կարող է վերադարձնել, իմաստն է՝ «անհական բովան-
դակության ոչ ճշգրիտ փոխանցումը»:

Բենյամինը տարբերակում է ստեղծագործության թի-
րախը և թիրախի գործելակերպը: Լեզուները նույն նշանա-
կետն են ունենում, որը և տարբերում է նրանց նշանակետա-
յին եղանակը: Այսպես է, որ թույլ տալով իմաստային փո-
խանցումը, լեզուները լրացնում են միմյանց: Յուրաքանչյուր
թարգմանություն ձգտում է ներդաշնակ կապ հաստատել

⁴⁵ Benjamin W., Œuvres I, Paris, Gallimard, 2000, p. 224.

լեզուների միջև: Դեռ ավելին, յուրաքանչյուր թարգմանություն ինքն է կռում իր սեփական համարժեքները: Վալտեր Բենյամինը պատկերավոր է արտահայտվել այդ առիթով. «Թարգմանությունը երկու մեռած լեզուների անիմաստ հավասարությունը չէ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել օտար խոսքի հետմահու հասունացմանը և իր սեփական խոսքի երկունքի ցավերին»⁴⁶:

Հատկապես արժեքավոր է Վալտեր Բենյամինի՝ *ամուրայի* գաղափարը, որ նա մտցրեց 1931թ. իր «Լուսանկարչության փոքրիկ պատմություն էսսեում»՝ բնորոշելու համար արվեստի գործի առանձնահատկությունը, որը բացառիկ է և կապված է կոնկրետ վայրի հետ և ամրագրվում է պատմության մեջ: Նա աուրան բնորոշում է որպես «հեռավորի միակ տեսիլք», որքան էլ այն հեռու լինի: Իր միտքը պարզաբանելու համար նա բերում է ամառային մի օր լեռնաշղթայով հիացող դիտորդի օրինակը: Զգացողությունը, որ նա ունենում է մի ճշգրիտ պահի, չի կարող վերարտադրվել, քանի որ անհնար է վերարտադրել այդ վայրկյանը: Արվեստի գործի անընկալելիությունը նրա համար բացատրվում է մոգական, իսկ ավելի ուշ՝ նաև կրոնական ծեսերի սկզբնարմատներով: Ծիսական այդ սկզբնաղբյուրների վերջին հետքերը տեսանելի են «արվեստ արվեստի համար» շարժման մեջ:

Սակայն տեխնիկական վերարտադրության վերելքը հանգեցրեց աուրայի կորստին, որովհետև բնօրինակի պատճենումը ինքնիշխանություն է ձեռք բերում այն առումով, որ ստեղծագործությունը դրվում է նոր համատեքստի մեջ, որով հնարավոր է դառնում փոխել տեսանկյունը, կատարել ավելացումներ: Դեռ ավելին, պատճենը գնում է դեպի դիտորդը, հասանելի դառնում նոր իրավիճակներում և դուրս գալիս պատմական և տարածքային ցանկացած համատեքստից: Այսպիսով, արվեստի գործը դառնում է առևտրական գոր-

⁴⁶ Benjamin W., Ibid.

ծարքի առարկա: Այսօր Վալտեր Բենյամինի գրվածքները օգտագործվում են նրանց կողմից, ովքեր ուսումնասիրում են ժողովրդական մշակույթը: Նա դրական դեր է հատկացնում զանգվածային մշակույթին և այն չի վերածում կեղծ գիտակցության մաքուր արտադրանքի:

Պակաս արժեքավոր չէ նաև Բենյամինի *պատմության հասկացույթը*: «Պատմության հասկացույթի մասին» գրառումները նրա մտքերի բարձրագույն կետն են, անշուշտ, քննադատությունը ժամանակի հասկացույթի, որը հայտնի է որպես շարունակական և գծային հասկացույթ: Քանի որ աստվածաբանությունն ունի ժամանակային անվերջությունն ընդհատելու հնարավորությունը և անհրաժեշտությունը: «Հիմա»-ն Վերջին Դատաստանը չէ, և չպետք է սպասել մահին՝ ժամանակի նոր գաղափարին հասնելու համար: Բազում սերունդների փորձը և պրակտիկան իրենց գործունեությամբ հիշեցնում են անցյալը և ավանդույթներում ինչ-որ կերպ հավաստում «ներկա»-ն⁴⁷:

Բենյամինը զարգացնում է լեզվի մի փիլիսոփայություն, որը «միատիկական» գործառույթներ ունի: Նրա կարծիքով քննադատության մեջ է թարգմանիչը գտնում իր առաքելությունը՝ ազատագրել ստեղծագործության մեջ գերված մաքուր լեզուն: Բառը ընդունակ է առաջնորդել առ աստվածայինը, երբ արտահայտված է իր ամենամաքուր բնույթով: Այսպիսով, բանաստեղծի կամ ընդհանրապես գրողի խոսքը իրերն անվանում է իրենց ողջ ճշմարտացիությամբ: Բենյամինի տեսությունը ներշնչված է Գյոթեի, Հյոլդերլինի գերմանական ռոմանտիզմով, ինչպես նաև հրեական ավանդույթներով. «Լեզուն պարզապես մարդու ոգեղեն էությունն է»⁴⁸:

⁴⁷ Benjamin W., *Œuvres III*, Paris, Gallimard, 2000, p. 189.

⁴⁸ Benjamin W., *Œuvres III*, Paris, Gallimard, 2000, p. 129.

Накобян Анна – The Task of the Translator: Walter Benjamin. – According to the W. Benjamin, one does not translate for somebody, a text starts with the denial of addressee. The work of art is not intended for the society but for the human essence. If the translator's task is to return something then he can only hand back the meaning – “the incorrect transmission of the insignificant content”. Translator's mission is to “emancipate the lucid language enslaved in the writing”. Benjamin emphasizes the significance of such concepts as aura and time, the broadcast of new meaning to the narrative.

Акопян Анна – Задача переводчика: Вальтер Беньямин. – По мнению В. Беньямина, нельзя переводить для кого-то, текст начинается с отрицания адресата. Произведение искусства не предназначено для общества, а для человеческой сущности. Если задача переводчика – вернуть что-то, он может вернуть только значение – «неправильная передача незначимого смысла». Миссия переводчика «освободить чистый язык поработенный в произведении». Беньямин подчеркивает значение концептов ауры и времени, придание нового смысла нарративу.

Հակոբյան Ֆրիդա (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ՀԱՅԵՐԵՆԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՄԻ
ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ**

Քսաներորդ դարի երկրորդ կեսին ստեղծված լեզաբանական ուղղությունների թվում առանձնանում է *կորպուսալին լեզվաբանությունը*¹՝ որպես խոսքային օրինակների միջոցով լեզվական իրողությունների ուսումնասիրության հետաքրքիր և ինքնատիպ եղանակ:

Կորպուսային լեզվաբանության բնագավառում ձեռք բերված մեծ հաջողությունները հիմնականում պայմանավորված են լեզվաբանության մեջ տեսական ու կիրառական տարբեր նպատակներով համակարգչային տեխնիկայի լայն գործածությամբ և այնպիսի ծրագրերի ստեղծմամբ, որոնց միջոցով ուսումնասիրվում ու ներկայացվում է լեզուն:

Ընդհանուր առմամբ՝ կորպուսային լեզվաբանությունը զբաղվում է լեզվական կորպուսների՝ մեծ, ներկայացուցչական, սահմանափակ ծավալ ունեցող և էլեկտրոնային եղանակով հասանելի հենքերի կազմությամբ: Լեզվական կորպուսների միջոցով փորձ է արվում ուսումնասիրել լեզուն՝ իր տարբեր դրսևորումներով և բովանդակային հարստությամբ:

Հայ լեզվաբանության մեջ լեզվական կորպուս ստեղծելու ուղղությամբ տարվող աշխատանքները սահմանափակվել են միայն արևելահայերենի ազգային կորպուսի՝ ԱՐԵՎԱԿ-ի¹ ստեղծմամբ, որը բավարար չէ թե՛ որակական առումով, թե՛ ընդգրկման ծավալով:

Քանի որ լեզվական ցանկացած իրողության համաժամանակյա և տարածամանակյա լիարժեք քննությունը

¹ http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am:

հնարավոր է կատարել միայն համապատասխան կորպուսի առակայության դեպքում, էսպես կարևորվում է հայերենի նոր՝ *ընդհանրական կորպուսի* կազմությունը, որի հիմքում ընկած կլինեն համաշխարհային կորպուսային լեզվաբանության արդի փորձն ու հայերենի լեզվական առաձնահատկությունները: Մեր նպատակներից դուրս համարելով կորպուսի կազմության սկզբունքների լեզվաբանական և ծրագրային կողմի հանգամանակից ներկայացումը՝ կխոսենք միայն դրա կառուցման ուրվագծի մասին՝ առանձնացնելով կիրառության հիմնական ոլորտները:

Եթե լեզվական կորպուս ասելով հասկանում ենք տարբեր բնույթի տեքստերի ամբողջական հավաքածու, ապա պայմանականորեն մեկից ավելի տեքստերի ցանկացած ժողովածու կարող է կորպուս համարվել: Մակայն կան ընդհանրական մի շարք հատկանիշներ, որոնցով բնութագրվում են տեքստային հենքերն ընդհանրապես: Այդ հատկանիշներից ամենահիմնականն ու թերևս գլխավորն այն է, որ տեքստային հենքում եղած տեքստերի միջոցով պետք է ներկայացվի լեզուն: Հետևաբար, կորպուսը պետք է կազմել այնպես, որ, դրանում եղած տեքստերն ուսումնասիրելով, հետազոտողը ստանա լեզվական ցանկացած իրողության ամբողջական պատկերը: Հենքում եղած տեքստերը սկզբունքորեն կարելի է ուսումնասիրել երկու եղանակով: Առաջին դեպքում կարող ենք քննել բոլոր տեքստերը մեկ առ մեկ: Միանգամից նկատենք, որ այս սկզբունքը գործնականում կիրառելի չէ, որովհետև մեծ ցանկության դեպքում անգամ կարելի է միայն մեռած լեզուների տեքստային բոլոր օրինակները քննել, իսկ կենդանի լեզվում տեքստերն անթիվ են: Նաև որևէ կերպ հնարավոր չէ կազմել տեքստային ամբողջական հենք. մի կողմից՝ կարող են դուրս մնալ հազվադեպ գործածվող օրինակները, մյուս կողմից՝ ուշադրությունը բևեռելով միայն սակավ գործածական օրինակների վրա՝ կարող են չընդգրկվել նույնիսկ հաճախադեպ լեզվական օրինակները:

Ստացվում է այնպես, որ մենք ամեն դեպքում կարող ենք քննել միայն սահմանափակ թվով տեքստային օրինակներ, ուստի նոր կորպուսում տեքստերի ընդգրկման տեսակետից պետք է կարևորել ոչ թե դրանց քանակական շատությունը, այլ տարաբնույթ լինելն ու լեզվական հնարավորինս մեծ թվով տարբեր օրինակներ ներկայացնելը: Հետևաբար, ընդհանրական կորպուսի ամենաբնութագրական ու կարևոր հատկանիշը պետք է դարձնել ներկայացուցչականությունը:

Մյուս կարևոր հատկանիշը, որով լեզվական կորպուսը տարբերվում է այլ բնույթի տեքստային հենքերից, պիտակավորումն է, որը էական նշանակություն ունի յուրաքանչյուր կորպուսի օգտակարության հարցում: Այն համապատասխան պիտակների կցումն է բառային յուրաքանչյուր միավորի: Ընդհանրապես լեզվի կառուցվածքային տարբեր միավորների համար, ըստ լեզվական ուսումնասիրությունների նպատակի, կան պիտակավորման տարբեր տեսակներ՝ հնչյունական, բառագիտական, քերականական (ձևաբանական և շարահյուսական): Կարծում ենք՝ հայերենի ընդհանրական կորպուսի պիտակավորման համակարգը լիքաժեք դարձնելու համար նպատակահարմար է օգտագործել ինչպես հնչյունական, բառագիտական, այնպես էլ քերականական պիտակավորումը: ԱՐԵՎԱԿ-ում, օրինակ, կիրառվում են միայն ձևաբանական պիտակներ, որոնք, ըստ կորպուսի հեղինակների, արտահայտում են հայերենի խոսքի մասերի քերականական բոլոր կարգերը: Հարկ է ընդգծել, սակայն, որ առանձնացվող քերականական կարգերը երբեմն չեն համապատասխանում նորմատիվ քերականությանը: Օրինակ՝ առանձին խոսքի մաս է համարվում նախդիրը, առանձնացվում է վեց հոլով. սեռականն ու տրականը համարվում են առանձին հոլովներ, իսկ հայցականը ուղղականից չի առանձնացվում: Ածականի համեմատության աստիճանները համարվում են քերականական կարգ, ընդ որում՝ առանձնացվում է միայն գերադրական աստիճանը, բաղդատակա-

նը՝ ոչ: Բայի եղանակներից ներկայացվում են միայն երեքը՝ ըղձական, ենթակայական (sic), հրամայական: Ենթակայական եղանակն առանձնացնելիս հեղինակները հավանաբար նկատի են ունեցել ենթադրականը: Իբրև քերականական կարգ է առանձնացվել գոյականացումը՝ իր գոյականացված, անորոշ դերբայ, հարաբերական գոյական տեսակներով՝ նկատի ունենալով այլ խոսքի մասերի գոյականաբար գործածությունը²:

Ի տարբերություն ԱՐԵՎԱԿ-ի, որն աստիճանաբար պատմական կորպուս է դառնում, քանզի դրանում ներկայացված են XIX դարի երկրորդ կեսից մինչև 2009թ. կազմված տեքստերը, նպատակահարմար է, որ ընդհանրական կորպուսն արտացոլի առավել ընդգրկուն ժամանակաշրջան՝ ներառելով հայերենի պատմական զարգացման տարբեր շրջաններում գրաբարով, միջին հայերենով, ինչպես նաև արևելահայերենով ու արևմտահայերենով ստեղծված տեքստեր: Անշուշտ, սա էլ իր բարդությունները կունենա, քանի որ գործնականում գուցե հնարավոր չլինի այդ ծավալի ծրագրային բազա ստեղծել: Դրա համար կարելի է կորպուսում ներառվելիք տեքստերը կատարել ընտրողաբար՝ ըստ նախօրոք մշակված սկզբունքների՝ տեքստերի բազմաքանակության փոխարեն առավել կարևորելով լեզվական հնարավորինս բազմաբնույթ օրինակներ ներկայացնելը:

Ըստ այդմ՝ այն կբաժանվի ենթակորպուսների՝ ըստ հայերենի պատմական զարգացման տարբեր շրջաններն ընդգրկող տեքստերի: Կունենանք գրաբարի, միջին հայերենի, արևելահայերենի ու արևմտահայերենի, ինչպես նաև խոսակցական լեզվի ենթակորպուսներ: Տարբերվելով օտարալեզու մյուս կորպուսներից՝ այն իրավամբ կարող է համարվել միաժամանակ թե՛ պատմական և թե՛ զուգադրական կոր-

²[http://www.eanc.net/EANC/search/frame_parts/gramsel.php?interface_language=am&search_language=armenian1&contexts_output_language=armenian1:](http://www.eanc.net/EANC/search/frame_parts/gramsel.php?interface_language=am&search_language=armenian1&contexts_output_language=armenian1)

պուս: Լեզվում կատարվող ամենավերջին փոփոխություններին հաղորդակից դառնալու համար կարևոր է կորպուսի շարունակական հարստացումը նորանոր տեքստերով՝ հասնելով նրան, որ այն վերածվի այսպես կոչված մոնիտորային կորպուսի, այսինքն՝ մեքենական եղանակով հարստացվի համացանցային զանազան աղբյուրներից: Ի դեպ՝ մոնիտորային կորպուսների ստեղծման նախադեպեր կան: Օրինակ՝ Բիրմինգհեմի համալսարանում Ջոն Մինքլերը ձեռնամուխ է եղել COBUILD կոչվող մոնիտորային կորպուսի ստեղծմանը: Սա, նրա կարծիքով, տեքստերի անվերջ բազմություն է, որովհետև կարելի է շարունակ մեծ թվով տեքստեր ավելացնել՝ մեծացնելով տեքստային հենքի ծավալը:

Հայերենի ընդհանրական կորպուսի կազմությունը բավական բարդ և աշխատատար գործընթաց է, որը պահանջում է լեզվաբանների և ծրագրավորողների սերտ համագործակցություն, սակայն այն ինքնանպատակ չէ, քանի որ կունենա ինչպես տեսական-լեզվաբանական, այնպես էլ գործնական-կիրառական հսկայական նշանակություն՝ փաստական հարուստ նյութ ապահովելով լեզվաբանների համար:

Կորպուսի օգտակարության համար կարևոր է հետազոտողների առաջ բացել այն հեռանկարները, որ կունենա այս կորպուսը, որովհետև նույնիսկ հիմա, երբ տեքստային հենքի և որոնողական ծրագրի միջոցով կարելի է հարյուրավոր օրինակներ գտնել հաշված վայրկյանների ընթացքում, շատ հետազոտողներ չեն հրաժարվում օրինակները քարտագրելուց, համակարգիչ մուտքագրելուց:

Ընդհանրական այսպիսի կորպուսը նախևառաջ հրաշալի հնարավորություն կնձեռի լեզվի պատմության մասնագետներին *պատմական զարգացման ընթացքում հայերենի կրած փոփոխություններն ուսումնասիրելու համար*: Օրինակ՝ Հելսինկիյի կորպուսում նախդիրների գործածության հաճախականությունը անզլերենի զարգացման տարբեր շրջաններում ուսումնասիրելիս պարզվել է, որ ամենահա-

ճախ գործածվող նախադիրները by-ը և of-ն են, որոնք հավասար գործածություն են ունեցել մինչև տասնհինգերորդ դարը. դրանից հետո by նախադիրը երեք, իսկ մինչև 1640 թվականը՝ ութ անգամ ավելի հաճախ է գործածվել, քան of-ը³:

Կորպուսը օգտակար փաստական նյութ կապահովի նաև գրական արևելահայերենի ու արևմտահայերենի հարցերով հետաքրքրվողների համար: Եթե շարունակաբար հարստացվի նաև արևմտահայերենի ենթակորպուսը, այդ կերպ հնարավոր կլինի կատարել լեզվական երևույթների զուգադրական քննություն տեքստային մեծաթիվ օրինակներով: Զուգադրական այդպիսի կորպուսները հաջողությամբ կիրառվում են, օրինակ, ամերիկյան և բրիտանական անգլերենների ուսումնասիրության ժամանակ: Այսպես՝ օգտագործելով ամերիկյան անգլերենի Brown և բրիտանական անգլերենի LOB տեքստային հենքերը՝ փորձ է արվել ուսումնասիրել արական և իգական սեռերի ներկայացուցիչներին տրվող անուններին փոխարինող դերանունների գործածությունը: Պարզվել է, որ արական սեռի ներկայացուցիչներին անվանող բառերն ավելի հաճախ են գործածվում լեզվում, քան իգական սեռի ներկայացուցիչներին տրվող անունները, ընդ որում՝ իգական սեռի անունները գործածության տեսակետից ավելի հաճախադեպ են բրիտանական, քան ամերիկյան անգլերենում:

Զուգադրական կորպուսներում կատարված ուսումնասիրություններով փորձ է արվել նաև բացահայտել քերականական մի շարք իրողություններ: Օրինակ՝ քանի որ կանայք, տղամադկանց համեմատությամբ, ավելի շատ հանդես են գալիս որպես գործողության կրող, իսկ տղամարդիկ՝ գործող անձ, արական սեռի ներկայացուցիչների անունները նախադասության մեջ ավելի շատ հանդես են գալիս որպես

³ <http://www.helsinki.fi/varieng/CoRD/corpora/HelsinkiCorpus/>:

ենթակա, իգական սեռի ներկայացուցիչներին՝ որպես ուղիղ խնդիր:

Արևելահայերեն-արևմտահայերեն գուգադրական կորպուսի ստեղծման կարևորությունն ավելի է ընդծվում հայերենի այս երկու ճյուղերի մերձեցման ուղիների որոնման համատեքստում:

Պետք է կարևորել նաև խոսակցական ենթակորպուսի ստեղծումն ու հետագա հարստացումը տեսաձայնագրված հոլովակներով: Հատկապես հիմա, երբ հնարավոր է տեսա-հոլովակում հնչած բանավոր խոսքը վերածել տեքստի, հեշտությամբ կարելի է տեսնել, թե ինչ տարբերություններ կան գրական և խոսակցական լեզուների միջև, հասարակության տարբեր անդամները, ըստ իրավիճակի, լեզվական ինչ միջոցներ են ընտրում հաղորդակցվելու համար, և առհասարակ խոսակցական լեզուն զարգացման ինչ միտումներ ունի:

Հայերենի ընդհանրական կորպուսը՝ իր տեքստային սահմանափակ օրինակներով, պետք է ոչ միայն ներկայացնի լեզվական կառուցվածքը, հասանելի լինի էլեկտրոնային եղանակով, այլև ունենա ծրագրային ապահովման ամբողջական համակարգ, քանզի կորպուսի օգտակարությունն առավելապես պայմանավորված է համակազային համապատասխան ծրագրերի առկայությամբ: Շնորհիվ կորպուսում համակարգչային ծրագրերի կիառության՝ լեզվական այն աշխատանքները, որոնց կատարման համար նախկինում երկար ժամանակ էր պահանջվում, հնարավոր կլինի իրականացնել շատ արագ: Այդ ծրագրերը կկիրառվեն տեքստային հենքում եղած լեզվական օրինակներն ամենայն ճշգրտությամբ և մեծ արագությամբ որոնելու, միայնաց հետ համեմատելու, ըստ տարբեր հատկանիշների՝ դասակարգելու համար:

Ի վերջո, պետք է հասնել տեքստի ավտոմատ մշակմանն էապես նպաստող այնպիսի ծրագրերի ստեղծմանը, որոնց միջոցով կորպուսում եղած յուրաքանչյուր տեքստ

կվերածվի նախադասությունների, նախադասությունները՝ բառակապակցությունների, բառակապակցությունները՝ բառաձևերի, բառաձևերը՝ բառերի, վերջիններիս կազմում էլ կառանձնացվեն բառի հիմնական և երկրորդական ձևայինները: Մեքենական եղանակով տեքստի՝ որպես լեզվական խոշոր միավորի աստիճանական տրոհման միջոցով կհանգենք լեզվի իմաստային նվազագույն միավորին՝ ձևային: Տեքստի ավտոմատ մշակման այսպիսի համակարգը կարող է հաջողությամբ ծառայել լեզվի մակարդակային բոլոր միավորների քննությանը՝ ավտոմատացնելով կիրառական այնպիսի բնագավառներում տարվող աշխատանքներ, ինչպիսիք են բնագրային համաբարբառների կազմումը, բառարանները նոր բառերով համալրելը և այլն:

ԱՐԵՎԱԿ-ի համեմատությամբ ունենալով ձևային և բովանդակային նկատելի տարբերություններ և շահեկանորեն տարբերվելով օտարալեզու հեղինակավոր կորպուսներից՝ հայերենի ընդհանրական կորպուսը որակական նոր մակարդակի կհասցնի հայոց լեզվի լիակատար և առավել ամբողջական ուսումնասիրությունը:

Hakobyan Frida – The Principles of Creating an Armenian General Corpus.– The purpose of the article is to present a brief description of the linguistic and programming aspects of the principles of the Armenian general corpus. Special attention has been paid to features such as representativeness, tagging and software. The spheres where the newly compiled corpus can be successfully applied are also highlighted. It is emphasised that having differences in comparison with EANC and beneficially distinguishing from authoritative foreign-language corpuses the general corpus will lead the new and complete study of Armenian into a qualitatively new level.

Акопян Фрида – Принципы составления всеобщего корпуса армянского языка.– Цель статьи представить краткое описание языковых и программных аспектов принципов армян-

ского общего корпуса. Особое внимание было уделено таким особенностям, как репрезентативность, маркировка и программное обеспечение. Выделены также сферы, в которых можно с успехом применить новый корпус. Подчеркивается, что отличие корпуса от ВАНК и авторитетных иноязычных корпусов общий корпус армянского языка будет способствовать его более полному изучению на качественно новом уровне.

Հարությունյան Քնար
(Հայաստան, Մատենադարան)

ԳՐԱԲԱՐԻ ԵՌԱԲԱՂԱԴՐԻՉ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԸ

Գրաբարի դարձվածային հարստությունը մինչ օրս ներկայացնում է բավականաչափ չուսումնասիրված մի դաշտ՝ հակառակ գրաբարյան մատենագրության մեջ ունեցած ոճական մեծ դերի և այն կարևոր տեսական հանգամանքի, որ դարձվածքները համարվում են յուրաքանչյուր ազգի լեզվամտածողությունը լավագույնս արտահայտող լեզվական միջոցներ: Մեր աշխատանքն ուղղված է այդ բացը մասամբ լրացնելուն, քանի որ քննում ենք գրաբարի միայն եռաբաղադրիչ դարձվածքները՝ ըստ կառուցվածքային կաղապարների, իմաստային խմբերի և գրաբարյան դարձվածաբանության մեջ ունեցած դիրքի:

Աշխատանքը կատարել ենք ըստ Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձվածաբանական բառարան»-ի (Երևան, 2012) տվյալների՝ լրացումներ կատարելով Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկական բառարանում չվկայված բառեր» (Երևան, 2010) բառարանից:

Մինչ բուն քննությունը ներկայացնելը պարզենք, թե ընդհանրապես հայերենի դարձվածքների քննության ժամանակ որքանով են կարևորվել բաղադրիչները, դարձվածքների կառուցվածքային քննության ինչ սկզբունքներ ու դասակարգումներ կան, և արդյո՞ք դրանք կիրառելի են գրաբարի դարձվածքների քննության դեպքում:

Սկզբնապես հայերենի դարձվածքների քննությունը ընթացել է դարձվածքի սահմանման սկզբունքների որոշման, իմաստային խմբերի տարբերակման և ընդհանրապես իմաստային դաշտի տարբեր հարցերի լուծման ուղղությամբ:

Դարձվածքների կառուցվածքային հարցերը սկսել են ուշադրության արժանանալ շատ ավելի ուշ:

Այսպես Ա. Մուրվայանը «Հայոց լեզվի բառային կազմը» (1955) և «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն» (1959) ուսումնասիրություններում, որոնք համարվում են հայերենի դարձվածքների համեմատաբար ծավալուն առաջին ուսումնասիրությունները¹ կառուցվածքային քննություն չի կատարում: Թեև վերջինում դարձվածքների՝ իր առանձնացրած խմբերի տեսակները թվարկելիս առանց որևէ հստակ սկզբունքի, մասնակի կերպով Ա. Մուրվայանը անդրադառնում է նաև կառուցվածքին, բայց նա չի տարրորշում դարձվածքի կառուցվածքը, իմաստային որևէ խմբին պատկանելը և ոճական երանգը. այսպես, առանձնացնում է 1. ա. հնացած կամ բարբառային բաղադրիչներով, բ. առանձին անգործածական բառարմատներով, 2. առաջին բաղադրամաս անունով կամ ետադրությամբ (սա էլ իր հերթին մի քանի խմբով է ներկայացնում), 3. քերականական հին քարացած ձևեր պարունակող, 4. առավելապես խոսակցական լեզվի կնիք պարունակող դարձվածային արտահայտություններ և այլն²:

Ա. Մուքիասյանը նույնպես «Ժամանակակից հայոց լեզու» (2004) աշխատության «Դարձվածաբանություն» բաժնում նման քննություն չի կատարում և անգամ երկբաղադրիչ, եռբաղադրիչ, քառաբաղադրիչ եզրեր չի կիրառում: Ե. Գևորգյանը «Հայերենի դարձվածքները» ուսումնասիրության մեջ բավարարվում է միայն նկատելով, որ «հայերենում Դարձվածքները բաղկացած են լինում սովորաբար 2-ից մինչև 6, իսկ սակավ դեպքերում՝ նաև 7 բաղադրիչներից»³ և բերում համապատասխան օրինակներ:

¹ Տե՛ս **Խ. Բաղիկյան**, *Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները*, Ե., 1986, էջ 31:

² **Ա. Մուրվայան**, *Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն*, Ե. 1959, էջ 31-41, 44-45:

³ **Ե. Գևորգյան**, *Հայերենի դարձվածքները*, Ե., 1969, էջ 23-25:

Սա, անշուշտ, ունի իր պատճառները. նախ, դարձվածքների սահմանման և բնութագրման համար առաջին հերթին կարևոր է նրանց իմաստային կողմը, և ապա, ռուսերենի դարձվածաբանության տեսական քննություններում, որոնց սկզբնապես մեծապես հետևում էին հայ լեզվաբանները, կտրականապես մերժվում էր դարձվածային միավորների կաղապարների գոյությունը, հետևաբար և այդ ուղղությամբ ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այս մասին նշում է Պ. Բեդիրյանը և մեջ բերում Վ. Ի. Արխանգելսկուն, որը գտնում է, թե դարձվածքների մարզում ստեղծիչ կաղապարները չեն գործում, ուստի կաղապարման մեթոդը դարձվածաբանության ուսումնասիրման համար քիչ է պիտանի⁴: Բայց, անկախ այդ տեսակետից, արդեն Պ. Բեդիրյանը, դարձվածքներին նվիրված իր աշխատություններում կատարում է կառուցվածքային քննություն՝ տարբերակելով ու դարձվածքների համար կիրառելով՝ «կառուցվածքային տիպ», «մանրակաղապար» եզրերը: Բայց այդ քննությունը և կառուցվածքային տիպերի ու մանրակաղապարների առանձնացումը դեռևս միանշանակ չէ և անգամ երբեմն տարբերվում է հեղինակի 2 աշխատություններում: Նրա քննության համար կարևոր տեսական խնդիր է այն, որ դարձվածքները կառուցվածքային առումով հիմնականում դիտվում են իբրև երկանդամություններ: Այս գաղափարը սկզբում ավելի կտրուկ, ապա մեղմացված ձևով արտահայտված է նրա 2 աշխատություններում. «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» աշխատության մեջ ընդունելով, որ «Դարձվածների ճնշող մեծամասնությունը ներկայացնում են երկանդամություններ»⁵՝ 2007 թ. լույս տեսած «Ակնարկներ ժամանակակից հայերենի դարձվածաբանության» գրքում փոքր-

⁴ Պ. Բեդիրյան, *Ակնարկներ ժամանակակից հայերենի դարձվածաբանության*, Ե., 2007, էջ 66:

⁵ Պ. Բեդիրյան, *Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն*, Ե., 1973, էջ 167:

ինչ մեղմում է իր տեսակետը: Խոսելով ազատ և կայուն բառակապակցությունների մասին՝ գրում է. «Աբ-ները, որպես կանոն, երկանդամություններ (բինոմներ) են. Կբ-ների մեջ էլ շատ են երկանդամությունները կազմողները, բայց և փոքրաթիվ չեն բազմաբաղադրիչ (ընդգծումը մերն է՝ Ն. Ք.) ամբողջությունները»⁶:

Ապա, 1973 թ. լույս տեսած աշխատության մեջ դարձվածքների կառուցվածքային քննություն է կատարում՝ նախ առանձնացնելով բայական, անվանական, մակբայական, կապ+խնդիր կապակցություններ, հետո նրանց կառուցվածքային տիպերը, օրինակ՝ բայ+գոյական, երբեմն էլ մանրակադապարները՝ ըստ գոյականի հոլովի: Ամեն դեպքում, նա այս ամբողջն անում է՝ ելնելով երկանդամության սկզբունքից: Իսկ 2007 թ. լույս տեսած գրքում մոտեցումն այլ է: Մի ամբողջ բաժին՝ «Կապակցական կադապարներ», նվիրված է դարձվածքների կադապարների ներկայացմանը: Բայց այս կադապարները տարբեր են նրա նախորդ ուսումնասիրության կառուցվածքային տիպերից և ներկայացնում են մի մոդել, որի մի անդամը միշտ մնում է նույնը (որը նշվում է), իսկ մյուսը՝ փոխվում (օրինակ՝ 1. -ի զավակ = «Այսինչ տեղի ծնունդ, բնիկ այսինչտեղացի...», 2. -ի թոռ = «Նույն վարք ու բարքի տեր, ինչ որ այսինչը», 3. -ի երկվորյակ = Նախորդին հումանիշ է»⁷ և այլն):

Օրինակներից երևում է, որ, ասենք, որոշիչ-որոշյալ հարաբերության բազմաթիվ կապակցություններ ներկայացված են իբրև առանձին կադապարներ, ընդ որում՝ մի դեպքում որոշիչը սեռական հոլովով դրված գոյական է, մեկ այլ դեպքում՝ ածական, թվական և այլն: Այսպես բերում է 315 կադապար համապատասխան օրինակներով: Թերևս ավելի ճիշտ է սրանք իմաստային կադապարներ դիտարկել. ամեն

⁶ Պ. Բեդիրյան, *Ակնարկներ...*, էջ 4:

⁷ Նույն տեղում, էջ 66-67:

դեպքում Պ. Բեդիրյանը որևէ տեղ չի նշում այդ մասին կամ որևէ բացատրություն չի տալիս, թե ի՞նչ կադապարներ են սրանք և լեզվի ո՞ր մակարդակին են պատկանում:

Հայերենի դարձվածքների կառուցվածքային թերևս միակ ամբողջական քննությունը կատարել է Խ. Բաղիկյանը «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորներ» աշխատության մեջ (1986), որտեղ նա տալիս է դարձվածքների կառուցվածքային կադապարները՝ ըստ դրանց բաղադրիչների քանակի, իմաստային փոխհարաբերության, բաղադրիչների քերականական կարգերի:

Խ. Բաղիկյանը նախ տարբերակում է անվանողական և հաղորդակցական դարձվածային միավորներ, ապա անվանողականները, ըստ «իմաստային, բառաքերականական, ինչչպես նաև գործառական հատկանիշների»⁸, ենթարկում է ձևաբանական դասակարգման, առանձնացնում գոյականական, ածականական, բայական, մակբայական, եղանակավորող դարձվածային միավորներ և ապա սրանցից յուրաքանչյուրը ներկայացանում ըստ կառուցվածքային տիպերի:

Եռաբաղադրիչ դարձվածքների կամ, ինչպես նա է կոչում, դարձվածային միավորների (ԴՄ) վերաբերյալ կարևոր են նրա հետևյալ մոտեցումները.

ա. Եռանդամ կառուցվածքային հիմնատիպերի ԴՄները կարելի է բաժանել 2 խմբի՝ 1. «երբ դրանց բաղադրիչները իմաստային տեսակետից անանջատելի կապակցություններ են, հնարավոր չէ կառույցի որևէ անդամը անջատել... Նման կառույցները բաղադրիչների բաժանելը միայն տեսական նպատակ է հետապնդում», 2. «Երբ եռանդամ կառույցը պարզապես երկանդամ կառույցի ծավալումն է որևէ խոսքի մասով»⁹:

⁸ Խ. Բաղիկյան, *նշվ. աշխ.*, էջ 91:

⁹ Նույն տեղում, էջ 103, 141:

բ. Երկանդամների համեմատությամբ եռանդամ գոյականական ԴՄ-ների թիվը համեմատաբար քիչ է:

գ. Եռանդամները, ի տարբերություն երկանդամների, ավելի բազմիմաստ են և ունեն կառուցվածքային ավելի բազմազան ենթատիպեր, նրանցում դրսևորվում են բառաքերականական բազմազան հատկանիշներ:

դ. Թեև եռանդամների մեջ, բայց մյուս ենթակադապարներից առանձին է դիտարկում իրենց կազմում հարադրավոր բայեր և վերլուծական կազմության գոյականներ ունեցող ԴՄ-ները: Առաջինների համար նշում է, որ «եռանդամ կառույցներում նույնպես մեծ տեղ են գրավում հարադիր բայերը, որոնք զուգորդվելով գոյականի կամ այլ խոսքի մասի հետ՝ ամբողջ կառույցով վերախմաստավորվում են»¹⁰, իսկ երկրորդ տեսակը համարում է համաստորադասական կառույցներ¹¹:

Վերջինս կարևոր տեսական հարց է. եռանդամ են այն դարձվածքները, որոնց կազմում կան հարադրավոր բայեր և վերլուծական կազմություն ունեցող գոյականներ, ածականներ, մակբայներ: Չուտ ձևային առումով գուցե, բայց արդյո՞ք այդ երեք մասերն իրականում երեք բաղադրիչներն են թե՞ երկու: Հարցը բարդանում է նրանով, որ դարձվածքները վերախմաստավորված են, նրանց իմաստը շատ հաճախ չի բխում բաղադրիչների իմաստի գումարից, հետևաբար բաղադրիչներն իմաստային ինքնուրույնություն քիչ ունեն, և ինչպես Խ. Բաղիկյանն ու մյուս ուսումնասիրողներն էլ նշում են, առանձին հարադրավոր բայի իմաստը երբեմն բոլորովին այլ է, քան նրանով կազմված դարձվածքինը: Այդ պատճառով էլ նա այսպիսի կազմով դարձվածքներում հարադրավոր և վերլուծական բառերը երկանդամություններ է համարում, իսկ դարձվածքները համապատասխանաբար կա՛մ եռանդամ,

¹⁰ Նույն տեղում, էջ 175:

¹¹ Նույն տեղում, էջ 177:

կա՛մ քառանդամ և այլն: Մրան հակառակ կարծիքի կողմնակիցներից է Ալ. Մարգարյանը, որը կարծում է, թե հարադրավոր բայերը դարձվածքների մեջ հանդես են գալիս որպես մեկ ամբողջական բաղադրիչ¹²:

Վ. Համբարձումյանը, «Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը» աշխատության մեջ քննելով նաև այդ երկում կիրառված դարձվածքները, կառուցվածքային տեսակետից նախ 2 խումբ է առանձնացնում՝ Գ+Բ և Բ+Գ, «մյուս բաղադրիչներն ածանցյալ են և շարահյուսվում են սրանց հետ, այսինքն՝ հարում են սրանց»¹³: Ապա յուրաքանչյուր կաղապար ներկայացնում է մանրակաղապարներով՝ ընդ որում առանձնացնելով իրենց կազմության մեջ հարադիր բայեր ունեցողները: Ըստ էության Վ. Համբարձումյանը դարձվածքների կառուցվածքային քննության հարցում միջանկյալ դիրքորոշում ունի. Պ. Բեդիրյանի պես դարձվածքները դիտում է նախ իբրև երկանդամ հիմնային կառույցներ և Խ. Բաղիկյանի պես առանձնացնում է մանրակաղապարներ՝ ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Վ. Համբարձումյանը ևս հարադրավոր բայերով կազմություններն առանձին է ներկայացնում:

Մենք հարադրավոր բայը դաձվածքի կազմում ընկալում ենք այնքանով, որքանով այն գոյություն ունի մեր լեզվամտածողության մեջ և բառապաշարում: Հայերեն չիմացողը կամ նոր սովորողը, որը չգիտի հայերենի հարադրավոր բայերը, կարող է այս տիպի կառույցները առանց կասկածի եռաբաղադրիչ համարել, բայց արդեն քիչ թե շատ իմացողի և իր լեզվամտածողության մեջ հարադրավոր բայեր ունեցողի համար երկրնտրանք է առաջանում:

¹² Ա. Մարգարյան, *Հայերենի հարադիր բայերը*, Ե., 1966, էջ 205:

¹³ Վ. Համբարձումյան, *Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը*, Ե., 2013, էջ 71:

Կարծում ենք, հարցը զուտ լեզվական մոտեցմամբ հնարավոր չէ լուծել, այլ, ինչպես մի շարք լեզվական նորմեր, պետք է որոշել ընդհանուր պայմանավորվածությամբ: Մենք ևս համակարծիք ենք Խ. Բաղդկյանի հետ և այս կառույցները պայմանականորեն եռաբաղադրիչ ենք համարում՝ սակայն առանձին դիտարկելով բուն եռաբաղադրիչներից: Նույնը չենք կարող պնդել վերլուծական կազմության բաղադրիչ ունեցող դարձվածքների դեպքում: Սրանք հարադրավորների պես իրենց իմաստը չեն կորցնում, գիտակցվում են իբրև մեկ ամբողջություն և ապա շատ դեպքերում վերածվում են կցականների, որը նույնպես փաստում է, որ իրոք ընկալվում են իբրև մեկ ամբողջություն¹⁴:

Որքան էլ կարծում ենք, որ վերլուծական կազմության բաղադրիչները դարձվածքների կազմում պետք է մեկ ամբողջություն դիտարկել, և ըստ այդմ չպետք է այստեղ քննենք, բայց աշխատանքում առանձին ներկայացնում ենք ինչպես այդպիսիք, այնպես էլ հարադրավոր բայերով կազմություն-

¹⁴ Խուսափելու համար հայ լեզվաբանության մեջ վերլուծական կազմությամբ բառերի վերաբերյալ եղած տարբեր դասակարգումներից ու անվանումների շփոթից, հետևում ենք Լ. Հովսեփյանին, որը դրանք հանգամանորեն ներկայացրել է «Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը» գրքում (Ե., 2016, էջ 35): Բերենք նաև այդ դասակարգման համառոտ գծապատկերը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
ԿՐԿՆԱՎՈՐՆԵՐ	ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Անվանական	Անվանական	Բայական
1. Հարակցական (կողմն կողմն)	1. Շաղկապական (հարց եւ քնին)	1. Զուգադրական բայեր (առնուլ տանել)
2. Շաղկապական (դէպ եւ դէպ)	2. Նախդրական (անդէն առ նմին)	2. Հարադրական բայեր (գրողոք բառնալ)
3. Նախդրական (Ժամ ի Ժամ)	3. Կապակցական (ամէն ինչ)	

ները, հասկանալու համար դրանց մոտավոր քանակը, ինչպես նաև տեղը գրաբարյան դարձվածքների շարքում:

Ա. Վերլուծական բաղադրիչ ունեցող դարձվածքները:

Այս դարձվածքները 31-ն են, որոնք ներկայացնենք ըստ վերլուծական բաղադրիչների տեսակների.

ա. նախդրական կրկնավորներով – *բերան ի բերան* խօսել, *ի կերպարանս կերպարանս* լինել, *կեղծս ի կեղծս* լինել,

բ. շաղկապական անվանական հարադրություններով – *ահ եւ երկիւղ* արկանել, *այսն եւ խաղ* լինել, *այսն եւ կատակ* լինել, *այսն եւ կատակ* առնել, *անց եւ դարձ* առնել, *առ եւ գնաց* առնել, *առնել դուլ եւ դադար*, գիտել *զաջ եւ զձախ*, *դիր եւ տար* առնել, *դուլ եւ պատուէր* տալ, *ի խոյզ եւ ի խնդիր* անկանել/ելանել, *խոյզ եւ խնդիր* լինել, *ի ծաղր եւ յայպանումն* տալ, *ծաղր եւ այսն* առնել, *հաս եւ խած* լինել, *հարց եւ փորձ* առնել,

գ. նախդրական անվանական հարադրությամբ – *գիրկ ընդ խառն* լինել, *հիմն ի վեր* առնել/տապալել, *ցիրք ընդ ցիրս* լինել, *կոր ի գլուխ* առնել,

դ. կապակցական անվանական հարադրություն – *դէտ ակն ունել*, *կապուտ կողոպուտ* առնել/գործել/թողուլ,

ե. զուգադրական բայով – *բարձեալ թողեալ* լինել, *կռել կոփել* գղութն:

Բ. Հարադրավոր բայերով դարձվածքներ:

Իրենց կազմում հարադրավոր բայեր ունեցողներ դարձվածքները 29-ն են – *բան ի գործ* առնել, *բանս ի կիր* արկանել, *բարեալ մնալ* ասել, *գոյժ ի բերան* առնուլ, *երգս ի բերան* առնուլ, *գործ ի ձեռն* առնուլ, *դնել զանձինս ի մահ*, *դնել կարծիս ի մտի*, *դնել մահ առաջի*, *ելս ի մտի* դնել, *ջան ի մտի* դնել, *խեղդ առնել անձին*, *խորհուրդ ի մէջ* առնուլ, *խրատ ի գործ* արկանել, *կարեօք հասնել ի վերայ*, *կցորդ* լինել *արեան*, *ջան յանձին* ունել, *փոյթ յանձին* ունել, *մի զմիով* ել եւ *ելս* առնել, *միապիջ* ինչ առնել, *ջան առաջի* դնել, *յոյս առաջի* դնել, *նախանձ բար-*

ւոյ ի մէջ առնուլ, նգով լինել յումեքէ, նինջ տալ յարտեւանաց և այլն:

Գ. Մյուս եռաբաղադրիչ դարձվածքները Ռ. Ղազար-
յանի բառարանում 110-ն են, սրանց պետք է ավելացնել նաև
Լ. Հովհաննիսյանի բառարանից ևս 14-ը (1. յաչս առ բերան
համբուրել, 2. քարամբ տալ զբերան, 3. զգիշերն ամել ի վերայ,
4. մեծացուցանել զգարշապար ի վերայ, 5. գիր զգրոյ կախել,
6. դարձուցանել զերասանակ ընդդէմ, 7. զխուլն ի բան դար-
ձուցանել, 8. կաղալ յերկուս ոտս, 9. երթալ զկնի կամաց, 10.
հարկանել զկեանս ի չարիս, 11. տալ զունկն բանի, 12. կապել
զանձն ի սէր, 13. զվայրօք ամել զաչսն, 14. կաղին ցուպ
մտանել): Այս դարձվածքները ներկայացնում են հետևյալ
հիմնատիպերը.

Գ+Գ+Բ – ամօթ զանձամբ արկանել, այգն զառաւօտն
մերկանալ, այր զարամբ ելանել, ապտակ ի ծնօտ առնուլ, ա-
րեան ճապադիս հանել/հեղուլ, գիր զգրոյ կախել, (զ)բանս ի
բերան դնել, զանձն ի գործ կացուցանել, զանձն ի հնագան-
դութիւն տալ, զդուռն բերանոյ բանալ, զկեանս անձինն շահել,
զպարտս քնոյն վճարել, զասնձս լեզուի արձակել, զվրիժուց
հատուցումն խնդրել, զօձիս զգլխով արկանել, թիւ համարոյ
առնել, ժամէ ի ժամ սահմանել, ի բերանոյ մահու ապրեցու-
ցանել, ի գութ եւ յողորմ ամել, ի կալանս կապանաց արկանել,
ի հասակ եւ ի միտս հասանել, ի նախանձ բարկութեան բրդել,
ի չափ հասակի հասանել, ի սուր սուսերի արկանել, ի վարան
տագնապի մտանել, հոգ յանձին ունել/տանել, հող ի գլուխ
լինել, ձայն ոտից հարկանել, ձեռն ի գործ արկանել, ձեռս ի
զլուխ ելանել և այլն:

Բ+Գ+Գ – ամփոփել զունկնդրութիւն մտաց, անկանել
ընդ լծով ծառայութեան, անկանել ի բանս հրապուրանաց,
առնել զքօտումն ուրախութեան, առնել մեծարանս երեսանց,
առնուլ ակն երեսաց, դնել զդուռն բերանոյ, դնել մարտ պա-
տերազմի, դնել շուք անձին, դնել պահապան բերանոյ, լինել
թիկունք օգնականութեան, լինել ծախումն կոտորածոյ, լսել

ծայրի լսելեաց, կապել զանձն ի սէր, հանել կռուփս ի գլուխն, հանել քուն յաչաց, հարկանել ի սուր սուսերի, հարկանել սրով սուսերի և այլն:

Գ+Մ+Բ – բանս ի ներքս ընկենուլ, զյօնս ի վեր պճնել, զյօնս ի վեր պրկել, զոգի ի բաց դնել, խորհուրդ ի մէջ արկանել, ծղիս ի վեր ամբառնալ, ձայն ի վերայ դնել, ձի ի վերայ առնուլ, մահ ի վերայ դնել, յօնքն ի վայր անկեալ, պատիժս ի վերայ հասուցանել, պարանոց ի վեր ձգել, ջան ի վերայ դնել, սուր ի վերայ դնել:

Գ+Բ+Գ – գինին գալ զակամբ, զվայրօք ածել զաչսն, ճարպ գալ զակամբ

Գ+Բ+Դ – յուշ լինել ումեք

Գ+Բ+Բ – ի կիրթ անկեալ ընթանալ

Գ+Բ+Մ – զգիշերն ածել ի վերայ, մատանի դնել ի վերայ

Գ+Բ+Գ – քարամբ տալ զբերան

Գ+Գ+Գ – ձայն բարբառոյ յանապատի

Գ+Ա+Բ – ըստ մտի այլոց լինել

Գ+Դ+Բ – կտորն ի միմեանց լինել

Բ+Գ+Մ – գալ պորտ յորսայս, մեծացուցանել զգարշապար ի վերայ, դարձուցանել զերասանակ ընդդէմ

Բ+Ա+Գ – հանել յայլ լեզու,

Բ+Թ+Գ – կաղալ յերկուս ոտս

Բ+Դ+Գ – հարստահարել զիր կամս

Բ+ՆԽ+Գ – երթալ զկնի կամաց

Ա+Բ+Գ – ազատամիտ լինել յազահուօթենէ, սուրբ առնել զանձն

Ա+Գ+Բ – անբեղուն միտս ունել, զամենայն քար շարժել, յանհնարին հնարս մտանել

Ա/Գ+Գ+Բ – կաղին ցուպ մտանել

Դ+Դ+Բ – այնց ընդ այնս լինել

Դ+Գ+Բ – զնոյն երկունս լուծանել

Մ+Բ+Բ – բազում խնդալ ասել, ի բաց ածել տալ,

Ռ. Ղազարյանի բառարանում ընդհանուր հաշվով կան 2500 դարձվածք, որից մեր հաշվումներով եռաբաղադրիչ են 139-ը¹⁵ (ներառյալ կազմում հարադրավոր բայեր ունեցողները և չհաշված միայն Լ. Հովհաննիսյանի բառարանի 14-ը), որ կազմում է ամբողջի 5,56 %-ը: Սա նշանակում է, որ ինչպես ժամանակակից հայերենում, այնպես էլ գրաբարում եռաբաղադրիչ դարձվածքները քանակապես զգալիորեն զիջում են երկբաղադրիչներին: Իրենց կազմում վերլուծական կազմության բաղադրիչով դարձվածքները, որոնք այդ բաղադրիչի մասերն առանձին դիտարկելու դեպքում դառնում են եռաբաղադրիչ, 31-ն են, ուրեմն՝ ամբողջի 1,24 %-ը: Այսինքն, այդպիսիք այնքան էլ մեծ թիվ չեն կազմում, և եթե անգամ սրանք էլ համարենք եռաբաղադրիչ, վերջիններիս թիվը զգալի փոփոխության չի ենթարկվի:

Դասակարգումից երևում է, որ միայն 1 դարձվածք գոյականական է՝ *ձայն բարբառոյ յանապատի*, 1 դարձվածքը ածականական՝ *յօնքն ի վայր անկեալ*, մյուսները՝ բայական: Ամենաշատ օրինակները ներկայացնում են **Գ+Գ+Բ** (մոտ 43 %), ապա **Բ+Գ+Գ** (մոտ 16 %) և **Գ+Մ+Բ** (10 %) կաղապարները, մյուս կաղապարները ներկայացված են 1-3 օրինակով:

Իբրև գրաբարյան դարձվածքների առանձնահատկություն պետք է հիշել դարձվածքների համեմատաբար ազատ շարադասությունը՝ ի տարբերություն ժամանակակից հայերենի դարձվածքների¹⁶: Այդ է պատճառը, որ բառարանում երբեմն դարձվածքները ներկայացված են տարբեր շարադասություններով՝ առաջին բաղադրիչի այբբենական կարգով, հիմնականում հղում տալով մեկը մյուսին: Մեր քննած եռաբաղադրիչների դեպքում ունենք նման 8 օրինակ. *դնել բանս ի բերան – բանս ի բերան դնել, դնել զանձինս ի մահ – զանձն ի*

¹⁵Գարծում ենք, որ գրաբարյան մատենագրության դարձվածքների մանրամասն և արողական քարտագրումից հետո այս թիվը կաճի:

¹⁶Տե՛ս **Պ. Բեդիրյան**, *Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն*, Ե., 1973, էջ 217:

մահ դնել, գյօնս ի վեր պրկել – ի վեր պրկել գյօնս, սուր ի վերայ դնել – ի վերայ սուր դնել և այլն:

Իմաստային առումով ունենք հոմանշային 12 շարք՝ հիմնականում երկանդամ: Անշուշտ, սա միայն եռաբաղադրիչներով, իսկ երկբաղադրիչներով այդ շարքերը անհամեմատ շատ ու բազմազան կլինեն¹⁷:

Զսանձս լեզուի արձակել – գղուոն բերանոյ բանալ
ընդ գրով նշմարանաց փակել – գիր գգրոյ կախել
Ժամէ ի ժամ առնել – ժամէ ի ժամ սահմանել
Ի հասակ եւ ի միտ հասանել – ի չափ հասակի հասանել

Ի սուր սուսերի արկանել – ի սուր սուսերի մաշել – սրոյ ճարակ առնել – սրոյ ճարակ տալ – հարկանել ի սուր սուսերի – սուր ի վերայ դնել – մատնել ի սուր սուսերի

հոգ յանձին ունել – հոգ յանձին բերել – հոգ յանձին տանել

ձեռն ի գործ առնել – ձեռն ի գործ արկանել
մարտ պատերազմի դնել – մարտ դնել ընդ ումէք – մարտ պատերազմի տալ – դնել ռազմ պատերազմի

Ի գութ եւ յողորմ ածել – յողորմ եւ ի գութ խոնարհեցուցանել

ջան յանձին ունել – ջան յանձին տանել – ջան ի վերայ դնել

դնել գղուոն բերանոյ – դնել պահապան բերանոյ
խորհուրդ ի մէջ առնել/առնուլ – խորհուրդ ի մէջ արկանել:

Իսկ *զսանձս լեզուի արձակել, գղուոն բերանոյ բանալ և դնել գղուոն բերանոյ, դնել պահապան բերանոյ* դարձվածքները հականիշներ են:

¹⁷ Դարձվածքների հոմանշության և տարբերակների առանձնացման հարցում հետևում ենք **Ա. Սուքիասյանին**, *Հոմանիշները ժամանակակից հայերենում*, Ե., 1971, էջ 234-87:

Այսպիսով, ըստ Ռ. Ղազարյանի բառարանի տվյալների՝ գրաբարի դարձվածային հարստության մեջ եռաբաղադրիչ դարձվածքները կազմում են ընդամենը 5,56%, բայց կառուցվածքային կաղապարների առումով ներկայացնում են բավականին բազմազան պատկեր: Գերակշռողը **Գ+Գ+Բ** (մոտ 43%), **Բ+Գ+Գ** (մոտ 16%), **Գ+Մ+Բ** (10%) կաղապարները ներկայացնող դարձվածքներն են:

Harutyunyan Knar – Phrases Composed of three Components in Old Armenian. – In the report Old Armenian phrases composed from 3 components are presented, according to “Phraseological Dictionary of Old Armenian” by R. Ghazaryan. Analysis shows that 3-component phrases are only 5,56% of all phrases. Also we generalize that their most useful models are N+N+V (about 43%), V+N+N (about 16%), N+Adv+V (10%).

Арутюнян Кнар – Трехкомпонентные идиомы грабара. – В статье исследованы трехкомпонентные идиомы грабара по данным фразеологического словаря грабара, дается их структурный анализ. В результате делается вывод, что только 5,56 % идиом трехкомпонентны, большинство которых представляют структуры С+С+Г (около 43%), Г+С+С (около 16%), С+Н+Г (10%) формы.

Հմայակյան Հասմիկ (Հայաստան,
ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ)

**ԽԵԹԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Խեթերենի և հայերենի լեզվական առնչությունների հարցը դեռևս անցյալ դարի 20-ականներից գտնվում է հայ և օտարազգի ուսումնասիրողների ուշադրության կիզակետում:

Այս հարցով զբաղվել են Ն. Մարտիրոսյանը, Գ. Ղափանցյանը, Հր. Աճառյանը, Ի. Դյակոնովը, Տ. Շուլտհայսը, Ջ. Բոնֆանտեն, Գ. Ջոլտան, Ա. Կամմենհուբերը, Գ. Ջահուկյանը, Վ. Իվանովը, Ջ. Գրեպինը, Ն. Վան Վինդեկենսը, Ն. Մկրտչյանը, Ա. Քոսյանը, Ա. Պետրոսյանը: Մենք հնարավորինս հավաքել ենք ողջ նյութը և քննել մեր մենագրության մեջ¹: Սակայն, կուզենայինք, մասնավորապես, անդրադառնալ Գ. Ջահուկյանի և Ջ. Գրեպինի ուսումնասիրություններին: Այս գիտնականներն իրենց գիտական գործունեության տարբեր փուլերում դիտարկել են վերոնշյալ խնդիրը՝ փոփոխելով իրենց տեսակետները, որը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ խթահայկական լեզվական առնչությունների հարցը խիստ խնդրահարույց է և կապված է գիտության մեջ ցայսօր տարակարծություններ առաջացնող մի շարք այլ խնդիրների հետ, որոնք են. հնդեվրոպական նախահայրենիքի տեղադրության վայրը, խեթերի՝ Փոքր Ասիա ներթափանցման ժամանակաշրջանի որոշումը, հայ ժողովրդի կազմավորման ժամանակաշրջանի և բնօրրանի հարցը և այլն:

Սկզբնապես Գ. Ջահուկյանն իր ուսումնասիրություններում առաձնացնում էր խթալուվական լեզուներից հայերենին անցած մի քանի տասնյակ փոխառություններ, որոնք նա որակում էր ենթաշերտային՝ նրանցում մեծ դեր հատ-

¹ Հ. Հմայակյան, *Գրիգոր Ղափանցյանը և խթագիտությունը*, Ե., 2016:

կացնելով հայասերենին, որը համարում էր խեթալուվական լեզու¹: Սակայն 1988-1990-ականներին հեղինակած հոդվածներում Գ. Ջահուկյանը հայասերենը համարում է վաղնջահայերենի հիմքը և մեկ տասնյակից ավելի հայերենից խեթերենին անցած փոխառություններ է ներկայացնում: Դրանք նա համարում է բառեր, որոնք հայերենում բնիկ են և նրանց հնչյունական տեսքը լիովին բացատրվում է հայերենի հնչյունական օրինաչափություններով, և որոնք անհնար է բացատրել հարևան լեզուներին բնորոշ օրինաչափություններով²: Ջ.Գրեպինը, սկզբնապես չընդունելով ուղիղ խեթահայկական փոխառություններ, քանի որ վերջիններս իրենց հետ առաջ են բերում մի շարք հայեցակարգային, մասնավորապես, պատմա-աշխարհագրական բնույթի խնդիրներ, համարում է, որ խեթալուվական լեզուներից հայերենին անցած փոխառությունները պարտադիր չէ, որ հենց բուն խեթական ծագում ունենան և, հաշվի առնելով խեթերեն և լուվերեն լեզուների նմանությունը, նա հնարավոր է համարում, որ այդ բառերն անցել են լուվերենից հայերենին՝ հետխեթական շրջանում: Գիտնականը պատճառաբանում է իր այս տեսակետը այն հանգամանքով, որ խեթահայկական ուղիղ փոխառությունները ենթադրում են հայերի անմիջական շփումներ խեթերի հետ, որը կարող էր տեղի ունենալ մինչև Ք.ա 1190 թ.: Այս դեպքում պետք է ընդունվի, որ հայերենում բաղաձայնական համակարգի տեղաշարժի ավարտը տեղի է ունեցել Ք.ա XIII դարից ոչ ուշ, որ, հեղինակի կարծիքով, առնվազն տարօրինակ է: Բացի այդ, ըստ Ջ. Գրեպինի, բացակայում են այն

¹ Գ. Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, Ե., 1970, էջ 165, նույնի՝ *Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան*, Ե. 1987, էջ 311-341:

² Գ. Ժաուկյան, *О контактах армянского и хетто-лувийских языков*, *Мировая культура. Традиции и современность*, М, 1991, с. 137-142. Տես՝ նույնի՝ *О соотношении хайасского и армянского языков*, ИФЖ, 1988, 1, с. 60-79: *О соотношении хайасского и армянского языков*, ИФЖ, 1988, 2, с. 68-88.

տվյալները, որոնք հաստատում են հայկական ցեղերի երկարատև բնակությունը խեթալեզու տարածքներում: Համաձայն տարածված կարծիքի, հայերն առաջին անգամ հաստատվել են Արևմտյան Հայաստանում և հետագայի Կիլիկիայի տարածքներում (մի տարածաշրջան, որտեղ ապրում էին լուվացիները թե՛ Ք.ա. II, թե՛ I հազարամյակներում) ավելի ուշ շրջանում: Հողվածում մանրամասն քննարկելով խեթերեն և լուվերեն լեզուների նույնությունները և տարբերությունները՝ գիտնականը նշում է, որ տարբերությունները սակավ են, ավելի շուտ վերաբերում են հնչյունական համակարգին, քան թե բառապաշարին:

Հայտնի է, որ լուվերենի բառապաշարից մեզ է հասել շուրջ 420 բառ, այդ թվում սեպագիր լուվերենից՝ 300 բառ, իսկ հիերոգլիֆիկ լուվերենից՝ 120 բառ, որ անհամեմատ քիչ է խեթերենից մեզ հասած բառապաշարից: Ջ. Գրեպինը եզրակացնում է, որ հայերենում խեթալուվական փոխառությունների մեծ մասը կատարված է գերազանցապես լուվական բարբառներից, որոնք առավել մոտ են հիերոգլիֆիկ լուվերենին, բայց պարտադիր չէ, որ դա տեղի ունեցած լինի որևէ կոնկրետ բարբառից¹:

Հետագայում Ջ.Գրեպինը, կրկին անդրադառնալով հայերենում անատոլիական ծագում ունեցող փոխառություններին, ընդունելով հանդերձ այն փաստը, որ դրանք պարզաբանման կարոտ խնդիրներ են առաջացնում, փաստում է, որ զուգահեռների մի ստվար զանգված է առկա հայերենի և, ուշադրություն դարձնենք, խեթերենի միջև, որոնք թե՛ հնչյունական և թե՛ իմաստային նմանության պատճառով անհնար է անտեսել: Հեղինակն այդ հողվածում մոտ երկու տասնյակ

¹ J. Greppin, *Luwian Elements in Armenian*, Древний Восток III, Ер., 1978, p. 115-126.

արժանահավատ խեթահայկական գուգահեռներ է առանձնացնում¹:

Ինչ վերաբերում է հայերենում ներկայացված լուվական ենթաշերտին, ապա Ջ. Գրեպպինը դա դեռևս համարում է դժվարլուծելի խնդիր, պատճառաբանելով, որ լուվա-հայկական գուգահեռները փոքրաթիվ են (ինը), և հարց է առաջանում, թե այս բառերը արդյոք չլուվերենից են անցել հայերենին, թե՞ խեթերենից: Չնայած այս բառերը վկայված չեն մեզ հասած խեթական արձանագրություններում, այնուհանդերձ, չի կարելի ժխտել, որ դրանք գոյություն են ունեցել խեթերենի բառապաշարում:

Ինչպես տեսնում ենք, Ջ.Գրեպպինը առավել հակված է խեթալուվական լեզուներից հայերենին անցած բառերը դիտարկել որպես ուղիղ խեթահայկական գուգահեռներ, որը ժխտում էր նախկինում: Ավելին, վերջերս հրատարակած իր աշխատանքներից մեկում նա խոսում է արդեն հայերենից խեթերենին անցած մեկ հնարավոր փոխառության մասին²: Իսկ Գ. Ջահուկյանը, ինչպես նշվեց, դրանք հասցնում է մի քանի տասնյակի: Հասկանալի է, որ հակառակ՝ հայ-խեթական փոխառությունների ընդունման դեպքում անհնար կլինի բացառել հայ-խեթական ուղիղ շփումների հարցը, սակայն այսօրվա գիտության մակարդակը թույլ չի տալիս գտնել այս հարցերի վերջնական ու սպառնիչ պատասխանը:

Գ. Ջահուկյանը, Ջ. Գրեպպինը և վերոնշյալ գիտնականները խեթերենից հայերենին անցած բառային գուգահեռները քննարկել են լեզվաբանական տարբեր տեսանկյուններից, սակայն չի կատարվել խեթերենից հայերենին անցած բառապաշարի իմաստային խմբերի բաժանում: Մեր կարծիքով, հենց այս տեսանկյունից խնդրի քննարկումը կարող է մի շարք նաև պատմական բնույթի հարցերի պատասխան տալ:

¹ J. Greppin, *The Anatolian Substrata in Armenian – An Interim Report*, AAL, 1982, vol. 3, pp. 65-72.

² J. Greppin, *Substratum in Armenian*, AJNES, vol. I, 2006, p. 196-201.

Ինչպես նշում է Լավրենտի Հովհաննիսյանը իր «Հայերենի իրանական փոխառությունները» գրքում, փոխառությունների ուղիների հարցը պետք է քննվի երկու ժողովուրդների պատմատնտեսական, մշակութային կոնկրետ փոխհարաբերությունների իրական պայմանների հաշվառմամբ¹: Ըստ գործառական ստատուսի կամ ըստ թեմատիկ իմաստային խմբերի փոխառությունների դասակարգումը կարող է նպաստել այդ լեզուները կրող ժողովուրդների պատմության որոշ հարցերի լուսաբանմանը, քանի որ փոխառությունը նաև պատմությանը վերաբերող երևույթ է²: Մեր ուսումնասիրությունը կատարելիս օգտվել ենք հայերենի իրանական փոխառությունների առումով կատարված ուսումնասիրություններից, մասնավորապես, Գ.Ջահուկյանի, Ա. Փերիխանյանի և Լ. Հովհաննիսյանի աշխատություններից՝ փորձելով այդ սկզբունքները կիրառել հայերենում առկա խեթական փոխառությունների դեպքում:

Ստորև մենք կներկայացնենք խեթահայկական որոշ գուգահեռներ ըստ իմաստային խմբերի՝ յուրաքանչյուր գուգահեռի համար քննարկելով նաև մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետները: Հարկ է նշել, որ այս շարքերը ամբողջական չեն, սակայն արդյունքում ձևավորված համամասնությունները լիովին արտահայտում են խեթահայկական գուգահեռների հիմնական իմաստային խմբերի բովանդակությունը: Մենք փորձել ենք այդ գուգահեռները նախնական կերպով բաժանել հետևյալ իմաստային խմբերի.

Բռնություն և իշխանություն ցույց տվող բառեր

1. Հայ. *հատ* «կտրել, մասնատել» բառը Գ. Ղափանցյանը համեմատել է խեթ. hattai «հատել, կտրել, ծակել» նաև

¹ Լ. Հովհաննիսյան, *Հայերենի իրանական փոխառությունները*, Ե. 1990, էջ 40:

² Նույն տեղում, էջ 46-47:

«սպանել» բառի հետ¹: Այս համեմատումն ընդունել է նաև Գ. Ջահուկյանը²:

2. Հայ. *իշխան* բառը Ն. Մարտիրոսյանը համեմատել է իւեթ. *işhaş* «գսպել, սանձել, կապել, տեր» բառի հետ³: Գ. Ղափանցյանը, անդրադառնալով այս համեմատությանը, առավել հակված է այն համարել իրանական փոխառություն⁴: Այդ կարծիքն է հայտնել նաև Գ. Ջահուկյանը⁵, սակայն Վ. Իվանովը գտնում է, որ թե իմաստաբանորեն, թե՛ հնչյունական առումով հայերեն բառը մոտ է իւեթերեն *eşha*, *işha* «տեր» բառին, ինչպես նաև լատիներեն *erūs* նույնիմաստ բառին և կարելի է համարել, որ իւեթերեն *eşha*-ն ու լատիներեն *erūs*-ը ածանցված են հնագույն թեմատիկ արմատից, որին հանգում է նաև հայերեն *işx* արմատը⁶:

3. Հայ. *խողխողել* «մորթել, փողոտել, չարաչար սպանել» բառը Գ. Ղափանցյանը համեմատել է իւեթերեն *hullai-*, *hullia-* «հաղթել», *hullulii-* «պայքարել, կռվել» բառերի հետ: Ջ. Գրեպինը⁷ և Գ. Ջահուկյանը⁸ ընդունում են Գ. Ղափանցյանի այս համեմատումը:

¹ Գ. Կաпанцян, *Историко-лингвистические работы (ИЛР)*, т. I, Ереван, 1957, с. 375-376, տես՝ նաև՝ J. Puhvel, *Hittite Etimological Dictionary (HED)*, vol. 3, *Words beginning with H*, Berlin-New York- Amsterdam, 1997, p. 461.

² Գ. Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, էջ 155: Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, էջ 314:

³ Ն. Մարտիրոսյան, *Հայերենի յարաբերությունը հեթիդերենի հետ*, «Հանդես ամսօրեայ», 1924, թիւ 9-10, էջ 458-459:

⁴ Գ. Կաпанцян, *ИЛР*, т. I, с. 392.

⁵ Գ. Ջահուկյան, *ՀԼՊ*, Նախագրային ժամանակաշրջան, էջ 319-320:

⁶ В. Иванов, *Труды по этимологии индоевропейских и древнепереднеазиатских языков, Индоевропейские корни в хеттском языке*, М., 2007, т. I, с. 314-315. Ա. Պետրոսյան, *գրախոսություն*, *Greater Anatolia and Indo-Hittite Language Family* (JIES, Monograph Series, No. 38, Washington DC, 2000, Լրաբեր հասարակական գիտությունների, 2003, 2, էջ 208, 210;

⁷ J. Greppin, *The Anatolian Substrata in Armenian*, p. 71.

⁸ Գ. Ջահուկյան, *ՀԼՊ*, Նախագրային ժամանակաշրջան, էջ 314:

4. Հայ. *քրթմնջել* բառը Գ.Ղափանցյանը համեմատում է իւեթ. *kartimiya* «բարկանալ, չարություն տածել» բառի հետ¹: *kartimiya* բառի հիմքում ընկած է իւեթերեն ^{UZU}*ker/kard(i) սիրտ* բառը: Մենք կառաջարկեինք այս դեպքում, հաշվի առնելով նաև պատմական հնչյունափոխության գործոնը, որի դեպքում իւեթերեն *kardi-* «սիրտ» բառի դիմաց հայերենում սպասելի է տեսնել հենց *սիրտ* ձևը, այս գուգահեռի դեպքում դիտարկել հայերեն «սրտմտիլ» բայը, որը միանգամայն համապատասխանում է իւեթերեն բառիմաստին և վկայված է դեռևս V-րդ դարի աղբյուրներում, օրինակ Փավստոս Բուզանդի մոտ, և չունի ստույգ ստուգաբանություն:

5. Հայ. *գժղմիլ* «նեղանալ, բարկանալ, զայրանալ» բառի հետ Գ. Ղափանցյանը համեմատել է իւեթ. *kušduwāi*² «կշտամբել, նախատել, անվանարկել, զրպարտել» բառը³: Մեզ առավել հավանական է թվում Գ. Ջահուկյանի առաջադրած համեմատումը հայերեն *կշտամբել* բառի հետ, որը թե՛ հնչյունաբանորեն, թե՛ իմաստային առումով առավել համոզիչ է թվում:

6. Հայ. *աշխար, աշխարել* «լաց, ողբ, ողբալ, կոծել» բառը Գ.Ղափանցյանը համեմատել է իւեթ. *išḡahru-(ešḡahru-)* նույնիմաստ բառի հետ⁴: Այս գուգահեռը ընդունել է նաև Գ.Ջահուկյանը⁵: Վ. Իվանովը գտնում է, որ Գ.Ղափանցյանի այս դիտարկումը խիստ հավանական է, քանի որ հայերեն «աշխար» բառի իմաստը լիովին համապատասխանում է իւեթերեն *ešḡahru* բառիմաստին և հնչյունական տեսակետից էլ լիովին հիմնավորված է⁶, սակայն Ա.Փերիխանյանն այս բառը

¹ Գ. Капанцян, *ИЛР*, т I, с. 337.

² J. Puhvel, *HED*, v. 4, p. 296.

³ Գ. Капанцян, *ИЛР*, т I, с. 353-354.

⁴ Գ. Капанцян, *ИЛР*, т I, с. 348.

⁵ Գ. Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, էջ 152:

⁶ В. Иванов, *Труды по этимологии индоевропейских и древнеперсидских языков*, с. 251-252.

համարում է իրանական փոխառություն¹: Այս գուգահեռը մեզ հավանական է թվում:

7. Հայ. *ջախեմ, ջախջախեմ* բառերը Գ. Ղափանցյանը համեմատել է իւեթ. zahhai «ճակատամարտ, մարտ, կռիվ» բառի հետ²: Ջ.Գրեպինը ընդունում է այս գուգահեռը³:

8. Հայ. *Ոգորիլ* «հետը կռուիլ, մարտնչիլ, հակառակիլ, դէմ կենալ» ստույգ ստուգաբանություն չունեցող բառը Գ. Ղափանցյանը համեմատել է իւեթ. Waggariya «խարխլել, բաժանել, տրոհել, բաժանվել, ընդվզել, ապստամբել» բառի հետ⁴: Գ.Ջահուկյանը ևս ընդունում է այս ստուգաբանությունը⁵:

9. Հայ *փախ, փախչիմ, փախնում, փախուստ* բառերը Գ. Ջահուկյանը համեմատել է իւեթ.. parh-,parhanu «հալածել, քշել, որսալ, հարձակվել, արշավել տալ, սուրալ տալ» բառի հետ⁶:

Սոցիալական հարաբերություններ ցույց տվող եզրույթներ

1. Հայ. *կօշնել* «ձոնել, ընծայել» բառը Գ. Ղափանցյանը համեմատել է իւեթ. kuššan «աշխատավարձ, վարձատրություն, գին» բառի հետ⁷: Այս համեմատումը ընդունում է նաև Գ. Ջահուկյանը⁸: Հետաքրքրական է, որ իւեթերենում հանդիպում են նաև բառի ku-uš-ni, ku-uš-na-az ձևերը, որոնք ցույց են տալիս, որ այն, ըստ Ա.Կլոքհորստի, ամենայն հավանականությամբ, հնչել է KuSn, KoSn⁹, որը ևս մեկ փաստարկ է այս

¹ А. Периханян, *Материалы к этимологическому словарю древнеармянского языка*, Часть I, Ереван, 1993, с. 17-18.

² Г. Капанцян, *ИЛР*, т I, с. 382.

³ J. Greppin, *The Anatolian Substrata*, p.71.

⁴ Г. Капанцян, *ИЛР*, т I, с. 393.

⁵ Գ. Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, էջ 153:

⁶ Նույն տեղում, էջ 148; Գ.Ջահուկյան, *ՀԼՊ*, էջ 314:

⁷ Г. Капанцян, *ИЛР*, т. I, с. 346-347.

⁸ Գ. Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, էջ 154: Գ. Ջահուկյան, *ՀԼՊ*, *Նախագրային ժամանակաշրջան*, էջ 314:

⁹ A. Kloekhorst, *Etymological Dictionary of Hittite Inherited Lexicon*, V 5, Leiden-Boston, 2008, p. 498.

համեմատման օգտին:

2. Հայ. լուծ բառը Ն.Մկրտչյանը համեմատել է իւթ. luzzi- «կոռ, հարկադիր աշխատանք» բառի հետ¹:

Մշակութային, տնտեսական և կենցաղային եզրույթներ

1. Հայ. ար «բուրդ» բառը Գ.Ղափանցյանը համեմատել է իւթ. ešri, eššari (*ašri, aššari) «բուրդ» բառի հետ²: Հարկ է նշել, որ Գ. Ղափանցյանից անկախ Վան Վինդեկենսը ևս անդրադարձել է վերոնշյալ գուգահեռին՝ արտահայտելով միևնույն տեսակետը³:

2. Հայ. բրուտ բառը Ն.Մկրտչյանը համեմատել է իւթ. Purut «կավ, խեցեգործ, կավագործ, բրտեղեն, խեցեղեն» բառի հետ⁴:

3. Հայ. «խուղ, հիղ, պարտիզպանի խրճիթ» բառը համեմատվել է իւթ. ʕhila «բակ» բառի հետ⁵: Ըստ Հր.Աճառյանի, *հյիղ-ը բնիկ հայերեն բառ է⁶: Գ. Ջահուկյանը գտնում է, որ այն ծագել է *khu-1 հնդեվրոպական նախաձևից և հնարավոր է համարում, որ իւթերեն բառի աղբյուրը լինի հայերենը, քանի որ բառը բնիկ է հայերենում⁷:

4. Հայ. մառան բառը, ըստ Հ.Հմայակյանի, կարող է ստուգաբանորեն կապված լինել իւթ. marnuwa (խմիչքի տեսակ, որ ունի մուգ գույն, ծխական նշանակություն և պահվում է հատուկ անոթների մեջ, որոնք նախատեսված են հոդում պահվելու համար) բառի հետ⁸:

¹ Ն. Մկրտչյան, *Խեթա-հայկական ընդհանրություններ*, ԼՀԳ, 1970, 7, էջ 59-60:

² Գ. Капанцян, *ИЛР*, т I, с. 350-351.

³ A. J. van Windekens, *Quelques confrontations lexicales arméno-hittites*, AAL, vol. 1, 1980, p. 41-42.

⁴ Ն. Մկրտչյան, *Խեթա-հայկական մի քանի բառային ընդհանրություններ*, ՊԲՀ, 1969, 1, էջ 241-244:

⁵ Գ. Капанцян, *ИЛР*, т. I, с. 365-366.

⁶ Հ. Աճառյան, *ՀԱԲ*, հ. 3, էջ 100:

⁷ Գ. Ջահուկյան, *ՀԼՊ*, Նախագրային ժամանակաշրջան, էջ 320:

⁸ H. Hmayakyan, *The Hittite marnuwa*, AJNES, vol V, Issue 1, 2010, p 127-132:

5. Հայ. *խիշտ* «անկողին» կամ *խշտել* «հանգիստ տալ, օթևանել» բառը Գ. Ջահուկյանը բխեցնում է իւեթ. ^Éhešta, ^Éhešti «դամբարան» բառից¹:

6. Հայ. հնձան բառը Գ. Ջահուկյանը բխեցնում է իւեթ. ^{GIS}hanza(n) «մի տեսակ սարք, աման» բառից: Իրականում, բառիմաստը հստակ ստուգաբանություն չունի, թվարկվում է մի շարք փայտե իրերի շարքում, եթե ճիշտ է այս դիտարկումը, ապա հայերեն բառիմաստը կարող է օգնել իւեթերեն բառիմաստի ճշգրտմանը²:

7. ^{NINDA}hazizita- իւեթերեն բառը, որը ծիսական հացի տեսակ էր և կիրառվում էր հիմնականում անդրաշխարհի աստվածություններին գոհ մատուցելիս, Գ.Ջահուկյանը, համեմատելով հայ. *հաց* բառի հետ, այսուհանդերձ, կասկածի է ենթարկում հայերեն բառի փոխառյալ լինելը և հարցականով ներկայացնում է բնիկ բառերի արքում³, ի տարբերություն Հր.Աճառյանի, որն այն բնիկ չի համարում⁴: Մենք հակված ենք այս զուգահեռն ընդունելու, քանզի բառի բնիկ լինելը հայերենում ապացուցված չէ:

8. Հայ. *ջնար* երաժշտական գործիքի անվանումը Ն. Մարտիրոսյանը բխեցրել է իւեթ. zinar «Իշտարին նվիրված երաժշտական գործիք»-ի անվանումից⁵:

9. Հայ. *գեստրաս* «որսորդ» բառը Ջ.Գրեպինը համեմատել է իւեթ. weštara- «հովիվ» բառի հետ⁶:

Կենդանիներ և բույսեր

¹ Գ. Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, էջ 150; Գ. Ջահուկյան, *ՀԼՊ*, էջ 314:

² J. Puhvel, *HED*, vol. 3, p. 112.

³ Գ. Ջահուկյան, *ՀԼՊ*, *Նախագրային ժամանակաշրջան*, էջ 210:

⁴ Հր. Աճառյան, *ՀԱԲ*, հ. 3, էջ 64-65:

⁵ Ն. Մարտիրոսյան., *Հայերենի յարաբերությունը հեթոդերենի հետ*, էջ 458: Նույնի, *Նպաստ մը հեթ և հայ բառաբանության*, ՊԲՀ, 1972, 2, էջ 186; Ն.Մկրտչյան, *Խեթա-հայկական մի քանի բառային ընդհանրություններ*, ՊԲՀ, 1969, 1, էջ 240:

⁶ J. Greppin, *The Anatolian Substrata*, p. 70.

1. Հայ. *տանեղն* «արագիլ» բառը Ջ.Գրեպինը բխեցնում է իւեթ. *tarla* (թոշնի տեսակ)¹ բառից:

2. Հայ. *լախուր* «մի տեսակ բույս» - իւեթ. ^{GIS}lahhur - տերևաշատ բույս²:

3. Հայ. *փետուր* բառը Ն.Մարտիրոսյանը բխեցրել է իւեթ. *pattar* «թև» բառից³: Նրանից անկախ նկատել է նաև Հր.Աճառյանը⁴: Այս զուգահեռն ընդունել են և Գ.Ջահուկյանը⁵ և Ջ.Գրեպինը⁶:

4. Հայ. բարբառային *խախուրդ* «կոկորդ» բառը Գ.Ղափանցյանը համեմատել է իւեթ. ^{UZU}huhhurti-, լուվ. ^{UZU}huharta- «կոկորդ» բառի հետ⁷: Համեմատումն ընդունել է Գ.Ջահուկյանը⁸, և այն տեղ է գտել իւեթական ստուգաբանական բառարաններում⁹:

Միսական տերմիններ և դիցանուններ

1. Հայ. Տորք դիցանունը բխեցվում է իւեթալուվական և իսաթական *Taru*, *Tarhuna*, լուվ. *Tarhund*, հիեթ. լուվ. *Tarhu(n)t*, լյուկ. *Traqñt* ամպրոպի և տարերքի աստծո անվանումից¹⁰: Մենք ենթադրել ենք, որ իսաթա-իւեթա-լուվական *Taru*, *Tarhu* դիցանունը հնարավոր է պահպանված է հայկական Տարուբերան-Տուրուբերան տեղանվան մեջ, որ կարող է նշանակել «Տարու աստծո տուն կամ սրբազան բնակավայր»¹¹:

¹ **J. Greppin**, *A Note on Hittite TARLĀ*, *Revue hittite et asianique*, tome XXXIII, 1975, p. 55-57.

² **J. Greppin**, *The Anatolian Substrata*, p. 70.

³ Ն. Մարտիրոսյան, *Հայերենի հարաբերությունը հեթիդերենի հետ*, էջ 458:

⁴ Հր. Աճառյան, *ՀԱԲ*, IV, էջ 498:

⁵ Գ. Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, էջ 148:

⁶ **J. Greppin**, *The Anatolian Substrata*, p. 70.

⁷ Г. Капанцян, *ИЛР*, т. I, с. 357-358.

⁸ Գ. Ջահուկյան, *ՀԼՊ*, Նախագրային ժամանակաշրջան, էջ 314:

⁹ **J. Puhvel**, *HED*, vol 3, p 418.

¹⁰ Գ. Ջահուկյան, *ՀԼՊ*, Նախագրային ժամանակաշրջան, էջ 315:

¹¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Հ. Հմայակյան**, *Հայկական Տուրուբերան տեղանունը իւեթա-հայկական փոխառնչությունների համատեքստում*,

2. Հայ. *մաղթեմ* բառը Գ.Ղափանցյանը համեմատել է իւեթ. *malđ-* «գովել» բառի հետ¹:

3. Հայ. *սպանդ* բառը Գ.Ղափանցյանը համեմատել է իւեթ. *šipand-/špant-* «գոհաբերություն կատարել» բառի հետ²: Այս գուգահեռին չեն անդրադարձել այլ հեղինակներ, սակայն ըստ Վ. Իվանովի, եթե ճիշտ է Գ. Ղափանցյանի այս դիտարկումը, ապա իւեթ. *spant-* բառի իմաստը՝ «սպանել կենդանուն», իր հստակ գուգահեռն ունի հենց հայերեն «սպանդանոց» բառով³: Այս գուգահեռը ևս ուշագրավ և արժանահավատ է թվում:

4. Հայ. *ճիվաղ* բառը Գ.Ղափանցյանը համեմատել է իւեթ. *Zawalliš* «սարսափելի տեսքով աստվածությունների տեսակ» բառի հետ⁴:

Անձնանուններ

Հայ. Մուշեղ անձնանունը համեմատվել է իւեթ. *Muršilis* անձնանվան հետ⁵:

Ավարտելով իւեթահայկական մի շարք բառային գուգահեռների քննարկումն ըստ իմաստային խմբերի՝ կարելի է անել մի քանի նախնական եզրահանգումներ.

Ա. քանակական առումով շատ են բռնություն և իշխանություն ցույց տվող բառերը, որոնց հետ կարելի է դիտարկել նաև հասարակական հարաբերություններ ցույց տվող բառերը: Երկրորդ համեմատաբար մեծ խումբը կազմում են մշակութային, կենցաղային ու տնտեսական եզրույթները, որոնց կարելի է ավելացնել նաև ծիսական տերմինները:

Բ. Հիմնվելով վերոնշյալ դիտարկումների վրա՝ կարելի է

Հայկագուհիներ, առասպել և պատմություն, միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Ե., 2013, էջ 118-123:

¹ Գ. Капанцян, *ИЛР*, т. I, с.380.

² Գ. Капанцян, *ИЛР*, т I, с. 386.

³ В. Иванов, *Труды по этимологии индоевропейских и древнепереднеазиатских языков*, с. 133, прим. 2.

⁴ Գ. Капанцян, *ИЛР*, т I, с. 379.

⁵ Գ. Ջահուկյան, *ՀԼՊ, Նախագրային ժամանակաշրջան*, էջ 315:

փաստել, որ խեթա-հայկական շփումները տեղի են ունեցել խեթական կայսրության գոյության պայմաններում, և հայերը գտնվել են խեթերի մշակութային, տնտեսական և քաղաքական ազդեցության ոլորտում: Եզրակացություն, որի ճշմարտացիության դեպքում կարող ենք փաստել առնվազն գոնե II հազ. կեսերից այս տարածաշրջանում հայերեն լեզվի կրողների հնարավոր ներկայության մասին:

Hmayakyan Hasmik – Towards the Interrelations of Hittite and Armenian Languages. – The author of this article for the first time ever attempts to classify Hittite-Armenian lexical parallels per semantic groups as follows:

A. words of violence and power are numerous compared to others, whereas words indicating social relations can also be explored within this group. The second most numerous group is represented by terms of culture, household and economy as well as those of rite.

B. Taking into account the above considerations it is possible to state that Hittite-Armenian contacts have taken place during existence of the Hittite Empire and the Armenians have been in the sphere of cultural, economic and political influence of the Hittites. If this conclusion is correct, we can assert possible presence of the Armenian speakers in this region at least since the mid-2nd millennium BC.

Амаякян Асмик – К вопросу о взаимоотношении хеттского и армянского языков.– В данной статье впервые предпринимается попытка классифицировать хеттско-армянские лексические параллели в семантические группы, в результате чего выясняется следующая картина:

A. Слова, выражающие насилие и власть, образуют сравнительно большую группу, слова выражающие социальные взаимоотношения, также могут быть причислены к этой группе.

В. Можно констатировать, что хеттско-армянские контакты имели место в период существования Хеттской империи, причем армянский элемент был в сфере культурного, экономического и политического влияния хеттов. Если данное рассуждение правильно, то мы можем указать на присутствие носителей армянского языка в регионе по крайней мере со II тыс. до н.э.

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ
ԲԱՂԱԶԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղարաբաղի բարբառի բաղաձայնական համակարգի վերաբերյալ Հ. Աճառյանը նշում է մի կարևոր առանձնահատկություն. «Գրաբարի, *բ, գ, դ, ձ, ջ* բաղաձայնները կանոնավորապես դառնում են *պ, կ, տ, ծ, ճ, թե՛* բնիկ և թե փոխառյալ հայերեր բառերի մեջ»¹: Աճառյանը նկատում է, որ թուրքերենից կատարված փոխառություններում այս օրինակափոխությունը չի գործում, և իրավացիորեն եզրակացնում, որ ձայնեղ→խուլ անցումը կատարվել է 12-րդ դարից առաջ: Բարբառային բառարանի² տվյալների մանրագնին քննությանը ստորև կառանձնացնենք մի շարք բառեր, որոնք չեն ենթարկվում այդ «օրենքին»՝ փորձելով ըստ հնարավորինս տալ որոշ բացատրություններ: Նկատի ենք առել միայն բառակարգի դիրքը:

1. Գրաբարում ավանդված բառեր

բախշիլ / բախշել / պախշիլ / պախշել: Բուն Ղարաբաղի բարբառից երկու ձևերն էլ գրանցված են, իսկ Հաղրութ, Չայլու, Մարաղա, Մեհտիշենում միայն **բախշիլ, բախշել:** **Բաշիլ** գրաբարում վկայված է V դարից: Բարբառային «ներել, մոռանալ» (մեղքը, հանցանքը) իմաստը գրաբարում

¹ Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, Իմաս, Ե., 1951, էջ 378: Հնչյունափոխական այդ առանձնահատկությունը հաշվի առնելով՝ մեծանուն լեզվաբանը եզրակացնում է, որ «Ղարաբաղի բարբառի ծագումը ընկնում է նույնպես ԺԲ դարում» (էջ 380), որը մերժելի հիմնավորում է:

² Ա.Յու. Սարգսյան, *Ղարաբաղի բարբառի բառարան* (այսուհետև՝ ՂԲԲ), Ե., 2013 թ.: Օգտվել ենք նաև այլ աշխատություններից Կ.Դավթյան, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Ե., 1966: Ա.Պողոսյան, *Հաղրութի բարբառը*, Ե., 1965: Ալ. Սարգսյան, *Գորիսի բարբառը*, Ե., 1975:

վկայված չէ: Բարբառային **բախշ(իլ)**-ը, ի տարբերություն գրաբարի և արդի հայերենի պահել է փոխառյալ լեզվի *baxš* ձևը:

Բախտ: Ամենահին վկայությունը Աստվածաշնչում է: Հաճախական է Եզնիկի, Եղիշեի աշխատություններում: Հավանաբար վաղ շրջանում բառը բարբառում չի գործառել, կամ էլ նոր պարսկերենից կատարված փոխառություն է: Բարբառում բառասկզբի *բ*-ն առկա է նաև մի շարք կազմություններում ու դարձվածային միավորներում (Տե՛ս ՂԲԲ, էջ 83-84):

Բանակ / պանակ: Երկու ձևերն էլ տարածքի բոլոր բարբառներում վկայված են (Դավթյան, 328): ՂԲԲ-ն **պանակ**-ով վկայություն չունի: Բառասկզբի բաղաձայնի *պ* հնչույթը հասակ չէ և կարելի է ճշտել միայն փորձառական եղանակով:

Բոզ «պոռնիկ»: Բազմաթիվ կազմություններ կան գրաբարում և բարբառում: Բարբառային ձևը՝ որպես նոր շրջանում վրացերենից կատարված փոխառություն քիչ հավանական է: Գործիսի բարբառում **պեզ:** (**Մարգարյան, 73**):

Գավակ / գւնվակ «կենդանու, հատկապես ձիու հետնամաս»: Գրաբարում **գաւակ**-ը հաճախական չէր: ՆՀԲ-ում կա երկու վկայություն՝ մեկը թարգմանական գրականությունից, մյուսը՝ Խորենացուց: Միջին հայերենի բառարանում **գաւակ** վկայված չէ. կա **գաւակել** և **գաւկել**՝ մեկական բնագրային օրինակով¹: Բուն Ղարաբաղի բարբառից գրանցված են **գաւակ** և փոխառյալ **թւնրք** հոմանիշները, իսկ մյուս բարբառներում և խոսվածքներում միայն՝ **թւնրք:** (**Դավթյան, 333**):

Բարբառում բառիս գործածությունը կասկածելի է:

¹ Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 136:

Գիդնի / գրդալ / զիդալ (գրբ. գիտեմ): Բարբառում առկայանում է բոլոր կազմություններում. **զիդնիլնվ, զիդնիլնք, զիդնական, զիդութուն...**: Հավանաբար բարբառում նախապես եղել է *կիդնի, հետագայում՝ միջձայնավորային *դ*-ի ազդեցությամբ՝ զիդնի:

Գոնո «խրոխտ, հպարտ»: Եթե գրաբարյան զուգահեռը **գոռ** (գոռոզ) բառն է, ապա բարբառային բառը դարձյալ չի ենթարկվել ձայնեղ→խուլ հնչյունափոխության:

Դադ «դատ, դատաստան, գանգատ, բողոք»: Ուշադրության արժանի է այն, որ գրբ. **դատ** արմատով կազմված **դատաստան** բառը բարբառում **դադաստան** է (Ձայլվի բարբառում՝ տնտնստան/տադնստան, Մարադայի բարբառում տնդնստան (Դավթյան, 340):

Բարբառային **դադ, դադաստան** բառերում բառակազմի ձայնեղ *դ*-ի առկայությունը ենթադրում է.

ա) որպես իրավաբանական տերմին բարբառում շրջանառության մեջ է մտել ավելի ուշ:

բ) Իսկ եթե հին փոխառություն է, ապա նախապես ձայնեղացել է **դատ**-ի բառավերջի, **դատաստան**-ի բառամիջի *տ*-ն: (Նշենք, որ ոչ միայն գրաբարում, այլև փոխատու լեզվում՝ միջին պարսկերենում *dāt, dāstan* է):

Դնրմնն: Գրաբարում և բարբառում բազմիմաստ են: Բարբառում «դեղ, հնար, ճար» իմաստով գործածությունը, անշուշտ, նոր պարսկերենից է: Իսկ **տեքման** «հարդ, ծղոտ»-ը ակնհայտորեն վաղ շրջանում կատարված փոխառություն է: Գրաբարի բառարաններում այդ իմաստը արձանագրված չէ: Բարբառային **տեքմին** ձևը ենթադրում է, որ գրաբարում նույնպես եղել է նման գործածություն, որը գրավոր աղբյուր-

ներում վկայված չէ: **Դարման** «ծղոտ» կա միջին հայերենում.
«Նօսր դարման տուր, և ի խոտէ մի գատիր»¹:

դէվ | դօվ | տէվ (գրբ. դեւ): Բարբառային հին ձևը պետք է համարել **տէվ**-ը:

Բարբառում *ձ*-ով և *ջ*-ով սկսվող գրաբար և հին բոլոր փոխառություններում ձայնեղները խլացել են²:

Բարբառում կան օրինաչափությունից շեղվող հնչյունափոխական այլ իրողություններ.

1. Բառասկզբի դիրքում ձայնեղ→շնչեղ խուլ:

բ>փ: Բրդել>փրթել, բուրուառ>փըրվառ, բռնել>փըռնել, բշտել>փըշտել, բորբոսնիլ>փըրփեշնիլ, բուսնիլ>փըսնել (Դավթյան, 54): Նմանատիպ անցումները բացատրվում են դիրքային առանձնահատկություններով, այլ հնչյունների կամ հնչյունախմբերի ներգործությամբ: Նկատվում է, որ **բ>փ** հիմնականում կատարվում է *բ, ռ, ս, շ* բաղաձայնների ներգործությամբ (Դավթյան, 54):

գ>թ: գաթա>քսիթա, գդալ>քըթօլ³, գիշեր>քըշեր, գծուծ>քըծուծ, գնալ>քինսլ, գտանել>քըթէնսլ

դ>թ: դադար>թսիթսի: Այլ օրինակ մեզ չի հանդիպել: Ենթադրվում է, որ առնմանության օրենքով *դ*-ն դառնում է *թ* (Մարգարյան, 77):

Արձանագրված է և տնթսի ձևը (Դավթյան, 339):

¹ Ռ.Ղազարյան, Հ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 162:

² **Ջրհորդան→շրռութկան** կապը մերժելի է: (Տե՛ս **Ա.Խաչատրյան**, *Ջրհորդան հասկացությունն արտահայտող բառերի բարբառային բնութագիրը* («Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2011, էջ 142-153):

³ **Գդալ**-ի նախնական ձևը **տարգալ**-ն է: Բարբառներում առկայանում է բազմաթիվ ձևերով. **դքսնլ, թքսնլ, թա թալ, գդնլ, կըռտել, քթալ, քիթել, քթօլ, քնթօլ...** Հ. Աճառյանի կարծիքով «ամենից հաւատարիմ ձևն է Տիգրանակերտի **թքքսնլ**, որ պահում է **տարգալի ղ** ձայնը (Տե՛ս, **Հ.Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, **տարգալ** բառահոդվածը):

2. Ռուսերենից փոխառված մի շարք բառերում էլ առկա է ձայնեղ→խուլ հնչյունափոխություն. бочонок-պօջինկա, бочка-պօժկա, бумазея-պամբազին, газета-կազեթ, галоша-կալօշ, десятник-տիսաստնիզ՝ «տասնապետ»: Ռուսերենից կատարված փոխառություններում նկատելի է նաև խուլ→ձայնեղ, նաև խուլ→շնչեղ խուլ անցումը. кагдон-գարդօն «ստվարաթուղթ», крахмал-գրախմալ «օսլա» (**Պողոսյան**, 280), труба-դուրբա, печать-փիչատ, пистон-փրստօն «փամփուշտի հրապատիճ», почта-փօշտ...:

Գեներալ բառը Հադրութում արտասանվում է **յարանալ** «այս համարանությամբ է կազմված հյ. գերագանց>յարագանց բառը» (**Պողոսյան**, 40): Այդօրինակ արտասանություն՝ յեներալ, յերագանցիկ, մենք լսել ենք այլ տեղերում՝ հազվադեպ ավագ սերնդի ներկայացուցիչների խոսքում:

Անփոփենք: Տարբեր պատճառներով պայմանավորված՝ բարբառում ձայնեղ→խուլ օրինաչափ հնչյունափոխությունից կան զգալի շեղումներ: Ակնառու է, հատկապես, փոխազդեցական հնչյունափոխության գործոնը:

Hovhannisyan Lavrenti – Remarks on the Consonant System of Gharabagh dialect. – The voiced-voiceless phonemic alteration in the word initial position is a regularity in the dialect. The article discusses the exceptions and other issues related to the phonemic system.

Оганесян Лаврентий – Наблюдения о консонантизме карабахского диалекта. – В карабахском диалекте в начале слова фонетическое изменение звонкий согласный – глухой согласный считается закономерным. В статье исследуются исключения, а также некоторые вопросы консонантизма карабахского диалекта.

Հովսեփյան Լիանա (Հայաստան,
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Առկայացման քերականական կարգը գրաբարում (ինչպես և առհասարակ հայերենում) կապվում է *ս, դ, ն* դերանվանական հոդերի հետ, որոնք կցվում են բառին վերջից՝ հաջորդելով հոլովաթվանիշ ձևայիններին: Առկայացման կարգի արտահայտության դիտվածքի (պլանի) հստակ կառուցվածքին բովանդակության դիտվածքում հանդիպադրվում է տարբեր իմաստների բարդ համակցությունը, ընդ որում այդ իմաստների և այս կամ հոդի միջև չկա միարժեք համապատասխանություն: Այս առումով անվան քերականական կարգերի մեջ առկայացման կարգն աչքի է ընկնում նրանով, որ ընդգծված իրադրական բնույթ ունի, ու թեև մյուս թվի և հատկապես հոլովի կարգերն էլ ծավալում են ստանում ստորոգական (շարահյուսական) մակարդակում, առավելապես այդ հատկությունը վերաբերում է առկայացման կարգին, քանի որ նրա ցուցիչների՝ հոդերի բազմամաստությունը իր լուծումն է գտնում համապատասխան խոսքաշարում, և միայն այնտեղ կարելի է պարզել տվյալ հոդի կոնկրետ գործառույթը: Առկայացման կարգի իրադրական բնույթը պայմանավորված է նաև նրանով, որ այն անմիջականորեն կապվում է հաղորդակցման հետ և բնութագրում է ինչպես հաղորդակցման մասնակիցներին, այնպես էլ նրանց հարաբերակցվող առարկաները:

Ս, դ, ն հոդերը ձևով և ծագումով կապված լինելով դերանուններին՝ կարող են ստանալ անձնական, ցուցական, ստացական դերանունների իմաստ և գործածվել կա՛մ փոխարինելով համապատասխան դերանուններին, կա՛մ վերջիններիս հետ զուգահեռաբար: Այդ պատճառով էլ նշված մասնիկների համար «որոշիչ հոդեր» տերմինի հետ համար-

ժեքորեն գրաբարի քերականություններում գործածվում են նաև «դիմորոշ», «ստացական» և «ցուցական հոդեր» տերմինները:

Այս բոլոր իմաստային տարբերակումները կարող էին թերևս առանձնացվել որպես ինքնուրույն քերականական կարգեր (հատկապես դեմքի կարգը), եթե արտահայտության և բովանդակության դիտվածքների միջև գոյություն ունենար միարժեք-միանշանակ հարաբերակցություն, և եթե այդ իմաստները հաճախ հանդես չգային որպես միաձույլ ամբողջություն, որի տարրալուծումը խիստ պայմանական բնույթ կունենար: Ճիշտ այդ պատճառով էլ խոսքաշարից դուրս **ս**, **դ**, **և** հոդերը հարացուցային հստակ հակադրություններ չեն ստեղծում և կարող են առաջացնել միայն դիմային աղոտ պատկերացումներ՝ **ս** – առաջին դեմք, **դ** – երկրորդ դեմք և **և** – երրորդ դեմք: Այդ հոդերից յուրաքանչյուրը, կցվելով խոսքից դուրս վերցված բառին, կարող է միաժամանակ մի քանի իմաստ արտահայտել. Այսպես՝ *վարդապետացը* կարող է նշանակել և՛ «մեզ՝ վարդապետներիս» (դեմք), և՛ «մեր վարդապետներիս» (ստացականություն), և՛ «այս» կամ «այստեղ գտնվող վարդապետներիս» (ցուցականություն), և պարզապես որոշակի, հայտնի վարդապետներին (որոշյալություն): Երբեմն նույնիսկ միևնույն խոսքա-շարում հոդի իմաստը կարող է տարբեր մեկնաբանություններ ստանալ, այսպես՝ *...որք եկեալ՝ մերում անմտութեանս զհրեանց քաջութեան ... զհանդեսն ցուցին* օրինակում *մերում անմտութեանս* արտահայտության մեջ, եթե այն ընկալվի որպես վերացականը թանձրացականի փոխարեն, հոդը կունենա դիմորոշ նշանակություն՝ «մեզ՝ անմիտներիս», իսկ ուղղակի իմաստով՝ ստացական՝ «մեր անմտությանը»:

Այսպիսով, կարող ենք ասել, որ առկայացման կարգը գրաբարում հանդես է գալիս որպես համաձույլ (սինկրետիկ) քերականական կարգ և ներառում է միաժամանակ չորս

ենթակարգ՝ դեմքի (դիմորոշության), ստացականության (պատկանելության), ցուցականության և որոշյալության:

Նշված բոլոր երեք հոդերն էլ կարող են արտահայտել այս ենթակարգերի իմաստները, թեև տարբեր համամասնությամբ՝ **ս** և **դ** հոդերը համապատասխանում են առավելապես առաջին երեք իմաստներին, **և** հոդը հիմնականում «մասնագիտացած է» որոշյալության արտահայտման համար, թեև որոշյալության իմաստությոթը զգալի չափով միշտ էլ առկա է դեմքի, ստացականության և ցուցականության ենթակարգերի մեջ, իսկ **և** հոդի մեջ էլ գրեթե միշտ գիտակցվում է երրորդ դեմքի իմաստը:

Դեմքի, ցուցականության և ստացականության ենթակարգերում **ս**, **դ**, **և** հոդերը (ինչպես և համապատասխան հիմքերով դերանունները) ստեղծում են հակադրության երեք եզր՝ առաջին, երկրորդ և երրորդ դեմքեր: Դեմքի ենթակարգում համեմատաբար ավելի գործուն է խոսակցին մատնանշող երկրորդ դեմքի ցուցիչը, որ ըստ երևույթին պայմանավորված է հաղորդակցման ընթացքում խոսակցին դիմելու անհրաժեշտությամբ: Հաղորդակցումը կարող է լինել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր: Վերջին դեպքում դիմելաձևերը կայուն (ստանդարտ) բանաձևերի արժեք են ստանում, ինչպես՝ *...ընկալաք՝ գիրամանս*¹ (ցուցական) *քոյոյ թագաւորութեանդ* (դիմորոշ՝ վերացականը թանձրացականի փխ.), *քաջդ* (դիմորոշ) *արանց Տրդատ* [Ագաթ.], *աղաչեմ զքո տէրութիւնդ* (դիմորոշ) *հրամայել բանալ գդիւանդ* (ստացական) *արքունի ընդդէմ առնդ* (ցուցական) *եկելոյ առաջի քոյոյ հզար տէրութեանդ* (դիմորոշ՝ վերաց. թանձր. փխ.) [Խոր.], *ողջ լեր, երևելիդ* (դիմորոշ) *բնակութեամբ ի մէջ դից* [Խոր.],

¹ Կարող է ընկալվել նաև որպես հոգնակի հայցական՝ «հրամանները»:

² Հինգերորդ դարի հեղինակների երկերից վերցված օրինակների հղումները տրվում են ըստ համապատասխան համաբարբառոնների առանց էջանշման: Աստվածաշնչից վերցված օրինակները՝ ըստ Ս. գրքի գլուխների դարձյալ առանց էջանշման:

աղալթից ձերոց և սրբութեանդ (դիմորոշ) Ղևոնդիոս արքեպիսկոպոս Կեսարու [Ագաթ.], ...գանեալքդ և իւրատեալքդ, հարուածեալքդ և ողորեալքդ, տանջեալքդ և նուաճեալքդ, կորուսեալքդ և գտեալքդ, մոլորեալքդ և դարձուցեալքդ, յակն առեալքդ և սիրեցեալքդ (դիմորոշ) տեանն՝ Տրդատես թագաւոր Հայոց մեծաց ... ի տէր ինդալ [Ագաթ.], արդ դու, որ մարգպանդ (դիմորոշ) ես աշխարհիս (ցուցական) [Եղիշէ], Մարիամ, արհնեալդ (դիմորոշ) ի կանայս և այլն:

Առաջին դեմքի դիմորոշ հոդի գործածությունը նվազ հաճախական է, երբ խոսողն անհրաժեշտություն է զգում մատնանշելու իրեն, օր.՝ եկ հաւանեաց բանից աչազեղոյ դստերս (դիմորոշ) ալանաց... [Խոր.], ...ընդ քաջագգոյ կոյս օրիորդիս ալանաց [ն. տ.], այլ զի և մեզ՝ անմտացս (դիմորոշ) ուսուցէ զիմաստութիւն [Ագաթ.], յո զիաշնդ (ցուցական) տանիք, և զհովիւս (դիմորոշ) տարայք [Բուզ.], սատակեաց զնա Տէր Աստուած ի ձեռն կնոջս (դիմորոշ) [Յուդ.] և այլն: Հետաքրքրական օրինակ է երկրորդ դեմքի կրկնակի արտահայտությունը **դու** անձնական դերանվան և **դ** հոդի միաժամանակյա գործածությամբ՝ ...իմ է այդ տեղի, ուր դուդ ես բազմեալ [Բուզ.]:

Երրորդ դեմքի **և** հոդի դիմորոշ նշանակությունը բավական մթազնած է: Այն հանդես է գալիս յուրահատուկ շարահյուսական կառույցներում, որտեղ երկրորդական նախադասության մեջ **որ** հարաբերականին հաջորդող բառը ստանում է **և** հոդը: Ենթադրվում է, որ այն առաջացել է հարակրկնական նա դերանունից, որը սերտաճել է **որ** հարաբերականին հաջորդող բառի հետ՝ անկախ սրա խոսքիմասային պատկանելությունից (բայ, դերանուն և այլն), ինչպես՝ զի որ շարժիւն և փոփոխի՝ չէ էական [Եզն.], այն, յորում էւ, քան զայն, որ ի նմա էւ, մեծ գտանի [Եզն.]: Նշված հոդը գոյականներին է կցվում այն դեպքերում, երբ դրանք հանդես են գալիս անվանական բաղադրյալ ստորոգյալի կազմում որպես վերադիր, օրինակ՝ *n* ըջափ ևս այն՝ որ նոցա գոր-

դուժինն բխմանց յարինեաց, որ աղբիւրն է բարութեան [Եզն.], նիւթ ինչ, գոր հիւղն անուանեն [Եզն.]: Այս առումով **և** հոգը թէն նշված կառույցներում առկայացնող և դիմորոշ արժեք ունի, սակայն անվանական քերականական կարգի արտահայտություն չէ, այլ ավելի շատ շարահյուսական հարակրկնության դեր է կատարում՝ նախընթաց անդամի հավելուրդային կրկնությամբ: Ուստի ավելի հավանական է այն կապել **ևս** անձնական (դիմորոշ) դերանվան հետ, որ հաստատվում է նույն դիրքում հանդես եկող առաջին և երկրորդ դեմքերի **ս**, **դ** ցուցիչներով, որոնք մատնանշում են երկրորդական նախադասության ենթական՝ (տվյալ դեպքում՝ *դու* և *մեք* դերանունները) *գոր ասեսդ* («որ դու ես ասում»), *գայս բան կատարեցէք վաղվադակի, գոր ասենքս* («որ մենք ենք ասում»): Վերը բերված *զի որ շարժին և փոփոխի* օրինակում նույնպես այն մեկնաբանելի է որպես **ևս** դերանվան հավելուրդային կրկնության մնացուկ՝ «որ շարժվում է ***ևս** և փոփոխվում»: Նման կառույցներում **և** հոգի գործածությունը շարահյուսական հավելադրություն է համարում նաև Ֆ.Ֆեյդին. «...հոգ դարձած օժանդակ դերանունը կը կցվի **որ** հարաբերական դերանունին հետևող առաջին շեշտակիր բառին վերջավորության, ինչ որ ըլլայ այս բառին բնույթը և նշանակությունը, նույնիսկ եթե այս տարրինակ գործածությունը կրնա բային եզակի երրորդ դեմքին՝ հոգնակիի կերպարանք տալ՝ **որ շարժին և փոփոխի...**»¹:

Առկայացման կարգի ցուցականության (դէյքսիսի) ենթակարգը հայերենում մատնանշում է առարկայի դիրքը տարածության մեջ ըստ դիմային մերձավորության. **ս**՝ առարկայի գտնվելը առաջին դեմքին կամ խոսողին մոտ, **դ**՝ առարկայի գտնվելը երկրորդ դեմքին կամ խոսակցին մոտ, **և**՝ ա-

¹ Ֆ.Ֆեյդի, *Հարաբերական նախադասությունը հայերեն գրաբար լեզվին մեջ*, Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Զեկուցումներ, Ե., 1984, էջ 589-590:

ռարկայի գտնվելը երրորդ դեմքին մոտ կամ հեռավորությունը առաջին և երկրորդ դեմքերից: Այսպես՝ *տարակուսանքս*, (ցուցական) *որ աստ կան* [Խոր.], *կարգեցից քեզ ի գիրսս յայտսիկ* («այս՝ մեզ մոտ եղած»), *ի պատմութեանս յայսմիկ* («այս՝ մեզ մոտ եղած պատմության մեջ») [Խոր.], *որ աստ յայսմ աշխարհիս* (ցուցական) *գործեցաւ ընդ մեզ* [Ագաթ.]. *և փրկեաց զմեզ ի հնոցէս, և ի միջի բորբոքեալ բոցոյս, և ի միջի հրոյս փրկեաց զմեզ* (բոլորը ցուցական) [Դան.], *եկ, հաւանեաց բանից աչազեղոյ դստերս* (դիմորոշ) *ալանաց տալ զպատանիս* (ցուցական)՝ «այդ պատանին, որը քեզ մոտ է» [Խոր.], *Եւ տուաք մեք ածել առ ձեզ զտուրբ խոտովանողս* (ցուցական) *Քրիստոսի զԳրիգորիս* [Ագաթ.], *մեզ զԳրիգորս* (ցուցական) *տեսուչ և վարդապետ ... կացուսջիք* [ն. տ.], *մի անփոյթ առնէր զշնորհացք, որ ի քեզ են* («այդ շնորհները, որ քո մեջ կան») [ն. տ.]:

Երրորդ դեմքի **և** հոդով ցուցականությունն արտահայտվում է ավելի սակավ դեպքերում, երբ լայն խոսքաշարից կարելի է պարզել, որ տվյալ դեպքում այն որոշիչ հոդ չէ, օր.՝ *և այսուիկ հալածէր զգաւրս իսաւարին, և ի վերայ ամենայնի վերնոյն* («այն վերինի» այսինքն՝ Աստծո – Լ.Հ.) *գաւրութեամբ գեր ի վերոյ լինէր* [Ագաթ.], *բայց հրաման տայ բնակչաց աշխարհիս* («այն՝ [նոր նվաճված] աշխարհի» – Լ.Հ.) *ուսանել զիսուս և զլեզուս հայկական* [Խոր.]: Երբեմն ցուցականություն արտահայտող **և** հոդին զուգահեռ կիրառվում է և **այն** ցուցական դերանունը՝ սաստկացնող երանգով՝ *վաւաշն այն և բորբորիտոնն Շամիրամ*:

Ստացականության ենթակարգը առաջացել է ցուցականության զարգացումից, քանի որ մատնանշելով այս կամ այն առարկայի դիրքը ըստ դիմային մերձավորության՝ հոդը կարող էր աստիճանաբար սկսել ցույց տալ ոչ միայն տվյալ դեմքին մոտ գտնվելը, այլև նրան պատկանելը, ինչպես վերը նշված՝ *մի անփոյթ առնէր զշնորհացք, որ ի քեզ են* օրինա-

կում *շնորհացդ* կարող է նշանակել և «քո շնորհքը» և «այդ շնորհքը [որ քո մեջ է]»:

Շատ դեպքերում ցուցականության իմաստը կարող է հանդես գալ ստացականության իմաստի հետ սերտորեն կապված, օր.՝ *զագգիս մերոյ աւագանոյն արս և նախնիս* [Խոր.] կարող է նշանակել «այս՝ մեր ազգի»՝ (ցուցական և ստացական) :

Ստացականության ենթակարգում նույնպես առավել գործուն են առաջին և երկրորդ դեմքի հոդերը, իսկ *և* հոդը համեմատաբար սակավ գործածություն ունի: Ստացականության իմաստը սաստկանում է նաև համապատասխան դեմքի ստացական դերանունների զուգահեռ գործածությամբ, որը երրորդ դեմքի դեպքում հոդի գործառույթը որոշելու համար կարևոր դեր է խաղում:

Ստորև բերվում են մի շարք բնորոշ օրինակներ.

ս հոդով՝ *իշխանս պատուական աշխարհիս մերոյ մեծի* [Ագաթ.], *արար ... մեզ սաստիկ պատիժս պատուհասից՝ մինչև թագաւորիս մերում լինել խոզ* [Ագաթ.], *եւ հաստատեալ կացցէ վկայութիւն ի մէջ երկոցունց կողմանցս* («մեր երկու կողմերի միջև» [Ագաթ.], *յայսմ ժամանակի Մար Աբաս Կատինայ զմերոյ ազգիս միայն հանեալ զպատմութիւն...* [Խոր.], *ձգելով զմեր բնիկ նախարարութիւնս* [ն. տ.],

դ հոդով՝ *Տէր Աստուած մեր, որ առաքեցէր զմիածին որդիդ քո* [Ագաթ.], *երկրորդեմք այժմ քում հարցասիրութեանդ* [Խոր.], *հաճոյ թուեցաւ մեզ զաշխատութիւնն, որ ի վերայ քոյ հրամանիդ* [ն. տ.], *զգոյշ լինիջիր անձինդ և վարդապետութեանդ, և ի դմին յամեսջիր* [Ագաթ.],

և հոդով՝ *ի ձեռինն իւրում ուռն մի մեծ ոսկի* [Ագաթ.], *սիրեցին զտերն իւրեանց* [ն. տ.], *զմեզ արժանիս արասցէ Աստուած իւրոյ ողորմութեանն* և այլն:

Երբեմն, սակայն, ստացական դերանունների առկայությունը չի նշանակում, որ *ս* կամ *դ* հոդերը նույնպես ստացականության արժեք ունեն. Նրանք պահպանում են իրենց

նախնական՝ ցուցականության իմաստը, որն առաջնային է ստացականության համեմատությամբ. Այսպես՝ «*իմ ուրախությունն այս լցեալ և կատարեալ է*» օրինակում **ս** հոդը կապվում է **այս** ցուցականի և ոչ թե **իմ** ստացականի հետ: Մա ավելի ցայտուն է երևում այն դեպքերում, երբ ստացական դերանունն այլ դեմք է արտահայտում, քան հոդը՝ *զալ ի վերայ քո ազգականիս*՝ նշանակում է «այս քո ազգականի, որն այստեղ՝ ինձ մոտ է», *ձերոց առաքելոցս*՝ նշանակում է «ձեր առաքյալների, որոնք այստեղ, մեզ մոտ են», *բայց ոչ թողից, էթէ ոչ տեղիք մեր առ մեզ եկեցէ* օրինակում *տեղիք մեր* կապակցությունը նշանակում է «այդ տեղը, որ մերն է»:

Որոշյալության ենթակարգում, ի տարբերություն նախորդների, առկա է ոչ թե եռանդամ, այլ երկանդամ հակադրություն՝ որոշյալություն/անորոշություն, ընդ որում՝ անորոշությունն արտահայտվում է գրո ձևությամբ, իսկ որոշյալության արտահայտմանն են ծառայում հոդերը առանց դիմային տարբերակման (թեև առավել գործածական է երրորդ դեմքի **և** հոդը). օր.՝ *զուտ աստուածոցն զբազինսն կործանեցեն* [Ագաթ.], *զպատուիրանսն արինացն գիտես* [Եզն.], *զուցէ և վարձս ոչ ընդունիցիք ի հարէ, որ յերկինսն է* [Մտթ. Զ, 8], *ընկեցի ի հնոցն հրոյն բորբոքելոյ* [Դան. Գ, 6]: Խիստ սակավ դեպքերում **ս** և **դ** հոդերը նույնպես կարող են որոշյալության արժեք ունենալ, օր.՝ *կարող է փրկել զմեզ ի հնոցէ հրոյք բորբոքելոյ* [Դան. Գ, 17]:

Գրաբարում առկայացուցչների դերում հանդես եկող հոդերը դիրքային սահմանափակություն չունեն և կարող են կցվել եզակի և հոգնակի թվերի բոլոր հոլովաձևերին: Հայցական հոլովի դեպքում, ընդհակառակն, առկա է որոշյալության լրացուցիչ նշույթ՝ **զ** նախդիրը, որը կարող է զուգակցվել կամ չզուգակցվել հոդերին. օր.՝ *և թող մեզ զպարտիս մեր. զարացուցանէ զանգարս մեծագար զարութեամբ* [Եզն.], *հրամայել բանալ գրիւանք արքունի* [Խոր.], *հաճոյ թուեցաւ մեզ զաշխատութիւնն ... համարել հեշտութիւն* [Խոր.], *զմա-*

հունը դեղը տալով ընդ արէնսն [Բուզ.] և այլն: Հետաքրքրական օրինակ է *գ* նախդրի հավելուրդային կրկնությունը որոշյալի և նրա բազմակի որոշիչների հետ՝ *գիր սուրբ գսիրելի գվկայսս իւր յայս կողմանս առաքեալ* [Ագաթ.]:

Հոդի դիրքային սահմանափակություն կարելի է ընդունել թերևս միայն *Աստուած* բառի համար (որպես միակ և միշտ որոշյալ էության), օր.՝ *գԱստուած դենն պատճառ չարեաց* [Եզն.], *ոչ միայն երկու սկզբնակից գտանին, այլ երեք. Աստուած(Օ), և հիւղն և անջրպետն* [Եզն.]: *Աստուած* բառը հոդ կարող է ստանալ եզակի դեպքերում, և այն էլ ավելի շատ ցուցականության, քան որոշյալության իմաստով՝ *ընդէ՞ր չարիքն ոչ լինին աստուածք, որ Աստուծոյն յաղթել կարէին* [Եզն.]:

Մեծ մասամբ առանց հոդի են գործածվում և անձի հատուկ անունները, կամ, ավելի ճիշտ, հոդը հաճախ փոխանցվում է տվյալ անվան որոշիչ հանդիսացող ածականին, դերբային կամ գոյականին՝ *յաղագս մեծին Տիգրանայ* [Խոր.], *առեալ անձնագեղոյն և քաջադեղանն արին Վաղարշակայ* [Խոր.], *ծնունդ է մեծին արին Արամագոյայ* [Ագաթ.], *գկին սպանելոյն Գնելոյ առնոյր իւր կին Արշակ թագաւորն* [Բուզ.], *թագաւորէն պարսից ի Շապհոյ* [Բուզ.], *ածել զառաջեալ իւր գՎասակ Մամիկոնեան՝ զգաւրավարն սպարապետն Հայոց մեծաց* [Բուզ.], *ի բերանոյ շորիկն, շոգմոզն, տիրանենկն և տիրադորուժն, տիրասպանուն, տիրամատնիչն Փիսակայ* [Բուզ.]: Հատուկ անվան վրա դրված որոշիչ հոդ հանդիպում է ավելի սակավ դեպքերում՝ *արքայն հայոց Արշակն* [Բուզ.]. *Միսն ասացեալ լեառն* [Խոր.], *յորոց զմինն ... այս ինքն է Մանասարն* [Խոր.] և այլն:

Անորոշության եզրը գրաբարում, ինչպես նշվեց, հանդես է գալիս զրո ցուցիչով՝ հոդերի բացակայությամբ: Որոշ դեպքերում այն ունի վերլուծական ձևական արտահայտություն՝ կա՛մ *մի* թվականի կիրառությամբ, օր.՝ *մեծութեամբ իբրև մեծ մի բլուր, և ի վերայ նորա սիւն մի հրեղէն բարձր*

մինչև յոյժ, և ի վերայ նորա թակադադ **մի** ամպեայ, և խաչն լուսոյ ի վերայ նորա [Ագաթ.], երբեմն թեք հոլովաձևերով՝ ասոն **միոջ** էին երկու որդիք, յաւուր **միում**, կա՛ւ **ումն**, **ոք**, **իմն**, **ինչ** անորոշ դերանունների հետ՝ *քահանա ումն*, *Կունդ ումն Արամազդ*, *ումն արինական*, *մարգարէ ոք*, *բան ինչ*, *յետ աւուրց ինչ*, *իբրև գտդա իմն անկատար*, նաև տարբեր հոլովաձևերով՝ *ասանց իրիք յանցանաց*, *կանայք ումանք*, *ասոն ուրումն մեծատան* և այլն: Սակայն այս ձևերը ավելի շատ անորոշության **հասկացական** և ոչ **քերականական** կարգի արտահայտություն են: **Մի** թվականի կիրառությունը անորոշ հոդի դերում կանոնավոր և համապարփակ բնույթ չի ունեցել և կարելի է ասել, որ այն հայերենի ողջ զարգացման ընթացքում այնպես էլ լիակատար քերականացման չի ենթարկվել:

Hovsepyan Liana – Category of Actualisation in Old Armenian. – The report analyses the semantic and functional peculiarities of Old Armenian pronominal particles *s*, *d*, *n*, as special actualisators. These particles are characterized by formal and semantic syncretism as they can, according with the context, express the meanings of personal, demonstrative, and possessive pronouns and can be used either instead of corresponding pronouns or parallelly with them. Therefore in grammatical works on Old Armenian these particles are named also as “personal”, “demonstrative”, and “possessive” articles. It is also mentioned that in contrast to them the use of the indefinite particle-numeral *mi* is limited and it had not been grammaticalized during the whole historical development of the Armenian language.

Овсебян Лиана – Категория актуализации в древнеармянском языке.– В статье рассматриваются семантико-функциональные особенности древнеармянских артиклей-частичек местоименного происхождения *s*, *d*, *n*, выступающих в роли своеобразных актуализаторов. Подчеркивается формально-семантический синкретизм этой грамматической категории, так как в зависимости от контекста эти частички могут выражать

значения личных, указательных, притяжательных местоимений и употребляться либо заменяя соответствующие местоимения, либо параллельно с ними. Вследствие этого в грамматических трудах по древнеармянскому языку наряду с термином “определенные артикли” они обозначаются также как “личные, указательные и притяжательные артикли”. Отмечается что в отличие от этих слитных артиклей-частичек употребление частички-числительного *mi* в роли дистантного неопределенного артикля ограничено и в течение всего исторического развития армянского языка не достигло полной грамматикализации.

Ղուկասյան Սեակ (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ԻՆՉՈՒ-ՈՐՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԿՈՍԻ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆ
ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Նոր Կտակարանում չորս Ավետարաններից Մարկոսի Ավետարանը երկրորդն է, ծավալով՝ ամենափոքրը, բաղկացած է 16 գլուխներից: Մարկոսի Ավետարանի խորհրդանիշը առյուծն է, գույնը՝ ծիրանագույնը:

Մարկոսի արևելահայերեն Ավետարանում կա 100 հարցական նախադասություն, իսկ արևմտահայերենում՝ 121: Այս տարբերությունը բացատրվում է նրանով, որ Մարկոսի արևելահայերեն Ավետարանում մի շարք պատմողական նախադասություններ արևմտահայերենում արտահայտված են հարցականով, մյուս կողմից էլ զգալի թվով դեպքերում արևելահայերեն մեկ հարցական նախադասությունը արևմտահայերենում հանդես է գալիս երկու հարցումների տեսքով:

Մարկոսի Ավետարանում նույնպես հիմնականում սկզբից բերվում է ավետարանչի խոսքը, որից հետո կետ է դրվում, և նոր չակերտներով բերվում է համապատասխան հարցումը: Այդ խոսքը այստեղ նույնպես հանդես է գալիս կարճ՝ բաղկացած երկու-երեք բառերից, ինչպես՝ «Ե նրանց ասաց – Ապա ըսաւ անոնց» (4,21), «Ե նրան հարցրեց – Յիսուս անոր հարցուց» (5,9), «Ասաց նրանց – Ըսաւ անոնց» (6, 38) և շատ ավելի երկար՝ անգամ բաղկացած երկու և երեք նախադասություններից, ինչպես՝ «Իսկ օրէնսգետերն ու փարիսեցիները երբ տեսան, որ նա մաքսաւորների և մեղաւորների հետ է ուտում, նրա աշակերտներին ասացին – դպիրներն ու փարիսեցիները, երբ տեսան թէ անիկա մաքսաւոր-

ներու եւ մեղաւորներու հետ կ'ուտէ, ըսին անոր աշակերտներուն» (2, 16), «Եւ նա իր մօտ կանչելով նրանց՝ առականերով էր խօսում նրանց հետ – Հիսուս զանոնք կանչելով՝ առականերով ըսաւ անոնց» (3, 23):

Մարկոսի արևելահայերեն և արևմտահայերեն Ավետարաններում հարցումներ են կազմված համարյա բոլոր հարցական դերանուններով՝ *ո՞վ, ի՞նչ, ինչո՞ւ, ինչպե՞ս, քանի՞, ո՞ր, ո՞ւմ, ո՞ր, ո՞ւմ, ո՞ր, որտեղի՞ց, ինչքա՞ն, ինչո՞վ* և *ինչի՞ մասին*: Նշենք, որ արևելահայերեն ում հարցական դերանվանը արևմտահայերենում համապատասխանում է *որո՞ւ* ձևը, իսկ *որտեղի՞ց* ին՝ *ուրկե՞՞ձ* ձևը:

Ինչպես Մատթեոսի, այնպես էլ Մարկոսի Ավետարանում հանդես են գալիս տարբեր տեսակի հարցական նախադասություններ: *Ինչու-որ* հարցումները քանակով բոլորից շատ են: Միայն մեկ հարցում պարունակող կամ մենաբևեռ *ինչու-որ* հարցումները 53 հատ են, 10-ը բաղկացած են երկու *ինչու-որ* հարցումներից, իսկ 7-ը մի կողմից *ինչու-որ* հարցումներից, մյուս կողմից էլ *այս-ույ* և ընտրանքային հարցումներից և մեկն էլ հանդես է գալիս *արդեօք*-ով կազմված եղանականիշ հարցման մեջ: Այսպիսով, ընդհանուր առմամբ Մարկոսի Ավետարանում կա 80 *ինչու-որ* հարցում: Մենաբևեռների մեջ բոլորից շատ հանդիպում են *ի՞նչ*-ով կազմվածները՝ 15 անգամ, *ի՞նչու-ով* կազմվածները՝ 14 անգամ, հետո *ո՞վ-ով* կազմվածները՝ 7 անգամ, հետո *ինչպե՞ս-ով* կազմվածները՝ 5 անգամ, ապա մյուսներով՝ 1-3 անգամներ:

Այժմ ներկայացնենք մենաբևեռ *ինչու-որ* հարցական նախադասությունները՝ ըստ հարցական դերանվան քանակի շատության՝ նշելով երկբևեռ և եռաբևեռ հարցումների միայն համարները:

Ի՞նչ հարցական դերանունով հարցումներ

Ինչպես վերը նշեցինք, ի՞նչ հարցական դերանունով մենաբևեռ հարցական նախադասությունները Մարկոսի Ավետարանում բոլորից շատ են՝ 15-ը, իսկ 12-ն էլ պարունակվում են մեկից ավելի հարցումներում: Այս 12-ից տասի դեպքում ի՞նչ-ը հանդես է գալիս *n՞վ* (2, 6, 7: 8, 27: 8, 27: 8, 29: 11, 27-28), ի՞նչ (9, 34, 36-37), *ինչո՞ւ* (11, 5), *ե՞րբ* (13. 34), *ինչի՞* (4, 30-32), *որտեղի՞ց* (6, 2) հարցական դերանուններով կազմված հարցումների հետ, մեկի դեպքում՝ *այս-ոչ* հարցման հետ (1, 23-24) և մեկի դեպքում էլ ընտրանքայինի հետ (3, 4): Փաստորեն, ինչպես արդեն ասել ենք ի՞նչ-ով կազմված հարցումների քանակը Մարկոսի Ավետարանում բոլորից շատ է՝ ընդհանուր հաշվով 28-ը:

Ի՞նչ հարցական դերանունով կազմված մենաբևեռ հարցական նախադասությունները պարզ և բարդ կառուցվածքի են՝ արտահայտելով տարբեր ստորադասական և համադասական հարաբերություններ:

ա) պարզ կառուցվածքի հարցումներ.

1) Եւ նրան հարցրեց. «Անունդ ի՞նչ է» – Յիսուս անոր հարցուց. «Անունդ ի՞նչ է» (5, 9):

2) Աղջիկը դուրս գնալով իր մօրն ասաց՝ ի՞նչ ուզեմ – Աղջիկը դուրս ելլելով՝ իր մօրը հարցուց. «Ի՞նչ ուզեմ» (6, 24):

3) Նա պատասխան տուեց նրանց եւ ասաց. «Մովսէսը ձեզ ի՞նչ պատուիրեց» – Անիկա պատասխան տուաւ անոնց եւ ըսաւ. Մովսէսը ձեզի ի՞նչ պատուիրեց» (10, 3):

բ) Ետադաս կոչականով հարցում.

1) Երբ նա Յիսուսին հեռուից տեսաւ, առաջ վազեց երկրպագեց նրան, բարձրաձայն աղաղակեց եւ ասաց. «Ի՞նչ ես ուզում ինձնից, Հիսուս բարձրեալ Աստծու Որդի:...» – Երբ հեռուէն Յիսուսը տեսաւ, վազեց ու երկրպագութիւն ըրաւ անոր Եւ մեծ ձայնով մը աղաղակեց ու ըսաւ. «Դու ինձի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս, Որդի Բարձրեալ Աստուծոյ, ...» (5, 6-7):

զ) բարդ ստորադասական հարցումներ, որոնցից վերջինը առաջադաս կոչականով է. –

1) Եւ նա նրանց ասաց. «Ի՞նչ էք կամենում ինձնից, որ անեմ ձեզ համար» – Ան ալ ըսաւ անոնց. «Ի՞նչ կ'ուզեք, որ ընեմ ձեզի» (10, 36):

2) Յիսուս նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում, որ քեզ անեմ» – Եւ Յիսուս ըսաւ անոր. «Ի՞նչ կ'ուզես որ քեզի ընեմ» (10, 51):

դ) Ենթաստորադաս հարցական նախադասություն.

1) Ապա հարցրին նրան ու ասացին. «Այն ի՞նչ է, որ օրէնսագետներն ասում են, թէ նախ Եղիան պետք է գա» – Իրեն հարցուցին ու ըսին. «Այն ի՞նչ է որ դպիրները կ'սեն թէ պետք է որ առաջ Եղիան գայ» (9, 10):

ե) Ստորադասական և համադասական հարաբերությամբ բարդ հարցական նախադասությամբ:

1) Եւ ամէնքը զարմացան, այնպէս որ հարցնում էին իրար եւ ասում». «Այն ի՞նչ նոր վարդապետութիւն է, որ իշխանութեամբ պիղծ ոգիներին էլ է սաստում, եւ նրանք հնազանդում են նրան» – Ամէնքը զարմացան, այնպէս որ իրարու հարցուփորձ կ'ընէին ու կ'ըսէին. «Այս ի՞նչ է, ի՞նչ նոր վարդապետութիւն է այս, որ իշխանութիւնով պիղծ ոգիներուն ալ կը հրամայէ ու իրեն կը հնազանդին» (1, 27):

զ) Համադասական հարաբերությամբ հարցական նախադասություններ, որոնցից երկրորդը ունի առաջադաս կոչական.

1) Մինչ Յիսուս այս բանն էր խօսում, ժողովրդապետի տնից ոմանք եկան եւ ասացին. «Քո դուստրը մեռաւ, էլ ի՞նչ ես նեղութիւն տալիս Վարդապետին» – Երբ ինքը դեռ կը խօսէր, ժողովրդապետին տունէն ոմանք եկան ու ըսին. «Աղջիկդ մեռաւ, ալ ի՞նչու վարդապետը կը յոգնեցնես (5, 35):

2) Նա պատասխանեց եւ ասաց նրան. «Վարդապետ, այդ բոլորը իմ մանուկութիւնից ի վեր արել եմ. Արդ, ի՞նչ եմ պակաս թողել» (10, 20):

Ինչո՞ւ հարցական դերանունով հարցումներ

Ինչպես ասացինք, Մարկոսի արևելահայերեն և արևմտահայերեն Ավետարաններում *ի նչու*-ով կա 14 մենաբևեռ հարցական նախադասություն՝ չորսն էլ հանդես են գալիս այլ տիպի հարցումների հետ՝ մեկը՝ մեկ *այո-ոչ* հարցման հետ (4, 40), մեկը երեք *այո-ոչ* հարցման հետ (8, 17), մեկը *ի նչու-ոք*-ի հետ և մեկն էլ՝ ընտրանքայինի հետ (2, 8-9): Այս հարցումները կառուցվածքով լինում են ինչպես պարզ, այնպես էլ բարդ: Պարզերը հանդես են գալիս առաձին և առաջադաս կոչականով:

Այժմ բերենք *ի նչու*-ով կազմված մենաբևեռ հարցական նախադասությունները.

ա) Պարզ հարցումներ, որոնցից վերջինը առաջադաս կոչականով է.

1) Եւ երբ Յիսուս տուն մտաւ, աշակերտները, առանձին, հարցրին նրան. «Ի՞նչու մենք չկարողացանք հանել դրան» – ու երբ ինք տուն մտաւ, իր աշակերտները առանձինն հարցուցին իրեն՝ ըսելով. «Մենք ինչո՞ւ չկրցանք հանել զանիկա» (9, 27):

2) Իսկ օրէնսագէտներն ու փարիսեցիները, երբ տեսան, որ նա մաքսաւորների եւ մեղաւորների հետ է ուտում, նրա աշակերտներին ասացին. «Ինչո՞ւ էք մեղաւորների հետ ուտում եւ խմում» – դպիրներն ու փարիսեցիները, երբ տեսան թէ անիկա մաքսաւորներու եւ մեղաւորներու հետ կ'ուտէ, ըսին անոր աշակերտներուն. «Ի՞նչու համար մաքսաւորներու եւ մեղաւորներու հետ կ'ուտէ եւ կը խմէ» (2, 16):

բ) Բարդ համադասական հարցումներ.

1) Յովհաննէսի աշակերտները եւ փարիսեցիները ծոմ էին պահում. Եկան ու նրան ասացին. «Ի՞նչու Յովհաննէսի աշակերտները եւ փարիսեցիները ծոմ են պահում, իսկ քո աշակերտները չեն պահում» – Յովհաննէսին ու փարիսեցիներու աշակերտները ծոմ կը պահէին: Եկան ու ըսին անոր. «Ի՞նչու Յովհաննէսին ու փարիսեցիներուն աշակերտները ծոմ կը պահեն, բայց քո աշակերտներդ ծոմ չեն պահեր» (2, 18):

2) Ապա ներս մտնելով նրանց ասաց. «Ի՞նչու խռովուած ու լաց էք լինում. մանուկը մեռած չէ, այլ ննջում է» – Ներս մտնելով՝ ըսաւ անոնց. «Ի՞նչու խռովեր էք ու կու լաք. մանուկը մեռած չէ, հապա կը քնանայ» (5, 39):

3) Աշակերտները գայրացան եւ ասացին. «Այդ իւրը ի՞նչու այսպէս պիտի կորչեր – կարել էր այդ անուշահոտ իւրը վաճառել աւելի քան երեք հարիւր դահեկանի եւ տալ աղքատներին» – Կային ոմանք, որ կը նեղուէին ու կ'ըսէին. «Ինչո՞ւ համար եղաւ այդ իւրին կորուստը. Քանգի այդ [իւրը] երեք հարիւր դահեկանէն աւելի կրնար ծախուիլ ու աղքատներուն տրուիլ» (14, 4):

գ) Համադասական և ստորադասական հարաբերութիւնն արտահայտող հարցումներ.

1) Նա պատասխանեց նրանց եւ ասաց. «Եղիան նախ պիտի գայ եւ ամէն բան կարգի պիտի դնի. Իսկ ի՞նչու մարդու Որդու մասին գրուած է, որ շատ չարչարանքներ պիտի կրի ու անբզուի» – «հիրաւի առաջ Եղիան պիտի գայ եւ ամէն բան կարգի դնէ, ինչպէս գրուած է Որդին մարդոյ համար, ու շատ չարչարանքներ պիտի կրէ ու անարգուի» (9, 11):

2) Նրանք իրար միջեւ խորհում էին ու ասում. «Եթէ ասենք՝ երկնքից, մեզ կ'ասի՝ իսկ ի՞նչու նրան չհաւատացիք. Իսկ եթէ ասենք՝ մարդկանցից, ժողովրդից ենք վախենում», որովհետև բոլորը գիտէին, թէ Յովհաննէսը մարգարէ էր» – Անոնք իրենց մեջ կը խորհէին ու կ'ըսէին. «Եթէ ըսենք՝ Երկնքէն, պիտի ըսէ, Հապա ի՞նչու չհաւատացիք անոր. Իսկ եթէ ըսենք՝ Սարդոցմէ, ժողովուրդէն կը վախնէին, վասն զի ամէնքը գիտէին թէ Յովհաննէսը ճշմարտապէս մարգարէ էր» (11, 31-32):

3) Յիսուս իմացաւ նրանց կեղծաւորութիւնը եւ ասաց. «Ինչո՞ւ էք ինձ փորձում, կեղծաւորներ. Ինձ մի դահեկան բերէք, որ տեսնեմ» – Յիսուս գիտնալով անոնց կեղծաւորութիւնը՝ ըսաւ անոնց. «Ինչո՞ւ զիս կը փորձէք: Բերէ՛ք ինձի դահեկան մը որ տեսնեմ» (12, 15):

դ) Երբ հարցումը և նրան տրվող պատասխանը բերվում է միասնաբար:

1) Եւ նա իր հոգում զայրացաւ եւ ասաց. «Ինչո՞ւ է այս սերունդը նշան ուզում. Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս սերնդին նշան չի տրուի» – Անիկա իր հոգիին մէջ հառաչելով՝ ըսաւ. «Ինչո՞ւ այս ազգը նշան կ'ուզէ: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ այս ազգին նշան պիտի չտրուի» (8, 12):

2) Եւ Յիսուս նրան ասաց. «Ինչո՞ւ ես ինձ բարի կոչում. Բարի չէ ոչ ոք, այլ միան Աստուած: ...» – Յիսուս ըսաւ անոր. «Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես: Մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած:...» (10, 18):

Ո՞վ հարցական դերանունով հարցումներ

Մարկոսի Ավետարանում *n*՞*ի* հարցական դերանունով կա 7 մենաբնեռ հարցական նախադասություն, չորս էլ հանդես են գալիս *ինչու-որ* հարցումների հետ մեկտեղ (2, 6-7: 8, 29: 11, 27-28): Այս Ավետարանում *n*՞*ի* հարցական դերանունով կան պարզ և բարդ հարցական նախադասություններ:

Բերենք այդ հարցական նախադասությունները.

ա) Պարզ կառուցվածք ունեցող հարցումներ.

1) Եւ Յիսուս իսկոյն ինքն իր մէջ իմանալով իրենից դուրս ելած զօրութիւնը, դարձաւ դէպի ամբոխը եւ ասաց. «Ո՞վ դիպաւ իմ զգեստներին» – Եւ Յիսուս զիտցաւ թէ զօրութիւն մը իրմէ ելաւ, դարձաւ բազմութեան ու ըսաւ. «Ո՞վ դիպաւ իմ հանդերձներուս» (5, 30):

2) Եւ աշակերտները առաւել էւս էին զարմանում ու միմեանց ասում. «Ապա ուրեմն ո՞վ կարող է փրկուել» – Անոնք խիստ շատ զարմացան ու ըսին իրարու. «Ալ ո՞վ կրնայ փրկուիլ» (10, 26):

3) Եւ ասում էին միմեանց. «Քարը գերեզմանի դռնից մեզ համար ո՞վ պիտի գլորի» – ու իրարու կ'ըսէին. «Քարը ո՞վ պիտի գլորէ մեզի գերզմանին դռնէն» (16, 3):

բ) Ենթաստորադաս հարցում.

1) Եւ ոմանք սկսեցին թքել նրա երեսին, շորով գլուխը ծածկել, բռունցքով խփել ու ասել. «Մարգարեացիք մեզ, Քրիստոսդ, այն ո՞վ է, որ քեզ խփեց»: – Ոմանք սկսան թքնել ու անոր երեսը ծածկել և բռունցքով ծեծել ու ըսել. «Մարգարեացի՛ր» (14, 65):

զ) Երկու ստորադաս նախադասություններ, որոնք իրար նկատմամբ գտնվում են համադասական հարաբերության մեջ.

1) Եւ աշակերտները նրան ասացին. «Տեսնում ես, որ ամբոխը նեղում է քեզ, եւ ասում ես, թե՛ ո՞վ դիպաւ իմ զգեստներին» – Աշակերտները ըսին իրեն. «Կը տեսնես թե՛ բազմութիւնը քեզ կը նեղէ ու կ'սես թե՛ 'Ո՞վ ինձի դպաւ'» (5, 31):

Ինչպէ՞ս հարցական դերանունով հարցումներ

Մարկոսի Ավետարանում *ինչպէ՞ս* հարցական դերանունով կա 5 մենաբնէռ հարցական նախադասություն, մեկն էլ հանդէս է գալիս *այո-ոչ* հարցման հետ (4, 13), այսինքն ընդհանուր առմամբ 6 հարցում:

Նշված Ավետարանում *ինչպէ՞ս* հարցական դերանունով կան պարզ և բարդ հարցական նախադասություններ:

Բերենք այդ նախադասությունները.

ա) Պարզ կառուցվածքի հացրցումներ.

1) Եւ նա նրանց ասաց. «Ապա ինչպէ՞ս չէք հասկանում» – ու ըսաւ անոնց. «Յապա ինչպէ՞ս չէք հասկնար» (8, 21):

2) Եւ նա իր մօտ կանչելով նրանց՝ առակներով էր խօսում նրանց հետ. «Ինչպէ՞ս կարող է սատանան սատանային դուրս հանել:...» – Յիսուս զանոնք կանչելով՝ առակներով ըսաւ անոնց. «Ինչպէ՞ս կրնայ Սատանան Սատանայ հանել:...» (3, 23):

բ) Բարդ ստորադասական հարցում.

1) Մինչ Յիսուս ուսուցանում էր տաճարում, հարց տուեց ժողովրդին ու ասաց. «... Արդ, եթէ Դաւիթն ինքն իսկ նրան Տէր է կոչում, ինչպէ՞ս նրա Որդին կը լինի» – Երբ

Յիսուս տաճարին մեջ կը սորվեցներ՝ ըսաւ. «... Ուրեմն Դաւիթ ինք որ զանիկա Տէր կը կոչէ, ինչպէ՞ս անիկա անոր որդին կ'ըլլայ» (12, 37):

զ) Բարդ համադասական հարցում.

1) Եւ քահանայապետը իսկոյն պատռեց իր պատմուճանը եւ ասաց. «... Ահա ամէնքդ դրա բերանից լսեցիք հայհոյութիւնը. ձեզ ինչպէ՞ս է թուում:...» – Քահայանապետը իր հանդերձները պատռեց ու ըսաւ. «Ալ ի՞նչ պետք են մեզի վկաներ: Ատոր հայհոյութիւնը լսեցիք. ձեզի ինչպէ՞ս կ'երեւնայ» (14, 64):

Քանի՞ հարցական դերանունով հարցումներ

Դիտարկվող Ավետարանում *քանի՞* հարցական դերանունով կա 3 մենաբնեռ հարցական նախադասություն, իսկ մեկն էլ հանդես է գալիս չորս *այո-ոչ* հարցում պարունակող հնգաբնեռ հարցման մեջ (8, 17, 18-19): *Քանի՞*-ով կազմված 3 հարցումներից մեկը պարզ կառուցվածքի է, երկուսը՝ բարդ:

Բերենք այդ նախադասությունները.

ա) Պարզ կառուցվածքի հարցում.

1) Եւ նա հարցրեց նրանց. «Քանի՞ նկանակ ունեք» - Յիսուս հարցուց անոնց. «Քանի՞ նկանակ ունիք» (8, 5):

բ) Բարդ ստորադասական հարցումներ.

1) Յիսուս իմացաւ նրանց խորհուրդը եւ նրանց ասաց. «... Եւ երբ Եօթը նկանակը չորս հազար հոգու բաժանեցի, կտորտանքների քանի՞ զամբիւղ լիքը վերցրիք» - Յիսուս անոնց խորհուրդը իմանալով ըսաւ անոնց. «... ու երբ Եօթը նկանակը չորս հազարին կտրեցի, քանի՞ զամբիւղ լեցուն կտորուանք վերցուցիք» (8, 17, 20):

2) Ասաց նրանց. «Քանի՞ նկանակ ունեք, գնացեք, տեսեք» - Ըսաւ անոնց. «Քանի՞ նկանակ ունիք, գնացեք նայեցէ՛ք» (6, 38):

Ուր և ում հարցական դերանուններով հարցումներ

Մարկոսի Ավետարանում նշված հարցական դերանուններից յուրաքանչյուրով կան երկուական հարցական նախադասություն: Արևելահայերենի ո՞ւր հարցական դերանվանը արևմտահայերենում դարձյալ համապատասխանում է ո՞ւր-ը, իսկ ո՞ւմ-ին՝ որո՞ւ ձևը: Ո՞ւր-ով հարցումները բարդ ստորադասական են, իսկ ո՞ւմ-ովներից մեկը պարզ է, մյուսը՝ բարդ ստորադասական:

Բերենք այդ նախադասությունները.

ա) Ո՞ւր-ով բարդ ստորադասական հարցումներ, որոնցից երկրորդը ենթաստորադաս է.

1) Եւ բաղարջակերաց տօնի առաջին օրը, երբ զատկի գառն էին մորթում աշակերտները նրան ասացին. «Ո՞ւր ես ուզում գնանք պատրաստենք, որ զատկական ընթրիքն ուտես» – բաղարջակերաց առաջին օրը, երբ զատիկը կը մորթէին, անոր աշակերտները ըսին իրեն. «Ո՞ւր կ'ուզես որ երթանք պատրաստենք՝ որպէս զի զատիկը ուտես» (14, 12):

2) Եւ նա ո՞ւր տունը որ մտնի, տանտիրոջը կ'ասէք. «Վարդապետն ասում է՝ ո՞ւր է այն իջեւանը, ուր իմ աշակերտների հետ զատկական ընթրիքը պիտ ուտեմ» – ուր որ մտնէ, տան տիրոջը ըսէք. 'Վարդապետը կ'սէ, ո՞ւր է օթեւանը, ուր աշակերտներուս հետ մէկտեղ կարենամ զատիկը ուտել' (14, 14):

բ) Ո՞ւմ-ով պարզ հարցում.

1) Եւ նրանց ասաց. «Ո՞ւմն է այս պատկերը կամ գիրը» – Ըսաւ անոնց. «Որո՞ւնն է այս պատկերը ու պատկերը ու գիրը» (12, 16):

գ) «Ո՞ւմ»-ով բարդ ստորադասական հարցում.

1) Նրա մօտ եկան սաղուկեցիները, որոնք ասում են, թէ յարութիւն չկայ. հարց էին տալիս եւ ասում. «... Արդ, յարութեան ժամանակ, երբ յարութիւն առնեն, նրանցից ո՞ւմ կինը կը լինի. Քանի որ եօթն էլ նրան կին առան»- Անոր քով եկան սաղուկեցիներ, որոնք կ'ըսեն թէ յարութիւն չկայ եւ անոր հարցուցին՝ ըսելով. «... Ուրեմն յարութեան ատեն, երբ

յարութիւն առնեն, անոնցմէ որո՞ւն կինը պիտի ըլլայ. Վասն զի եօթն ալ զանհիկա կին ունեցան» (12, 18, 23):

Ո՞ր, ինչքա՞ն և որտեղի՞ց հարցական դերանուններով հարցումներ

Դիտարկվող Ավետարանում նշված հարցական դերանուններից յուրաքանչյուրով կա մեկական մենաբնեռ հարցական նախադասություն. Միայն *n ր*-ը հանդես է գալիս ընտրանքային հարցման հետ (2, 8-9), իսկ *որտեղի՞ց*-ը *ի նչ*-ով կազմված հարցման հետ (6, 2):

Արևելահայերեն *n ր* հարցական դերանունը արևմտահայերենում արտահայտված է հենց *n ր*-ով, *ինչքա՞ն*-ը՝ *որչա՞ն*-ով, *որտեղի՞ց*-ը, ուրկէ՞-ով: Դրանցից երկուսը պարզ կառուցվածքի են, մեկը՝ բարդ:

Բերենք այդ նախադասությունները.

1) Օրէնսագետներից մեկը, մօտենալով, լսում էր նրանց, մինչ վիճում էին. Երբ նա տեսաւ, թէ Յիսուս նրանց պատասխանը լավ տուեց, հարցրեց նրան եւ ասաց. «Ո՞ր պատուիրանն է առաջինը» – դպիրներեն մեկը եկաւ ու մտիկ կ'ընէր անոնց՝ երբ վիճաբանութիւն կ'ընէին ու երբ տեսաւ թէ աղէկ պատասխան տուաւ անոնց, հարցուց անոր ու ըսաւ. «Ո՞րն է բոլոր պատուիրանքներուն առաջինը» (12, 28):

2) Յիսուս հարցրեց նրա հօրը եւ ասաց. «Ինչքա՞ն ժամանակ է անցել այն օրուանից, ինչ այդ նրան պատահել է» – Յիսուս հարցուց անոր հօրը ու ըսաւ. «Ո՞րչափ ատեն է որ այդ բանը ատոր եղաւ» (9, 20):

3) Աշակերտները նրան պատասխանեցին եւ ասացին. «Որտեղի՞ց կարող ես նրանց հացով կշտացնել այս ամալի վայրում» – Իր աշակերտները պատասխան տուին իրեն. «Այս անապատին մէջ ուրկէ՞ կրնալ մեկը հացով կշտացնել ատոնք» (8, 4):

Ghukasyan Sevak – H-W Questions in Eastern & Western Armenian Gospels of Mark. – In the Gospel of Mark in the eastern version of the Armenian language there are 100 interrogative sentences, and in the Western version – 121. There are 53 H-W questions in the eastern version of the Armenian language of the Gospel of Mark, and if we take into account that the H-W questions also appear with other interrogative questions, this number increases to 80. Only sentences containing one question are simple and complex structures. In these structures there are interrogative pronouns with ի՞նչ (what?) - 15 times, ինչն՞ (why?) - 14 times, ո՞վ (who?) - 7 times, ինչպե՞ս (how?) - 5 times.

Гукасян Севак – Местоименные вопросы в восточноармянском и западноармянском Евангелии от Марка. – В Евангелии от Марка в восточном варианте армянского языка есть 100 вопросительных предложений, а в Западном – 121. Предложений, содержащих только один вопрос, в восточном варианте армянского языка в Евангелии от Марка – 53, и если учесть, что местоименные вопросы выступают также с другими вопросительными предложениями, эта цифра возрастает до 80. Только предложения, содержащие один вопрос, по структуре являются как простыми, так и сложными. В этих структурах из вопросительных местоимений чаще всего встречается ի՞նչ (что?) – 15 раз, ինչն՞ (почему?) – 14 раз, ո՞վ (кто?) – 7 раз, ինչպե՞ս (как?) – 5 раз.

Մանուչարյան Սվետլանա (Հայաստան,
Գորիսի պետական համալսարան)

ԿԱՊԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Կապանի տարածաշրջանի բարբառային միավորները չնայած Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգմամբ վկայված չեն որևէ բարբառային խմբում, կարծում ենք (և ոչ միայն մենք)՝ կարելի է ներառել Ղարաբաղի բարբառի կազմում: Հարկ է նշել, որ խնդրո առարկա տարածքում գործառուում են **Ում** և **ԼԻՍ** ճյուղերին պատկանող բարբառային միավորներ, որոնց մասին որոշ հիշատակություններ կան Ա. Ղարիբյանի և Կ. Դավթյանի աշխատություններում: Ա. Ղարիբյանը գրում է, որ «Կապանում կան գյուղեր, որոնք խոսում են Հաղրութի բարբառով. Օրինակ՝ Եղվարդ, Ծավ»¹, իսկ Կ. Դավթյանը Հաղրութի բարբառային միջավայրի մեջ է ներառել «...Հաղրութի շրջանը, Ստեփանակերտի և Մարտունու որոշ մասերը, ապա նաև Ղափանի որոշ մասը»²:

Խնդրո առարկա բարբառային միավորներից չորսը՝ Եղվարդը, Կաղնուտը, Ներքին Հանդը և Սրաշենը, **ԼԻՍ** ճյուղին են պատկանում: Այս ճյուղի բարբառակիրների հավաստմամբ իրենց նախնիները 1822-28 թթ. գաղթել են Ղարաբաղից, իսկ կաղնուտցիները վկայում են, որ իրենք Վինա գյուղից ներգաղթածների հետնորդներն են: Ինչպես փաստում է Ա. Ղարիբյանը, **ԼԻՍ** ճյուղի «...հիմնական գծերը լիա-

¹ Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն. Հնչյունաբանություն և ձևաբանություն*, Ե., 1953, էջ 233:

² Կ. Դավթյան, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Ե., 1966, էջ 234:

կատար կերպով երևան են գալիս Ղարադաղի բարբառի մեջ»:¹ Սակայն Կապանի հիշյալ խոսվածքները համաժամանակյա կտրվածքում միշտ չէ, որ ամբողջապես պահպանել են բարբառային այդ ճյուղին բնորոշ տարբերակիչ հատկանիշները: Բնական է, որ «...բարբառային ուժեղ միջավայրում այլ բարբառային ձևերը տեղի են տվել և տեղի են տալիս, մոտենալով շրջապատի ձևերին...»²: Մի շարք խոսվածքներ (Ագարակ, Արծվանիկ, Գեղի, Դավիթ Բեկ, Խղրանց, Խոտանան, Ծավ, Շիկահող, Շիշկերտ, Ուժանիս), աշխարհագրորեն հարակից լինելով **ԼԻՍ** ճյուղի բարբառային միավորներին, փոխազդել են միմյանց վրա, որը դրսևորվում է նաև լեզվի տարբեր մակարդակներում, ուստի բարբառախոսների «...նոր սերունդը նման միջավայրում կարող է լիովին յուրացնել այդ միջավայրի խոսվածքը»³: Համաժամանակյա քննությամբ նշված խոսվածքները, ըստ բարբառների ձևաբանական միահատկանիշ դասակարգման սկզբունքի, դասել ենք **Ում** ճյուղում, չնայած դրանց մի մասը (Ագ., Շ., Շշ., Ծ., Ուժ.) միջճյուղային դրսևորումներ ունի: Այս և ուրիշ գյուղերի (Հանդ) խոսվածքները ցույց են տալիս, որ իրենք պատկանել են Հադրութի կամ Ղարադաղի խոսվածքին, բայց ձուլվել են Ղարադաղի բարբառին⁴: Ա. Ղարիբյանը այսօրինակ բարբառային միավորներից է համարել Բերդ և Շիշկերտ գյուղերի խոսվածքները՝ գրելով. «Կապանի շրջանի Բերդ (՝) և Շիշկերտ գյուղերի խոսվածքը տարբերվում է «Ս» ճյուղի բարբառներից միայն իր ներկայի կազմությամբ և գործիական հոլովի վերջավորությամբ: Քերականական շատ գծերով նման է «Ս» ճյուղի հիմնական բարբառներին... Շիշկերտի խոսվածքն

¹ **Ա. Ղարիբյան**, նշվ. աշխ., էջ 282:

² **Կ. Դավթյան**, նշվ. աշխ., էջ 230:

³ Նույն տեղում, էջ 231:

⁴ **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 233:

ունի անտեղաշարժ բաղաձայնական սիստեմ»¹: Դրանով բարբառային այս միավորը պետք է նման լիներ Մեղրու բարբառին, քանի որ Հաղրութի և Ղարաբաղի խոսակցական լեզուների բաղաձայնական համակարգերը պատմականորեն երկաստիճան ձայնեղագուրկ են: Սակայն բարբառային նյութի ուսումնասիրությամբ պարզել ենք, որ այդ խոսվածքի բաղաձայնները ևս արդի ժամանակափուլում ենթարկվել են տարածաշրջանիս մյուս խոսվածքների բաղաձայնական ենթահամակարգերի կրած փոփոխություններին²: Ընդհանուր առմամբ ժամանակի հոլովություն տարբեր բարբառակիրների տեղաշարժերը և նրանց խոսվածքների տարբերակվածությունը նպաստել են տվյալ բարբառային միավորի նոր լեզվավիճակի ձևավորմանը:

Հնչյունական մակարդակում Եղվարդի, Ներքին Հանդի, Կաղնուտի և Սրաշենի խոսվածքներն ունեն որոշակի առանձնահատկություններ: Այս խոսվածքների ձայնավորական ենթահամակարգերի յուրահատկությունը պայմանավորված է կոշտ կամ բաց **պ**, **է**, **ք**, **զ** հնչատարբերակների առկայությամբ, որոնք «...ունեն հետընթաց և ավելի ստորին արտաբերություն»³: Դրանք գործառում են նաև խնդրոտ առարկա խոսվածքներին հարակից բարբառային միավորներում՝ Ագարակ, Արծվանիկ, Գեղի, Դավիթ Բեկ, Խղրանց, Խոտանան, Ծավ, Շիկահող, Շիշկերտ, Ուժանիս գյուղերում: Մյուս խոսվածքներում **ււ-ա-պ** և **օ-օ-զ** լծորդական շարքերը ամբողջական չեն, ուստի օրինակները նշել ենք զուգաձևու-

¹ Նույն տեղում, էջ 233:

² Մեր հետազոտության ընթացքում Բերդ գյուղի վերաբերյալ որևէ տեղեկություն չենք գտել: Կարծում ենք, որ այն՝ իբրև գյուղ, ներկայումս չի պահպանվել:

³ **Մ.Աղաբեկյան**, Մյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն- *Հայերենի բարբառագիտական ատլաս*, Պրակ 3, Ե., 2010, էջ 70:

թյամբ, այսպես՝ **ծըմա/պկ, ջսոջու** (Եղ., Կղ., Ս., Ն. Հ.)//**օտէլու, ըսօր**(Եղ., Կղ., Ս., Ն. Հ.) //**էսօր** (Դ. Բ., Աղ., Տ.)//**սօրէ, մըծ** (Եղ., Կղ., Ս., Ն. Հ.)//**մէծ/մէծ** (Դ. Բ., Աղ., Տ.) // **մըծ** և այլն: Հետագու-վող խոսվածքներում (Եղ., Կղ., Ս., Ն. Հ.) բառասկզբի շեշտակիր **ռ**-ի դիմաց կա **վը**, այնինչ **Ում** ճյուղի միավորներում այն համապատասխանում է **վը** //**վէ/է**-ին, օր.՝ **վընդը/վընը// վէն-դը**(Աղ., Դ. Բ., Տ.)//**վէնդը/վէնը, վըրցակ/վէրցակ** և այլն: Ինչպես Ղարաբաղի և Հաղրութի բարբառներում, այնպես և Կապանի տարածաշրջանի խոսվածքներում գործառում են քմային հնչյուններ, օր.՝ **ուսիճս, հսնքու, մսնքնք, կիհՆէգ, պուս-պունծու** և այլն: **ԼԻՍ** ճյուղի խոսվածքներում հնչյունական իրողությունները բացատրվում են այս տարածաշրջանի մյուս բարբառային միավորներին հատուկ հնչյունական և հնչյունափոխական օրենքներով, ինչպիսիք են Աճառյանի օրենքը, ձայնավորների ներդաշնակությունը, վերջնթեր շեշտի գործառությամբ նախորդ վանկի ձայնավորի սղումը կամ **ը**-ի վերածվելը շեշտանախորդ վանկում: Քննության առարկա խոսվածքներում առկա **լէնջ**¹ «լանջ» բառը հավանաբար ձևավորվել է Աճառյանի օրենքի տարածման փուլում՝ **ա>ւ** է անցմամբ, իսկ **սօրու** «ած. 1. սիրուն, մկր. 2. պատշաճ» (նաև՝ Աղվանի, Դավիթ Բեկ, Տանձավեր գյուղերում) տարբերակը, կարծում ենք, հետևանք է նախ՝ ձայնավորների շրթնային ներդաշնակության, ապա՝ քմայնացման (Գորիսի խոսվածքներում՝ **սուրու**, որում վերջին վանկի **ու**-ի ազդեցությամբ **ի**-ն դարձել է **ու**, հետո՝ քմայնացել, ինչին հաջորդել է ձայնավորների լրիվ ներդաշնակությունը): Եղվարդի, Ներքին Հանդի, Կաղնուտի և Սրաշենի խոսվածք-

¹ Տե՛ս **Ա. Յու. Մարգարյան, Ղարաբաղի բարբառի բառարան**, Ե., 2013, էջ 240, **Ա. Մ. Ղողոսյան, Հաղրութի բարբառ**, Ե., 1965, էջ 83:

ներում գաղտնավանկային ը-ն շրթնային ներդաշնակության է ենթարկվել **փոքուր** «փոքր» բառաձևում:

Համաժամանակյա հայեցակետով զուտ **ԼԻՄ** ճյուղի խոսվածքների բառաշերտին բնորոշ, տեղայնացված բառեր գրեթե չկան. դրանք միևնույն բառի՝ բարբառային հնչունափոխության ենթարկված տարբերակներն են, այսպես՝ **պլլիթ** (Եղ., Կղ., Ս., Ն.Հ.)//**պի/իլիթ** (ը-ը-ն առկա է **ԼԻՄ** ճյուղի, իսկ **ը-ի/ի**-ն՝ Ում ճյուղի խոսվածքներում), **կպոթնը** (Եղ., Կղ., Ս., Ն.Հ.)// **կպոթնը** // **կպրթնը** (Կպ., Ագ., Արծ., Աճ., Գ., Գղ., Սյ., Նշ., Խ.) «կաթ», **հա/պոթնը** (Եղ., Կղ., Ս., Ն.Հ., Շ., Ծ., Շշ., Խղ.)// **հա/պրթնը** (Աղ., Դ.Բ., Տ.)// **հա/պոթնը** (Կպ., Արծ.)// **հա/պոսը**, **խո/զոթնը** (Եղ., Կղ., Ս., Ն.Հ.)// **խո/զրնը** (Շ., Ծ., Շշ., Խղ.)// **խո/զոթնը** // **խո/զրթնը** // **խո/զրցը** «խուրձ»: Կան այնպիսի բառեր, որոնք տարբեր հնչունափոխական երևույթների հետևանք են, օր.՝ **սվիլ** (Եղ., Կղ., Ս., Ն.Հ.) // **էվիլ** (Աղ., Դ.Բ., Տ.)//**սվոնլ** , **սրին** (Եղ., Կղ., Ս., Ն.Հ.)//**սրոնլ**, **օ/զման** // **ըման** (Եղ., Կղ., Ս., Ն.Հ.) // **օ/զմեն** (Ագ., Շ., Ուժ.) // **սմե/ան**, **մաշկ** (Եղ., Կղ., Ս., Ն.Հ.)//**մեշկ** (Կպ., Արծ., Աղ....), **հա/պր** (Եղ., Կղ., Ս., Ն.Հ.) // **հեր** (Դ.Բ., Աղ., Տ.), **խըլզզնը** (Եղ., Կղ., Ս., Ն.Հ.)// **խըլեզնը** (նան՝ **ղըզլըհնքի** «մողես», որը բաղարկվել է թրք. *kəzəl* «կարմիր» բառի հետևի Դարաբաղի բարբառում առկա **խըլըզնըհնքի** «1. մողեսի պոչ, 2. խոտաբույս, 3. հեգ. բարակ ծամ»¹ բառի աղճատված տարբերակն է. **խըլըզն** արմատի բաղաձայնների կուտակման պարզեցմամբ՝ Լ-ի անկմամբ էլ Գորիսի խոսվածքներում առկա է **խըզնըհնքոն** «փոքր մողես»²) և այլն:

¹ Ա. Յու. Մարգարյան, նշվ. աշխ, 2013, էջ 272:
² Ա. Մարգարյան, *Գորիսի բարբառը*, Ե., 1975, էջ 400:

Կապանի վարչատարածքային միավորների բարբառային տարբերակվածությունն ավելի զգալի է ձևաբանական մակարդակում:

Եղվարդի, Կաղնուտի, Սրաշենի և Ներքին Հանդի խոսվածքներում գործառում են հոգնակերտ այն մասնիկները, որոնք առկա են տարածաշրջանիս մյուս բարբառային միավորներում: Ի տարբերություն **Ում** ճյուղի խոսվածքների՝ նշված միավորներում կիրարկում են **-նի** մասնիկ, օր.՝ *տըխտըկնի, ընջուկնի, ծըմըկնի, տէնակնի* և այլն: Կ. Դավթյանը վկայում է, որ **-նի**-ն Արցախում «...գործածվում է հիմնականում Գորիսի, Ղափանի, Կիրովաբադի, Շահումյանի շրջաններից ներգաղթածների խոսվածքներում»¹: **Նի** հոգնակերտը գործուն է **Ում** ճյուղի քննվող խոսվածքներից միայն Դավիթ Բեկում, Տանձավերում ու Աղվանիում, որոնք, աշխարհագրորեն մոտ լինելով Գորիսի տարածաշրջանին, լեզվական առումով ևս որոշակի ազդեցություններ են կրել: Սյունիք-Արցախ տարածքի բարբառային միավորներին բնորոշ է բացառական հոլովի երկու եղանակ՝ *համաղրական ա/ան(ն)* թեքույթով (օր.՝ **տանա(ն), մարթա(ն), ճիրան(ն)**) և *վերլուծական՝ անա* և *նէ/ըստա* բառ-մասնիկներով, որոնք ավելանում են սեռական հոլովաձևին: Կապանի տարածաշրջանի խոսվածքներում այս բառ-մասնիկներից առաջինը կիրառվում է ն՝ իրանիշ, և՛ անձնանիշ գոյականների դեպքում (օր.՝ **քարէն անա, կընանուցը(ն) անա**), իսկ երկրորդը՝ միայն անձ ցույց տվող գոյականների հետ (օր.՝ **ախպուրը նէ/ըստա, մարթէն նէ/ըստա**), ընդ որում՝ **նէ/ըստա**-ն հաճախադեպ է **ԼԻՍ** ճյուղի խոսվածքներում: Ըստ Ղարիբյանի՝ Շիշկերտի խոսվածքի բացառականը կազմվում է **նանի** մասնիկ-բառով², որը տվյալ ժամանակափուլում կրել է

¹ Կ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 88:

² Տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 233:

Կաթավաբերդի բարբառի ներգործությունը (հմմտ.՝ «*ծառին նսնի*»¹), սակայն ներկայումս այն չի կիրակվում: Ներգոյական հոլովի իմաստը Եղվարդի, Կաղնուտի, Մրաշենի և Ներքին Հանդի խոսվածքներում դրսևորվում է սեռականով և **մաչ** կապի հոլովաձևով, օր.՝ **սըրտէն մաչին, տանը մաչին...**, իսկ անձանունների և անձանիշ գոյականների պարագայում՝ սեռական-տրականով և **անըմ** կամ **մաչին** հետադրությամբ, օր.՝ **Ըջօտէն անըմ, մարթօւ/էն մաչին//անըմ** և այլն: Տեղի և ժամանակի գաղափար արտահայտող բառերն ունեն **-ում** վերջավորության հնչյունափոխված **-ըմ** տարբերակ, օր.՝ **ամսըմ(ը), սարըմ(ը)...**, իսկ հատուկ տեղանունների դեպքում՝ ուղղականաձև հայցական, օր.՝ **Ղափան հըրսանէք ա** «*Ղափանում* հարսանիք է» և այլն: Ղարաղաղի բարբառի ներգոյականը ևս կազմվում էր **-ըմ** վերջավորությամբ (հմմտ.՝ *ջիրըմը, կընգանըմը*)², ուստի, կարծում ենք, հիշյալ չորս խոսվածքները պահպանել են ձևաբանական այս հատկանիշը: Ի տարբերություն Կապանի տարածաշրջանի բարբառային միավորների՝ քննվող խոսվածքներում ածականի գերադրական աստիճանին հատուկ է դերանվան **լօխձան/լօխձաց** բացառական հոլովաձևերի և ածականի հարադրությունը, օր.՝ **լօխձան կիծի, լօխձաց լսվ** և այլն: Հադրութի խոսվածքներում ևս ածականի գերադրական աստիճանը ունի նման կազմություն. հմմտ.՝ *լուխչձաց պիծին, լօխձաց պէրակը*³ և այլն: Խնդրո առարկա խոսվածքների դերանվանական ենթահամակարգերում զուգաձևությունները մասնակի են. **մենք** դերանունը գործածվում է հետևյալ տարբերակներով՝ **մէք** (Աղ., Դ.Բ., Տ.)//**մուք** (Կպ., Արծ., Գ., Խ., Ուծ., Վ.,

¹ **Հ. Դ. Մուրադյան**, *Կաթավաբերդի բարբառը*, Ե., 1967, էջ 111-112:

² Տե՛ս **Ա. Ղարիբյան**, նշվ. աշխ., էջ 298-299:

³ Տե՛ս **Ա. Մ. Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 127, **Ա. Յու.Սարգսյան**, *Շաղախի ենթաբարբառը Հադրութի ենթաբարբառի միջավայրում*, Ստեփանակերտ, 2009, էջ 36:

Սյ., Գղ., Աճ.) // **մը/ըք** (Եղ., Ծ., Կղ., Ն.Հ., Ծ., Ս., Ծշ., Լ.): Տեղին է հավելել, որ **մէք**-ը առկա է Մեղրու, **մուք**-ը՝ Ղարաբաղի և Հաղրութի, իսկ **մըք**-ը՝ Կաքավաբերդի բարբառային միավորներում: **Էս, էթ/տ, էն** դերանունների սեռական և տրական հոլովները Եղվարդի, Կաղնուտի, Ներքին Հանդի, Սրաշենի խոսվածքներում ունեն **նուստուր, ուսուր, ունդուր** ձևերը, Ում ճյուղի Դավիթ Բեկ, Աղվանի և Տանձավեր գյուղերում՝ **ըստուր, ըսուր, ընդուր**, իսկ մյուսներում՝ **ըստրան(ն), ըտրան(ն), ընդրան(ն)** ¹: Հետաքրքրական է այն, որ **նուստուր, ուսուր, ունդուր** հոլովաձևերը առկա են նաև Հաղրութի Շաղախ-Խծաբերդ խոսվածքում²: Հարկ է նշել, որ Կապանի տարածաշրջանի խոսվածքներում գործառվող **Էս, էթ/տ, էն** դերանունների թեք հոլովների գուգաձևությունները պայմանավորված են Ղարաբաղի, Հաղրութի և Կաքավաբերդի բարբառային միավորների ազդեցությամբ: Ինչպես Ղարաբաղի բարբառը, Կապանի տարածաշրջանի խոսվածքները ևս ցուցական դերանունների երկու տիպերի (**սա, դա, նա** և **այս, այդ, այն**) խառնուրդ ներկայացնող բարբառային միավորների թվին են պատկանում, քանի որ դրանցում **Էս, էթ/տ, էն** ցուցականները թեք հոլովաձևերում **տ**-ի հավելման հետ ունեն նաև **րա** հնչյունախումբ³: Այս իրողությունը ակներև է Կաքավաբերդի

¹ Հիշյալ խոսվածքներում ևս **Էս** (այս), **էթ/տ** (այդ), **էն** (այն) ցուցականների սեռականի հոլովաձևերը, ինչպես վկայում են լեզվաբանները, առնչվում են գրաբարյան **այսք, այդք, այնք** ձևերին [Չ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 2, Ե., 1954, էջ 230: Վ. Կատվայան, *Հայ բարբառագիտության հարցեր*, Ե., 2014, էջ 89]:

² Տե՛ս Ա. Մ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 142-14:

³ Վ. Կատվայան, նշվ. աշխ., էջ 91:

բարբառում, որում սեռականի վերոբերյալ ձևերը վերջավորվում են **ւմ**-ով, հմմտ.՝ **նւստմիր** - «**նւստմիր(ւմ)**»¹ (Կքվ.) և այլն:

Այս տարածաշրջանի խոսվածքների բայական համակարգերում առկա իրակույթները տարբերակիչ են տվյալ միավորի համար, որոնք, իբրև խոսվածքային յուրահատկություններ, «...տարածքի բնակիչներին թույլ են տալիս հեշտությամբ որոշելու խոսողի՝ որ համայքից լինելը»²: Մյունիք-Արցախ բարբառային գոտու **ԼԻՍ** ճյուղի միավորներում, այդ թվում և հետազոտության առարկա խոսվածքներում, ընդհանրական են **-ս**-ով վերջավորվող դերբայով ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը, օր.՝ **քիս ըս** «գնում ես», **կմս ւմ** «գալիս է», **տաս ար** «տալիս էր» և այլն: **ԼԻՍ** ճյուղի բարբառները **-լիս**-ով դերբայական ձևերում ամբողջ վերջավորության իմաստը խտացրել են վերջին «**ս**» հնչյունի մեջ՝ դարձնելով այն ներկայի գաղափարն արտահայտելու միջոց³: Ա. Ղարիբյանը, անդրադառնալով **-ոււմ**-ով անկատարի՝ բարբառներում կրած հնչյունափոխությանը, դերբայի և **եւմ** բայի ձայնավորների ներդաշնակությանը, նշում է. «...Սրաշենի խոսվածքում օժանդակ բայը և արմատի առաջին ձայնավորն են ներդաշնակում դերբայի վերջավորության հետ, որի հետևանքով ստացվում է՝ **կմւրում ոււմ**»⁴: Արդի փուլում **գրել** բայի ներկա անկատարի համար Սրաշենում մենք գրանցել ենք **կիրիս ըւմ** տարբերակը: **ԼԻՍ** ճյուղի խոսվածքներում անցյալի ժամանակաձևերի իմաստը արտահայտվում է ինչպես ձևաբայի և օժանդակ բայի անցյալի դիմաբովային խոնարհաձևերով (**ի, իր, ա/ւր, իք/ք, ին**), այնպես և ներկայի ժամանակաձևերի ու **լ/ււլ** (<լէալ) բայի

¹ **Հ. Դ. Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 130:

² **Վ. Կատվայան**, նշվ. աշխ., էջ 119:

³ **Ա. Ղարիբյան**, նշվ. աշխ., էջ 167:

⁴ Նույն տեղում, էջ 165

հարադրությամբ. վերջին կազմությունն ընդհանրապես բնորոշ է Կապանի տարածաշրջանի **Ում** ճյուղի միավորներին, բացառությամբ Դավիթ Բեկի, Աղվանու և Տանձավերի, օր. **օտիս ի // օտիս ըմ լնլ , մընաս ար// մընաս ա լնլ** , իսկ եզակի երրորդ դեմքի համար նաև առանց **ա/ան-ի՝ կնս ւնլ** , որը, կարծում ենք, առաջացել է արագախոսության հետևանքով: Նման գուգաձևություններն առկա են Շաղախի «ենթաբարբառում» (հին սերունդ՝ *խըմիս ըմ լնլ*, նոր սերունդ՝ *շինիս ի*): Այլ է պատկերը մեր կողմից հետազոտվող խոսվածքներում. օժանդակ բայի անցյալի դիմաթվային խոնարհաձևերից բաղադրված կառույցներն այժմ պահպանվել են միայն տարեցների խոսակցական լեզվում և տարածում ունեն **ներկայի ժամանակաձևեր + լնլ** քերականական կաղապարները: Դրանք ի սկզբանե ընկալվել են որպես երկրորդական վերլուծական ժամանակներ, ապա Կապանի **Ում** ճյուղին պատկանող խոսվածքների ազդեցությամբ՝ իբրև հիմնական, քանի որ Եղվարդի, Կաղնուտի, Ներքին Հանդի և Մրաշենի խոսվածքներում անցյալի հիմնական ժամանակաձևերը արտահայտում էին **եմ** բայի անցյալի դիմաթվային ցուցիչների հարադրությամբ: Նկատելի է, որ ուսումնասիրվող խոսվածքներում ևս «...բաղադրյալ երկրորդական ժամանակները, առաջանալով գլխավորներին զուգահեռ, ստեղծում են կերպաժամանակային նոր իմաստներ, բայց ժամանակի ընթացքում հաճախ փոխարինում են գլխավորներին»²: Կապանի՝ **ԼԻՄ** ճյուղին դասվող չորս խոսվածքները, ի տարբերություն մյուսների, ունեն ընթացակցական և

¹ Տե՛ս **Ա. Յու. Սարգսյան**, նշվ. աշխ., 2009, էջ 55-56:

² **Ժ.Միքայելյան**, Բայի երկրորդական ժամանակները Ղարաբաղի բարբառում.-*Հայոց լեզվի պատմության հարցեր*, Միջազգային հայերենագիտական ութերորդ գիտաժողովի զեկուցումներ (15-18 օգոստոսի, 2008), Ստեփանակերտ, 2008, էջ 52:

-ական-ով ապառնի դերբայներ: Ընթացակցական դերբայը, գործածական լինելով նաև Ղարաբաղի և Հաղրութի բարբառներում, համապատասխանում է անորոշ դերբայի գործիական հոլովաձևին՝ **-ա/անվ** վերջավորությամբ¹, օր. **ըպրելավ, քինիլանվ** և այլն: Այս դերբայի և օժանդակ բայի ներկա (**ըմ, ըս, ա/ան, ըք, ըք, ըն**) ու անցյալ դիմաթվային խոնարհիչների հարադրությամբ էլ կազմավորվում են ընթացակցականի ժամանակաձևեր, ինչպես՝ **հըսնելավ ըմ/ըք, «պրծնելավ ըս, թխելավ ա»², հըսնելավ իր...**: Այս կազմությունները, գործողության շարունակական գաղափար արտահայտելով, իմաստապես նմանվում են նաև անգլերենի գերունդին (gerund): Ա. Ղարիբյանը Հաղրութի բարբառում այս դերբայից և էական բայի ներկայի խոնարհաձևերից բաղադրված ժամանակաձևը (օր. **«խըմէլանվ ըմ»**) ևս համարում է շարունակական ներկա³: Եղվարդ, Կաղնուտ, Ներքին Հանդ և Սրաշեն գյուղերի տարեց բարբառակիրները ապակատար դերբայը և նրանից հարադրված ժամանակաձևերը կազմում են **-ական/անկան-ով՝ ըսըլական ըս, կիլանկան ի, քինանկան ըք** **Լ ան** ..., որոնք առկա են նաև Ղարաղաղի, Ղարաբաղի, Հաղրութի, Հավարիկի, Մեղրու բարբառներում⁴: Իսկ նոր սերունդը Կապանի Ում ճյուղի խոսվածքների ներգործությամբ կիրառում է նաև **-ու/ուն**-ով տարբերակներ, օր. **խուսալու, պիրօլու վըմ, կան ու իր** և այլն: Կապանի վարչատարածքային միավորների լեզվական ընդհանրություններն ու յուրահատկությունները ակնառու են հատկապես անցյալի

¹ Տե՛ս **Կ. Դավթյան**, նշվ. աշխ., էջ 148:

² **Հ.Աճառյան**, *Քննություն Ղարաբաղի բարբառին*, Վաղարշապատ, 1899, էջ 174:

³ **Ա. Ղարիբյան**, նշվ. աշխ., էջ 182:

⁴ Տե՛ս **Ա. Մ.Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 167, **Է.Աղայան**, *Մեղրու բարբառը*, Ե., 1954, էջ 196:

Ժամանակաձևերի կազմության դեպքում: Եթե հետազոտության առարկա բարբառային միավորներում գործառում են անցյալ կատարյալի համադրական ձև (օր.՝ **մուտացե, պիրեցեն...**), ապա **Ում** ճյուղի խոսվածքներում, բացի Դավիթ Բեկից, Աղվանուց և Տանձավերից, այն արտահայտվում է վերլուծական եղանակով՝ վաղակատարի ներկայով (օր.՝ **մօտե յըմ կացա(յ), պիրալ ըն**): Եղվարդի, Կաղնուտի, Ներքին Հանդի և Սրաշենի խոսվածքներն ունեն ըղձական և ենթադրական եղանակների անցյալի համապատասխան ձևեր (օր. **ըշխադի, լիսիր, կըշխադի, կըլիսիր**), որոնք, սակայն, **Ում** ճյուղի խոսվածքների մեծ մասում այլ կերպ են դրսևորվում. այդ եղանակների անցյալի ապառնի ժամանակաձևերը արտահայտում են սահմանականի անցյալ ապակատարով, որն էլ ստեղծում է քերականական համանունություն՝ տարբերվելով միայն խոսքաշղթայում, օր.՝ **կըղնելու վըմ Լ ան** «*կանգնելու էի, կանգնեի, կկանգնեի*»¹: **ԼԻՍ** ճյուղի վերոնշյալ խոսվածքները, Հադրութի բարբառի նման, հարկադրական եղանակը կազմում են **պիտի** եղանակիչի **բի/եղի, պիտիմ** բայի **բեղմա** տարբերակներով և ընձական եղանակի ապառնի ու անցյալի ապառնի ժամանակաձևերի հարադրությամբ, օր.՝ **բեղի նըստիս, բիդի լիսիր, բեղմա օտի**, ընդ որում՝ **բի/եղի**-ով կազմությունները գրանցել ենք նաև Ծավ, Շիկահող, Շիշկերտ և Ճակատեն գյուղերի տարեց բարբառակիրների խոսվածքներում: Հարկադրական ապառնիի այս ձևերին զուգահեռ բարբառախոսները գործածում են անորոշ դերբայից և **պիտիլ** բայից բաղադրված տարբերակ, որում խոնարհվում է միայն եղանակիչը², օր.՝ **քինիլ բիդի, մընալ բիդիս** և այլն: Հավելել ենք, որ Հադրութի խոսվածքում

¹ Այդ մասին տե՛ս նաև **Ժ.Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 51:

² Տե՛ս **Գ.Գ. Գևորգյան**, *Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի տարածագործառական բնութագիրը*, Ե., 2013, էջ 142, **Ա. Մ. Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 176:

կան նաև բիդնի (<պիտեր) ձևով կազմություններ, ինչպես «բիդնի կար»¹ և այլն, որոնք չեն պահպանվել մեր տարածաշրջանի խոսվածքներում: Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը քննվող խոսվածքներում կազմվում են անկատար, ապակատար, հարակատար, վաղակատար, ընթացակցական դերբայներով և լ/ւնի ու նիս (մյուս խոսվածքներում՝ նոմ) մասնիկներով, օր.՝ հրսնիս ըմ նիս, պի/իրնի ի ւնի, մուտըմական ըս լնի (նիս), քիս ըս բիդի նիս և այլն: Կապանի տարածաշրջանի խոսվածքներում երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը կիրառության լայն հաճախականություն ունեն, ինչպես Ղարաբաղի և Հաղարթի բարբառներում²: Հարկ է հավելել, որ Ա. Ղարաբաղի Հաղարթի բարբառում նիս և լնի մասնիկներին հարադրված ժամանակաձևերը դիտարկել է իբրև շարունակական ժամանակների³: Ինչպես նշում է Ժ. Միքայելյանը, բայի երկրորդական ժամանակաձևերը ունեն գործողության բազմակատար ու երկարատև բնույթ, և բայի՝ «...այսպիսի իմաստային երանգը ընդունված է անվանել շարունակականություն»⁴:

Եղվարդ, Կաղնուտ, Ներքին Հանդ և Սրաշեն խոսվածքներում արգելական հրամայականն ունի հետադաս մի մասիկի մե՛, մե՛ք հնչյունափոխ ձևեր, իսկ Կապանի տարածաշրջանի մյուս բարբառային միավորներում այլ տարբերակներ՝ մի՛, միք(Աղ., Դ.Բ., Տ., Բ.)//մն՛, մն՛ք (Օ., Շ.)// մա՛, մաք (Ում ճյուղի մյուս խոսվածքներում), ընդ որում՝ մե, մեք և

¹ Տե՛ս Ա. Մ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 176:

² Տե՛ս Կ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 195-197, Ժ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 49-52:

³ Տե՛ս Ա. Ղարաբաղյան, նշվ. աշխ., էջ 182-183:

⁴ Տե՛ս Ժ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 52:

ման՝, մանք ձևերը առկա են Մեղրու բարբառում¹, մե, մեք-ը՝
Հաղորություն²: Արգելական մասնիկը մի դեպքում հարա-
դրվում է հրամայական եղանակի ժամանակաձևին, օր.՝ **առե՛**
մե, պիրե՛ մեք, իսկ մյուս դեպքում հարազատ մնալով
Ղարադաղի բարբառին՝ զուգորդվել է անորոշ դերբային ³,
օր.՝ **կիրի՛լ մե, պիրի՛լ մեք...**: Այս կազմությունները բնորոշ են
նաև Հաղորթի խոսակցական լեզվին:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ Կապանի
տարածաշրջանի խոսվածքային տարբերությունները բացա-
տրվում են լեզվական և արտալեզվական գործոններով: Աշ-
խարհագրորեն մերձակից Ներքին Հանդ և Սրաշեն գյուղերի
բարբառակիրներն ավելի կայուն են պահպանել իրենց նախ-
նիների խոսակցական ձևերը, քան Եղվարդում և Կաղնու-
տում, քանի որ վերջիններս մեկուսի են և գտնվում են **Ում**
ճյուղի բարբառային միջավայրում: Կաղնուտի խոսվածքով
ներկայումս հաղորդակցվում են այդ գյուղի միայն տարեց-
ները, հետևաբար այն **Ում** ճյուղի խոսվածքներին ձուլվելու
եզրին է: Կապանի տարածաշրջանի խոսվածքների յուրա-
հատկությունները էական են ոչ միայն դրանց ընդհանուր
նկարագիրը տալու, այլև հստակ պատկերացնելու դրանց
ձևավորման ու հետագա զարգացման ընթացքը, բարբա-
ռային այլ միավորների հետ ունեցած առնչություններն ու
աղերսները: Կարծում ենք՝ Կապանի տարածաշրջանի բար-
բառային միավորների ամբողջական հետազոտության հա-
մար ևս «...հարկ է տարբերակել և ներմուծել **խոսվածքային**
հատկանիշ հասկացությունը»⁴, որի դրսևորման մասնավոր
բնույթն էլ տվյալ խոսվածքի յուրահատկությունն է: Կապանի
ԼԻՄ ճյուղի բարբառային միավորների համար կարելի է

¹ Տե՛ս **Է.Աղայան**, նշվ. աշխ., էջ 210:

² Տե՛ս **Ա.Մ. Պողոսյան**, նշվ. աշխ., 218:

³ Տե՛ս **Գ.Գ. Գևորգյան**, նշվ. աշխ., էջ 153:

⁴ **Վ.Կատվայան**, նշվ. աշխ., էջ 120:

դիտարկել հնչյունական 2 հատկանիշ, ձևաբանական հատկանիշներից՝ անվանական՝ 5, բայական՝ 6: Այսպիսով, Կապանի տարածաշրջանի **ԼԻՍ** ճյուղի խոսվածքները, «...հանդիպելով «ուս» ճյուղի Ղարաբաղի բարբառին, ուժեղ ազդեցության ենթարկվելով՝ բավականին ազդվել են նրանից՝ որոշ ձևափոխությամբ պահպանելով «ս» ճյուղի...»¹ տարբերակիչ հատկանիշները: Համաժամանակյա կտրվածքում **ԼԻՍ** ճյուղի խոսվածքները կրում են Սյունիք-Արցախի բարբառային գոտու **ՈԻՎ** ճյուղի խոսվածքների և արդի գրական հայերենի ազդեցությունները: Լեզվական ներգործություններն այս տարածաշրջանի բարբառային միավորներում ստեղծել են որոշակի տարբերություններ, որոնք առկա են տարեց և երիտասարդ բարբառախոսների հաղորդակցման լեզվի միջև՝ պայմանավորված կյանքի՝ հասարակական, տնտեսական և մշակութային փոփոխություններով:

Manucharyan Svetlana-The comparative examination of the dialects of Kapan region.-The article relates to the peculiarities of the dialectal units of **LIS** branch of Kapan region in all language levels. We have represented the comparative description of these dialects by pairing them with other dialectal units of Syunik-Artsakh region.

Манучарян Светлана-Сравнительное исследование говоров Капанского региона.-В статье мы исследовали особенности всех уровней языка характерного диалектным единицам ветви **ЛИС** Капанского региона. Мы представили сравнительное описание этих говоров, которые так же сопоставляя с другими диалектными единицами территории Сюник-Арцах.

¹ Կ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 235:

Մատիկյան Հասմիկ (Հայաստան, ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոն)

ԼԵԶՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Բանահյուսական օրորոցային տեքստի լեզվական մշակույթում ուշադրության է արժանի ժողովրդական բառ ու բանի մեկնությունը, որը ժողովրդի հոգեկերտվածքի և լեզվամտածողության ցուցիչն է: Բանահյուսական օրորոցային տեքստի բառամթերքը ոճական արժեք և հուզաարտահայտչական երանգավորում ունի տարբեր լեզուներում (անգլերեն և հայերեն):

Օրորոցայինը՝ որպես բանավոր ավանդության առանձին ժանր, ունի ուրույն բառապաշար, որի ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել օրորոցային տեքստերի թեմատիկ դասակարգում *գովերգ, օրհնանք*:

Գովերգ օրորոցային տեքստն (Praise lullaby text) ունի ինքնատիպ բառաֆոնդ՝ ուրույն ոճական արժեքով: Այսպիսի տեքստերում օգտագործված գրեթե յուրաքանչյուր բառ դիտվում է իբրև գեղարվեստական պատկեր ստեղծող միջոց: Այս համատեքստում առաջնային է բառի հուզաարտահայտչական երանգավորումը: Օրորոցային տեքստի ունկնդրին և նրա շրջակա միջավայրը գովերգելը գովերգ տեքստի «նախապայմաններից» մեկն է.

Sleep serenely, baby, slumber
Lovely baby, gently sleep;
Tell me wherefore art thou smiling
Smiling sweetly in thy sleep¹.

¹ <http://www.lullaby-link.com/sleep-my-baby.html>
(accessed: 12.01.2017).

Վերոնշյալ օրոքը սկսվում է հորդոր-ուղերձով. օրոք երգողը անգամ քուն բառին է հաղորդում հուզական լիցք՝ *անխռով, փաղաքուշ*:

Օրորոցային տեքստերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, թե մանկանը օրոք երգող մայրն ինչպիսի չափազանցություններ է օգտագործում երեխային նկարագրելու, նրան հասցեագրված իր հույզերն ու ապրումներն արտահայտելու համար.

*Քո գինդ է հազար ոսկի,
Հազար ալ կուտամ էլըլի,
Հազար ալ անոր կուտամ,
Լուս երեսդ էրկու պէնկ (ունի):*

Հետաքրքրական է այն, որ ոճական այս կամ այն հնարի ընտրությունը տեքստում բխում է օրորասացի բուն նպատակաուղղվածությունից:

Օրորոցային տեքստի առանցքային բաղադրիչներից է բառային կապակցվածությունը (lexical cohesion), առանց որի հնարավոր չէ ամբողջական տեքստ «արտադրել»: Կապակցվածության միջոցներից մեկը թեմատիկ բառապաշարի ընտրությունն է, երբ բառերը իմաստային միևնույն դաշտին են պատկանում: Բառային կապակցվածության կարևոր եղանակներից մեկը կրկնությունն է (reiteration): Այն բառային համատեքստում բնավ չի նշանակում նույն բառի կամ բառային միավորի նույնակերպ կրկնությունը, այլ այդ բառը հոմանիշով կամ մոտ իմաստ արտահայտող բառով փոխարինելը:

Մեջ բերենք հետևյալ օրորոցային տեքստը, որտեղ օրորասացը ուշագրավ բառային միավորներ է գործածում երեխային գովերգելու և իր սերը արտահայտելու համար: Գովերգ արտահայտող բառային շղթան շարունակվում է ամբողջ տեքստի հյուսվածքում.

*Նանար բալես, նանար,
Նանար բայիկս, նանար,*

*Մարի ամբուլ իմ բալեն,
Բաղի բլբուլ իմ բալեն,
Միրուն լալես, իմ բալես,
Նանար, նանար բալա ջան,
Անուշ նանար իմ ծաղիկ,
Դռանս անուշ վարդ, իմ բալա,
Միրուն ծաղիկ իմ լալա,
Իմ քնքուշ Անգելա,
Իմ սիրուն, նանար բալա,
Նանար, նանար իմ բալա,
Նանար ծաղիկս,
Նանար անուշիկս,
Անուշ, անուշ իմ բալիկ,
Իմ սիրունիկ, իմ լալիկ,
Մարի ամբուլ է բալես,
Բաղի բլբուլ է բալես,
Նանար, նանար, անուշ նանար իմ բալա²:*

Բերված օրոքոցային տեքստում օգտագործվում են երեխային բնութագրող անձը բնորոշող պատկերավոր արտահայտություններ, որոնք հուզաարտահայտչական նոր երանգ են ստանում և արտացոլում են նաև օրորասացի հոգեվիճակը, տվյալ պահին ունեցած ապրումները: Կարելի է նաև դիտարկել վերը բերված գովերգի բառային միավորները հումանիշային հարացույցում/*Մարի ամբուլ, Բաղի բլբուլ, Միրուն լալես, իմ ծաղիկ, անուշ վարդ*: Օրորասացը ծաղիկների տարբեր անուններ է գործածում տեքստում՝ ստեղծելով ծաղկային, անուշահոտ միջավայրի տպավորություն: Գովերգ օրոքոցային տեքստերում համեմատական նկարագրման գերակայությունը կարելի

² *Հասմիկ Մնացականի Բաղրասարյան, ծնվել է 1936թ. Քարաբերդ գյուղում: Ունի միջնակարգ կրթություն: Նախնիները գաղթել են Մուշից 1915թ (Հ. Մատիկյանի գրառումներից):*

է բացատրել նաև օրորոցայինի ժանրային առանձնահատկություններով:

Ըստ էության, հուզաարտահայտչական բառապաշարը կարևոր միջոց է մանուկ ունկնդրին այլ աշխարհ (քնի աշխարհ) տեղափոխելու համար:

Օրորասացը իր զգացմունքային, ներքին աշխարհից լեզվաշխարհ է հանում նոր բառեր, բառային միավորներ, ահավասիկ՝

Sleep, my wonder.

Sleep, my angel.

Sleep, my dream.

Օրո ր, *իմ ատլաս ու իսս...*

Նանար ասեմ *բայիկիս,*

Քունը տանի *ջանիկիս:*

Նանիկ ասեմ, արևիս...

Նշենք մի կարևոր իրողություն. գովերգ օրորոցային տեքստերի բառերը ստեղծվում են պատկերավոր միջավայրում. բառի սովորական անվանողական իմաստից անցում ենք նկատում դեպի հուզաարտահայտչական տիրույթ:

Օրորասացներից շատերը օրոր երգելու ընթացքում երեխային հաճախ են դիմում *արև, արևս, արեզակս, լուսինս, լուսնյակս, լուսերեսս* բառերով:

Օրհնանք օրորոցային տեքստի (blessing lullaby text) կարևոր գործոնը իմաստաբանական հատկանիշն է: Ըստ Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի՝ *օրհնանք, օրհնել* բառերի արմատը ծագել է պահլավերեն *afri nam* «*օրհնեմ, գովես*» ձևից³: Այստեղից էլ կարող ենք ասել, որ գովերգ և օրհնանք-մաղթանք տեքստերի բառապաշարը գրեթե նույնն է: Այս տեքստերում միափոխվում են թե՛ երեխային օրհնելը, թե՛ գովեստը:

³ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 4, Ե., 1926, էջ 620:

Եվ՛ անգլերեն, և՛ հայերեն օրինանք-մաղթանք օրո-
րոցային տեքստերում երեխային բարեմաղթում են արևի
ջերմություն, լույս: Գերակա են գերբնական կերպարների
(Աստված, Սուրբ Աստվածամայր, հրեշտակ, սրբեր), երկ-
նային լուսատուների անունների հիշատակումը: Բերենք
օրինակներ

Angels watching ever round thee
All through the night;
In thy slumbers close surround thee
All through the night.
They will of all fear disarm thee,
No forebodings should alarm thee,
They will let no peril harm thee
All through the night.⁴

Sleep, little baby of mine
Soft on your pillow so white;
Jesus is here,
To watch over you, dear,
And nothing can harm you tonight⁵.
Sleep my love, and peace attend thee
All through the night;
Օրոր, օրոր օրերուդ,
Թեև դեմ բերեմ չարերուդ,
Չարխափան չարերդ խափանի,
Աստվածամայրն արևդ պահի⁶:

⁴ <http://www.lullaby-link.com/all-through-the-night.html>(accessed:
17. 02.2017).

⁵ Nelson Thomas, *Bedtime Prayers for the Family*, Thomas Nelson Inc, W
Publishing Group, 2005, p. 156.

⁶ Ռ. Գրիգորյան, *Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր*, Ե.,
1970, էջ 55:

Օրհնանքի տեքստում էական է բարոյախրատական բնույթի բառերի առկայությունը: Օրորոցային տեքստը նաև խրատական է: Հետաքրքիր մեկնակերպ ունի Խ. Հայրիկի ծնողական դաստիարակությունը, որի փիլիսոփայությամբ հազեցած է ժողովրդական օրորոցային տեքստը.

«Եվ ի՞նչ է ծնողական դաստիարակությունը. ուրիշ ոչինչ, այլ միայն կույր ծնված զավակներուն աչքը դեպի բարին բանալ, սիրտն ու ոգին առաքինությամբ կրթել, որպեսզի աշխարհը տեսնան, լույս ու խավարն որոշեն, բարին ու չարը ճանչնան»⁷:

Օրհնանք օրորոցային տեքստերում կարևորվում է ծառը, որի կանաչելու հետ է կապվում երեխայի ծնունդը, արմատներ գցելը.

Օրո՛ր, օրո՛ր,
Իմ հոգուս հոգին, օրո՛ր,
Իմ նորտունկ էգին, օրո՛ր,
Որ նոր է ժմներ, օրո՛ր,
Պըտուղ չէ տվեր, օրո՛ր,
Տըվեր այվա ու խնծոր, օրո՛ր,
Մեկ ճըղեն, հազար տերևեն, օրո՛ր:
Կամ՝
Դուն լընիս անտառ մորուն,
Զարնես քոքիկդ խորուն,
Քոքիկդ խորուն զարնես,
Ծառո շուք անե ճեղերուդ:
Ծառ շքեր, վրա եկեք,
Շուք արեք մեր պյուպյուլներուն⁸:

⁷ Վազգեն Ա. Գաթողիկոս Ամենայն Հայոց, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. Ա. /Ուսումնասիրություններ/, Ս. Էջմիածին, 2008, էջ 122:

⁸ Ռ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 55:

Մեր կատարած բանագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օրորոցայինը բազմաբովանդակ տեքստ է: Մեր առաջադրած հարցին, թե ինչով կփոխարինեն օրորոցային երգատեսակը, բարձր տարիքային խմբի ներկայացուցիչները ընդգծել են հատկապես աղոթք տեքստերը կամ աղոթք համարվող շարականները, հոգևոր բնույթի երգատեսակները:

Բանասաց Կարինե Այվազյանը ասացողական իր բացառիկ ունակությամբ համեմատական եզրեր էր փորձում գտնել օրորոցայինի և հոգևոր բնույթ ունեցող *օրհնության* տեքստերի միջև՝ նշելով, որ օրորը պետք է համեմել օրհնանքի տարր պարունակող բառերով և երգել հատկապես երեխային քնեցնելուց առաջ: Ասվածը ավելի դիպուկ ներկայացնելու համար միջ բերեցինք բանասացի խոսքերը. «Մեր տատերը պատմում էին արորի հետ երգող շինականի մասին, ամբողջ արտերը կարծես երգեին *հորովել*. տարբերություն չկա հորովելը՝ հողին, օրորոցայինը՝ բալին, որը նույն հողն է իր երկրի».

Հո - հորովել, հորի ն, հորի ն, հորովել,

Օ-րո՛ր, օրո՛ր, նանի՛կ նանի՛կ իմ բալի կ...⁹:

Հորովելը՝ որպես աշխատանքային ավանդական երգատեսակ, հողի ու հողագոծի բարեբանությունն է, որը նույնպես օրհնանք տեքստ է, ուստի չի բացառվում, որ որոշ տարրեր ընդգրկվեն օրորոցային տեքստի մեջ:

Դարեր ի վեր ավագ սերունդը նոր սերնդին իր հոգևոր կենսափորձով բյուրեղացած խրատներ ու պատգամներ է թողնում: Այսպես, օրհնակ, Խրիմյան Հայրիկի «Պապիկ և թոռնիկ» երկը պատգամում է հետևորդներին

⁹ Կարինե Վազգենի Այվազյան: *Ծնվել է 1956թ. Ջաջուռում: Ունի միջին մասնագիտական կրթություն: Նախնիները գաղթել են Ղարսից (Հ. Մատիկյանի գրառումներից):*

վառ պահել հայրենի ակութը, երբեք չլքել այն, աշխատել, քանի որ աշխատանքը նույնպես աղոթք է¹⁰:

Օրորոցայինը՝ ինչպես ցանկացած տեքստ, ունի կառուցվածքային հստակ բնորոշում և թեմատիկ ընդգրկունություն: Այսինքն, թեմատիկ առումով օրորոցայինը տարողունակ տեքստ է:

Վերջինս՝ որպես բազմատարր հյուսվածք, երբեմն պահանջում է հարմարեցում մանկանոցի բնակիչների համար: Օրորասացը կանգնում է օրորոցամերձ տեքստ ընտրելու բարդության առջև՝ կատարելով *տեքստի հարմարեցում* (text adaptation): Տեքստի հարմարեցում եզրը կիրառվում է բառիս ամենալայն իմաստով:

Մեզ հուզող խնդրի տեսանկյունից առանձնացնենք տեքստի հարմարեցման երկու տեսակ՝ *օրորասացակենտրոն և երեխայակենտրոն*:

Նկատելի է մի պարզ իրողություն. թեպետ օրորոցային տեքստի հասցեատերը երեխան է, սակայն մեր ուրույն համոզմամբ տարածական է օրորասացակենտրոն հարմարեցումը: Օրորասացը ցանկացած տեքստ հարմարեցնում է իր հոգեվիճակին, որն առավել ընդգծված է երևում օրոր երգողի բառերի ընտրությունից, նրանց դասավորությունից, հնչերանգից և այլն: Ինչպես գիտենք, ցանկացած բառ ունենալով ընդհանուր, օբյեկտիվ իմաստ, կոնկրետ խոսքի մեջ արտահայտում է նաև օրորասացի վերաբերմունքը: Տեղին է հիշատակել զգացական արտահայտչական միջոցների մասին, որպես օրորասացի ներաշխարհի արտացոլանք. «զգացական արտահայտչական միջոցները հաճախ առաջ են բերում նույն իմաստը արտահայտող բառեր և հոմանիշներ, որոնք ոչ թե փոխում են բառի իմաստը, ոչ թե փոխում են տվյալ առարկայի կամ երևույթի հասկացությունը մեր գիտակցության մեջ,

¹⁰ Խրիմյան Հայրիկ, *Պապիկ և թոռնիկ*, Էջմիածին, 2009, էջ 246:

այլ արտահայտում են մեր հավանությունը, ախորժանքը, ուրախությունը, տխրությունը և այլն...»¹¹: Այս համատեքստում օրորասացը գիտակցաբար թե անգիտակցաբար դիմում է վերոնշյալ բառաշերտի միջամտությանը իր տեքստը «ստեղծելու» կամ վերապատմելու ժամանակ: Օրորասացը փորձում է տեքստը հաղորդել ամենայն մանրամասնությամբ՝ նշելով տեղ, թիվ, ժամանակ, իրադարձություն և այլն: Ահավասիկ հետևյալ օրորը.

Նանա բալիկս, նանա
Չուր չքնես, չեմ խանա...
Փախեր եկեր ենք Վանա,
Տաճիկու ձեռքեն դիվանա...
Թուրք թորգեց մեզ յան բուրիկ,
Կտրեց հայուն բյուր-բյուրիկ...
Ա՛խ, լուսավոր Եվրոպա,
Քյո խոսք ո՞ւր մնաց ապա,
Մեր շեն երկիր Արմենիա,
Հորի թորգիր խարաբա ¹²:

Օրորասացակենտրոն օրորոցայինները համեմատաբար ավելի շատ են, դրանց թվում են նաև ազգի ճակատագրին առնչվող օրորները, *Գնացինք Վան, հարս բերինք, դան դան դանա, դանա*: Հայրենասիրական օրորոցային երգող մայրը, ըստ էության ունի հանրային, ազգային մտածողություն: Մինչդեռ կարելի է առանձնացնել օրորասացների մի այնպիսի խումբ, որոնք օրորի տեքստը հարմարեցնում են միայն իրենց հուզաշխարհին՝ ընտրելով պարզունակ բառեր ու արտահայտություններ: Բազմաթիվ դեպքերում օրորասացի երգած տեքստը առնչվում է ընտանեկան, սոցիալ-քաղաքական խնդիրներին:

¹¹ Է. Աղայան, *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1987, էջ 357:

¹² Իրատես de facto, թիվ 56(637), 25-28.09.2015թ.

Երեխայակենտրոն հարմարեցման դեպքում տեքստը «պտտվում» է երեխայի, նրան պատկանող պարագաների (օրորոց), շրջապատող աշխարհի շուրջ:

Ի դեպ, օրորասացակենտրոն հարմարեցման դեպքում տեքստային հարմարեցումը հաճախ պայմանավորված է օրորասացի հիշողության գործոնով, մշակութային զարգացման աստիճանով, իսկ երեխայակենտրոնը՝ երեխայի սեռատարիքային և գիտակցական աշխարհի առանձնահատկություններով: Բանասաց Արեգնազան Մխիթարյանը նշում է, որ օրորոցային տեքստը հարմարողական տեքստ է, այն կարող է ընդգրկել մի կողմից աշուղական, գուսանական, մյուս կողմից՝ հեղինակային ցանկացած տեքստ: «Երեխայիս օրորելու ժամանակ երգել եմ ժողովրդական, ազգագրական, երբեմն նաև գուսանական երգեր», մանիներ՝ «Ելնեմ սարը, բոնեմ բոլորի պարը», «Համբարձման անուշ գիշեր», «Ես լսեցի մի անուշ ձայն» և այլն: Մեջ բերենք բանասացի երգած օրորը.

Նանի, նանի, սիրուն բալիկ...

Աշուղ է եկել մեր մայլեն...

Առնեմ յարիս երթամ յայլեն>>:

Ամփոփելով նշենք, որ թեմատիկ առումով օրորների նշված տեսակները կարող են համընկնել և երբեմն էլ բառապաշարային խաչաձևումներ ունենալ: Օրորասացը յուրովի է օգտվում օրորոցային տեքստի լեզվի ընդհանուր բառապաշարից՝ իմաստային նրբություններ մտցնելով անգամ ամենասովորական, ամենապարզունակ բառերի կիրառություններում:

Matikyan Hasmik- Linguistic Culture in Lullaby Texts.- In the linguistic culture of traditional lullaby texts the illustration of people's words and speech is noteworthy which is the indicator of peoples' mental character and language thinking. The word stock of traditional lullaby texts has a stylistic value and expressiveness

in bilingual milieus (English and Armenian). The lullaby singer uses the general word by giving semantic nuances even in the usage of usual words. The word choice of the lullaby text may change conditioned by the singer's mental state and the child's sex identity and age peculiarities.

Матикян Асмик – Языковая культура в колыбельных текстах.- В языковой культуре фольклорных колыбельных текстов достойна вниманию интерпретация слова и речи, которые является показателем душевного настроя и языкового мышления народа.Словарный запас фольклорных колыбельных текстов имеет стилевую значимость и эмоционально-выразительную окраску в двуязыковой среде (английский и армянский). Исполнитель колыбельной песни своеобразно пользуется из общего словарного запаса колыбельных текстов, вкладывая смысловые нюансы даже в использовании самых обыденных слов. Словарный запас колыбельных текстов может меняться в зависимости от душевного состояния сказителя, от возрастных особенностей ребенка.

Մարգարյան Լուսինե (Արցախի
Հանրապետություն, Արցախի
պետական համալսարան)

**ԱՐՑԱԽ-ՍՅՈՒՆԻՔ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՆՈՒՆ
ԲՆԱԿԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համահայկական իրականությունում Արցախն ու Սյունիքը, ունենալով տարածքային մերձակցություն և տարբեր ժամանակահատվածներում կազմելով քաղաքական ու տնտեսական միասնական միավոր, հատկանշվում են թե՛ պատմահասարակական համանման իրողությունների դրսևորումներով, թե՛ մշակութային ու լեզվական ընդհանրություններով: Այդ ընդհանրությունն արտահայտվել է նաև բնականվանացանկերում. Արցախում ու Սյունիքում տարբեր ժամանակաշրջաններում և՛ բնակավայրեր, և՛ գավառներ կոչվել են միևնույն անվանումներով: Պատմական տարբեր շրջաններում համանուն բնականույնների թիվը տարբեր է եղել:

Եթե նույն երկրամասի տեղանվանական համակարգում համանունության առաջացման հիմնական պատճառը պատմական պայմանների նույնականությունն է, բնաշխարհի ընդհանրական-նկարագրական հիմքի վրա կառուցված պատահական գուգադիպությունը կամ դիպվածային անվանակոչությունը, ապա հարակից երկրամասերի տեղանվանական համակարգում առկա նույնանունության պատճառը կարող է լինել և՛ պատմաաշխարհագրական իրողությունների նույնականությունը, բնաշխարհի ընդհանրական-նկարագրական բնութագիրը, և՛ բնակչության տեղափոխությունը, վերաբնակեցումը:

Ըստ այդմ՝ Արցախ-Սյունիք տարածաշրջանի համանուն բնականույնների պատմական ու լեզվական հիմքերը քննելով՝ կարելի է առանձնացնել.

1. նույնանուն բնականություններ, որոնց առաջացման հիմքը պատմաաշխարհագրական նույնական իրողություններն են.

2. նույնանուն բնականություններ, որոնց առաջացումը պայմանավորված է վերաբնակեցման փաստով կամ գաղթով:

Արցախի և Սյունիքի ներկայիս բնականվանացանկերում վեց համանուն բնականուն կա, որոնք են՝ *Առաջաձոր*, *Դաստակերտ*, *Դիցմայրի*, *Խնածախ*, *Նորաշենիկ*, *Քարահունջ*: Համանուն այդ բնականությունների առաջացման հիմքում առկա են վերոնշյալ երկու հիմնական գործոնները:

1. Աշխարհագրական նույնական բնութագրի հիմքի վրա է առաջացել Քարահունջ բնականվան համանունային զույգը: Սյունիքի և Արցախի *Քարահունջ* բնակավայրերը համանունացվել են իրենց բնակադրման պահից համեմատաբար ավելի ուշ, ու թեպետ ծագումնաբանությամբ տարարմատ և հնչյունական տարբեր իրողությունների արդյունք են, բայց և, կարծում ենք, համանունության հիմք է դարձել աշխարհագրական նույնական նկարագիրը:

Քարահունջ/Քարահունջ անվամբ երկու բնակավայր է նշվում Արցախի տարածքում. գյուղատեղի Մարտակերտի շրջանում՝ Հաթերք գյուղի հարավարևմտյան կողմում. հին այս բնակավայրից պահպանված է քարուկրից շինված միջնադարյան փոքրիկ եկեղեցին: Եվ երկրորդը՝ այժմյան *Քարահունջը*՝ Մարտունու շրջանում՝ Մարտունի քաղաքից 18 կմ դեպի արևմուտք՝ լեռնային ու անտառապատ վայրում: Ներկայիս *Քարահունջից* 2կմ արևմուտք *Դարահոջ* կոչվող գյուղատեղին է, որը պատմական աղբյուրներում նույնացվում է *Քարվեճին*: Կարագյոզյանն իր «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների սեպագիր տեղանունները» հոդվածում նշում է, որ սեպագրագետների սխալ ընթերցման արդյունք է **terluisaini** անվանումը, և ճիշտ արտասանությունն է **Kerluisa**: Ու սրբագրելով տեղանունը՝ այն

կապում է *Քարվեճ* անվան հետ՝ ցույց տալով, որ ցեղերի տեղաշարժի հետ կապված, անունը տեղափոխվել է Արցախի հարավ-արևելյան շրջաններ¹: Քարվեճի մասին հիշատակում է Մովսես Կաղանկատվացին՝ առանց տեղադրությունը նշելու²: Սլավա Սարգսյանն իբրև *Քարահունջ*-ի պատմական անուն նշում է նույն այդ *Քարվեճն* ու աղբյուրագիտորեն հղում Կաղանկատվացու պատմությանը: Հ. Բեգլարյանի հաղորդմամբ *Դարահոջը* գտնվում է *Քարահունջ* գյուղից 2 կմ արևմուտք՝ Ռսկիան սարի լանջին և կոչվում է «Քյոհնա Քարահունջեն յալ»³: Ս. Սարգսյանը, ելնելով այդ հաղորդումից, նշում է, որ *Դարահոջն* ու *Քարահունջը* նույնական են և ունեն նույն իմաստը, այսինքն՝ Դարահոջ - Հին Քարահունջը ներկայիս *Քարահունջի* նախկին բնակատեղին է: Ու հավելում, որ այն *Դարահոսի* կամ *Քարահոսի* ձևափոխությունն է՝ *սուրբ լեռ, սուրբ քար* նշանակությամբ⁴:

Սերգեյ Մելքումյանն էլ գրում է, որ 17-րդ դարավերջին գյուղի բնակիչները հին բնակավայրից տեղափոխվել են և նոր բնակավայր հիմնել Քերթից մի փոքր հարավ: Ու հավելում, որ *Քարահունջի* նոր բնակատեղին հիմնադրել է Զանգեզուրից եկած Տեր-Խաչատուրը⁵: Իսկ անվան ծագումը բխեցնում է տեղանքի ու շրջակայքի քարքարոտ բնույթից, ըստ որի՝ առաջացել էր *Քարահունջ*, որը ձևափոխվել ու դարձել է *Քարահունջ*:

¹ **Հարությունյան Բ. Հ.**, *Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը*, Պատմա-բանասիրական հանդես, 1994, N 1-2, էջ 258, ISSN 0135-0536:

² **Մովսես Կաղանկատվացի**, *Պատմություն Աղուանից աշխարհի*, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Ե., 1983, էջ 72-73:

³ **Բեգլարյան Հ.**, *Ամարասի հովտի հուշարձանները*, ԼՀԳ, 1974, հ.2, էջ 92:

⁴ **Սարգսյան Սլ.** *Արցախի բնակավայրերը/ստուգաբանություններ/*, Ե., 2017, էջ 78:

⁵ **Մելքումյան Ս. Ա.**, *Լեռնային Ղարաբաղ*, Ե., 1990, էջ 221:

Սյունյաց *Քարահունջ*-ի առաջին իսկ վկայություններում այն նշվում է *Քարունջ* տարբերակով: Թե՛ Հովհաննես Դրասխանակերտցին, թե՛ Ստեփանոս Օրբելյանը վկայում են *Քարունջ* հնչատարբերակով: Հռոկակապով տարբերակն առաջին անգամ հիշատակում է Աբրահամ Կրետացին (18-րդ դարում)¹: Ղ. Ալիշանն էլ երկու տարբերակով է նշում և անունը ստուգաբանում *քար* և *հունջ* բառակազմական տրոհմամբ: Սյունյաց *Քարահունջ*-ի դեպքում մեկնաբանում է, որ գյուղն ունի նշանավոր Շոռան ջրվեժ, որը թափվում է քարերի վրա և «հնչում» է²: Արցախի *Քարահունջն* էլ նույն կերպ է բացատրվում տեղի բնակչության կողմից՝ *քար* և *հունջ* բաղադրիչների առանձնացմամբ: Սա, բանականաբար, ժողովրդական ստուգաբանություն է:

Անվան գիտական ստուգաբանությունը Հ. Հյուբշմանն է ներկայացրել՝ անունը տրոհելով *քար* և *ունջ* բաղադրիչների: Առաջին բաղադրիչը մեկնաբանության կարիք չունի, իսկ երկրորդը բացատրվում է «*տակ, խորք, հատակ*» իմաստներով: Բարդության բնիմաստը Հյուբշմանը մեկնաբանում է՝ «*քարայտակ*»:

Ալ. Մարգարյանն էլ ստուգաբանական նույն վարկածն է առաջադրում: Նա նշում է, որ *Քարահունջ* գյուղի նախնական անունը իրոք *Քարունջ* է եղել, որը այլ բան չէ, քան երկու՝ *քար* և *ունջ* բառ-բաղադրիչներից կազմված անհոդակապ իսկական բարդություն: Առաջին բաղադրիչը *քար*-ն է, երկրորդն էլ, անշուշտ, գրաբարում լայն գործածություն ունեցող *ունջ* բառն է, որը «*ծայր. ստորոտ. յատակ. արմատ. քունջ, ծայրը, տակը, պինն*» է նշանակել: Մարգարյանը հավաստում է, որ Քարահունջ գյուղի գլխավերևը առ այսօր էլ կանգուն կա մի վիթխարի-հսկայական քարազանգված, որը և լավագույն

¹ Աբրահամ կաթողիկոս Կրետացի, *Պատմագրություն անցիցն իւրոցն ու Նատիր –Շահին*, Վաղարշապատ, 1870, էջ 75:

² Ալիշան Ղ., *Միսական, Տեղագրություն Մինեաց աշխարհի*, Վենետիկ, 1893, էջ 262:

վկան ու ապացույցն է այն բանի, որ գյուղն իսկապես ստեղծվել է նրա ստորին՝ ցածրադիր մասում¹:

Մերգեյ Հախվերդյանն ու Մհեր Քումունցը, *Քարահունջը* ստուգաբանելիս, նկատում են, որ այն բաղկացած է *Քար+ունջ* արմատներից: *Ունջ* արմատի համար ընդունելի են համարում Գորիսի և Ղարաբաղի բարբառներում տարածված *օնջ/ունջ*՝ «մուր, երկաթի ժանգ» նշանակությամբ բառամիավորը, որտեղից *օնջուտ/ունջուտ*՝ «ունջով պատած, ժանգոտած», քանի որ այդ տարածքի ժայռերն հյուսվածքը ժանգագույն է, ասել է թե՛ «քարածանգ»: Եվ կարող էր գյուղանունից անկախ, անջատ գոյություն ունեցած լինի տարածքի համար, որն էլ հետագայում վերականգնվել է²:

Իսկ ահա Պարիս Հերունին *Քարահունջ*-ն ու *Քարունջը* դիտում է տարբեր անվանումներ ու առաջինը մեկնաբանում՝ որպես «խոսող/հնչող քարեր (հունչ > հունջ), իսկ *Քարունջ*-ը՝ որպես «քարե գանձ» կամ «հիմնաքարեր»: Երկրորդ դեպքում նա նկատի ունի հայերեն *ունջ* «գանձ» և *ունջ* «տակ, խորք, հատակ» իմաստով բառերը³:

Մելադա Ադաբեկյանն էլ, քննելով *Քարահունջ/Քարունջը*, նշում է որ *Քարահունջ*-ի *հունջ* բաղադրիչը գրավոր վկայված չէ: Այն սովորաբար հանգեցվում է *ունջ*՝ «հատակ, տակ» իմաստներով արմատին, հետևաբար՝ *քարունջ-քարահունջ*՝ «քարի տակ»: Մինչդեռ *Քարունջ* բառը Ղարաբաղի բարբառի որևէ տարբերակում *քարահունջ*-ի վերածվելու հավանականություն գրեթե չունի: Ու հիմնավորում է հետևյալ

¹ Մարգարյան Ալ., *Մի քանի տեղանունների ծագման մասին*, Պատմաբանասիրական հանդես, 1988, N 4, էջ 129, ISSN 0135-0536:

² Հախվերդյան Ս. և Քումունց Մ. (2006) *Ստ. Օրբեյանի հիշատակած մի քանի տեղանունների ստուգաբանության և տեղադրության հարցեր*. Լեզու և լեզվաբանություն = Язык и языкознание = Language and linguistics, № 1-2. pp. 63-68. ISSN 1829-0183:

³ Парис М. Геруни, *Доисторическая каменная обсерватория Карахундж-Карениш*, ՀՀ ԳԱԱ զեկոլոյցներ, 98(4), 1998, էջ 307-328.

պատճառներով. նախ՝ Ղարաբաղի բարբառում *h* կարող է ավելանալ ձայնավորով սկսվող առանձին բառի սկզբում, իսկ բառամիջում՝ ընդամենը մի քանի արմատական բառերում, երկրորդ՝ լեզվի խոսակցական տարբերակները կարճ բառը ավելորդ վանկով ծանրաբեռնելու միտում սովորաբար չեն ցուցաբերում: Այսինքն՝ *Քար-ունջը Քար-ա-/h/ունջ*-ով փոխարինվելու ենթադրությունն անհիմն է: Ստուգաբանական մյուս առաջարկություններն էլ հիմնավոր չի համարում, ինչպես՝ *քար-ա-հունջ>քար-ա-հունջ*, կամ *քար-ա-փունջ>քար-ա-հունջ*: Հայերենում ունենք *հուն՝* գետի մեջ ծանծաղ տեղ, որից կարող է մարդ անցնել: Այսինքն՝ «ելք, հնարք», որը ծագում է հնդեվրոպական *pent «ոտք դնել, գնալ» արմատի *pont տարբերակից: Հետևաբար կարելի է ենթադրել, որ եղել է եթե ոչ հնդեվրոպական լեզվաընդհանրություն, ապա գոնե հայերենն ընդգրկող մի լեզվատարածք, որում գործավել է *pont-io- ածանցավոր ձևը: Այս վերջինից էլ հայերենում առաջացել է *հունջ* բառը՝ «անցում, բացվածք, անցք» իմաստով¹:

Հրաչ Մարտիրոսյանը *Քարունջ/Քարահունջ* տեղանվան ստուգաբանական քննությունը համակարգում է՝ նշելով, որ *Քարունջ* տեղանունը կազմված է *քար* և *ունջ* բաղադրիչներից: Ու նշում է, որ *h* հնչյունն այստեղ պարզապես երկու ձայնավորների միջև առաջացող հորանջ է²: Մարտիրոսյանի այս վերջին դիտարկումը նաև մեր համոզումն է:

Բնականունը բարբառում, հատկապես թեքված ձևերում, զուգահեռաբար հանդես է գալիս *Քրունջ* և *Քրահունջ* ձևերով. ինչպես՝ *Քրրունջա/Քրրհունջա*. վերջինս ավելի մեծ հաճախականությամբ: Կարծում ենք, հնարավոր է *Քարունջ*-ից *Քարահունջ* զուգաձևի առաջացումը, որովհետև *Քարա-*

¹ Աղաբեկյան Մ., *Քարահունջ*, Ջահուկյանական ընթերցումներ, Հ. Աճառյանի ծննդյան 135-ամյակին նվիրված հանրապետական նստաշրջանի զեկուցումներ, Ե., 2011, էջ 47-53:

² Մարտիրոսյան Հ., *Քարահունջ-Stonehenge առասպելի վերջը*, 2011, էջ 11-16:

հունջ ձևը, իրավաբանական-փաստաթղթային վավերություն ստանալով, ժամանակի հոլովություն կարող է սահմանափակել նախնական տարբերակի գործածությունը: Ակնհայտ է, որ ի սկզբանե բնականվանումը խոսակցական լեզվում է մկրտություն ստանում, ապա վավերացվում գրավոր փաստաթղթով: Իսկ այդ փոխադրությունը թե՛ հնչյունական փոփոխությամբ և թե՛ հնչյունական հավելումով կարող է կատարվել:

Անշուշտ, արցախյան ու սյունյաց այս անունները միմյանց հետ կապ ունեն: Այդ կապը պայմանավորված չէ մեկը մյուսից առաջանալով, այլ աշխարհագրական նույնական նկարագրով կամ բնակության վայրի, տեղանքի նույնական բնութագրով և ընկալման նույնականությամբ ու նաև ժամանակի ընթացքում հնչյունական համապատասխանեցումով:

2. Մի բնակավայրից մեկ այլ բնակավայր տեղափոխվելու և համապատասխանաբար անվանումը փոխադրելու իրողությունն են վկայում *Խնածախ* բնականվան համանուն գույգր:

Սյունյաց *Խնածախը* պատմական աղբյուրներում *Խանածախ* և *Խոնածախ* տարբերակներով է նշվում:

Օրբեյանի Պատմության հին ձեռագրերում վկայված է միայն *Խանածախ*¹, որ ուշ շրջանի առանձին ձեռագրերում և տպագրություններում ներկայացվում է *Խոնածախ* ձևով կամ տարբերակներով: Ղ. Ալիշանը դա նախաձև է ճանաչել, երբեմն էլ գործածում է նաև *Խանածախ* անվանաձևը, որը և մյուս՝ *Խոնածախ* և *Խնածախ* ձևերի համեմատությամբ նախնական են ճանաչել բառարանագիրներ Ս. Էփրիկյանը² և Հ. Առաքելյանը³: Ալ. Մարգարյանը, հիմք ընդունելով այս վկայությունները, հանգում է նրան, որ գյուղի նախնական

¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 6271, էջ 335, N 5501, էջ 342:
² Էփրիկյան Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ.1, Վենետիկ, 1905, էջ 130,131, 181, 193:
³ Առաքելյան Համբ., Հանրագիտական բառարան, հ.1, Թիֆլիս, 1915, էջ 1035:

գրական անունը *Խանածախն* է, որը հողակապով իսկական բարդություն է՝ *խան* և *ծախ* հիմնական ձևույթների բաղադրությամբ: Ըստ նրա՝ վերջին *ծախ* բաղադրիչը *ծախել*-ից է, իսկ առաջին բաղադրիչը ծագմամբ ու նշանակությամբ անհայտ է համարում¹:

Արցախյան *Խնածախի* մասին Մ. Բարխուտարեանցը գրում է, որ գյուղանունն Արցախում է հայտնվել Սյունիքից, երբ բնակիչները «Մեծ Սիւնեաց Խանածախ գիւղից 1686թ. տեղափոխվում են Ջրաբերդ և հետո բնակութիւն հաստատում գիւղումս»²: Իր մեկ այլ հրապարակման մեջ Բարխուտարեանցն այլ տեղեկություն է հաղորդում՝ նշելով, որ «120 ընտանիք քաջեր 1770 թ. Ջրաբերդից տեղափոխվում են Խաչեն և հիմնարկում Խանածախ գիւղը, որի մեջ բնակվում են 50 ընտանիք»³: Նույնը հավաստում է նաև Ս. Մելքումյանը՝ նշելով, որ բնակիչները եկել են Ջանգեզուրի Խնածախ գյուղից, հիմնադրել այն և անվանել իրենց հին բնակավայրի անունով: Այժմյան Խնածախի պատմությունն սկսվում է 1770-ական թթ.⁴:

Գյուղանվան ստուգաբանությունը Հ. Խաչատրյանը ներկայացնում է *խանձ* և *ցախ* բաղադրիչների տրոհությամբ՝ *Խանձացախ*՝ կրակարան *խնաստով*⁵: Ա. Բեկնազարյանցը Խնածախին «Փոքր խմհատ» անտառից կտրված իմաստով, անունն է տալիս⁶: Իսկ Ս. Սարգսյանը նշում է, որ *խան* և *ծախ* բաղադրիչներից է կազմված անվանումը, առաջինը պարսկական *խան* բառն է, որ նշանակում է «իջեւան, օթեւան ուղեւորների համար քարվանսարայ»⁷: Իսկ *ծախ*-ը համարում

¹ Մարգարյան Ալ., *Մի քանի տեղանունների ծագման մասին*, Պատմաբանասիրական հանդես, N 4, 1988, էջ 126-127, ISSN 0135-0536::

² Բարխուտարեանց Մ., *Արցախ*, էջ 152:

³ Բարխուտարեանց Մ., *Պատմութիւն Աղուանից Բ*, Ե., 1907, էջ 104:

⁴ Մելքումյան Ս. Ա., *նշվ. աշխ.*, էջ 132:

⁵ Խորհրդային Ղարաբաղ, 1991, թ. 289:

⁶ Բեկնազարեանց Ա., *Գաղտնիք Ղարաբաղի*, ՍՊ, 1886, էջ 121:

⁷ Սո. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1986, էջ 400:

է կաս-ի հնչունափոխված տարբերակը, որը նշանակում էր «հին, սուրբ, աստվածային»: Ու հավելում է, որ *ծախ*-ն այդ դեպքում կարող էր ունենալ «ծախսել, վաճառել, առևտուր անել» նշանակությունները, այսինքն՝ կայանատեղ, որտեղ նաև առևտուր է կատարվել, սակայն, նկատի առնելով տեղանունների առաջացման սկզբունքները, Ս. Մարգարյանը հակված է պնդելու առաջին տարբերակը¹: Կասկածելի է բառերգերի իմաստային այդպիսի միավորումը: Մյուս կողմից էլ՝ պարսկական ծագման ոչ այնքան հին՝ *խան* և *կաս-ծախ* «սուրբ ու աստվածային» իմաստով, հնչունափոխության միջոցով հնագույն բառամիավորի բաղադրությունը ժամանակային համընկնման առումով անհավանական է: Հնչունափոխական այդպիսի իրողությունը կարող է վկայել բառամիավորի բազմադարյա կենսագրության մասին, որը քննվող դեպքին չի համապատասխանում: Առաջին բաղադրիչի հետ կապված՝ մենք առավել հակված ենք պահլավական ծագման* *xuān* (նոր հնչումով՝ *xān* և *xōn*)՝ *խան* բառամիավորի առանձնացմանը², որը հայերենում և հայերենի բարբառներում ուներ՝ *սեղան*, *ափսե*, *տաշտ*, *սինի* նշանակությունները: Ընդ որում, այս բառը, ինչպես նշում է Հր. Աճառյանը, հայերենում հանդես էր գալիս *խօն*, *խուն* ձևերով³: Բնականվան *Խոնածախ* վկայությունն էլ կարող է նաև այդ տարբերակի արտահայտությունը լինել: Իսկ երկրորդ բաղադրիչը, հնարավոր է, *ծախ* բայարմատն է, այդ դեպքում այն կարող էր նշանակել «վայր, որը բնութագրվում էր կարասիքի արտադրությամբ ու վաճառքով»:

Արցախի և Սյունիքի ներկայիս բնականվանացանկերում բանականունն արձանագրված է *Խոնածախ* հնչատարբերակով:

¹ Մարգարյան Ս., *նշվ. աշխ.*, էջ 41:

² Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան*, Երևանի համալսարանի հրատ., Ե., հ.2, էջ 327:

³ Տե՛ս նույնը:

Անվան տեղափոխության արտահայտություն և այդ հիմքով առաջացած համանունության օրինակ է *Առաջաձոր* բնականունը: Այս բնականվան պատմական տեղեկանքը Արցախից Սյունիք տեղափոխվելու և նույնանուն բնակավայր հիմնելու իրողությունն է հավաստում:

Արցախի Առաջաձորը «գիւղ է Արցախի Պարզկանք գաւառի մէջ՝ Չիլէթ սարի հարաւային ստորոտում»¹: Ս. Մելքունյանը նշում է, որ այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 10-րդ դարից: Նրանց նախնիները բնակվել են *Տակաթագ* և *Փլուսանց շեն* բնակատեղիներում: Հետագայում այդ վայրերից իջել են, բնակություն հաստատել ցածրադիր մասում, որի դիմաց ձգվում է մի անդնդախոր ձոր: Այստեղից էլ՝ *Առաջաձոր*՝ «առջևում ձոր է»²: Ըստ ՍԼ Սարգսյանի՝ *Առաջաձոր*՝ «առաջը ձոր», մեկնաբանությունը համապատասխանում է նախկին բնակավայրի տեղադրությանը³: Անվանումն այդպես է բացատրում նաև Ս. Ջալալեանը⁴՝ ավելացնելով, որ 11-րդ դ. մի գրչագիր ավետարանում նշված է *Առջաձոր*: Այդպես է ներկայացնում նաև Հայկունին⁵:

Սյունյաց *Առաջաձորի* տեղեկանքում նշվում է, որ գյուղը գտնվում էր պատմական Սյունիքի Բաղք (հետագայում՝ Աճանան) գավառում: Բնակիչների նախնիների մի մասը բնիկ է, մյուսը եկել է տարբեր տեղերից՝ Ղարաբաղի Առաջաձոր գյուղից (1760-70 թթ.), Գողթնից (1805-1806 թթ.), Ղարադաղից (1829 թ.)⁶: Ըստ այդ տեղեկության՝ հավաստվում է, որ առաջին տեղափոխվածները Արցախի առաջաձորցի-

¹ Էփրիկյան Ս., *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 244:

² Մելքունյան Ս. Ա., *նշվ. աշխ.*, էջ 178-179:

³ Սարգսյան ՍԼ., *նշվ. աշխ.*, էջ 115:

⁴ Ս. Ջալալեանց, *Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան*, Բ, էջ 240:

⁵ Եղիշե ավագ քահանա Գեղամյանց/Հայկունի/, *Ողեգնացական ակնարկներ*, Ե., 2010, էջ 76:

⁶ Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հակոբյան Թ., *նշվ. աշխ.*, հ. 3, էջ 319:

ներն են եղել: Ալիշանը *Արջաձոր* է նշում¹: Եվ Սյունյաց Առաջաձորի աշխարհագրական նկարագիրը տրվում է որպես «անտառապատ գյուղ»²: Մի կողմից՝ հնարավոր է՝ գյուղի նախնական անվանումը Արջաձոր էր, ապա առաջաձորցիների տեղափոխությունից հետո համահունչության հետևանքով նույնացվել է, առավել ևս, որ թե՛ Արջաձորի և թե՛ Առաջաձորի բարբառային (և՛ Արցախի, և՛ Սյունիքի բարբառներում) արտասանությունը նույնական է՝ Ըոչածօր/Ըրչածօր: Սյուս կողմից՝ որևէ փաստարկով չի հերքվում, որ նախնականումը *Առաջաձոր* էր, ու անվանադիրներն էլ Արցախի առաջաձորցիներն են եղել, իսկ Ալիշանի՝ Արջաձոր վկայությունը կարող է Առաջաձորի բարբառային տարբերակի գրականացված արձանագրությունը լինել: Երկու դեպքում էլ բնականվան ծագումը կապվում է Արցախի Առաջաձորի անվան հետ:

Իսկ ահա *Դաստակերտ* բնականվան համանունությունը տարածամանակյա կտրվածքով է առանձնանշելի: Արցախի **Դաստակերտն** այսօր հուշարձան է. «Ջրաբերդ գաւառի մէջ աւերակ գիւղատեղի, յորում կայ կիսաւեր եկեղեցի եւ հանգստարան»³: Պատմական արձանագրություններում նշվում է *Դաստակերտ*, *Դաստագյուլ* նաև *Դաստագիր*⁴: Սյունյաց *Դաստակերտը* ներկայումս բարեշեն քաղաքային համայնք է: Այն հնում Ծղուկ գավառի գյուղ էր: Այդ անվամբ բնականուններ են նշվում նաև Սյունիք աշխարհի Բաղք-Քաշունիք և Գեղարքունիք գավառներում⁵:

¹ Ղ. Ալիշան, *Միսական*, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 275:

² Մելիք Բախշյան Սո., *Բարսեղյան Հ., Հակոբյան Թ.*, հ. 3, էջ 319:

³ Էփրիկյան Ս., *նշվ. աշխ.*, հ.1, էջ 579:

⁴ Кочарян Г., *Нагорный Карабах*, стр. 50.

⁵ Մելիք Բախշյան Սո., *Բարսեղյան Հ., Հակոբյան Թ.*, *նշվ. աշխ.*, հ.2, էջ 38:

Արցախի նորոյս *Նորաշենիկը*¹ Քաշաթաղի շրջանի բնակավայր է: Օրբեյանը Սյունիքի Բաղք, Կովսական և Ճահուկ գավառներում այդ անվամբ 3 բնակավայր է նշում²: Կովսականի *Նորաշենիկը* Ղ. Ալիշանի ու այլ աղբյուրներում վկայված էր *Թազաքենդ*³ օտար անվամբ, որը հայերեն անվան թարգմանությունն էր: Պատմական տվյալները վկայում են, որ *Նորաշենիկը* հնագույն բնականուն է, և նոր շրջանում այն վերստին անվանադրվել է: Նույնանուն բնակավայր առկա է նաև Կապանի տարածաշրջանում:

Այդպիսի բնականուն է նաև *Դիցմայրին*: Անունը տրոհվում է *Դից Մայրի* բաղադրիչների: Բառակազմական պարզագույն վերլուծությամբ այն նշանակում է «Աստվածների անտառ»: Այն, որ այդ տարածաշրջանն անտառածածկ է ու առասպելական հմայքով, այսօր էլ իրողություն է:

Ըստ Յայսմաուրաց՝ կը թուի, թէ այս անուամբ լեռ կայ Այրարատայ Գաբեղենից գաւառի մէջ. սուրբ Վարոսն «բնակեցաւ յանձաւս լերանցն, որ կոչի Դից Մայրի»: Ապա անվան դիմաց հղվում է՝ տես՝ Կովսական⁴: Ստեփանոս Օրբեյանն էլ Կովսականի գավառի բնականվանացանկում է ներկայացնում *Դից մայրին*⁵:

Արցախի Քաշաթաղի շրջանի ներկայիս *Դիցմայրին* պատմական բնականվան վերակենդանացման արդյունք է. այն Մեշադիիսմայլի վերանվանումն է, իսկ Սյունիքի *Դից-*

¹ ԼՂ վարչատարածքային բաժանման մասին օրենք, 1998թ., հունիսի 26, ՀՕ-15/հավելված 2/:

² Օրբեյան Ստ., *Սյունիքի պատմություն*, Սովետական գրող, Ե., 1986, էջ 400-404:

³ Ալիշան Ղ., *նշվ.աշխ.*, էջ 287:

⁴ Էփրիկյան Ս., *նշվ.աշխ.*, էջ 607:

⁵ Օրբեյան Ստ., *նշվ.աշխ.*, էջ 402:

մայրին Ղարաչիմանի վերանվանումն է (1991 թ.)¹: Այսօր երկու բնակավայրերն էլ շեն են:

Բնականաբար, վերանվանումների դեպքում պատմական իրողությունները միշտ չեն հաշվառվում, ու այդ դաշտում մի նոր երևույթ է սկզբնառվել. պատմական անվանումները վերականգնվում են եթե ոչ պատմական ու տեղագրական ճշգրտությամբ, ապա գոնե անվան վերակենդանացմամբ այդ իրողությունների վերարձանագրությամբ:

Արցախ-Սյունիք տարածաշրջանի համանուն բնակավայրերի պատմական տեղեկանքների քննությամբ հավաստվում է այն իրողությունը, որ մի դեպքում՝ պատմական պայմանների նույնականությունն էր առկա, և այդ դեպքում դա բխում էր տեղանվանական նույնական համակարգի ընդհանուր օրինաչափություններից ու հաստատում թե՛ նույնացեղ հանրության բնակության իրողությունը և թե՛ տեղանվանական միևնույն համակարգին նրանց պատկանելությունը, մյուս դեպքում՝ վերաբնակեցման գործոնն էր հիմքը, երբ, պատմահասարակական իրողություններով պայմանավորված, թափառիկ ու կրկնվող են դարձել անվանումները:

Բնականությունների համանունության սկզբնապատճառային հիմքերի քննությամբ նաև բացահայտվում են թե՛ առկա պատմահասարակական, աշխարհագրական իրողությունները, թե՛ տվյալ ժամանակաշրջանի իրողությունները և թե՛ դրանց նկատմամբ ունեցած հասարակության վերաբերմունքն ու ընկալումները:

Маркарян Лусинэ – Соотношение омонимичных ойконимов в районе Арцах-Сюник.— В разное время арцахские и сյуникские области и регионы именовались одинаково. В статье рассматривается омонимическая связь между одноименной

¹ Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն, Ե., 2008, էջ 69:

областью *Абанд*, а также ойконимами *Хнацах*, *Караундж*, *Арачадзор*, *Дастакерт*, *Норашеник*, *Дицмайри* в Арцахе и Сюнике.

Исторические записи об омонимичных районах Сюника и Арцаха свидетельствуют о том, что в одном случае имели место одинаковые исторические условия, формирующие общие закономерности идентичной топонимической системы, которая устанавливает реалии однородного сообщества, обуславливая принадлежность к одной топонимической системе. В другом случае основой является переселение, где, обусловленные социально-историческими аспектами бытия, названия обретают кочевой и повторяющийся характер.

Margaryan Lusine – The Interrelation of Homonymous Oikononyms in Artsakh-Syunik Region. – At different times the Artsakh and Syunik provinces and regions were named identically. The article deals with the homonymic relationship between Haband-named region both in Artsakh and Syunik, as well as with the oikononyms *Khnatsakh*, *Karahunj*, *Arachadzor*, *Dastakert*, *Norashenik*, *Ditsmayri*.

Historical records on the homonymous regions of Syunik and Artsakh indicate that in one case the same historical conditions took place, forming general laws of an identical toponymic system, which establishes the reality of the uniform community and causes membership to one toponymic system.

In the other case, the basis is resettlement, where names acquire nomadic and repetitive nature due to the socio-historical aspects of reality.

Միքայելյան Ժաննա (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԲԱՅԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Հայերենի արևմտյան խմբակցության Նոր Նախիջևանի կամ Ղրիմի բարբառով (որի մեջ մտնում են Նոր Նախիջևանի, Չալթըրի խոսվածքները)¹ խոսում են նախկին Նոր Նախիջևան քաղաքի և այնտեղից Տագանրոզ, Նովոչերկասկ, Դոնբաս, Կրասնոդար տեղափոխված, ինչպես նաև Ռուսաստանի Մյասնիկյանի շրջանի մի քանի գյուղերի բնակիչները, որոնց բոլորի նախնիները գաղթել են Ղրիմից 1978թ.²:

Խնդրո առարկա բարբառային միավորի մանրամասն ուսումնասիրություն է կատարել Հ. Աճառյանը անցյալ դարի 20-ական թվականներին: Նախ ասենք, որ Նոր Նախիջևանի բարբառը միահատկանիշ դասակարգմամբ, ինչպես արևմտյան խմբակցության շատ բարբառներ, պատկանում է *Գր* ճյուղին:

Աշխատության հեղինակի վկայությամբ՝ այստեղ բայի բաղադրյալ այն ժամանակները, որոնք, ի դեպ, մեր ուսումնասիրության առարկա երկրորդական ժամանակաձևերն են, կազմվում են «...անցեալ և ապառնի դերբայների և *էական* բայի յարադրութեամբ»³: Հարկ ենք համարել այս աշխատանքում որպես բայական եղանակների և ժամանակների անվանումներ գործածել աճառյանական տերմինները: Այսպես՝ սահմանական կրկին կատարյալ - (*բէրաձ*) *էղա*, *էղար*, *էղալ*,

¹ Դասակարգումը Գ. Ջահուկյանինն է, տե՛ս *Հայ բարբառագիտության ներածություն*, Եր., 1972, էջ 133:

² Տե՛ս Գ. Ջալաշյան, *Նոր Նախիջևանի բարբառի բացատրական բառարան*, Ռոստով, 2012, էջ 9:

³ Հ. Աճառեան, *Քննություն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի*, Երևան, 1925:

էղանք, էղաք, էղան, ապառնի հարակատար - (բէրած բիդ) լամ, լաս, լա, լանք, լաք, լան, ապառնի գերակատար - (բէրած բիդ) լայի, լայիր, լար, լայինք, լայիք, լայիւ: Պարտավորական կատարյալ - (բէրէլու) էղա, էղար, էղավ, էղանք, էղաք, էղան, պարտավորական հարակատար - (բէրած) ըլալու իմ, ըլալու իր, ըլալու էր և այլն, պարտավ. գերակատար - (բէրած ըլալու) էի, էիր, էր և այլն: Պայմանական եղանակ, հարակատար - (բէրած) գըլամ, գըլաս, գըլա, գըլանք, գըլաք, գըլան, պայմանական գերակատար - (բէրած ըլալու) էի էիր, էր և այլն, պայմանական ապառնի (բէրէլու) գըլամ, գըլաս, գըլա և այլն, պայմանական անցյալ ապառնի - (բէրէլու) գըլայի, գըլայիր, գըլար և այլն: Ստորադասական եղ. հարակատար - (բէրած) ըլամ, ըլաս, ըլա, ըլանք, ըլաք, ըլան, գերակատար - (բէրած) ըլայի, ըլայիր, ըլար և այլն, ապառնի - (բէրէլու) ըլամ, ըլաս, ըլա և այլն, ապառնի անկատար - (բէրէլու) ըլայի, ըլայիր, ըլար և այլն: Հրամայական եղանակ, կատարյալ-բէրած էղի՛ր, հարակատար -բէրած թօ՛ ըլա, գերակատար -բէրած թօ ըլար⁴:

Ինչպէս Ն. Աճառեանն է վկայում, բերված բոլոր օրինակները, հրամայականից բացի, ունեն նաև իրենց «թեական եղանակը». այսպէս՝ *բէրած ըլամ նր, բէրէլու գըլայի նր, բէրէլու ըլայի նր* և այլն: Նա փաստում է, որ *նր*-ն համապատասխանում է միջին հայերենի *նա*-ին⁵:

Լեզվաբանը վերոբերյալ բայի խոնարհման մեջ հարակատար դերբայ է անվանում *բէրած ըլալ* հարադիր կառույցը, հետևաբար՝ նրա մոտեցմամբ ապառնի դերբայը կլինի *բէրէլու ըլալ*-ը: Ուրեմն Նոր Նախիջևանի բարբառում ցանկացած բայի՝ անկախ նրա սեռից, նման դերբայաձևերի մասնակցությամբ կարող են կազմավորվել մեր ուսումնասիրման առարկա եղանակաժամանակային ձևերը:

⁴ Ն. Աճառեան, նույնը, էջ 289:

⁵ Նույնը, էջ 290:

Չնայած հեղինակը այդ ժամանակաձևերը պարզապես բաղադրյալ է անվանում, սակայն իրականում դրանք երկրորդական բաղադրյալ ժամանակներ են: Ինչպես ավելի վաղ մեր ուսումնասիրություններում ենք հիշատակել, իր հետագա բարբառագիտական աշխատություններում Հ. Աճառյանը երկրորդական վերլուծական ժամանակները արդեն պատմողական էր կոչում: Իսկ մեր հետազոտության առարկա այս Նոր Նախիջևանի բարբառում, ըստ հեղինակի, «պատմական եղանակ» են համարվում այն ժամանակները, ներառյալ նաև թեականները, որոնց վրա ավելանում է *էղիլ է* բառակապակցությունը, որը համապատասխանում է Պոլսի բարբառի *էղէր-ին*⁶: Օրինակ՝ *գըտնըվիլ է էղիլ է, գը լըսիմ էղիլ է, բիդ էշթաս էղիլ է, բէրէլու ըլաս նը էղիլ է* և այլն: Նման բայական կառույցներ կան նաև վերը նշված աշխատության բարբառային տեքստերում: Այսպես՝ *.. մէկ հատ ծ՛էր մարթ կը տԷէսնէ նըստիլ է՝ փատ կը ծըղըլտԷ էղիլ է: Ատ աղջըկանը անխատար մարթ կուզէնա էղիլ է, ամա մէկին տըված չէ՛:*

Բերված օրինակներում խոնարհված է գլխավոր բայը, որին կցվում է տվյալ դեպքում *ըլալ-ի՛* խոնարհված *էղիլ է* քարացած ձևը: Մեկ այլ նախադասության մեջ գործածված է թուրքերեն *իմիշ* բառը, որը, ի դեպ, Հ. Աճառյանի վկայությամբ համարժեք է *էղիլ է-ին*. *Գօռէլի բէս էրէսը գը նայի «խարար չիս» իմիշ*⁸: Մեր համոզմամբ հիշյալ երկու նախադասությունների բայական կառույցները նույնպես երկրորդական վերլուծական ժամանակաձևերի իմաստն ունեն, և, ինչպես գրքի հեղինակն է ասում, դրանք ավելի թեական կամ հեզգական երանգ են տալիս խոսքին:

Այլ բարբառային միավորների նման, Նոր Նախիջևանի լեզվում գործառոդ գլխավոր բաղադրյալ ժամանակները, ի

⁶ Նույն աշխ., էջ 292:

⁷ Նույնը, էջ 371:

⁸ Տե՛ս նույնը, էջ 369:

տարբերություն երկրորդականների, կազմվում են գլխավոր բայի դերբայական և *եմ* օժանդակ բայի խոնարհված ձևերի հարադրությամբ: Օրինակ՝ սահմանական եղանակի վաղակատար և հարակատար – *բերիլ իս, բերած իս*, գերակատար *բերիլ էի, բերած էի* և այլն: Այսինքն՝ բարբառային այս միավորում հստակ տարբերակվում են բայի գլխավոր և երկրորդական ժամանակները:

Ժխտական խոնարհման ժամանակ *չը* մասնիկը բայի հարադրական կազմությամբ ժամանակաձևերում՝ լինեն դրանք գլխավոր, թե երկրորդական, բարբառումս դրվում է որպես օժանդակ բայ հանդես եկող *լինել*- ի կամ *եմ* –ի խոնարհված ձևերի վրա: Օրինակ՝ *բերած չըլամ, բերած չըլայի, բերելու չըլամ, բերած ըլալու չիմ, բերած ըլալու չեյի, բերած թօ՛ չըլա (հրմյ.)* և այլն: Հազվադեպ է պատահում, որ դերբայն է ժխտական մասնիկ ստանում, ինչպես՝ *չըտեսած ըլայի նը*⁹:

Նոր Նախիջևանի բարբառի բայի՝ մեզ հետաքրքրող ժամանակային ձևեր գտնելու ակնկալիքով դիմել ենք նաև Գևորգ Ջալաշյանի բացատրական բառարանի նյութերին (հրատ. 2012 թ. Ռոստովում), որում բերված օրինակ նախադասություններում, սակայն, մեզ հետաքրքրող որևէ հիշարժան նյութ չկար:

Ինչևէ, եզրակացությունը մեկն է՝ Նոր Նախիջևանի բարբառում, որը ներկայումս դեռևս որոշ՝ վերը թվարկված բնակավայրերում որպես խոսակցական լեզու է ծառայում, գործառում են երկրորդական վերլուծական ժամանակաձևերը:

Մեր ուսումնասիրած հաջորդ միավորը Համշենի բարբառն է: Դրան նվիրված աշխատությունը Հ. Աճառյանի՝ հայերենի բարբառների բազմաթիվ ուսումնասիրություններից մեկն է: «Համշենը (հին անունը Համաշեն) բարձրաբերձ և անմատչելի լեռներով շրջապատված մի գավառ է, որ

⁹ Նույնը, էջ 305:

գտնվում է Տրապիզոնից արևելք, Ճորոխի հովտում, Պարխուլ լեռան մոտ»¹⁰:

1915 թ. Մեծ եղեռնից հետո ողջ մնացած համշենցիները ցրվեցին աշխարհով մեկ, իսկ նրանցից ոմանք էլ, բնակություն հաստատելով ներկայիս Թուրքիայի տարբեր բնակավայրերում, բնաջնջվելուց խուսափելով՝ ստիպված եղան հավատափոխ լինել: Մակայն անկախ ամեն ինչից՝ շատերն առայսօր պահում են իրենց մայր լեզուն:

Համշենի բարբառի կազմում, ըստ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման, ներառվում են Մարթիլ, Մալա, Ջեֆանոս բնակավայրերի խոսվածքները¹¹: Բարբառային այս միավորներում բայը խոնարհմամբ նույնպես պատկանում է *Կը* ճյուղին:

Բաղադրյալ ժամանակներին անդրադառնալիս Հ. Աճառյանը գրում է, որ Համշենի բարբառում դրանք սովորաբար կազմվում են *ունիս* բայի միջոցով: Ինչպես՝ (*գոնաձ*) *ունիս*, *ունիս*, *ունի*, *ունիսք*, *ունիք*, *ունին* («ցանել եմ, ցանել ես, ցանել է նաև՝ ցանած եմ, ցանած ես» և այլն): Կամ՝ (*գոնաձ*) *ունէլը*, *ունէլըդ*, *ունիը* և այլն («ցանել էի, ցանել էիր, ցանել էր»)¹²: Այսինքն՝ սրանք և, ընդհարապես, բայական նման հարադրական այլ կառույցներ բարբառումս պարզապես գլխավոր ժամանակներ են, որոնց մեջ *ունիս*-ը («ունենալ»), իր խոնարհված ձևերով հանդերձ, գործառում է *եւ*՝ օժանդակ բայի փոխարեն: Նկատենք, որ մեր հետազոտած՝ հատկապես արևմտյան տարածքի բարբառային միավորներում *ունիս* բայով հարադրական կառույցները եղել են երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր: Այնինչ Համշենի բարբառում հազվադեպ է պատահում, որ բայի բաղադրյալ ժամանակը կազմվի *եւ* օժանդակ բայի օգնությամբ: Ինչպես՝

¹⁰ Հ. Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի*, Եր., 1947, էջ 5:

¹¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 134:

¹² Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 144:

զընացիր իմ, զընացած իմ, աստած էր «ասած էի» և այլն: «Բայց այս ձևերը ընդհանուր գործածություն չունին»¹³: Դժվար է ասել, թե *ունիս*-ով խոնարհված բայական կառույցները, որպես Համշենի լեզվի գլխավոր բաղադրյալ ժամանակներ, արդյոք ուշ շրջանում են ձևավորվել, թե շատ ավելի վաղ են ի հայտ եկել:

Ինչպես վերը նշեցինք, Հ. Աճառյանն իր հետագա բարբառային հետազոտություններում պատմողական է անվանում բայի բաղադրյալ այն ժամանակաձևերը, որոնք իրականում հենց երկրորդական են: Իր «Քննություն Համշենի բարբառի» գրքում հեղինակը գրում է, որ այդ ժամանակները՝ այսինքն՝ պատմողականները, կազմվում են *ըղած ունի* բառակապակցության օգնությամբ, որն ավելի շատ հեզնանք է արտահայտում՝ ինչպես թուրքերեն *իմիշ* բառը և որը, սակայն, մեծ կիրառություն չունի: Նա բերում է ընդամենը մեկ օրինակ. *Մէզ սահտուն չօյս այդ քաղած ըղած ունի կոյսի*¹⁴:

Հիշյալ աշխատությունում մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ որևէ այլ տեղեկություն չկար, ինչպես նաև համապատասխան նյութ չգտանք բանահյուսական տեքստերում:

Անհրաժեշտ ենք համարել օգտվել նաև «Չայն համշենական» ամսաթերթի՝ տարբեր տարիներին լույս տեսած համարներում տպագրված բարբառային նյութերից: Դրանցում գործածված բայերի խոնարհված ձևերը հաստատում են Հ. Աճառյանի հիշատակածն առ այն, որ հենց գլխավոր բաղադրյալ ժամանակներում օժանդակ բայի դերը ստանձնել է *ունիս*- «ունենալ» բայը: Օրինակ՝ ... *խարար տրված ունին: Դադան մօրէ դէսած ունի անա, լայօվ ասթած ունի թա...*: Բերված նախադասություններում խոնարհված բայերի թարգմանություններն են՝ *տվել է. տեսել է. ասել է*¹⁵: Այլ օրինակներ.

¹³ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 145:

¹⁴ Նույնը, էջ 146:

¹⁵ Չայն համշենական, 2016թ., մարտ-ապրիլ:

Թէլան բաղ աղամ ունիմ... Կուրբօն վաղ աղամ ունիմ: Նույն բայը՝ ուղիղ խնդրի հետ, մի անգամ թարգմանվում է՝ «ցանկապատ եմ սարքել», մյուս նախադասությունում՝ «խոստում եմ տվել»¹⁶: Հետաքրքիր է նշել, որ հիշյալ լրագրերում բարբառային նյութերին անմիջապես հաջորդում են գրական արևելահայերեն թարգմանությունները:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Համշենի բարբառում բայի երկրորդական հարադրական կառույցներ, իրոք, չեն դիտվում: Ի դեպ, մեր քննած տարբեր բարբառներին վերաբերող նյութերում առաջին անգամ է հանդիպում, որ *եւ* օժանդակ բայի փոխարեն գործառի *ունիմ*-ը:

Ուսումնասիրել ենք Ակնի բարբառը՝ իր մեկ՝ Ակնի խոսվածքով: Այս բնագավայրը գտնվում է Խարբերդի գավառի մեջ: Բարբառը պատկանում է *Կու* ճյուղին: Համապատասխան գրականության մեջ բանահյուսական նյութերն ավելի շատ չափածոյի տեսքով են ներկայացված, որոնցում, երկրորդական ժամանակներ սովորաբար չեն հանդիպում (դա նկատել ենք նաև այլ բարբառային միավորներում): Միայն մեկ նախադասության մեջ, այն էլ արձակ գրվածքում, հանդիպեց այսպիսի ժամանակաձև. *Հէմ միտք ունին էղեր տալու*¹⁷:

Եվդոկիայի միջբարբառը՝ Եվդոկիայի բարբառային միավորով, պատկանում է *Կը* ճյուղին: Եզակի մեկ աշխատություն կարողացանք գտնել, որի բանահյուսական նյութերից առանձնացրինք մեզ հետաքրքրող մի քանի նախադասություն՝ արևմտահայ բարբառներում հաճախ հանդիպող *էղեր* բառաձևի առկայությամբ: *Ժամանակին թէմպէլ հարս մը կա էղեր: ...մինչի անգամ ավտուր ժողտուր մը պիլէ չանէր էղեր:* Ավելը ձեռքէս առնէլու էղի՛ր¹⁸:

¹⁶ Նույնը, 2016, մայիս-հունիս համարները:

¹⁷ Մ.Ս. Գաբրիելեան, *Ակնայ գավառաբարբառը եւ արդի հայերէն լեզուն*, Վիեննա, 1912թ., էջ 35:

¹⁸ Արշակ Ալաոյաճեան, *Պատմութիւն Եւդոկիոյ հայոց*, Գահիրէ, 1952:

Երկրորդական վերլուծական ժամանակների ուսումնասիրության համար, ինչպես ավելի վաղ նշել էինք, ուղղորդվել ենք ակադեմիկոս Գ. Ջահուկյանի՝ հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման աղյուսակով, ըստ որի բարբառները բաժանվում են 44 խմբերի: Համեմատաբար դյուրին ստացվեցին նյութերի հավաքման աշխատանքները արևելյան խմբակցության բարբառային միավորներից: Իսկ արևմտյան տարածքի Շապին-Կարահիսարի, Մեբաստիայի, Կյուրինի, Ասլանբեկի, Արաբկիրի, Սյուլոզի բարբառներից մեզ հետաքրքրող կամ համապատասխան աշխատություններ չգտանք, կամ էլ եղած նյութերի սահմաններում, ինչպես օրինակ՝ Սասունի բարբառին վերաբերող բանահյուսական տեքստերում, բացակայում էին երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը:

Ի մի բերելով հայերենի անմտյան և ավելի վաղ կատարած արևելյան խմբակցությունների՝ մեր ուսումնասիրած բարբառների բայի երկրորդական բաղադրյալ ժամանակների քննությունը՝ հանգում ենք հետևյալին: Ընդհանրապես, հայոց լեզվի՝ գրական, թե բարբառային տարբերակներում, հարադրական կառուցվածքով երկրորդական ժամանակները կենդանի խոսքին հաղորդում են կերպաժամանակային երանգներ, ցույց են տալիս գործողությունների հաջորդականություն, տևականություն, շարունակականություն: Դրանք է՛լ ավելի արտահայտիչ են դարձնում հեղինակի խոսքը: Բոլոր այդ ժամանակաձևերը հանդիպում են պատմողական ոճի մեջ: Համեմատելով միմյանց հետ՝ նշենք դրանց որոշ առանձնահատկություններ:

Արևմտահայ տարածքի լեզվական միավորներում, որքանով մեզ հաջողվեց պարզել, նշված ժամանակները գործառում էին Քեսաբ-Սվեդիայի, Բելլանի, Հաջընի, Մարաշ-Ջեյթունի, Կարինի, Նոր-Նախիջևանի, Պոլսի, Սիվրիհիսարի, Մալաթիայի, Կեսարիայի, Խարբերդ-Երզնկայի, Առդեալի, Մուշի, Տիգրանակերտի, Վանի, մասամբ էլ Ակնի ու Եվդոկի-

այի բարբառներում: Ամենամեծ հաճախականությամբ դրանք հանդիպում են Պուլսի ու Սիվրիհիսարի լեզվական միավորներում: Պուլսի բարբառի համար հատկապես ասվածի վառ ապացույցն են ուրիշի ուղղակի խոսքի դրսևորումները Հակոբ Պարոնյանի երկերում: Այսպես՝ *Ճշմարտությունն իսուսողըն գեշ խօսած կըլա կօր*¹⁹: *Յերագիտ մեչ սատանա տէսնելու ըլասս նե...*²⁰ *Ինչու՞ մագերըս փետեմ յեղեր: ...ն հաջեր էս յերեվակայել, որ անբաղիվ դընե մը թուրս յեղած ըլամ*²¹:

Սիվրիհիսարի բարբառի մասին Ներսես Մկրտչյանն իր՝ «Անատոլիայի հայ բարբառները և բանահյուսությունը» աշխատությունում գրում է, որ լեզվական այդ միավորն առանձնահատուկ է հատկապես բայական համակարգով, որը «...եզակի է հայերենի բարբառների մեջ՝ իր երկրորդական բաղադրյալ ձևերի և եղանակների ուրույն դրսևորմամբ»: Հեղինակը փաստում է, մասնավորապես, որ *եղեր-եղեալ* բայի գործառությամբ մեր խնդրո առարկա ժամանակները սույն բարբառում լայն կիրառություն ունեն: Երբեմն նույնիսկ հանդես են գալիս *եղել, եղած/աղած, էլլ* տարբերակները: Այս բառաձևերը հարադրվելով միմյանց՝ խոսքի մեջ կազմում են մի անվերջ շղթա²²: Օրինակ՝ *Թալանածերը ծիյերուն վրա նէտածերուն կիպի էթալտա կըլան: Մարթուն մեյը խերճ կըլա, փեշտընպալ կըպանին էղալ է, օրը մեք հատ: Անմէն մարթ պախտի ախպուր ունի էղալ է: Մայրս թէնճիրեյօլ կեփէ էղած էրէ է, ան ա մէ թէնճիրէն կուտե կէլա էղած էրէ էլ է*²³:

¹⁹ Հ. Պարոնյան, հ. 10, Ե., 1979, էջ 493:

²⁰ Հ. Պարոնյան, հ. 6, *Երագահան*, հ. 6,

²¹ Նույնը, *Պաղտասար աղբար*, Ե., 1985, էջ 176:

²² Տե՛ս Ն. Մկրտչյան, *Անատոլիայի հայ բարբառները և բանահյուսությունը*, Ե., 2006, էջ 174:

²³ Ն. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 282:

Հարկ ենք համարում հիշեցնել, որ մեր ուսումնասիրած արևմտահայ բոլոր լեզվական միավորների՝ խնդրո առարկա ժամանակաձևերում որպես օժանդակ բայ են հանդես գալիս ոչ միայն *լինել*-ը, *կամ*-ը (*կամ*, *կաս*, *կա*), այլ նաև *ուզիմ*-ը (*ուզենալ*): Իսկ նման ժամանակների կազմությանը հաճախ մասնակցող *եղել/ը է* քարացած բայաձևը մեր կարծիքով ոչ այլ ինչ է, եթե ոչ *լինել* բայի սահմանական եղանակի վաղակատար ժամանակը՝ եզակի թիվ, 3-րդ դեմքով:

Արևմտահայերեն բարբառային տեքստերում խնդրո առարկա բայական կառույցներում հանդիպում է նաև թուրքերեն *իմիշ* բառը: Սա էլ, ըստ Ն. Աճառյանի, ինչպես վերը նշեցինք, *եղել/ը է*-ի թուրքերեն տարբերակն է:

Արևմտահայերենի Կեսարիայի բարբառում խոնարհված բայի հետ գործառում են ոչ միայն *եղերսի*, այլ նաև *ունեղերսի* կառույցները, որոնցով էլ բաղադրյալ երկրորդական ժամանակներն են ձևավորվում: Լեզվաբան Մամվել Անթոսյանը դրանք համարում է պարզապես եղանակավորող բառեր քանի որ գործածական չեն դրանց եզակի առաջին, երկրորդ դեմքերը և հոգնակի թիվն ամբողջությամբ²⁴: *Գեղացը մը յեզ իլսն էշ մը ունի եղեր սի: Մայսը աղան հայվամերու լեզուէն գա հասզրնա եղեր սի: Գրնզանը հեղը նըսղաձ եղեր սի...*

Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքում երկրորդական վերլուծական ժամանակները, ինչպես լեզվական այս միավորին նվիրված գրքի հեղինակ Քերոբ Մադաթյանն է վկայում, քիչ են հանդիպում և եղածներն էլ միայն «... գրական հայերենի ազդեցությամբ են գործածվում»²⁵:

Արևելյան խմբակցության Թբիլիսիի բարբառի Թբիլիսիի խոսվածքում, որն իր վրա կրում է արևմտահայերենի որոշ ազդեցություն՝ ժամանակին այդ բնակավայր Արևմտյան

²⁴ Տե՛ս Ս. Անթոսյան, *Կեսարիայի բարբառը*, Ե., 1961, էջ 89-90:

²⁵ Ք. Մադաթյան, *Ալաշկերտի խոսվածքը*, Ե., 1968, էջ 144:

Հայաստանից ներգաղթյալներ ունենալու պատճառով, երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմության մեջ երբեմն գործառում է օժանդակ բայի դեր ստանձնած *ունիմ* (*ունենալ*) բայը, որն ավելի հատուկ է արևմտահայ բարբառներին: Օրինակ՝ Սայաթ-Նովայի ստեղծագործություններում կարդում ենք բայական այսպիսի ժամանակաձևեր. ...*խիլքս գլխէս ունիմ տարած...*, *սիրտս ունիմ քարած* ... և այլն²⁶:

Ուշադրություն դարձնենք մի այլ փաստի. արևելյան խմբակցության Մեղրու բարբառի Մեղրու, նաև Ղարաբաղի բարբառի Կապանի խոսվածքներում, ինչպես ավելի վաղ գրել էինք մեր մի այլ հոդվածում, բաղադրյալ երկրորդական բայական ժամանակներին հար և նման կառույցները գործառում են որպես գլխավորներ²⁷:

Ի մի բերելով երկու՝ արևելյան և արևմտյան տարածքների բարբառներում գործառող խնդրո առարկա ժամանակները՝ նկատում ենք, որ դրանց ավելի հարիւր է այն կադապարը, երբ գլխավոր բայի դերբայական ձևերին՝ հարակատար, ապառնի, ընթացակցական, անկատար, հարադրվում է օժանդակ բայը, ամենից հաճախ՝ *լինել*-ը (հատկապես արևելյան բարբառներին, օրինակ՝ *քսցած էմ իլնիլ, խուսալիս ա իլնիլ*)՝ ինչպես նաև *ունենալ*-ը (արևմտյան բարբառներում)՝ խոնարհված որևէ եղանակաժամանակային ձևով:

Mikayelyan Zhanna – The Secondary (Non-Absolute) Analytical Tense Forms of the Verb in the Dialects of Western Grouping.– In this article, we have examined the existence of non-absolute compound nominal tense forms of the verb in the following Armenian dialects of western grouping: Nor

²⁶ Սայաթ-Նովա, 1987, էջ 34:

²⁷ Տե՛ս Ժ. Միքայելյան, *Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները Արարատյան և Մեղրու բարբառների խոսվածքներում*, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2010, էջ 236:

Nakhijevan, Hamshin, Akn, Yevdokia. It is only in the dialect of Hemshen where the tense form in question doesn't exist. By the way, the verb *níhul* "(I) have" which acts as an auxiliary verb in the structure of non-absolute compound nominal tense forms in parallel with the verb *hútl* "to be" in other dialects, it is used instead of *tu* "am" in the structure of the principal (absolute) tense forms in the dialect of Hemshin. Summing up our investigations of Armenian dialects in the eastern and western groupings, we come to the conclusion that it is in the eastern dialects where the studied tense forms are mostly used.

Микаелян Жанна – Вторичные аналитические временные формы глагола в западноармянских диалектах. – В данной статье исследуются вторичные составные времена глагола в новонахичеванском, амшенском, евдокийском и акнийском диалектах. Из перечисленных только в амшенском диалекте не встречаются вышеуказанные времена. При помощи глагола *níhul* "иметь" в амшенском диалекте формируются главные составные времена глагола, тогда как в других диалектах вышеуказанный глагол *níhul* выступает во вторичных временных формах.

Մկրտչյան Գարիկ (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ
ՀԱՆՐԱՆԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ*

ՀՀ Կոտայքի մարզում հաղորդակցային գործառույթ ունեն հայերենի տարբեր բարբառներ²⁸ ներկայացնող բազմաթիվ խոսվածքներ*։ Կոտայքի մարզի բնակավայրերը վաթսուհինն են, որոնցից վաթսուներկուսը գյուղական համայնքներ են, իսկ յոթը՝ քաղաքային։ Երեք տարածաշրջան ունեցող մարզում համայնքները տեղաբաշխվում են հետևյալ կերպ՝ **Հրազդանի տարածաշրջան** (39,2%, 3 քաղաքային, 16 գյուղական համայնք), **Կոտայքի տարածաշրջան** (40,4%, 2 քաղաքային, 30 գյուղական համայնք), **Նաիրիի տարածաշրջան** (21,4%, 2 քաղաքային, 16 գյուղական համայնք)։

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ SCS 15T-6B101 գիտական թեմայի շրջանակներում։

²⁸ **Գ. Մկրտչյան**, Մշո բարբառի տարածման սահմանները ՀՀ Կոտայքի մարզում, *Ձահուկյանական ընթերցումներ*, Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2016, էջ 151։

* Այս տարածքի լեզվական համակարգերը մինչ այժմ ըստ պատշաճի ուսումնասիրված չեն։ Միայն **ՀԲԱ**-ի (Հայերենի բարբառագիտական ատլաս) շրջանակներում կատարվել են հետևյալ 22 բնակավայրերի լեզվական տվյալների գրանցումները 20-րդ դարի երկրորդ կեսում՝ 76 (Քասախ), 78 (Մրգաշեն), 86 (Եղվարդ), 108, 111 (Թեղենիք), 145 (Ջովունի), 159 (Պռոշյան), 161 (Ձորաղբյուր), 196 (Գետամեջ), 200 (Ջրվեժ), 207 (Գառնի), 229 (Կաթնաղբյուր), 236 (Առինջ), 238 (Աբովյան/Էլար), 239 (Պտղնի), 270 (Արամուն), 272 (Ջառ), 273 (Ակունք), 275 (Գեղաշեն), 276 (Կապուտան), 281 (Կամարիս), 299 (Բալահովիտ/Մհուր)։

Հրագրանի տարածաշրջանի քաղաքային համայնքներն են՝ Հրագրանը^{29*}, Չարենցավանը, Ծաղկաձորը, իսկ գյուղական համայնքներ են՝ Ալափարսը, Աղավնաձորը, Արզականը, Արտավազը, Բջին, Լեռնանիստը, Կարենիսը, Հանքավանը, Մարմարիկը, Մեղրաձորը, Մոլակը, Ջրառատը, Քաղսին և Ֆանտանը, Փյունիկը, Գոռգոչը (Կորչլու)*:

Կոտայքի տարածաշրջանի քաղաքային համայնքներն են՝ Աբովյանը, Բյուրեղավանը, իսկ գյուղական համայնքներն են՝ Ակունքը, Առինջը, Արամուսը, Արզնին, Բալահովիտը, Գեղաշենը, Զառը, Զովաշենը, Զովքը, Կաթնաղբյուրը, Կամարիսը, Կապուտանը, Կոտայքը, Հատիսը, Չորաղբյուրը, Մայակովսկին, Նոր Գյուղը, Նուռնուսը, Պտղնին, Ջրաբերը, Ջրվեժը, Սևաբերդը, Վերին Պտղնին, Գառնին, Գեղաղիորը, Գեղարդը, Գողթը, Հացավանը, Ողջաբերդը և Գետարգելը:

Նաիրիի տարածաշրջանի քաղաքային համայնքներն են՝ Եղվարդը, Նոր Հաճնը, իսկ գյուղական համայնքներն են՝ Արագյուղը, Արգելը, Բուժականը, Գետամեջը, Զովունին, Զո-

* Հրագրան քաղաքում մի առանձին թաղամաս է համարվում Վանատուրը: Այս թաղամասի բնակիչների գործածած լեզվական համակարգերը տարբերվում են Հրագրանում գործածվող խոսակցական հայերենից: Հետազոտությունները ցույց են տալիս, որ Վանատուր թաղամասում գործում է մի առանձին խոսվածք, որի ներկայացուցիչները այստեղ են վերաբնակվել 1828-1930թթ. կատարված ներգաղթների ժամանակ Խոյի Գառնըյարըլի գյուղից (42 «գերդաստան»), Բայազետի Ալաջուլի գյուղից (18 «ծուխ»), Ալաշկերտից (12 «տնտեսություն»): Հրագրանի այս թաղամասը մինչ Վանատուր անվանվելը կոչվել է Կարինգեղ կամ Քարվանսարա, ապա Աթարբեկյան (տե՛ս **Մանվել Ռաֆայելյան, Քարվանսարա**, Պանդոկն Կարավանոց, Գիրք առաջին, Երևան, 2013, էջ 10-60): Վանատուր թաղամասում պատմականորեն ձևավորվել է խառը տիպի, տարբեր որակներով ներկայանալի խոսվածք, որում առկա են Խոյի (Ուրմիա), Վանի (Բայազետ), Մշո (Ալաշկերտ) բարբառների հատկանիշները և որակները: Մեր դասակարգումներում այս խոսվածքը կներկայացնենք որպես Հրագրանի Վանատուր թաղամաս:

* Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ Գոռգոչը (Կորչլու) բնակչություն չունի:

րավանք, Թեղենիքը, Մրգաշենք, Նոր Արտամետք, Նոր Գեղին, Սարավանջը, Քանաքեռավանք, Քարաշամբը, Նոր Երզնկան, Պոռոջանք և Քասախը³⁰:

Ինչպես նշվեց, Կոտայքի՝ ՀՀ միակ պետական սահման չունեցող լեռնային մարզը այսօր ընդգրկում է **Հրազդանի, Կոտայքի** և **Նախիջի** վարչական շրջանները*, իսկ պատմականորեն այն զբաղեցնում է Հայաստանի **Այրարատ** նահանգի **Կոտայք, Մազազ, Նիզ, Վարաժնունիք, Արագածոտն** գավառների առանձին մասերը*:

Կոտայքի մարզում կան բնակավայրեր, որոնք հազարամյակների պատմություն ունեն: Բնակավայրերի մեծ մասը վերաբնակեցվել ու հիմնադրվել են 19-րդ դարի սկիզբներին, ավելի ստույգ՝ 1828-1830-ական թվականներից՝ պայմանավորված ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմներին հաջորդած աշխարհաքաղաքական գործընթացներով և Արևմտյան Հայաստանից ու Պարսկաստանի զանազան վայերից տեղի ունեցած հայերի ներգաղթերով: Այս մարզում բնակավայրեր են հիմնադրվել մինչև 20-րդ դարի կեսերը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս մարզում կա հինգ բարբառախումբ՝ երկուսը հայերենի բար-

³⁰Տե՛ս՝

https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%B8%D5%BF%D5%A1%D5%B5%D6%84%D5%AB_%D5%B4%D5%A1%D6%80%D5%A6, տե՛ս նաև <http://kotayk.agro.am/index.php?id=1207>

* Վարչատարածքային այս միավորի աշխարհագրական դիրքի և տարածքային առնչությունների մասին ավելի մանրամասն տե՛ս հեղինակի վերոնշյալ «Մշո բարբառի տարածման սահմանները ՀՀ Կոտայքի մարզում» հոդվածը, էջ 151-152:

*Շատ պատմական տվյալների՝ պարսկաթուրքական տիրապետության ժամանակահատվածում Կոտայքի մարզի տարածքը կազմել է Երևանի խանության Դարաշիչակի, Կըրիս-Բուլաղի, Գառնի-Բասարի (Կարբի-Բասարի) մահալների մաս, իսկ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո նախքան ՀԽՍՀ վարչատարածքային բաժանումը (1930) մարզի տարածքը մտնում էր **Նոր Բայազետի, Էջմիածնի** և **Երևանի** գավառների մեջ:

բառների արևմտյան խմբակցությունից, երեքը՝ արևելյան: Ըստ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման՝ այդ բարբառախմբերն են ա) Մուշ-Տիգրանակերտի կամ հարավ-կենտրոնական բարբառախմբի Մշո բարբառը (Բաղեշ, Խլաթ, Արծկե, Արճեշ, Մանազկերտ, Մուշ, Բուլանըղ, Խնուս, Ալաշկերտ), բ) Վանի կամ հարավային միջբարբառախմբի Վանի բարբառը (Մոկս, Շատախ, Բաստ, Ոզմ, Վան), գ) Խոյ-Մարաղայի կամ հարավ-արևելյան բարբառախմբի Խոյ-Մարաղայի բարբառը (Մարաղա, Ուրմիա, Փայաջուկ, Խոյ) և դ) Արարատյան կամ հյուսիս-արևելյան բարբառախմբի Երևանի կամ Արարատյան բարբառը (Աշտարակ, Երևան, Քանաքեռ, Էջմիածին, Կողբ, Աստապատ, Ղալաչա, Գյառգառ), Բայազետի բարբառը (Կամո), ե) Ղարաբաղի-Շամախիի կամ ծայր հյուսիս-արևելյան միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառը (Բոլնիս-Խաչեն, Շուշի, Հաթերք, Հարավ, Կաղարծի, Շահումյան, Գորիս, Ջանյաթաղ, Հաղրութ, Շուշիքենդ, Տումի, Շաղախ, Խանազահ)³¹: Ի դեպ, վերջին տասն տարիների ընթացքում ՀՀ-ի տարբեր հատվածներում, այդ թվում՝ Կոտայքի մարզում ապաստան են գտել Սիրիայում ծայր առած պատերազմի պատճառով փախստական դարձած բազմաթիվ սիրիահայեր, հանգամանք, որը նույնպես խախտում է մարզի բնակավայրերի սոցիալ-պատմական վիճակը և խոսվածքների լեզվական ու որակական համաչափությունը:

Կոտայքի մարզում գործող բարբառախմբերի մեջ Ղարաբաղի բարբառի ընդգրկումը պայմանավորված է նրանով, որ ըստ մեր վերականգնումների՝ Արզնի գյուղի թաղամասերից մեկը ամբողջությամբ բնակեցված է Ղարաբաղի բարբառի Շահումյանի խոսվածքի **Գետաշենի** ենթախոսվածքով: Կյուրակ գետի ափին գտնվող Գետաշենն այժմ օկուպացված

³¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 132-136:

Է Ադրբեջանի կողմից, իսկ տեղաբնիկ հայ բնակչությունը ստիպված է եղել փախչել հայրենի գյուղից 1991թ. մայիսին: Ի դեպ, Արզնիում հայերը և ասորիներն ապրում են առանձին թաղամասերում՝ յուրաքանչյուրն իր ազգային կենսակերպով ու սովորություններով: Ընդ որում, ընդհանուր հաղորդակցման լեզուն հայերենն է: Ըստ հետազոտությունների՝ Ղարաբաղի բարբառի տարբեր խոսվածքների ներկայացուցիչներ կան նաև **Արտավազ** և **Փյունիկ** համայքներում: Արցախյան պատերազմի տարիներին Արտավազում են հանգրվանել փախստականներ Բաքվից, Սումգայիթից, Կիրովաբադից, Դաշքեստանից, իսկ Փյունիկում՝ Շամխորի Ջազիր գյուղից, Կիրովաբադից, Բաքվից, Չարդախլուից, Շահումյանից, Բանանցի Ջազիկ գյուղից: Ընդ որում, Փյունիկ համայնքը բնակեցված է միայն փախստականներով: Այս բնակավայրերում ևս Ղարաբաղի բարբառը գործում է մինչ օրս:

Ի դեպ, այս տարածքում կան նաև խոսվածքային միավորներ, որոնք Գ. Ջահուկյանը չի ներառել իր դասակարգման մեջ: Դրանցից է, օրինակ, **Արծափի** խոսվածքը, որը, կարելի է ներառել նաև Բայազետի բարբառի մեջ: Արծափի խոսվածքն են ներկայացնում **Մեղրաձորի**, **Արագյուղի**, **Արգաշենի**, **Գողթի** խոսվածքները:

Կոտայքի մարզում բարբառային այսպիսի պատկերը՝ հինգ բարբառախմբի առկայությունը, հիմք է հանդիսանում տարաբնույթ հանրալեզվաբանական խմբավորումներ կատարելուն:

Առաջին խմբավորումը վերաբերում է խոսվածքների բնիկությանը և եկվորությանը: Ըստ կատարված վերականգնումների՝ ընդամենը երեք բնակավայրեր կան, որոնց բնակիչները տեղաբնիկներ են: Խոսքը **Արարատյան** կամ **Երևանի** բարբառը ներկայացնող խոսվածքներին է վերաբերում, ինչպիսիք են՝ **Շղվարդը**, **Ջրվեժը**, **Առինջը**: Պետք է կարևորել, այսօրվա դրությամբ **Շղվարդում**, **Ջրվեժում**, **Առինջում** գործում են բուն խոսվածքները, և ներքին տեղաշերտերի

հետևանքով այստեղ հանգրվանած այլ բարբառախոսները չեն խաթարել տեղաբնիկ բարբառախոսների լեզվական որակները: Հատկապես 20-րդ դարում ներքին տեղաշարժերի հետևանքով այս բնակավայրերում են վերաբնակվել ՀՀ տարբեր տարածքներից, Արցախից և Ջավախքից այլ բարբառախոսներ, ի մասնավորի՝ բացի տեղաբնիկներից՝ **Եղվարդում** կան նաև գյումրեցիներ, արցախցիներ, ջավախքցիներ, **Ջրվեժում**՝ ջավախքցիներ, արցախցիներ, մարտունեցիներ, **Առինջում**՝ սևանցիներ, մարտունեցիներ, արցախցիներ:

Մշո, Վանի և Խոյի բարբառները ներկայացնող խոսվածքների կրողները եկվորներ են: Նրանք Արևելյան Հայաստանի այս բնակավայրերում են հաստատվել 1828-30թթ. ընթացքում տեղի ունեցած ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմների հանգուցալուծման հետևանքով կնքված պայմանագրերի բերումով: **Ղարաբաղի** բարբառի կրողներին կարելի է համարել նոր կամ նորագույն շրջանի, իսկ **Մշո, Վանի և Խոյի** բարբառները կրողներին՝ վաղ կամ հին շրջանի եկվորներ:

Բոլոր տեսակի վերականգնումները հիմնավորում են, որ Կոտայքի մարզի խոսվածքների գերակշռող մասը՝ շուրջ 70 տոկոսը, եկվորներ են Պարսկահայքից և Արևմտյան Հայաստանի զանազան վայրերից: Այս հանգամանքը հիմք է հանդիսանում իրենց տարածական բուն հիմքերը կորցրած խոսվածքները ենթարկել որոշակի խմբավորումների և առանձնացնել ենթախմբեր: Այստեղ կարևորություն են ստանում, թե պատմական Հայաստանի որ տարածքներից են ներգաղթել եկվորները: Այսկերպ վերականգնվում են նրանց տարածական բուն հիմքերը և որոշվում է նրանց բարբառային պատկանելությունը: Հնարավորինս մոտավոր, ոչ բացարձակ վերականգնումները, որոնք հիմնված են լեզվաբանական, պատմագիտական, բանագիտական տվյալների և

սոցիոլոգիական հարցումների վրա*, ցույց են տալիս միևնույն տարածական հիմքերով միավորվող խոսվածքներ և կանխորոշում բարբառային խմբերը: Կատարված վերականգնումները տրվում են ստորև՝

Մշո բարբառի խոսվածքներ են՝ **Աղավնաձոր** (Ալաշկերտի Ղազի գյուղ), **Զովաշեն** (ըստ գյուղացիների՝ եկել են Ալաշկերտի Մազրա գյուղից), **Կապուտան** (Խլաթ/ Կլաթ, Առնջկուս գյուղ), **Արգել**, **Սարալանջ** (Մշո Բուլանըղի Գյաբուներ գյուղից են), **Քասախ**, **Սուլակ** (Մուշ, Ալաշկերտ, Արձեշ), **Գետամեջ** (Արձեշ/ Կրղրաձ քար), **Մարմարիկ** (Բուլանուխ, Մուշ, Մշո Լաթար):

Խոյի և Մակուի բարբառների խոսվածքներ են՝ **Գառնի***, **Արամուս**, **Ալափարս**, **Ակունք**, **Մայակովսկի/Շահապ** (Սալամաստ գավառի Փայաջուկ և Հովտվան գյուղեր), **Նոր գյուղ**, **Քաղսի** (Մակու), **Զովունի**:

Կոտայքի մարզում մեծաթիվ են այն բնակավայրերը, որոնցում համատեղ գոյակցում են տարբեր բարբառների ներկայացուցիչները, այսինքն՝ միևնույն բնակավայրում կան մեկից ավելի խոսվածքներ: Այս խոսվածքները կարելի է պայմանականորեն անվանել **խառը** խոսվածքներ, որոնք են՝

* Բերված տվյալները ճշգրտվել են նաև «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի (**Թ.Խ. Հակոբյան, Սո.Տ. Մելիք-Բախչյան, Հ.Խ. Բարսեղյան**, Ե., 1986-2001), «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան»-ի (*ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, Գեոդեզիայի և Քարտեզագրության կենտրոն*, Ե., 2008), ինչպես նաև՝ ՀԲԱ (*Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր*, **Հ. Մուրադյան և ուրիշներ**, Ե., 1977) ծրագրով լրացված տետրերի տվյալների օգտագործմամբ:

* Ի դեպ, Գառնիի բնակչությունը միատարր չի եղել: Ըստ պատմական տվյալների՝ մակվեցիներից բացի այստեղ բնակություն են հաստատել նաև Արևմտյան Հայաստանի այլ գավառներից (հատկապես Մուշից) գաղթած առանձին, ոչ մեծաթիվ ընտանիքներ, որոնք հետզհետե ձուլվել են մակվեցիներին, ընդունել նրանց խոսվածքը: Այս պարագայում աննպատակահարմար է Գառնիի ներառել խառը խոսվածքների շարքում:

Գեղարդ (Վան և Բայազետ/Կամո), **Զորավան** (բարբառախոսներ, որոնք եկել են Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի տարբեր հատվածներից), **Գեղադիր** (Վան, Խնուս, Կարս, Բիթլիս), **Վերին Ոսողնի** (Արծափ, Արճեշ), **Արագյուղ** (Արծափ, Արճեշ), **Արզական** (Մակու, Խոյ, Բայազետ, մասամբ՝ Մուշ), **Բալահովիտ** (Խոյ, Սալամաստ, Բուլանըղ), **Թեղենիք** (Մուշ, Ալաշկերտի Կազի գյուղ, նաև՝ Բասեն), **Գեղաշեն** (Ալաշկերտ, Խոյ), **Ոսողնի** (Սալամաստ, Մակու, Խոյ, Ուրմիա, Ուրմիզդ), **Բջնի** (Արծափ, Վան, Կոստանդնուպոլիս), **Զառ** (Մուշ, Վան, Պարսկահայք, Թեիրան, Սպահան), **Կամարիս** (Խոյ, Բայազետ, Մուշ, Մակու, Ջուջան, Ակոռ), **Պոռչյան** (Ապարանի Ղալաչի գյուղ, Ապարանի Շենավան, Թալինի, Աշտարակի գյուղեր), **Ջրառատ** (ՀՀ տարբեր տարածքներից եկած բարբառախոսներ), **Կաթնաղբյուր** (Մուշ, Խոյ, Վան, Մակու, Սալմաստ, Խնուս), **Նոր Երզնկա** (Զավախք, Ապարան, Մարտունի), **Արզնի** (Ղարաբաղի բարբառի Գետաշենի խոսվածք, ՀՀ Վարդենիսի տարածաշրջանի բարբառախոսներ), **Քարաշամբ** (Արճեշ գավառի Փախներ գյուղ, Մշո և Վանի բարբառների կրողներ), **Ողջաբերդ** (Արծկե, Արճեշ, Շատախ, Վան), **Լեռնանիստ** (Խոյ, Մակու, Սալմաստ, Բայազետ, Մանազկերտ), **Բուժական** (Մուշ, Բասենի Դարս գյուղ, Խոյ*, Ապարանի Քասախ գյուղի տեղահանված բնակիչներ), **Սևաբերդ** (Մուշ, Բուլանըղ, Լաթար, Վան, Էրզրում, Ալաշկերտ), **Հատիս** (Բայազետ, Վասպուրական, Արճեշ, Վան, Շատախ, Լաթար), **Ջրաբեր** (Մուշ, Ալաշկերտի գյուղեր, խոյեցիներ), **Հացավան** (Սպահան, Խոյ, Մուշ, Վան), **Զովք** (Մուշ, Խոյ), **Զորաղբյուր** (Խոյ, Սալամաստ, Ալաշկերտ), **Արտավազ** (Արծափ, Ղարաբաղի բարբառի տարբեր խոսվածքներ), Հրազդանի **Վանատուր** թաղամաս

* Բուժականի ճալա թաղամասում խոյեցիներ են ապրում: Այդ պատճառով էլ այդ թաղամասի բնակիչներին անվանում են ճալեցիներ:

(Խոյ, Վան, Մուշ), **Կարենիս** (Մակու, Խոյ, Բայազետ, ՀՀ տարբեր վայրեր):

Գրական լեզուն այս մարզի խոսվածքների վրա ազդում է ուղղակիորեն և անուղղակիորեն: Փաստերը ցույց են տալիս, որ գրական լեզվին մոտ, միասնական մի խոսվածքի են ձգտում այն բնակավայրերը, որոնք բարբառային առումով ունեն խառը բնակչություն: Ուստի **խառը** ենթախմբի խոսվածքներից առանձնացնում ենք այն խոսվածքները, որոնք ունեն բարբառայի տարբեր հիմքեր, քանի որ իրենց մեջ ներառում են ոչ թե մեկ-երկու, այլ բազմաթիվ բարբառների ներկայացուցիչների, և ժամանակի ընթացքում գրականացել են կամ այդպիսի միտումներ են հայտաբերում: Մրանց կարելի է պայմանականորեն անվանել **գրականացած** կամ **գրականացող** խոսվածքներ: Կոտայքի մարզի գրականացած խոսվածքներն են՝ **Աբովյանը, Բյուրեղավանը, Նոր Հաճնը, Նոր Գեղին, Քանաքեռավանը, Չարենցավանը**, իսկ գրականացող խոսվածքներ են՝ **Մաղկաձորը, Հրազդանը, Հանքավանը***, **Նոր Արտամետը, Արտավազը**: Կարելի է ասել, այս բնակավայրերում գործում է խոսակցական հայերենը: Այս խմբում ընդգրկված խոսվածքներ կան, որոնց նախնական բնակավայրերն արդի դրությամբ չեն վերականգնվում կամ վերականգնվում են մոտավոր: Օրինակ՝ այսօր Աբովյան քաղաքի առանձին թաղամասերից մեկը համարվող **Էլար** նախկին գյուղի խոսվածքը ՀԲԱ-ի ծրագրով գրանցած բարբառագետը նշել է. «Ոչ ոք չի հիշում, թե կոնկրետ որ բնակավայրից են եկել իրենց պապերի պապերը» (տեսոր **238**), մինչդեռ՝ ըստ վերականգնումների՝ **Էլարը** վերաբնակեցվել է 19-րդ դարի սկզբներին Արևմտյան

* Հանքավանն ունի խառը բնակչագ: 18-րդ դ. այս տարածքում ապրել են հույներ, միայն 20-րդ դ. առաջին կեսերից են հայեր վերաբնակվել այստեղ ՀՀ տարբեր տարածքներից: Այժմ Հանքավանում մնացել է հույների ընդամենը 3 ընտանիք. մյուսները վերջին 30 տարիների ընթացքում վերադարձել են Հունաստանում: Այստեղ գործում է խոսակցական հայերենը:

Հայաստանից եկած գաղթականներով, ապա՝ 20-րդ դարի կեսերին Իրանից հայրենադարձվածներով:

Արծափի և Բայազետի բարբառները ներկայացնող խոսվածքներն են՝ **Մեղրաձորի**, **Արագյուղի**, **Մրգաշենի**, **Գողթի**, **Կոտայք** (Բայազետ, Ալջավազ): Ինչպես նշել ենք, **Բջնիում** ևս կան արծափցիներ:

Կոտայքի մարզի խոսվածքների տարածական հիմքերն ուսումնասիրելիս բացահայտել ենք այլ կարևոր առանձնահատկություններ ևս: Կան այնպիսի բնակավայրեր, որոնք ՀՀ-ն տարածքում կամ այլուր ենթարկվել են ներքին տեղաշարժերի ու տեղահանությունների: Ավելի ստույգ՝ ներգաղթյալ բարբառախոսները 19-րդ դարում նախ հանգրվանել են այլ բնակավայրում, ապա վերջնական բնակություն հաստատել ուրիշում: Այդպիսի խոսվածքներ են՝ **Նոր Երզնկան** (նախ՝ Ջավախք, Ապարան, Մարտունի, ապա՝ Նոր Երզնկա), **Գառնի** (նախ՝ Արտաշատի Ցանագատ գյուղ, ապա՝ Գառնի), **Հատիս** (նախ՝ Սևանի Ցամաքաբերդ, Մարտունու Երանոս, Կոտայքի Լեռնագյուղ (Լաթար) գյուղեր, ապա՝ Հատիս), **Վերին Պտղնի** (նախ՝ Գեղարքունիքի մարզի Գեղամավան և Աբովյանի շրջանի Սարանիստ գյուղեր, ապա՝ Վերին Պտղնի), **Քասախ** (նախ՝ Ապարանի համանուն գյուղ, ապա՝ Քասախ), **Մրգաշեն** (նախ՝ Արծափից 1828-29թթ. հանգրվանել են Արագյուղում: 1830թ. 17 տնտեսություն Արագյուղից դուրս է եկել և բնակություն հաստատել 3 կ/մ Արագյուղից հարավ գտնվող Դովրի տեղավայրում: Գյուղը կոչվել է Դովրի: Այստեղ ապրել են շուրջ 150 տարի: 1960 թ. ջրի պակասության պատճառով գյուղը վերաբնակեցվել է Մրգաշենում), **Պռոշյան** (նախ՝ Ապարանի Ղալաչի, Ապարանի Շենավան, Թալիսի, Աշտարակի գյուղեր, ապա՝ Պռոշյան), **Ջովունի** (նախ՝ Ապարանի համանուն գյուղ, ապա՝ Ջովունի), **Բուժական** (Մշո, Խոյի բարբառներներին են միացել նաև Ապարանի Քասախ գյուղի մի խումբ մշեցիներ), **Ջրաբեր** (20-րդ դարում տեղի մշեցնիներին ու

ալաշկերտցիներին են միացել Ալափարս գյուղի մի խումբ խոյեցիներ, ինչպես նաև հրազդանցիներ), **Զուլք** (20-րդ դարի երկրորդ կեսին տեղի մշեցիներին են միացել Արամուս գյուղի մի խումբ խոյեցիներ), **Արտավազ*** (նախ՝ Մեղրաձոր, ապա՝ Արտավազ), **Կարենիս** (Նախ Ալափարս ու ՀՀ տարբեր վայրեր, ապա՝ Կարենիս):

Վերոնշյալ խմբավորումները պարզ դարձրին, որ մարզում կան բարբառային տարբեր որակներ, առանձին բարբառախմբեր: Վիճակագրական տվյալները վկայում են, որ **Մշո** բարբառը ներկայանում է ինը խոսվածքով, **Խոյի/Մակուի** բարբառը՝ ութը խոսվածքներով, **Արարատյան** բարբառը՝ երեք խոսվածքներով, **Արծափի և Բայազետի** բարբառը՝ վեց խոսվածքով, 31-ը ներկայանում է խառը խոսվածքներով, Ղարաբաղի բարբառը՝ մեկ խոսվածքով, իսկ տասն խոսվածք համարվում է գրականացած և գրականացող, որոնցում գործում է խոսակցական հայերենը: **Արարատյան** բարբառի տեղաբնիկ խոսվածքները մեծ խմբեր չեն կազմում, իսկ **Վանի** բարբառը միատարր խոսվածքներով չի ներկայանում:

Պատմականորեն համագոյակից բարբառները, գերազանցապես լինելով իրենց տարածական բուն հիմքերը կորցրած, նոր կենսամիջավայրում ենթադրաբար ենթարկվել են լեզվական տարաբնույթ օրինաչափ փոփոխությունների, ազդել մեկը մյուսի վրա, լեզվական իրողություններ փոխառել: Կոտայքի մարզի խոսվածքների այսպիսի բնութագիրը թույլ է տալիս ենթադրել, որ բարբառախմբերի ու նրանց խոսվածքների անաղարտորեն պահպանվածուր-

* Արտավազ համայնքում այսօր ձևավորվել է գրականացող մի խոսվածք՝ խոսակցական հայերեն: Բնակավայրում նախկինում ապրել են թուրքեր: Միայն 1941թ. Մեղրաձոր գյուղից մի խումբ արծափցիներ վերաբնակվել են այստեղ: Այստեղ են բնակություն հաստատել նաև հարակից Կոմունայի՝ որբանոցի որբերը, որոնք հայերենի տարբեր բարբառների ներկայացուցիչներ են եղել:

յունը հարաբերականորեն է կայուն: Հնարավորինս պահպանվել են **Արարատյան, Մշո, Խոյի** և **Ղարաբաղի** բարբառները, իսկ **Վանի, Բայազետի** բարբառներից մնացել են հատուկենտ լեզվական դրսևորումներ: **Արարատյան, Մշո, Խոյի** բարբառները պահպանվել են անաղարտ, քանի որ թվային գերակշռող առավելություն են ունեցել **Վանի** և **Բայազետի** բարբառների համեմատությամբ: Իսկ **Ղարաբաղի** բարբառը ներկայացնող խոսվածքներն անաղարտ են Արզնիում, Փյունիկում, Արտավազում, քանի որ ընդամենը 25 տարի է՝ ինչ գտնվում են նոր միջավայրում:

Ինչպես տեսանք, Կոտայքի մարզի բնակավայրերում ապրող ազգաբնակչությունը սոցիալ-պատմական տարբեր հիմքեր են գալիս, որի հետևանքով գործում են լեզվական անհամասեռ համակարգեր: Համաժամանակյա լեզվական որակները և օրինաչափությունները, հանրալեզվաբանական տարբեր տվյալները մեզ թույլ են տալիս կատարել հետևյալ խմբավորումները

ա) Բարբառային և խոսակցական միևնույն որակներով ներկայացող համասեռ խոսվածքներ, որոնք պատմականորեն հանգում են հայերենի բարբառներից որևէ մեկին: Այդ խոսվածքներն են՝ **Աղավնաձորը, Եղվարդ, Ջովաշենը, Կապուտանը, Արգելը, Թեղենիքը, Սարալանջը, Սևաբերդը, Բջինն, Սուլակը, Քասախը, Գետամեջը, Արամուսը, Ալափարսը, Ակունքը, Մայակովսկին, Նոր գյուղը, Քաղսին, Քարաշամբը, Լեռնանիստը***, **Հատիսը, Մեղրաձորը,**

* Լեռնանիստ գյուղի խոսվածքը արդի դրությամբ կարևոր լեզվական փաստեր է ներկայացնում, որը, անխոս, լրացուցիչ ճշգրտումների կարիք ունի: Վերականգնումները փաստում են, որ այս բնակավայրի բարբառային վիճակը խառն է. այնտեղ գործառում են հնչյունական համակարգի այնպիսի իրողություններ, որոնք բնորոշ են **Վանի**, ինչպես նաև **Մշո** (Արծկեի, Արճեշի), **Խոյի** բարբառներին, իսկ ձևաբանական համակարգի այնպիսի հատկանիշներ կան, որոնք հատուկ են բացառապես **Խոյի** բարբառին, օրինակ՝ մ դիմանիշի հավելումն անցյալ կատարյալ ժամա-

Արագյուղը, Սրգաշենը, Գողթը, Զառը, Կոտայքը, Մարմարիկը, Փյունիկ:

բ) Բարբառային ու խոսակցական տարբեր օրինաչափություններով ներկայացող տարասեռ խոսվածքներ, որոնք պատմականորեն հանգում են հայերենի տարբեր բարբառների: Այդ խոսվածքներն են՝ **Գեղարդը, Բալահովիտը, Ողջաբերդը, Բուժականը, Գեղաշենը, Պռոշյանը, Ջրաբերը:**

գ) Լեզվական բազմատարրությամբ, միջակա անցողիկ գծերով ներկայացող, խառը խոսվածքներ, որոնցում կան տարբեր բարբառային շերտերի լեզվական հատկանիշներ: Սրանք հիմնականում քաղաքային խոսվածքներն են և բարբառային տարբեր միավորներից ձևավորված խոսվածքները: Այդ խոսվածքներն են՝ **Առինջը, Ջրվեժը, Գառնին, Աբովյանը, Ջորավանը, Արզականը, Բյուրեղավանը, Ծաղկաձորը, Ջովունին, Նոր Երզնկան, Նոր Արտամետը, Հացավանը, Ջրառատը, Արզնին, Կաթնաղբյուրը, Հրազդանը, Ջովքը, Քանաքեռավանը, Գեղաղիբը, Նոր Գեղին, Զարենցավանը, Պողնին, Նոր Հաճնը, Վերին Պողնին, Կամարիսը,**

նակի եզակի առաջին դեմքում՝ **նստամ, իմացամ, խաղացիմ** և այլն, կամ հատկանիշներ, որոնք հատուկ են բացառապես **Վանի** և **Սշո** բարբառներին, օրինակ՝ սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմությունը՝ **կու տամ, կը նստիմ, կը խաղամ** և այլն: Նկատենք, որ հակասությունը պատմական տվյալների և լեզվական փաստերի միջև է: Նշենք, այս տարածքում թվաքանակով գերիշխող են եղել խոյեցիները (38 ընտանիք) . կա՛մ նրանց լեզվական որակների վրա ազդել են սակավաթիվ մակվեցիները (1 ընտանիք), սալմասոցիները (2 ընտանիք), բայազետցիները (6 ընտանիք), մանազկերտցիները (2 ընտանիք) (տե՛ս **Զավեն Հարությունյան**, «Օջախ»/Պատմահայրենասիրական ակնարկ Լեռնանիստի մասին/, Ե., 2009, էջ 257), կա՛մ Խոյում եղել է Վանի ու Սշո լեզվական որակներով ներկայացող սահմանային միջբարբառ: Մեր այս վերջին տեսակետն ավելի հավանական ենք համարում, քանի որ միջին դարերում Կենտրոնական Հայաստանից անընդմեջ արտագաղթեր են տեղի ունեցել դեպի Պարսկաստան: Հնարավոր էր այսպիսի միջբարբառի հանգրվանը Խոյում, որը ժամանակի ընթացքում լեզվական հատկանիշներ կվերցնեք նաև իրեն շրջապատող խոյեցիներից:

Հանքավանը, Կոտայքը, Չորաղբյուրը, Արտավազը, Հրազդանի **Վանատուր** թաղամասը, **Կարենիսը:** Այս ենթախմբում մեծաթիվ են այն խոսվածքները, որոնցում գործառում է ժամանակի խոսակցական հայերենը:

Վերոնշյալ բոլոր վերականգնումները, նշենք, վերջնական ու բացարձակ լինել չեն կարող, քանի որ, ինչպես փաստում է Ֆերդինանդ դը Սոսյուրը «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց» (1916թ.) աշխատության մեջ, բարբառները սահմաններ չեն ճանաչում: Հետևաբար՝ մոտավոր և բացարձակ եզրահանգումներում հավանականությունները զգալի են:

Որպես ամփոփում՝ վերլուծությունները ցույց են տալիս, որ այս տարածքում հնարավոր է տարբերակել՝ ա) հնչյունական գերիշխող հատկանիշներով միմյանց հակադրվող խոսվածքներ. **Մշո** և **Արարատյան** բարբառները հակադրվում են **Վանի, Խոյի, Ղարաբաղի** բարբառներին, բ) քերականական գերիշխող հատկանիշներով միմյանց հակադրվող խոսվածքներ. **Մշո** և **Վանի** բարբառները հակադրվում են **Արարատյան, Խոյի, Ղարաբաղի** բարբառներին), գ) բառապաշարի համակարգում բոլոր խոսվածքները համասեռ են. պատմականորեն ձևավորվել է բառային կազմի և հիմնական բառաֆոնդի նույնականություն:

Mkrtchyan Garik – Sociolinguistic Examination of Kotayk Region Idiolects. – There are sixty-seven inhabitations in Kotayk region from which sixty two are rural communities and seven are urban. Sociolinguistic studies and reconstructions show that there are numerous idiolects representing Mush, Van, Gharabagh, Khoy and Ararat dialects in the Kotayk region, RA. The existence of four dialects makes basis for creating various sociolinguistic groups, such as the indigenous and immigration of idiolects, their being homogeneous, heterogeneous and mixed. According to research, Ararat, Mush and Gharabagh dialects have been greatly preserved in

Kotayk region, while only several manifestations of Van and Khoys dialects have remained.

Мкртчян Гарик – Социолингвистическое исследование наречий Котайкской области. – Область Котайк насчитывает 67 населенных пунктов, в том числе 62 сельских общин и 7 городских. Социолингвистические исследования и реконструкции показывают, что в Котайкской области РА существуют многочисленные наречия, представляющие Мушский, Ванский, Карабахский, Хойский и Араратский диалекты. Наличие четырех групп диалектов является основой для проведения различных социолингвистических классификаций, как, например, происхождение и перемещение наречий, их однородность и разнородность. Согласно исследованиям, в Котайкской области наилучшим образом сохранились Араратский, Мушский и Карабахский диалекты, в то время как Ванский и Хойский диалекты едва отслеживаются.

Մովսեսյան Նոյեմ (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՅՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ
ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ Փ. ԲՈՒԶԱՆԻԻ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ

Անցյալ դերբայով կազմված դերբայական դարձվածների քննությունը կատարել ենք ըստ 5-րդ դարի մատենագիր Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկի,³² որի կենդանի և հարուստ լեզուն գրավում է ընթերցողին իր ժողովրդախոսակցական պարզությամբ և վառ արտահայտչականությամբ: Հր. Աճառյանը այն բնորոշում է որպես «պերճ, բազմազարդ, մթին և հաճախ անկանոն»³³: Վ. Առաքելյանն էլ նկատում է, որ Բուզանդի խոսքը աչքի է ընկնում կրկնություններով, անկանոն համաձայնություններով և շրջուն շարադասությամբ: «Բազմաբարդ նախադասությունների և հաջորդում են կտրուկ հատու և սեղմ նախադասությունները»³⁴:

Գրաբարի քերականության սկզբնավորումից սկսած դերբայները քերականների կողմից արժանացել են տարբեր մեկնաբանությունների: Հարկ չհամարելով անդրադառնալ այս յուրահատուկ բայաձևերի վերաբերյալ ժամանակի ընթացքում եղած կարծիքներին՝ նշենք միայն, որ անորոշ դերբայը առանձնացվել է մյուս դերբայներից որպես բայի անորոշ եղանակ՝ աներևույթ, իսկ մյուս դերբայների՝ բայական, ինչպես և անվանական ու ածականական գործառույթ-

³² Փավստոս Բուզանդ, *Պատմութիւն հայոց*, Ե., 1987 :

³³ Հր. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, Ե., 1951, էջ 78):

³⁴ Վ. Առաքելյան, *Այնարկներ հայոց գրական լեզվի պատմության*, Ե., 1981, էջ 169-170):

ները նկատի ունենալով, դրանք անվանել են ընդունելություններ³⁵:

Գրաբարյան չորս դերբայները՝ **անորոշ** (-ել, -ալ, -իլ//ել, -ուլ), **ենթակայական** կամ **ներկա** (-ող, -իջ), **անցյալ** (-եալ, -եցեալ) և **ապառնի** (-ոց, -ի), բնորոշվում են բայիմաստով, կամ ինչպես Ա.Աբրահամյանն է շեշտում իր հայերենի բայի և դերբայների մասին ծավալուն և արժեքավոր մենագրություններում, դերբայական հատուկ գործողության վիճակի իմաստով³⁶: Դերբայներն ունեն նաև սեռ և խնդրառություն: **Անցյալ** և **ապառնի** (-ոց) դերբայները օժանդակ բայերի հետ կազմում են գրաբարի սահմանական եղանակի վաղակատար ներկա, անցյալ, ինչպես և ստորադասական ապառնի ժամանակաձևերը: Նախադասության մեջ ինքնուրույն կիրառություն ունեն և դերբայական դարձվածի կազմությանը մասնակցում են **անորոշ**, **անցյալ**, **ենթակայական** և **ապառնի**(-ի) դերբայները:

Գրաբարի **անցյալ դերբայը** ցույց է տալիս կատարված, ավարտված գործողություն և օժանդակ *եւ, լինիւ, ինչպես և ունիւ, կամ, գտանեւ, ասեւ, կարծեւ, երևիւ* բայերի համապատասխանաբար ներկա, անցյալ և ապառնի (*եւ, էի, իցեւ*) ձևերի հետ՝ որպես ձևաբայ կազմում բարդ ժամանակաձևեր՝ սահմանական եղանակի բաղադրյալ (վաղակատար-հարակատար) ներկա, անցյալ և ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի:

Իր անկախ՝ անվանական և ածականական կիրառությամբ, անցյալ դերբայը հաճախ մեկ կամ ավելի լրացումներ է ստանում և կազմում դերբայական դարձված՝ նախադասության

³⁵ Այս մասին տե՛ս **Գ.Ջահուկյան**, *Գրաբարի քերականության պատմություն (XVII-XIXդդ.)*, Ե., 1974, **Գ.Ջահուկյան**, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնա-դարյան Հայաստանում*, Ե., 1954:

³⁶ **Ա.Աբրահամյան**, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Ե., 1953, էջ 353: **Ա.Աբրահամյան**, *Բայը ժամանակակից հայերենում*, Ե., 1962, էջ 356-363:

մեջ ստանձնելով տարբեր պաշտոններ՝ ենթակա, ստորոգելիական վերադիր, անվանական (որոշիչ, բացահայտիչ, հասկացուցիչ) և բայական (խնդիրներ և պարագաներ) լրացումներ:

Մեր խնդրո առարկան անցյալ դերբայով կազմված դարձվածների շարահյուսական կիրառություններն են, որոնք իրենց հաճախականությամբ զիջում են միայն անորոշ դերբայով կազմված դերբայական դարձվածներին: Այսուհետև դերբայական դարձված եզրը կնշենք կրճատ՝ ԴԴ:

ԴԴ-ը մի բարդ, ամբողջական գործողություն մատնանշող այնպիսի բառակապակցություն է, որը նախադասության մեջ հանդես է գալիս որպես դերբայ գերադաս անդամով շարահյուսական մեկ միավոր, դառնում նախադասության մեկ անդամ: ԴԴ-ը թեև երկրորդական նախադասության շարահյուսական հոմանիշ կառույց է, սակայն բոլորովին չի նույնանում նրան:

Բնութագրելով ԴԴ-ը որպես դերբայի և իր լրացումների կապակցություն, պետք է այն տարբերակել գրաբարում շատ հաճախ գործածվող **դերբայական նախադասություններից**: Այստեղ դերբայը՝ առանց բայական ժամանակի և դեմքի արտահայտության, կիրառվում է դիմավոր բայի փոխարեն՝ կատարելով ստորոգյալի պաշտոն: Այս դեպքում ընթերցողը ինքն է տրամաբանորեն վերականգնում բացակայող քերականական ստորոգումը: Ընդ որում, գրաբարում և մասնավորապես Բուզանդի երկում նման կիրառություններ հանդիպում են և՛ պարզ նախադասությունների տեսքով, և՛ բարդ համադասական ու ստորադասական կառույցներում: Օրինակ. «Ումանց *ծնեալ*, եւ *ոչ սնուցեալ*. *ի չափ հասուցեալ*, եւ *անարգեալ* թշնամանօք» (4-րդ, Ե, 132): «Եւ արքայն Պարսից *գնացեալ փախստական յերկիր իւր*. և իբրև եհաս անդր՝ ժողովէր առ ինքն զամենայն մնացեալս իշխանութեան իւրոյ» (3-րդ, ԻԱ, 88): «Եւ *մինչ նա հոգացեալ վասն իւր ծննդոց մնացելոց զաւակին*... երևեցաւ նմա հրեշտակ տեառն ի տեւեանն, և ասէ ցնա» (3-րդ, Ե, 22):

Սովորաբար սեռականով ենթակա է դրվում անցյալ դերբայով և օժանդակ բայով կազմված բաղադրյալ ժամանակների հետ: Մակայն անցյալ դերբայը անկախաբար, առանց օժանդակ բայի կիրառվելիս նույնպես կարող է առնել սեռականով ենթակա: Մանուկ Աբեղյանը գրում է. «Նույն ենթական ու ժամանակն ունեցող երկու, երեք բայերից առաջինը սովորաբար դրվում է անցյալ դերբայով, և ենթական, մանավանդ, երբ անցյալ դերբայից հետո է գալիս, դրվում է հաճախ իբրև սեռական խնդիր»³⁷: Այսպիսի անցյալ դերբայն աշխարհաբար թարգմանվում է կամ դիմավոր բայով կամ անորոշ դերբայի գործիական հոլովով: Դերբայների (ինչպես և ածականների) լրացումները անվանելով կողմնակի լրացումներ, և դրանք բաժանելով 4 խմբի՝ կողմնակի ենթակա, խնդիր, պարագա և ստորոգելիական վերադիր լրացումների՝ Մ.Աբեղյանը շեշտում է, որ դերբայի սեռականով ենթական նույն հարաբերությունն ունի դերբայի ցույց տված գործողության հետ, ինչ որ բուն ենթական ստորոգյալի նկատմամբ, սակայն կողմնակի ենթական իսկապես ենթակա չէ, այլ լոկ ենթակայական խնդիր, իսկ այս կապակցությունները իրենց նշանակությամբ հավասար են նախադասության, և հեշտությամբ կարելի է նախադասության վերածել՝ դերբայը դիմավոր բայ դարձնելով: Օրինակ. «Բայց Մերուժանայ Արծրունու պատասխանի տուեալ Ուռնայրի, սասց...» (5-րդ, Դ, 294) (պատասխան տվեց, սասց): «Արդ ձեք թողեալ զԱստուած, եւ յիշեցուցէք զչարիսն ձեր զառաջինս, եւ լցէք զչափ մեղացն հարցն ձերոց»:

Փ. Բուզանդի երկում անցյալ դերբայով կազմված դարձվածները քննելիս պետք է նկատի ունենալ, որ գրաբարում շատ տարածված էր դերբայական ժամանակաձևերի հետ գործածվող օժանդակ բայերի գեղջումը, հետևաբար

³⁷ Տե՛ս Մ.Աբեղյան, *Աշխարհաբարի շարահյուսություն*, Երկեր, հ. 2, Ե., 1974, էջ 330:

չպետք է շփոթել անցյալ դերբայի նման կիրառությունները դերբայական դարձվածների հետ: Օրինակ. «Մա լեալ էր ամուսնատուր յաշխարհակեաց կեանս նախ յաստիս մանկութեան. ի տղայութենէ սնեալ եւ ուսեալ ի կեսարացոց քաղաքին Գամրաց ընդ հաւատարիմ վարդապետօք. եւ ցանկալի եղեալ իւրոյն համարուեստն գուգակցացն» (4-րդ, Գ, 108):

Դ՛ր չպետք է համարել նաև բառարանային մեկ միավոր, մեկ բառությո՞ւ համարվող հարադրավոր բայերի դերբայական կիրառությունները, որոնց հարադիրը թեև անցյալ դերբայով արտահայտված հարադրյալի նկատմամբ ունի «կրող խնդրի նշանակություն», սակայն բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները մթագնած են, ինչպես օրինակ, *միտ եղեալ, կոծ եղեալ*, (394), *նետաձիգ եղեալ, խորհուրդ եղեալ (16), ոտն ածեալ (370), ընդ միտս ածեալ (370), ածեալ զմտաւ (372), ի բերանս հարեալ, ի գլուխս առեալ (378), յերկիր գլեալ (182), ազգատ արարեալ, ի ձեռին կալեալ (368), յոտն կացեալ (38), ընդ սուր հանեալ (388), թափ հանեալ (182), ընդ գիրկս մտեալ (388), զգլուխն հատեալ (382), գտեղի առեալ (382), զերթնեկս առեալ (180), զճեմս առեալ (180), ծափս զծափի հարեալ (370), խնդալից եղեալ (382), զուլամբ երթեալ (388), ձերբակալ արարեալ (370), զանց արարեալ (12), արժանի եղեալ (14), զկնի եղեալ (182), առ ոչինչ համարեալ (22) ի գուճս հարեալ (178) և այլն³⁸:*

Քննելով անցյալ դերբայով կազմված դարձվածների շարահյուսական կիրառությունները, ակնհայտ է դառնում, որ դրանց համար բնորոշը պարագայական և որոշչային գործառույթն է, որտեղ անցյալ դերբայը, Մ. Աբեղյանի բնորոշմամբ՝ հանդես է գալիս որպես բայածական: Ավելի քիչ ենք հանդիպում անցյալ դերբայի բայանվանական գործառույթների: Այս դեպքում անցյալ դերբայը իր լրացումների

³⁸ Այս կառույցները մանրամասն քննել է Լ.Հովսեփյանը իր «Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը» գրքում, Ե., 2016:

հետ նախադասության մեջ կատարում է **ենթակայի** կամ որևէ **խնդրի** պաշտոն: Այս կիրառությունների արդյունքում հետագայում կատարվել են խոսքի մասերի փոխանցումներ, երբ որոշ անցյալ դերբայներ վերածվել են գոյականների: **Ենթակայի** պաշտոն կատարող անցյալ դերբայները կարող են գործածվել եզակի կամ հոգնակի թվով, առնել որոշյալ հոդ, դրվել ստորոգյալից առաջ կամ հետո: Սրանք աշխարհաբարի են փոխարկվում հարակատար կամ ենթակայական դերբայներով: Օրինակ. «Եւ առն աստուծոյ սասցեայքն... կատարեցաւ» (4-րդ, ԺԴ, 172): «...զի հաստացեայք յԱստուած՝ ապրել կարացեն» (4-րդ, Դ, 116): «Ոչ ինչ այնուհետև սակաւ սպանեայք անկանեին ընդ երեսս դաշտին» (5-րդ, ԼԷ, 370): «Ժողովեցան ամենայն թագուցեայքն փախուցեայք կորուսեայք երկրին Հայոց» (4-րդ, Ա, 104):

Ինչպես վերը նշեցինք, անցյալ դերբայներով կազմված ԴԴ-ները նախադասության մեջ դառնում են նաև **ուղիղ և անուղղակի (սեռի և բնության) խնդիրներ**:

Անցյալ դերբայով արտահայտված **ուղիղ խնդիրները** արդի հայերենում փոխարկվում են հարակատար (-ած) կամ ենթակայական (-ող) դերբայների: ԴԴ-ի կազմում հանդես եկող անցյալ դերբայի նախադաս լրացումները (որոշիչ, հատկացուցիչ) իրենց վրա են կրում դերբայի հոլովական նախդիրները, իսկ անցյալ դերբայը հաճախ գործածվում է որոշյալ հոդով, օրինակ. «Եւ շինէր զեկեղեցիս ընդ ամենայն տեղիս, եւ զամենայն կործանեալսն կանկնէր...» (5-րդ, ԻԱ, 326): «Եւ կատարեալ հաստարմացոյց զասացեալսն հրամանաց թագաւորին Յունաց» (3-րդ, ԻԱ, 90): «...և իբրև եհաս անդր՝ ժողովէր առ ինքն զամենայն մնացեալս իշխանութեան իւրոյ...» (3-րդ, ԻԱ, 88):

Հանգման և մատուցման անուղղակի խնդիրներ դառնալիս՝ անցյալ դերբայները դրվում են **տրական** հոլովով: Օրինակներ. «Ամենայն հաստացելոց ի Քրիստոս հասանէին բազում նեղութիւնք» (4-րդ, Ե, 138): «... տիրադրուծք

հըրեանցակուռ ձուլելոյն երկիր պագանէին...» (3-րդ, Ժ, 38): «...այլ Աստուած դատաւոր արդար եւ հօր եւ երկայնամիտ՝ որ ամենայն տառապելոց ունկնդիր է...» (4-րդ, ԺԳ, 174):

Անցյալ դերբայով կազմված դարձվածը կարող է գործածվել միջոցի խնդրի պաշտոնով: Այս դեպքում անցյալ դերբայը կամ նրա լրացումները դրվում են գործիական հոլովով: Օրինակ. «Եւ կեանս և մահ դնէր ընդ նոսա, խոստացեալ քանիք և արեամբք» (3-րդ, ԻԱ,): «...զհարդ Արշակ արքայ աւետարանանս երդուեալ արքային Պարսից ուխտէր նմա» (4-րդ, ԺԶ, 194):

Միասնության խնդիր դառնալիս անցյալ դերբայը գործածվում է հանդերձ նախադրության հետ՝ դրվելով գործիական հոլովով: Օրինակ. «Եւ առեալ դառնայր անտի, հանդերձ շնորհատուր պարգևելովն» (3-րդ, Ժ, 38):

Անցյալ դերբայով կազմված ԴԴ-ները հաճախ նախադասության մեջ կատարում են գոյականական անդամի լրացումների (որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ), պաշտոններ: Դրանցից ամենից շատ գործածվողը որոշիչ ԴԴ-ն է, որտեղ անցյալ դերբայը կարող է հոլովով և թվով համաձայնել որոշյալին, կամ համաձայնել միայն թվով, և կամ էլ մնալ անհամաձայն: Ընդ որում անհամաձայնության դեպքերը ավելի հաճախակի են նախադաս կիրառություններում: Այս դեպքում որոշյալի նախդիրը դրվում է ԴԴ-ի առաջին անդամի վրա՝ սահմանազատելով ԴԴ-ն նախադասության մյուս անդամներից: Օրինակ. «...Որպէս ի նախանձ մտեալ տապալեաց թագաւորն Պապ գամենայն եղեալ կրօնս կանոնիցն» (5-րդ, ԼԱ, 348): «...գոր յառաջնումն եկեալք զօրքն պարսից աւերեցին» (4-րդ, ԾԸ, 272): «Այլ քաջն զօրավարն Հայոց սպարապետն ...ջանայր և ճգնէր կալ ի ճակատու պատերազմին ... ի վերայ հաւատացեալ յաստուած և ի Քրիստոս մկրտեալ ժողովրդոց...» (5-րդ, Ի, 326): Հետադաս գործածության օրինակներ. «...գամենայն որոմնն ի մի վայր ժողովեալս ի միում վայրի գտեալս միահաղոյն վախճանեաց»

(4-րդ, ԺԳ, 178): «Եւ ամէր գամենայն հանդէսն կարգեալս եւ պատրաստեալս վառեալս ի պատերազմ, գորօշս փողփողեալս եւ նշանս արձակեալս...» (5-րդ, Ա, 286): «...եկ դիպեցաւ սմա օտար պատանհի մի աշխարհական հեծեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտոյ, աղեղնակապարճ զմիջովն. լուացեալ զհերս իւր, օծեալ մերձեալ, վարսակալ եղեալ ի գլուխ իւր, եւ օղիկ արկեալ զուսովք իւր....» (6-րդ, Ը, 406):

ԴԴ-ի բաղադրիչները կարող են դրվել որոշյալից առաջ և հետո: Օրինակ. «Եւ հրաման տացես հարկանել զկէս խորանի հատակ ի բերեալ հողոյն հայոց» (4-րդ, ԾԴ, 256): «...սոյնպէս և ամենայն զօրացն տային բաշխիշ ի մեծամեծ ասարացն ամելոցն» (5-րդ, Բ, 292):

ԴԴ-ով արտահայտված որոշիչը կարող է գտնվել բազմակի որոշյալների միջև և հանդիսանալ դրանց ընդհանուր լրացումը. «յիշելով զայն մարդ` որ յայնմ բերդի գոք եղեալ է, թող թէ զնա զայր թագաւոր եւ զիմ ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զհակառակորդն...» (5-րդ, Է, 316):

Բացահայտչի պաշտոն կատարելիս անցյալ դերբայով կազմված դարձվածները հետադաս դիրք են գրավում: Նման կիրառությունները հազվադեպ են: Օրինակ. «Բայց միայն ապրէր սակաւօք փախուցեալ Մերուժանն, եկեալ առաջնորդ նոցա» (4-րդ, Խ, 238): «Ի բաց կաց յինէն ծառայ չարագործ տիրացեալ տերանց քոց» (4-րդ, ԾԴ, 258): Մասնակի բացահայտիչների օրինակներ. «...տեսանէին սոքա յիւրաքանչիւր լեռանէ աչօք բացօք ի տուրնջեան ժամու զայրն Աստուծոյ զՆերսէս իբրեւ յամպս յափշտակեալս...» (4-րդ, ԻԵ, 184): «...եւ տեսանէր զտախտակն՝ իբրեւ զի կացնեալ հատեալ հանեալ ճերթեալ ի մեծ ինչ փայտից (3-րդ, Ժ, 38):

Անցյալ դերբայով կազմված ԴԴ-ը դրվելով սեռական հոլովով, կարող է ցույց տալ գոյականական անդամի պատկանելությունը, վերաբերությունն ու ծագումը և հանդես գալ որպէս **հասկացուցիչ**: Նման կիրառությունները շատ չեն, և բոլոր օրինակները հետադաս են. «...որպէս վասն երկայն-

մտութեանն համբերողացն եւ յուսալից սպասելոցն գայցէ երեւեալ քրիստոս ծնունդ աստուծոյ հօր» (4-րդ, Ե, 134): «Եւ նեղելոց և տարակուսելոց օգնական և վերակացու, և *ջատագով ամենայն գրկելոց* լինէր նա» (4-րդ, գ, 110): «Ինքն եղև օրինակ մերոյ կենդանութեանս, *անդրանիկ ամենայնի մեռելոցն՝ մեռանելովն*» (4-ԲԴ, Ե, 130):

Անցյալ դերբայով կազմված ԴԴ-ների ամենաբնորոշ և հաճախական գործածությունը որպես **ձևի պարագա** հանդես գալն է: Երկուսն առանձնացրել ենք անցյալ դերբայով ձևավորված ձևի պարագա դարձվածների 155 նախադաս և 30 հետադաս գործածության օրինակներ: Ե՛վ նախադաս, և՛ հետադաս կիրառվելիս՝ դրանք երբեմն կարող են թվով համաձայնել ստորոգյալին կամ մնալ անհամաձայն: Այս դեպքում անցյալ դերբայները արդի հայերենի են փոխարկվում անորոշ դերբայի գործիականով կամ հարակատար դերբայով և կարող են ունենալ տեղի, ժամանակի կամ պատճառի-հիմունքի պարագաների լրացուցիչ իմաստներ: Օրինակներ. «Իսկ կինն սպանելոյն Փռանձեմն *գհանդերձան պատառեալ, գգեսս արձակեալ*, մերկատիտ ի մէջ աշխարանին *կոծէր*» (4-րդ, ԺԵ, 190): «...և ամենայն օտարք ընդ նմա, *հովանեալ նորա հանգուցեալք, դադարէին*» (4-րդ, Դ, 122): «Թագաւորն *գիր սամոյրսն գգխովն ածեալ, ի փոյթ կնջանն մտեալ*, զիր դէմս երեսացն *ծածկէր*» (4-րդ, ԺԵ, 186): «Ի *չորք անկեալ յոտս և ի ձեռս սողէր* առաջի թագաւորացն, և զուղտու զձայն ածէր կառայելով» (4-րդ, ԺԵ, 410): «Ապա *միաձի մագապուր* թագաւորն Պարսից Շապուհ *ճողոպրեալ փախչէր...*» (5-րդ, Բ, 290): «Եւ *անդէն ոտն ածեալ էջ* ի ձիոյն, Էհան զթօւրն, *մատուցեալ ի նա՛ պատառ պատառ կոտորեալ, անդէն ցրեալ սատակեաց* զնա» (5-րդ, ԼԷ, 370):

«Այլ յանդիմանեալք՝ հոլանեալ *գործէին զմեղս* համարձակութեամբ՝ *առանց խիթի յամենայն չարիս դարձեալք*» (3-րդ, ԺԵ, 72): «Ապա *իջին* վահանաւորքն *եղեալք զվահանսն ի վերայ*»

(5-րդ, ԼԵ, 370): «Ապա *խօսել սկսանէր* թագաւորն ծափս ծափի հարեալ մեծաւ զղջմամբ ընդ իրսն՝ գոր գործեաց» (4-րդ, ԺԵ, 190):

Անցյալ դերբայով կազմված ԴԴ-ը կարող է մատնանշել գործողության տեղը՝ դրվելով հիմնականում նախադաս: Այսպիսի **տեղի պարագա** ԴԴ-ները կազմվում են հիմնականում շարժում ցույց տվող՝ *ելեալ, մտեալ, ածեալ, եղեալ, եկեալ, դիմեալ, դիպեալ, պատահեալ, գնացեալ, անցեալ, ժողովեալ, ճողոպրեալ, հարեալ* և այլ դերբայներով, որոնք սովորաբար պահանջում են նախդրով կամ նախադրությամբ որևէ տեղ մատնանշող խնդիր կամ պարագա: Մրանց հաճախ ուղեկցում է ժամանակի պարագայի իմաստը:

Օրինակ. «Իսկ կինն հասեալ առ արքեպիսկոպոսապետն, գոյժ արկանէր նմա զհարոյ առնն տարապարտ կորուստն, ճչեալ մեծաձայն» (4-րդ, ԺԵ, 186): «Ապա գնացեալք անդի ի բաց մերժէին, ընդ այլ դիմեալ՝ ասպատակս կապէին...» (4-րդ, ԻԴ, 222): «...ի մի վայր եկեալք, խորհուրդ խորհեցան» (3-րդ, ԺԴ, 62): «Իսկ ինքն թագաւորն գնացեալ ի լալիսն, նստեալ լայր զեղբորորդին իւր, գոր ինքն եսպան» (4-րդ, ԺԵ, 190): «...և գտանէին զբանակն արքային Պարսից ի Թարբեշ քանակեալ» (4-րդ, ԻԵ, 226): «Եկին հասին դեսպանքն երթեալք ի կայսրէն առ թագաւորն Հայոց մեծաց Արշակ...» (4-րդ, ԺԱ, 164):

Երբեմն ԴԴ-ի բաղադրիչները կարող են հեռանալ միմյանցից: Ինչպես օրինակ. «այլ կաղք և կոյրք և մարմնահարք, խուլք, և հաշմեալք և ցանկացեալք և կարօտեալք ընդ նմա և ի նորա ակրմբի դարմանէին քազմեալք» (4-րդ, Դ, 122):

Տեղի պարագա ԴԴ-ն կարող է ուղեկցվել այլ՝ օրինակ ձևի, ժամանակի, պատճառի և այլ պարագաներով: Օրինակ. «յայնժամ թագաւորն զհիւր զսամոյրսն զգլխովն ածեալ, ի փոյրք կնջանն մտեալ, զհիւր դէմն երեսացն ծածկէր, քնոյ պատճառ եղեալ՝ զի նորա բանսն մի լուիցէ» (4-րդ, ԺԵ, 186):

Անցյալ դերբայով կազմված **ժամանակի պարագա** դարձվածները հաճախ գործածվում են *ի, յորժամ, անդէն, մինչ-*

դէռ, բազում անգամ, մինչ, իբրև, յետ, ապա բառերի հետ, և դրվում են ստորոգյալից **առաջ**, հիմնականում թվով մնալով անհամաձայն, երբեմն էլ համաձայնելով ստորոգյալին: Արդի հայերենի են փոխարկվում կամ անորոշ դերբայի գործիականով, կամ դիմավոր բայով, որպես ժամանակի պարագա երկրորդական նախադասություններ: Այս դեպքերում հաճախ դժվար է որոշել դերբայական դարձվածի և դերբայական նախադասության հստակ սահմանները: Օրինակ. «Զոր իբրև լուեալ արքային, ասէ» (4-րդ, ԺԷ, 192): «Եւ թագաւորն Վաղէս զայս լուեալ խնդայից լինէր» (4-րդ, Ը, 152): «Իսկ նոցա լուեալ զձայն հօրն, վաղվաղակի արագ արագ դառնային ի նմանէ» (5-րդ, ԼԷ, 368): «Դիպեալք միմեանց արքն հաւատարիմք պատմէին միմեանց գոր ինչ տեսինն՝ առաջի ժողովրդոցն» (5-րդ, ԻԵ, 334): Իսկ նա յորժամ հասեալ առ Վարազն, յայտ առնէր զիրս ինայութեանն (3-րդ, Ի, 78): «Ապա հասեալ ի տուրնջէն ժամուն, անկանէին ի վերայ թագաւորին Պարսից» (3-րդ, ԻԱ, 88):

Բուզանդը անցյալ դերբայով ձևավորված **չափի ու քանակի** պարագա ԴԴ-ները գործածել է նախադաս: Ինչպես օրինակ. «Ընդ երիս բաժանեալ զգօրսն, զԱնդիկան և զՀազարաւուխտ զօրագլուխս կացուցանէր երկուց գնդացն (4-րդ, ԻԲ, 214): «...զի գբազունս բազում անգամ ի բունն արկեալ սովոր է արձակել զթշնամին» (5-րդ, Դ, 304):

Պատճառի և հիմունքի պարագայի պաշտոն կատարող անցյալ դերբայով կազմված ԴԴ-ները, դրվելով հիմնականում ստորոգյալից առաջ՝ հաճախ արտահայտում են պատճառի-հիմունքի, պատճառի-ձևի, պատճառի-ժամանակի խառը իմաստներ: Արդի հայերենում դրանց համարժեք են անորոշ դերբայի գործիականով ձևերը: Օրինակ. «Ոչ կարացեալ համբերել պարսավանացն վատանունութեանն, ստէ ցտենեկապան որդոցն իւրոյ» (4-րդ, ԽԴ, 240): «Զոր իբրև լուա Տիրիթ, զահի հարեալ յարքայէն, զիշերի փախստական լինէր» (4-րդ, ԺԵ, 192): «Յատուցեալ ընդ նոսա, այսպն արարեալ, հայածեսց յիւրոց սահմանացն» (5-րդ, ԼԷ, 364): «...մինչ ան-

զամ վասն կաշոյ միոջ ինայ արարեալ թագոյց...» (3-րդ, Ի, 80): «Ապա զայրացեալ ընդ բանսն թագաւորն, կամեցաւ զնա չարամահ առնել» (4-րդ, Ե, 138): «...զանձուկ սիրոյ պատճառեալ, համարձակութիւն խնդրէր՝ զալ նմա առ նա» (3-րդ, Ի, 80): «Ապա երկու եղբարք ի վերայ ձկանն հակառակեալք, Հսպան մինն զմինն» (5-րդ, ԻԷ, 338): «...քստ չարեացն կատարելոց զՓառանձեմայն՝ ամենայն չարեօք լցեալ զկամս կատարէր» (4-րդ, ԺԵ, 194): «... զիւր դէմս երեսացն ծածկէր, քնոյ պատճառ եղեալ» (4-րդ, ԺԵ, 186): Չկորստեան ճանապարհն համարձակէին՝ ի չարիս կամօք գնացեալք, և կամօք լեալք որդիք բարկութեան (3-րդ, ԺԳ, 54):

Հակառակ հիմունքի պարագայի օրինակ. «Զոր կացուցին զՅուսիկ՝ առանց նորա հրամանի եղեալ» (5-րդ, ԻԹ, 344):

Նպատակի պարագայի պաշտոն կատարելիս անցյալ դերբայը հաճախ արտահայտված է լինում կամք ու ցանկություն արտահայտող *կամեցեալ*, *ցանկացեալ* և այլն բառերով, որոնք դառնում են *վասն* կապի խնդիրներ: Սովորական է հետադաս կիրառությունը: Սրանց համարժեք ձևերը արդի հայերենում անորոշ դերբայի, երբեմն էլ՝ ենթակայական դերբայի սեռական հոլովաձևերն են՝ գործածված *համար* կապի հետ, կամ առանց կապի: Օրինակ. «Որ ամենայն արդարոցն *գայ* պարզևատուն վասն վկայելոցն ի հաւատոցն անտի» (4-րդ, Ե, 136): «Իսկ տէրն *եկն յայց եկեալ կորստականին*» (4-րդ, Ե, 130): «Վասն երկայնամտութեանն համբերողացն և յուսալից սպասելոցն *գայցէ երևեալ* Քրիստոս ծնունդ աստուծոյ Հօր» (4-րդ, Ե, 136):

Անցյալ դերբայը իր լրացումներով բաղադրյալ ստորոցյալի կազմում կարող է կատարել **ստորոգելիական վերադրի** պաշտոն՝ երբեմն գործածվելով անորոշ դերբայի փոխարեն³⁹: Օրինակ՝ «Ապա *հրաման տայր* թագաւորն Պարսից

³⁹ Այս մասին տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 353:

Շապուհ, գամենայն այր ի չափ հասեալ կոխան արարեալ փղաց» (4-րդ, ԾԸ, 272): «Իսկ յորժամ տեսանոյր գամենեսեան ի նոյն յառաջին բանին վերայ պնդեալ, զի գնոյն աղաղակէին առաջի թագաւորին, ասէին...» (4-րդ, Գ, 110): «Այսպէս պաշարեալք քնկապճեալք գերեալք վանեալք կծկեալք, ամենեքեան առ հասարակ յերկիր անգեալք անբարբառ կային, անխաղացք ի տեղուջէն....» (3-րդ, Գ, 16):

Այսպիսով, անցյալ դերբայով կազմված դարձվածները հատկանշվում են շարահյուսական բազմազան կիրառություններով, որոնցից ամենահաճախականը ձևի պարագայի և որոշչի պաշտոններն են: Այս կառույցների գործածությունը հաճախ ոճական արժեք ունի: Դրանք խոսքին լրացուցիչ պատկերավորություն և գեղարվեստական արտահայտչականություն են հաղորդում՝ պատումը դարձնելով ավելի դինամիկ: Պետք է նկատել, որ Բուզանդի երկում երբեմն հստակ չեն դերբայական դարձվածների և երկրորդական նախադասությունների սահմանները: Սա վկայում է, որ գործ ունենք դերբայական նախադասություններից երկրորդական դիմավոր նախադասություններին անցում կատարելու մի շրջանի հետ:

Որպես մեր կատարած քննության ամփոփում՝ ներկայացնում ենք Բուզանդի երկում անցյալ դերբայներով կազմված դարձվածների կիրառությունների վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

Անցյալ դերբայով կազմված ԴԴ-ի պաշտոնը նախ. մեջ	ԴԴ-ի շարադասությունը լրացյալի նկատմամբ		Ընդամենը
	նախադաս	հետադաս	
Ենթակա	8	5	13
Ստ. վերադիր	1	4	5
Որոշիչ	35	25	60
Հատկացուցիչ	-	6	6
Բացահայտիչ	-	4	4
Ձևի պարագա	155	30	185

Չափ ու քանակի պ.	3	-	3
Տեղի պարագա	26	27	53
Ժամանակի պարագա	36	1	37
Պատճառի պարագա	28	4	32
Հիմունքի պարագա	16	2	18
Նպատակի պարագա	2	4	6
Ուղիղ խնդիր	3	7	10
Հանգման և մատուցմ. խնդիր	4	2	6
Միջոցի խնդիր	3	1	4
Միասնության խնդիր	1	-	1

Movsesyan Noem – The Use of the Participle Phrases with Past Participle in Pavstos Buzand’s “History of Armenia”. – The article deals with the syntactic functions of the participle phrases with past participle in the examined work. These phrases are used in both simple and compound sentences occupying different syntactic positions. They function mainly as adjectives or adverbs as well as nouns becoming various types of complements, subjects, direct and indirect objects and parts of compound predicates. At the end, statistical data on the functioning of this constructions in the role of various parts of sentences are given.

Мовсесян Ноем – Употребление причастных оборотов с причастием прошедшего времени в “Истории Армении” Павстоса Бузанда. – В статье рассмотрены синтаксические функции причастно-деепричастного оборота, образованного с помощью причастия прошедшего времени в указанном произведении. Причастно-деепричастная конструкция с причастием прошедшего времени функционирует в качестве главных и второстепенных членов предложения: определения, дополнения и обстоятельств, а также подлежащего и предикатива. В конце приведены статистические данные о функционировании этой конструкции в роли различных членов предложения.

Շահվերդյան Թերեզա (Հայաստան,
Վանաձորի պետական համալսարան)

**ՏԵՔՍՏԻ ՈՃԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ՝
ԿԱՐՈ ՄԵԼԻՔՄԵԹՅԱՆԻ ՊՈՆԶԻՍՅԻ ԼԵԶՎԱՆՅՈՒԹԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ**

Գեղարվեստական ստեղծագործությունների լեզվի և ոճի հարցերով զբաղվող գիտնականները մինչև վերջին ժամանակներս սահմանափակվել են նախադասության ոլորտով: Տեքստի լեզվաբանության կարևորագույն մոտեցումն այն է, որ ուսումնասիրության հիմնական լեզվական միավորը ոչ թե նախադասությունն է, այլ տեքստը՝ որպես լեզվի առավելագույն կառուցվածքային միավոր, որի մեջ մտնում են նաև լեզվական մյուս մակարդակների միավորները՝ հընչույթը, բառը, ձևույթը, նախադասությունը: Նախադասությունը նման պարագայում տեքստի մասնավոր միավոր է, նրա համառոտ տեսակը, որն ունի ոճական դրսևորումների զգալիորեն սահմանափակ հնարավորություններ՝ հատկապես քերականական, մասնավորապես՝ շարահյուսական մակարդակում:

Տեքստը սահմանվում է որպես խոսքային ամենատարբեր միավորների՝ քերականորեն միմյանց հետ կապված ամբողջություն, և նրա լեզվաբանական ուսումնասիրության դաշտը բավականին ընդարձակ է:

Մեր հետազոտության նպատակն է խոսքային ստեղծագործությունների՝ տվյալ պարագայում Կարո Մելիքսեթյանի պոեզիայի լեզվանյութի տարբեր տեքստերի կառուցվածքային առանձնահատկությունների, բաղկացուցիչ մասերի կապակցման եղանակների, իմաստային ամբողջակա-նության ապահովման միջոցների ուսումնասիրությունը

Այդ նպատակով առանձնացրել ենք տեքստային մի քանի տարբերակներ, որոնցում Կարո Մելիքսեթյանը հարա-

բերականորեն ազատ, բայց գրական լեզվի բարձր ոճին հատուկ ճաշակով ու հարուստ բառապաշարի գործածությամբ դիմել է լեզվական համապատասխան միջոցների ու հնարների, որոնցով հասնում է լեզվաոճական պատկերավորման ու արտահայտչական ամենատարբեր արդյունքների, որոնց շնորհիվ գեղարվեստական պատկերը ընթերցողի վրա որոշակի գեղագիտական ազդեցություն է գործում: Այդ առումով հետաքրքրական են հատկապես հեղինակային բանադարձումները, մասնավորապես՝ ոճական հակադրությունները:

Տեքստային ոճաբանության մեջ ուշագրավ է նովելային ավարտը, երբ ստեղծագործությունը անսպասելի հանգուցալուծում է ստանում, և որը հատուկ է արձակ գործերին, սակայն նման ավարտ կարող են ունենալ նաև չափածո ստեղծագործությունները՝ կախված բանաստեղծի ճաշակից ու լեզվամտածողությունից: Այսպես՝ լիրիկական հերոսը մտատանջության մեջ դիմում է հռետորական հարցման.

*Արդյոք այս լաստը մեզ ու՞ր կտանի,
Մեզ ի՞նչ ժայռով ու քարերով կտա,
Խաղաղ ու կանաչ ափե՞ր կհանի,
Մեզ կկործանի՞, թե՞ մեզ կգթա...¹*

Այս քառատողին հաջորդում են հեղինակային նոր մտատանջումներ՝ համեմված իրադրային ու դիպվածային դարձույթներով ու բանադարձումներով.

*Մեզ ծովի վրա՝ անձրևների տակ,
Չի՞ թողնի քաղցած ու առանց հույսի,
Չի՞ հանձնի նա մեզ հողմերին անարգ,
Ջրապտույտում նա մեզ չի՞ սուզի (ն. տ.):*

Եվ վերջում՝ նովելային ավարտը.

*Հավատում եմ, որ մեզ չի կործանի,
Բայց և չի՛ հանի ափը մեր ուզած (ն. տ., էջ 35):*

¹ **Վարո Մելիքսեթյան**, *Խոտի երգը*, Ե., 1982, էջ 34 (այսուհետև՝ Խ.Ե. և համապատասխան էջը):

Գեղարվեստական տեքստում հեղինակը խուսափում է ճշգրիտ ձևակերպումներից ու միանշանակ ըմբռնվող նախադասություններից, որպեսզի կարողանա ավելի դիպուկ ու ազդեցիկ դարձնել իր խոսքը: Տեքստի ոճաբանները գտնում են, որ յուրաքանչյուր տեքստ ունի առաջաբան, բուն տեքստ և վերջաբան: «Ոճական նպատակներով, սակայն, գեղարվեստական երկերում տեքստային այս անհրաժեշտ կառուցվածքային բաղադրամասերը կարող են որոշակի «սրբագրման» ենթարկվել»²: Օրինակ՝ Ի. Գալպերինը ներածական մասի համար առանձնացնում է մի շարք կողմեր. դրանցից բանաստեղծական խոսքի համար ուշագրավ է թեզիսայինը, որի դեպքում հակիրճ նկարագրվում են այն դրույթները, որոնք հետագայում ծավալվելու են հիմնական տեքստում (տե՛ս Թ. Շ., նույն տեղում): Կարո Մելիքսեթյանի ստեղծագործությունների մեջ շատ են նման դեպքերը, երբ հեղինակը առաջին քառատողում առաջ է քաշում դրույթներ, որոնք հիմնավորվում են հաջորդ քառատողերում: «Երկվություն» բանաստեղծության մեջ լիրիկական հերոսուհուն ներկայացնում է բացարձակորեն հակադրամիասնության մեջ՝ բառային հակադրությամբ (կոնտեքստին բնորոշ). սկսում է դարձույթներով, բանադարձումներով շարունակում, նորից դառնում բառայինին: Այսպես՝ առաջին քառատողում դիմում է բառային հակադրությունների.

Ձա՛նս, իմ հանդեպ պահում ես դու քեզ

Անաստվածորեն և՛ մոտ, և՛ հեռու.

Դու՛ և՛ առաջին կնոջ պես անմեղ,

Ե՛վ վերջին կնոջ նման փորձառու (Խ. Է., էջ 30):

Եթե առաջին հակադրությունը բառային է՝ *մոտ և հեռու*, արտահայտված հականիշ բառերով, ապա երկրորդ գույզը՝ *անմեղ, փորձառու*, դիպվածային է. այս երևույթը

² Թերեզա Շահվերդյան, Ոճագիտություն, Ե., 2010, էջ 230 (Այսուհետև՝ Թ.Շ.):

իրականացվում է բառային բանադարձման՝ հակադրության շրջանակներում, որի շնորհիվ տվյալ համատեքստում միմյանց են հակադրվում տարբեր երևույթներ (տե՛ս Թ. Շ., էջ 115): Այնուհետև տեքստում՝ հաջորդ քառատողերում, մեկ առ մեկ հիմնավորվում է այդ հակադրությունը.

Ի՛նչ դյուրությամբ ես բայց կարողանում

Դու համատեղել հրաշքով վերին

Քաղցր ժպիտդ, ուր որ է ահա

Վշտից լաց եղող քո շրթունքներին:

Ինչպե՛ս ես, արդյոք, դու համատեղում

Քո ազնվագարմ ու մեծահոգի

Հպարտությունը արքայադստեր

Եվ խոնարհությունն անգոր ստրուկի (Խ. Ե., էջ 30):

«Քաղցր ժպիտ» ու «Վշտից լաց եղող շրթունքներ», «Ազնվագարմ ու մեծահոգի արքայադստեր հպարտություն» և «Անգոր ստրուկի խոնարհություն» կամ «Ազնիվ ու բարի ընկերություն» և «Հողմի նման սիրախաղեր»: Ահա թե ինչու է բանաստեղծն իր հերոսուհուն այսպես դիմում և՛ բանաստեղծության սկզբում, և՛ վերջում.

Դու՛ և՛ առաջին կնոջ պես անմեղ,

Ե՛վ վերջին կնոջ նման փորձառու (ն.տ.):

Ի դեպ՝ ոճական հակադրությունները շարահյուսական մակարդակում բավականին մեծ հետաքրքրություն են ներկայացնում ու տեքստի լեզվաբանության մեջ թարմություն են մտցնում: Ահա հակադրության մի այլ օրինակ.

...Կանգնել ես անխոս ինձ ես սպասում,

Ո՛չ ներս ես գալիս, ո՛չ գնում դռնից,

Սիրտս դրսում է, մարմինս՝ ներսում,

Ինչպե՛ս ազատվեմ այս քաղցր բեռից...

Բերված օրինակում առկա է հետևյալ հակադրությունը՝ «Ո՛չ ներս ես գալիս, ո՛չ գնում դռնից»: Հոգեկան տվայտանքը բանաստեղծի կենսաբանական կառուցվածքը անսովոր փոփոխության է ենթարկել՝ «Սիրտս դրսում է, մարմինս՝

ներսում»: Ուստի նման իրավիճակը հերոսի համար հանգուցալուծում չունի, և բանաստեղծությունն ավարտվում է քերականական բանադարձման գեղեցիկ հակադրությամբ՝

*Եթե ներս մտնես՝ սիրտս կպայթի,
Եթե ե տ դառնաս՝ կխելագարվեմ...*

Ոճական ու կենսաբանական հակադրությունները որակ են կազմում Կարո Մելիքսեթյանի բանարվեստում: Մարամուտ ապրող բանաստեղծը փայլուն հակադրություններով է ներկայացնում իր ու լիրիկական հերոսուհու միջև ի վերուստ սահմանված անջրպետը: Ահա դրա վկայություններից է «Չոզնած աշունքիս» բանաստեղծությունը.

*Ինչու՞ ես ծնվել դու ինձնից հետո,
Ինչու՞ եմ ծնվել ես քեզնից առաջ,
Որ այսօր այսպես իրար ենք խառնում
Մպիտակ ու սև, կարմիր ու կանաչ...
Քո գարունները դեռ նոր են բացվում,
Իսկ իմն աշունն է, ուշացած իմ հարս,
Ինձ քո գարնան պես ծաղկած մատներով
Չոզնած աշունքիս մի մեխակ կտա՞ւ՝³:*

Այստեղ «Քո գարունները դեռ նոր են բացվում, Իսկ իմն աշունն է, ուշացած իմ հարս» հակադրությամբ բանաստեղծը ներկայացնում է իր և լիրիկական հերոսուհու անհամատեղելիությունը, բայց և հույսը չի կորցնում ու լավատեսական հակադրական հարցմամբ է ավարտում իր խոսքը.

*Ինձ քո գարնան պես ծաղկած մատներով
Չոզնած աշունքիս մի մեխակ կտա՞ւ:*

Գարնան պես ծաղկած մատներ», «Չոզնած աշունք» և մի մեխակի ակնկալիք: Ուրիշ ինչպե՞ս է լինում պոետիկ,

³ Կարո Մելիքսեթյան, *Արևի տակ մահ չկա*, Ե., 2016, էջ 122 (Այսուհետև՝ Ա.տ..., և էջը):

գեղարվեստական ու ինքնատիպ խոսքը: Կամ «Միրո ժամա-
նում» բանաստեղծության մեջ նորից նույն պատկերն է.

*Մենք փակ աչքերով իրար գտանք
Մեկը՝ շատ ջահել, մեկը՝ տարեց,
Ո՞վ մեր աչքի դեմ, մեր ձեռքերով
Կրակն ու ջուրը իրար խառնեց:
Քո արցունքները խառնեց իմին,
Խառնեց արցունքներ ու երազներ,
Իսկ վերջում՝ խառնեց ցավն ու գինին
Եվ այդ ամենը անվանեց՝ Մեր (Ա. տ..., էջ 118):*

Այս բանաստեղծության մեջ եթե ջահելն ու տարեցը բառային հակադրություն (հականիշներ) են, ապա կրակն ու ջուր, արցունք ու երազ, ցավն ու գինին դիպվածային զույգեր են, որոնք հանգեցնում են գեղեցիկ եզրահանգման՝ *Եվ այդ ամենը անվանեց՝ Մեր*: Գեղարվեստական ու կենսաբանա-
կան հակադրությունն է նաև «Հոգվո քնքուշ աղջիկ» բանաս-
տեղծությունը, որում նոր ու բոլորովին թարմ հակադրու-
թյուններ են հանդես գալիս՝ *ինձապատկան և անմատույց*, որոնք իմաստային ոչ մի շփման եզր չունեն, բայց յուրօրինակ հակադրություններ են:

*Դու ուժեղ, բայց այսօր և փխրուն ես այնքան,
Դու և ինձապատկան, և անմատույց բարձունք...
Միայն նոր են բացվում գարունները քո խենթ,
Իսկ ես ձմռան մեջ եմ, ինչպես քարե արձան...
Դու իմ հպարտության վա ղող էն սևայյա՝
Լցված տառապանքի ու քնքշանքի դողով,
Բայց որքան էլ փորձես քեզ երջանիկ զգալ,
Դու անզոր ես ծածկել տխրությունը քո բորբ*

(Ա.տ., էջ 121):

Այստեղ հակադրությունը ավելի խոր է՝ *գարունն ու ձմեռ*, որի տեքստային հակադրության մեջ տառապանքի ու քնքշանքի դողով լցված բանաստեղծի հպարտության *վարդ սևայյան, որքան էլ փորձի երջանիկ զգալ, անզոր է ծածկել*

տխրությունը բորբ: Միայն գեղարվեստական տեքստի շրջանակներում է հնարավոր քերականական ու իմաստային նման հակադրություն կերտել:

«Մայրամուտի զանգն է դողանջում» հակադրության մեջ բանաստեղծի տառապանքը ընդգծված է հռետորական հարցումների միջոցով:

Ընդհանրապես հռետորական նախադասությունների առանձնահատկությունն այն է, որ այստեղ գործ ունենք կրկնակի վերաիմաստավորման՝ հազվադեպ հանդիպող երևույթի հետ. քերականական փոխաբերության կիրառման շնորհիվ շարահյուսական կառույցը վերաիմաստավորման է ենթարկվում իր երկու չափանիշներով՝ ըստ նախադասության երանգի (հարցական նախադասությունը վերաիմաստավորվում է պատմողականի) և ըստ գործողության կամ հատկանշի հաստատման / ժխտման (հաստատական նախադասությունը վերաիմաստավորվում է ժխտականի կամ ընդհակառակը) (Թ. Շ., էջ 180-181):

*Տերը մեզ իրար բերելուց առաջ՝
Մեր տարիքները ինչու՞ մոռացավ:
Տեր՝ խնդրել էի ես քեզնից մեծ սեր,
Բայց ինչու՞ բերիք օրերիս վերջում,
Երբ ականջիս մեջ վաղորդյան սիրո
Ու մայրամուտի զանգն է դողանջում* (Ա.տ., էջ 125):

Մրանք ևս ոճական հակադրություններ են՝ արտահայտված բառակապակցություններով՝ «վաղորդյան սիրո» և «մայրամուտի զանգ» համադաս անդամների միջոցով, բայց ամբողջ կառույցի մեջ և՛ ներահակականություն կա, որ հատուկ է հակադրությանը, և՛ հռետորական հարցում՝ որում վերաիմաստավորվել է պատմողական նախադասության հարցական կառույցը: Հռետորական հարցման գեղեցիկ պատկեր է «Տաղարանի» «Հայրենիք» բանաստեղծությունը:

*Հայրենի՛ք, արդյոք, քեզ ու ը՛ փախցնեն,
Որ ոչ ոք զենքով քո ետքից չգա,*

*Ո՞ր մեկի աչքից ես քեզ թաքցնեմ,
 Որ ոչ ոք կյանքում քեզ աչքով չտա:
 Քո սահմանները ես որտե՞ղ դնեմ,
 Որ ոսոխներդ տեղդ չիմանան,
 Որ քո երկնքին, սարերին քո ջերմ,
 Քո խաչին ու քո հացին չսպառնան:
 Քեզ աշխարհի ո՞ր կտուրում պահեմ
 Եվ աշխարհից դուրս ո՞ր մի անկյունում,
 Բայց դրա համար, ուր էլ որ ընկնեմ-
 Այդպիսի մի տեղ չկա աշխարհում⁴:*

Այստեղ հարցական նախադասությունները սուկ ձևական են: Սրանք բովանդակության պլանում պատմողական են, որովհետև ձևական քերականական հարցման շնորհիվ ակնառու է պատասխանը: Ինչպես իրավացիորեն ընդգծում է Ի. Առնոլդը, «հոետորական հարցի գործառույթը ուշադրության հրավիրումն է, տպավորության ուժեղացումը, հուզական տոնի բարձրացումը (...) Պատասխանն այնտեղ հուշվում է, և հոետորական հարցը սուկ ներքաշում է ընթերցողին դատողության կամ ապրումի մեջ, նրան դարձնում ավելի ակտիվ՝ կարծես ստիպելով նրան, որ ինքը եզրակացություն կատարի»⁵: Ժամանակակից ոճաբանության հիմնադիրներից մեկը՝ Շ.Բալլին, գտնում է, որ «...հոետորական հարցն ամենևին էլ հարց չէ և ոչ մի կապ չունի հոետորության հետ»⁶: Այս ստեղծագործության մեջ գործ ունենք հնչերանգով տարբերվող զանազան նախադասությունների վերաիմաստավորումների հետ:

Չայրենասիրության նման դրսևորում և նման մտավախություն ուրիշ ոչ մի տեղ չենք հանդիպում:

⁴ **Գարո Մելիքսեթյան**, *Չայրուր և մեկ տաղ*, Ե., 2001, էջ 273: (Այսուհետև՝ Տ. և համապատասխան էջը):

⁵ Տե՛ս **И. Голуб**, *Стилистика русского языка*, М., 2002, էջ 426:

⁶ **Ш. Балли**, *Французская стилистика*, М., 1961, с. 308:

Շարահյուսական մակարդակի ոճական հակադրությունները տեքստում հանդես են գալիս գերազանցապես բարդ համադասական նախադասություններում, ներհակական կապակցությունների մեջ, բարդ ստորադասական նախադասություններում՝ զիջման պարագա երկրորդական նախադասություն ունեցող բարդ ստորադասական նախադասությունների կազմում: Մակայն սրանց քննությունը այս հոդվածի սահմաններից դուրս է: Երբեմն հակադրությունն ու համեմատությունը հանդես են գալիս միաժամանակ՝ ավելի հարուստ ու դիպուկ դարձնելով բանաստեղծական խոսքը.

*Դու՝ ձյունի պես մի տեղ պաղ
Ու մի տեղ՝ անուշ,
Դու՝ դաշույնի պես դաժան,
Ծաղկի պես քնքուշ (Խ.Ե., էջ 46):*

Կամ՝

*Իսկ ծաղիկներն այն, որ չենք հասցրել
Բացել գարնան մեջ, օրերում այն տաք,
Աշնա նն ենք բացում, համոզվա՛ծ այնպես,
Որ պիտի ընկնեն ձմռան ձյունի տակ (ն.տ.49):
Իսկ մտովի՝ դու միշտ ինձ հետ
Ժամանակի թելն ես մանում,
Ցերեկները ձերանում ես,
Գիշերները՝ ջահելանում (ն.տ.53):*

Քերականական ու բառային հակադրությունների մի հիանալի համատեղում է «Խելահեղ խաղ» ստեղծագործությունը, որն ունի նովելային ավարտ՝ *Ձու ը ես մտնում իմ կյանքի մեջ:*

*Ո՛չ կարող եմ անունդ տալ,
Ո՛չ՝ առանց քո անվան ապրել,
Ո՛չ՝ հանդգնել դուռդ բանալ,
Ո՛չ՝ քո դռնից ինձ դուրս հանել...
Ինձ ոչ այն է՝ կյանք ես տալիս,
Ոչ էլ՝ այն է՝ հոգիս առնում,*

*Գիշերներինս՝ անմահություն,
Ցերեկներինս՝ մահ ես խառնում:
Բայց թե ջա՛նս, հողմի նման,
Քո քմայքով դաժան ու պերճ-
Չե՛ս խառնելու բախտս իրար՝
Չու՛ր ես մտնում իմ կյանքի մեջ (Տ., էջ 151):*

Կ. Մելիքսեթյանի ստեղծագործություններում ուշադրության արժանի են հեղինակային գուգահեռականության դրսևորումները, դրանք տեքստի լեզվաբանության մեջ իբրև ոճական արտահայտչամիջոց բավականին թարմություն են հաղորդում հեղինակի խոսքին: Բանաստեղծի տեսադաշտում անհետաքրքիր կին չկա, ամեն մեկը հմայիչ է յուրովի, և ահա այդ հմայքները հեղինակը արտահայտում է հետևյալ գուգահեռականությամբ, երբ կրկնվում են ոչ թե լեզվական նույն միավորները, այլ անփոփոխ է մնում տեքստի կառուցվածքը:

*... Ամեն կին ունի խաչն իր գորության-
Մեկը վառում է մեզ իր հոնքերով,
Մեկն իր աչքերով քաղցր ու մոգական,
Մեկը՝ իր չարխից իջած կոնքերով:
Մեկն իր ժպիտով երկմիտ ու վայրի,
Որով կարող է նա ամեն անգամ
Իր բարեկամին դարձնել թշնամի
Եվ իր թշնամուն՝ դարձնել բարեկամ (Խ. Ե., էջ 39):*

Բանաստեղծի խոսքում յուրօրինակ վարպետությամբ նույն տեքստում կարող են գուգակցվել ոճական մի շարք հնարներ, ասենք անձնավորումը և աստիճանավորումը: Իր գողտրիկ բանաստեղծություններից մեկը՝ «Լռությունը», սկսվում է լռության անձնավորմամբ՝

*Մեր լռությունը լռկ մեզնով է լի-
Այն երբ ցանկանանք՝ իր կանչ ու խինդով
Մեր ուզած տեղը մեզ հանդիպեցնում
Ու կրկնում է ամեն ինչ հերթով... (Խ. Ե., էջ 16):*

Այսուհետև սկսվում է գեղարվեստական աստիճանավորումը՝ պատահական հանդիպումը ավարտվում է «որպես դրախտի շարունակություն» մերձեցմամբ:

*Եվ հանդիպումը մեր պատահական,
Եվ շփոթմունքը մեր պատանեկան,
Եվ չեմուչումը քո կիսականչող,
Եվ տաք հայացքդ՝ տանջող ու տանջվող,
Եվ սև մազերդ՝ խոտերին փոված,
Եվ ախ-ը քո թաց շուրթերից թռած,
Եվ շշուկներիդ տանջող մեղեդին,
Եվ մի կողմ նետված քո արծաթ գոտին,
Եվ լույս մարմինդ խարույկը խնդուն՝
Որպես դրախտի շարունակություն (ն.տ.):*

Գեղարվեստական այս տեքստն ունի նաև իր վերջաբանը, որտեղ ամփոփվում են շարադրանքի արդյունքները (տե՛ս Թ. Շ., էջ 230)։

*Եվ ի նչ իմանաս, որ ճիշտ այդպիսի
Լռության ն մեջ չեն ազնիվ ու բարի
Լո՛կ ծնունդ առնում ամենից տխուր
Ու ամենախոր սերերն աշխարհի,
Որ ճիշտ այդպիսի լռության մեջ չեն
Այս մեծ աշխարհի՝ զվարթ ու հնչուն
Ամենամաքուր դողանջներն արծաթ
Ու ամենախո՛ր մեղեդին հնչում... (Խ. Է., էջ 17)*

Ժամանակային աստիճանավորման հետաքրքիր պատկեր է հետևյալ ստեղծագործությունը։

*Ժամը պիտի մի օր լիներ,
Օրը պիտի լիներ տարի,
Տարին պիտի մի դար լիներ,
Որ կյանքից բան հասկանայի:
Թե չէ այսպես թե որ գնա՝
Անցած ողջ կյանքս անտեղի,
Ինչպես պետքն է՝ իմ երագած*

*Մի՛ օրվա հետ չէի փոխի*⁷:

Մի ամբողջ կյանքի աստիճանավորում է «Ճանապարհ» բանաստեղծությունը:

Կարո Մելիքսեթյանի հետմահու տպագրված «Արևի տակ մահ չկա» ժողովածուում, ինչպես նաև մի շարք այլ գործերում, որոնք նվիրված են անվանի մի շարք մարդկանց, պահպանված է համապատասխան նվիրատուի ոճը: Առաջին անգամ փորձում ենք դրանք անվանել պարողիաներ, թեև ընդունված է ասել, որ դա ծաղրական ընդօրինակումն է: «Պարողիան սահմանվում է որպես գրական-գեղարվեստական իմիտացիայի ժանր, առանձին ստեղծագործության, հեղինակի, գրական ուղղության, ժանրի ոճի նմանակում՝ այն ծաղրելու նպատակով: Պարողիայի հեղինակը, պահպանելով բնօրինակի (օրիգինալի) ձևը, նրա մեջ ներդնում է նոր, նրան հակադրվող բովանդակություն, որը նորովի է լուսաբանում ծաղրանմանակվող ստեղծագործությունը և անվանարկում է այն»⁸:

Կարծում եմ՝ պարողիան կարել է անվանել նաև ընդօրինակումներ: «Այս դեպքում արդեն պարողիատը չի բանավիճում բնօրինակ ստեղծագործության հեղինակի հետ, աշխարհայացքային ու գլոբալ հիմնահարցեր չի շոշոփում» (Թ. Շ., էջ251), այլ մտնելով տվյալ հեղինակի ստեղծագործության մեջ՝ համալրում է բովանդակությունը հեղինակի լեզվամտածողությամբ: Որպես այդպիսիք՝ առանձնացրել ենք մի շարք գործեր, որոնք ավելի ճիշտ կլինի անվանել հարասություններ: Այդ տերմինով են բնութագրվում այն հավելումները, որոնք մեր բանաստեղծներն ավելացրել են սաղմոսներին, նմանեցրել նրանց և կերտել շարականներ⁹:

⁷ Կարո Մելիքսեթյան, *Ոսկե ափ*, Ե., 1977, էջ 16:

⁸ Краткая литературная энциклопедия, М. 1968, էջ 604.

⁹ Տե՛ս Մանուկ Աբեղյան, *Երկեր*, հ. Գ, էջ 529-535:

Հարասություններ ենք դիտում Կարո Մելիքսեթյանի՝ Վիկտոր Հյուգոյին¹⁰, Մայաթ Նովային (Տ., էջ 57-58, այսուհետև բոլոր օրինակները բերվում են «Տաղարանից», ուստի կգրվի միայն էջը), Ջիվանուն (52), Չարենցին (11), Նաղաշ Հովնաթանին (109), Բակունցին (234), Համո Սահյանին (265), Վահան Թեքեյանին (72), Ավ. Իսահակյանին (22), Նելլի Մաղարալաշվիլուն (49), Սուփիկո Ճիաուրելիին (55) և այլոց նվիրված ստեղծագործությունները: Ահա նրանցից մեկը, որը նվիրված է Վիկտոր Հյուգոյին ու կերտվել է հարասությամբ.

*Եթե դուք տեսնեք ջարդված խաչքարեր
Ու սրի քաշված կին, մանուկ ու ծեր,
Կրակի տված գյուղ ու մագաղաթ,
Ուրեմն այդտեղով թուրքերն են անցել;
Եթե դուք տեսնեք գրադարաններ,
Որոնք ախոռ են վաղուց դարձրել,
Էլ կասկածելու և ոչ մի առիթ.
Հաստատ այդտեղով թուրքերն են անցել:*

Կարո Մելիքսեթյանի քնարերգությունը ոչ մեկին նման չէ, հեռավորապես անգամ չի հիշեցնում որևէ բանաստեղծի, այն խիստ ինքնատիպ ու յուրօրինակ է, իրատեսական, անչափ հուզական, բարձրաճաշակ ու պոետիկ:

Tereza Shahverdyan – On Some Issues of Text Stylistics with Special Reference to Karo Meliksetyans’s Poetry. – The object of text linguistics is the study of not a single sentence but series of sentences which make up a text. It is considered to be a communicative and ultimate unit.

Text is defined as a unity of linguistic units coherently linked with grammatical means. The sphere of its study is very wide and diverse. The aim of our research is the study of language peculiarities of Karo Meliksetyan’s poetry. On this purpose we’ve specified some variations of texts, where the author acting relatively free, but using a

¹⁰ Կարո Մելիքսեթյան, *Նավը փրփուրի վրա*, Ե., 2007, էջ 17:

language peculiar to the style of highly literary vocabulary and, consequently, displaying literary aesthetic taste, utilizes a great diversity of stylistic expressive means and devices. The functions of those means and devices are different, but all of them leave a deep aesthetic impact on the reader. Thus stylistic syntactic devices in general and stylistic antithesis, in particular, are of great interest in the author's poetry.

Тереза Шахвердян – О некоторых вопросах лингвистической стилистики, основанной на языковых особенностях поэзии Каро Меликсетяна. – Основной объект исследования лингвистики текста – не само предложение, а текст как максимальная лингвистическая единица. Лингвистика текста изучает закономерности строения и структуры текста. Текст состоит из грамматических средств, связанных между собой, которые обеспечивают процесс коммуникации. Спектр исследования лингвистики текста довольно широкий.

Цель нашего исследования – изучение языковых средств в поэзии Каро Меликсетяна. С этой целью мы выбрали несколько текстов, где автор относительно свободно, но с высоким художественным мастерством и вкусом использует разные стилистические средства и приемы, благодаря чему его поэтические произведения производят большое эстетическое воздействие на читателя. Особенно интересно использование стилистических синтаксических средств, в частности стилистической антитезы.

Պետրոսյան Լիլիթ (Հայաստան,
Վանաձորի պետական համալսարան)

ՄԱՏԹԷՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԲԱՅԵՐԻ ԴԱՍԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ

«Աւետարան»-ի խոսքի կառուցվածքի ու կապակցության աղերսների քննությունը բացահայտում է մարդկային էության բաղադրիչների՝ հոգու և մարմնի հնարավոր և ընդունելի համեմատելիության սահմանները, որոնք եզրագծվում են բառերի՝ ուղիղ իմաստներով կապակցելիության դեպքում: Մատթեոսը Հիսուսի գործունեությանը զուգահեռ ներկայացնում է նաև նրան շրջապատող աշխարհի անցուդարձը՝ հիմնականում կիրառելով բառերը ուղիղ իմաստով: Եվ քանի որ խոսքն աստվածային արարչագործության մասին է, երբեմն հանդիպում են մեր պատկերացմամբ անիրական կապակցություններ, որոնց հավաստիության առաջին հավատացողը հեղինակն է:

«Աւետարան»-ի բայերը դասակարգել ենք՝ ըստ Գ. Ջահուկյանի դասանշային հատկանիշների¹՝ հավելելով *աստվածային գործությանը* վերգրվող խումբը: Այս դեպքում բայերը կապակցվում են *Յիսուս, Հայր, Տէր* գոյականներին և հիմնականում լինելով ներգործական սեռի՝ ենթադրում են անձնանիշ խնդիր կամ խնդիրներ, ինչպես *Փրկեա՛ զմեզ ի չարէն* (Ձ 13)² արտահայտության մեջ *փրկել* բային են կապակցվել անձնանիշ ուղիղ և անջատման խնդիրները:

¹ Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 462-466:

² *Նոր կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*, Համեմատեալ ընդ յոյն բնագրին, Աստուածաշնչի Լիբանանի ընկերություն, 1982: Աւետարան ըստ Մատթեոսի:

Աստվածային գործությանը վերագրվող բայերը գուգահեռաբար նաև անձնանիշ են, ինչպես՝ *ասել*¹, *խօսել*, *գտանել* և այլն:

Տեսանել բայը «Աւետարան»-ում գործածվում է տարբեր իմաստներով: Առաջին՝ «աչօք մարմնոյ կամ մտաց նկատել» իմաստով վերագրվում է մոզերին, Հիսուսին, աշակերտներին և այլոց, որտեղ իբրև ուղիղ խնդիր են գործածվում *աստղ* (Բ 2, 10), *մանուկ* (Բ 11), *հողմ* (ԺԴ 30), *թզենի* (ԻԱ 19) թանձրացական գոյականները: Երկրորդ՝ «հայել՝ գիտել և ըմբռնել» իմաստով՝ Հերովդեսին, Պիղատոսին, այս դեպքում ուղիղ խնդրի գործառույթով հանդես է գալիս երկրորդական նախադասություն, օրինակ՝ *Իբրև ետես Հերովդես, թե խաբեցաւ ի մոզուց* (Բ 16): *Տեսեալ Պիղատոսի՝ թէ ոչ ինչ օգնէ* (ԻԷ 24): *Տեսանել* բայի դեպքում աստվածային գործության էությունը բացահայտվում է կամ ըստ խնդրատության, կամ ըստ պարագաատության, ինչպես՝ *Ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր* (Բ 16): *Որ նստէր ի խաւարի, ետես լոյս մեծ* (Դ 16): *Հայր քո, որ տեսանէ ի ծածուկ* (Ձ.4): Հրաշագործության շնորհիվ նաև անձի հասարակ անուններին են վերագրվում մեր պատկերացմամբ անիրական գործողություններ, ինչպես՝ *զի նոքա զԱստուած տեսցեն* (Ե.8), Կամ Հիսուսի մահից հետո. *Տեսին զնա և երկիր պագին նմա* (ԻԸ 17): Ինչպես նաև *Կոյրք տեսանեն և կաղք զնան, բորոտք սրբին, և խուլք լսեն, և մեռեալք յարնեն* (ԺԱ 5): *Խօսեցաւ համրն* (Թ 33) *Որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ* (ԺԲ 22) արտահայտություններում ֆիզիկական հատկանիշները վերագրվում են անհնարին թվացող ենթականերին նույնպես աստվածային գործության շնորհիվ: Հետաքրքիր է, որ անհնարին թվացող այս գործողությունների հավաստիությունը

¹ Լ. Պետրոսյան, Ա. Ավագիմյան, *Ասել բայի ենթակառուցական կապակցելիությունը և արտահայտությունը «Աւետարան ըստ Մատթեոսի» երկում*, Հայերենագիտական հարցեր և զարգացման հեռանկարներ, Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2015, էջ 182:

շեշտելու համար հեղինակը այս կապակցությունները «Աւետարան»-ում կրկնել է երեք անգամ երեք տարբեր ժամանակային արտահայտություններով: Անձնանիշ լինելու դեպքում *տեսանել* բայի կրկնասեռությունը՝ չեզոք և ներգործական գուգահեռներով, վերագրվում է մարդկանց առանց խնդրառության, ինչպես՝ *զի տեսանեն և ոչ տեսանեն* (ԺԳ 13), *տեսանելով տեսջիք և մի տեսջիք* (ԺԳ 15): *Տեսանել, լսել* բայերի դեպքում սեռային փոփոխությունը ենթադրում է նաև դասանշային փոփոխություն: Ներգործական սեռի իմաստի դեպքում բայը անձնանիշ է, իսկ չեզոք սեռի իմաստով կապակցվում են իրանիշ *աչք, ականջ* գոյականներին, ինչպես՝ *Երանի է աչացդ, զի տեսանեն և ականջացդ ձերոց՝ զի լսեն* (ԺԳ 16, 17):

Անձնանիշ բայերի շարքում առանձնանում են եզակի օրինակները, որոնց դեպքում գործողությունը ենթադրում է միայն տվյալ անհատին: Ինչպես՝ Հովսեփին են վերագրվում *գարթնուլ* (Ա 24), *առակել* (Ա 19) և *արձակել* (Ա 19) բայերը, որոնցից վերջինները խնդրառության տեսակետից նույնպես եզակի են, քանի որ երկու դեպքում էլ գործողության անմիջական կրող առարկան *Մարիամ* գոյականն է: *Հովուել* բայը վերագրվում է *իշխան* ընդհանրական իմաստով գոյականին, ինչպես՝ *ի քեն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ գԻսրայել* (Բ 6):

Աստվածային գործությամբ է նաև *առաջնորդել* բայը Բ գլխում վերագրվում *աստղ* իրանիշ գոյականին. *Աստղն գոր տեսին յարևելս՝ առաջներդեաց նոցա* (Բ 9): ԺԵ գլխում բայը վերագրվում է *կուրիին*, այս դեպքում կարևորվում են գործողության հետևանքի նշանակությամբ հաջորդ բաղադրիչ նախադասությունները, *Կոյր կուրի յորժամ առաջնորդէ, սխալէ և երկոքին ի խորխորատ անկանին* (ԺԵ 14):

Անձնանիշ բայերի մեջ առանձնանում են թերահավատներին վերագրվող բայերը՝ կախված գործողություն կատարողների էությունից, ինչպես՝ *խորհել* բայը «Մտախոհ

լինել, խոկալ, գնտաւ ածել» իմաստով վերագրվում է Հովսեփին (Ա 19), աշակերտներին (ԺՁ 7), դպիրներին (Թ 4), քահանայապետներին և ժողովրդի ծերերին (ԻԱ 25). վերջիններիս Հիսուսն ինքն է անվանում **թերահասուստ**, քանի որ *ոչ խորհիս գԱստուծոյսն, այլ՝ զմարդկան* (ԺՁ 23): Այստեղից պարզ է դառնում, որ նույն գործողությունը կարող է հականիշ իմաստ ստանալ՝ կախված խնդրատությունից: **Ստուգել** բայը վերագրվում է Հերովդեսին, ընդ որում առաջին անգամ գործողություն կատարողն ինքն է, երկրորդ անգամ հանձնարարում է այդ գործողությունը կատարել մոգերին, օրինակ՝ *Յայնժամ Հերովդէս զաղտ կոչեաց զմոզսն եւ ստուգեաց ի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ* (Բ 7): *Գնացէք, ստուգեցէք վասն մանկանն* (Բ 8): **Խտովել** բայը վերագրվում է Հերովդեսին (Բ 3), աշակերտներին (ԺԴ 26) ու պահապաններին (ԻԸ 4): ԻԴ գլխում Հիսուսն աշակերտներին պատվիրում է չկատարել գործողությունը. *Լսելոց էք պատերազմունսս և համբաւս պատերազմաց. զգոյշ լերուք, մի՛ խտովեսցիք, զի պարտ է լինել այնմ ամենայնի, այլ չեւ է կատարաց* (ԻԴ 6):

Բայերի դասանշության սահմանները գործում են դրական խոնարհման կառույցներում, ժխտական խոնարհման դեպքում խախտվում են իմաստային առանձնահատկությունները, և բոլոր բայերը զուգահեռվում են բոլոր գոյականներին ուղիղ իմաստով: Դրականի ու ժխտականի այս հարաբերությունն «Աւետարան»-ում արտահայտվում է անձերի՝ գործողություն կատարելով և Հիսուսի արգելական պատգամով, ինչպես՝ **երկնչել** բայը *Եւ կամէր զնա սպանանել, բայց երկնչեր ի ժողովրդենէ անտի, քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա* (ԺԴ 5): *Իբրեւ լուան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց իւրեանց և երկեան յոյժ* (ԺԷ 6) արտահայտություններում վերագրվում է Հերովդեսին և աշակերտներին: *Ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւեցաւ նմա և ասէ, Յովսեփ, որդի Դաւթի, մի՛ երկնչիր առնուլ առ քեզ*

զՄարիամ կին քո (Ա 20): Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցկանայսն. Մի՛ երկնչիք դուք (ԻԸ 5): Եւ արդ մի՛ երկնչիցիք, զի լաւ էք քան զբազում ճնճողուկս (Ժ 32): Մի՛ այսուհետեւ երկնչիցիք ի նոցանէ (Ժ 26): Քաջալերեցարուք, ես եմ, մի՛ երկնչիք (ԺԴ 27): Եւ մատուցեալ Յիսուս՝ բռնոն եհար զնոցանէ և ասէ, Յոտն կացէք և մի՛ երկնչիք (ԺԵ 8): Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս, Մի՛ երկնչիք, երթայք, ասացէք եղբարցն իմոց զի երթիցեն ի Գալիլեա և անդ տեսցեն զիս (ԻԸ 10) նախադասություններում Տիրոջ հրեշտակը, Հիսուսը արգելական հրամայականով Հովսեփին, կանանց, աշակերտներին պատգամում են չկատարել գործողությունը: Այս դեպքում գործողության տրամաբանական ենթականեր են դառնում խոսքը լսողները: Սակայն **երկնչել** բայը միշտ չէ, որ պատգամվում է չկատարել, ինչպես՝ *Եւ մի՛ երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմին և զոգի ոչ կարեն սպանանել. այլ երկերուք դուք առաւել յայնմանէ որ կարողն է զոգի և զմարմին կորուսանել ի գեհենի* (Ժ 28) նախադասության մեջ մի դեպքում գործածվել է ժխտական խոնարհումը, մյուս դեպքում՝ դրական: Այս դեպքում կարևորվում է բնության խնդիրը՝ անջատման իմաստով:

Իրանիշ բայերից առանձնացրել ենք **թարգմանիմ** բառը, որն «Աւետարան»-ում կիրառվել է մեկ անգամ կրավորական սեռի իմաստով, օրինակ՝ *....կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի՝ Ընդ մեզ Աստուած* (Ա 24):

Վերացական իմաստով չեզոք սեռի բայերի դեպքում կարևոր է ստորոգելիի դասային պատկանելությունը: **Կոչիլ** բազմադաս բայը եզակի դասանշտությամբ է օժտվում կախված ստորոգելիից: Եթե ստորոգելին անձնանուն է, ապա ենթական նույնպես ենթադրվում է անձ, իսկ եթե իրանիշ է ապա ենթական նույնպես ենթադրում է իր, ինչպես՝ *Եւ եկեալ բնակեցաւ ի քաղաքին որ կոչէր Նազարէթ, զի լցցի բան մարգարէիցն թէ՛ Նազովրեցի կոչեսցի* (Բ 23):

«Աւետարան»-ում բազամադասությունը արտահայտվում է իմաստային տարբեր գուգորդումներով.

1. Անձնանշությամբ, աստվածային գործությամբ և իրանշությամբ: **Երևել** բայը «յանդիման լինել երեսօք» չեզոք սեռի իմաստով վերագրվում է ն՛ անձերին, ն՛ իրերին միաժամանակ, ինչպես՝ *Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծատրաց, զի նման էք գերեզմանաց բռելոց, որ արտաքոյ երևին գեղեցիկք* (ԻԳ 27) նախադասության մեջ: «Ծագել, բուսանել» իմաստներով վերագրվում է միայն իրանիշ գոյականներին, ինչպես՝ *ստուգեաց ի նոցանէ գժամանակն աստեղն երևելոյ* (Բ 8): *Ապա երևեցաւ և որոմնն* (ԺԳ 26): Այս արտահայտությունները, լինելով ընդհանրական, կառուցվում են առանց հանգման խնդիրների՝ ի տարբերություն աստվածային գործությամբ կատարվող իրողությունների: **Երևել** բայը, վերագրվելով **Հրեշտակ Տեառն** ենթակային հանգում է **Հովսեփ** գոյականին **ի տեսլեան** (Ա 20): Այնուհետև գործողությունը վերագրվում է **Հիսուսին՝ այսպիսի ինչ** անվանումով. *Եւ յեղանել դիւին՝ խօսեցաւ համրն. և զարմացան ժողովորդքն և ասեն թէ, Եւ ոչ երբեք երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայելի* (Թ 33): Մովսես և Եղիա մարգարէներին վերագրվելիս **երևել** բայը հանգում է **Հիսուսին** և **Պետրոս, Հակոբոս, Հովհաննէս** (ԺԷ 4) անձնանիշներին: Անձնանիշներին վերագրվելու դեպքում հանգման խնդիրները կարևորվում են՝ զուգահեռվելով ձևի պարագաներին, ինչպես՝ *Այլ դու յորժամ պահիցես, օժ զզուլիս քո և լուա զերեսս քո, զի երևեսցիս մարդկան իբրև զպահող, այլ Հօրն քում ի ծածուկ* (Զ 18):

2. Անձնանշությամբ, աստվածային գործությամբ և կենդանանշությամբ: **Խօսել** անձնանիշ բայը հանդես է գալիս հիմնականում երրորդ դեմքով՝ հիմնականում վերագրվելով Հիսուսին, որին հատկապես հատուկ էր **առակօք խոսել** արտահայտությունը: Ֆիզիկական այս հատկանիշը վերագրվում է նաև Մովսես և Եղիա մարգարէներին (ԺԷ 3): Փոխանունության հիմունքով նաև իրանիշ **աշխարհ** գոյա-

կանին, որ մարդկությունն է խորհրդանշում. *Ընդ ամենայն աշխարհ խօսեցի* (ԻԶ 13): Կենդանիչներից վերագրվում է *հաւ* գոյակնին. *իսկոյն հաւ խօսեցաւ* (ԻԶ 74) արտահայտության մեջ:

3. Անձնանշությամբ, աստվածային գործությամբ, կենդանանշությամբ և իրանշությամբ: *Գաւ* բայը «եկաւորել, փոխիլ անտի այսր ի հեռաւոր վայրէ ի մօտաւորն» վերագրվում է անձերին հիմնականում անցյալ ժամանակով, *Հովհաննէս Մկրտչին, Յիսուսին՝* և ներկա (Գ 1, Գ 13), և անցյալ (Ը 14, ԺԱ 18), և ապառնի (ԺԶ 27) ժամանակներով: Ինչպէս նաև *աղաւնի* (Գ, 16), *թռչուն* (ԺԳ 4) կենդանիներին, վերացական *արքայություն* (Զ 10), իրանիշ թարձրացական *արին ջրհեղեղն* (ԻԴ 39) գոյականներին: Տվյալ դեպքում ըստ ենթակաառության կարևորվում են տեղի պարագաները, օրինակ՝ *Գալ առ քեզ ի վերայ ջրոցս* (ԺԴ 28): *Եկեալ ի վերայ ամպոց* (ԻԴ 30):

«Աւետարան»-ի բայերի դասանշային առանձնահատկությունների քննությունից պարզ է դառնում, որ բառերի կապակցելության գործում կարևոր են ոչ միայն նախադասության գլխավոր անդամների իմաստային փոխհարաբերությունները, այլ նաև երկրորդական անդամների կիրառությունները: Այսպիսով բացահայտվում են ինչպէս մարդկային էության, այնպէս էլ աստվածային գործության հնարավոր հարսկանիշները:

Lilit Petrosyan – Class-dependent Properties of Verbs in the Translation of the Gospel According to Matthew.– The examination of the Gospel's speech structure and the linkage of various combinations reveals the limits of the possible and acceptable comparability of body and soul, the two components of human nature. In addition to narrating Jesus' activities, Matthew presents the surrounding world mostly by using words in their literal meaning. Since Matthew's Book is about divine creation, we sometimes come across unrealistic expressions, and the

author is thus the first person to believe in the credibility of these expressions.

We have classified the verbs of the Gospel according to the class-dependent properties of verbs introduced by G. Jahukyan¹. An independent group of verbs includes the so-called devine verbs. The examination of the class-dependent peculiarities of the verbs in the Gospel makes it clear that both the semantic relationship between the main parts of the sentence, and the use of secondary members of the sentence are important in the linkage of words. Thus, the characteristics of human nature, as well as the possible features of divine power have been revealed.

Петросян Лилит – Категориальные особенности глаголов в «Евангелии от Матфея».— Исследование структуры речи «Евангелия» и сочетаемости в нем молитв раскрывает сущность человеческой природы – границы возможного и допустимого единения духа и тела. Матфей параллельно представляет как деятельность Иисуса, так и события, происходящие вокруг него, употребляя, в основном, слова в их прямом значении. Но так как речь идет о божественных деяниях, то, по нашему представлению, иногда встречаются ирреальные сочетания, в достоверность которых верит прежде всего сам автор.

Классификация глаголов «Евангелия» дана по категориальным признакам, предложенным Г. Джаукяном. Данную классификацию мы дополнили группой, относящейся к *божественной силе*. Исследование категориальных особенностей глаголов «Евангелия» показывает, что в сочетании слов большую роль играет не только смысловое взаимоотношение главных членов предложения, но и употребление второстепенных членов. Таким образом, раскрываются как признаки человеческой сущности, так и возможные предзнаменования божественной силы.

¹G. Jahukyan, Principles of Modern Armenian, Yerevan, 1974, pp. 462-466.

Մարգարյան Արմեն (Հայաստան, ԳԱԱ
հնագիտության և ազգագրության ինստիտուտ)

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝
ԶԱՎԵՇՏԻ ՀԵՆՔ ՀԱՅՈՑ ԶՎԱՐՃԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ
ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Զվարճապատում-զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ կարող են դառնալ պատկերավորման տարատեսակ միջոցները՝ մակդիր, համեմատություն, փոխաբերությո՜փոխաբերություն, զեղչում, բառախաղ և այլն: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Քիչ չեն հայկական այնպիսի *զվարճապատում*-զվարճախոսությունները, որոնցում *համեմատությունն է* դառնում անսպասելի ծիծաղի պատճառը:

«Աղէն հէլէր ա բօստան» զվարճապատումում աղան, իր մարմնի հիվանդ մասերը բանջարեղենի տարբեր տեսակների հետ պատկերավոր ներկայացնելով, ծառային խնդրում է այդ նույնը հաղորդել հեքիմին:

– Տէնում էս, էլի, հէք'իմին ասա՝ աղի մանները ուռէր ա խիյարի պէս, թեվէրը ուռէր ա յէմիշի պէս, գ'ըլօխը ուռէր ա դ'թումի պէս...

Մտամոլոր ծառան, անկարող լինելով բոլոր թվարկած ցավոդ տեղերը համեմատություններով հիշել, այդ ամենը «միատեղում» և «տեղավորում է» բոստանում, որն էլ պատճառ է դառնում զավեշտի առաջացման:

– Աղա՛, էտդար բ'անը իմ մըտին չի մնա, կ'էրթամ հէք'իմին կասէմ՝ աղէն հէլէր ա բօստան: Բօստանի մէջը հըմ-մէն ինչ էլ կա՝ խիյար էլ, յէմիշ էլ, ձ'մէրուկ էլ, դ'թում էլ...¹

Եթէ թաղման սգերգերում ու սգո խոսքերում առկա է վշտին, դժբախտությանն ուղեկցող հուզական խոսքը, բա-

¹ Ռ. Մարկոսյան, *Արարատյան բարբառը*, Ե., 1989, էջ 292:

Ժանման ցավը, ափսոսանքը, որը հուզում է նաև ներկա գտնվողներին, ապա երգիծական մանրապատումների լալիքի նմանատիպ խոսքերում ու երգերում առկա է զավեշտը, ինքնաբուխ անսպասելի ծիծաղը:

Թաղման ծիսակարգի լայաց երգի դարաբաղյան երգիծապատումներից մեկն էլ ամուսնու մահը անկեղծորեն սգացող կնոջ խոսքերը Պըլը Պուդու բերանով է ներկայացվում, այն էլ այնպիսի պատկերավորությամբ «ծաղկեցնելով» ու փառաբանելով հանգուցյալին, որ կամա թե ակամա զվարճանք է պատճատում լսողին: Չավեշտ առաջացնողը հատկապես **մակդիրների** ու **համեմատությունների** առատությունն է.

«Աղջի, քը մատաղ, ըներա՛կ ար էն օրին, որ ծմական գեալիս ար՝ սեզնը, գկեռը, մըհասուրը ջուբորը լիկը. լըհայ որ բերում ար, իրիտցս ըռաջին որ ածում, հե՛նց ար ինում, լըհայ Թաւրուզու խոշկեապէար ինի:

«Աղջի, քը մատաղ, լըհայ որ իւրկէօնանց գեալիս ար կացինը քամակը կոխած, ցակատը առաջը կոխած, կեօտակ էջը ըռաջկին, շիւշայ շիւշայ ընշուդաւ բեռնած, յագին պուլտի ընելաւ. լըհայ որ բերում ար ընծղաբեռնը որօնում, հե՛նց ար ինում լըհայ պեագրկանի թէանպէալէթ ինի:

ա քու ոսկի փըշակիդ մատաղ,

ա քու ոսկի քրիսընիդ մատաղ,

ա քու ոսկի տըզկեահիդ մատաղ,

անծուղ կ'անե՛ր, լըհայ ձըձոնակի թներ ինի:

Աղջի, բա՛, ինձ նմանին տէրը տազ կանի՛՜»:

Ընդգծված հումորի զգացումը՝ շաղախված այլաբանություններով, փոխաբերություններով, մակդիրներով ու զավեշտ առաջացնող լեզվական տարատեսակ միջոցներով, մանկահասակ երեխաների մտածողությանը բնորոշ չէ: Այն

¹ Պըլը-Պուդի, գրեց Մակար վարդապետ Բարխուդարեանց, Թիֆլիս, 1883, էջ 131-132:

հատուկ է ձևավորված անհատին, սակավ քանակությամբ նաև՝ դպրոցական միջին տարիքի երեխաներին: Եթե երեխան օգտագործում էլ է, ապա շրջապատում լսած պատկերավոր բառերը գործածում է մեքենայաբար:

Մանկական զվարճախոսության մեջ երեխայի կողմից Աշոտ Երկաթի «**Երկաթ**» մակդիրի մեկնաբանությունն է դառնում զավեշտի հենքը.

4.8 տարեկան Աշոտիկը մորը՝ Աշխենին, հարցնում է.

— *Կտրած խնձորն ինչի՞ է մզանում:*

— *Երկաթ կա մեջը, դրանից է:*

— *Մամա՛, երևի Աշոտ Երկաթը շատ խնձոր է կերել, որ Երկաթ են ասում, — մեկնաբանում է Աշոտիկը¹:*

Ժողովրդական հարսանեկան ծիսակարգի հետ կապված երգիծապատումներից մեկում էլ զավեշտի հիմքը **փոխաբերությամբ** ասված խոսքն է ու դրանից բխած հակադարձվող պատասխանը:

Աղջիկ ուզելու նպատակով մայրաքաղաքից Քյավան գնացածների՝ **Մենք եկել ենք ձեր այգուց վարդ քաղելու** պատկերավոր խոսքին հետևում է աղջկա հոր՝ **Մեր բոստան հրմմեն կորտոլ ա** անսպասելի ծիծաղ հարուցող պատասխանը: (ԱՄՇՀ)

Ի տարբերություն պատկերավորության այլ միջոցների՝ **այլաբանությունը** վերաբերում է ամբողջական ստեղծագործությանը: Այս առումով, որոշ երգիծապատում-զվարճախոսություններ ևս, պահպանելով անեկդոտի ժանրին հատուկ ամենաեական հատկանիշները՝ լակոնիկ՝ կարճառոտ կառուցվածք, անսպասելի ծիծաղ առաջացնող վերջաբան, այլաբանորեն են ներկայացնում ասելիքը:

Ասելիքն այլաբանորեն վերարտադրող անեկդոտներն իրենց գործող անձանցով՝ առակներին բնորոշ իրական կամ

¹ Ա. Շ. Մարգարյան, *Մանկական զվարճախոսություններ*, Ե., 2016, էջ 97:

անիրական հերոսներով ու աշխարհներով (առարկաներ, կենդանիներ, մարդիկ, դժոխք, դրախտ) ու երկխոսությամբ, ինչ-որ չափով մոտենում են առակի տեսակին, սակայն նման պատումներում գրեթե բացակայում է առակից բխող դաստիարակչական-ճանաչողական-խրատաբարոյական ուղղվածությունը: Այլաբանական անեկդոտներում բարոյախոսական վերջաբանին փոխարինում է անկանխատեսելի և անսպասելի պատասխաններով ծիծաղ հարուցող, միաժամանակ քննադատություն պարունակող վերջաբանը, որը նույնպես խորքային է, սուր և նպատակային:

Եթե ժողովրդական ավանդական առակները մեծ մասամբ վերաբերում են բոլոր ժամանակներին և շոշափում ընդհանուր մարդկային-հասարակական հարաբերություններին առնչվող հարցեր, ապա առակատիպ այլաբանական զվարճապատումները առնչվում են մեծ մասամբ որոշակի ժամանակաշրջանի և վերաբերում կոնկրետ քաղաքական վարչակարգին ու գործող անհեթեթ պլանային, հարկային կամ այլ կարգի քաղաքականությանը:

Խորհրդային և անկախացած Հայաստանի վարչակարգերի հարկային վարչարարությունը այլաբանորեն խտացվել է հետևյալ երգիծապատումում. Աղվեսը փախչում է հարկային աշխատակցի ստուգումներից, որի հետևից փախչում են նաև առյուծն ու արջը: Կապիկին ուղղած հարցին, թե ի՞նքն ինչու չի փախչում, պատասխանում է.

– Ես ինչու փախչեմ: Իմ հետևս՝ բաց, կնոջս հետևը՝ բաց, երեխիս հետևը՝ բաց...¹:

Բարձր պաշտոններում անարժաններին տեղավորելու քաղաքականությունը ժողովուրդն այլաբանորեն խտացրել է մի շարք զվարճապատում-զվարճախոսություններում, որոնցից մեկում կովը, խոզն ու էջը որոշում են իրենց երկրից հեռանան ու մարդավարի ապրեն: Կովը Հնդկաստան է ու-

¹ Գ.Մելիք-Սարգսյան, *Զվարճալիք*, Ե., 2001, էջ 51:

զում գնալ, քանի որ այնտեղ պաշտում են կովերին, խոզը՝ Թուրքիա, քանի որ այնտեղ խոզի միս չեն ուտում, ուրեմն առոք-փառոք կապրի, կվայելի կյանքը, իսկ էշը որոշում է չգնալ, պատճառաբանելով.

– *Ղուք ուր որ սիրտներըտ ուզում ա՝ գնացեք, ես որ մնում եմ. էստեղ ինչքան էշեր կան, պաշտոն են տվել, աղայի պես ապրում են, կարող ա էգուց-էլօր էլ իմ հերթը գա...* (ԱՍՇՀ)

Եթե մեծերի երգիծապատումներում և զվարճախոսություններում ***անձնավորումը*** մեծ մասամբ նպատակադրված հնարանք է և նպատակ ունի զավեշտն էլ ավելի ազդեցիկ դարձնել, ապա մանկականում այն աշխարհընկալման առաջին քայլերի, շատ ու շատ անընկալելի երևույթներ բացահայտելու նպատակ է հետապնդում.

Իբրև փոքր տարիքի երեխայի մտածողության արգասիք՝ զվարճախոսություններից մեկում էլ մանկան խոսքում կիրառվում է թե՛ անձնավորումը, թե՛ բառամասնատումը՝

Օովափում նայելով մայրամուտին՝ 2 տարեկան Նարեն բացատրեց.

– *Արևը պագում ա, գնում ա Մարիամի մոտ* (իմա՝ մայրամուտ): (ԱՍՇՀ)

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում զավեշտի հենք դարձած պատկերավորման միջոցներից հաճախակի հանդիպողներից է նաև ***չափազանցությունը***:

Զանգեզուրյան անեկդոտաշարի հարսանեկան նմուշներից մեկում հարսանիքի օրը փեսայի կողմից նորահարսին ուղղած ***«Քո աչքերում երևում է ամբողջ քաղաքը»*** չափազանցված գեղարվեստական պատկերավոր խոսքի ուղիղ ընկալումը և եղբոր հարցը, թե՛ ***«Տես մեր էշն էլ է՞»***

երևում», պատճառ է դարձել անսպասելի զավեշտի առաջացման¹:

Իսկ «Դա մեր գործը չէ» զվարճախոսությունում էլ հիվանդի ծանր վիճակի չափազանցված նկարագրագրությունն է զավեշտի պատճառը.

Գինուսի կինը զանգահարում է «շտապ օգնություն».

– *Շուտ հասեք: Ամուսինս տարքության մեջ վառվում է, ջերմությունը հասել է հիսուն աստիճանի:*

«Շտապ օգնության» հերթապահը թե՛

– *Տիկի՛ն, դա արդեն մեր գործը չէ, զանգեք հրշեջ ծառայություն²:*

Որևէ ուրախ առիթի ճոխ նկարագրության «ազդեցությամբ» զվարճախոսություններից մեկում թաղման արարողության տարրերից մեկի չափազանցմամբ ներկայացնելն է դառնում անսպասելի ծիծաղի հենքը.

Թաղումից վերադարձած մի կին հարևանուհուն պատմում էր.

– *Վա՛յ, Մարգո՛ ջան, ընքա՛ն մարդ կար, ընքա՛ն մարդ, որ մեռելն էրկու տեղ ին դրել...³:*

Գ. Թարվերդյանի գրառած զվարճախոսություններից մեկում էլ պատկերավորության մեկ այլ տեսակի՝ *փոխաբերույթ-փոխաբերության* միջոցով հոգևոր առաջնորդի և ժողովրդի դասային տարբերությունն է ընդգծվում՝ դառնալով անսպասելի ծիծաղ առաջացնելու միջոց.

Մոկացիները իրենց պաշտպանության համար դիմում են Աղթամարի Խաչատուր կաթողիկոսին՝ հետևյալ խոսքերով.

¹ Ա. Մարգարյան, *Եկեք մի քիչ զվարճանանք. Զրույցներ և անեկդոտներ*, Ե., 1992, էջ 8:

² Ա. Մարգարյան, *Եկեք մի քիչ զվարճանանք. Զրույցներ և անեկդոտներ*, Ե., 1992, էջ 11:

³ *Լոռվա զվարճապատումներ*, հավաքեց և մշակեց Ս. Ճշմարիտյանը, Գյումրի, 1992, էջ 11:

– *Վեհափա՛ռ տէր. տու վոր կաս, մեր պոզ էջն իս. մենք էլ վոր կանք, քո պոչի տրկու ճանճերն ինք. հեփ տու քո պոչ թափ տաս, մենք տը պլավինք. մեր տեր չխո տու յիս...¹ :*

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում նաև *փոխանունությունն* է անսպասելի ծիծաղի պատճատ դառնում: Հարսանեկան ծիսակարգի մաս կազմող խնամախոսության բազում դրվագներ դարձել են անեկդոտների առաջացման պատճառ: Դարերի ընթացքում աղջիկ ուզելիս ժողովուրդը պատկերավոր խոսքով նպատակը ներկայացնելու տարատեսակ ձևեր է «մշակել», որոնցից մեկն էլ *ձեռքը խնդրել* դարձվածքով է արտահայտվել:

Անսպասելի ծիծաղ հարուցելու համար այս կայուն կապակցությունը անեկդոտում բացվում է: Պատասխանը մերժողական չէ. խնամին մաս-մաս տանելուն դեմ լինելով՝ շուկայական մեծածախ առևտրի ժամանակ կիրառվող գործարքային բառապաշարի միջոցով առաջարկում է *բիրիք*՝ ամբողջությամբ տանելու տարբերակը.

Երևանից գնում են Աբարան՝ աղջիկ ուզելու: Խնամոնց տուն մտնելով՝ պատկերավոր ներկայացնում են գալու նպատակը.

– *Մենք եկել ենք ձեր աղջկա ձեռքը խնդրելու:*

Աղջկա հերն ասում ա.

– *Մեր աղջկան մենք մաս-մաս չենք տալիս, թե տանում եք, բիրիք տարեք... (ԱՄՇՀ)*

10. Ըստ քրիստոնեական եկեղեցու ամուսնական կանոնակարգի՝ հայոց մեջ արգելված է բազմակնությունը, և դրա խախտման դեպքում եկեղեցին համապատասխան պատիժներ է սահմանել: Նորնախիջևանյան «Էրգու գեսը մեզ գանե» անեկդոտում զավեշտալին քրիստոնեական այդ օրենքը խախտողի արդարացնող խոսքն է՝ հիմնված կողակցին

¹ ՀԱԻ-ի արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, ԲԲ, 1, 4469:

ուղղված «**իմ կես, իմ թանկագին կես**» պատկերավոր արտահայտության վրա.

Ես իմ արածը, բարո՛ւն դադավոր, ամեննին հանցանք չիմ հեսարի... զրնիզ ասածդ գես մաշտ է. գասին՝ իմիս գեսս, յա չենե, իմիս թանգակին գեսս: Ես ալ գուզեյի սաղ զրնիզ ունենալ, աղոր համար ալ էրգու գես առի, որ մեզ հաղ սաղ լա՛:

Որոշ զվարճախոսություններում էլ արտահայտչության միջոցներից **բառախաղն** է նպաստում զավեշտի ստեղծմանը: Մեծերի բառախաղով արտահայտված խոսքը մեծ մասամբ նպատակադրված է: Ահա բառախաղով արտահայտված մի քանի նմուշ.

Անդոն ասում է.

– Կն՛ի, էն օրը հո՛ւնց մընացիր սկուպոյ (գծուծ)

Արշակի տանը:

– Ստի՛պված:

– Վերջը՛, հո՛ւնց ընթունեց...

– Ստի՛պված՞:

Ստորև ներկայացվող բառախաղով զվարճախոսությունը էլ ավելի է բացահայտում մարդկային բնավորությունը.

Երկու ընկեր զրուցում են.

– Հրանտ, որոշել եմ բեղ պահել:

– Որ հորդ էլ պահեիր, վատ չէր լինի, – ասում է ըն-

կերը՞:

Ժողովրդի կամ անհատի ծայրահեղ ծանր վիճակը

¹ Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 2, **Խ.Ա. Փորքշեյան**, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Ե., 1971, էջ 86:

² Կատակում է Գորիսը (Գորիս քաղաքի և շրջանի ժողովրդական սրախոսություններ և անեկդոտներ), Հավաքեց, մշակեց ու կազմեց **Լևոն Սահակյանը**, Գորիս, 1994, էջ 7:

³ Կատակում են մովսեսցիները, Գրառողներ՝ **Ա. Պապյան, Հ. Պապյան**, Ե., 2012, էջ 79:

ցույց տվող *Հայ-հայր գնացել, վայ-վայն ա մնացել* առա-
ձատիպ արտահայտությունը ժամանակակից գիտատեխնի-
կական առաջընթացի ոգուն համահունչ բառախաղային
զվարճախոսության տեսքով է հանդես եկել.

Հայ ժողովրդի հայ-հայր գնացել ա, վայֆայն ա մնացել
(ԱՍՇՀ):

Բանազետ Վ. Սվազյանի գրառած «Հօփն ու Թօփը»
երգիծապատումում երկու սիրեկան պահողը հերթական
«այցելության» ժամանակ ընկնում է զուգարանի հորը:
Այստեղ ևս բառախաղն ինքնատիպ ու հետաքրքիր դրսևո-
րում է ստացել. թե՛ անձնանունների ընտրությունը, թե՛ գոր-
ծողություններն ու հանգուցալուծման ժամանակ հերոսի բա-
ռախաղային մտորումը, անսպասելի ծիծաղի հենքն են
դառնում.

– *Հօփը գիդէ, քի Թօփան քօվն իմ, Թօփն ա գիդէ՝
Հօփան քօվն իմ. չին գիդիր, քի քօքան (ք...քի) մէչն իմ՝*

Ժողովրդախոսակցական լեզվում վատ իրավիճակ
ներկայացնող «*էլ մի հարցնի*» բառակապակցությունը զվար-
ճախոսության մեջ այսպես է ներկայանում.

Արշոն հանդիպում է ընկերոջը:

– *Խաչատո՛ւր, հլա մի հարցո՞ւ ինձ, թե n^օ նց ես
սպրում, n^օ նց չես սպրում:*

– *Ո՞նց ես սպրում, Ա՛րշո՛:*

– *Է՛, էլ մի հարցնի՞² (այսինքն՝ վատ):*

Զվարճապատում-զվարճախոսություններում զավեշ-
տի առաջացման միջոց է դառնում նաև բառային *կրկնու-
թյունը*.

Լոռեցի Ռուբենը հարևանին հարրցնրմ ա.

– *Ըսօր ի՞նչ կինո կա:*

¹ Վ. Սվազյան, *Գիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը*, Ե., 1994, էջ 64:

² Ծիծաղի պարտեզ, գիրք-3, Ե., 2006, էջ 37:

– *Խելակորույս, խելակորույս, խելակորույս ...*

– *Այտա, դե մին ասիր, հրսկացա, էլի, – ասում է Ռուբենը¹ (ԱՄՇՀ):*

Հայերենի բարբառներին, ժողովրդախոսակցական լեզվին հատուկ է կարճառոտ ու պատկերավոր խոսքը, իսկ դրան նպաստում է միմյանց հետ հաղորդակցվելիս հաճախակի կիրառվող արտահայտչամիջոցներից մեկը՝ *գեղջումը*:

Բանավոր խոսակցության ժամանակ բառ-բառակապակցությունների գեղջումը նպաստում է խոսքը անկեղծ, անկաշկանդ ու անմիջական դարձնելուն: Մակայն երբեմն մեծերի կամ փոքրիկների կողմից գեղջման կիրառությունների ժամանակ զավեշտալի միջադեպեր են ստեղծվում, որն էլ հանգեցնում է բազում անեկդոտների առաջացման: Մտորն ներկայացվող օրինակներով տեսնենք՝ կամա թե ակամա գեղջման ի՞նչ հնարանքներով է հնարավոր լինում անսպասելի ծիծաղ առաջացնել:

Զեղջմամբ ասված անմեղ ու անկեղծ ժողովրդական կարճառոտ խոսքը երկխոսական կառույցում հանգեցնում է այնպիսի զավեշտի, որ արտաբերողներն անգամ հանկարծակիի են գալիս:

Մեկը կողովով խաղող է տանում շուկա՝ ծախելու: Երեսը ծածկած կողովը սա դնում է ծախող տղամարդկանցից մեկի խաղողի մոտ, կանգնում ու ձեռքերը ծալած սպասում է:

– *Քո՛ւր ջան, ինչի՞ չես բացում, չես տեսնու՞մ՝ իմը (իմա՝ իմ խաղողի բերանը) բացել եմ, – ասում է տղամարդը:*

– *Ես որ իմը (իմա՝ իմ խաղողի բերանը) բացեմ, քունը (իմա՝ քո առևտուրը) կկանգնի, – համեստաբար պատասխանում է կինը (ԱՄՇՀ):*

Երբեմն էլ ժողովրդական խոսքում բայական անդամի

¹ 1960-ականների վերջին Կիրովականում (այժմ՝ Վանաձոր) ամերիկյան «Խելակորույս, խելակորույս, խելակորույս աշխարհ» կինոնկարն էր ցուցադրվում:

զեղչումը ասելիքի երկիմաստ ընկալելու պատճառ է դառնում՝ կենդանու գործողությունը ակամայից վերագրվելով մարդուն.

Որովհետև ամուսինը գիշերով շատ ուշ էր տուն գնում, ուստի մեկ անգամ կինն ասաց.

– Քա՛, յո ըի էսա խտուր ուշացար. աչքերս ճողթավ քու ճամբախ երիշկելով, քյանի շուն խաչեց, ես գիցա՝ Կարոս ի... քանի շուն խաչեց, ես գիցա՝ Կարոս ի...¹ (բացակայում է եկավ բառը - ԱՍ):

Ժողովրդական խոսքում քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ զեղչվում է ոչ թե բառը, այլ մի ամբողջ բառակապակցություն, որը ևս կարող է նպաստել արտաքուստ անմեղ ու միամիտ խոսքը վերածելու բամբառակ՝ գոեհիկ խոսքի: Ժողովրդական երգիծապատումներում հենց նմանատիպ կառույցներն էլ դառնում են անսպասելի ծիծաղի առաջացման հենքը.

Գյուղացիներից մեկի հոգեհացին տերտերը միանգամից դադարեցնում է ուտելը: Այս ու այն կողմից անհանգստանում են.

– Տե՛ր հայր կեր, ինչի՞ էդքան շուտ հետ քաշվեցիր...

– Չէ, ես ինչքան պետք էր, կերա վերջացրի, հերիք է:

– Բայց ինչքա՞ն կերար որ, տե՛ր հայր:

– Չուրի տիրոխնու ծակը կերել էս, բոլ ա:

(իմա՝ մինչև տերտերակնոջ ցույց տված գոտու ծակը՝ անցքը - ԱՍ) (ԱՄՇՀ):

Փերիահայոց գվարճապատումներից մեկում ևս *զեղչման* հետևանքով ասելիքը վերածվում է բամբառակ խոսքի: Զեղչմամբ անսպասելի ծիծաղ առաջացնող պատումն առնչվում է նաև հոգևորականի տգիտությանն ու մոռացկոտությանը: Անցորդի՝ «Օրինյա տեր» խոսքին հաջորդող

¹ **Անեկդոտներ, հատոր 1**, Աշխատասիրեց *Յովհաննես Նազարեանց*, Բագու, 1876, էջ 46:

«Աստուած քեզ օրհնի» պատասխանը անընդհատ մոռացող քահանան այդ գրությունը շորի տակից ամրացնում է ու անհրաժեշտության դեպքում նայում: Մի օր էլ, չգտնելով գրությունը, ասում է.

– *Փեշիս տակինը քեզ օրհնի¹:*

Այս երգիծապատումի սալմաստյան տարբերակն ավելի զավեշտալի է, քանզի այն առնչվում է թաղման ծիսակարգին, և հանգուցյալի վրա Մաշտոցը կորցրած տերտերի՝ շփոթմունքից արտաբերած *«շլվարիս մեչին ծեր մեռլի կլխին ըլլի»* բանբառակ խոսքը պատուհաս է դառնում նրա համար²:

Թաղման ծիսակարգին առնչվող հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում հանդիպում ենք հանգուցյալի հետ դրվող տարատեսակ սիրած իրերի, որոնք կապված են եղել նրա հետ կամ էլ նրա մասնագիտական նախասիրության հետ: Մակայն համապատասխան անեկդոտում լացի ժամանակ ողբասացը շեշտում է ոչ թե տվյալ իրը, այլ նրա դրվելու դիրքը. Ննջեցյալի կնոջ կողմից *գեղջամա՛ր* արտաբերված լալիքի անկեղծ խոսքերը, թե՛ *«Վայ ես քեզ էլ մեռնեմ, ոտներիդ արանքինին էլ մեռնեմ* (իմա՝ ոտներիդ արանքին դրված դուդուկին - ԱՍ): *Առանց ձեզ ի՞նչ եմ անելու, ո՞նց եմ ապրելու...»*, ներկա գտնվողների կողմից ընկալվում են այլ տեսանկյունից և դառնում անգուսպ ծիծաղի պատճառ: (ԱՍՇՀ)

Եթե մեծերի երգիծապատում-զվարճախոսություններում *գեղջամա՛ր* կառույցներով բառ-բառակապակցությունների և դարձվածների ուղիղ իմաստով ընկալումը մեծ մասամբ կանխակալ վերաբերմունքի արդյունք է, անսպասելի ծիծաղ առաջացնելուն միտված ժողովրդական նպատակադրված հնարանք, ապա մանկական զվարճախոսություններ

¹ Լ. Մինասեան, *Գիւղական բառ ու բան*, (Փերիա գաւառ), Նոր Ջուղա, 1998, էջ 388:

² *ԳՄՄ ՀԱԻ-ի արխիվ*, Գ. Թարվերդյանի ֆոնդ, Սալմաստ, ՖՖ, 1, 1539:

րում այն որոշակի տարիքային խմբի երեխաների մտածողության և ըմբռնման հետևանք է: Քերականական զեղչմամբ ստեղծված *աչքիս չիշ ա արեղ* դարձվածային կառույցը մանկան խոսքում ուղիղ իմաստով է ընկալվում:

– *Աչքիս չիշ ա արեղ. ձեն չի հանրմ* (զեղչված է *ինչպես երևում է* միջանկյալ բառակապակցությունը-ԱՍ):

– *Տատի՛կ, աչքիդ չեմ արեղ, տակըս եմ արեղ* (ԱՍՇՀ):

Մանկական զվարճախոսություններից մեկում էլ երեխան խոսակցի խոսքում զեղչումը չի ընկալում. հոր արտաբերած պատկերավոր խոսքը նրան զարմանք է պատճառում:

– *Էրի՛կ, քանի՞ անգամ եմ ասել, որ գնաս քնելու: Քո տարիքում ես հավերի հետ էի քնում* (իմա՝ հավերի թառ լինելու ժամանակ - ԱՍ), – ասաց հայրը:

– *Իսկ ինչպե՞ս էիր տեղաւորում թառի վրա՞:*

Այսպիսով, հայերենի պատկերավորման ու արտահայտչական բազմաբնույթ միջոցներով անսպասելի ծիծաղ աջաջացնող զվարճապատումներն ու զվարճախոսությունները զուտ հայկական միջավայրում ձևավորված ժողովրդական բանավեպի նմուշներ են: Հետևապես դրանց մեծ մասը այլ ժողովուրդների համար գրեթե անթարգմանելի ու անհասանելի են:

Саргсян Армен – Образные средства выражения как основа абсурда в армянских народных юмористических миниатюрах-прибаутках.– В армянских анекдотах поводом внезапно вызванного смеха могут стать разнообразные средства образного выражения – сравнение, аллегория, метафора, эпитет, эллиптические конструкции, игра слов и т.п.

Анекдоты на основе образных средств выражения на-

¹ *Ծիծաղենք միասին*, Կազմեց Սարիսէ Ամիրխանեանը (Ղևոնդեան), Թեհրան, 2007, էջ 110:

столько разнообразны, многослойны и богаты, что дают представление о языковом мышлении армянского народа. Они непереводимы, а иногда даже непонятны для других народов, поскольку содержат сугубо национальные элементы армянской картины мира.

Armen Sargsyan – Figures of Speech as a Basis for Humor in Armenian Humorous Sketches and Jokes.– In Armenian jokes, various figures of speech such as comparison, allegory, metaphor, epithet, ellipsis, word play, etc. may become a reason for provoking unexpected laughter.

The jokes and humorous sketches based on them are examples of folk quotes, created with pure Armenian linguistic mentality, eventually, nearly non-interpretible and non-reachable for other nations.

Հ. Սուքիասյան, Ն. Թոռունյան
(Հայաստան, ԵՊԲՀ)

ՀԱՅԵՐԵՆ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Մեր երկրի անկախացումից հետո կտրուկ ավելացավ հայոց լեզվով բժշկագիտական ուսումնասիրությունների, դասագրքերի, գիտահանրամատչելի աշխատությունների և հոդվածների թիվը:

Գրեթե երկու տասնամյակ է՝ զգալի աշխատանքներ են ձեռնարկվել այդ ուղղությամբ. հայացվեց մասնագիտական կրթական համակարգը, մասամբ նաև կանոնարկվեց առողջապահության լեզուն:

Այս միտումը, անշուշտ, ուրախացնող է, քանի որ խորհրդային շրջանում տարեցտարի նվազում էր հայերեն գրված բժշկագիտական (և ոչ միայն բժշկագիտական) հրատարակությունների թիվը՝ ուղղակիորեն սպառնալով մայրենի լեզվով մասնագիտական գրականության գոյությանը:

Նկատենք, որ այդ երևույթի պատճառը ոչ միայն (Մոսկվայի կողմից) պարտադրված որոշումներն էին և ստեղծված պայմանները, այլև մեր այն գիտնականների, մեղմ ասած, անհեռատես մոտեցումը, որոնք մասնագիտական գրականության լեզու դարձրին ռուսերենը:

Նկատենք՝ որքան էլ քննադատում ենք խորհրդային շրջանից մեզ անցած լեզվական թերությունների ժառանգությունը, այնուամենայնիվ, խորհրդային շրջանում հստակեցվում էին հրատարակվելիք աշխատանքին ներկայացվող գիտական չափանիշները, հնարավորինս միասնական էին օտար և նորաստեղծ հայերեն տերմինների ու գիտաբառերի գործածությանը վերաբերող խնդիրներն ու մոտեցումները: Գրքերը խմբագրվում և հրատարակվում էին ընդամենը երկու-երեք հրատարակչություններում, որտեղ աշխատում

էին մասնագետ խմբագիրներ, և ձևավորվում ու գործում էին վերոնշյալ համապատասխան մոտեցումները:

Ներկայումս հայերեն բժշկագիտական գրականության ծավալները մեծանում են՝ ընդգրկելով բժշկագիտության բոլոր բնագավառները, մասնագիտական նեղ ոլորտները, և մայրենի լեզվով հրատարակությունների առատությունը ներկայումս իր հերթին նոր խնդիրներ է հարուցում: Թեև գործում են տասնյակ հրատարակչություններ, սակայն չեն կիրառվում տպագրվելիք գիտական աշխատանքին ներկայացվող չափանիշները, իսկ միասնական մոտեցումների մասին խոսք լինել չի կարող:

Գործն ավելի է բարդանում հեղինակների՝ իրենց մտքերը հայերեն շարադրել չկարողանալու հանգամանքով:

Այսպիսով, ազգայնացման գործընթացը ավարտված չէ, վիճակը դեռևս հեռու է բավարար լինելուց: Թերևս սերնդափոխություն է պետք, որպեսզի հաղթահարվի ոչ հայալեզու անցյալի բեռը:

Մեր կողմից բժշկագիտական լեզվի նպատակային ուսումնասիրությունը և դիտարկումները ցույց են տալիս, որ ռուսերենի, արդեն նաև անգլերենի անմիջական ազդեցությամբ հայերենում, ինչպես նաև բժշկագիտական խոսքում չարաշահվում ու խաթարվում է գիտական լեզուն, որը լեզվաճական մի շարք անցանկալի երևույթների պատճառ է դառնում, և բժշկագիտական լեզուն հեղեղվում է հայերենի լեզվամտածողությանն անհարիր ոճական, քերականական, տառադարձման, ուղղագրական բազմաթիվ ու բազմազան սխալներով, որոնց դրսևորումներից յուրաքանչյուրը լեզվական որևէ իրողություն կամ կանոն թերի իմանալու հետևանք է, օրինակներ՝

- Նորածինների մոտավորապես $\frac{1}{2}$ -ի մոտ կյանքի 2-3-րդ օրը դիտվում է մաշկի և տեսանելի լորձաթաղանթների դեղնություն:

- Նորածինների մոտավորապես *1/2-ի դեպքում* կյանքի 2-3-րդ *օրերին* դիտվում է մաշկի և տեսանելի լորձաթաղանթների դեղնություն:

- Այս շրջանում պտղի վնասումը կարող է առաջացնել հղիության վաղաժամ ընդհատում՝ ցածր քաշով *և/կամ* ոչ հասուն երեխայի ծնունդով:

- Այս շրջանում պտղի վնասումը կարող է առաջացնել հղիության վաղաժամ ընդհատում՝ ցածր քաշով *կամ* ոչ հասուն երեխայի ծնունդով:

- *Նորածնի մոտ* դիտվում է մարմնի զանգվածի ֆիզիոլոգիական կորուստ 6-9 %-ով *ի համեմատ* ծնված մարմնի զանգվածի:

- Դիտվում է *նորածնի* մարմնի զանգվածի ֆիզիոլոգիական կորուստ 6-9 %-ով՝ ծնված մարմնի զանգվածի համեմատ:

- Մանկության առաջին շրջանում *տեղի է ունենում* որոշ ներքին օրգանների կառուցվածքային տարբերակում:

- Մանկության առաջին շրջանում *կատարվում է* որոշ ներքին օրգանների կառուցվածքային տարբերակում:

- Ջերմային վնասվածքները *հաճախ հանդիպող կենցաղային և արտադրական վնասվածքներից* մեկն են:

- Ջերմային վնասվածքները *կենցաղում և արտադրության մեջ հաճախ հանդիպող վնասվածքներից* են:

- *Խորը* այրվածքների դեպքում վնասված հյուսվածքները չոր են, խիտ և *տեղավորված են* առողջ մաշկից *ցածր*:

- *Խոր* այրվածքների դեպքում վնասված հյուսվածքները չոր են, խիտ և *տեղակայված են* առողջ մաշկի *մակերեսից փոքր-ինչ խորությամբ*:

- *Լինչի համախտանիշի* կամ ռիսկի խմբի անհատները պետք է *գտնվեն* անընդհատ հսկողության տակ՝ ԼՀ-ի հետ *ասոցացված* քաղցկեղների *զարգացման կանխարգելման* կամ *վաղ հայտնաբերման նպատակով*:

- *Լինչի համախտանիշով* կամ ռիսկի խմբի անհատները պետք է անընդհատ հսկողության տակ *լինեն*՝ ԼՀ-ի հետ *գուգորդված* քաղցկեղների *զարգացումը կանխարգելելու* կամ *վաղ հայտնաբերելու նպատակով*:

- Ատամի հյուսվածքների պահպանումը *անդրադառնում է* ատամի *երկարակեցության վրա*:

- Ատամի հյուսվածքների պահպանումը *նպաստում է* ատամի *երկարակեցությանը*:

- *Ֆրոնտալ ատամների* $\frac{3}{4}$ պսակները կարող են արդյունավետ *կիրառվել ինտակտ ատամների վրա*, հատկապես փոքր *դեֆեկտների* պրոթեզավորման *ժամանակ*:

- *Առջևի ատամների* $\frac{3}{4}$ պսակները կարող են արդյունավետ *օգտագործվել հպվող ատամների*, հատկապես փոքր *արատները* պրոթեզավորելու *դեպքում*:

- Գոյություն ունեն կերպառու նյութից պատրաստված *տարբեր գույնի, չափի և ձևի* ստանդարտ ժամանակավոր պսակների հավաքածուներ:

- Գոյություն ունեն կերպառու նյութից պատրաստված *տարբեր գույների, չափերի և ձևերի* ստանդարտ ժամանակավոր պսակների հավաքածուներ:

- Ատամների տեղաշարժման կլինիկական պատկերը *կախված է* դրանց տեղակայումից:

- Ատամների տեղաշարժման կլինիկական պատկերը *պայմանավորված է* դրանց տեղակայմամբ:

- Առանցքային հենակետային ատամը *դա* միջին հենակետային ատամն է:

- Առանցքային հենակետային ատամը միջին հենակետային ատամն է:

- Սա *բերում է* թոքերում արյան խանգարման, զարկերակային *հիպոքսեմիայի* և *շնչական* կենտրոնի գրգռման:

- Սա *հանգեցնում է* թոքերում արյան *օքսիգենացիայի (թթվածնագոյացման)* խանգարման, զարկերակային *հիպոքսեմիայի (թերթթվածնարյունության)* և *շնչառական* կենտրոնի գրգռման:

- Բարակ *աղին* սկսվում է *ստամոքսայելքից* և հասնում է մինչև կույր *աղի*:

- Բարակ *աղիքը* սկսվում է *ստամոքսայելքից* և հասնում է մինչև կույր *աղիք*:

- Միզանյութը *իրենից ներկայացնում է* ածխաթթվի լիարժեք ամիդ, որն ունի երկու ատոմ:

- Միզանյութը ածխաթթվի լիարժեք ամիդ է, որն ունի երկու ատոմ:

- APC գենի մուտացիաները նկարագրվում են որպես հաստ *աղու* աղենոմաների նախնական երևույթ:

- APC գենի մուտացիաները նկարագրվում են որպես հաստ *աղիքի* աղենոմաների նախնական երևույթ:

- Հիվանդների ուռուցքների 50% *չեն* հայտնաբերվում միկրոսատելիտային անկայունություն:

- Հիվանդների ուռուցքների 50%-ը *չի* հայտնաբերվում միկրոսատելիտային անկայունություն:

- Քիմիոթերապիայի նկատմամբ միկրոսատելիտային *անկայունության* ուռուցքների տարբեր *պատասխանները*

պահանջում են ԿՌԲ-ով հիվանդների ավելի մեծ թվի թեստավորում:

- Քիմիաթերապիայի նկատմամբ միկրոսատելիտային անկայունությամբ ուռուցքների տարբեր պատասխանների դեպքում անհրաժեշտ է թեստավորում անցկացնել ԿՌԲ-ով հիվանդների շրջանում:

- Հետազոտման արդյունքը համարվում է բացասական:

- Հետազոտման արդյունքը բացասական է:

*- Այդ նպատակով սիլկոնի և մոմի *օգնությամբ* գրանցում են *պացիենտի* պրոթրոլիան:*

*- Այդ նպատակով սիլկոնի և մոմի *միջոցով* գրանցում են *բուժառուի* պրոթրոլիան:*

- Աքսիոգրաֆիան հանդիսանում է հոդային ուղու հետազոծի հետազոտման օբյեկտիվ մեթոդ, որը թույլ է տալիս գնահատել ֆունկցիայի բնույթը նորմայում և քունքստործնոտային հոդի ֆունկցիոնալ խանգարումների ժամանակ:

- Աքսիոգրությունը հոդային ուղու հետազոծի հետազոտման օբյեկտիվ մեթոդ է, որը հնարավորություն է տալիս գնահատել ու ֆունկցիայի բնույթը նորմայում և քունքստործնոտային հոդի ֆունկցիոնալ խանգարումների դեպքում:

- Սպլինտերի հետագա կիրառումը էլ ավելի է ֆիքսում պացիենտի ուշադրությունը ատամնաշարերի օկյուզիայի վրա և դժվարեցնում է բուժման այլ՝ ոչ թե ստոմատոլոգիական մեթոդների օգտագործումը:

- Սպլինտերի հետագա կիրառումը էլ ավելի է բևեռում բուժառուի ուշադրությունը ատամնաշարերի հպման վրա և դժվարացնում է բուժման, և ոչ թե ստոմատոլոգիական մեթոդների օգտագործումը:

- Մայլինտ թերապիայի ընթացքում պտուտակի ակտիվացիան բերում է վերին ատամնաշարի մեծացմանը և ավելի լավ օկյուզիոն կոնտակտների ստացմանը:

- Մայլինտ-բուժման ընթացքում պտուտակի ակտիվացումը նպաստում է վերին ատամնաշարի մեծանալուն և հպման մակերեսը հարմարավետ ստանալուն:

- Փսիսման բացակայության դեպքում հիվանդին տալիս են հեղուկներ:

- Փսիսում չլինելու դեպքում հիվանդին տալիս են հեղուկներ:

- Բրոնխասկոպիան հնարավորություն է տալիս վիզուալ գնահատել տրախեայի և բրոնխների ներքին մակերեսը:

- Բրոնխադիտումը հնարավորություն է տալիս անզեն աչքով գնահատելու շնչափողի և բրոնխների ներքին մակերեսները:

- Այն կատարվում է անզգայացման տակ, ցուցումներն են հանդիսանում բնածին արատների կասկածը, քրոնիկ ասպիրացիան, էնդոբրոնխիալ փոփոխությունների գնահատումը, բիոպսիան:

- Այն կատարվում է անզգայացմամբ, ցուցումներն են բնածին արատների կասկածը, քրոնիկական շնչառությունը, ներբրոնխային փոփոխությունների գնահատումը, կենսազննումը:

- Բրոնխաօբստրուկտիվ համախտանիշը դա ախտանիշների համալիր է:

- Բրոնխաօբստրուկտիվ համախտանիշը ախտանիշների համալիր է:

- Բրոնխաօբստրուկտիվ համախտանիշի առաջացման ռիսկի գործոններից է *համարվում* մածուծիկ խորխի արտադրությունը:

- Բրոնխաօբստրուկտիվ համախտանիշի առաջացման ռիսկի գործոններից է *մածուցիկ խորխի արտադրությունը*:

- Մեծահասակներին բնորոշ *խրոնիկ բրոնխիտը* երեխաների *մոտ* հազվադեպ է *հանդիպում*:

- Մեծահասակներին բնորոշ *քրոնիկական բրոնխաբորբը* երեխաների *շրջանում* հազվադեպ է *դրսևորվում*:

- Այն սահմանվում է բրոնխաթոքային համակարգի *ձեռք բերովի* բորբոքային *խրոնիկ* հիվանդություն:

- Այն սահմանվում է *որպես* բրոնխաթոքային համակարգի *ձեռքբերովի* բորբոքային *քրոնիկական* հիվանդություն:

- Կծիկային հիվանդություններն արտահայտվում են կծիկային *ֆիլտրացիոն բարիերի* վնասմամբ:

- Կծիկային հիվանդություններն արտահայտվում են կծիկային *ֆիլտրող պատնեշի* վնասմամբ:

- ՄԻԱՎ-ի արագ կատարվող թեստերը հնարավորություն են տալիս *ներկայացնել* արդյունքները և *տրամադրել* դրանց վրա հիմնված խորհրդատվություն այցելության հենց առաջին օրը, որ կարող է *բարձրացնել* ՄԻԱՎ-ի խորհրդատվության և ստուգման արդյունավետությունը:

- ՄԻԱՎ-ի արագ կատարվող թեստերը հնարավորություն են տալիս *ներկայացնելու* արդյունքները և այցելության հենց առաջին օրը *տրամադրելու* դրանց վրա հիմնված խորհրդատվություն, *որը* կարող է *մեծացնել* ՄԻԱՎ-ի խորհրդատվության և ստուգման արդյունավետությունը:

Նշված և այլ սխալների հետևանքով ասելիքը հաճախ չի հասնում ունկնդրին կամ ընթերցողին, տեղիք է տալիս

թյուրըմբռնումների, դժվար է տպավորվում և հասկանալի դառնալու համար պահանջվում է սովորականից մի քանի անգամ ավելի մտավոր լարում ու եռանդ:

Բժշկագիտական դասագրքերում կարևորում ենք նաև հայերեն կամ օտար տերմինների և գիտաբառերի գործածության խնդիրը:

Նկատենք, որ գիտական գրականություն ստեղծելը թեկուզև նշանավոր որևէ անհատի մենաշնորհը չէ և ունի մշակութային արժեք: Հեղինակների զգալի մասը օտար տերմիններ և գիտաբառեր գործածելու բուռն հակում է դրսևորում: Ինչո՞վ է սա պայմանավորված՝ սովորույթի ուժո՞վ, տպավորություն թողնելու մղումո՞վ, հայերենի չիմացության մբ. դժվար է ասել:

Վաղուց ի վեր մասնագիտական գրականության մեջ հաջողությամբ գործածվող *սրտամկան, համաճարակ, պարբերական, թունավոր, ախտանիշ, մեռուկ* և նման բազմաթիվ այլ տերմինների ու գիտաբառերի փոխարեն գործածվում են օտար համարժեքները՝ *միոկարդ, էպիդեմիա, պերիտոնիկ, վակցինացիա, տոքսիկ, սիմպտոմ, նեկրոզ*:

Շատ հաճախ, երբ նկարագրվում, ներկայացվում են այս կամ այն հիվանդությունը, ախտաբանական երևույթն ու հասկացությունը, փորձ էլ չի արվում զոնե փակագծերում օտար անվան բացատրությունը կամ հայերեն համարժեքը տալ, ինչպես ընդունված է: Գաղտնիք չէ, որ որոշ հեղինակներ ուղղակի դեմ են տերմինի կամ գիտաբառի հայերեն համարժեքն ունենալուն և գործածելուն: Կան նաև, թեև քիչ, հակառակը ցանկացողները, այսինքն՝ անձնական նախասիրությունները երբեմն դառնում են վճռորոշ:

Տերմինների կանոնարկման սկզբունքների, տերմինի հայերեն համարժեքը ունենալու-չունենալու բանավիճային հարցի պարզաբանմանը կանդրադառնանք մեկ այլ հոդվածում:

Մյուս հարցը, որ պահանջում է միասնական մոտեցում, տերմինների և գիտաբառերի տառադարձումն է: Իհարկե, սա ևս ընդարձակ քննարկման հարց է, սակայն նշենք մի կարևոր նկատառում. տառադարձման կանոնները չպահպանելով՝ գիտական գրականությունը հեղեղվում է ուղղագրական սխալներով:

Այս ամենն անհանգստացնող է. բժշկությունն ուսումնասիրող նոր սերունդները, հարկադրված լինելով օգտվելու եղած մասնագիտական գրականությունից, հաճախ յուրացնում են նաև դրանց թերությունները: Այսպես, դպրոցի՝ բուհ ընդունվող շրջանավարտների մի մասը չի տիրապետում կապակցված խոսք կառուցելու հմտություններին, դժվարանում է մտքերը շարադրել տարբեր ոճերով: Ըստ մեզ՝ սա պայմանավորված է նաև դպրոցական դասագրքերում առկա՝ նաև վերոհիշյալ թերություններով:

Ուրախալի փաստ է, որ վերստեղծվել է հայոց լեզվի բարձրագույն խորհուրդը: Քանի որ արդեն գործում է պետական լիազոր մարմինը, ուստի հույս ունենք, որ մեր հողվածում արված հստակ առաջարկությունները, խնդրահարույց հարցերը կլուծվեն:

Առաջարկում ենք. հայոց լեզվի բարձրագույն խորհրդի թույլտվությամբ յուրաքանչյուր բուհում (մեր դեպքում՝ բժշկական համալսարանում) ստեղծել ճյուղային տերմինաբանական խորհուրդներ, որոնք կկանոնարկեն տվյալ բնագավառի գիտական լեզուն և տերմինաբանությունը՝ ի մի բերելով տվյալ բնագավառի բոլոր հասկացությունները, անվանումները, դրանց ճշգրտումները:

Առաջարկում ենք նաև, որ յուրաքանչյուր բնագավառի ճյուղային խորհուրդները մշակեն և բարձրագույն խորհրդի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնեն իրենց բնագավառի վիճելի հայերեն տերմինների ու գիտաբառերի ցանկը: Այսպիսով, բարձրագույն խորհրդի կողմից կտրվեն տերմինի հայերեն համարժեքն ունենալու-չունենալու բանավի-

Ճային հարցերի պարզաբանումները, որոնցով և կլուծվեն բոլոր ոլորտներում հայերեն գիտաբանների ու տերմինների ճիշտ և տեղին գործածության հարցերը, կտրվեն լուծումներ, որոնք պարտադիր ու միանշանակ կլինեն բոլորի համար: Այս ամենով է պայմանավորված գիտական բնագավառների լեզվական իրողությունների միօրինակացումը:

H. Sukiassyan, N. Torunyan – Armenian Textbooks Language of Medical Science. – Great work has been done in this direction during the last two decades. But the state is still far from being perfect.

In present in medical textbooks penetrated foreign words: in verbs, in adjectives, in numerals, in adverbs, even in phraseological units. They manifest themselves even in different syntactic structures.

Professional terminology is a special matter of some difficulty. To overcome it we should consecutively use the principles of terminological regulations which are consolidated by the resolutions of the terminological committee and used in other spheres too.

Г. Сукиасян, Н. Торунян – Язык медицинских армяноязычных учебников.– В течение последних двух десятилетий в этой области удалось достичь многого, однако и теперь ее состояние далеко от совершенства.

В настоящее время иноязычные слова научно-медицинской речи проникли в армяноязычные учебники по медицине. Они затрагивают всю грамматическую систему языка, даже фразеологию и синтаксические конструкции.

Профессиональная терминология является особо сложной сферой. Для достижения намеченной цели необходимо последовательное осуществление терминологической унификации в соответствии с решениями терминологических комитетов.

**ՀՆՉԱՇՂԹԱՅԻ ՀՆՉՑՈՒՆԱՓՈԽԱԿԱՆ
ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐՔԱՌՆԵՐՈՒՄ**

Բարբառագիտության մեջ առավել տարածված հնչյունափոխական երևույթներից բացի (հնչյունի հավելում, անկում, պարզեցում, բարդացում, ամփոփում, բաղաձայնների առնմանություն, տարնմանություն, դրափոխություն, ձայնավորների ներդաշնակություն և այլն), հայերենի բարբառներին այս կամ այն չափով բնորոշ են նաև խոսքի շղթայում նկատվող փոխազդեցական հնչյունափոխության յուրատեսակ երևույթներ: Դրանք հնչյունական շղթայում (հնչաշղթայում) հաջորդ բառի բառասկզբի հնչյունի ազդեցությամբ նախորդ բառի բառավերջի բաղաձայնի հնչյունափոխության օրինաչափ երևույթներն են:

Ինչպես հայտնի է, խոսքը դրսևորվում է հնչյունական շղթայի միջոցով, որը արտասանության առավելագույն միավորն է¹: Հաղորդակցության ընթացքում մարդու ուղեղում ձևավորվում է բառերով արտահայտվելիք միտքը, որը նյարդային համակարգի միջոցով հաղորդվում է արտաբերական օրգաններին: Վերջիններս, ստանալով համապատասխան ազդանշաններ և ընդունելով համապատասխան դիրքեր, որոշակի շարժումներ են կատարում, և արդյունքում առաջացած ձայնային ալիքները տարածվում, հասնում են լսողին, որն ընկալում է միտքը²: Մակայն բառավերջի բաղաձայնն արտաբերելիս խոսողի ուղեղում արդեն իսկ ձևավորված՝ հաջորդ բառի առաջին հնչյունի ազդանշանն է հասնում

¹ Ա. Սուքիասյան, *Ժամանակակից հայոց լեզու. հնչյունաբանություն, բարբառագիտություն, բառակազմություն*, Ե., 1999, էջ 22:

² Ռ. Թոխմախյան, *Հայերենի հնչաշղթան*, Ե., 2009, էջ 40:

արտաբերական օրգաններին, և վերջիններս այդ նոր ազդանշանի ազդեցությամբ հնչյունափոխված են արտաբերում բառավերջի բաղաձայնը:

Հայերենի բարբառների հնչաշղթայի (բառերի կցույթի) հնչյունափոխության օրինաչափությունները, առաջին հայացքից նման լինելով բառամիջի կից բաղաձայնների հնչյունափոխության օրինաչափություններին, այնուամենայնիվ ունեն իրենց առանձնահատկությունները և ուսումնասիրության կարիք ունեն: Սակայն, որքան էլ զարմանալի է, դրանք բարբառագետների կողմից առանձին քննության նյութ չեն դարձել, թեև բարբառագիտական որոշ աշխատություններում ուսումնասիրողները նկատել³ և դրանց անդրադարձել են⁴:

Հնչաշղթայի հնչյունափոխության ակնհայտ օրինակներ են առկա Վայոց ձորի և հյուսիսային Նախիջևանի ավելի քան մեկ տասնյակ տեղաբնիկ գյուղերի խոսվածքներում՝ Վայոց ձորի միջբարբառում⁵:

Բառավերջի ձայնեղները հաջորդ բառի բառասկզբի խուլերից առաջ վերածվում են համապատասխան խուլերի (բ, գ, դ, ձ, ջ > պ, կ, տ, ծ, ճ, ինչպես նաև ժ, դ, վ > շ, խ, ֆ)։

Չեզոք դիրք

Հառ՛սը ջուղաբ ա տալի:

*Պագօվը մին պարագ առու
ա քընըմ:*

Աշխէնը սանդ ա թագըմ:

Խուլերին նախորդող դիրք

Հառ՛սը ջուղապ տվէց:

*Պագըմը մին պարակ
տախտագ ա տըրամ:*

Ապկարը սանտ սարքող ա:

³ **Հ. Աճառյան**, *Քննություն պոլսահայ բարբառի*, Ե., 1941, էջ 11-12: **Մ. Ասատրյան**, *Ուրմիայի (Խոյի) բարբառը*, Ե., 1962, էջ 170-187: **Ա. Մարգարյան**, *Գորիսի բարբառը*, Ե., 1975, էջ 116: **Մ. Աղաբեկյան**, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունափոխությունը.- *Հայերենի բարբառագիտական ատլաս. Ուսումնասիրություններ և նյութեր*, պրակ 3, էջ 69-70, Ե., 2010:

⁴ **Ղ. Կոստանդյան**, *Երզնկայի բարբառը*, Ե., 1979, էջ 22-23, 34:

⁵ **Ա. Վարդանյան**, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004:

Մէշըմը մին նըստած
աղվէս կար:

Էշին կաջ ա պէռնէլ:

Մըրքարիդը պօժօժ ա
տըրել:

Գուրգենը մաղ ա սարքըմ:

Հըրէվանըս հաՎ ա պահըմ:

Բախճըմը մին նըստած
ճագար կար:

Էշին կաճ պէռնէլ:

Մըրքարիդը պօժօշ տընըմ
չի:

Գուրգենը մախ սարքող ա:

Հըրէվանըս հաՖ պահող ա:

Նույն օրինաչափությամբ բառավերջի ձայնեղները հաջորդ բառի բառասկզբի շնչեղ խուլերից առաջ վերածվում են համապատասխան շնչեղ խուլերի (բ, գ, դ, ձ, ջ > փ, ք, թ, ց, չ).

Չեզոք դիրք

Տըղէս պարաբ ա մընացէլ:

Ծիրանը թանգ ա ծախըմ:

Հայկանուշը սանդ ա
թագըմ:

Չօրացրած սնջսրը վըհաքի:

Կարօն կաջ ա քըսըմ:

Շնչեղ խուլերին նախորդող դիրք

Տըղէս պարափ չի մընըմ:

Ծիրանը թանք չի ծախըմ:

Հայկանուշը սանթ թագիլ
չի:

Չօրացրաց չիրը վըհաքի:

Կարօն կաչ քըսող ա:

Միաժամանակ, հպաշփականները, արագախոսության հետևանքով ենթարկվելով նշված օրինաչափությանը, նաև կորցնում են իրենց հպական տարրը (տեղի է ունենում հնչյունի պարզեցում) և վերածվում համապատասխան շփականների (ձ, ծ, ց > գ, ս, ինչպես նաև ջ, ճ, չ > ժ, շ).

Դանդաղ խոսք

Ճամփըմը մին սատկած
բաղ կա:

Կառթացած կիրքըղ յէս էլ
էմ կառթալօ:

Արագ խոսք

Ճամփըմը մին սատկագ
բաղ կա:

Կառթացաս կիրքըղ յէս էլ
էմ կառթալօ:

Սոյժնաստը քրնաց քաղաք:

Սոյժնաստը քրնաս քաղաք:

Տան մէջին մին բրդօջ

Տան մէջին մին բրդօժ

բրրախ տըվեց:

բրրախ տըվեց:

Ըրէխէն ճաննճ փրոնեց:

Ըրէխէն ճաննջ փրոնեց:

Կըդրանը հաղօղի չէնչ

Կըդրանը հաղօղի չէնջ

փըռեց:

փըռեց:

Նույնը տեղի է ունենում նաև անգամ հպաշփականներից առաջ.

Դանդաղ խոսք

Արագ խոսք

Չորացրաճ ծիրան ա պերել:

Չորացրաս ծիրան ա

պերել:

Սարից-ծորից ծէն տըվեց:

Սարիս-ծորիս ծէն

տըվեց:

Քրնաց չիր պերի:

Քրնաս չիր պերի:

Համանման երևույթ է նկատվում նաև հաջորդ բառի բառասկզբի ձայնորդներից առաջ՝ հպաշփականները բառավերջում դարձյալ տարրալուծվում են և վերածվում շփականների.

Դանդաղ խոսք

Արագ խոսք

Ինճ նան քէզ խափեց:

Ինզ նան քէզ խափեց:

Ընդանց լավ բախճա

Ընդանս լավ բախճա

ունէն:

ունէն:

Կառջ մախաթօվ ա

Կառժ մախաթօվ ա

կարբմ:

կարբմ:

Էս ի՛նչ լավ պան ա:

Էս ի՛նջ լավ պան ա:

Հակառակ երևույթն է նկատվում ձայնեղներին նախորդող խուլերի և շնչեղ խուլերի պարագայում. խուլերն ու շնչեղ խուլերն էլ, իրենց հերթին, ձայնեղներից առաջ ձայ-

նեղանում են (պ, կ տ, ծ, ճ, փ, ք, թ, ց, չ > բ, գ, դ, ձ, ջ, ինչպես նաև ս, շ, իւ, ֆ > գ, ժ, դ, վ)։

Չեզոք դիրք

Իրեք օր ա՝ քրնացել ա:

Ազօփը լավ մառ^ք ա:

Վեցց օր ա անց կացել:

Պաբբս Արամն ա:

Քաֆ քաշիլի վախտն ա:

Իրեք թաս առավ:

Չայնեղներին նախորդող դիրք

Իրեգ դիլիմ ծըմերուգ կերավ:

Մառդ ջանավարից

կըվախնի:

Վեճճ դավուն ա առել:

Պաբբգ Պըրնագօսն ա:

Քավ վեննիլի վախտն ա:

Իրեք թագ դըլեգեց:

Շատ արագ խոսելիս սուլականները ջ, ճ, չ կիսա-շփականներից առաջ վերածվում են շչականների (գ, ս > ժ, շ)

Դանդաղ խոսք

Հըրեվանիս

ջամուշը

սատկել ա:

Ըրեխեն ճանջ

փըռնեց:

Կալի՝ ս չէս

քրնանք

մեր տունը:

Մեր հառ^քսը

խազագ

չի քաղել:

Արագ խոսք

Հըրեվանիգ

ջամուշը սատկել

ա:

Ըրեխեն ճանժ

փըռնեց:

Կալի՝ շ չէս քրնանք

մեր տունը:

Մեր հառ^քսը

խազաժ

չի քաղել:

Շատ արագ խոսք

Հըրեվանիժ

ջամուշը սատկել

ա:

Ըրեխեն ճանշ

փըռնեց:

Կալի՝ շ ճէս

քրնանք

մեր տունը:

Մեր հառ^քսը

խազաժ

ճի քաղել:

Ինչպես նկատվեց վերջին օրինակներում, հնչաշղթա-յում երբեմն տեղի է ունենում նաև երկաստիճան հնչյունա-փոխություն: Հիմնականում հետընթաց բնույթ ունեցող երե-վույթից բացի, փաստորեն, որոշ դեպքերում նաև բառավերջի

հնչյունափոխված բաղաձայնն է փոխադարձաբար ազդում հաջորդող բառի առաջին հնչյունի վրա, այսինքն առկա է նաև առաջընթաց հնչյունափոխություն՝ **շ** դարձած **ս-ի** և **ժ** դարձած **զ-ի** ազդեցությամբ նաև **չ**-ն է դառնում **ճ** (**ս + չ > շ + չ > շ + ճ, զ + չ > ժ + չ > ժ + ճ**):

Քանի որ միջբարբառում **գ, կ, ք** հետնալեզվային բաղաձայնները առաջնային շարքի **է, ի, ü, ö, ու** ձայնավորներից առաջ բառասկզբում և բառամիջում անխտիր վերածվում են իրենց քմային տարբերակներին (**գիդանան, կի-նի, քեռի, քանվան, տեքրանգին, քժմ, քուգ, անքին** և այլն), այս երևույթը գործում է նաև հնչաշղթայում, եթե հետնալեզվայինով ավարտվող և վերոհիշյալ ձայնավորներից մեկով սկսվող բառերը միասին են արտաբերվում.

Չեզոք դիրք

Առաջնային շարքի

ձայնավորների

նախորդող դիրք

Տրվինք տարան իրանց տունը:

Տրվինք իրանց, էզանք:

Ընդանք կալ դէն մեր տունը:

Ընդանք էզան մեր տունը:

Խօղը կըրազ տըվին:

Խօղը կըրազ ին տըվէլ:

Խօտը կըրակ տըվին:

Խօտը կըրակ ին տըվէլ:

Վերջին օրինակը Օծոփ-Հորսի խոսվածքից է, քանի որ միջբարբառի մյուս խոսվածքներում բառավերջում **կ** հնչյունն ունեցող բառեր չկան:

Բնականաբար, հնչյունափոխության նմանօրինակ երևույթներն առավել կամ նվազ չափով բնորոշ են նաև հայերենի մյուս բարբառներին և, իհարկե, գրական հայերենին: Սակայն, ինչպես պարզել ենք մեր նախնական ուսումնասիրությունների արդյունքում, դրանք առավել

ընդգծված արտահայտվում են պատմական Վասպուրական աշխարհի տարածքի և շրջակա բարբառներում:

Բերենք համանման հնչյունափոխական երևույթներ արտահայտող մի շարք օրինակներ այլ բարբառներից.

Վանի բարբառից՝

Էս ի նչ պսն ի: > *Էս ի շ պսն ի:*

Բայազետի բարբառից՝

Ի նչ կա-չըկա: > *Ի (ն)շ կա-չըկա:*

Յես չեմ գ ալում: > *Յեշ չեմ գ ալում:*

Խաց տըվեց: > *Խաս տըվեց:*

Խոյի բարբառից՝

Ինչ կըտըսնաս կուզես > *Իշ կըտըսնաս կուզես:*

Քաջ Ննզնրը յուրեց կէղէն էթնլը: > *Քաժ Ննզնրը*

յուրես կէղէն էթնլը:

Արցախի, Գորիսի բարբառներից՝

Հի նչ մարթ ա: > *Հի շ մարթ ա:*

Ընչ տեղան էս կսն: > *Ըշտեղան էս կսն:*

Վէշ մինը գիղնցնլ չի: > *Վէշ մինը գիղնցնլ չի:*

Արարատյան բարբառի Լոռու խոսվածքից՝

Յէս գընացի: > *Յէգ գընացի:*

Էրկու յէգ տըվի, տարավ: > *Էրկու յէս տըվի, տարավ:*

Այսպիսով, քանի որ հայերենի բարբառներում առավել կամ պակաս չափով առկա են հնչաշղթայի հնչյունափոխության նման համակարգեր, կարծում ենք, որ բարբառների հնչյունաբանությունը ուսումնասիրելիս ցանկալի կլինի ուշադրություն դարձնել նաև հնչաշղթայի հնչյունափոխական երևույթների բացահայտմանը և օրինաչափությունների վերհանմանը:

Vardanyan Artak – Phenomena of Sound Shift in the Chain of Speaking of Armenian Dialects. – This article studies sound shift of consonants at the end of the previous word influenced by the sound of the following word in the chain of speaking of Armenian dialects.

Вардanian Артак - Явления чередования звуков в цепи слов в диалектах армянского языка. - Статья посвящена исследованию чередования согласных в конце слова под влиянием первого звука следующего слова в речевой цепи диалектов армянского языка.

Քամայան Արևիկ (Հայաստան,
Երևանի պետական համալսարան)
gamalyanarev@ysu.am

ԷԹՆՈՖՈՒԼԻՉՍԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ

Էթնոֆոլիզմը որևէ ազգի, ժողովրդի, ռասայական, կրոնական խմբի վիրավորական, արհամարհական, ծաղրական, հեզնական կամ կատակային անվանումն է, բացասական կոնոտացիա ունեցող էթնոնիմը: Տերմինն առաջին անգամ գործածել է Ա. Ռոբակը՝ 1944 թ., "A Dictionary of International Slurs" գրքում¹: Այն հիմնականում բնորոշ է խոսակցական լեզվին, սոցիոլեկտին (արգո/ժարգոն), հանդիպում է նաև բարբառներում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայերենի բառարանների մեծ մասում խոսակցական, առավել ևս ժարգոնային, գոեհիկ շատ ու շատ բառեր չեն գրանցվել ու հիմա էլ չեն գրանցվում, պարզ է դառնում, որ էթնոֆոլիզմների մեծ մասը դուրս է մնացել բառարաններից: Սա լուրջ խոչընդոտ է այս կարգի ուսումնասիրությունների համար, քանի որ հիմնականում ստիպված ենք բավարարվել բանավոր խոսքում (վերջին մի քանի տարիներին նաև համացանցում) հանդիպող օրինակներով: Թերևս բացառություն կարելի է անել բարբառային բառարանների համար, որտեղ քիչ չեն հասարակաբանությունները, գոեհիկ, երբեմն նաև հայիոյական բառերը: Նշենք, որ այս կարգի բառերը տեղ չեն գտել նաև Լեզվի ինստիտուտի վերջերս տպագրած «Նոր բառեր» բառարանի երկու պրակներում²:

Էթնոֆոլիզմների առաջացումը պայմանավորված է տարբեր արտալեզվական գործոններով՝ ազգերի, ժողովուրդ-

¹ Մեջբերումն ըստ **Грищенко А.И., Никольина Н.А.** *Экспрессивные этнонимы как приметы языка вражды // Язык вражды и язык согласия в социокультурном контексте современности.* Ек., 2006, էջ 175:

² Տե՛ս **Նոր բառեր**, *սյր. Ա., Բ., Ե.*, 2015-2016:

ների, էթնիկ, ռասայական ու կրոնական խմբերի միջև հարաբերությունները: Էթնոֆոլիզմը սերտորեն կապված է այլատյացության հետ: Երևույթը բավականին ուսումնասիրված է անգլերենում, վերջին ժամանակներս՝ նաև ռուսերենում. այս բառերը հայտնվում են բառարաններում, դրանց մասին գրվում են բազմաթիվ հոդվածներ, մենագրություններ¹:

Էթնոֆոլիզմ կարող են դառնալ ազգերի, ժողովուրդների ինքնանվանումը (էկզոնիմ), նրանց որևէ արտաքին հատկանիշ/բնավորության գիծ անվանող բառերը, սովորական էթնոնիմը կարող է ստանալ լրացուցիչ, հարակից իմաստ՝ դառնալով էթնոֆոլիզմ: Երբեմն էթնոֆոլիզմ են դառնում այս կամ այն ազգի, ժողովրդի մեջ ամենից տարածված անձնանունները: Կան էթնոֆոլիզմներ, որոնք կապված են այս կամ այն ազգի, ժողովրդի սովորույթների, կենցաղի, հավատալիքների ևն հետ²:

Ինչպես հայտնի է, դեռ հին հույներն էին «բարբարոս» կոչում ոչ հույներին՝ այդպիսով առանձնացնելով, տարանջատելով իրենց այլ ազգերից, էթնիկ խմբերից, ժողովուրդներից: Բարբարոս էին բոլոր նրանք, ովքեր չէին խոսում հունարեն, օտար մշակույթի կրող էին: Հետագայում բառը

¹ Տե՛ս, օրինակ, **Roback A.A.** *A Dictionary of international slurs (ethnophaulisms)*, 1979.

Richard A. Spears. *Slang and Euphemism.* 3rd ed. 2001. **Dalton C.H.** *A Practical Guide to Racism*, 2007. **Коробкова О.С.** *Маркеры языка вражды в номинациях этнической принадлежности: социолингвистический аспект.* Известия РГПУ, 2009.- №111. **Грищенко А.И.** *Источники возникновения экспрессивных этнонимов (этнофолизм) в современном русском и английском языках: этимологический, мотивационный и деривационный аспекты (материалы международной конференции)*, 2007. **Charles Boutler.** *Пиздец! Russian slang dictionary.* 2012, **Степанова Н.Г.** *Этнические прозвища как показатель развития межэтнических отношений.* Известия РГПУ, 2007 ևն:

² Այս մասին տե՛ս **Грищенко А.И.** *Источники возникновения экспрессивных этнонимов (этнофолизм) в современном русском и английском языках: этимологический, мотивационный и деривационный аспекты. (Материалы международной конференции).* Яр., 2007, էջ 40-52:

փոխառեցին բազմաթիվ լեզուներ, այդ թվում և հայերենը, և այն ստացավ ընդգծված բացասական իմաստ. սկսեց նշանակել «*վայրենի, դաժան, վայրագ, քաղաքակրթության ավելի ցածր աստիճանի վրա գտնվող*»:

Էթնոֆոլիզմները պայմանականորեն բաժանում են երկու խմբի՝ սեփական լեզվում առաջացած և փոխառյալ (նկատի ունենք համեմատաբար նոր՝ գիտակցվող փոխառությունները): Թերևս կարելի է ասել, որ ինչքան շատ են լեզվում էթնոֆոլիզմները, այնքան անհանդուրժող է տվյալ լեզվով խոսող հանրությունն «ուրիշների», «օտարների» հանդեպ:

Գրաբարից ունենք էթնոֆոլիզմի հատուկենտ օրինակներ. բացառված չէ, որ բանավոր խոսքում ավելի շատ են եղել, պարզապես դուրս են մնացել գրավոր խոսքից:

Խուժ – Պարսկաստանի Խուժիստան գավառի անունից, որի ժողովուրդը վայրենիի համբավ ուներ: Նշանակում է «*վայրենի, բարբարոս*»: Այս արմատից առաջացել են *խուժան, խուժել, խուժղուժ/խժղություն* ևն բառեր*:

Ծայթ/ծայդ/ծար/ծաղ – ծար ազգի անունից, որ Հնդկաստանից Հայաստան է գաղթել և մկրտվելով հայացել: Ազգի անունը գործածվել է իբրև նախաստական բառ՝ «*ազատամիտ, հավատքի մեջ թերի*» իմաստով:

Ավելի ուշ շրջանից ևս որոշ բառեր ունենք:

* Քանի որ օրինակները բավականին շատ են, և նպատակահարմար չէ ամեն բառի համար հղում դնել, նշենք, որ օգտվել ենք հետևյալ բառարաններից՝ **Աճառյան Հ.**, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1926, **Մալխասյանց Ստ.**, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944, **ԺՂԼԲ**, 4 հտ., Ե., **Աղայան Է.** *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, **Հայոց լեզվի բարբառային բառարան, Ե., 2001, **Աճառյան Հ.** *Հայերեն գավառական բառարան*, Թբ., 1913, **Մարգսյան Ա.**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, **Սուրբիսայան Ա., Գալստյան Ս.**, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Ե., 1975, **Բեղիբյան Պ.** *Հայերեն դարձվածքների ընդարձակ դարձվածաբանական բառարան*, Ե., 2011, ևն, ինչպես նաև մեջբերել ենք բանավոր խոսքում և համացանցում հանդիպած օրինակներ:**

Զագա – քրդական զագա ցեղի անունից, որ բարբառների մի մասում նշանակում է «*բթամիտ, անհասկացող*», որոշ բարբառներում «*խուլուհամբ*»:

Թարթ – կովկասյան թաթերի անունը որոշ բարբառներում նշանակում է «*անհասկացող, բթամիտ*», որոշ բարբառներում՝ «*թոթով, կակազ*», իսկ Շուվալերի բարբառում՝ «*անշնորհք*» ("неуклюжий"):

Ջուղ (նաև **ջուս**, **ջֆտի**) - հրեաների վիրավորական, արհամարհական անվանումը: Ըստ Մալխասյանցի բառարանի՝ փոխառված է արաբերենից: Ըստ ռուսերեն բառարանների՝ *жид*-ը՝ «ջուղ», վիրավորական, արհամարհական կոնոտացիա է ձեռք բերել ավելի ուշ, իսկ սկզբում ուղղակի նշանակում էր «հրեա»: Բառը բավականին հաճախ է հանդիպում ոչ միայն բանավոր խոսքում, այլև գեղարվեստական գրականության մեջ. այն գործածել են Բաֆֆին, Շիրվանզադեն, Ռափայել Պատկանյանը, Նար Դոսր ևն:

Օրինակ՝ «Բայց ես մի *սիդ*՝ *ջուղ* եմ, մի կեղտոտ և հոտած անհավատ: Եվ ինչպե՞ս դուք՝ ուղղափառ քրիստոնյա, կարող եք ձեզ ստորացնել՝ ընկերանալով ինձ հետ» (Շիրվանզադե, «Ջուղի ականջը»):

Ունենք նաև հեզնական դարձվածքներ՝ *ջֆտի սինագոզ*, որ նշանակում է «շատ աղմկոտ տեղ», *ջուղի ժամ*՝ «անցուղարձը շատ տեղ», *ջուղի բազար*՝ «խառը, անկանոն, աղմկոտ վայր», *ջֆտի մսացու*՝ «շատ գեր»: Ղարաբաղի բարբառում կա *եվրեյի ճուս* դարձվածք, որ նշանակում է «1. անխիղճ ու կծծի մարդ, 2. խորամանկ»¹:

Ֆռանգ/ֆռանկ – այսպես են կոչում կաթուղիկ հայերին, որոնց հայ եկեղեցու հետևորդները համարում էին օտար՝ հակադրելով հայերին: Արհամարհական-հեզնական երանգ ունի, ավելի հաճախ հանդիպում է բարբառներում, իսկ խո-

¹ Տե՛ս **Սարգսյան Ա.**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 535:

սակցականում գրեթե չի գործածվում վերջին տասնամյակներում:

Բոշա – հայաստանաբնակ գնչուների արհամարհական անվանումը:

Բացի հիմնական իմաստից՝ ստացել է նաև լրացուցիչ իմաստներ. նշանակում է «աներես, մուրացկան, դատարկապորտ» ն: Քանի որ անկախությունից հետո գնչուների մեծ մասը հեռացավ Հայաստանից, այսօր բառն ավելի հաճախ գործածվում է ոչ թե իբրև վիրավորական էթնոնիմ, այլ հենց հարակից իմաստներով. *բոշա կնիկ* ասում են «աներես, թափթփված, տնից տուն անցնող կնոջը»: *Բոշությունն անել* դարձվածք, որ նշանակում է «անընդհատ ման գալ դեսուդեն, տանը չնստել, նաև սրանից-նրանից մի բան ուզել աներեսի պես», *բոշի երես ունենալ*՝ «աներես, պնդաճակատ լինել»: Ասացվածքներ ունենք՝ *բոշեն փաշա չի դառնա; բոշի յուղը որ շատանում ա, քամակին ա քում, բոշին էշը չի գալիս, այսինչին էլ՝ այսինչ բանը* ն: Շատ գյուղերում, քաղաքներում մինչև հիմա էլ ունենք *Բոշի թաղ/Բոշի մայլա* կոչվող թաղամասեր. անվանումը ցույց է տալիս, որ հայերը աշխատել են առանձնապես չխառնվել նրանց հետ, հեռու են մնացել:

Հետաքրքիր է, որ ռուսերենից փոխառած *ցիգան* (уыган «գնչու») բառը հայերենում ձեռք է բերել այլ լրացուցիչ իմաստ, որ բացակայում է ռուսերենում. նշանակում է «ժլատ, զծուծ, կծծի» (*Չատ ցիգան մարդ է, ցիգանություն անել, ցիգանությունը բռնել*): Ի դեպ, уыган բառը վիրավորական կոնոտացիա ունի նաև բուլղարերենում. նշանակում է «մուրացկան, փնթի, կեղտոտ»: Հիշենք, թե ինչպես մի երկու տարի առաջ Բուլղարիա-Հայաստան ֆուտբոլային խաղի ժամանակ բուլղար ֆուտբոլային ֆանատները հայերին վիրավորում էին հենց *ցիգան* բացականչություններով:

Քանի որ գրաբարից, միջին հայերենից տվյալները խիստ սակավ են, իսկ բարբառներում հանդիպող բազմաթիվ էթնոֆոլիզմներին մանրամասն անդրադարձել է Հայկանուշ

Մերոպյանը՝ «Հատուկ անուններով կազմված փոխաբերական հոմանիշներ» հոդվածում¹, մենք կխոսենք համեմատաբար նոր էթնոֆոլիզմների մասին:

Ի տարբերություն ռուսերենի (ինչպես նաև անգլերենի)² դրանց թիվը շատ չէ, մեծ մասն էլ վերջին տասնամյակներում փոխառել ենք ռուսերենից /ռուսերենի միջոցով:

Սոխ – ռուսների կատակային, հեզնական անվանումը: Ըստ Մալխասյանցի բառարանի՝ «երբեմն սոխ էին կոչում ռուսներին, երբ նրանք նոր էին տիրել Անդրկովկասին»³: Կարծիք կա, որ պատճառը ռուսական եկեղեցիների գմբեթի նմանությունն է սոխի գլխին, իսկ մյուս տարբերակի համաձայն՝ ռուսների քթի կլոր ծայրի պատճառով: Սկզբում գործածվել է ծածկալեզվում, այնուհետև անցել խոսակցական լեզվին: Բանավոր խոսքում հաճախ է հանդիպում, հատկապես եթե չեն ուզում արտասանել *ռուս* բառը (թեև երիտասարդ սերնդի բառապաշարում կարծես թե չկա): Երբեմն «*սոխի ճուտ*» են անվանում նաև շեկվիկ երեխաներին:

Ի դեպ, այս անվանումը հանդիպում է Չարենցի «Երկիր Նաիրի»-ում. «Նաիրյան արքաներ կան թաղված Առաքելոց եկեղեցում, և երբ եկեղեցին գրավելուց հետո *սոխերը* քանդել են եկեղեցու հատակը, վեմ քարի ներքևում գտել են անթիվ-անհամար գանձեր...»³:

Ռու-կուկուռուզ – (բառախաղ է, որ նաև շարունակություն ունի՝ *ռու-կուկուռուզ, հավի տուտուզ*) հանդիպում է բանավոր խոսքում. խորհրդային տարիներին հաճախ էր գործածվում, այժմ երիտասարդ սերնդի մեծ մասին անձանոթ է:

Ռուսուլման – համացանցային լեզվում ստեղծված նորաբանություն է, որ կազմվել է *ռուս* և *մուսուլման* բառերի բաղադրությամբ: Ընդգծված թշնամական, արգահատական

¹ Տե՛ս <http://aybuben.com> կայքում (<http://aybuben.com/st17>)

² Մո. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944, էջ 238:

³ Ե.Չարենց, *Ընտիր երկեր*, Ե., 1997, էջ 278:

կոնոտացիա ունի: Բավականին տարածված է հայալեզու համացանցում: Երբեմն գործածվում է ոչ միայն ռուսների, այլև ռուսամետների նկատմամբ:

Իվան – ռուսների հեզնական-արհամարհական անվանումը, որ անհամեմատ քիչ է հանդիպում, այն էլ հիմնականում ռուսաստանաբնակ հայերի բառապաշարում:

Տուտուց (ավելի հաճախ՝ *տուտուց վրացի*) – վրացիների կատակային-հեզնական անվանումն է: Ծագում է վրացերեն *տուտուցի*՝ «թեթևամիտ, ցանցառ» բառից:

Եմշագլուխ/եմիշ գլուխ – հիմնականում թուրքերին ու միջինասիացիներին՝ ուզբեկներին, դազախներին, կիրգիզներին, թուրքմեններին տրվող հեզնական անվանում: Ավելի տարածված էր խորհրդային տարիներին, երիտասարդ սերնդի ներկայացուցիչները գրեթե չեն գործածում:

Հայերենին ավելի բնորոշ է էթնոֆոլիզմի այն տեսակը, երբ որևէ ազգի, ժողովրդի, էթնիկ խմբի անվանումը, բացի հիմնական, առաջնային իմաստից ձեռք է բերում նաև փոխաբերական՝ վիրավորական, արհամարհական, ծաղրական իմաստ: Նույնիսկ մեր դարավոր թշնամիների համար մենք չունենք վիրավորական, ծաղրական, արհամարհական հատուկ բառեր:

Թուրք – բացի ազգի անվանում լինելուց՝ ստացել է նաև «*դաժան, արյունարբու, անխիղճ*» իմաստները: Այս արմատով ունենք, օրինակ, *թուրքառ* բառը, որ նշանակում է «*թուրքի ձեռք տված, պղծված*»: Հանդիպում է դարձվածքներում, ասացվածքներում՝ *թուրքի հետ ընկերություն արա, բայց փետը ձեռիցդ մի գցի. թուրքի պես. հո դու թո՞ւրք չես. թուրքի գլուխ* «հիմար»; *Ղարաբաղի բարբառում կա թօրքու թըռըմասկ «թուրքի թերմածք»՝ «տզեղ, անձոռնի երեխա» նև:*

Քուրդ – բանավոր խոսքում, բարբառներում ստացել է լրացուցիչ իմաստ՝ «անշնորհակալ մարդ», «կոպիտ», նաև «բթամիտ, տզեղ, անհասկացող»: Ունենք դարձվածքներ, ասացվածքներ.

անադուհաց քրդի շուն «անշնորհակալ, երախտամոռ մարդ», *քրդի լամուկ* – անարգական, նախատական արտահայտություն՝ հատկապես ուղղված երեխաներին, *հո դու քո լրդ չես* – ասում են անհասկացող մարդուն, *քրդի կող ունենալ* «համառ, ինքնասածի լինել»։ Բարբառային *քրդիգյարա* բառը նշանակում է «քրդի պես կոպիտ, անտաշ, բռի» նն։

Եզդի – էթնոնիմ լինելուց բացի՝ բանավոր խոսքում ստացել է լրացուցիչ իմաստ՝ «անճաշակ հագնված», նաև պարզապես «անճաշակ մի բան» (*եզդու հարսանիք, եզդու շոր* նն)։ Նշանակում է նաև «շատ միամիտ, հարիֆ մարդ»՝ ընդգծված արհամարհական, հեզնական կոնոտացիայով։ Հիշենք նաև եզդիների մասին բազմաթիվ անեկդոտները։

Ուզբեկ – բանավոր խոսքում ձեռք է բերել լրացուցիչ՝ հեզնական, արհամարհական կոնոտացիա։ Թերևս գալիս է խորհրդային բանակային ժարգոնից։ Այդպես դիմում են այն մարդկանց, ում իրենցից ցածր են համարում սոցիալական դիրքով, նաև ինտելեկտով, կրթությամբ՝ *սրանք լրիվ ուզբեկ են*, «դու հո ուզբեկ չես, արա»։ Հեզնական-ծաղրական է նաև *ուզբեկ գիտնականներ* արտահայտությունը, որ վերջին ժամանակներս հանդիպում է համացանցային լեզվում։ Երբեմն այս նույն իմաստով գործածվում է *ուղմուրտ* էթնոնիմը։

Պարսիկ – բանավոր խոսքում վիրավորական, արհամարհական կոնոտացիա է ստացել անկախության տարիներից հետո։ Ընդ որում՝ պարսիկ են անվանում ոչ միայն այդ ազգի ներկայացուցիչներին, այլև պարսկահայերին։

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այսօր արևելահայերենում բավականին շատ են ռուսերենից/ռուսերենի միջոցով փոխառած էթնոֆոլիզմները։ Դրանց մեծ մասը բանավոր փոխառություններ են՝ մի մասը խորհրդային տարիներից, մի մասը՝ նոր։

Նեգր – բանավոր խոսքում գործածվում է ոչ միայն իբրև էթնոնիմ (աֆրիկացի սևամորթ բնակիչների ընդհանուր անվանումն է), այլև լրացուցիչ՝ հարակից իմաստ ունի՝ 1.

«շատ սև»՝ *ննց որ նեգր լինի*, 2. «շատ աշխատող, չարչարվող, ծանր աշխատանք անող»՝ *ես հո ձեր նե գրը չեմ, նեգրի նման աշխատել*: Անկախացումից հետո տարածվեց (հիմնականում ռուսերենի միջոցով՝ ամերիկյան ֆիլմերի թարգմանությունից) նաև *նիգեր* ձևը, որ ամերիկացիները գործածում են սևամորթների նկատմամբ՝ իբրև վիրավորական, արհամարհական էթնոնիմ: Հայերենում այսօր *նեգր* բառը անգլերենի ազդեցությամբ համարվում է ոչ պոլիտկորեկտ, ռասիստական և պաշտոնական ոճում փոխարինվել է *սևամորթ* տարբերակով:

Չուկչա (чукча) – Եվրասիայի ծայր հյուսիս-արևելքում ապրող փոքրաթիվ ժողովուրդ, որի էթնոնիմը ռուսերենում, ապա և հայերենում ստացել է հարակից հեզնական, ծաղրական իմաստ. *չուկչա* են կոչում քաղաքակրթությունից հեռու, շատ միամիտ, դյուրահավատ մարդուն: Խորհրդային տարիներին մեծ տարածում ունեին չուկչաների մասին անեկդոտները:

Ազիկ, ազեր, ազերի (азик, азер, азеги) – ադրբեջանցիների վիրավորական, նվաստական անվանումը, որ փոխառել ենք ռուսերենից: Համացանցում հաճախ է գործածվում նաև *ազերբարան* (азербаран) ընդգծված արհամարհական, նվաստացուցիչ անվանումը (հարանուններով կազմված բառախաղ է՝ *Азербайджан-азербаран*): Ի պատասխան սրան՝ ադրբեջանցիները «համացանցային մարտերում» հայերին անվանում են *армянгутан (արմյանգուտան)*՝ *армянин* և *орангутан* բառերի բաղարկությամբ:

Խսախոլ – ռուս. **хохол** բառից, որ ուկրաինացիների արհամարհական, հեզնական անվանումն է ռուսերենում: Նկատենք, որ հայերենում այն առանձնապես արհամարհական կոնոտացիա չունի, ավելի շուտ կատակային է գիտակցվում:

Չուչմեկ (чучмек) – ռուսերենում միջինասիացիների նկատմամբ գործածվող արհամարհական, ծաղրական, վիրավորական անվանում: Ռուսերենից անցել է նաև հայերե-

նին, գործածվում է բանավոր խոսքում, սակայն հայերենում ձեռք է բերել ավելի ընդհանուր իմաստ. կիրառվում է ոչ միայն միջինասիացիների, այլև տարբեր ազգերի, այդ թվում և հայերի նկատմամբ՝ իբրև անարգական, արհամարհական անվանում:

Նույնը վերաբերում է **չուռկային (чурка)**. ռուսերենում այն միջինասիացիների՝ ուզբեկների, տաջիկների, վերջին տասնամյակներում նաև կովկասցիների վիրավորական, արհամարհական անվանումն է: Հայերենում ավելի ընդհանուր իմաստ է ստացել, հաճախ է գործածվում տարբեր ազգերի, այդ թվում և հայերի նկատմամբ՝ «անգրագետ, հետամնաց, սոցիալական ավելի ցածր մակարդակի վրա գտնվող» ևն իմաստներով (մոտավորապես համապատասխանում է խոսակցականում խիստ տարածված *զեղջի* բառին): Ռուսերենից փոխառել ենք նաև **Չուռկեստան (Чуркестан)** «տեղանունը՝ չուռկաների երկիր:

Պինդոս, ամերիկոս (пиндосы, америкосы) – փոխառել ենք վերջին տարիներից: Ամերիկացիների արհամարհական, հեզնական անվանումն է: Առանձնապես հաճախ չի գործածվում հայերենում, հիմնականում հանդիպում է երիտասարդների բառապաշարում՝ համացանցային լեզվում:

Չեխ (чех) – չեչենների ժարգոնային անվանումը (ամենայն հավանականությամբ՝ բանակային ժարգոնից է ներթափանցել խոսակցական ռուսերեն): Հիմնականում գործածում են երիտասարդ սերնդի տղաները (կանանց ու աղջիկների բառապաշարում խիստ հազվադեպ է հանդիպում):

Դազ (дاز) – դադստանցի. ռուսերենից փոխառած այս բառը հայերենում ստացել է լրացուցիչ նշանակություն, որ պայմանականորեն համապատասխանում է մեր *քյառթու*-ին: Այն նույնպես հանդիպում է հիմնականում երիտասարդների բառապաշարում:

Գեյրոպացի/-ներ (гейропейцы) – եվրոպացիներին տրվող ընդհանուր անվանում՝ ծաղրական, վիրավորական, արհամարհական:

Որոշ էթնոֆոլիզմներ ռուսերենի միջոցով հայերենին են անցել գրավոր ճանապարհով՝ թարգմանական գրականության միջոցով, և խոսակցականում գրեթե չեն գործածվում. օրինակ՝ **մակարոն ուտող** (макаронник) – իտալացիների հեզնական-կատակային անվանումը, **զորոտ ուտող** (лягушатник) «ֆրանսիացի»:

Բավականին հազվադեպ, այն էլ հիմնականում ամերիկահայերի բառապաշարում են հանդիպում նաև անգլերենից բանավոր ճանապարհով փոխառած որոշ էթնոֆոլիզմներ՝ **չայնա** «չինացի», **լատինոս**՝ Լատինական Ամերիկայի բնակիչների ընդհանուր անվանումը, **մեքսիկ** «մեքսիկացի»:

Աբորիգեն – լատիներենից ռուսերենի միջոցով փոխառած այս բառը թեև նշանակում է ուղղակի «բնիկ»՝ ի տարբերություն ավելի ուշ այդ տարածքում, երկրում բնակություն հաստատած եկվորների, սակայն այժմ խոսակցական հայերենում արհամարհական-ծաղրական իմաստ է ստացել՝ «հետադեմ հայացքներ ունեցող, վայրենի, անկիրթ, քյառթու» նև:

Տարբեր ազգեր վիրավորական, արհամարհական, հեզնական անվանումներ են տվել նաև հայերիս: Այս առումով թերևս «առաջատարը» ռուսերենն է.

армяшка – կազմված армянин էթնոնիմից՝ նվազական-արհամարհական ածանցով,

хач/хачик – վերջին տարիներին գործածվում է ոչ միայն հայերի, նաև ընդհանրապես կովկասցիների նկատմամբ,

армянгутан/ормянгутан – (տե՛ս վերևում),

ормяне – армяне բառի աղավաղված տարբերակը,

ара – հայերեն *арш* դիմելաձևից (վիրավորական է նաև հայերենում),

шаурмяне – կազմվել է *шаурма* և *армяне* բառերի բաղադրությամբ, նև:

Թուրքերենում հայերին տրվող *գյավուր*՝ «անհավատ» բառը գործածվում է ոչ միայն հայերի, այլև ոչ մահմեդական այլ ազգերի, ժողովուրդների նկատմամբ ևս:

Բացասական կոնոտացիա ունեցող անվանում կարող է գործածվել ոչ միայն այլ ազգերի, էթնիկ խմբերի ներկայացուցիչների նկատմամբ. քիչ չեն նաև նույն ազգի տարբեր տեղերում բնակվողների՝ միմյանց տրվող հեզնական, ծաղրական, վիրավորական կամ պարզապես կատակային անվանումները: Այստեղ ևս դեր է խաղում «յուրային-օտար» բաժանումը:

Թերևս ամենատարածվածը «**ախպար**» անվանումն է, որով հայաստանցիները անվանում են սփյուռքահայերին: *Եղբայր* բառի արևմտահայերեն տարբերակն է (խսկց.): Բառը մեծ տարածում ուներ հատկապես խորհրդային տարիներին, երբ տարբեր երկրներից Հայաստան ներգաղթեցին բազմաթիվ սփյուռքահայեր:

Քոի ջուր խմած – ասում են թիֆլիսեցիներին, մասամբ նաև հարակից շրջանների բնակիչներին. նշանակում է «ճարպիկ»: Հայաստանցիները թիֆլիսեցիներին անվանում են նաև **կեկեկ**՝ Կեկեկ հատուկ անունից, **շուռ տված վրացի**:

Բիբար կրծող – այսպես են անվանում երևանցիներին: Երբեմն երևանցիներին կոչում են նաև **պարսիկ**:

Ճոռթած բերան լեննականցի – շիրակցիներին, հատկապես գյումրեցիներին տրվող անվանում:

Կոռ – այսպես են գյումրեցիներին, շիրակցիներին կոչում լոռեցիները: Իսկ թիֆլիսեցիները **կոռ** են կոչում հիմնականում ախալքալաքցիներին:

Քոլեցի – լոռեցիների հեզնական անվանումը:

Խոսակցական լեզվում, բարբառներում ավելի հաճախ հիմնական իմաստից զատ հարակից, լրացուցիչ իմաստներ են ստանում այս կամ այն տեղի բնակիչ նշանակող բառերը.

ապարանցի կամ **էշ ապարանցի** – բուրթ, անհասկացող, տգետ,

ղարաբաղցի (նան էշ զարաբաղցի / հաստակող զարաբաղցի) – անկախությունից հետո բառը ձեռք է բերել ընդգծված բացասական իմաստ,

ախտեցի/քոռ ախտեցի, վանեցի – ունի նան ժլատ, գծուծ իմաստ,

լոռեցի – միամիտ, **մարտունեցի** – գծուծ, ձեռք փակ,

սիսիանցի – գործ տվող,

թոստ – շուկավերցիների բարբառում այսպես են կոչում երևանցիներին (ծագումը պարզ չէ, բառը գրանցված չէ ոչ մի բառարանում):

Ռուսերենում անհամեմատ շատ են այլ ազգերի, էթնիկ ու կրոնական խմբերի վիրավորական, արհամարհական, թշնամական կամ հեզնական անվանումները. թերևս այստեղ դեր է խաղացել նան այն հանգամանքը, որ Ռուսաստանը, ի տարբերություն Հայաստանի, բազմազգ է եղել ու կա: Բացի դրանից՝ Ռուսաստանն անհամեմատ շատ ազգերի, ժողովուրդների, երկրների հետ շփումներ ունի՝ աշխարհագրական դիրքով պայմանավորված: Ռուսերենում էթնոֆոլիզմներ կան հարևան գրեթե բոլոր ժողովուրդների համար: Քանի որ դրանց մի մասին արդեն անդրադարձել ենք (այն բառերին, որոնք հայերենը փոխառել է ռուսերենից), թվարկենք ևս մի քանիսը.

жид, абрам, абрака, цукерман, изя, шлëма, еврюга – հրեաների արհամարհական, նվաստական, ծաղրական անվանումներ,

генацвале, гиви, грызун – վրացի (վերջին էթնոֆոլիզմը տարածվեց 2008-ի հայտնի դեպքերից հետո),

лабусы, лабаты – լիտվացի,

абрек – հյուսիսկովկասցիներին՝ չեչեն, լազ, ինգուշ են, տրվող արհամարհական անվանում,

япошка – ճապոնացի,

китаёза – չինացի,

узкоглазый, косоглазый – մոնղոլոիդ քասայի ներկայացուցիչ,

итальяшка, макаронник – իտալացի,

лягушатник – ֆրանսիացի,

финик, финос, чухонец, чухонь – ֆինն,

черный, тумба-юмба, сникерс, афрожопый, негритос – նեգր, սևամորթ,

черножопый, черномазый – հիմնականում ասում են կովկասցիներին,

гамбургер, пиндос, америкос, янки – ամերիկացի,

сосиска, колбасник, немчик, ганс, фриц – գերմանացի, **бульбаш** – բելոռուս,

феска – թուրք,

чуб, хохол, салоед – ուկրաինացի,

бандеровцы, бандерлоги – ուկրաինացի նացիոնալիստ,

лях (հնգ.), **пшек** – լեհ,

чичи, чехи – չեչեն,

мамалыжник, муть – մոլդավացի, նաև ռուսինացի,

байбак – կարելներին տրվող արհամարհական անվանում,

носорог, чебурек, урюк – միջինասիացիներին՝ ուրբեկ, թուրքմեն, դազախ ևն, նաև կովկասցիներին տրվող արհամարհական, ծաղրական անվանում:

Ավելացնենք, որ այլ ազգեր ևս ռուսներին տարբեր վիրավորական, ծաղրական, արհամարհական անվանումներ են տալիս. ուկրաինացիները՝ **москаль, кацап**, ֆինները՝ **русся**, հայերը (ինչպես արդեն նշել ենք)՝ **սոխ**, էստոնացիները՝ **тыбла/тибла**, եվրոպական տարբեր ժողովուրդներ՝ **иван**, Եգիպտոսում և Թուրքիայում վերջին տարիներին ռուսներին կոչում են (ռուս թեթևաբարո կանանց, մարմնավաճառների ընդհանուր անվանումից):

Ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, հայերենին առանձնապես հատուկ չեն այլ ազգերի, ժողո-

վուրդների, էթնիկ խմբերի վիրավորական, արհամարհական, հեզնական անվանումները: Դրանց մեծ մասը փոխառել ենք վերջին մի քանի տասնամյակներում՝ ռուսերենից կամ ռուսերենի միջոցով՝ այլ լեզուներից: Մեզ ավելի բնորոշ է խտրական վերաբերմունքն ինքներս մեր նկատմամբ. տարբեր բնակավայրերի, տարածքների, քաղաքների ու գյուղերի բնակիչներ միմյանց տալիս են զանազան հեզնական, ծաղրական, երբեմն չափազանց կոպիտ, գռեհիկ անվանումներ:

Ռուսերենում, ինչպես տեսնում ենք բերված օրինակներից, այլ ազգերի, էթնիկ խմբերի նկատմամբ խտրական վերաբերմունքն ավելի ընդգծված է. վիրավորական, ծաղրական, արհամարհական անվանումներ կան ինչպես ցարական Ռուսաստանի, ապա ԽՍՀՄ նախկին երկրների ու այսօր ՌԴ-ի կազմում գտնվող ազգերի, ազգային փոքրամասնությունների, էթնիկ ու կրոնական խմբերի, այնպես էլ հարևան գրեթե բոլոր ժողովուրդների համար: Պատճառները տարբեր են. Ռուսաստանն ավելի բազմազգ երկիր է, որտեղ ազգամիջյան բախումները էթնիկ կամ կրոնական հողի վրա քիչ չեն, և երկրորդ՝ նա աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ անհամեմատ շատ անմիջական շփումներ է ունեցել և ունի տարբեր երկրների, ազգերի, էթնիկ ու կրոնական խմբերի հետ:

Arevik Kamalyan – Ethnophaulisms (ethnic slurs) in Armenian and Russian. An ethnophaulism is an ethnonym with an expressive emotive charge and negative/derogatory connotation. It is mostly found in oral speech, sociolect and jargon, and it sometimes appears in literary language. Ethnophaulisms may be ironic, sarcastic, contemptuous, vulgar and so on. There are ethnophaulisms in the Russian language, which are used in regard to almost all the nations and ethnic groups living in the territory of Russia and beyond, while the contemptuous, ironic, sarcastic ethnophaulisms existing in the Armenian language are commonly used with regards to Armenians themselves. We have borrowed a number of ethnophaulisms from the

Russian language or through it, especially during the Soviet and post-Soviet times.

Аревик Камалян – Этнофолизм в армянском и русском языках.– Этнофолизм – это экспрессивный этноним, имеющий отрицательную коннотацию. Встречается в основном в разговорном языке, в социолектах/арго, иногда попадает в литературный язык. Этнофолизмы могут быть ироничными, унижительными, презрительными, бранными и т.д. В русском языке этнофолизмы используются по отношению почти ко всем соседним народам, этническим группам, проживающим как на территории России, так и за его рубежами. Для армянского же языка более характерна использование этнофолизмов по отношению к «своим». Много этнофолизмов мы заимствовали именно из русского языка, особенно в советский и постсоветский период.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աբաջյան Աննա - Մի քանի դիտարկումներ
արևելահայերենի որոշիչ հոդի մասին.....5

Ամիրխանյան Անժելա - «Դեղ» բառի իմաստային
դրսևորումները հայերենում.....15

Ավագիմյան Արինե - Ժամանակակից հայերենի
ածականների դասանշային կապակցելիությունը30

Ավագյան Ինգա - Եվս մեկ ուրարտական
սկզբնաղբյուր երիախի երկրի մասին.....39

Գյուրջիյան Դավիթ - «Հայերեն» նշանակող *հայ*
վերջնաբաղադրիչով բառերի մի խմբի քննություն.....53

Գրիգորյան Գայանե - Կրկնակ բաղաձայնների
տևողության փորձառական հետազոտություն.....68

Գրիգորյան Սուսաննա, Պարոնյան Նաիրա - Պետրոս
Մյունեցու բառային արվեստը.....76

Գրիգորյան Սուսաննա - Գրիգոր Տաթևացու «Գիրք
քարոզութեան» ձևեռան հատորի բայական87
դարձվածային միավորների իմաստային քննություն

Դալայան Տորք - Հայերեն *երկ* և *երգ*
արմատների ստուգաբանության շուրջ.....92

Դիրարյան Նարինե - Իրակությունների ներքին և
արտաքին բնութագրիչ հատկանիշներն արտահայտող
տեղանունների իմաստաբանական տիպերը.....105

Դոխոյան Ռուզաննա - Արդի հայերենի խոսքային
գործունեության իմաստային ենթադաշտի բայերի
բաղադրիչային, իմաստային և գործաբանական

դրսևորումները դարձվածքներում.....	115
Ձաքարյան Հովհաննես - Օտար լեզուներից հայերեն գործնական տառադարձման սկզբունքները.....	129
Խաչատրյան Հասմիկ - Տան բաղկացուցիչ մասերի անվանումներ բարբառային հայերենում.....	144
Հակոբյան Աննա - Վալտեր Բենյամին. Թարգմանչի պարտքը.....	160
Հակոբյան Ֆրիդա - Հայերենի ընդհանրական կորպուսի կազմության սկզբունքները.....	170
Հարությունյան Քնար - Գրաբարի եռաբաղադրիչ դարձվածքները.....	179
Հմայակյան Հասմիկ - Խեթերենի և հայերենի առնչությունների հարցի շուրջ.....	193
Հովհաննիսյան Լավրենտի - Դիտարկումներ Ղարաբաղի բարբառի բաղաձայնական համակարգի վերաբերյալ.....	206
Հովսեփյան Լիանա - Առկայացման կարգը գրաբարում.....	211
Ղուկասյան Սևակ - <i>Ինչու-որ</i> հարցումները Մարկոսի արևելահայերեն և արևմտահայերեն ավետարաններում.....	222
Մանուչարյան Սվետլանա – Կապանի տարածաշրջանի խոսվածքների համեմատական քննություն.....	234
Մատիկյան Հասմիկ - Լեզվական մշակույթը օրորոցային տեքստերում.....	249
Մարգարյան Լուսինե - Արցախ-Սյունիք տարածաշրջանի համանուն բնականունների առնչությունները.....	260
Միքայելյան Ժաննա - Բայի երկրորդական	

վերլուծական ժամանակները հայերենի արևմտյան խմբակցության բարբառներում.....	274
Մկրտչյան Գարիկ - Կոտայքի մարզի խոսվածքների հանրալեզվաբանական քննություն.....	286
Մովսեսյան Նոյեմ - Անցյալ դերբայով կազմված դերբայական դարձվածների կիրառությունը Փ. Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում.....	301
Շահվերդյան Թերեզա - Տեքստի ոճաբանության մի քանի հարցեր՝ Կարո Մելիքսեթյանի պոեզիայի լեզվանյութի հիման վրա.....	315
Պետրոսյան Լիլիթ - Մաթեոսի աւետարանի բայերի դասանշությունը.....	329
Մարգարյան Արմեն - Պատկերավորության միջոցները՝ զավեշտի հենք հայոց գվարճապատումներում և գվարճախոսություններում.....	337
Հ. Սուքիասյան, Ն. Թոռունյան - Բժշկագիտական հայերեն դասագրքերի լեզուն	351
Վարդանյան Արտակ – Հնչաշղթայի հնչյունափոխական երևույթները հայերենի բարբառներում.....	362
Քամայան Արևիկ - Էթնոֆոլիզմը հայերենում և ռուսերենում.....	370

«Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային
գիտաժողով

Երևան, հունիսի 15-16, 2017

Ջեկուցումների ժողովածու

“Jahukyan Readings” International Conference
Yerevan, June 15-16, 2017

Collection of papers

Международная конференция “Джаукяновские чтения”
Ереван, 15-16 июня 2017

Сборник докладов